ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

ՄԱՅՐԱՄՈՒՏԻՑ ԱՌԱՋ

891.99

ДУБЛЕТ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

ՄԱՅՐԱՄՈՒՏԻՑ ԱՌԱՋ

Ինքնապատում

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

A II 81871

ԵՐԵՎԱՆ «ՆԱԻՐԻ» 1990

ԳՄԴ 71 (2Հ)
Զ 390

Զարյան Ռ. Վ.
Զ. 390 Մայրամուտից առաջ: Ինքնապատում.— Եր.: Նաիրի, 1990. Հատոր II.— 1990.— 524 էջ.

Արվեստաբանի հուշագրություններն ընդգրկում են Երևանի 30-40-ական թվականների գրական-գեղարվեստական կյանքն իր աչքի ընկնող իրադարձություններով՝ ասուլիսներ, վեճեր, բախումներ: Իրեն հատուկ ոճով նա գծագրել է գիտության և արվեստի մի շարք գործիչների՝ Գարեգին Լևոնյանի, Մարիետա Շահինյանի, Երվանդ Շահազիզի, Արշակ Ադամյանի դիմանկարները: Էջեր են նվիրված վրաց նշանավոր պատմավիպասան Կոստանդինե Գամսախուրդիային, ռուս թարգմանչուհի Վերա Զվյագինցևային և ուրիշներին:

Զ 4702080204 (90) / 705(01)90 — 10—90

ԳՄԴ 71 (2Հ)

ISBN 5—550—00444—5

© «Նաիրի» հրատարակչություն, 1990

ԳԻՐՔ ԵՐԲՈՐԴ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ես կարծում էի, որ երկրորդ գրքով «Ինքնապատումը» կավարտվի, բայց տես, որ իմ ուսանողական կյանքը զբաղեցրեց մի ամբողջ գիրք: Աշխատանքային կյանքս թեև սկսվել էր համալսարանական տարիներին՝ աշխատանք գրական թանգարանում, ելույթներ ու զեկուցումներ, մասնակցություն գրողների ասուլիսներին, հոդվածներ և այլն, բայց բուն գործունեությունս, իհարկե, սկսվեց 1936-ից:

Վրա հասավ 1937 թվականն իր մռայլ դեպքերով: Շարքից հանվեցին գրական նշանակալի դեմքեր: Այս լուրերն առանք ու ցնցվեցինք, ասես արյունը կանգ առավ մեր երակներում: Հավաքվում էինք ու մինչև ուշ գիշեր խոսում, միտք մտքի տալիս: Ալազա՞նը ժողովրդի թշնամի, Բակո՞ւնցը, Նորե՞նցը, Թոթովե՞նցը, Մկրտիչ Արմե՞նը, Ջանա՞նը, Մահարի՞ն, վերջապես՝ Զարե՞նցը: Հավատալու բան չէ: Մեր կյանքի հետ կապված, մեր կյանքը պատկերող ու գովերգող մարդիկ: Թերևս գործել են քողարկված, գաղտնի և ոչինչ չենք իմացել: Գուցե ընդհատակյա գործունեություն են ունեցել: Ես ու ինձ նման շատ շատերը մնացել էինք շվարած և ապրում էինք շփոթ զգացումներով: Մի կողմից՝ այնքան միամիտ էինք, որ մեզ իրավունք չէինք տալիս կասկածելու երկրի քաղաքական ապահովությունը վերահսկող մարմինների գործունեության վրա, մյուս կողմից՝ բնազդական մի ձայն այլ բան էր ասում: Չէինք հասկանում և հակված էինք նրանց անմեղ կարծելու, որովհետև սիրում էինք նրանց, գնահատում էինք, վերջապես՝ անձնական մտերմություն ունեինք հետները: Բայց ո՞վ կհան-

դրգներ ձայն հանել, ասել, թե իմկապես այս ի՞նչ է կատարվում: Ամենքը երկյուղի մեջ էին, և ոչ ոք ոչ ոքի համար երաշխավոր չէր: Ահի ու կասկածանքի ժամանակներ էին: Բնությունը նույնն էր՝ գիշերը գիշեր էր, ցերեկը՝ ցերեկ, իսկ մարդիկ զրկված էին քնից, աչք ու ականջ էին պահում իմանալու, թե այս գիշեր ում են տարել: Ուր էլ գնում էիր՝ հրատարակչություն, համալսարան, գրողների տուն, ուսումնարան, սարսափելի լուրեր էիր առնում: Հոգիդ տակնուվրա էր լինում: Ջկային իմ շատ ուսուցիչները, չկար իմ ավագ ընկերներից բավական թվով մարդ: Ջկար տուն, ուր դժբախտություն չլիներ: Իսկ նրանք, որոնց դուրը չէր բախել դժբախտությունը գիշերով, ապրում էին վախը սրտերում, չիմանալով, թե ինչով է ավարտվելու օրը, առավոտյան աչքը տա՞նն են բացելու, թե...

Մարդիկ ապրում էին բզկտված հոգով: Եթե մեկնումեկը, որ անփորձանք էր անցել 1937 թվականը, ասի, թե ինքը մոռացել է պատահածը, դա մի մղձավանջ էր, եկավ ու անցավ, չհավատաք, բացեք նրա սիրտը և ծխացող վերքերի կհանդիպեք:

Սվելի շփոթեցին մեր մտքերը, երբ լուրեր հասան, որ նույնն է կատարվում Վրաստանում, որ չկան Տիցիան Տաբիձեն, Միխայիլ Ջավախաշվիլին և այլ գրողներ: Նույնն էր նաև Մոսկվայում, Կիևում և այլուր: Դժվար էր հասկանալ: Մեր շփոթմունքն ավելի խորացավ, երբ իմացանք, որ մեկուսացված են նաև մեկուսացնողներից շատերը:

Ի՞նչ էր կատարվում, չէինք հասկանում ի՞նչ է սպասում մեզ՝ նույնպես անհայտ էր: Ապրում էինք խառն ու մթամած գլխով, տակնուվրա եղած սրտով:

Մասնակցել եմ շատ ժողովների՝ բուռն ու խռովահույզ, լսել շատ ելույթներ, որ հաճախ նմանվում էր գրական հակառակորդների հետ ունեցած քաղաքական հաշվեհարդարի: Ջկար մի գրող, ավագներից սկսած՝ Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Միք. Մանվելյան, որ իր խոսքը ստիպված չլիներ ասել ամբիոնից: Դա օրվա պահանջն էր. բոլորը պետք է վերաբերմունք ցույց տային, դատապարտեին մեկուսացվածներին, ջանք թափեին արդարանալու նրանց հետ ունեցած կապերի համար:

Ասում են, արդարությունը երբեմն ուշանում է, բայց միշտ գալիս է: Այդպես էլ եղավ: Շատերը վերադարձան, եթե ողջ էին մնացել, կարողացել էին հոգեկան ու ֆիզիկական տոկունություն գտնել դիմանալու անմարդկային տանջանքներին: Վերադարձան իշխանություններից արդարացված: Արդարացան նաև նրանք, որոնք իրենց մահկանացուն կնքել էին բանտերում, տարագրության ճանապարհներին և աքսորում: Արդարացան և նրանք, որ իբր խիստ վտանգավոր անձինք գնդակահարվել էին:

Այդ արդարացումն ինքնին եղավ բարոյական և քաղաքական, հերքումն այն ողբերգական իրադարձությունների, որը պատմության մեջ հայտնի է «1937 թվական» անունով, թեև ձերբակալումներն սկսվել էին նախորդ տարվա ամռան ամիսներից:

Ողբերգական օրերին, ինչպես և պետք էր սպասել՝ հաջորդեցին խաղաղ ու հանգիստ օրեր: Հաջողություններ էլ եղան: Այսպես, կյանքն առավ ինձ իր ալիքների մեջ ու տարավ...

ԱՂԱՍԻ ԽԱՆՋՅԱՆԻ ՄԱՀԸ

Երեկոյան դեմ Երևանում լուր տարածվեց, որ Թիֆլիսում անձնասպան է եղել Աղասի Խանջյանը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարը:

Ի՞նչ ահավոր, անհավատալի լուր:

Մարդիկ իրար հետ խոսում էին կամացուկ, վախով ու զարմանքով:

— Լսե՞լ ես:

— Ճի՞շտ է:

— Մի՞թե ճիշտ է:

— Ջի՛ կարող պատահել:

— Ախր ինչո՞ւ:

— Ոչ մի կերպ չեմ հասկանում:

— Ի՞նչն է ստիպել...

— Ինչո՞ւ զարմանալ. նույնը չարի՞ն Եսենինն ու Մայակովսկին...

— Բանաստեղծն ուրիշ, քաղաքական գործիչն ուրիշ...

Հաջորդ օրը լույս տեսած թերթերը պաշտոնապես հաստատեցին ահավոր լուրը: Տարածվեց այլ լուր՝ ոչ թե անձնասպան է եղել, այլ սպանել են:

Քաղաքը սգի մեջ է:

Խանջյանը սիրված ղեկավար էր: Թեև ընդամենը երեսունհինգ տարեկան, բայց մեծ հեղինակություն էր վայելում: Մարդիկ հավատում էին նրան, համարում ժողովրդական շահերի պաշտպան: Մարդիկ չէին հիշում, որ կոշտ խոսք ասած լինի, մի խնդրով դիմած լիներն ու նա մերժած լինի: Մի քանի անգամ տեսել եմ քաղաքում, մի երկու անգամ լսել եմ նրա ճառը: Անկեղծ պաթոս ուներ նրա խոսքը, խանդավառ շեշտ: Դեմքն ազնիվ էր: Նրան շատ էին սիրում գրողներն ու արվեստագետները:

Ռոմանտիկ պատկերացում էր կապված Աղասի Խանջյանի կերպարի հետ:

Ի՞նչն էր դրա պատճառը, ա՞յն, որ երիտասարդ էր, թե գուցե այն, որ մեծ ծրագրեր ուներ, մեծ էլ ձգտումներ: Գուցե նաև այն, որ երբ խոսում էր, պատկերացնում էիր այն իրական առաջադիմությունը, որ ունի և դեռ ունենալու է հանրապետության ժողովրդական տնտեսությունը:

Գուցե մի պատճառն էլ այն էր, որ ի դեմս Աղասի Խանջյանի՝ ժողովուրդն ուներ ղեկավար, որի մեջ խաչաձևված էին հինն ու նորը: Իսկապես, այնպիսի տպավորություն էր, որ եկել է հայրենի պատմությունից, շատ հեռավոր ժամանակներից, ոտից գլուխ արդի ժամանակների մարդ էր, բայց նաև ապագայի, քանի որ նրա անձնավորությունը, նրա խոսքը լի էր երազանքով:

Խանջյանի դիակը Թիֆլիսից ե՞րբ բերին՝ չգիտեմ: Հիշում եմ թաղումը: Դագաղը դրել էին իր մենատանը, որ Զանգվի ափին էր: Գնացի, բայց չհաջողվեց ներս մտնել: Շատ մարդ կար: Այդտեղից թափորը ճանապարհվեց դեպի Կոնդ: Ցավն ու կսկիծը միացել էին ու մարդկանց բերել թաղման: Համաժողովրդական թաղում էր: Ով կարողացել էր՝ եկել էր: Մարդիկ կարծես որբացել են և անհայտ է, թե սրանից հետո ո՞վ է

իրենց հովանավորը, ժողովրդի շահերի պաշտպանությունն ո՞վ է առնելու իր վրա:

Հուզարկավորների հոծ բազմությունը, որ ո՛չ սկիզբ ուներ, ո՛չ էլ վերջ, շարժվեց դեպի Կողեռի գերեզմանատուն:

Դամբանական խոսք ասաց Կենտգործկոմի նախագահ Արմենակ Գուլոյանը, ավելի շուտ իր խոսքում վերաշարադրեց այն, ինչ հայտնված էր պաշտոնական հաղորդման մեջ: Նա զգուշացավ որևէ ավել խոսք ասել, որևէ մեկնություն տալ կատարված ողբերգական դեպքին: Եթե չեմ սխալվում, մեկն էլ խոսեց, ո՞վ, չեմ հիշում:

Դագաղի մոտ կանգնած էին Ամատունին, Դրաստամատ Սիմոնյանը և ուրիշ պաշտոնական անձինք՝ գլուխները կախ, մռայլադեմ: Այնպիսի տպավորություն էր, թե շփոթված են և չգիտեն, թե ինչպես պահեն իրենց՝ ցավակի՞ց լինեն կսկծի մեջ, թե դատապարտողի տեսք ունենան:

Տեսա Ալազանին, որը հեկեկում էր հորը կորցրած որբուկի նման: Կողքից քայլում էր Մարոն լացից կարմրած աչքերով: Աչքովս ընկան Մահարին ու Թոթովենցը: Նայում էի շուրջս ու փնտրում Զարենցին, լավ իմանալով, թե նա ինչ բարձր կարծիքի է Ազասի Խանջյանի մասին: Չտեսա:

Միտս չէ, թաղման ժամանակ էր, թե հետո, օրեր անց Գարեգին Բեսը պատմեց.

— Զարենցի մոտ էի, եկավ Խանջյանը, գրադարակից հանեց Ալազանի բանաստեղծությունների ժողովածուն, թերթեց, տեղը դրեց:

Տխուր էր:

Թիֆլիս ճանապարհվելուց մի օր առաջ էր:

— Երկրի վիճակը լավ չէ:

Բանաստեղծը ձայն չհանեց:

— Դե, ես գնացի: Ողջ լերուք:

Խանջյանի գնալուց հետո Զարենցը լուռ էր երկար ժամանակ: Միտքը Խանջյանի հետ էր: Հետո քմծիծաղ տվեց.

— Զարմանալի բանաստեղծական հոգի ունի: Գիտես, ինձ թվում է, թե Ալազանի հաջողված ոտանավորները սա է գրում:

Դագաղի մոտ կանգնած էր հանգուցյալի հայրը: Շփոթ արտահայտություն կար դեմքին, զարմանք ու ցավ, հարց ու

առեղծված և այս բոլորից՝ աղավաղված դեմք, ոչ այնքան որդուն կորցրած վշտակոծ հայր, որքան աշխարհը, կյանքը, մարդկանց հասկանալու անօգնական ջանք:

Հուղարկավորներից շատերն էին լալիս, շատերն էլ հագիվ էին զսպում իրենց, որ լաց չլինեն:

Ու թեև հողաթումբը պատրաստ էր, ծաղկապատված, մարդիկ չէին հեռանում, ասես չէին ուզում Աղասի Խանջյանին թողնել մենակ...

***

Մարդկանց միտքը Խանջյանին պատահած եղեռնական դեպքի հետ էր:

Թաղման դիշերը հուղարկավորներից մի քանիսը կալանավորվել էին, երևի նրանք, որոնք պնդում էին սպանության վարկածը:

Ասում էին, թե Անդրեևկրկոմի բյուրոյի նիստին Բերիան խիստ քննադատել է Խանջյանին, մեղադրել ազգայնամոլության մեջ: Ասում էին նաև, որ հետո Խանջյանն ու Բերիան թունդ վեճ են ունեցել, և Բերիան ատրճանակից գնդակ է պարպել վրան: Ոմանք էլ ասում էին նաև, որ նիստից հետո Խանջյանը եկել է հյուրանոց, անտրամադիր, վիրավորված սրտով պառկել է մի փոքր հանգիստ առնելու, և Բերիայի հանձնարարությամբ ինչ-որ մեկն ատրճանակից կրակել է:

Ասում էին նաև, որպես հանձնաժողովի անդամներ, Երևանից Թիֆլիս մեկնած բժիշկներ Սաղյանն ու Միրզա-Ավագյանը հանգուցյալի դիակը զննելուց հետո տարակուսանք են հայտնել, կասկածի տակ են առել ինքնասպանության վարկածը:

— Խանջյանը ձախլիկ չէր, ինչո՞ւ է ձախ քունքից վիրավոր:

— Վիրավորված քունքի այրման շառավիղը ցույց է տալիս, որ գնդակն արձակվել է հեռավորությունից, մինչդեռ անձնասպանները ատրճանակի փողը քունքին են դնում ու նոր կրակում:

Դեռ այն ժամանակ, ասում էին, թե երևի շատ բան գիտե Խանջյանի թիկնապահը՝ Սանոյան Հովհաննեսը: Պաշտոնա-

կան մարդիկ չէին հարցնում: Սիրտ չէին անում: Ահը վեր էր մահից: Գուցե չէին էլ ուզում: Ո՞վ կարող է ասել: Ինքը՝ Սանոյանն էլ ձայն չէր հանում: Գլխից հո ձեռ չէ՞ր քաշել: Դա էլ հասկանալի էր: Հասկանալի չէր, սակայն, որ հետո, երբ շատ տարիներ անցան, երբ եկան Խրուշչովի ժամանակներն, ու Սանոյանը դեռ կար, ինչո՞ւ մեր ղեկավարները հարցուփորձ չարին նրան, մանավանդ որ ինքն ասում էր՝ «եթե հարցնեն, կպատմեմ»:

Հովհաննես Սանոյանը չկա արդեն:

Ի՞ՆՉ ԵՂԱՎ 1936-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԳԻՇԵՐԸ

Ես այսպես եմ պատկերացնում եղելությունը:

Այդ օրը բանաստեղծը հանգիստ ու դադար չուներ: Ո՛չ գիրք էր կարողանում կարդալ, ո՛չ էլ որևէ այլ զբաղմունք գտնել: Մխիթը նույն կետի շուրջն էր: Այդ կետը Ակսել Բակունցն էր: Նախկին և այժմյան հարազատը: Նրան հասած դժբախտությունը: Ու թեև ուշ գիշեր էր, անկողինն էլ պատրաստ՝ քուն չէր գալիս աչքերին: Անհանգիստ ու տագնապած՝ սենյակն էր չափում, անցնելով մի ծայրից մյուսը, մեկ անգամ, տաս անգամ, հարյուր անգամ... Տեսնես քանի՞ կիլոմետր անցավ:

Ինչպե՞ս, ինչո՞ւ: Մի՞թե: Չի կարող պատահել:

Չարենցը մոտեցավ գրասեղանին, թուղթ դրեց առաջը, գրիչն առավ ձեռքը:

Ու դրեց:

Ոչ ոք չգիտեր Բակունցի արժեքն այնպես, ինչպես Չարենցը: Եվ նա գտավ բառեր, բնորոշումներ՝ մարմարյա, հրնամենի, բուրյան և համեմատեց նրան սուրբ վանքերի խաչքարերի հետ:

Գրեց ու կանգ առավ:

Սրտի անկյունում վերք կար, չսպիացած վերք: Եվ ինքն էլ լավ չգիտեր, ոչ էլ հաշիվ էր տալիս իրեն, թե դա մեծ արժեքի կորստյան ցա՞վն է, թե հին վերք էր, որ Բակունցն էր հասցրել իրեն: Մի պահ սիրտը մղկտաց և այդ վիրավորված տրամադրության մեջ նա վերստին առավ գրիչն ու գրեց՝

Ես ներում եմ ահա (քո հանցանքը)

. . . . . .

Ես ներում եմ ահա իմ անաղարտ
Մտերմության, սիրո առևանգումն անգամ,
Ներում եմ վերքն անգամ անծայրածիր,
Որ քո ձեռքով դժնի դու իմ սրտում բացիր...

Սխա՞լ էր, թե՝ ճիշտ, արդա՞ր էր, թե՝ անարդար։ Ուրեմն, Չարենցն, այնուամենայնիվ, մտածել է, որ Բակունցը մեղք ունի իր հանդեպ, այլապես ինչ խոսք կարող էր լինել ներելու մասին։

Ի՞նչն էր ներում, ինչո՞ւ էր ներում։

Գրիչը վայր է դրել, չի շարունակել՝ ինքն իրենից դժգոհ։

Ինչո՞ւ հիշել անցյալը, ինչո՞ւ փորփրել մոտիկ օրերի պատմությունը, ինչո՞ւ զբաղվել հին հաշիվներով, ո՞վ է մեղավոր, ո՞վ է իրավացի։

Ինչո՞ւ, ինչո՞ւ...

Մի՞թե ինքն այնքան փոքրոգի է, որ հիշի այդ բոլորը, երբ Բակունցին բաժին հասած դժնի ու եղերական ճակատագրից հետո ամեն ինչ անհայտ է, էլ ի՞նչ հաշիվ, ի՞նչ հոգեկան առևտուր, երբ վրա է հասել անեղևակայելին՝ դժբախտությունը, երբ մի սպառնալի ոճիր զոհ է փնտրում։ Այդ ո՞ր հուղարկավորն է դագաղին հետևում և հիշում, թե երբ ու ինչ վեճ է ունեցել հանգուցյալի հետ, թեկուզ կրքոտ ու վիրավորական։ Հին հաշիվները մանր ու չնչին են թվում։ Ինչպես պետք էր սպասել, Չարենցը ոչ միայն հրաժարվեց քիչ առաջ գրածից, այլև խղճի խայթ զգաց, ու նրա սխալը եղավ այն, որ չպատռեց քիչ առաջ գրածը։ Հիմա արդեն, երբ չափանիշները հավիտենականության են ենթակա, մի՞թե հիշելու է, թե Բակունցն ինչ դիրք բռնեց իր հանդեպ, խռովե՞ց, թե հաշտ մնաց։

Գրիչն առավ ձեռքը, մաքուր թուղթ դրեց առաջը ու գրեց առաջին տողերն այնպես, ինչպես քիչ առաջ էր գրել, բայց ավելի մշակված ու վերջացրեց բոլորովին այլ կերպ... Էականը Չարենցի համար դարձավ Բակունցի անմահությունը, նրա գրչի տակից դուրս եկած էջերը, այլապես նրա արվեստը չէր համարի մյուռոն անանձնական, սրբազնագույն...

Այս ամենի համար է, խեղճ իմ բարեկամ,
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...

Այս ամենի համար,— և քո եղերական
Տառապանքի համար, որ արդ կրկին
Վհատություն է խառնում քո անաղարտ երգին—
Ես քեզ պարգևում եմ ձեռք եղբայրական...
Ես ներքողում եմ քեզ ահա կրկին անեղծ
Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,—
Երբ դեռ դու այր էիր մի անարատ,
Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...

Ու հիմա, այս տողերը գրելիս, ես վերհիշում եմ Դոստոևսկու գժտությունը Տուրգենևի հետ:

Դոստոևսկուն հրավիրել են Մոսկվա՝ Պուշկինի արձանի բացման առթիվ ճառ ասելու: Նախապես գրել էր ճառը, որտեղ հիացմունքի բացականչություն կար՝ ո՞ր ռուս գրողն է ռուս կնոջ կերպարը գծել այնպես հարազատ, ինչպես Պուշկինը Տատյանայի կերպարը:

Պարզվում է, որ Դոստոևսկին իր ճառի ձեռագրի լուսանցքում մատիտով գրած է եղել՝ «Թերևս մեկ էլ Տուրգենևն իր Լիզայով»: Ասում են, որ Տատյանայի անունը տալուց հետո վիպասանը կանգ է առել: Դադարն անբնական երկարել է: Ոչ ոք չի հասկացել, թե ինչ է կատարվում ճառախոսի հետ: Պարզվում է, որ նրա հոգում կռիվ է սկսվել՝ տա՞լ թե չտալ Տուրգենևի անունը: Նա Տուրգենևին համարում էր իր հակառակորդը, բայց դրա կողքին կար նաև հանրահայտ գրական ճշմարտություն, ամենքն անխտիր, այդ թվում և ինքը, համարում էին, որ ռուս կանանց կերպարներ ստեղծելու մեջ Տուրգենևն անգերազանցելի է:

Ուրեմն Դոստոևսկու նման գրողն էլ կարող էր տատանվել: Եվ հոգեկան կռիվն ասեմ, թե՝ երկընտրանքը, ավարտվել է հօգուտ գրական ճշմարտության, և Դոստոևսկին, ի զարմանս իր և Տուրգենևի քաղքենի երկրպագուների, տվել է Տուրգենևի անունը:

Ուրեմն հանճարներն էլ մարդ են՝ մարդկային կրքերով ու թուլություններով:

Կարևորն այն է, որ Դոստոևսկին հաղթահարել է հոգեկան ճգնաժամը:

Նույնը և Զարենցը:

Էականն այն է, որ Զարենցը մտածել է Բակունցի հետ ունեցած գժտության մասին, բայց հետո հաղթել է սթափ բա-

նականությունը՝ ինչո՞ւ մանրանալ, մանավանդ այն տառապալի ճակատագրից հետո, որ բաժին էր ընկել մեծատաղանդ գրողին, որի անհետացումով մեծ կորուստ է ունենում ժողովուրդը, գրականությունը, վերջապես՝ ինքը:

Վերջապես լավն ու ճիշտն այն է, որ նրանք մտերիմներ են եղել և լավ չէր և ոչ էլ ճիշտ այն, որ նրանք այլևս մտերիմներ չէին: Բակունցին չվիճակվեց կարդալ Զարենցի սքանչելի տողերը: Բայց Զարենցի խռովված հոգին երևի թե հանդարտվեց:

ՆՈՐԻՑ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՄ

Համալսարանն ավարտելուց մի շաբաթ անց հրավեր ստացա պաշտոնավարելու Երևանի մանկավարժական ուսումնարանում. առաջարկում էին հանձն առնել հայ գրականության դասավանդումը: Այն տարիներին ասպիրանտն իրավունք ուներ ուսուցումը և աշխատանքը համատեղել: Հրավերն ընդունեցի և երկու ուսումնական տարի աշխատեցի:

Բացի գրականության ուսուցիչներից, որ իմ դրշակից ընկերներն էին, մնացածը նոր մարդիկ էին իմ կյանքում:

Ինձ համար ծանոթությունը նոր մարդու հետ հոգեկան ծանրը պարտականություն է. չգիտես ի՞նչ մարդ է, ինչպիսի՞ կրթությամբ և դաստիարակությամբ, բնավորության ի՞նչ գծերով է գալիս քո աշխարհը մուտք գործում: Ուրեմն չգիտես, թե ինչ խոսես, ինչ չափով կարող ես անկեղծանալ, հումորի զգացում ունի՞ թե ոչ: Բայց այդպես է սկզբում, իսկ հետո, երբ ծանոթությունը կայանում է, անցնում է ինչ-որ ժամանակաշրջան, ու եթե համակրելի է, մնում եմ զարմացած, թե ինչպե՞ս կարող էի մինչև հիմա չճանաչել այդ մարդուն, ծանոթություն ու ընկերություն չանել հետը:

Իմ մասին ասել, որ մարդախույս եմ, չի կարելի, ավելի շուտ՝ հակառակը, դյուրահաղորդ եմ, հեշտ եմ բացում հոգուս դռները նոր ծանոթությունների առաջ: Այդպես է սակայն ծանոթանալուց հետո, բայց մինչև ծանոթանալը խուսափող եմ, փակ եմ ու երբեք չի եղել իմ մեջ այսինչի կամ այնինչի հետ, ով էլ եղած լինի, անպայման ծանոթանալու տենչը:

Միշտ էլ երազել եմ լինել մեծ մարդկանց կյանքում՝ հասկանալ, թե հանճար ասվածն ո՞յն է, ինչ որ կարդում ենք, թե դա նաև կարդացածին համապատասխան իրական կյանք է: Եվ հակառակ իմ այդ բուռն ձգտման, երբեք նախաձեռնություն հանդես չեմ բերել ծանոթության պայմաններ ստեղծելու: Ծանոթությունը տեղի է ունեցել ինքնաբերաբար, մեծ մասամբ գործի բերումով: Եղել եմ դրամատիկական ստուդիայի սան և հետևել Փափազյանի պարապմունքներին, եղել եմ հրատարակչության աշխատող, և գործի անհրաժեշտությունը տարել է ինձ Ավետիք Իսահակյանի և ուրիշների տուն: Դարձել եմ դիտահետազոտական օջախի տնօրեն, այցի եմ գնացել Մարտիրոս Սարյանին: Գրել եմ հոդված և իմ հայտնած անհեթեթ մտքերի պատասխանը տալու համար ամաչել, կարմրել եմ Չարենցի առաջ:

Նույնը պետք է ասեմ նաև աշակերտական դասարանների վերաբերյալ: Այստեղ ևս ծանոթությունը տեղի է ունենում ակամա, զանգը տված է, և դու ուզես չուզես, պարտավոր ես մտնել դասարան, ուր քո առջև նստած են քսան կամ մի փոքր ավելի պատանիներ՝ տղաներ ու աղջիկներ: Բոլորն էլ թուխ, սևաչյա, հայացքները խոր և թախծոտ: Եվ առաջին իսկ օրը որոշվում է՝ կայացա՞վ արդյոք ծանոթությունը, թե՝ ոչ, այսինքն՝ ծանոթությունը մնաց լոկ ծանոթությո՞ւն, թե հինգ րոպեից հասկացար, որ այս դասարանը սպասում է քեզ:

Միշտ այն կարծիքին եմ եղել, և հիմա նույնպես. թե դասարանական պարապմունքը սիրո խոստովանության է նման: Սիրով իրեն ունկնդրող դասարանի հանդեպ ուսուցիչը դառնում է հոգեպես շռայլ, մտքով պատրաստակամ՝ հաղորդելու սաներին իր իմացածը, նրանց չգիտացածը: Ուսուցչի համար սիրելի է գիտակցել, որ ինքն ընդլայնում է աշակերտի մտահորիզոնը, հոգեպես հարստացնում նրան:

ՏՆՕՐԵՆԸ

Ուսումնարանի տնօրենը հազիվ երեսունը բոլորած մի երիտասարդ կին էր՝ Արուս Պողոսյան: Հետո պարզվեց, որ ամուսինն իմ ընկերներից է, գրականագետ Աստուր

Աստարյանը, իսկ մի ժամանակ, երբ բանաստեղծություններ է գրել՝ Ասուր Վենկարն: Ազնիվ նկարագրի տեր մարդ, որ էջմիածնում ուսուցիչ լինելով, 17 թե 18 տարեկան հասակում հանդիպել է Արուսին, որը նույնպես ուսուցչուհի էր, սիրահարվել և ամուսնացել են: Արուսի փոքր քույրն էլ, անունը Հասմիկ, իմ գրող ընկերոջ՝ Հրաչյա Քոչարի կինն էր:

Արուսը Արտաշատի Բուրաստան գյուղից էր, հայրը հարուստ մարդ է եղել, այնքան մեծ կարողություն է ունեցել, որ առևտրական կապեր է հաստատել Մոսկվայի, Լվովի, Վարշավայի, Կրակովի և Պետերբուրգի հետ:

Հայտնի Շուստովը վերջին տարիներին անանկացած վիճակում էր ու թեև պահպանում էր կոնյակի ֆիրմայի անունը, բայց բոլոր ծախսերը տեսնում էր Արուսի հայրը: Իրենց գյուղում մարդ չկար, որ Արուսի հորը պարտական չլիներ ու երբ հասել են կուլակաթափման ժամանակները, ադջ գյուղը մի մարդու պես ոտքի է կանգնել ու խնդրել, որ Ռուբեն աղային ու իր կնոջը՝ Լիային ձեռք չտան:

Հոր ու մոր մարդկայնությունից շատ բան էր անցել Արուսին: Ընկերներ լինեին, թե ազգականներ, հենց որ նեղվեին՝ դիմում էին Արուսին: Բարոյական խնդիր լիներ, թե նյութական պահանջ՝ առաջին ձեռքը մեկնողը Արուսն էր և այդպես էր ոչ միայն մի օր, մի շաբաթ, մի ամիս, մի տարի, այլ տարիներ շարունակ: Այսօր Պողոսյաններից որ ազգականին հարցնես Արուսից, անունը կտա հուզմունքով, օրհնելով նրա հիշատակը:

Ամենքի բարի հրեշտակն էր Արուսը:

Ահա այս կնոջ հետ աշխատեցի երկու ուսումնական տարի, որը հակառակ պաշտոնի ընձեռած իշխանության, պահում էր իրեն վերին աստիճանի համեստ, հայ կնոջը վայել խոնարհությամբ, բայց գործի ճշմարիտ տերն էր, պահանջկոտ ու խիստ, բարյացակամ և ընդառաջող, իր հետ աշխատող բոլոր ուսուցիչներին, որ իր ընտրությամբ էին հրավիրված, գնահատող ու հարգող:

Գրում եմ այս տողերը, հիշում Արուսին, որի հետ կարճ աշխատեցի, բայց իր հանդեպ խոր հարգանք մնաց իմ մեջ: Նրա բարությունը սովորական չէր, աչքը մանկությունից կուշտ, լիության մեջ մեծացած մարդու բարություն էր դա,

խանում էր նա, մի զարմանալի տաղանդով ևս. կաներ բարություն, իսկ ինքը կմնար ստվերում, իսկ եթե իմանայիր, որ նրան ես պարտական, ապա այնպես կպահեր իրեն, որ իբր արածը մեծ բան չէ:

Աշակերտները սիրում էին իրեն, հետն աշխատող ուսուցիչները՝ նույնպես: Խոր հարգանքի զգացումով էին համակված նաև նրանք, որ իր երկու տարիքն ունեին: Պարզ էր, ընկերական և հումորով, գնահատում էր կատակը, համով և սրամիտ խոսքը, սրտանց ծիծաղում: Ջափի զգացումը կառավարում էր իր հարուստ բնավորությունը և լավ գիտեր, թե երբ պետք է կանգ առնել, երբ պետք է չափը կորցնող զրուցակցին ասատել, որ մթնոլորտի խանգարումը կանխվի ժամանակին: Որտեղի՞ց այդ կնոջը, միշտ իրեն համեստ ու խոնարհ պահող կնոջն այդքան ուժ: Դա էլ, իմ կարծիքով, բնության կայծն էր, որ մեկին շնորհվում է, մյուսին՝ ոչ:

Աշխատում էր Արուսը գլուխը կախ, նվիրված և համբերությամբ: Աշխատում էր ուսմասվար Պետրոս Ջանոյանի հետ համերաշխ, որ նույնպես համակրելի անձ էր, միշտ անընշմար, հավասարակշիռ, իր գործը լավ իմացող մարդու հմտությամբ, որ կարծես ծնվել էր ուսմասվար լինելու համար:

Արուսն ընդունվեց ասպիրանտուրա, մասնագիտացավ կենսաբանության մեջ, պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա, դասախոսեց համալսարանում, ընտրվեց ամբիոնի վարիչ: Ես այդ ժամանակները չեմ հանդիպել նրան, չեմ շփվել հետը, բայց վստահ եմ, որ այդ ժամանակ էլ նույնն է եղել, ինչ որ մեր համատեղ աշխատանքի տարիներին:

Արուսը վաղուց չկա, Ասատուր Ասատրյանը՝ նույնպես: Չկա և Պետրոս Ջանոյանը, չկան շատ ուսուցիչներ, բայց իմ հիշողությունը փայփայում է յուրաքանչյուրի անցյալ գոյությունը, պետք է անկեղծ լինեմ և խոստովանեմ, որ ժամանակին հարստացրել են նրանք իմ հոգին: Ես մտովի փորձում եմ հանել նրանց իմ կյանքից և ստացվում է մի բաց, ամայի տարածություն:

Մի մեծ պակասություն եմ դիտել. մարդիկ, որոնց թվում նաև ես, հաճույքով պատմում են իրենց հանդիպումները նշանավոր դեմքերի հետ և խոստովանում, թե ինչ են ստացել

նրանցից, բայց, անհասկանալի կամ գուցե հասկանալի պատճառներով, հարկ չեն համարում հիշել իրենց դասընկերոջը, իրենց հետ աշխատող մարդուն, որ վատ անհատականություն լինելով, ազդել է իրենց վրա, ինչո՞ւ հիշեն, չէ որ նա ո՛չ Զարենց է, ո՛չ էլ Դեմիրճյան։ Տարօրինակ է, բայց այդպես է։ Ու եթե ես միտք հղացա գոնե մի երկու էջ հատկացնել Արուս Պողոսյանին, ապա թերևս քիչ առաջ նկարագրված և ամենքիս մեջ արմատացած հոգեբանությանը հակադրվելու անկեղծ ցանկությունից։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Սկսվեց նոր ուսումնական տարին։ Ուսուցչանոցում են գրեթե բոլոր դասատուները։ Ծանոթները քիչ են, անծանոթները՝ շատ։ Միմյանց ներկայացնող չկա։ Իրար նայում ենք խուզարկու հայացքով՝ տեսնես ո՞վ է դիմացինը, ի՞նչ մարդ է։ Բայց դպրոցն ունի իր առանձնահատուկ մթնոլորտը. այդ խորթ պահը երկար չի տևում, մի կամ երկու օր և մարդիկ հանդիպում են իրար, ասես վաղուցվա ծանոթներ լինեն։

Հիշեմ այստեղ ուսուցիչներից մի երկուսին։

Ներկայացավ ինձանից մի քանի տարով մեծ ուսուցիչ.

— Ծանոթանանք։ Ես մաթեմատիկայի դասատու եմ, բայց սիրում եմ գրականություն և արվեստ այդ ասպարեզի մարդկանցից ոչ պակաս։

Այսքանը բավական էր հասկանալու, որ դիմացինը վանեցի է։

Ձեռքը պարզեց.

— Խանջյան։

Ես զարմացած նայեցի իրեն։ Չգիտեմ ինչու կարծում էի, թե այդ ազգանունով պետք է ընդամենը մի մարդ եղած լինի, ինչպես որ չեն կրկնվում՝ Րաֆֆի, Զարենց...

Եվ ինձ համար միանգամայն անհասկանալի պատճառներով, ինքս էլ չգիտեմ, թե ինչու, երևի սրամիտ երևալու ցանկությունից, ասացի.

— Գուցե նաև Աղասի։

— Երևակայեք, որ Աղասի՝ ճիշտ ու ճիշտ այդպես՝ Աղասի Խանջյան:

Ա՛յ քեզ զուգադիպություն:

Հետո վրա բերեց.

— Կատակ արի, ճիշտ է, Խանջյան, բայց ոչ՝ Աղասի, այլ Արամ Խանջյան:

Այս Խանջյանը միշտ մոտենում էր ինձ ու հարցնում.

— Գրողների տանն ի՞նչ կա:

Հայտնում էր իր կարծիքը նոր լույս տեսած գրքերի մասին:

Մի զարմանալի սովորություն ուներ: Ինչ էլ որ ասեր, երկու խոսքից հետո ծիծաղում էր անպայման: Կենսուրախ էր, միշտ ժպիտ կար դեմքին, կատակասեր էր, քաղաքում տարածված անեկդոտները նա էր առաջինը պատմում և ինքն էլ իր պատմածի վրա առաջինը ծիծաղում:

Հենց որ ուսուցչանոցից դուրս էր գալիս, այս կենսախինդ մարդը մոտչլության տիպար էր դառնում, և աշակերտները չորանում և պատին էին կպչում: Պարզապես ահ ու սարսափ աշակերտների համար:

Ես չգիտեմ, թե 1937-ի փոթորիկը իր ալիքների մեջ նրան ևս առա՞վ, թե ոչ, իսկ դա կարող էր տեղի ունենալ թեկուզ այն չնչին պատճառով, որ իր ազգանունը Խանջյան էր:

— Այսպես շարունակվել չի կարող, քիչ էլ համբերեք և կլինի առաջվա պես լավ, նույնիսկ՝ ավելի լավ...

Մանկավարժական ուսումնարանում դասավանդում էր նաև Մամիկոն Գասպարյան անունով մի մարդ, տարիքով ինձանից երևի տասնհինգ տարով մեծ: Հեղինակ էր մի շարք ձեռնարկների ու դասագրքերի: Կազմել էր նաև այբբենարան, որը բարեփոխումների, կրճատումների և լրացումների էր անընդհատ ենթարկում, բայց չէր հաջողվում հրատարակել: Այդ այբբենարանի շուրջը ինչ-որ վեճեր կային, որոնք մասնագիտական բնույթ ունեին: Իր ասպարեզի խանդավառ մասնագետներից էր: Ոչ մի կասկած: Ավելին՝ մի կույր նվիրվածություն ուներ իր գործի նկատմամբ: Ու այս մարդը, որ աղնիվ ու շարքաշ աշխատող էր, այնքան էլ հաջողակ չէր և, իր կամքից անկախ, հաճախ էր ընկնում ծանր կացությունների մեջ: Ավարտել էր էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Դա բավական

էր, որ իմ աչքին լուրջ մարդու համարում ունենար: Թափառումների մեջ էր անցել կյանքը՝ Սուխում, Լենինական, Ղարաքիլիսա, Երևան: Ամեն տեղ ուսուցիչ՝ հայոց լեզու, գրականություն, մեթոդիկա: Տարիներ անց նրան հաջողվեց հրատարակել իր «Այբբենարանը», նույնիսկ վերահրատարակել: 40-ական թվականներին պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա՝ «Տառահեգական մեթոդը և այդ մեթոդով կազմված հայ այբբենարանները 1500 տարվա»:

Կոշտ արտաքին ուներ: Նայում էիր՝ ասես Բաբելոնի ծընունդ լիներ: Ձայնն էլ բամբ էր: Շշուկը ծանոթ չէր նրան: Ուսուցչանոցում երբ խոսում էր՝ միայն իր ձայնն էր լսվում:

1937-ին նա էլ ընկավ մի պատմության մեջ, որ ծանր է հիշելն անգամ:

Ամեն օր իմանում էինք, թե սրան-նրան այս գիշեր տարել են:

Ուսուցչանոցում, մեծ դասամիջոցին, Մամիկոն Գասպարյանը ձեռքին ունենալով ռուբլիանոց, ակնոցն աչքերին նայում է թղթադրամի վրա եղած ստորագրություններին, հանդիպելով ֆինանսների նախկին ժողովրդական կոմիսարի, իսկ այժմ կալանքի տակ գտնվածի ստորագրությանը՝ ակսում խոսել նրա հետ:

— Ա՛յ մա՛րդ, մեր երկրի բոլոր փողերը քո տրամադրության տակ էին, ի՞նչդ էր պակաս, որ հակահեղափոխական դարձար: Ի՞նչդ էր պակաս, այ ընկեր ժողկոմ, ինչո՞ւ չուղեցիր հանգիստ ապրել:

Բոլորս ծիծաղեցինք այս միամիտ մենախոսության վրա, դրան նշանակություն չտալով: Բայց լուրը հասել էր կուսակցական կոմիտեի քարտուղարին, որը հաբկ համարեց ոչ միայն կանչել Մամիկոն Գասպարյանին և խրատ տալ ու սպատնալ, այլ նաև ուսուցչական ժողովի նյութ դարձրեց, անելով Գասպարյանի պատմությունը, տալով դրան անսպասելի մեկնաբանություն, իհարկե, քաղաքական, մատ թափ տվեց ժողովականների վրա, ասելով թե մեր ուսուցիչները երբեմն անզգույշ են պահում իրենց, թույլ են տալիս այնպիսի արտահայտություններ, որոնք քաղաքական տհասության նշան են:

— Ընկ. Գասպարյան, եթե մեկը մեկուսացված է, նշանա-

կում է ժողովրդի թշնամի է, ինչ եք դուք առել ու անցել՝ ընկեր, հա, ընկեր: Ի՞նչ ընկեր: Մի՞թե այդքան չեք հասկանում, եթե չեք հասկանում, ձեզ ինչպե՞ս վստահենք մատաղ սերնդի դաստիարակությունը:

Բայց Գասպարյանն այս դիտողությունից ոչ մի եզրակացություն չարեց:

Ընկավ մի նոր պատմության մեջ:

Լրագրերը հաղորդեցին՝ Կույբիշևը վախճանվել է: Սգո միտինգ կայացավ: Ճառեր ասվեցին: Ուսանողները որոշեցին Կույբիշևին նվիրված սգո անկյուն պատրաստել: Տղաներին միացան աղջիկները և շատ արագ գործը գլուխ բերին: Ուսանողները վերջացնելու վրա էին իրենց գործը, որ զանգը տալիս է, դասարանից ուսուցչանոց գնացող Մամիկոն Գասպարյանը, տեսնելով խնամքով պատրաստվող սգո անկյունը, բացականչում է՝

— Ճաշակով գործ եք արել, շնորհավորում եմ:

Ուսանողներից որ մեկը, չգիտեմ, գնում է ուսումնարանի կուսակցական քարտուղարի մոտ և հայտնում՝

— Ընկեր Գասպարյանը շնորհավորեց ընկ. Կույբիշևի մահը:

Այս խելքից դուրս, ոչ մի տրամաբանության չենթարկվող ամբաստանությունը բավական էր, որ Մամիկոն Գասպարյանի անձը համարվեր կասկածելի, և մեր թունդ կուսակցական քարտուղարը բոլոր ժողովներում մութ ու երկդիմի ակնարկներ հայտներ հնագույն մանկավարժի հասցեին: Բայց բանը դրանով չավարտվեց: Եթե պատմությունը մինչ այդ տխուր էր, քիչ ժամանակ անց բարբարոս ընթացք առավ:

ԱՈՒՏՈԴԱՖԵ

Ծանր ժամանակներ էին: Հիմա էլ, երբ շատ տարիներ են անցել, հիշելիս մարդ փշաքաղվում է:

Կուսակցական քարտուղարի կարգադրությանը հետևելով, ուսումնարանի սանները հավաքեցին Մամիկոն Գասպարյանի կազմած դասագրքերն ու ձեռնարկները, կուտակեցին հի-

աունին հասնող դիրք ուսումնարանի բակում և նավթ լցրին ու այրեցին:

— Աուտոդաֆե,— բացականչեց ուսուցիչներից մեկը:

Ես հիշեցի Լիոն Ֆեյխտվանգերի «Օպենհայմների ընտանիքը» վեպը: Մի անկյունում կանգնած էր փշաքաղված Մամիկոն Գասպարյանը: Աչքերից արցունքներ էին թափվում:

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ

Ուսուցչուհիներից միտս է մնացել Թամար Գաբրիելյանը: «Նախակրթական հասակ», կարծեմ այսպես էր կոչվում նրա դասավանդած առարկան:

Կարճ կտրած մազեր ուներ, կրակացայտ աչքեր, դեմքի խիստ արտահայտություն, որ կարծես ասելիս լիներ՝ «Իմ սիրտը զբաղված է, ինձ չմոտենաք, հաճոյախոսությունները պահեք երիտասարդ աղջիկների համար»: Հազվադեպ էր ժպտում, բայց հենց որ ժպտում էր, փոխվում էր, դառնում բոլորովին ուրիշ մարդ:

Խիստ դասատու էր, աշակերտներին երես չէր տալիս: Պահանջկոտ էր և ուներ խոր համոզմունք, որ եթե ուսումնարանը մանկավարժական է, ոչ մի առարկա այնքան և այնպես կարևոր չէ, ինչպես իրենը: Եվ ուներ այդ դիրքավորման մանկավարժական հիմնավորումը.

«Եթե ամեն մարդ անձնավորություն է, ուրեմն, մանկավարժներից է կախված, թե ինչպիսի հիմքերի վրա կդնեն երեխայի դաստիարակության գործը նախակրթական հասակում: Ուրեմն՝ եզրակացություն, մարդու ապագան կախված է իմ դասավանդած առարկայից»:

Աշակերտները մեծ կարևորություն չէին տալիս նրա խիստ պահանջներին, նախ՝ այն պատճառով, որ մեծ մասը մտադիր չէր նվիրվել ուսուցչական գործի, իսկ այն մասն էլ, որ որոշում ուներ ավարտելուց հետո գործել մանկավարժության ասպարեզում, ոչ մի ցանկություն չուներ աշխատել մանկապարտեզում:

Սրանից մի քանի տարի առաջ ինձ մոտ եկավ էմիլ անունով մի հարգելի երիտասարդ և ասաց, թե մայրը, որի հետ

աշխատել եմ 30-ական թվականների կեսերին Երևանի մանկավարժական ուսումնարանում, ծանր հիվանդ է և ուզում է տեսնել ինձ:

Գնացի: Պարզվեց, որ ինձ կանչողը Թամար Գաբրիելյանն է, ինչ-որ ծանր հիվանդությամբ գամված է անկողնուն: Անմխիթար տպավորություն: Համարյա չէր շարժվում, դժվար էր շնչում:

— Ներիր, որ նեղություն տվի,— ասաց նա,— տեսնում ես վիճակս, ինքս գալ չէի կարող:

Ես կատակի տվի, հիշելով մեր խոսելու այն տարիների ոճը.

— Ինչի մասին է խոսքը, Թամար, միշտ էլ կավալերը պետք է ընդառաջ գնա դամայինին:

Էմիլն առաջարկեց մի գավաթ սուրճ: Մինչ ես սուրճը կխմեի, Թամարն ասաց.

— Ռուբեն, թոռնիկ ունեմ, անվանել եմ Սաքոյիս անունով, ավարտում է կոնսերվատորիան, երաժշտագետ է: Իմ միակ խնդրանքը՝ տեր կանգնիր նրան:

Խոստացա:

Երբ հեռանում էի, ասաց.

— Ռուբեն, չմոռանաս, մեռնողի խնդրանք է:

Երբ Սաքո Հովհաննիսյանը «Հայ ժողովրդական երաժշտություն» մասնագիտությամբ ընդունվեց ասպիրանտ մեր ինստիտուտում, խնդրեցի նրան, որ այդ ուրախալի լուրը շտապի հայտնել տատին:

— Մի շաբաթ առաջ մահացավ:

Մարդո Ավետիսյան: Ռուսաց լեզու էր դասավանդում: Մի մեղմ արարած, լավ դիմագծերով, բարի մարդ, լավ ընկեր: Աշակերտները սիրում էին նրան: Իր գործի ճշմարիտ նվիրյալներից էր, մանավանդ անձնական ոչ մի կյանք չուներ՝ տան հոգսերն էին ու դպրոցը: Ոչ ոքի մտքով չէր անցնի նրան դառնացնել, կոշտ խոսք ասել: Բավական է, որ քեզ մոտենար, և նրա մեղմությունը, հոգեկան հանդարտությունը փոխանցվում էր քեզ: Ու թեև ինձանից մեծ չէր, բայց ինձ թվում էր, որ իմ մեծ քույրն է: Այդ նույն ընկալումն ունեին և ուրիշները: Ինձ հայտնի չէ, թե նրան ինչ չափերով հաջողվեց հայ պատանիներին ռուսերեն սովորեցնել, բայց չեմ կաս-

կածում, որ իր մարդկային նկարագրով աշակերտներին կարողացավ ներշնչել մեղմություն, բարություն, ազնվություն։

Մեկ-մեկ տեսնում եմ Մարգոյին՝ գիրք է կարդում, նոր լույս տեսած վեպեր, վերընթերցում Տոլստոյ և Դոստոևսկի, հետո դուրս է գալիս փողոց, անցնում ծանոթ փողոցներով, չնկատելով անցորդներին՝ ամբողջապես հանձնված վերհուշին։ Թոշակառու է։ Այն ժամանակ էլ փոքրամարմին էր, վախտ արարած, հիմա ավելի է փոքրացել։ Վերջերս այցի եկավ ու շնքսպիրյան մի երկու գիրք նվիրեց. նույն մեղմ ու ազնիվ արարածը, նույն բարի հոգին... Իր ձեռքի տակով անցած աշակերտների հանդեպ պարտքը կատարած մարդ է։ Նայում էր ինձ, ու հայացքի մեջ մտամոլորություն տեսա։ Տարակուսանք կար հայացքում՝ «Ուսուցիչը՝ ուսուցիչ, աշակերտն էլ աշակերտ, իսկ ես, ես ի՞նչ հասկացա այս կյանքից, ամուսին չունեցա, ընտանիք չկազմեցի, երեխաներ չունեցա...»։

Լավ իմանալով իրեն, գիտենալով, որ իր կյանքի ափոփանքն ուրիշների հաջողություններն են, ուրիշների երջանկությունը, գիտեի, որ խոսելու է աշակերտներից։ Ասես նա էլ կարդում էր իմ չհայտնած մտքերը։

— Տեսնես մեր աշակերտները հաջողություն ունեցա՞ն, երջանիկ եղա՞ն...

Որքա՜ն հարազատ մնացիր ինքդ քեզ, Մարգո։

ՍՈՐԲՈՆԻ ՈՒՍԱՆՈՂԸ ԿԱՄ ՔԻՄԻԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Լավ ուսուցիչներ ուներ մանկավարժական ուսումնարանը։ Եվ բոլորն էլ, ինչպես ասել եմ արդեն, միմյանց նկատմամբ համակրանք ունեին։

Ուսուցիչներից մեկը Վաղինակ Բեքարյանն էր։ Թեև քիմիա էր դասավանդում, բայց մոտիկություն էր ցույց տալիս հայոց լեզու և գրականություն դասավանդողներին։ Մեզ հետ խոսելու ավելի նյութ ուներ, քան՝ մյուսներին։

Իրեն շուք էր տալիս ֆրանսերենը, որին տիրապետում էր բավական ազատ։ Բացի դա՝ արևմտահայ լեզվի խառնուրդը։ Երբեմն էլ խոսելիս Դուրյանից կամ Վարուժանից մի քանի

տող էր ասում, և զգում էինք, որ իր արտաբերումը տարբեր է, ավելի հարազատ, ավելի քաղցրահնչյուն...

Սիրում էր իր կյանքից պատմել՝ մանկությունը, Ֆրանսիա մեկնելը, Սորբոնում սովորելը, Հայաստան փոխադրվելը: Ամեն անգամ մի բան էր պատմում և ամեն անգամ ոչ որպես անցած-գնացած իրողություն, այլ զգացմունքով և հուզմունքով, կարծես երեկ իր գլխի վրայով անցած դեպքն էր պատմում, թեև միշտ խոսքը հանդարտ էր, ինքը չափավոր և միշտ ինչ-որ շրջանակների մեջ դրված...

Հիմա, որ ուզում եմ մտաբերել, թե ինչ է մնացել հիշողության մեջ նրա պատմածներից, ստացվում է հայ մարդու, հատկապես արևմտահայի կյանքի բնորոշ մի պատմություն:

Երբ հանդիպեցինք, իսկ դա 1936-ին էր, նա հիսուն չկար, դեռ ուներ հինգ տարի, որ բոլորեր հիսնամյակը: Ասում էր, որ ինքը ծնվել է Պարտիզակին շատ մոտ մի գյուղում:

Իմանալով, որ Բուրսայում հայկական վարժարան կա, փախել է գյուղից, մեծ է եղել ուսման տենչը:

— Բուրսայի վարժարանը,— պատմում էր Վաղինակը,— բոլորը կոչում էին Քալանթարյանի վարժարան: Այդ կրթական օջախը նա էր բացել: Այդ Քալանթարյանը Լևոն Քալանթարի հորեղբոր տղան էր, որ ամուսնացել էր պարտիզակցի մի աղջկա հետ և որոշել Բուրսայում դպրոց հիմնել:

Բեքարյանի պատմածի շարունակությունն ավելի հետաքրքրքիր էր:

— Բուրսայում դա միակ դպրոցն էր, որտեղ բոլոր առարկաները հայոց լեզվով էին ավանդվում: Վարժարանի տնօրենը՝ Քալանթարյանը, ռուսահպատակ էր, հետևապես վարժարանի մուտքի մոտ կախված էր ռուսական կայսրության դրոշը, ուստի թուրքերն իրենց թույլ չէին տալիս միջամտել, խառնվել վարժարանի ներքին գործերին:

— Հետո՞:

— Հետո այն, որ վեց թե յոթ հոգի էինք վարժարան ավարտողներս: Քալանթարյանը կանչեց և ուզեց իմանալ, թե մեզանից ով ինչով է զբաղվելու վարժարանն ավարտելուց հետո: Մեկը թե՝ ես բժիշկ եմ ըլլալու, մյուսը՝ զինվորական,

երրորդը՝ առևտրական, մեկն էլ կարծեմ ասաց՝ իրավաբան, հիմա չեմ հիշում, թե էլ ով՝ ինչ։

— Իսկ դու, Վաղինակ, քո մտքինն ի՞նչ է,— դարձավ ինձ պարոն Քալանթարյանը։

— Որոշած եմ ուսուցիչ լլլալ։

Պատասխանս սաստիկ հուզեց տեսուչիս։ Գրկեց ու համբուրեց, մոտեցավ մյուսներին էլ համբուրեց։ Բայց զգացի, որ միայն իմ մեջ տեսավ գաղափարի մարդու, որ կամենում է լուսավորություն տարածել ժողովրդի մեջ։

— Ընտրածդ ճանապարհը, տղա՛ս, փշոտ է, տատասկներով լի, քեզ ցանկանում եմ տոկունություն և կամք՝ նպատակիդ հասնելու համար։ Ձեզ նույնպես, տղայք։

— Եվ եղա՞ք ուսուցիչ։

— Այո, մի քանի տարի, տարբեր վարժարաններում։ Բայց ես մտքիս մեջ մի ուրիշ փափագ ունեի և մտածեցի, որ տակավին լինելու եմ ուսուցիչ, իսկ այժմ անհրաժեշտ է կրթությունը շարունակել և անցա Փարիզ, ընդունվեցի Սորբոնի համալսարանը և հետևեցի գրականության դասընթացներին։

— Ուրեմն, Սորբոնի համալսարանի դիպլոմով մա՞րդ ունենք մեր մեջ,— ասաց մաթեմատիկայի ուսուցիչ Արամ Խանջյանը։

— Ո՛չ, ո՛չ,— շտապեց կանխել Բեքարյանը,— չավարտեցի Սորբոնը։

— Ինչո՞ւ։

— Ընտանիք ունեի։ Կա՛մ պետք է սովորեի, կա՛մ ընտանիք պահեի։

Բանվոր է դարձել Ռենոյի ավտոմոբիլի գործարանում։ Կինն էլ՝ Մարին, աշխատել է նույն գործարանի գրասենյակում։

— Իմ այդ տարիների կյանքը դժոխքի էր նման։

— Իսկ ինչպե՞ս եղավ, որ Հայաստան եկաք։

— Ծանոթացա Համլիկ Թումանյանի հետ։ Հովհաննես Թումանյանի որդու, որ, կարծեմ, աշխատում էր խորհրդային դեսպանատանը։ Նա խորհուրդ տվեց դիմում գրել Ասքանազ Մռավյանի անունով, որ ցանկանում եմ վերադառնալ հայրենիք և զբաղվել մանկավարժությամբ։ Հայրենիք տեղափոխվելուս մի պատճառն էլ որդիներիս կրթության հարցն էր,

ուզում էի, որ նրանք անպայման հայկական կրթություն ստանան, հայ մեծանան։ Երկար սպասեցի պատասխանի, մի տարի, նույնիսկ ավելի. ստացվեց դրական պատասխան, և ես իմ ընտանիքն առած՝ Փարիզ-Բեռլին-Ռիգա-Մոսկվա ճանապարհով հասա Խորհրդային Միություն։ Մոսկվայում տեղավորվեցինք Լազարյան ճեմարանում, այսինքն Հայաստանի Կուլտուրայի տանը։ Հայաստան հասանք 1925 թվականի օգոստոսին։ Անմիջապես ներկայացա Աս. Մռավյանին, վերջինս խորհուրդ տվեց մեկնել Էջմիածին, քանի որ Երևանի բոլոր դպրոցներում դասաժամերը բաշխված են արդեն, թափուր տեղեր չկան։ Եղա մաթեմատիկայի դասատու, դպրոցի տնօրեն։ Էջմիածնում միառժամանակ մնալուց հետո վերադարձանք Երևան։ Աշխատում էի գյուղատնտեսական ինստիտուտի քիմիական ֆակուլտետում։ Պրոֆ. Ռոտինյանի ուսանողն եմ եղել։ Այնպես որ, իմ դիպլոմը հայրենական ինստիտուտի է, և ես մասնագիտությամբ քիմիկոս եմ։

Մի օր էլ ասաց.

— Աղջիկ ունենալու բախտին աստված չարժանացրեց, բայց երկու արու զավակ ունեմ, մեկը նկարչության է հետևում, մյուսը՝ երաժշտության։ Այնպես որ, քիմիայի ուսուցիչ Վաղինակ Բեքարյանի զավակներն իրենց հոր ճանապարհով չգնացին, որոշեցին իրենց նվիրել արվեստին։ Աստված թող աչքը պահի նրանց վրա։

— Ամե՛ն։

Կես կատակ, կես լուրջ բացականչեց մաթեմատիկայի ուսուցիչը։

Ո՛չ ես գիտեի, ո՛չ էլ մյուս ուսուցիչները, որ Վաղինակ Բեքարյանը քիմիկոս լինելով, նաև գրող է, վեպեր է գրել, վիպակներ, բայց դեռ չի հրապարակել։ Այդ իմանալուց հետո միայն հասկանալի դարձավ ինձ, թե այն երկու տարին, որ ես աշխատեցի մանկավարժական ուսումնարանում, ինչո՞ւ էր Բեքարյանը գրականագետների հետ ավելի մոտ, քան՝ մաթեմատիկոսների և ֆիզիկոսների։

Մի երեք-չորս տարի չէր հանդիպել։ Մեկ էլ հայտնվեց պետհրատում և սեղանիս դրեց վեպ, գրված Էջմիածնի կոլտնտեսական կյանքից, ձեռագիր, մի քանի ընդհանուր տետր։ Խնդրեց, որ ուրիշին չտամ կարդալու, անպայման ինքս ծա-

նոթանամ և տամ իմ անկեղծ եղրակացությունը: Ծանոթացա և, ցավոք, նպաստավոր չէր եղրակացությունս, վշտացավ, անշուշտ, բայց ձայն չհանեց, իրեն պահեց կիրթ մարդուն վայել այն հանդարտությամբ, որ չես իմանա, թե այդ պահին, երբ դեմքին ժպիտ է, ինչ խռովք կա հոգում: Ես վերջերս վեպի մասին հարցրի որդուն՝ նկարիչ Արա Բեքարյանին, որ իմ լավ բարեկամն է, ասաց, որ այո, կոլտնտեսական կյանք պատկերող վեպ ուներ, բայց հետո ոչնչացրել է, ասելով, թե ինքը դժգոհ է իր գրածից:

Տեսնելով պատմելու ակնհայտ շնորհ, աշխատեցի Բեքարյանին մղել դեպի իր մանկության և պատանեկության տարիները, այն ժամանակվա կյանքի բարքերը, մարդկային հարաբերությունները, մտածելով, որ դրանք ապրված տպավորություններ են, հետևապես անկեղծ շունչ կունենան:

— Այսօր դրանք միթե կարող են հետաքրքրություն ներկայացնել և ունենալ արժեք:

— Իհարկե:

— Չէի կարծում:

— Իզուր:

Կարճ դադարից հետո ասաց, որ մի քանի այդպիսի գործ ունի տանը:

— Պատրա՞ստ:

— Միանգամայն:

— Բերեք, խնդրում եմ, ես էլ ինչ որ պետք է կանեմ իմ հերթին:

Գնաց ու մի տարուց ավելի չերևաց: Եկավ ու սեղանիս դրեց «Սուտ հարսը» վերնագրով վիպակը: Խոստացա այսօրևեթ կարդալ, թող վաղը գա եղրակացությունն իմանալու: Հավանել էի: Ասացի, որ գործն ընդունված է և կհանձնվի տպագրության:

Հիմա էլ նրա պահվածքը հանդարտ էր, դեմքին ժպիտ կար, հոգում անպայման խնդություն, բայց ցույց չէր տալիս, թե ինքը շատ ուրախացած է, ինչպես որ մի տարի առաջ նրան հաջողվեց քողարկել խռովքը:

Վիպակը հաջողություն գտավ:

Ես ուրախ էի, որ իմ ավագ ընկերոջը կարողացա օգտակար լինել:

Ի՞ՆՉ ԱՋՆԻՎ ՄԱՐԴ...

Ուսումնարանում հաճախ ճաշկերույթներ էին լինում, որոնց նշանաբանը իմ իսկ առաջարկով սա էր՝ «Ո՛չ մի լուրջ խոսակցություն, ո՛չ վեճ, ո՛չ տարաձայնություն: Միայն և միայն անհոգ զվարճանք»: Նշանաբանը բոլորի սրտովն էր, բայց դրան հավատարիմ մնալը՝ անհնար էր: Հենց որ վեճը տաքանում էր՝ սեղանապետի կարգադրությամբ անմիջապես երաժշտություն էր լսվում, և մեր ընկերները վալս էին պարում՝ անհոգ ժպիտ դեմքերին, ասես, աշխարհիս երեսին վալսի խելակորույս պաուլյաններից ավելի մեծ հաճույք չկա:

Մեր այդ հավաքույթներին վաղինակ Բեքարյանը գալիս էր սիկնոջ՝ Մարիի հետ, Թամար Գաբրիելյանը՝ ամուսնու, նկարիչ Սարգիս Հովհաննիսյանի հետ: Մենք ընտելացել էինք նրանց ներկայությանը:

Մի դեպք եմ ուզում պատմել, որ կապված է Թամար Գաբրիելյանի ամուսնու հետ:

Կլիներ նա հիսուն տարեկան, բոլորս նրան Սաքո էինք ասում, նույնիսկ նրանք, որ իրենից շատ փոքր էին:

Ժպիտը դեմքին, բարեհոգի մարդ, աղնվության մարմնացում: Հաճախ խնջույքի մասնակիցների ճեպանկարներ էր անում, բայց որքան էլ աղաչանք ու պաղատանք էինք անում, չէր տալիս:

1937 թվականն էր:

Մտա Աբովյանի վրա գտնվող խնայդրամարկղը: Շատ մարդ կար, հերթը մեծ էր: Մեկն ինձ ձայն տվեց.

— Ռուբե՛ն:

Սաքո Հովհաննիսյանն էր:

— Մուծո՞ւմ ես, թե վերցնում:

— Մուծում:

— Որքա՞ն:

— Այսքան:

— Ինձ էլ հենց այդքան է հարկավոր: Տուր ինձ, գնանք, թե չէ մի ժամից ավելի տնկված ենք մնալու այստեղ:

— Խնդրեմ:

Գնացինք:

Առավոտյան եկա ուսումնարան, տեսնեմ, բոլորը մոայլ են։

— Ի՞նչ է պատահել։

— Սաքոյին գիշերը տարել են։

Ջորս կողմից արձագանքներ։

— Խե՜ղճ մարդ։

— Ի՞նչ պիտի արած լիներ որ...

Այդպիսի դեպքերում միշտ գտնվում են զգաստ մարդիկ.

— Հայտնի չէ։

Ես պատմեցի մեր երեկվա հանդիպումը խնայդրամարղում։ Մի երկուսը թե՝

— Ասա Թամարին։

— Ո՛չ մի դեպքում։

Մյուսները միացան ինձ՝ իսկապես պետք չէ ասել։

Մի երկու օրից Թամարը եկավ իր դասերը պարապելու։ Չգիտեինք, թե մեզ ինչպես պահենք։ Ինքն էլ նստում էր մի անկյունում, ճնշված, ինքնամփոփ։

Մի ամիս էլ չէր անցել։ Թամարը մոտեցավ ինձ ու մեկնեց մի ծրար։ Շփոթվեցի։ Վատ զգացի ինձ։ Մտքովս անցավ՝ չլինի մեր տղաներից մեկնումեկը հաղորդել է Թամարին խնայդրամարկղի պատմությունը։ Ու թեև գիտեի, որ դա Սաքոյի պարտքն է, շինծու զարմանքով հարցրի, թե դա ինչ գումար է։

— Սաքոն...

Ասաց ու փղձկաց։

— Բանտից երկտող է ուղարկել և հայտնել, որ քեզ այսքան ռուբլի է պարտք ու խնդրել է վերադարձնել։

Փշաքաղվեցի։

Մաքրագույն անձնավորություն, որ ով իմանա, թե ում բանսարկությունների զոհն է եղել, տեսնես ինչ տագնապալի օրեր է ապրել, մտատանջվել, թե այս ինչ մեծ, անպատմելի դրժբախտություն եկավ գլխին և հանկարծ չի մոռացել ընկերոջ պարտքը։

Զանգը հնչեց, Թամարը գնաց դասի, պատմեցի, բոլորը զգացվեցին։

— Ի՜նչ ազնիվ մարդ...

ՊՈՒՇԿԻՆԻ ԵՐԵԿՈՆ

1937 թվականն էր: Մեր ամբողջ երկիրը, դեռ անցյալ տարվանից, պատրաստվում էր նշելու Պուշկինի ողբերգական մահվան հարյուրամյակը: Հրատարակչությունը բանաստեղծի գրքերն ու ժողովածուներն էր լույս ընծայում, մամուլը լուսաբանում էր Պուշկինի կյանքն ու գործը, Դանտեսի հետ պոետի ունեցած մենամարտին վերաբերող նոր տվյալներ էին հրապարակվում, մահվան նոր մեկնություններ տվող բազմաթիվ հոդվածներ էին լույս տեսնում: Հրատարակությունների մեջ նշանակալի էր Վերեսաևի կազմած երկհատորյակը՝ «Պուշկինի ուղեկիցները»: Մեծ տարածում գտավ նույն հեղինակի «Պուշկինի կյանքը»: Երկու տարի հետո գրեցի «Աբովյանի կյանքը», և ինձ համար Վերեսաևի գիրքն օրինակ էր: Հետազոտական ինստիտուտները, բուհական հաստատությունները ծրագրում էին գիտական նստաշրջաններ անցկացնել: Կազմակերպվում էին հրապարակային դասախոսություններ: Չկար, երևի, որևէ հիմնարկ, որտեղ մասնագետները հանդես չգային հանրամատչելի դասախոսություններով ու զեկուցումներով:

Մի խոսքով՝ մի քանի ամիս ողջ երկիրը շնչում էր Պուշկինով:

Մանկավարժական ուսումնարանը, որտեղ աշխատում էի, նույնպես տենդագին պատրաստվում էր նշելու այդ հոբելյանը:

Հանդիսավոր երեկո պիտի կայանար: Ես համաձայնեցի լինել զեկուցող: Ինձ համար դժվար չէր Պուշկինի մասին զեկուցել: Պուշկինի ու նրա դարաշրջանի վերաբերյալ իմացությունները այնքան էին, որ կարող էի հինգ զեկուցում կարդալ: Դժվարն այն էր, որ կարողանայի իմացածս համառոտել, խուսափել վերլուծումներից, խոսքը կառուցել ստույգ բնորոշումների վրա:

Խոսեցի, և այն սերը, որ միշտ ունեցել եմ և հիմա էլ ունեմ Ալեքսանդր Սերգեևիչի նկատմամբ, փոխանցվեց խոսքիս, մտքերիս: Լսում էին ինձ ուշադիր, լարված, ես կարծես թե ոչինչ չասացի, որ նոր լիներ այդ լսարանի համար, նորությունը ես էի, ես՝ իմ վերաբերմունքով:

Ելույթիս վերջին խոսքերը անհետացան բուռն ու երկարատև ծափահարությունների ներքո։

Ես գրավեցի իմ տեղը։ Ու թեև խոսում էր մեր ուսուցիչներից մեկը, ինձ համար սիրելի մարդ, բայց ես, տարված իմ ունեցած հաջողությունից, չէի լսում։ Երևի հինգ րոպե էլ չէր անցել, մոտեցավ ինձ մի ուսանող և ականջիս շշնջաց.

— Կուսակցական քարտուղարը խնդրում է անցնել իր առանձնասենյակը։

Տեսնես ի՞նչ սխալ եմ թույլ տվել։ Ձեռքով նշան արեց, որ նստեմ։ Խուսափում է ինձ նայել։ Մտածեցի, որ դա լավ նշան չէ։ Նայում եմ նրան և աշխատում դեմքի արտահայտությունը հասկանալ։ Չի խոսում։ Պահում է ինձ սպասողական անհայտության մեջ։ Քննիչի բնատուր հատկություն, որով հարց տվողը պատասխանողի նկատմամբ միշտ առավելության է հասնում։ Ինչպես դա պատահում է մեկ-մեկ ամեն մարդու հետ, ես մի պահ մոռանում եմ վիճակիս անմխիթարությունը, հայացքս կենտրոնանում է նրա դեմքի մի զգալի մասը զբաղեցնող կարմիր խալի վրա, տեսնես այդպե՞ս է ծնվել, թե հետո է պատահել։

Բարձրացնում է գլուխը, բայց չի նայում ինձ։

— Ընկեր Զարյան, ես ուշադրությամբ լսեցի ձեր զեկուցումը, որը տևեց մեկ ժամ 10 րոպե։ Ձեզ տրված ժամանակից ավելի խոսեցիք։ Իզուր։ Կարիք չկա խախտել կարգապահությունը։ Բայց դա ոչինչ։

Եվ նայում է ուղիղ իմ աչքերի մեջ, ոչ թե աչքերին, այլ հենց աչքերի մեջ։ Դա անում է հանկարծակի, անսպասելի, համոզված, որ այնտեղ կտեսնի ծվարած կամ թռչկոտող սատանա, որը հակա է և ուղղություն է տալիս իմ այն ենթագիտակցությանը, որն ամբողջապես սատանայի ազդեցության տակ է։ Բայց նա կարծես հիասթափվելու վրա է, որովհետև այնտեղ ոչինչ չի գտնում, նույնիսկ վախվորած աչքեր են։

— Ես զարմացած եմ ձեզ վրա, ընկեր Զարյան, որ դուք մի ժամ տաս րոպե զեկուցում կարդացիք, և ո՛չ սկզբում, ո՛չ վերջում և ո՛չ էլ ընթացքում, գոնե մի անգամ չտվիք առաջնորդի անունը։

Մի պահ վրդովվեցի, ուզեցի ասել, թե Պուշկինի հետ ի՞նչ կապ ունի առաջնորդը, բայց հետո մտածեցի, որ այս կարգի

մարդկանց հետ պետք է խոսել, վիճել իրենց իսկ ձևերով. աչքս նորից ընկավ նրա դեմքի մի մասը զբաղեցնող կարմիրի վրա, և ինձ որ ավելի վախկոտ եմ, քան՝ քաջ, համակից կատակ անելու պահանջը.

— Բա որ իմ խոսքի վերջում ես ասացի «Նա՛», այն էլ մեծատառով, ո՞ւմ մասին էր, մանավանդ, որ աջ ձեռքս էլ բարձրացրի:

Շփոթվեց: Դեմքի քիչ առաջվա քննչական խիստ դիմագիծը անմիջապես տեղի տվեց ներողություն խնդրող խեղճ արտահայտության:

Իմ ասածը կատակ էր, ոչ մի «Նա» էլ չէի ասել, ոչ էլ բարձրացրել էի ձեռքս, բայց նա շտապեց նահանջի ուղիներ որոնել:

— Դիտեք, երևի այդ պահին կողքիս նստածը բան է ասել ու իմ աչքից վրիպել է:

Ողորմելին այնքան կորցրեց իրեն, որ չմտածեց անգամ, թե բանավոր խոսքի մեծատառը ո՞րն է:

— Ներող եղեք, խնդրում եմ:

— Կարո՞ղ եմ գնալ:

— Իհարկե:

Դահլիճում գրավեցի իմ տեղը: Մի երկուսը, որ գիտեին, թե կուսքարտուղարը կանչել է ինձ և լավ բան չգուշակելով, անհանգստացած էին, հարցրին.

— Ինչո՞ւ էր կանչել:

— Հետո:

Պատմել եղելությունը, թե ոչ: Եթե հասներ իրեն, չէր նեղի: Պետք է ասել, որ դպրոցի իշխող դեմքն էր, բոլորն անխրտիր՝ տնօրենից սկսած մինչև ուսուցիչներ, այդ թվում և ես, սաստիկ վախենում էինք նրանից: Եվ ես մի ուրիշ բան ասացի եղածի փոխարեն:

ԱՅՐՎԵԼՈՒՅ ՓՐԿՎԱԾ ՏԵՐՅԱՆԻ ԹԵՐԹԻԿԸ

Մի ժամանակ արվեստի ինստիտուտը, որ կոչվում էր արվեստների պատմության և տեսության սեկտոր, Պուշկինյան փողոցի վրա էր: Սեկտորն ուներ ընդամենը երեք սենյակ՝

— Մի՞թե Տերյանի ձեռագիրը, այն էլ անտիպ, կարելի է գնահատել հինգ ռուբլի:

— Մի շատախիր վրդովվել,— եղավ պատասխանը,— մենք ունենք կարգադրություն, որի համաձայն թանգարանային մի միավորը գնահատվում է երեսուն-հիսուն ռուբլի: Նկատի ունենալով, որ Տերյանի ձեռագիրն է, առավելագույնն ենք առաջարկել:

Ձեռագրի տիրոջը հաղորդեցի թանգարանի տնօրենի տված բացատրությունը:

— Ընկեր Զարյան, կարիքի մեջ եմ, դրա համար եմ վաճառում, թե չէ, ես Ներսիսյանն ավարտած մարդ, ինչո՞ւ պիտի վաճառեի իմ սիրելի բանաստեղծի ձեռագիրը:

Հասկացա մարդու հարկադրված վիճակը: Մտքովս անցավ՝ իսկ ինչու ես չվերցնեմ ձեռագիրը, վճարելով նրան իր ուզած գումարը:

— Որքա՞ն է ձեր սպասելիքը:

— Գոնե 250 ռուբլի:

— Ի՞նչ կարծիքի եք, եթե ես գնեմ:

— Գոհ կլինեմ:

Կանչեցի տնտեսական գծով օգնականիս և ասացի, որ բերի, հիմա լավ չեմ հիշում 250 թե 300 ռուբլի:

Պատրաստվում էր գնալ:

— Ներեցեք,— դիմեցի ես նրան,— չէիք ասի, թե ինչպես է այս ձեռագիրն ընկել ձեր ձեռքը:

Մոայլվեց: Նորից նստեց: Երևում էր, որ տատանվում է և չի կարողանում որոշել՝ ասի՞, թե չասի:

— Սա մի պատմություն է, որ չէի կամենա, որ ուրիշն իմանա: Կանեմ այդ պատմությունը, պայմանով, որ ոչ ոք չիմանա:

— Խոստանում եմ:

— Ինչ որ պատմելու եմ՝ մեր տանեցիներն էլ չգիտեն:

Մի պահ լուռ մնաց, ապա սկսեց.

— Ես այն օրերին օրգանի աշխատող եմ եղել: Ստալինի մահից հետո շատերին թոշակի ուղարկեցին: Ես դրանցից մեկն եմ: Ոչ մի տեղ չեմ աշխատում: Միայն թոշակով էլ ապրել հնարավոր չէ:

1937-ին կանչեց պետս ու ասաց, որ այսօր երեկոյան բա-

— Մի՞թե Տերյանի ձեռագիրը, այն էլ անտիպ, կարելի է գնահատել հինգ ռուբլի։

— Մի շատախիր վրդովվել,— եղավ պատասխանը,— մենք ունենք կարգադրություն, որի համաձայն թանգարանային մի միավորը գնահատվում է երեսուն-հիսուն ռուբլի։ Նկատի ունենալով, որ Տերյանի ձեռագիրն է, առավելագույնն ենք առաջարկել։

Ձեռագրի տիրոջը հաղորդեցի թանգարանի տնօրենի տված բացատրությունը։

— Ընկեր Զարյան, կարիքի մեջ եմ, դրա համար եմ վաճառում, թե չէ, ես Ներսիսյանն ավարտած մարդ, ինչո՞ւ պիտի վաճառեի իմ սիրելի բանաստեղծի ձեռագիրը։

Հասկացա մարդու հարկադրված վիճակը։ Մտքովս անցավ՝ իսկ ինչու ես չվերցնեմ ձեռագիրը, վճարելով նրան իր ուզած գումարը։

— Որքա՞ն է ձեր սպասելիքը։

— Գոնե 250 ռուբլի։

— Ի՞նչ կարծիքի եք, եթե ես գնեմ։

— Գոհ կլինեմ։

Կանչեցի տնտեսական գծով օգնականիս և ասացի, որ բերի, հիմա լավ չեմ հիշում 250 թե 300 ռուբլի։

Պատրաստվում էր գնալ։

— Ներեցեք,— դիմեցի ես նրան,— չէիք ասի, թե ինչպես է այս ձեռագիրն ընկել ձեր ձեռքը։

Մոայլվեց։ Նորից նստեց։ Երևում էր, որ տատանվում է և չի կարողանում որոշել՝ ասի՞, թե չասի։

— Սա մի պատմություն է, որ չէի կամենա, որ ուրիշն իմանա։ Կանեմ այդ պատմությունը, պայմանով, որ ոչ ոք չիմանա։

— Խոստանում եմ։

— Ինչ որ պատմելու եմ՝ մեր տանեցիներն էլ չգիտեն։

Մի պահ լուռ մնաց, ապա սկսեց.

— Ես այն օրերին օրգանի աշխատող եմ եղել։ Ստալինի մահից հետո շատերին թոշակի ուղարկեցին։ Ես դրանցից մեկն եմ։ Ոչ մի տեղ չեմ աշխատում։ Միայն թոշակով էլ ապրել հնարավոր չէ։

1937-ին կանչեց պետս ու ասաց, որ այսօր երեկոյան բա-

կում թղթեր են այրվելու։ Այդ գործն ինձ է հանձնարարվում։ Ես փորձեցի հրաժարվել, բայց ապարդյուն։ Ամեն հրաժարում հղի էր վտանգներով։

Երեկոյան դեմ էր, զինվորները պարկերից թղթերը դատարկեցին։ Նավթը լցրին ու կրակին տվին։ Այրվող թղթերի կույտից քամին թռցրեց մի թերթիկ։ Թերթիկը կպավ կրծքիս։ Ես տեսա, որ զինվորներն իմ կողմը չեն նայում, զբաղված են կրակը բորբոքելով, թերթիկը ծալեցի, սուս ու փուս դրի ծոցագրպանս։

Տանը նայեցի, տեսնեմ բանաստեղծություն է։ Ո՞ւմ բանաստեղծությունն էր, իսկ գործ ուներ այրման ենթակա թղթերի հետ, չգիտեի։ Ոչ էլ սիրտ արի պարզելու, թե ի՞նչ թղթեր էին, ո՞ր կալանավորի տնից են մեր հիմնարկ բերված։ Ու այդպես իմ թղթերի մեջ այդ թերթիկը մնաց։ Ոչ ոքի ցույց չտվի։ Անցան շատ տարիներ։ Ստալինը վախճանվեց։ Անձի պաշտամունքի քննադատության ժամանակ շատ աշխատողներ, ինչպես ասացի, ուղարկվեցին Թոշակի։ Դրամի կարիք զգացվեց տանը։ Հիշեցի թերթիկը, ցույց տվի ընկերոջս, բայց չանելով նրան քիչ առաջ արված պատմությունը։ Երկար նայելուց հետո վրա բերեց՝

— Վայ թե Տերյանի ձեռագիրն է։

Խորհուրդ տվեց՝

— Տար Ռուբեն Զարյանին, նա կիմանա՝ Տերյանի՞նն է, թե ոչ։ Կասի էլ, թե ով կարող է դրան փող տալ ու առնել։

Ես էլ բերի։ Ահա ձեզ ամբողջ պատմությունը։

Պատահել է, որ ես մասնավոր անձերից ձեռք եմ բերել Տերյանի ձեռագրեր ու հրապարակել։ Այս անգամ որոշեցի դրանով չզբաղվել։ Իմաց արի երկար տարիներ Տերյանով զբաղվող վաչե Պարտիզունուն՝ թե նորություն ունեմ իր համար։ Եկավ, տեսավ, ու, երբ ասի, որ իրեն եմ տալիս հրապարակելու իրավունքը, ուրախացավ։ Արտագրեց, մի քանի անգամ համեմատեց արտագրածը բնագրի հետ, բնագիրը վերադարձրեց ու որոշ ժամանակ անց հրապարակեց Տերյանի երկերի ժողովածուի հատորում, հիշատակելով, անշուշտ, որ ես եմ ձեռագիրը տրամադրել իրեն։ Իհարկե, հետաքրքրվեց, թե որտեղի՞ց ու ինչպե՞ս է ինձ հասել ձեռագիրը, բայց

ես ասի, որ դա առայժմ գաղտնիք է, երևի ժամանակին կիմանա։

Չեմ կարող ասել, թե որքան ժամանակ անցավ հրապարակումից, երևի տաս տարի ու ես մտածեցի, որ տարիք եմ առել, ամեն ինչ էլ կարող է պատահել։ Ու մտածեցի, որ այս պատմությունը, որ միայն ձեռագրին չի վերաբերում, այլ մեր կյանքի մռայլ ժամանակներին, որոշեցի Պարտիզոնուն նամակ ուղարկել և համառոտ կերպով անել այս պատմությունը, որ գոնե մի փաստաթուղթ մնա այդ ձեռագրի կենսագրությունից։ Նամակը գրելիս կարծում էի, թե այդ փաստաթուղթն ստեղծվում է հեռավոր ժամանակների համար։ Ո՞վ մտքով կանցներ, որ մեր ապրած տարիներին կգա ժամանակ, երբ կարելի կլինի խոսել մեր երկրի գլխով անցած ցավալի ու տանջալի դեպքերից։

ԱԲՈՎՅԱՆԻ ԹՈՌՆԵՐԸ

Ես հանդիպել եմ Աբովյանի թոռներից երեքին՝ Կոստանդինին, Վիկտորյային և Լևոնին, որոնք վարդան Աբովյանի պավակներն էին։ Եվ դա այն տարիներին, երբ ես դեռևս չէի զբաղվում մեր մեծ լուսավորչի կյանքի և գործի ուսումնասիրությամբ։

Առաջին ծանոթությունս Լևոնի հետ էր, որը սրբագրչի պաշտոնով աշխատում էր քաղհրատում։ Հանդիպել եմ տպարանում։ Ծանոթացել եմ պատահմամբ և հետո միայն իմանալով, որ այդ բարձրահասակ, հիսունին մոտ համակրելի մարդը Աբովյանի թոռն է։

Շփումներս շատ չեն եղել։

Ասում էր, թե հազիվ 11 տարեկան է եղել, երբ կորցրել է հորը, շատ զրկանքներ է կրել, բայց իրեն հաջողվել է ավարտել Գևորգյան ճեմարանը։ Եթե չի շարունակել, չի ստացել բարձրագույն կրթություն, ապա նյութականի պատճառով։

Նրա հայերենը օրինակելի էր ու հենց որ դժվարության առաջ էի կանգնում կամ կասկածում իմացածիս ճշտության վրա, հարցնում էի իրեն ու ստանում սպառիչ պատասխան։

Մի երեկո Սպանդարյան փողոցում տեսա Լևոնին, ասաց, թե գնում է քրոջը տեսության և առաջարկեց միանալ իրեն:

Մարդամոտ կին էր Վիկտորյան: Ինձ այնպես պարզ ու ջերմ ընդունեց, չիմանալով ո՛չ անձս, ո՛չ զբաղմունքս, ասես վաղուցվա ծանոթներ լինեինք: Ապրում էր Սպանդարյան փողոցում: Դեպի փողոց նայող պատշգամբ ուներ, որտեղ ծղոտե աթոռներ կային: Հիշում եմ՝ թեյեցինք, զրուցեցինք ու, երբ մեզ ճանապարհում էր, տիկին Վիկտորյան դարձավ ինձ.

— Եթե այս կողմերով անցնելու լինեք, անցեք, խնդրում եմ: Կեսօրին աշխատանքի եմ, իսկ երեկոները միշտ տանն եմ: Ուրախ կլինեմ:

Ու ես մի քանի անգամ եղա մոտը: Նա թեյի սեղան պատրաստելիս՝ ամեն անգամ ասում էր.

— Ես արդեն գիտեմ, որ դուք թուզի մուրաբա եք սիրում:

Զրույցներից միտս է մնացել, որ ինքը Կոստանդինից փոքր է, Լևոնից՝ մեծ, ծնվել է Երևանում, բայց սովորել և աշխատել է Թիֆլիսում, Պետերբուրգում, Ալեքսանդրապոլում և վերադարձել է Երևան շատ ուշ, ուր և մնացել է մինչև օրս: Տարիքն առել է արդեն: Նա այդ ժամանակ հիսունն անց էր: Գիտեի, որ Էրիխ անունով որդի ուներ, որին ես այդպես էլ տանը չտեսա և հանդիպեցի մոր թաղման ժամանակ միայն: Հայտնի է սակայն, որ Էրիխի հայրը եղել է Արշավիր Շահխաթունին, մինչհեղափոխական հայ թատրոնի սիրված դերասաններից մեկը: Այդ անունը ընդունված չէր հիշել այդ տանը, ու լավ չհասկացա, թե դրա պատճառն ինչ է, քաղաքակա՞ն, չէ որ նա դաշնակցական կառավարության ժամանակ Երևան քաղաքի պարետն է եղել, թե ընտանեկան, քանի որ նա լքել էր կնոջն ու որդուն, տնից հեռացել, խճճված լինելով սիրային պատմության մեջ:

Հետաքրքիր կին էր Վիկտորյան: Արտաքինը հայկական չէր: Կարելի էր պատկերացնել, թե ինչպիսի գրավչություն կարող էր ունեցած լինել երիտասարդ տարիքում: Հիմա գեր էր, ուներ հաճելի ժպիտ, դեմքին միշտ սիրալիր արտահայտություն կար: Երբ նա դիմացինին ունկնդրում էր, դեմքին միշտ զարմանք էր նկատելի, որ հատուկ է մանկական անմիջականությամբ օժտված մարդու հոգիներին:

Տեսնելով, որ զրույցների ժամանակ հաճախ եմ խոսում

թատրոնից, նոր ներկայացումներից, դերասաններից, Վիկտորյան մի օր ասաց.

— Ես էլ ժամանակին հափշտակվել եմ թատրոնով: Խաղացել եմ տարբեր թատրոններում, նաև Զուբալովի տանը:

Հարցրի՝ ի՞նչ դերեր է խաղացել.

— Մարգարիտ, Իշխանուհի, պատկերացնո՞ւմ եք:

Ասաց ու մի հառաչ արձակեց:

— Թատրոնի աշխարհը շատ մեծ կախարդանք ունի:

Պատմում էր, թե ինչպես Պետերբուրգում թեև կենսաբանություն է սովորել, բայց ուշքն ու միտքը թատրոնի հետ է եղել: Հարցնում էր, թե ովքեր են իմ սիրելի դերասանները, հատկապես դերասանուհիները:

Ես նրան կոչում էի տիկին Վիկտորյա: Զարմանում էր դրա վրա, որովհետև վաղուց գործածությունից դուրս էր եկել կանանց դիմելու այդ ձևը, և դա համարվում էր հնաբանություն:

— Իսկ ինչպես դիմեմ ձեզ՝ ընկե՞ր Վիկտորյա:

Ժպտում էր: Համաձայն չէր, այդպես լավ չէր լինի: Այն ժամանակ հայրանվան գործածման ձևը հիմիկվա նման տարածված չէր:

— Ուղղակի՝ Վիկտորյա:

— Անկարելի բան:

Ես քսանյոթ տարեկան էի, հիսունն անց կնոջը ինչպե՞ս դիմեի անունով միայն:

Կոստանդինի հետ, որ Վիկտորյայից ու Լևոնից ավագ էր, ծանոթացել եմ գործի բերումով: Հիմա չեմ հիշում, թե ինչ էր թարգմանվելու գերմաներենից ու ինձ ասացին, թե ամենահարմար թեկնածուն Կոստանդին Աբովյանն է. և ավելացրին՝ Աբովյանի թոռը:

Եթե ոչ ամեն օր, ապա երկու օրը մեկ, Կոստանդին Աբովյանն այցելում էր ինձ, նստում գրասեղանիս մոտ և հարցնում՝

— Չե՞մ խանգարում:

Ու մնում էր մի ժամ, երբեմն էլ երկու ժամ: Հանում էր ծխախոտատուփը, առանձնացնում մի բարակ թերթիկ, վրան լցնում ծխախոտը, մատներով տեղաբաշխում և ապա խնամքով ու երկար փաթաթում:

— Ես զարմանում եմ ձեզ վրա,— մի օր ասացի նրան,—

այնքան երկար եք զբաղվում ծխախոտը պատրաստելով, ասես, աշխարհիս երեսին դրանից ավելի մեծ հաճույք չկա։

— Ես էլ ձեզ վրա եմ զարմանում,— վրա բերեց նա բարեմիտ ժպիտը դեմքին,— թե ինչպես եք կարողանում զրկել ձեզ այսքան մեծ հաճույքից։

Ասում էր ու ծիծաղում։ Ու ամեն անգամ, երբ նոր ծխախոտ էր առած լինում, մոտեցնում էր ծխախոտատուփը.

— Մի հոտ քաշեք, տեսեք ու ասեք, թե սրանից ավելի ինչ հաճելի բույր կա աշխարհիս երեսին։

Նա այդ ժամանակ 60-ին մոտ էր։ Շարժումները ծանր ու դանդաղ էին։ Խոսքն էլ հանդարտ էր։ Ձևակերպումները միշտ հստակ և կուռ։ Գերմանական դրոշմ կար մտածողության վրա։

Մասնագիտությամբ քիմիկոս էր և գանգատվում էր, որ իրեն վիճակված չէ ըստ կրթության աշխատելու, ստիպված գերմաններեն է դասավանդում։ Գերմաներենի պաշտամունք ուներ։

— Ոչ մի լեզվի քերականություն այնպես տրամաբանված չէ, որքան գերմաներենինը։

Սիրում էր Շիլլերից հատվածներ ասել։ Արտասանում էր ռոմանտիկ ներշնչանքով, մի տեսակ ջահելանալով։ Լսում էի ու մնում զարմացած, չէի հավատում, որ ոգեշնչված արտասանողը նույն ծանրաշարժ Կոստանդին Աբովյանն է։ Ասում էր, որ թափառիկ կյանք է ունեցել և՛ սովորելիս, և՛ ավարտելուց հետո։ Գևորգյան ճեմարանում է սովորել, հետո ստիպված թողել էջմիածինը և ուսումը շարունակել Ներսիսյան դպրոցում, բայց ավարտել է Գևորգյան ճեմարանը։ Դորպատում ուսումն ավարտելով, եկել է Երևան, տեղափոխվել Թիֆլիս, անցել Ալեքսանդրապոլ, հետո նորից Թիֆլիս, երկար ժամանակ աշխատել Աբխազիայում, ապա միայն հաստատվել Երևանում։ Եվ այստեղ վերջերս միայն նվիրվել քիմիային։

Կոստանդինը մեծ վիշտ ունեցավ. 19-ամյա որդին, ճարտարապետ, որին հոր պատվին Վարդան էր կոչել, ընկերների հետ մեկնել էր Սև ծովի ափերը և խեղդվել ծովում։ Չէր հանդըստանում։

— Այս ի՞նչ եկավ գլխիս։ Թշնամուս չեմ ուզի, որ որդու դագաղի հետևից գնա։

Հայտնի է, որ իր հորից հետո պապի բոլոր թղթերը, ձե-

ռագիր ամբողջ ժառանգությունը պահպանել է Կոստանդինը: Պահում էր աչքի լույսի պես:

Մի օր ասաց, թե շատ քիչ մարդու է թույլ տվել ծանոթանալ: Ասաց, թե այդ քչերից մեկը եղել է Գուրգեն Էդիլյանը:

— Ճանաչո՞ւմ եք:

— Ինչպես չէ, իմ պրոֆեսորն է եղել:

— Ի՞նչ էր կարդում:

— Հոգեբանություն:

— Նա էլ գերմանական կրթություն ունի, իսկ ես, ինչ թաքցնեմ, Գերմանիայում սովորածների հանդեպ հատուկ թուլություն ունեմ: Նա որոշել է Աբովյանի ընդարձակ կենսագրությունը գրել և այդ պատճառով անհրաժեշտ համարեց ծանոթանալ պապիս ձեռագրերի հետ: Դե, ես էլ թույլ տվի: Հա՛, աչքի է անցկացրել նաև Գուրգեն Վանանդեցին, և մեր Լևոնը նրա ղեկավարությամբ պատրաստել է Աբովյանի անտիպ երկերի ժողովածուն:

Այս զրույցը պատճառ եղավ, որ ես մի օր այցելեմ Կոստանդին Աբովյանի տուն՝ պապի թղթերն աչքի անցկացնելու:

Ինչ որ կատարվեց հետս, երբ ձեռքս առա «Վերք Հայաստանի» ձեռագիրը, ինձ համար անսպասելի էր: Ես աշխատել եմ գրական թանգարանում, գրողների արխիվներ եմ մշակել, ծանոթ եմ իմ սիրելի գրողների՝ Հովհաննիսյանի, Թումանյանի, Նար-Դոսի, Տերյանի ձեռագրերին և ինձ այնպես էր թվում, թե սա լինելու է մեծ մարդու ձեռագրերի հերթական ծանոթությունը:

Այդպես չեղավ սակայն:

Երբ «Վերքի» ինքնագիրը ձեռքս առա՝ ինձ մի երկյուղ համակեց: Սիրտս թպրտաց: Սրբազան դող անցավ մարմնովս: Ինձ այնպես թվաց, թե իմ երկու ափերի մեջ սիրտ է, հուզված և ալեկոծ, կրակված ու փոթորկուն, որ հիմա կբողոքի, կճչա, ու ձայնը երկինք կհասնի: Աչքերս մթնեցին, և ես չէի տեսնում ձեռագրի տողերը: Մի տարօրինակ զգացման տպավորության տակ էի՝ թվում էր, թե ձեռքերս այրվում են, ոտքերի վրա չեմ կարողանում կանգնել, և ուշքս գնալու վրա է:

Կոստանդինը վերցրեց ձեռագիրը, տեղադրեց ու դարձավ ինձ:

— Ինչո՞ւ այդպես դունատվեցիք։ Նստեցեք, խնդրում եմ։ Վա՞տ եք զգում ձեզ։ Մի կում ջուր խմեցեք։

Եվ բաժակը մոտեցրեց ինձ։

***

Հիմա նրանցից ոչ մեկը չկա։ Թվերը չեմ հիշում, բայց նախ Լևոնը վախճանվեց, մի երկու թե երեք տարի անց՝ Կոստանդինը։ Եղբայրներից ավելի երկար ապրեց քույրը՝ Վիկտորյան։ Ես երեքի թաղմանն էլ եղել եմ, եղել սակավամարդ այն թափորում, որը կազմված էր մեծամասամբ ազգականներից, մի քանի ընկեր ու ծանոթ։ Ու ես, որ անծաղիկ հուղարկավոր էի Լևոնի և Կոստանդինի թաղման ժամանակ, ճերմակ վարդերի մի փունջ դրի Վիկտորյայի հողաթմբին։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴՈՒՍՏԸ

Հովհաննես Թումանյանի համարյա բոլոր աղջիկների հետ էլ՝ Աշխենից մինչև Թամարը, ծանոթ եմ եղել, բայց ամենից ավելի մոտ էի Նվարդի հետ, զբաղմունքի և գործի բերումով հաճախ էինք հանդիպում։ Հոր հատորներն էր պատրաստում տպագրության, տեքստ կազմում, ծանոթագրում, հոր մասին հոդվածներ շարադրում։ Գրեց նաև հոր մանկությանը նվիրված գրքույկ։ Իմ տպավորությամբ նրա ծառայությունները հոր ժառանգության հրապարակման, կյանքի ուսումնասիրության գործում զգալի են, բայց նա, ցավոք, իր վաստակի գնահատանքին չարժանացավ, մինչդեռ հարկ էր, որ մարդիկ խոր հարգանքով վերաբերվեին նրա գործունեությանը։ Անդադրում աշխատող էր, անխոնջ մշակ։ Նա ինձ «ընկեր Ռուբեն» էր ասում, ես նրան՝ «տիկին Նվարդ», նույնիսկ այն ժամանակ, երբ չգիտեի, ամուսնացած է, թե ոչ։ Հետո, երբ իրենց տանը եղա, իմացա, որ ամուսին ունի, կոմպոզիտոր ու երաժշտագետ Մուշեղ Աղայանը, որ իր հոր մտերիմ ընկերոջ՝ Ղազարոս Աղայանի որդին էր։

Բարյացակամ ու ջերմ կին էր Նվարդ Թումանյանը և լավ էր վերաբերում այն երիտասարդներին, որոնք գրականու-

թյամբ էին զբաղվում, իսկ ովքեր իրենց կյանքը նվիրում էին Թումանյանին, ինչպես օրինակ Արամ Ինճիկյանը, շրջապատում էր հատուկ գուրգուրանքով և օգնում ինչով կարող էր:

Նվարդը խոսում էր մի հայերենով, որ ես լսել եմ միայն իրենց տանը իր բոլոր քույրերից, Մուշեղի դուստր Շաղիկից (որ կիսով չափ հայ է), մաքուր հայերեն էր դա, որ ուներ ժողովրդական խոսվածքի համն ու բույրը:

Նվարդ Թումանյանը շատ էր պատմում հորից. «Հայրիկն այս ասաց, հայրիկն այն ասաց»: Ինչպես ինքն էր ասում, ժամանակին գրի է առել լսածները: Դեռ հոր կենդանության օրոք ձեռքն է ընկել Էկկերմանի գիրքը և դրա օրինակով սկսել է գրի առնել հոր զրույցները, հայտնած մտքերը, բանաստեղծին այցի եկած հյուրերի հետ ունեցած խոսակցությունները: Նպատակ ուներ մի օր հրատարակել «Թումանյանի զրույցները», կամ «Իմ հայրիկի զրույցները» խորագրով:

Դա ինձ այնքան հետաքրքրեց, որ առաջարկեցի առանց ուշացնելու տալ հրատարակության: Ասաց, թե ինքը մի օր գրի է առել, մի հինգ օր ոչինչ չի գրել, գրառումներն անխնամ վիճակում են, երկար ժամանակ է պետք, որ կարգի բերի, առանձին թերթերը դասավորի, հաջորդականություն ստեղծի, իսկ ինքը ժամանակ չունի, շատ է զբաղված, նույնիսկ չգիտե, թե որն անի, որը թողնի: Բայց կանի, անպայման կանի: Մեր այդ զրույցից շատ տարիներ անցան, բայց նա ժամանակ չգտավ դրանով զբաղվելու, որը լույս տեսավ իր մահից հետո միայն, 1969-ին, Թումանյանին նվիրված և նրա դստեր հարգն ու պատիվն իմացող Թումանյանագետ Արամ Ինճիկյանի, Էդվարդ Ջրբաշյանի և Լևոն Հախվերդյանի ջանքերով:

Նվարդը պատմում էր Տերյանից, որ մեկ էլ տեսար գալիս էր Մոսկվայից, ընկերոջ՝ Պողոս Մակինցյանի հետ: Բոլորը խառնվում էին՝ «Տերյանը Թիֆլիսում է... Տերյա՞նը, Տերյա՞նը...»: Նվարդը պատմում էր, որ Տերյանը հաճախ էր լինում իրենց տանը, պաշտում էր Թումանյանին:

Հաճախ եմ եղել Նվարդի տանը, որտեղ և ծանոթացել Մուշեղ Աղայանի հետ: Տեսնելով, որ ամուսնու տրամադրությունը տեղն է, Նվարդը խնդրում էր նրան երգել: Մի անգամ լսեցի Մուշեղ Աղայանի «Քյոռօղլին»: Հիշողությանս մեջ

մնաց երգի հարազատությունը, ազգային ոգին ու ժողովրդական զգացողությունը։

Նվարդ Թումանյանը և Եղիշե Չարենցը լավ հարաբերությունների մեջ էին, բայց հետո, եթե չեմ սխալվում, Չարենցի խմբագրությամբ Թումանյանի երկերի միհատորյակի հրատարակության առիթով, նրանց հարաբերությունները վատացան։ Չարենցը սկզբում ասում էր՝ «Մեծ բանաստեղծի ժառանգը, այ, Նվարդի նման պիտի լինի», իսկ հետո՝ նրա անունը չէր ուզում լսել։ Իսկ տիկին Նվարդն էլ, որ մի ժամանակ հպարտ էր Չարենցի բարեկամությամբ, հիմա, նրա անունը լսելիս, իրեն վատ էր զգում։

Ամուսիններով պատմում էին Թումանյանից, մասամբ էլ Աղայանից։ Մեկը մյուսից հետաքրքիր պատմություններ էին, հումորեսկներ, կենցաղային դրվագներ։ Ես նկատեցի, որ Մուշեղ Աղայանի պատմածները չափազանց հետաքրքիր են և մեղք կլինի, եթե դրանք գրի չառնվեն և չհրապարակվեն։ Ճշմարիտ մանրապատումներ էին։ Աղայանն ասաց, որ դրանց մի մասը ժամանակին ինքը հրապարակել է։

Ես դրանցից մի քանիսը տուն գալուս պես գրի առա և մշակեցի։

1957-ին ես Հունաստան էի մեկնել. վերադարձիս իմացա, որ Նվարդ Թումանյանը վախճանվել է։ Մի փունջ ճերմակ վարդեր առած գնացի այցի նրա շիրիմին և իմ շնորհակալությունը հայտնեցի։ Ես գիտեի, որ իմ խոսքը նրան չի հասնի, բայց մտածում էի միաժամանակ, չէ որ իր հայրը Բաֆֆիի հոբելյանական երեկոյին ասել է՝ «Կան ժողովուրդներ, որ հավատում են, թե այն աշխարհում լսում են մեզ»։ Եթե այդպես է, ուրեմն մի հատիկ խոսք ունեմ ասելու Նվարդ Թումանյանին՝ «Շնորհակալություն»։

ՎԱՀԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եղիշե Չարենցի «Լիր արքայի» ձեռագիրը, որ համարվում էր կորած՝ գտնվեց։

Եվ ահա թե ինչպես։

Չարենցին նվիրված հուշերում պատմել եմ, որ բանաս-

տեղծը ժամանակին խմբագրել է Հովհ. Մասեհյանի թարգմանած «Լիր արքան»: Նա այնքան էր ոգևորված Շեքսպիրի ողբերգությամբ, այնպես էր վերապրում Լիրի ողբերգությունը, որ որոշեց ձեռնամուխ լինել դրա ինքնուրույն թարգմանությանը: Թարգմանեց թե ոչ՝ չեմ կարող ասել: Բայց որ խմբագրեց, լավ եմ հիշում, իսկ թե ինչ եղավ նրա խմբագրած օրինակը՝ մինչև վերջերս հայտնի չէր:

Որպեսզի պատմեմ բանաստեղծի այդ ձեռագրի գտնվելու հանգամանքները և դրանց հետ կապված մանրամասնությունները, պետք է հիշեմ երկու անուն. Հայկանուշ Տեր-Գրիգորյան և Վահե Միքայելյան, որոնց շնորհիվ մնացել ու պահպանվել է Չարենցի ձեռքով գրվածը:

Նախ՝ Վահե Միքայելյանի մասին:

Գրասեր հասարակայնությանը Վահե Միքայելյանը հայտնի է որպես թարգմանիչ: Բավական շատ ռուսական արդի հեղինակներ է թարգմանել: Տիրապետելով ֆրանսերենին՝ թարգմանել է ֆրանսիական դասական և ժամանակակից գրականության բազմաթիվ նմուշներ: Նա թարգմանական այնպիսի հարուստ ժառանգություն է թողել, որ հիմա, երբ նա այլևս չկա, երևի կգտնվի մի բանասեր, որ հանձն առնի ուսումնասիրելու և որոշելու նրա տեղը հայ թարգմանական գրականության մեջ:

Պատրաստված, զարգացած մարդ էր Վահե Միքայելյանը: Հաճույք էր նրա հետ զրույցի բռնվելը: Իր սկզբունքներն ուներ ինչպես թարգմանական արվեստի, այնպես էլ հայոց լեզվի զարգացման, գլխավորապես օտար բառերի հայացման չափի վերաբերյալ, նույնիսկ կետադրության մասին: Նա այնքան էր նշանակություն տալիս այդ սկզբունքներին, որ հաճախ ստանձնում էր ոճաբանի պաշտոն, որպեսզի լրացուցիչ հնարավորություն ունենա իր մոտեցումը կիրառելու ուրիշների գրվածքներում:

Վահե Միքայելյանին ճանաչում էի վաղուց, դեռ ուսանողական տարիներից: Այն ժամանակ թարգմանությամբ չէր զբաղվում, Երևանի պետական համալսարանի գրադարանապետն էր: Ջէր սիրում այն ուսանողներին, որոնք դասախոսի հանձնարարած գրքերի շրջանակից դուրս չէին գալիս, բայց ոգևորում էր, գրքերով ու խորհուրդներով օգնության հաս-

նում նրանց, որոնց հետաքրքրությունները չէին մնում դասընթացի սահմաններում:

Հետագայում, երբ, ավարտելով համալսարանը, աշխատանքի անցա պետական հրատարակչություն, վահե Միքայելյանին նորից հանդիպելու առիթ ունեցա: Հանդիպումներ էին դրանք, որոնք շուտով բարեկամության փոխվեցին. ես թարգմանություններ էի հանձնարարում նրան, որ նա կատարում էր ճիշտ ժամանակին, գուցե փոքր-ինչ անհույզ, բայց երկի իմաստը ճշտորեն արտահայտելու բծախնդիր ջանասիրությամբ: Մի քանի տարի անց մեր համագործակցությունն ավելի ամրացավ, երբ որպես «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր, խնդրեցի նրան հանձն առնել ոճաբանի պաշտոնը: Հետագայում էլ, երբ իմ աշխատանքի բնույթը փոխվեց, ու ես ամբողջապես անցա գիտության ասպարեզ, իմ կապը Միքայելյանի հետ շարունակվեց: Ինձ համար միշտ հաճելի էր նրան հանդիպելը, հետը զրուցելը: Թեև տարիներն անցնում էին, ու ես էլ երեկվա պատանին չէի, միևնույն է, գրեթե ամեն զրույցի ժամանակ ուսանելի բան գտնում էի նրա ասածների մեջ: Գիտելիքները շատ ու բազմազան, միտքը թռիչքների ընդունակ, խոսքը ոգևորության անկեղծ շեշտերով ջերմացած, տրամաբանությունն ուժեղ՝ նա հետաքրքրքիր էր զրույցի պահին, միշտ ասելու բան ուներ:

Երբ ձեռնամուխ եղա շեքսպիրյան գրադարանի ստեղծմանը, մի աննկարագրելի ուրախություն ապրեց: Հանդիպելիս միշտ հարցնում էր, թե ի՞նչ նոր գրքեր եմ ստացել, ի՞նչ քանակի հասան, ո՞ր երկրից, ի՞նչ լեզվով և այլն:

Շատերն էին նույն հետաքրքրությունը ցույց տալիս: Ես արդեն ընտելացել էի դրան և, ճիշտն ասած, բոլորին էլ հաճույքով էի պատմում գրադարանի հետ կապված ամեն նորություն: Մի անգամ, սակայն, զգացի, որ Միքայելյանի լեզվի տակ ինչ-որ բան կա, որ չի ասում:

Չէի սխալվել: Մի օր չհամբերեց.

— Մի հաճելի անակնկալ ունեմ քեզ համար:

Աստց ու սուս արեց:

— Այնպիսի անակնկալ, որ մտքովդ չի անցնի, իսկ իմանալուց հետո, բարեկամս, կտեսնես, որ գերազանցելու է քո ունեցած «հարստությանը»:

Կարծում էի, թե կասի, բայց չասաց։ Խնդրեցի, դարձյալ չասաց։

— Դեռ ժամանակը չէ։

Մի երեկո գնացի նրա տուն։ Ինչի մասին միայն խոսք չեղավ։ Այս անգամ էլ խոսք բացվեց շեքսպիրյան գրադարանի մասին։ Նորից հետաքրքրվեց, նորից ոգևորվեց ստացված գրքերով ու նյութերով, բայց «հաճելի անակնկալին» այդպես էլ չանդրադարձավ, ես էլ հարմար չգտա հիշեցնել։

1966-ի դեկտեմբերին էր։ Զանգահարեց Վահե Միքայելյանը և խնդրեց այս քանի օրը, հենց որ ժամանակ ունենամ, մի երեկո անցնեմ իր մոտ, ասելով, թե շատ կարևոր գործ ունի հետս։

Նույն երեկո նրա տանն էի։

Չգիտեի, թե ինչի է կանչել և ոչ էլ կռահում էի, քանի որ խոսում էր շատ հարցերի շուրջ։ Խոսեց Վահե Քաչայի մասին, խոսեց հիացմունքով։ Հարցրեց, թե չե՞մ տեսնում, արդյոք, Լուսիկ Աբեղյանին։ Ասաց, որ նրա խնդրանքով գրի է առել իր հիշողությունները Վահան Թոթովենցի մասին։ Խնդրեց, որ եթե տեսնեմ, ասեմ, որ գա այդ հուշերը տանի։ Շատ ուրիշ բաների մասին խոսեց, բայց ոչ առաջվա նման աշխույժով։ Եվ հանկարծ ասաց.

— Հիմի գանք բուն խնդրին։

Տխուր ժպիտ էր թառել նրա դեմքին։

— Ժամանակը հասավ, սիրելիս,— ասաց նա ու մի հին թղթապանակ դրեց սեղանին։— Ահա և իմ անակնկալը։

Վահե Միքայելյանը բարձրացրեց գլուխը, նայեց ինձ թախծալի մի հայացքով։ Շատ տխուր էին աչքերը։ Այդպես երբեք չէի տեսել նրան։

Ես լուռ սպասեցի նրա խոսքին։

— Վա՛տ եմ, Ռուբեն, շա՛տ վատ։

Ուզեցի կատակի տալ։ Նրա աչքերի մեջ կշտամբալի արտահայտություն ցոլաց, ու ես լուռ մնացի։

— Վատ եմ, հասկացի՛ր։

Դժվար էր հասկանալ։ Երեսուն և ավելի տարվա բարեկամներ էինք, ու ես չէի հիշում նրան անկողնում հիվանդ պառկած, միտս չէր, որ երբևէ ցավից գանգատ արած լիներ։

— Չարենցի ձեռագիրն է: Եղիշե Չարենցի ձեռագիրը: Շեքսպիր: «Լիր արքա»:

Ուրախությունից սիրտս ծուլ եղավ: Կարկամել էի, ձայն չէի հանում:

— Լսիր այս ձեռագրի պատմությունը:

Ընդհատենք մի պահ դրույցը և մի-երկու խոսք էլ ասենք Հայկանուշ Տեր-Գրիգորյանի մասին:

Հայկանուշ Տեր-Գրիգորյանը պետհրատում էր աշխատում. ձեռագրապահի պաշտոն էր վարում: Բոլոր բաժինների ձեռագրերը նրա մոտ էին:

Երբ աշխատանքի անցա պետհրատ, առաջին ժպիտը, որ խրախուսեց ինձ վստահ ու համարձակ լինել՝ տիկին Հայկանուշի ժպիտն էր: Այն ժամանակ դեռ վաթսուն տարեկան չկար, բայց մազերը ճեփ-ճերմակ էին: Աչքերը բաորի, ձայնը մեղմ ու փխրուն: Անվարժ, անփորձ երիտասարդ, գործս՝ դժվար: Ու ես տիկին Հայկանուշի մեջ, ասես, գտա իմ երկրորդ մորը: Գուցե այն պատճառով, որ իմ մոր անունն էլ Հայկանուշ էր: Գուցե այն պատճառով, որ նա Ջավախքից էր: Գուցե այն պատճառով, որ իմ ամենասիրելի բանաստեղծի՝ Տերյանի բարեկամն էր, բանաստեղծի եղբոր՝ Արամ Տեր-Գրիգորյանի կինը: Գուցեև այն պատճառով, որ մի-երկու անգամ ներկա եղա, երբ սփոփանքի խոսք էր գտնում մերժված ձեռագիրը սկսնակ բանաստեղծներին վերադարձնելիս: Գուցե, գուցե... Այդ գուցեները շատ էին:

Տիկին Հայկանուշն ավարտել էր Թիֆլիսի գիմնազիաներից մեկը, մի քանի տարի էլ ուսանել Պետերբուրգի ինչ-որ դասընթացներում: Հետագայում ռուսաց լեզվի դասեր է տվել Թիֆլիսի Հովնանյան դպրոցում: Կարդացած, գրագետ կին էր:

Ամենքը սիրում էին նրան:

Պետհրատ աշխատանքի անցա 1936-ին, որպես մանկապատանեկան գրականության բաժնի վարիչ: 1937-ին ազատվեցի աշխատանքից:

Պետհրատից հեռանալու վերջին օրը տիկին Հայկանուշը, չնայած իր տարիքին, երրորդ հարկից իջավ ցած, հետս դուրս եկավ փողոց և ուղեկցեց մինչև անկյունը:

Տիկին Հայկանուշը Ջիվանու հայրենակիցն էր:

— Ձախորդ օրերը կուգան ու կերթան...

Ասաց ու դրկեց ինձ։

— Մի մտածիր։ Ժամանակ կանցնի, և շատ բան կփոխվի։ Կյանքում ավելի վատ բաներ են լինում։ Մի վշտանա, աշխարհն այդպես է, մի օր այսպես, մի օր այնպես։

Հիմա էլ աչքերիս առաջ է նրա հայացքը, ականջներիս մեջ՝ նրա ձայնը։

1938-ին, տարվա վերջերին նորից աշխատանքի անցա պետհրատում, այժմ արդեն որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ։ Իմ առաջին պարտքը եղավ գնալ տիկին Հայկանուշի սենյակը։ Շատ հուզվեց և այսքանը միայն կարողացավ ասել.

— Բա որ ասո՞ւմ էի։

Ու մենք երկար շատ տարիներ միասին աշխատեցինք համերաշխության այն զգացումով, որ ունենում է մայրը՝ զավակի, և որդին՝ ծնողի նկատմամբ։

Այժմ նորից վերադառնանք Վահե Միքայելյանի հետ ունեցած ընդհատված զրույցին։

— 1937 թվականն էր,— շարունակեց իր խոսքը Վահեն,— ի՞նչ ասեմ, լավ հայտնի է, թե ինչ ժամանակ էր։ Գործով գնացի պետհրատ։ Դու արդեն չէիր աշխատում այնտեղ։ Անցա տիկին Հայկանուշի մոտ։ Հիշո՞ւմ ես տիկին Հայկանուշին։ Պատվական կին էր, համակրում էի շատ։ Երևի մի տասնհինգ տարի կամ գուցե ավելի՝ գործ ունեցա հետը և չեմ հիշում, որ ինձ կամ ուրիշի կոշտ խոսք ասած լիներ։

Նորից լռեց։ Նայում էր ինձ, բայց չէր տեսնում։ Ըստ երևույթին մտքով գնաց տարիների խորքը և պատկերացրեց տիկին Հայկանուշի ճերմակահեր գլուխը՝ ձեռագրերի վրա հակած։

— Վահե, մի բան եմ ասելու ձեզ,— ասաց տիկին Հայկանուշը և զգուշաբար շուրջը նայեց։— Ուզում եմ մի բան խնդրել ձեզ, չգիտեմ հանձն կառնե՞ք, թե ոչ։ Մի ուրիշը կա, որին կարող էի խնդրել, չնեղանաք, ավելի վստահաբար, քան ձեզ, բայց նա երկու օր է չի երևացել, չեմ հասկանում, թե ինչու չի գալիս։ Իսկ գործը շտապ է։ Վաղը ի՞նչ կլինի, ի՞նչ չի լինի՝ չգիտեմ,— ասաց ու լռեց։ Այդ պահին աշխատողներից մեկը սենյակ մտավ, ինչ-որ ձեռագիր հանձնեց ու գնաց։ Ես լարվեցի հետաքրքրությունից։ Ճիշտն ասած, մի փոքր էլ

երկյուղալի թվաց նրա խոսքերի թաքնված ու դեռ ինձ անհայտ իմաստը: Տիկին Հայկանուշը փափկանկատ կին էր, զգաց այդ և առաջարկեց խոսակցությունը շարունակել փողոցում: Մի թղթապանակ թևի տակ՝ դուրս եկավ հետս: Բարձրացանք Ալավերդյան փողոցն ի վեր:

Պետհրատն այն ժամանակ Ալավերդյան փողոցում էր, առաջին տպարանի հետ միասին, նրա վերին հարկում:

Վահե Միքայելյանը տեղից վեր կացավ, մի բաժակ ջուր բերեց, ինչ-որ հաբ կուլ տվեց ու մի քանի կում ջուր առավ բերանը:

— Լավ չեմ, լավ չեմ:

Ձայն չհանեցի և սպասեցի, որ շարունակի ընդհատած պատմությունը:

— Երբ հեռացել էինք պետհրատի շենքից, տիկին Հայկանուշն ասաց. «Մի քանի օր առաջ կարգադրեցին ասպարեզից դուրս եկած գրողների ձեռագրերն առանձնացնել և կազմել դրանց ցուցակը երկու օրինակից: Այդ պարտականությունը դրեցին ինձ վրա: Ձեռագրերի մեջ էր նաև Զարենցի «Լիր արքան»: Ձեռագիրը տվեցի մի երիտասարդի, որին վստահում և հավատում եմ, որ տուն տանի ու արտագրի: Մյուս օրը կարգադրություն եկավ, թե ձեռագրերը տանելու են: Ապսպրեցի, որ երիտասարդը ձեռագիրը հետը բերի: Արտագրել էր, բայց՝ քիչ: Ոչինչ անել չէի կարող: Ասացին, թե տանելու են, բայց չտարան: Ու այն տղան էլ չերևաց: Որ երևար էլ, երևի սիրտ չանեի տալ, որովհետև ամեն օր, յուրաքանչյուր ժամ կարող էին պահանջել ձեռագրերը:

Չգիտեմ ինչո՞ւ,— ասաց Վահեն,— ինձ թվաց, թե այդ երիտասարդ գրականագետը դու ես: Հարցրի, ասաց՝ չէ, ուրիշին նկատի ունի, բայց անունը չտվեց: Իսկ քո մասին ասաց, թե աշխատանքից ազատվելուց հետո պետհրատում չի երևացել: Մի խոսքով, ինչ երկարացնեմ, տիկին Հայկանուշն ասաց, որ այսօր առավոտյան եկել ու տարել են ձեռագրերը, և միանգամայն պատահմամբ «Լիր արքայի» թղթապանակը մնացել է սեղանին: Ինքը նկատել է, բայց ձայն չի հանել: Հասկացել է, որ իր արածը «կարգ ու կանոնին» դեմ է, բայց ոչինչ չի ասել: Չի ասել նույնիսկ այն ժամանակ, երբ որպես հանձնող ու ընկալող՝ դրել է իր ստորագրությունը ցուցակի

տակ: Թե ուր են տարել ձեռագրերը՝ տիկին Հայկանուշին հայտնի չէր, բայց շատ էր վախենում, որ կարող են տուգել և պարզել, որ Զարենցի ձեռագիրը չկա: Եթե գան, ինքը չի կարողանա չտալ, ձեռագրի «ֆիզիկական» ներկայությունը կխանգարի իրեն: Սպասել մինչև աշխատանքի վերջը և տանել տուն՝ չի վատահում: Այն երիտասարդ գրականագետն էլ չերևաց, որ իրեն տա: Եթե կասկածեն ու գտնեն մոտը՝ վատ կլինի իր համար: Մյուս կողմից էլ խիղճը թույլ չի տալիս Զարենցի ձեռագիրը անհայտության մատնել: Ու նա խնդրեց հանձն առնել այդ ձեռագիրը պահել, պահել մինչև ժամանակները կփոխվեն: Վաղ թե ուշ՝ ժամանակները փոխվելու են, ասում էր նա ինձ կամացուկ: Այսպես չի մնա: Ձեզ երեսուն տարի ժամանակ,— ասաց տիկին Հայկանուշը: Ես՝ մեծ, դուք՝ երիտասարդ: Երբ ձեռագիրը հրապարակ հանելու ժամանակը գա, վարվեք ինչպես կամենաք. կուզեք՝ տվեք իմ անունը, կուզեք՝ ոչ: Դա կարևոր չէ, կարևորն այն է, որ ձեռագիրը չկորչի և հասնի սերունդներին:

Կարճ դադարից հետո Վահե Միքայելյանը շարունակեց.

— Թղթապանակը վերցրի: Չեմ ուզում աչքիդ հերոսանալ: Ես ունեմ իմ սկզբունքներն ու հասկացողությունները, դու այդ լավ գիտես: Բայց զգույշ մարդ եմ և երբեք ավելորդ խոսք չեմ ասել կամ այնպիսի արարք թույլ չեմ տվել, որ կարող էր անմտորեն վտանգի տակ դնել ինձ այն օրերին: Մի պահ կասկած ընկավ մեջս, տատանվեցի՝ վերցնե՞մ ձեռագիրը, թե՝ ոչ, տանե՞մ, թե՞... Ու եթե անխոս համաձայնեցի թղթապանակը վերցնել և տանել տուն, ապա նրա համար, որ այլ կերպ վարվել չէի կարող: Եվ դա ինձ ներշնչեց տիկին Հայկանուշը, որ Ալավերդյան փողոցում ինձ հետ խոսելիս ոչ թե կին էր, որին ծանոթ էի, ոչ թե պաշտոնյա, որի հետ միշտ գործ ունեի, այլ ոգի, որ թելադրում, պարտադրում էր ինչպես վարվել, ու ես էլ, հլու-հնազանդ ենթարկվում էի նրան: Եվ հիմա հանձնում եմ շեքսպիրյան գրադարանին:

Թղթապանակը բաց արի: Զարենցի ձեռագիրն էր իսկապես:

Հուզված էի, չգիտեի ինչ ասեմ, կատակի տվի, ասելով, թե նա հո չի՞ մոռացել, որ դեռ 1966 թվականն է և ոչ 1967:

Պատասխանը տխուր եղավ, ու ես ղջացի անզգույշ կատակի համար։

— Չեմ մոռացել։ Բայց լավ չեմ ու երկյուղ եմ կրում, որ 1967 թվականի երեսը չեմ տեսնի։ Դրա համար էլ շտապեցի տիկին Հայկանուշի կտակը կատարել, և ձեռագիրը հանձնել ըստ պատկանելույն։

Չգիտեի ինչպես իմ շնորհակալությունը հայտնեմ։ Նա ինձ հասկացավ։

— Ոչինչ մի ասի, սիրելիս։ Ես իմ պարտքն եմ կատարում Չարենցի ու Շեքսպիրի առաջ։

ՄԻ ԲՈՒՌՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԵՎԵՑ ԵՐԵՔ ՕՐ ԵՎ ՈՒՆԵՑԱՎ ՀԻՆԳ ՆԻՍՏ

Ուզում եմ պատմել մի ժողովի մասին, որ տեղի ունեցավ 1937-ին, ապրիլ ամսին։ Գրողները գալիս էին ցերեկով, ժամը 11-ին, մտքեր փոխանակում չորս-հինգ ժամ, հետո էլ՝ երեկոյան։ Միայն մի երեկո, չեմ հիշում ինչ պատճառով, նիստը չկայացավ, փոխադրվելով հաջորդ օրվան։

Ջեկուցողը գրողների միության նորընտիր ղեկավար Գեվորգ Աբովն էր։

Ինչպես որ կան պիեսներ բազմաթիվ գործող անձերով, այնպես էլ այս ժողովում շատ ելույթներ եղան։ Ելույթ ունեցողը կարող էր խոսել երկար, որքան ուզեր։ Եղան դեպքեր, երբ մեկը խոսեց կես ժամից ավելի, օրինակ Հրաչյա Քոչարը։ Նույնիսկ մի ժամի չափ խոսող եղավ, ինչպես Մկրտիչ Արմենը։ Պատահում էր, որ գրողը ելույթ էր ունենում երկու, նույնիսկ մի քանի անգամ, ինչպես Ազատ Վշտունին։

Այդ ժողովը նման էր ալեկոծ ծովի, որ երբեք չհանդարտվեց, երբեմն էլ այնպես փոթորկվեց, որ սպառնալի դարձավ գրողներից մի քանիսի համար։ Երեք գրող՝ Խորեն Սարգսյան, Սուրեն Հարությունյան և Գարեգին Բեսը, ընդհանուր ժողովի որոշումով հեռացվեցին գրողների միությունից։

Այնպիսի գրող, ինչպիսին Սիրասն է, որ իսկապես ո՛չ «աջերին» էր հարում, ո՛չ էլ «ձախերին», ելույթ ունեցավ և ուզեց ամբիոնից պատմել, թե ինչ հաջողություններ ունի մեր այսօրվա կոլտնտեսական գյուղը և մի օրինակ ուզեց բերել

Ղամարլուից (այժմ՝ Արտաշատ), ժողովականներից մեկը, միտս չէ թե ով, ընդհատեց նրան՝ «Այդ բոլորը մենք էլ գիտենք, ավելի լավ է դու քո գործած սխալների մասին խոսես։ Բայց այնպես, որ անցյալ տարվա մեղայականիդ նման չլինի»։

Նկատի ուներին 1936-ի օգոստոսի վերջերին կայացած այն ժողովը, որտեղ Նորայր Դաբաղյանը զեկուցել էր՝ «Գրողների միության մեջ եղած տրոցկիստական-նացիոնալիստական խմբակի մասին»։

Այդ ժողովին ներկա չեմ եղել Թիֆլիսում լինելուս պատճառով և պատկերացում ունեմ ընկերներիս պատմածով և մամուլի հաղորդումներից։

Ելույթ ունեցողները, ինչի մասին էլ խոսեին, պարտավոր էին վերաբերմունք ցույց տալ մեկուսացման ենթարկված գրողների նկատմամբ, բացատրություն տալ, թե ինչ կապերի մեջ են եղել նրանց հետ։ Ոչ մի խոստովանություն, նույնիսկ ամենաանկեղծ, չէր գոհացնում։ Մարդկանց զեկավարում էին պղտոր կրքերը։ Մեղայական աթոռին նստած էին Չարենցի խմբակին հարած գրողները, նրանց մեծարած քննադատները, որոնց թվում նաև ես, Բակունցին մեծարելու համար, մի խոսքով նրանք, որ, այսպես ասած, աղգայնամոլների համբավ ունեին, իսկ մեղադրողները գրականության ձախակողմյան-ռապպայական անձերն էին, մեկ էլ նրանք, որ ոչ «աջ» էին, ոչ էլ «ձախ», բայց իբրև գրող իրենց զգում էին նվաստացած Չարենցից, Բակունցից ու հիմա վրեժխնդիր էին լինում։

Ինչպես բոլոր ժողովները, այնպես էլ սա, ուներ գլխավոր գործող անձինք։ Այս ժողովում դրանք երեքն էին՝ մեկը Ավետիք Իսահակյանն էր, մյուսը՝ Մկրտիչ Արմենը, երրորդը Չարենցն էր, որ ներկա չէր։ Ինչպես Ջոն Պրիստլիի պիեսներում գործող անձ կա, որ բեմ չի գալիս, բայց նրա մասին խոսվում է, և հանդիսականը պատկերացում է կազմում, թե ով է նա, ինչ մասնակցություն ունի ծավալվող դեպքերի մեջ և ինչպես է առաջ մղում դրամատիկական գործողության ընթացքը։ Ճիշտ այդպես էլ Չարենցն էր, որ ժողովից բացակայում էր, բայց որի մասին խոսվեց շատ ավելի, քան ներկաներից որևէ մեկի մասին, եթե նկատի չունենանք Մկրտիչ

Արմենին: Ոչ ոքի բացակայությունը հարգելի չէր նույնիսկ հիվանդության պարագային: Հիվանդ ես, ուրեմն բարի եղիր խոսքդ գրավոր ուղարկել: Ոչ ոք չէր տրտնջում, թե Զարենցն ինչու չկա, որովհետև անկախ այս ժողովից, հայտնի էր բոլորին, որ վաղուց է ինչ հազարից մեկ է տանից դուրս գալիս, չի մասնակցում ժողովներին, մանավանդ 1936-ի ողբերգական դեպքերից հետո: Հարգելի էր համարվում քաղաքից բացակայելը միայն: Օրինակ՝ Նաիրի Զարյանը, որ նույնպես բացակայում էր, հասկանալի էր, թե ինչու չկա, որովհետև գիտեին, որ Մոսկվայում է:

Բոլորն էլ հասկանում էին, որ լուռ մնալը չի ներվի, որ անհրաժեշտ է սահմանագծվել մեկուսացման ենթարկված գրողներից, սահմանազատվելու տակ հասկացվում էր գրական-քաղաքական խստագույն որակավորումներ՝ ազգայնամոլ, հակահեղափոխական, նրանց գրական արժեքի նվազեցում, երբեմն՝ ոչնչացում և միաժամանակ սեփական սխալների խոստովանություն և զղջում: Ոչ ոքի ելույթը բավարար չէր համարվում մինչև վերջ: Ինքնապաշտպանական մի բնազդ ղեկավարում էր ելույթ ունեցողներին և ինքնաարդարացման ջանքն ընդունում էր այնպիսի ձևեր, որոնք խղճի և բարոյականության չափանիշների խախտում էին: Հետո, շատ տարիներ անց, երբ պիտի պարզվեր, որ մեր գրողների մեկուսացումը սխալ է եղել, և Զարենցն ու Բակունցը պետք է մեծարվեին որպես դասական հեղինակներ, իհարկե, մարդիկ, մեղմ ասած, լավ չէին զգալու իրենց արած գրական և քաղաքական հայտարարությունների համար: Այն ժամանակ էլ նրանք գիտեին և հասկանում էին այդ գրողների արժեքը, բայց մեկուսացման փաստը կառավարական քայլ էր, հետևապես նրանց քաղաքական մեղքը ոչ ոք չէր կարող կասկածի տակ առնել: Վերջապես, ինքնափրկման տենչը մարդկանց դրել էր ծանր կացության մեջ:

Ես չէի կարողանում որոշել, թե ե՞րբ ելույթ ունենամ, սկզբո՞ւմ, թե վերջում: Սիրտ արի առաջիններից մեկը լինել: Երևի իմ ինքնապաշտպանական բնազդը հուշում էր, որ նախ-տից նիստ ժողովը բորբոքվելու է, սրվելու այնպիսի չափերով, որ քո ելույթը ոչ ոքի վրա տպավորություն չի թողնի: Հիմա էլ տպավորություն չթողեց, նախ այն պատճառով, որ

անկեղծ չլինելով, խոսքս համոզիչ չէր հնչում, և հետո՝ իմ պատճառաբանությունները խիստ միամիտ տեսք ունեին: Վերջապես, ելույթիս ինչ-որ մասեր պարզապես անհեռատես էին:

Խոսքս վերջացրի ու նստեցի: Հետո նիստերը, ավելի շուտ՝ վեճերը, ավելի ստույգ՝ հարձակումները մեկը մյուսի վրա այնպիսի բուռն ընթացք ստացան, որ իմ ելույթը կորավ այդ ժխորում:

Հաջորդ ելույթ ունեցողներից ինձ անդրադարձան Արաքսը և Խորեն Այվազյանը:

Այվազյանն իր ելույթում ասաց, թե Զարյանը կամեցել է գրական աստպարեզ իջնել, քիչ գիտակցելով կամ ընդհանրապես չգիտակցելով, թե ում է ծառայում: Կարո՞ղ է պատահել: Կարող է: Բայց եթե որևէ մեկը քննադատում է որևէ գիրք, մի՞թե նա սկզբից չգիտե, թե ինչու է գրում այդ հեղինակի և ոչ թե Պողոսի կամ Պետրոսի մասին:

Եվ այնուամենայնիվ, իբրև իր նախորդ մտքի զարգացում Այվազյանն ասաց՝ հակահեղափոխական Բակունցը և մյուսները կարողանում էին գտնել իրենց տեսաբաններին, նրանք որոնում էին այնպիսի մարդկանց, որոնք իրենց սազական էին...

«Գրական թերթը» ընդարձակ հաղորդում տպագրեց այս ժողովի մասին, որտեղ, արձանագրելով, թե ես ճիշտ եմ դրել գրական այսինչ հարցերը, ընդգծեց՝ «Հայտնի է, որ Ռ. Զարյանը մեկն է այն երիտասարդ քննադատներից, որոնք ոչ այնքան հեռու անցյալում խնկարկել են Բակունցի և Ալազանի նման նացիոնալիստ հակահեղափոխականների ստեղծագործություններին: Քաջալերելի է, որ Զարյանն այժմ ընդունում է իր կատարած սխալները: Սակայն այնպես բացատրել քաղաքական սխալները (անծանոթ էի Երևանի իրականությանը, նոր էի փոխադրվել Թբիլիսիից), ինչպես այդ արեց իր ելույթում Զարյանը, ոչ մի կերպ բավարար և համոզեցուցիչ չի կարելի համարել: Գրական քննադատություն չի գրվում ինչ-որ պատահականություններով, այլ որոշ մտածելակերպի, համոզմունքի արդյունք է: Այս մասին պետք է լուրջ մտածի Զարյանը, եթե ուզում է անկեղծորեն վերակառուցվել»:

Ելույթ ունեցավ Մկրտիչ Արմենը:

Պատկերացրեք՝ չկան իր գրչակից ընկերները, որոնց հետ համագործակցել է տարիներ շարունակ: Եվ հանկարծ պարզվել է, որ նրանք՝ իր այդ գրչակից ընկերները, հակահեղափոխական գործունեություն են ունեցել, որի համար իշխանությունը մեկուսացրել է նրանց: Եվ հիմա, գրողների տանը հանդես է գալու այն գրողների առաջ, որոնց մի մասի հետ ինքը պայքարի մեջ է եղել, պատասխան է տալու իր գրական-քաղաքական հանցանքների համար:

1936-ին, Նորայր Դաբաղյանի զեկուցման օրը, Մկրտիչ Արմենն իր ելույթում ընդունել է, որ իր գործունեությամբ երկար տարիներ կապված է եղել այդ հակահեղափոխական-նացիոնալիստական գրողների հետ: Արմենը խոստովանել է, որ խմբակի անդամները, իրենց համարելով ազգային կուլտուրայի կրողներ, հաշվի չէին առնում ուրիշներին: Խոստովանել է, նաև, որ «Զարենցի և հարակից խնդիրների մասին» հոդվածը ինքը կարդացել է Զարենցին, Բակունցին և ուրիշներին, առել նրանց համաձայնությունը և նոր միայն հրապարակել գրական մամուլում:

Ժողովականները Մկրտիչ Արմենի անցյալ տարվա ելույթից դժգոհ էին մնացել, համարել էին ոչ անկեղծ, գտել, որ ամեն ինչ չի ասել, շատ բան թաքցրել է, և ելույթ ունեցողների մեծ մասն արտահայտել է անբավարարվածություն և ամենախիստ կերպով մինչև վերջ անկեղծ լինելու պահանջ էին դրել նրա առջև:

Բնական է, որ անցած ամիսների ընթացքում Արմենը մըտածել էր, թե ինչպես ելույթ ունենա, որ հավատան իրեն, իմանան, որ ոչինչ չի թաքցնում, իր բոլոր ասածները միանգամայն անկեղծ են, ինչպես և ղղջում է նույնպես միանգամայն անկեղծ:

Պատկերացրեք՝ Արմենը մոտեցել է ամբիոնին: Բոլորն ակնդետ նայում են նրան, բոլորը լուռ-լուռ են, սպասում են, թե ինչ է ասելու, ինչպես է արդարանալու, ինչպես է ցեխոտելու իր ընկերներին, որոնց համախոհն ու գինակիցն է եղել: Ամբիոնի մոտ է Արմենը, բայց լուռ է, չի խոսում: Գունատ է, երևում է, որ հուզված է: Ուզում է թաքցնել հուզմունքը, հանգիստ երևալ, չի հաջողվում:

Հենց սկզբից Մկրտիչ Արմենը հայտարարեց, որ Զարենցի

խմբակը ոչ թե գրական-ստեղծագործական խմբակ էր, այլ գրական-քաղաքական խմբակ: Այդ խմբակը զբաղված էր նացիոնալիստական գրականության տեսական հիմունքները մշակելով, խմբակային պայքար կազմակերպելով՝ իրենց դեմ պայքարողներին վարկաբեկելու, խմբակի շուրջ երիտասարդ ուժեր համախմբելու նպատակով:

Իր կապը հակահեղափոխական-նացիոնալիստ խմբակի հետ նա երեք կետի շուրջ համախմբեց՝ կազմակերպչական, տեսական և ստեղծագործական:

Չորս հոգուց էր բաղկացած այդ խմբակը՝ Չարենց, Բակունց, Մահարի և ինքը: Այդ քառյակն ուներ երկու գեներալ՝ Չարենց և Բակունց: Ինքը ակտիվ զինվոր է եղել: 1934 թվականին մեկ ամսով մեկնել է Տաջիկստան, Մոսկվա և վերադառնալով, տեսել է, որ խմբակն ընդարձակվել է, Չարենցը հավաքագրել է նաև Ալազանին, Նորենցին, Վանանդեցուն: Ինքը դեմ է եղել, բայց ենթարկվել է: 1934 թ. համագումարից հետո իր կազմակերպչական կապերը խզել է խմբակի հետ: Պատճառն այն էր, որ Դրաստամատ Սիմոնյանն իր վայրիվերո զեկուցման մեջ համագումարում իր մասին չի խոսել, նույնիսկ անունը չի տվել և խմբակի անդամներից ոչ ոք, ո՛չ Չարենցը, ո՛չ Բակունցը, ո՛չ էլ մյուսներն իրենց ելույթում չեն բողոքել: Այնպես որ 1934-ից հետո նրանց հետ կազմակերպչորեն կապ չի ունեցել:

Տեսական հարցերում ևս ունեցել է տարաձայնություններ, բայց դա չի համարում մեծ առավելություն:

Չորսով մտածում էին ազգային հատկանիշների խտացման մասին: «Չարենցի և հարակից խնդիրների մասին» տըխրահռչակ հոդվածը փաստորեն ոչ միայն իր մտքերն էին, այլ ամբողջ խմբակի: Այնպես որ՝ այդ հոդվածը նացիոնալիստ-տրոցկիստ-հակահեղափոխական գրողների գրավոր դեկլարացիան էր, նրանց տեսական հայացքների շարադրանքը:

Ի՞նչ էր դա:

Ձևով՝ ազգային, և բովանդակությամբ՝ սոցիալիստականն կուլտուրայի փոխարեն, առաջադրվում էր ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ ազգային դրույթ:

Եվ հայտարարեց՝

Ինքն ամոթով է հիշում, որ այդ հոդվածն իր գրածն է:

Որոշ հարցերի մասին այլ կերպ է մտածել։ Օրինակ՝ ինքը երբեք չի պաշտպանել Աբովյանին դեմոկրատ հայտարարելու միտքը, երբեք չի խանդավառվել Վարուժանով, Սիամանթոյով, Վահան Թեքեյանով, որոնց գնահատության հարցերում չի միացել նրանց։ Չի իմացել, որ Բակունցը՝ կուսակցական տոմսով այդ դաշնակցականը, կապված է Վահան Վահանյանի ընդհատակյա հակահեղափոխական խմբակի հետ, այլապես, եթե իմանար, դռները շրխկացնելով դուրս կգար այդ որջից, քաղաքացիական ազնվություն և քաջություն կունենար մերկացնելու սրիկաների ոհմակը։

Այնուհետև Մկրտիչ Արմենն անցավ իր ելույթի բուն մասին։

Ինչու Աբովն իր այսօրվա զեկուցման մեջ ասելով, թե ով ինչ է հիմա գրում նոր թեմատիկայով, իր անունը չտվեց։ Մինչդեռ նա լավ գիտե, որ ինքը նոր վեպ է գրում կոլտնտեսային կյանքից և այդ վեպից մի հատված Աբովի մոտ է։ Ինչու Ռուբեն Զարյանը, խոսելով այն մասին, թե մեր գրողները ինչ հաջողված գործեր են գրել անցյալի մասին, հիշեց Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմությունը», բայց չհիշատակեց «Սկատուտ 89» և «Առաջին պարտկոմները» վիպակները։

Այս ասելով, Արմենը գլուխը շարժեց ավելի վշտացած, քան նեղացած և դառնացած ձայնով հառաչեց. «Լավ չէ, ընկերներ, լավ չէ»։

Ու հետո հարց տվեց. Արդյոք, կա՞ իր և այդ սրիկաների միջև տարբերություն, թե ոչ։ Իհարկե կա, ինքը դա կապացուցի։ Բոլորն էլ գիտեն, որ կա, ուրեմն, ինչո՞ւ չասել, ցույց չտալ։

Խորհրդային իշխանությունը քշել է նրանց ուր որ հարկն է, իսկ իրեն հնարավորություն է տվել գիտակցելու իր սխալները մինչև վերջ։

— Ձեր լռությամբ դուք հավասարեցման գիծ եք քաշում իմ և նրանց միջև, չեմ ասում դիտավորյալ, համենայն դեպս օբյեկտիվորեն այդպես է ստացվում։

Գլուխը բարձրացրեց, նայեց դահլիճին և հարց տվեց՝

— Ո՞վ է ձեզ այդ իրավունքը տվել։

Մկրտիչ Արմենը խոսեց իր գրվածքների մասին, հատկապես «Հեղնար աղբյուրի»։

«Հեղնար աղբյուրը» բացառիկ հաջողություն ունեցավ։ Նույն տարում երկու հրատարակություն։ Այն էլ բարձր տպաքանակով։ Ընթերցողներն այդ գիրքը ընդունեցին լավ։ Հազիվ թե գտնվի մեր գեղարվեստական գրականության ընթացքին հետևող ընթերցող, որ այդ գիրքը կարդացած և հավանած չլինի։

Ես նորից հարցնում եմ՝ անհամեստությո՞ւն են այս հայտարարությունները։ Ո՛չ, քանի որ իրականությանն են համապատասխանում։ Այնուամենայնիվ գուցե չասեի այդ բոլորը, եթե մեր մյուս ընկերները վեր կենային ու այս բոլորն ասեին, բայց նրանք լռում են, չեն ասում, ինձ չեն պաշտպանում, չեն պաշտպանում իմ արդար իրավունքը, թույլ տվեք ուրեմն, ինձ, հարգելի ընկերներ, անել այն, որ թվում է թե ուրիշների պարտականությունն է։

Ինչ վերաբերում է «Երևան» վեպին, ապա դրա մասին շատ եմ խոսել, նույնիսկ գրավոր, բայց գուցե ոչ այնքան բավարար կերպով։ «Երևանում» պաշտպանված է հին Երևանը ընդդեմ նոր Երևանի։ Իհարկե՝ ոչ բացահայտ։ Ըստ ձևի պաշտպանված է Արևելքն ընդդեմ Արևմուտքի, իսկ ըստ բովանդակության՝ ընդդեմ սոցիալիստականի՝ պաշտպանված է ֆեոդալականը։ Այս գրքի դասակարգային էությունը ռեակցիոն է։ Իսկ նացիոնալիզմ կա՞ «Երևանում»։ Կարող է թվալ, թե չկա։ Վեպի նացիոնալիզմն արտահայտված է որպես արեվելյան ժողովուրդների հակադրում արևմտյան ժողովուրդների, փաստորեն սա ուղղված է ռուս մեծ ժողովրդի դեմ։ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիզմի դեմ է, որ իբր Արևելքի ու Արևմուտքի ուղիները տարբեր են։

Ասեմ նաև, որ «Երևան» վեպը ֆորմալիստական վեպ է։

Այս է «Երևանի» իմ համառոտ գնահատականը։

Ինձ կուսակցությունն օգնել է հասկանալու այս բոլորը։ Ինձ համար հիմա լիովին պարզ է, որ դա անվերապահորեն անընդունելի գիրք է, ու ես հիմա ամաչում եմ, որ այդ գրքի տակ դրված է իմ ստորագրությունը։ Ես այս մասին ասում և հայտարարում եմ միանգամայն անկեղծ, ազնվությամբ։

Նացիոնալիզմը երբեք չի եղել իր համար էություն։ Դա հակահեղափոխական գրողների ազդեցության հետևանք էր։ Բայց դա խորը չի եղել, եթե չհաշվենք «Երևան» վեպը, որով-

հետև կյանքի հետ ինքը կապված է եղել միշտ, պայքար է մղել սկաուտիզմի դեմ, իր մանկությունն ու պատանեկությունը լի է եղել հոգսերով ու զրկանքներով, գրողի առողջ բնազդը բերել և հանգեցրել են իրեն կյանքի ճշմարիտ ճանաչողության, հակֆանացիոնալիստական, ինտերնացիոնալիստական եզրակացությունների:

Ո՞ր գրողի համար սա երջանկություն չէ, հպարտություն, ինքը համոզված է, որ ներկաների բացարձակ մեծամասնությունն իր հետ միասին ուրախ է այդ բոլորի համար:

— Ես,— հայտարարեց Արմենը,— սխալված խորհրդային գրող եմ, իսկ նրանք՝ անսխալ հակահեղափոխականներ:

Սա է տարբերությունը:

Չարենցի «Գիրք ճանապարհին», որով ինքը երբեք հիացած չի եղել, բայց բավական շատ գովել է թայֆայաբազական շահագրգռությամբ, իսկ այժմ գնահատում է այնպես, ինչպես բոլոր ներկա ժողովականները:

Իր երկար ելույթն ավարտելիս Արմենը իբրև եզրափակում ասաց՝

— Ապրում եմ, աշխատում իբրև մի մարդ, որն ունի խորհրդային գրողի պատասխանատու և հպարտ կոչում:

Մկրտիչ Արմենի ելույթը դարձավ մտքերի փոխանակության կենտրոն, բացի այն դեպքերից, երբ գրողներն ստիպված էին խոստովանել իրենց սխալները և հավաստիացումներ տալ: Ելույթ ունեցավ նաև գրականագետ Սողոմոն Սողոմոնյանը, որին նախորդ ճառախոսը մեղադրել էր Ալազանի մասին գովաբանական հոդված գրելու համար:

Երբ Սողոմոնյանը ելույթ ունեցավ և բավական երկար խոսեց տեսական հարցերի շուրջ, տեղից ռեպլիկներ եղան:

Նախագահ՝— Ավելի լավ է խոսիր մեր բացերի մասին:

Տեղից՝— Ալազանի մասին դու մեծ հոդված ունեիր, մի մոռանա:

Սողոմոնյանը ստիպված եղավ խոսել այդ մասին:

— Արդյոք կարիք կա՞ մի այդպիսի անքանքար գործի համար շռայլել գովասանք: Ես իմ հոդվածը համարում եմ քաղաքական սխալ, անսկզբունք հոդված, մի վիժվածք...

Մի խոսքով, չհաշված այսպիսի շեղումները, ինչպես նաև Զապել Եսայանի և Սուրեն Վահունու միմյանց ռեպլիկախեղդ

անելը, ապա ելույթ ունեցողներն իրենց պարտքն էին համարում անպայման խոսել նաև Մկրտիչ Արմենից:

Ոչ ոք չէր նայում այն բանին, որ իրենից առաջ մի ուրիշը նույն միտքը հայտնել է արդեն և հայտնել է համարյա նույն ձևակերպումով, իր պարտքն էր համարում խոսել, իր պարտքն էր համարում մեղադրել, ամենակարևորը՝ վերաբերմունքն էր, իսկ լուռ և ընդհանրապես կրավորական պահվածքը նրկատի էր առնվում որպես խուսափում, փախուստ քննության ենթակա հրատապ հարցերից:

Նույնն արեց նաև Վահունին: Նա ասաց, որ թե Արմենն իրեն միշտ պատկերացել է գագաթ, որից հետո գալիս են բլուրներ:

Արմենը եղել է հակահեղափոխական խմբակի անդամ և մասնակցել է նրանց հակահեղափոխական աշխատանքներին... Նա պետք է հրապարակավ ընդուներ իր ստեղծագործության մեջ եղած նացիոնալիստական սխալները և մինչև վերջ մերկացներ իր սխալները...

Նույն ոգով խոսեց նաև Հրաչյա Քոչարը: Քոչարը չնայած իր համեմատաբար երիտասարդ հասակին, ամբիոնից խոսում էր տարեցի հանգստությամբ, որ ավելի կամքի ուժ էր, որով սանձում էր կրքերից ալեկոծվող հոգին, խոսքը կարուկ էր և վերանայման չենթարկվող:

— Արմենի «Երևան» վեպը,— ասաց Քոչարը,— միշտ քննադատվել է, քննադատվում է որպես ռեակցիոն գործ, որն ուղղված է սոցիալիստական շինարարության և խորհրդային կարգերի դեմ:

Մի ժամանակ Արմենը չէր ընդունում այդ քննադատությունը, իսկ հիմա ընդունում է, հիմա էլ «Հեղնար աղբյուր» վեպն է պաշտպանում:

Արմենը տեղից՝ ճիշտ է և պաշտպանում եմ բաց ճակատով:

— Արմենը չպետք է պաշտպանի, եթե ուզում է լինել խորհրդային գրող:

«Հեղնար աղբյուրի» համար հեղինակը մեծարվել է երկու օր տևող դիսպուտում, լսել միայն դիֆերամբներ, ուղերձներ, գովք: Այդ արբեցնող մշուշում նա հասավ չտեսնված վերամբարձ վիճակի:

Մեծ հավակնություններով ճառ ասաց, որով հաստատվեց, որ համեստ չէ: Եթե Արմենը ուզում է լինել խորհրդային գրող, սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործող, պետք է հրաժարվի իր անհամեստ պահվածքից, պիտի ընդունի, որ «Հեղնար աղբյուրը» ռեալիստական գործ չէ, խոսքը սոցիալիստական ռեալիզմի մասին չէ, այլ ռեալիզմի: Դա ռեակցիոն ռոմանտիզմ է, հեքիաթաբանություն: Իդեալիստ հերոսը իրենից ներկայացնում է միստիկական արտահայտությունների տիպար:

Մկրտիչ Արմենը չդիմացավ՝ դու հասկանո՞ւմ ես, թե ինչ են նշանակում քո այդ ասածները, դրանք լուրջ մեղադրանք են, խնդրում եմ փաստերով խոսել:

— Ես դիսպուտում արդեն այդ մասին խոսել եմ, նորից չեմ կրկնում:

Երբ նախագահն ուզեց խաղաղեցնել, դիմելով Արմենին՝ «Մի խանգարեք»: Արմենը չհամբերեց. «Ախր, էդպես չի՛ կարելի, էստեղ մարդիկ իրենց ձևացնում են որպես սրբապատկեր այն ժամանակ, երբ նրանց ոտքերի տակ խունկ են ծխել, ներկայումս ուզում են այդ բոլորից հրաժարվել և ուրիշին մեղադրել»:

— «Հեղնար աղբյուրի» մեջ դասակարգային պայքարի ոչ մի արտահայտություն չկա: Այստեղ նա անցյալը ներկայացնում է վառ գույներով: Եվ Արմենը, որի հոգեկան հավասարակշռությունն արդեն խախտված էր, բացականչեց՝ «Սուտ է», իսկ Քոչարը իբր դա իրեն չէր վերաբերում, հանգիստ շարունակեց խոսքը՝

—Ներկան նա մշուշի մեջ է թաքցնում, քողարկում դասակարգային պայքարը, իդեալականացնում անցյալ կյանքից կենցաղի առանձնահատկությունները:

Ո՞րն է այս գրվածքի սոցիալիստական բովանդակությունը: Ջենք կարող այդ հարցին պատասխան տալ:

Քոչարը գտնում է, որ, հանձին ուստա Մկրտչի, հեղինակն իդեալականացնում է, սրբացնում անցյալ կյանքը և այստեղ երևան է գալիս հայկական նացիոնալիզմը:

Քոչարն ասում է, թե ինքը «Հեղնար աղբյուրը» և «Երևանը» մի քանի անգամ է կարդացել, համեմատել դրանք իրար հետ, գտել նմանություն և այժմ հայտարարում է, որ նա

պաշտպանել է ազգային առանձնահատկությունների խտացման թեզը: Դա հենց հայկական նացիոնալիզմի թեզ է:

Քոչարն ասում է, թե այստեղ ասում են, որ Արմենը պետք է վերակառուցվի, ուղղվի, իսկ նա մեծամտություն է անում, խանգարում է, ռեպլիկներ է տալիս: Արմենի անհամեստության մասին այստեղ արդեն խոսեցին, փաստեր բերվեցին: Ինքը ևս կարող է տասնյակ փաստեր բերել: Հենց այս ամբիոնից իր ելույթում նա հայտարարեց, որ ինքը մեծագույն գրող է:

Մի քանի ընկերների ելույթից հետո նորից ամբիոնի մոտ հայտնվեց Ազատ Վշտունին:

Նա սկզբում առաջ քաշեց ինքնաքննադատության խընդիրը՝ բոլորը պետք է խոսեն իրենց թերությունների մասին, որպեսզի իրար լավ հասկանանք, իրար օգնենք: Այո, յուրաքանչյուրը պետք է նշի իր սխալները, պարզի իր դեմքը... սա բոլշևիկյան քննադատություն և ինքնաքննադատություն կլինի: Իսկ Ավետիք Իսահակյանն ասում է, թե ես լվացք եմ անում, որ շատ սխալ է:

Խորհրդային գրողի յուրաքանչյուր քայլը շոշափում է մեր գրողների միության պատիվը, նրա քաղաքական հեղինակությունը, գրողների միության հեղինակությունը:

Ավետիք Իսահակյանը մեր գրականության կարկառուն դեմքերից է, մենք նրան հարգում ենք, նրան տեղ ենք տալիս: Ճիշտ է, նա նոր է եկել, երկար ժամանակ ապրելով արտասահմանում, ծանոթ չէ մեր քաղաքականությանն ամբողջապես, մենք նրան վստահում ենք, սակայն նա մի վատ քայլ է արել:

Վշտունին այս ասելով լուռ մնաց մի պահ, ժողովականները հանկարծակիի եկած՝ լարվեցին, իրար երես նայեցին, նայեցին Իսահակյանի կողմը, որ նույնպես անակնկալի առաջ կանգնած, չէր հասկանում՝ թե այդ ինչ է արել, որ պետք է դատապարտել:

Դահլիճում սպասողական վիճակ էր:

— Ընկ. Իսահակյանը գնացել է էջմիածին, այցելել կաթողիկոսին և կաթողիկոսի պատշգամբից ճառ արտասանել Ճեմարանի աշակերտների համար:

Տեղից՝ Գուցե սուտ է։

— Ես ասում եմ, որպեսզի ընկ. Բսահակյանն իր ելույթում ասի, ճի՞շտ է, արդյոք։

Խորհրդային գրողը, կուսակցական թե անկուսակցական, գիտե, թե իրենից ինչ է ներկայացնում այդ կրոնական ինստիտուտը։ Իհարկե, չեմ կարծում, թե նա կարող է հարգանքի տուրք տալ այդ ինստիտուտի աշակերտներին։ Աշակերտները սիրում են նրան, նրա գրվածքները կարդում, սակայն ինչո՞ւ պետք է կաթողիկոսի պատշգամբից խոսել աշակերտության հետ։

Մենք՝ գրողներս, պատասխանատու ենք մեր գրողների ամեն մի քայլի համար։

Զայն խնդրեց Ավետիք Բսահակյանը բացատրություն տալու համար։

Ընդհանուր ժողովի առաջին նիստին Բսահակյանը ներկա էր, նույնիսկ մի երկու ռեպլիկ տվեց Աբովին զեկուցման ժամանակ։ Տրամադրությունը բավական լավ էր, թեև պարզ պետք է լինի, թե նա ինչ էր զգում, տեսնելով, թե ինչ ցեխ է, որ գրչակից ընկերները շպրտում են մեկուսացված գրողների վրա։ Նա ափսոսում է, որովհետև Ալազանին բարեկամ մարդ է համարել, գնահատել է Մահարուն, բարձր կարծիքի է եղել Բակունցի մասին։ Նորենցի, Վանանդեցու հանդեպ իր վերաբերմունքը սոսկ մարդկային էր։ Բայց, ինչպես բոլորը, ինքը ևս գլուխ չի հանում կատարված ողբերգական դեպքից։ Մեկուսացնողը իշխանությունն է, որին չվստահելու և չհավատալու ոչ մի հիմք չունի։ Ինքը չգիտի, թե որն է այդ գրողների մեղքը, ի՞նչ են նրանք արել։ Գուցե իսկապես գործել են ընդհատակում։ Ի՞նչ անենք, որ լավ և գնահատելի գրողներ են, բայց գուցե նաև հակապետական անձինք էին։ Այնպես որ, ինքն ընդհանրապես ապրում է պղտորված սըրտով։ Ուրախ է, որ Զարենցն ազատ է, թեև գրողների ելույթներից երևում է, որ նա սերտ գործակցության մեջ է եղել բոլոր այդ գրողների հետ և գրական պայքարում նույնիսկ զեկավար դեր է ունեցել։ Լինում էր մոտը և վշտունու ասածը՝ եթե կան մարդիկ, որ գիտեն թե ինչով է զբաղված Զարենցը՝ թող ասեն, Բսահակյանի հասցեին ուղղված անթափանցիկ ակնարկ էր։

Մի խոսքով, Խահակյանը արտաքուստ իրեն պահում էր հանգիստ, բայց հոգեկան տանջալի վիճակ էր ապրում։

Երկրորդ նիստին Խահակյանը չերևաց։ Հայտնեցին, որ հիվանդացել է և չի կարողացել գալ։ Ուղարկել էր իր խոսքը գրավոր և խնդրել, որ հրապարակեն ամբիոնից ի լուր ժողովականների։

Ահա մի երկու քաղվածք նրա գրավոր խոսքից, որ «Իմ ապատ և ստեղծագործ ժողովրդի հետ» խորագրով նույն օրերին հրապարակվեց «Գրական թերթում»։

«Ոգևորվել եմ հայկական մարտական ազգայնությամբ, դաշնակցական ոչ երկրորդական գործիչ՝ աշխատել եմ անձնըվիրաբար, բանտեր եմ նստել, աքսորվել, փախել հայրենիքից։

Ըմբոստացել եմ կապիտալիզմի դեմ, հասարակության դեմ, ամեն ինչի դեմ։ Եվ վերջիվերջո երկար խորհելուց, կշռելուց, դատելուց հետո, վերստին եկել կանգնել եմ այդ փրկության լաստի վրա։ Եվ ահա ապատ կամքով, համոզմունքով այրելով բոլոր նավերը, անվերադարձ, վերստին եկել եմ այն աշխարհը, ուր մեծ, հոյակապ գործ է կատարվում ազգային և համամարդկային իմաստով։

Գալով ինձ, ես տակավին մոռանալու շատ բան ունեմ, որպեսզի կարողանամ նոր բան սովորել և հետո ես շատ բեռնավորված ուղտ եմ, մինչև հին բեռներս չթափեմ, նոր բեռ չեմ կարող վերցնել»։

Խահակյանի գրավոր խոսքի ընթերցումը ժողովականները ընդունեցին ծափահարությամբ։

Այս խանդավառ վերաբերմունքից ոչինչ չէր մնացել։

Ժամանակը և նրա մթնոլորտը լավ հասկանալու համար հիշենք, որ ինչպես հետագայում, մինչև հիսնական թվականների սկզբները, մի խոսքով անձի պաշտամունքի տարիներին, գաղափարական պայքարի բնույթ ունեցող գրական հավաքույթներում մի կողմը մեղադրող էր, մյուս կողմը՝ մեղադրվող, բացատրություն և ուղղվելու խոստումներ տվող։ Մեծ ու փոքր չկար, առաջին քայլերն ես անում, թե գրական կյանքի երկար ճանապարհ ես անցել, միևնույն էր։ Նշանակություն ուներ լոկ այն, թե ով է համարվում լիազորված խոսելու ժողովրդի, ժամանակի և կուսակցության անունից։ Հավաքույթ-

ների ընթացքն էլ այնպիսին էր, որ երբեմն 180 աստիճանի դարձ էր կատարվում և իրենն՝ գերգաղափարական կարծողին, հանկարծ մեկնումեկը ռեպլիկ էր տալիս և պարզվում էր, որ նրա կյանքում կա մութ կետ, կա արատավորող բիծ, ուրեմն՝ թող բարի լինի վեր կենա ու ամենքի առաջ բացատրություն տա։

Ոմանք իրենց կորցնում էին, խեղճանում, ոմանք կարողանում էին պահպանել իրենց հոգեկան հավասարակշռությունը։ Կրտսերներն ավագների հեղինակության հետ հաշվի չէին նստում։ Այդ իմաստով ծանր եղավ Դեմիրճյանի վիճակը։ Երիտասարդ ժողովականների հեգնական ռեպլիկները, ընդհանուր ժողովի ղեկավար ընկերների խիստ միջամտությունները, ընդհանրապես ժողովականների անուշադրությունն ի վերջո հանգեցին այնպիսի կացության, որ նա վիրավորվեց այնչափ, որ խոսքը կիսատ թողած, ելույթը չավարտած ամբիոնից իջավ։

Ո՛չ նախագահությունից, ո՛չ ժողովականներից, բառիս բուն իմաստով ոչ ոք Դեմիրճյանին չառաջարկեց ուշադրություն չդարձնել աղմուկի վրա և շարունակել խոսքը։ Թերևս դա էր ամենավիրավորականը։

Թվում էր, թե միակ մարդը, որի հանդեպ պահպանվելու է խորին հարգանք՝ Իսահակյանն էր, որ ոչ միայն ամենատարեցն էր, նա այն ժամանակ վաթսունն անց էր, այլ նաև ամենքից ընդունված դասական գրողը։ Բայց չէ, նա էլ չխնայվեց։ Վշտունու կարծիքով իր ասածները Գեղամ Սարյանի մասին խիստ անհրաժեշտ ու կարևոր են, և հանկարծ Իսահակյանը ռեպլիկ է տալիս՝ «Լվացք ես անում»։ Այսինքն՝ ղբաղված ես հին հաշիվներ մաքրելով և նա չներեց, չհանդուրժեց և հիշեց, ոչ թե իր տեսածը, այլ ուրիշից լսածը և Իսահակյանին դրեց ծանր կացության մեջ։ Բարեբախտաբար՝ Իսահակյանը թեև հուզական խառնվածքի տեր, անմիջական և տրամադրության մարդ, կարողացավ պահպանել իր հանգստությունը և բացատրություն տալիս մնաց իր արժանավորության բարձրության վրա։

Իսահակյանն ամբիոնից ասաց.

— Ես ինձ զգում եմ այստեղ լուսնից եկած։ Սրանից տասը տարի առաջ, երբ որ եկա այստեղ, Մոսկվայանն ասաց.

«Գնա էջմիածին, այցելիր բարեկամներիդ»: Սակայն հիմա դուրս է գալիս, որ խորհրդային նոր սահմանադրության շրջանում արգելվում է ինձ տեսնվել իմ ընկերների հետ: Ես, ընկերներ, սովորել եմ էջմիածնում, իմ պատանեկությունն անց եմ կացրել այնտեղ և, իհարկե, ցանկալի էր ինձ տեսնել այն վայրերը, որտեղ եղել եմ: Ես գնացել եմ էջմիածին փետրվարի 18-ին, իմ հին ընկերներից՝ ինժեներներից մեկը, եկավ և ասաց, որ էջմիածին պետք է գնանք և գնացինք ոչ թե կաթողիկոսին այցելելու, այլ որովհետև կաթողիկոսն իմ հին ընկերն է, միասին մենք սովորել ենք իր աշխարհական ժամանակը, եղել ենք միասին Գևորգ եպիսկոպոսի հետ և միասին սովորել ենք, հիմա մի՞թե ֆորմալիզմ է, երբ ասում են, թե չի կարելի գնալ տեսնել և այլն: Խնդիրը բովանդակության մեջ է, թե մենք ինչ ենք խոսել այնտեղ, եթե հետաքրքիր է՝ ես կպատմեմ:

Վշտունին տեղից՝ Ո՛չ, ո՛չ, դատարանի առաջ չենք կանգնած:

— Ես կարող եմ հայտնել ձեզ, որ նա շատ ավելի խորհրդային երկրի բարեկամ է, քան թե շատերը... Կաթողիկոսն ամենալավ բարեկամն է խորհրդային երկրի: Չպետք է ենթադրել, որ այնտեղ գնալով՝ բամբասանքներ են եղել և այլն: Իսկ գալով այն խնդրին, թե ես պատշգամբից ճառ եմ ասել աշակերտներին՝ միանգամայն սուտ է և զրպարտություն: Մենք՝ ես և եպիսկոպոսը, նստել թեյ էինք խմում, սպասավորը եկավ և հայտնեց, որ ուսանողներն ինձ կանչում են. ես դուրս եկա, տեսա, որ 15—20 հոգի ուսանողներ եկել են ինձ ողջունելու, նրանք սկսեցին ինձ հարցեր տալ, թե երբ եմ գրելու «Աբու Լալայի վերադարձը» և առհասարակ ուզում էին, որ խոսեմ իրենց հետ: Ես նրանց ասացի, որ որոշել եմ այսօր վերադառնալ Երևան, եթե կարողացա ավտոբուսի տոմս գնել, բայց որովհետև հանգստի օր է, տոմս գնողները շատ, հնարավոր է, որ չկարողանամ տոմս ձեռք բերել: Այն ժամանակ խոսք տվի, որ եթե երեկոյան չգնամ, ապա վաղը առավոտյան ժամը տասին կգնամ իրենց մոտ և կխոսեմ: Իհարկե, ես գտա, որ այստեղ հարմար չէ ինձ հետ խոսելը, մանավանդ որ փետրվար ամիսն էր, իսկ ես առանց գլխարկի էի դուրս եկել, իսկ Վշտունին ասում է, որ ես նրանց հետ խո-

սել եմ պատշգամբից... Մյուս օրը առավոտյան ժամը տասին եկան ու ինձ տարան մանկավարժական տեխնիկում, որպեսզի զրույց ունենամ տեխնիկումի և դպրոցի ուսանողների հետ: Այդտեղ հավաքվել էին մոտ չորսից հինգ հարյուր ուսանող-աշակերտ, որոնք շրջապատել էին ինձ: Ես, իհարկե, սպասում էի իրենց հարցերին, այդպես էլ նախօրոք ասել էի, որովհետև ես պատրաստված չէի խոսելու: Այդ ժամանակ եկավ դպրոցի վարիչը և հայտնեց ինձ, որ մեր հանդիպումը տեղի չի ունենա, որովհետև ընկ. Օրջոնիկիձեն մեռել է, և հետաձգվեց մինչև գարուն:

Այժմ Չարենցի մասին: Ես մոտ եմ եղել Չարենցի հետ և գնացել եմ նրանց տուն. ինձ մեր մեծերից, մեր իշխանավորներից, մեր ղեկավարներից հարցրել են՝ «Տեսե՞լ ես Չարենցին»: Ասել են՝ «Գնա և տես»: Ես, իհարկե, գնացի տեսնելու, բայց եթե անգամ ինձ չասեին էլ գնա տես, ես պիտի գնայի տեսնելու, որովհետև իմ մեջ գոյություն ունի ընկերական, մարդկային, բարեկամական հարաբերություն:

Ես, նախ և առաջ բոլշևիկ չեմ և չեմ կարողացել այդ բոլորը յուրացնել, որ իքսին կարելի է տեսնել ու բարևել, իսկ մեկ ուրիշին՝ ոչ: Եվ եթե Չարենցը բանտումն էլ լիներ՝ ես կգնայի տեսնելու: Ես, իսկապես չգիտեմ, թե նա ինչով է մեղավոր, և մեր ղեկավար ընկերներից մեկն ինձ ասել է, թե գնա նրա մոտ: Այնպես որ, ես գնացել եմ: Նախ և առաջ, ես նրան շատ բարձր գրող եմ ճանաչում, որպես մարդ՝ թողնենք մի կողմ, անհավասարակշիռ է և այլն, բայց որպես գրող ես գնահատել եմ նրան և ընդհանրապես սովորություն ունեմ, այն գրողները, որոնք արժեք ունեն, միշտ գնահատել այդպիսիներին, որքան էլ որ թշնամի լինի, չեմ կարող մեկի գործը չգնահատել: Ես գնացի և տեսա Չարենցին և իմ ամբողջ նպատակն է եղել՝ համոզել նրան, որ ամեն մի միջոց գործ դնի՝ իր այդ վատ ունակությունները թողնելու: Հետո հարցրել եմ՝ ինչումն են իրեն մեղադրել, և նա երդվել է իր կնոջով, իր երեխայով, Հայաստանով, ամեն բանով, որ ինքն անմեղ մարդ է, միակ հանցանքն այն է, որ գրել է մի ոտանավոր, որի մասին դուք գիտեք, և նա ասում էր, թե այդ մասին ինքը միայն Ակսելին է ասել, և Ակսելն էլ իրեն դավաճանել է: Նա որոշ գրություններ գրում է և ինձ ասաց՝ «Մի օր արի, կարդա»:

Մի ամսից հետո գնացի և գեղ կացության մեջ տեսա նրան, տնտեսապես էլ շատ գեղ պայմանների մեջ էր և շատ ընկրճված։ Նույնիսկ հանձն առա նրա մասին միջամտություն անել բժիշկներին, որպեսզի գան օգնելու, այդ ժամանակ մարդիկ եկան, և որովհետև նա գրքեր և գրասեղան էր ծախել, եկան, որ տանեն, դա իսկապես շատ վատ ազդեց ինձ վրա և երբ որ սեղանն ու գրքերը տանում էին, նա լաց եղավ։ Եվ ես շատ ազդվեցա։

Երկրորդ անգամ, փետրվարի 28-ին, նրա 40-րդ տարեդարձին, տեսա։ Նրա մոտ ոչ ոք չկար և մորքի էլ չէին տվել և նա շատ գեղ էր։ Դա այն ժամանակ էր, երբ կինը եկավ մոտս, ասելով, Չարենցը հուսահատ դրության մեջ է, կիսաուշագնաց ընկած է, դեղ էլ չեն տալիս, խնդրում եմ բժիշկ խնդրես, որ դեղ բերեն։ Կնոջ հետ գնացի տեսա, և իրոք, որ գտնվում էր ողբալի վիճակում, նա ասաց, որպեսզի ես միջամտեմ բժիշկներին, որ նրան ավելի շատ դոզա տան ընդունելու և ես էլ միջամտեցի։

Վշտունին տեղից՝ Նրա ստեղծագործ լքյուններից կարդացե՞լ ես։ Ի՞նչ է գրում այժմ։

— Ես ճիշտն ասած լավ չեմ հիշում, ինչ-որ պակաս-մակաս, աննշան բաներ կային, կցկտուր գրած, չեմ հիշում, բայց կարծեմ կրում էր այսպիսի վերնագիր՝ «Նավզիկե»։ Եթե ուրիշ հարցեր կան, ես կարող եմ պատմել։ Այլևս ասելիք չունեմ։

Ոչ ոք հարց չտվեց։

Աբովը եղրափակիչ խոսք ասելու համար մոտեցավ ամբիոնին, սկսեց իր խոսքը՝ ժպիտը դեմքին, ինչպես միշտ։

Աբովը տարբեր խնդիրներ դրեց, ասաց նաև, որ մի շարք ընկերներ այստեղ ինքնաքննադատությամբ հանդես եկան, կանգ առան իրենց բացերի ու թերությունների վրա։

«Ես կարծում եմ,— ասաց նա,— որ Գեղամ Սարյանի ելույթն անբավարար էր։ Իրեն և բոլորիս հայտնի է, որ եթե սահմանագիծ դնենք նրա և հակահեղափոխականների մեջ, կտեսնենք, որ նրա ստեղծագործությունների մեջ նացիոնալիզմի արտահայտություններ իսկապես չկան։ Նրա ստեղծագործությունների մեջ հակահեղափոխական տրամադրություններ չկան և այլն, բայց ստեղծագործական մեթոդներով,

այնուամենայնիվ, որոշ կապ ինքն զգո՞ւմ է, թե ոչ: Նրան քաշում է մի փոքր ռոմանտիկ տրամադրությունների գովերգումը և կոնկրետ իրականության դիրքավորում չկա:

Սարյանը տեղից՝ Այդ նույնը կա և Ազատ Վշտունու ստեղծագործությունների մեջ:

— Այո, այդ նույնը կա նաև Ազատ Վշտունու ստեղծագործությունների մեջ, և Վշտունին վերջերս փորձեց հեռանալ դրանից: Նա մի պոեմ է գրում, որտեղ փորձ է անում հեռանալ այդ տրամադրությունից: Այդպիսի փորձ է անում նաև Գեղամ Սարյանը, որն աշխատում է ռեալիստորեն տալ: Ընդհանրապես այդ մեզ՝ բոլորիս, կհաջողվի միայն այն դեպքում, եթե մենք շատ լավ գիտենանք մեր անցյալի բացերն ու թերությունները, իմանանք դրանց պատճառները... Եվ եթե մենք այսօր խնդիր ենք դնում, որ Գեղամ Սարյանը այդ պատճառները գտնի, ապա նա պետք է իսկապես զբաղվի այդ խնդրով և չպատկերացնի, որ «իմ գրականությամբ ուրիշ եմ, իսկ նրանց հետ միայն ընկերական կապ եմ ունեցել»:

Մենք մեր ընդհանուր ժողովներում դիտողություն ենք արել Սարյանին, որ դրանք տարբեր բաներ չեն: Իրավացի էր ընկ. Դեմիրճյանը, որ որոշակի ասում էր, թե քաղաքական մտայնությունը և ստեղծագործական մեթոդը տարբեր բաներ չեն: Իհարկե, նույնացնել էլ չենք կարող, բայց որոշ չափով իրար հետ սերտորեն կապված երևույթներ են և այն ռոմանտիկական ձևը, որով նացիոնալիստները գրում էին, դա անշուշտ բխում է իրենց քաղաքական դիրքավորումից:

Սարյանը տեղից՝ Ազատն էլ ունի:

Վշտունին տեղից՝ Ոչ, հեղափոխական ռոմանտիզմը դա հակահեղափոխական ռոմանտիզմ չէ:

— Ես ասացի, որ չենք նույնացնում... Ես ասացի, որ այդ խնդիրներն իրար հետ կապված են, և մենք պետք է գիտակցենք, իմանանք պատճառները, խորը կերպով դնենք, թե ի՞նչ մտայնության հետևանք է, այս, կամ ինչո՞ւ են այս մարդիկ կապ ունեցել իրար հետ և ի՞նչ ձևով մենք պետք է այդ կապից ազատվենք:

Այժմ ընկ. Խահակյանի մասին:

Ճիշտ է, որ ընկ. Խահակյանը նոր մարդ է: Նա ծանոթ չէ մեր բոլոր խնդիրներին, երկար ժամանակ մեզ մոտ չի

եղել: Ընկ. Իսահակյանի այս քայլը, իհարկե, մի տեսակետից անթույլատրելի է, ոչ թե նա կատարել է գիտակցաբար, որպես մեր դեմ համոզմունքով ուղղված մի քայլ... ընկ. Իսահակյանին ոչ ոք չի արգելել, որպեսզի նա տեսնվի կաթողիկոսի հետ, մանավանդ որ նա նրա հետ մոտ է եղել:

Վշտունին տեղից՝ կազմակերպչորեն սխալ է այդ քայլը:

— Եթե Ազատ Վշտունուն վերցնենք, նա չի գնա կաթողիկոսի մոտ:

Ստ. Զորյանը տեղից՝ եթե հանձնարարեն՝ կգնա:

— Այդ ուրիշ բան: Ոչ ոք չի արգելի այդ քայլը ընկ. Իսահակյանին, և ընկ. Իսահակյանն էլ ակնարկեց սահմանադրության մասին: Սակայն, ընկերներ, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր իրավունքները և իր պարտականությունները, առավել ևս խորհրդային գրողը, որն ունի ավելի խոշոր պարտականություններ: Ընկ. Իսահակյանին գուցե թվա, թե մենք պետք է հաշվի առնենք նրա յուրաքանչյուր քայլը, սակայն յուրաքանչյուր խորհրդային գրող պետք է լավ իմանա, որ նրա յուրաքանչյուր քայլը չպետք է հակասի մեր միությանը: Պարզ է բոլորիս համար, որ յուրաքանչյուր խորհրդային գրողի վերաբերմունքը դեպի կրոնը ժխտողական է, ինչպես և դեպի կրոնի հովիվները: Եթե կարելի է այսպես անվանել: Ես լավ գիտեմ, ընկ. Իսահակյան, ձեր վերաբերմունքը դեպի կրոնը, գիտեմ, որ ժխտողական է բոլորիս հետ միասին, սակայն մենք ունենք երիտասարդություն, որը կիմանա, թե Իսահակյանը եղել է վեհափառ կաթողիկոսի մոտ: Նրանց ինչ, որ նրանք միասին սովորել են, հետևանքը լինում է այն, որ երիտասարդներից մի խումբ գնում են և ուզում Իսահակյանին տեսնել: Իհարկե, նրանք սխալ են անում, որ այդպես խմբով են գնում, բայց ընկեր Իսահակյանը մեղավոր չէ, որ նրանք միասին են եկել: Նրանց սխալի համար, իհարկե, ընկ. Իսահակյանը պատասխանատու չէ: Իհարկե, ընկ. Իսահակյանը պետք է ասեր, որ նպատակահարմար չէ, կարող ենք մի ուրիշ տեղ հանդիպել:

Իսահակյանը տեղից՝ Ես այդպես էլ ասել եմ:

— Ընկեր Իսահակյան, դա արդեն քաղաքական բովանդակություն է ստանում:

Իսահակյանը տեղից՝ Նրանք կանգնել էին սանդուղքների գլխին։

— Դա կարևոր չէ։ Փաստն այն է, որ հոգևոր, կրոնական մի հիմնարկի դռնից, պատուհանից թե պատշգամբից խորհրդային գրողը խոսակցության մեջ է մտնում թեկուզ մի տասնհինգ հոգուց բաղկացած կոլեկտիվի հետ։ Սրանից արդեն մեր թշնամիները կարող են այլ մեկնաբանություններ անել և բազմաթիվ պրովոկացիաների տեղիք տալ։ Ընկ. Իսահակյանն այդպիսի քայլ անելիս պետք է հաշիվ տար իրեն, թե արդյոք խորհրդային գրողի դիրքի տեսակետից այս քայլը ճի՞շտ է, թե ոչ։

Իսահակյանը տեղից՝ Բայց ինչո՞ւ ընկեր Մռավյանն ինձ գործուղեց այնտեղ։

— Ես այդ չգիտեմ և պատասխանատու չեմ դրա համար։ Գուցե 1927 թ. ուրիշ հարաբերություններ են եղել, սակայն մեր մասսաները, մեր ընդհանուր հասարակության վերաբերմունքը դեպի կրոնը, բոլորովին տարբեր է։ Գուցե այն պայմաններում որոշ իմաստով նպատակ է եղել այդպես անելու, չնայած, գուցե այն ժամանակ էլ սխալ է եղել այդ և անշուշտ ու անպայման սխալ է եղել, որովհետև ի՞նչ կարիք կար, որ լուսժողկոմն ուղարկեր ընկեր Իսահակյանին կաթողիկոսին այցելելու։ Վատ չէր լինի, եթե ընկ. Իսահակյանը նման խընդիրներում դիմեր մեր գրողներին, խորհրդակցեր, և մեր գրողները կկարողանային, անշուշտ, օժանդակել նրան։

Իսահակյանը տեղից՝ Բայց կաթողիկոսն այժմ քաղաքացի է։

— Սակայն առաջին հերթին կաթողիկոս է և ապա քաղաքացի։

Իսահակյանը տեղից՝ Ուրեմն՝ ինձ արգելվո՞ւմ է։

— Խնդիրն այդպես չի դրվում, այլ այն, որ լավ չի, որ աշակերտների հետ խոսում եք այնտեղից։ Իհարկե, աշակերտները լավ են անում, որ ձեզ ողջունում են, որ ձեզ հետ ուզում են խոսել, այդ, իհարկե, ձեր մեղքը չէ, որ աշակերտները գալիս են ձեզ հանդիպելու կաթողիկոսի մոտ, սակայն անհրաժեշտ է ունենալ որոշ շրջահայեցողություն, եթե դա անհրաժեշտ է։

Տասնհինգ րոպե տևող ընդմիջումից հետո։

ԱԲՈՎ. Ես մի հանգամանքի վրա մոռացա կանգ առնել։ Իհարկե, ընկերներ, չի արգելվում և ոչ էլ, ինչպես ասում են՝ ղադաղա չի Չարենցի մոտ գնալը։ Այդ մասին չէ խոսքը։ Օրինակ, այստեղ մի դիտողություն եմ ուզում անել ընկեր Իսահակյանին։ Ես ընկեր Իսահակյանին այնպես հասկացա, որ ինքը կարծես թե համաձայնում է այն դրության հետ, որ Չարենցը միայն մի աքրոստիկոս է գրել, որտեղ նացիոնալիստական տրամադրություններ է արտահայտել, որտեղ դրել է ժողովրդի հավաքագրման խնդիրը։ Դրա իմաստն այն է, որ հայ կապիտալիստները պետք է հավաքվեն Հայաստան և Նուպար փաշան էլ պետք է գա, որ այստեղ ստեղծվի հայկական բուրժուազիայի տիրապետության մի վայր։ Ահա այս լոզունգն էր և, իհարկե, այս լոզունգը անմեղ լոզունգ չէր, ինչպես Չարենցը բացատրել է ընկ. Իսահակյանին։ Եվ ընկ. Իսահակյան, Չարենցն իրեն միայն այս խնդրում է հանցագործ համարում, սակայն դա նրա միակ հանցանքը չէ։ Սկզբում, երբ ես խոսել եմ նրա հետ այդ մասին, նա երկերեսանի կերպով ասաց, որ այդ բանն ինքն ասել է, նկատի ունենալով մեր կոլխոզային հատարակարգի ստեղծումը (ծիծաղ)։ Տեսնում եք, բոլորդ ծիծաղում եք։ Ես խնդիրը պարզ եմ դնում, երբ նրան հարցրել են, թե դա ի՞նչ է նշանակում, նա պատասխանել է, որ Հայաստանի կոլխոզների մասին է գրել։ Կոլխոզների մասին ինչո՞ւ գաղտնի գրել, ինչու կոլխոզների մասին չգրել ուղղակի բաց ճակատով, ո՞վ է նրան խանգարել։ Նրա մեղքը միայն գրելը չէ, այլև այն, որ նա այդ գրածն ուզեցել է թաքցնել։

Այդ դաշնակցական լոզունգ է։ Այդպիսի լոզունգ դաշնակցականները կարող են տալ։ Այդ հակահեղափոխական լոզունգը նա աշխատել է մաքսանենգ կերպով հրապարակել մեր մամուլի մեջ, սա մի դատապարտելի հակահեղափոխական դործ է գրողի համար։ Ընկերներ, բոլորի համար պարզ է, որ Չարենցը ունեցել է նացիոնալիստական ռեակցիոն տրամադրության արտահայտություն։ Թեկուզ վերցնենք «Գյուրք ճանապարհին» կամ նրա «Պատմության քառուղիներով», «Մահվան տեսիլը», որտեղ նա աշխատում է ցույց տալ, որ ուղի չկա, որ անհեռանկար է, որ լավում է գայլի ոռնոց, որ հայ ժողովուրդը չունի հեռանկար, այդ այն հայ ժողովուրդը, որ

ունեցել է հեղափոխական պայքար, ունեցել է գյուղացիական ընդվզումներ, դա դաշնակցական վայնասուն է, որը կտրված է մեր ժողովրդից: Դա դաշնակցական կոնցեպցիա է. այն ժամանակ, երբ հայ ժողովուրդն ունի հսկայական կոլտնտեսական շինարարություն, սոցիալիստական շինարարություն, երբ նա օր-օրի վրա աճում ու զարգանում է:

Կամ նրա «Մահվան տեսիլի» մեջ պատկերված Արծրունին, Րաֆֆին, որոնք հանդես են բերված ծաղրանկարներով, մեծ քթով, սապատով, որոնք ծաղրի են ենթարկված, մի՞թե սա մարքսիստական ճիշտ պարզաբանում է, իհարկե՛ ոչ: Սա ցույց է տալիս, որ նա ուզեցել է պայքարից հեռանալ, մասայի ուշադրությունը շեղել բոլորովին հակառակ նպատակով: Սա պատահական չէ, պատահական չէ այն, որ ժամանակին պաշտպանվել է այն տեսությունը նրա կողմից, որ Հայաստանում չի կարող լինել պրոլետարական կուլտուրա և այլն: Եվ բացի այս բոլորից՝ մարդը փաստորեն կապ է ունեցել այդ մարդկանց հետ, օժանդակել է նրանց՝ իրենց հակահեղափոխական աշխատանքների ընթացքում... Այնպես որ, ընկ. Խահակյան, թերևս մեղքը նրանից է գալիս, որ դուք այստեղ չեք եղել և ծանոթ չեք խնդիրներին, սակայն սրանք փաստեր են: Ձարենցն ասել է ձեզ, որ նրա մեղքը միայն դա է: Նրա մեղքերը շատ ավելի շատ են, և եթե կառավարությունը նրա հանդեպ շատ խստություններ չի հանդես բերում, դա նրանից է, որ այսպես թե այնպես գրական իր որոշ արժանիքներով, որոշ երկերով արժեք է ներկայացնում խորհրդային գրականության համար և այս չափով էլ նրա նկատմամբ կառավարության վերաբերմունքը կա: Եվ ես նշում եմ այստեղ ևս, ընկեր Խահակյան, անհասկանալի է միանգամայն և ավելորդ է այն առանձին հոգատարության արտահայտությունը, որ դուք աշխատում էիք նրա վերաբերյալ ցույց տալ: Այն, որ ուզում էիք բժշկին ասել իրենց վերաբերմունքը ցույց տան և եթե թույնի ավելի խոշոր դոզան պահանջվում է նրա կյանքը ոչնչացնելու համար, թերևս նրանք ավելի ճիշտ են վարվել, որ չեն տվել, քան թե նրանք, որոնք ասում են՝ ավելի մեծ դոզայով տվեք և այլն: Դրա համար էլ ի՞նչ անհրաժեշտություն կա այդպիսի հոգատարության:

Խահակյանը տեղից՝ Բայց չեք կարող արգելել:

— Այդ հոգատարությունն ավելի բացասական արդյունք կարող է տալ, քան՝ դրական, հենց այդ տեսակետից, այդպես չպետք է վարվել: Մենք պետք է աշխատենք, որպեսզի խընդիրները կատարվեն ճիշտ խորհրդային դիրքերից: Մարդը գնում է՝ պետք է իմանա, թե ում մոտ է գնում: Ո՞ւմ մոտ գնալ, ինչպե՞ս գնալ: Ես կարծում եմ, որ մի մարդու հետ, որը վերջին շրջանում հակառակ բանակի կողմ է անցել, մեր հարաբերությունը նրա հետ շատ պարզ պետք է լինի: Ուրիշ բան է նրա որոշ երկերի նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքը, մենք կարող ենք այդ որոշ երկերին վերաբերմունք ցույց տալ:

Այս ամենին հաջորդեց ժողովի եզրափակիչ մասը, որը նվիրված էր գրողների միության սեկցիաների աշխատանքներին, տեղի էր ունենում սեկցիաներն աշխուժացնելու վերաբերյալ առաջարկների քննություն:

Ստեփան Զորյան, Ազատ Վշտունի, Զապել Եսայան, Դևուդ Սբով մտքեր էին փոխանակում այդ հարցերի շուրջ: Խաղաղ նիստ էր դա, ինչպես խաղաղված ծովն է լինում փոթորկից հետո:

Ես նայում էի Ավետիք Իսահակյանին: Նա գլուխը կախ նստած էր՝ մռայլ ու մտահոգ, հայացքը մի կետի: Ի՞նչ էր մտածում՝ անհայտ էր: Ըստ երևույթին վշտացած էր, վիրավորված, դառնացած: Նա իր կյանքում շատ վեճերի էր մասնակցել, բայց այսօրվա ունեցածը վեր էր ամեն պատկերացումից: Ինձ մի պահ թվաց, որ նա շփոթված, զարմացած է, և իր ուղեղը պարզապես հրաժարվում է հասկանալ գրական միջավայրի անցուդարձը: Իսահակյանը կարծես սթափվեց, նայեց շուրջը, նայեց Դեմիրճյանի կողմը, որը թեև փոքր-ինչ տագնապած, աշխատում էր պահպանել ինքնատիրապետումը և ճիշտ է, կրավորական, բայց կարճ ռեպլիկներով մասնակցում էր հարցի քննությանը:

Վերջապես նիստը հայտարարվեց փակված: Իսահակյանը չմնաց, թողեց գնաց: Նրան միացավ Ստեփան Զորյանը, իսկ մյուսները տարբեր խմբեր կազմած խոսում էին: Ես մի փոքր հապաղեցի, իսկ հետո դուրս եկա և ճանապարհվեցի տուն, որտեղ ինձ սպասում էր անքուն գիշեր...

ԻՄ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հովհաննես Հովհաննիսյանի շուրջ իմ միտքը երեք առումով էր աշխատում. մի կողմից՝ բանաստեղծի արխիվն ուսումնասիրում, մյուս կողմից՝ գրեթե ամեն օրյա այցելություն Հովհաննիսյաններին, երրորդն էլ՝ ծանոթանում էի ռուս դասական գրողների երկերի նոր ժողովածուներին, հատկապես Պուշկինի և Լերմոնտովի հրատարակություններին, նրանց գիտական սկզբունքներին, այն հարուստ փորձին, որ դոյություն ուներ ռուսական իրականության մեջ ընդհանրապես:

Հովհաննես Հովհաննիսյանի երկերի հրատարակության ծրագիր կազմեցի: Ժողովածուն պետք է բաղկացած լիներ երկու հատորից: Առաջին հատորն ընդգրկելու էր՝ «Բանաստեղծություններ», «Բալլադներ և պոեմներ», «Անտիպ բանաստեղծություններ» և «Սևագրություններ»: Երկրորդը նախատեսում էր հետևյալ գլուխները՝ «Դրամաներ», «Սևագրություններ», «Հոդվածներ», «Նամակներ»: Հատորներն ունենալու էին ծանոթագրություններ:

Ես «թևքերս քշտեցի» և գործի անցա: Այն ժամանակվա ընթացքում, որ ես պատրաստեցի առաջին հատորը, համարյա չեմ զբաղվել ուրիշ գործով: Ես չեմ պատկերացնում, թե ինչպես որոշ գրողներ միաժամանակ կարողանում են գրել, ասենք, երկու վեպ: Ինձ համար այդ ժամանակաշրջանում Հովհաննիսյանից բացի ոչ մի ուրիշ բանաստեղծ չկար: Ում հետ հանդիպում էի, խոսում էի նրա մասին, պատմում նրանից, մեծ մասամբ այն, ինչ լսել էի բանաստեղծի տանեցիներից, ասում, թե ինչպես եմ մտածում հրատարակել երկհատորյակը, խորհուրդ հարցնում, մտքեր փոխանակում:

Ես խնդրել էի նկարիչ Արարատ Ղարիբյանին հանձն առնել Հովհաննիսյանի ժողովածուի ձևավորումը: Ազնիվ բարեխղճությամբ աշքի ընկավ նրա կատարած աշխատանքը: Գուցե կազմն իմ ուզածի պես լավ չէր ստացվել, բայց մնացածը ճաշակով էր: Նրան չէր հաջողվել նաև բանաստեղծի դիմանկարը, որն իր իսկ առաջարկով ժողովածուի մեջ տեղ չգտավ:

1937-ին լույս տեսավ առաջին հատորը:

Անվանաթերթի վրա գրված է 1937, բայց վաճառքի հա-

վից 1938-ի մարտի 28-ին: Երկրորդն այդպես էլ հրապարակ չեկավ: Ոչ ոք մեղք չուներ, բացի ինձանից:

Հովհաննիսյանից հետո ես կրկին վերադարձա Նար-Դոսին, Վրթանես Փափազյանին, ապա Խաչատուր Աբովյանին: Եվ այդպես էլ Հովհաննիսյանի ժողովածուի երկրորդ հատորը ո՛չ կազմվից, ո՛չ էլ առաջարկվեց տպագրության:

Երևի կարիք կա, որ ինքնաքննադատությամբ նշեմ իմ բնավորության թերին, որ միակը չէ, անշուշտ, բայց պատճառ է եղել շատ գործերի խափանման: Լավ է, թե վատ, չգիտեմ, բայց հափշտակվող մարդկանցից եմ և ինչպես այդ խառնվածքն ունեցողների մեծ մասը, ես նույնպես տրամադրության մարդ եմ: Մի հափշտակությանս հաջորդել է մեկ ուրիշը և միշտ նորը իմ հոգուց դուրս է վանել նախորդը: Դա է պատճառը, որ ես շատ հաճախ ձեռնարկածս գործը մինչև վերջ չեմ հասցրել: Հովհաննիսյանի երկրորդ հատորին ձեռնամուխ չեղա: Ձեռնամուխ չեղա նաև Աբովյանի երկերի երրորդ հատորի պատրաստմանը: Պատրաստեցի Սունդուկյանի գիտական հրատարակության երկերի երեք հատորը և չորրորդը զիջեցի ուրիշին հեշտությամբ:

Հովհաննիսյանն իմ բանասիրական գործունեության առաջին լուրջ աշխատանքն էր, որ ինձ համարում բերեց բանասերների աչքում: Այդ բոլորի համար ես պարտական եմ այն փորձին, որ ձեռք էի բերել գրական թանգարանում աշխատելիս և հատկապես այն խորհուրդներին, որ ինձ և ուրիշներին տվել էր Խորեն Սարգսյանն այնտեղ աշխատածս տարիներին:

Այդ հրատարակությունը թերություններ ունի ու երևի ոչ այնքան քիչ, բայց Հովհաննիսյանի գալիք հրատարակությունների հիմքը եղավ: Երևի ամենամեծ թերությունն այն խիստ ժամանակագրությունն էր, որը ենթադրում էր երկերի հաջորդականություն ըստ թվականների, օրերի և ամիսների, անկախ նրանից, ինքնուրույն է, թե՝ թարգմանություն: Թեև ես մոտածում էի և հիմա էլ այն համոզման եմ, որ այս դեպքում միայն կարելի է ավելի ստույգ հետևել բանաստեղծի մտքի ընթացքին: Բայց, իհարկե, ընթերցողը չի ունենա այն հստակ պատկերը, երբ բաժանում ես թարգմանությունը ինքնուրույն գործից:

Ծանոթագրությունները շարադրելիս ես գիտեի, որ գիտա-

կան հրատարակությունը, որի հավակնությունն ինչ-որ չափով ուներ այս հրատարակությունը, պահանջում է սեղմ, չոր շարադրանք, մտքերի ստույգ ձևակերպում: Իմ բանասեր ընկերներն ինձ ասում էին, որ երբեմն միտքս ձևակերպել եմ՝ հեռանալով պահանջվող խստությունից:

Մի թերություն ևս. ես ունեցա տասական թվականների ռուս բանաստեղծներով հափշտակվելու շրջան: Եվ նկատել էի, որ նրանցից մի քանիսն իրենց բանաստեղծության գրության թվականը նշելիս, հազարամյակը հանում են, ոչ թե ասենք, 1912, այլ 912: Ու ինչ փչեց իմ երիտասարդ գլխին, որ ես էլ իմ հերթին Հովհաննիսյանի երկերի տեքստը պատրաստելիս թվականը նշում էի առանց հազարամյակի:

Ես այլևս չվերադարձա Հովհաննիսյանին, որպես գրականագետ, բացի մի առաջաբանից, որ լույս տեսավ զանազան տարբերակներով, ընդարձակ կամ համառոտ ու բացի այն զեկուցումներից, որ կարդացել եմ Հովհաննիսյանի հոբելյաններին և այն մասնակցությունից, որ ունեցել եմ Հովհաննիսյանին նվիրված էջմիածնի համարյա բոլոր հավաքներին, բանաստեղծի ժառանգների կանչով:

Մեկ-մեկ պատահում է, որ նայում եմ Հովհաննես Հովհաննիսյանի լուսանկարը: Ի՜նչ գեղեցիկ ու առաքինի մարդ, նայում եմ ու մտածում, որ նա շատ է նման իր գրվածքներին: Նայում եմ երկար, ու մի պահ ինձ թվում է, որ չքանում է ինձ շրջապատող իրականությունը, մենք մնում ենք երկուսով մենակ, ու ես լսում եմ նրա ձայնը:

ՎԵՐՈ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎՈ.

Երկու թե երեք անգամ Սևանա կղզում հանդիպել եմ Վերա Զվյագինցևային, ռուս բանաստեղծուհուն, թարգմանչուհուն:

Առաջին անգամ, եթե չեմ սխալվում, 1936-ին էր:

Քառասունն անց կին էր:

Շրջապատը՝ հայ գրողներն ուշադիր էին, քաղաքավարի, սիրալիր: Բայց զգացվում էր, որ առանձին կարևորություն չեն տալիս իրեն: Երևի պատճառն այն էր, որ ռուսական պոե-

գիտյի առաջին անուններից չէր: Բոլորն էլ անունը լսել էին՝ նրա Հայաստան գալու և մեր բանաստեղծներին թարգմանելու կապակցությամբ:

Ես՝ 27-ամյա երիտասարդ, բավական լավ գիտեի ռուսական արդի պոեզիայի գրեթե բոլոր հայտնի դեմքերին՝ Ասեև, Սելվինսկի, Բագրիցկի, Լուգովսկոյ, և շատ ուրիշներ, չհաշված այնպիսի մեծ անուններ, ինչպես Ախմատովա, Մայակովսկի, Եսենին, Պաստեռնակ:

Անկեղծ որ լինեմ՝ Զվյագինցևայի անունն անգամ չէի լսել:

Առաջին ծանոթությունը վերածվեց մտերմության: Քանցուկ էր անում ինձ և փնտրում կղզու սակավամարդ վայրերը և խոսում պոեզիայից:

— Ռուբեն,— կատակի էին տալիս մեր տան հանգստացողները,— կա չկա սիրահարվել է...

Սիրահարվել էր, բայց ոչ թե ինձ, այլ Հայաստանին, նրա պատմությանը, բանաստեղծներին՝ անցյալ և ներկա: Եվ այդ սիրուց ինձ էլ բաժին էր հասնում, մանավանդ որ հանդիպել էր մի մարդու, որ գիտեր իր սիրելի բանաստեղծներին, ինչ-որ տեղեր ու հատվածներ անգիր գիտեր, օրինակ Պաստեռնակին, որի պաշտամունքն ուներ: Կարող էր ժամերով պատմել նրանից, ու ես լսում էի հաճույքով: Կարող էր բանաստեղծություններ կարդալ ոչ թե մեկը կամ երկուսը, այլ տասներկուսը, ու ես լսում էի պոեզիայի սիրահարի բավականությամբ: Ի դեմս ինձ՝ գտել էր հնազանդ ունկնդրի, իսկ նա, պետք է ասել, որ կարդում էր հիանալի, ինչպես Գրիբոյեդովի հերոսն է ասում՝ с чувством, с расстановкой, բացի այդ, ինչպես ինքն էր նկատում, ես ունեմ Պաստեռնակի տողի յուրահատկության զգացողություն, իմանալով, որ բանաստեղծը ձգտում է պոետական պարզությունը հասցնել արձակի պարզության, արձակի ճշգրտության:

Իսկ մի ղրույցի ժամանակ, երբ ասացի, որ Պաստեռնակի մասին հայ գրականության մեջ առաջին գրողը ես եմ եղել, զարմանալի բան կատարվեց նրա հետ. հուզվեց, շիկնեց, վեր կացավ տեղից, մոտեցավ, գրկեց ու համբուրեց:

Զվյագինցևան բազում անգամներ եղավ Հայաստանում, եղավ գյուղերում: Հայերեն չսովորեց, գիտեր հատուկենտ բառեր՝ «բարի լույս» և այլն, բայց պահանջ ուներ գյուղում

լինելու, զգալու հողի բույրը, իմանալու, թե ինչ է հայ գյուղացին, գեղջկական կենցաղը, ինչպես են լավաշ թխում, ինչպես է հայ կինը ճաշ եփում, ինչ համեմունքներ է օգտագործում, որ ճաշը դարձնում է այդքան համով, գիտեր, թե ինչ են ռեհանն ու թարխունը:

— Ինչպես եմ ուզում հայկական ժողովրդական երգ լսել ոչ պրոֆեսիոնալ երգչի, այլ գյուղացու կատարմամբ: Գեղջկուհու պարը: Ես ուզում եմ հասնել նախնականության, հիմքերի հիմքին:

Մի երկու անգամ ես ուղեկցել եմ իրեն և տեսնում էի, որ դա հետաքրքրքրասեր զբոսաշրջիկի ցանկություն չէ, այլ խոր ճանաչողության ձգտում, ուզում էր հայկական ըմբռնմանը հանգել սրտով: Սխալ բառ. ոչ թե ձգտում էր դա, այլ՝ տենչ: հոգեկան անկասելի մղում:

Համեստ կին էր, թեև չեմ հիշում գոնե մի դեպք. որ նա հանգիստ ընդուներ իր թարգմանությունների վերաբերյալ արվող քննադատական ամենաչնչին դիտողություններն անգամ: Ասում էր, թե ապագայում, երբ հայերենից թարգմանվածք չափածոն դառնա հետազոտության առարկա, մարդիկ կհանգեն շատ կարևոր եզրակացության, որ թարգմանելիս ես ունեմ մի մեծ առավելություն, նույնիսկ ինձանից ավելի մեծ տաղանդի տեր մարդկանց նկատմամբ. դա բանաստեղծական տողի այն զգացողությունն է, որ կարող է ունենալ միայն հայը և հազարից մի դեպքում՝ օտարը:

Ես հարցնում էի՝ մի՞թե ինքը չի ընդունում, որ հանճարն ի վիճակի է հասնելու նույնպիսի թափանցման շատ կարճ ժամանակում:

— Դրա համար էլ հանճար է,— պատասխանում էր նա:

Իրրև օրինակ բերում էի Լերմոնտովին, ասում այնպես՝ ինչպես է նա թարգմանել Գյոթեին, թեև դրան տրամադրել է ընդամենը մի քանի ժամ, մինչդեռ ուրիշ թարգմանիչներ տքնել են երկար և չեն հասել նույնպիսի արդյունքի:

Նա զարմանում էր.

— Նախ՝ Լերմոնտովինը փոխադրություն է, հետո՝ ինչո՞ւ եք փնտրում հակասություն այնտեղ, որտեղ չկա: Այդ որ թեթևամիտն է մրցության մեջ մտնում հանճարի հետ, նախապես գիտենալով, որ իրեն պարտություն է սպասում: Բայց

սովորական ձիրքը, եթե կամենա ու ձգտի, կարող է հասնել անկարելիին, այսինքն՝ եթե հանճարը մեզ անհայտ ուժով Շեքսպիր է թարգմանում և իրեն զգում անգլիացի, ապա սովորական ձիրքը հասնում է դրան, ինչ հիմա ես եմ անում: Բրյուսովը հանճար չէր, բայց ազգային թափանցման հասավ հայերեն սովորելով, հայոց պատմությունն ուսումնասիրելով: Ես հայերեն չսովորեցի, դա իմ սխալն է, երբ մտածեցի դրա մասին, թվաց, թե արդեն ուշ է, բայց կամեցա զգալ ինձ հայ, կարծում եմ հասկանում եք ասածս. ոչ թե իմանալ, թե ինչ է հայը, այլ զգալ՝ զգալ Քուչակին, Նալբանդյանին, Թումանյանին, Իսահակյանին: Դուք Լերմոնտով եք ասում, ես կբերեմ Բլոկի օրինակը: Այն թարգմանությունը, որ նա արել է Իսահակյանից, երևի պահանջել է նրանից քիչ ժամանակ, բայց ինչպե՞ս է թարգմանել: Բլոկը իմ պաշտամունքն է, իմ աստվածը: Ուրեմն ինձ մնում է որոնել, գտնել այն, որ ինձ մի պահ կարող է հավասարեցնել Բլոկին, ոչ թե դարձնել հանճար, ինչպես նա է, այլ՝ հայ, որի մեջ Իսահակյանից ինչ-որ ցոլք կա:

Եվ հանկարծ նա փոխեց զրույցի նյութը:

— Ռուբեն, Բլոկ լավ չգիտեք: Ինչո՞ւ: Որքան ես հասկացա ձեզ, Բլոկը ձեր հարազատ բանաստեղծն է ավելի, քան Պաստեռնակը: Եթե նշանակություն տաք իմ խորհուրդներին, դուք նորից կկարդաք Բլոկ, նորից ու նորից կգտնեք մտատանջող շատ հարցերի պատասխանը, որ չեն կարող տալ ո՛չ Մայակովսկին, նույնիսկ վաղ շրջանի, ո՛չ էլ Եսենինը:

Եվ մի օր էլ նա ինձ հարցուփորձ էր անում, այն տպավորության էի, որ ստուգո՞ւմ է, թե Տյուտչև գիտեմ, թե ոչ: Ես էլ, ի՞նչ թաքցնեմ, Տյուտչև այնքան քիչ գիտեի, որ հավասար էր չիմանալուն: Զարմանք հայտնեց, չէ՞ որ Տյուտչևը ռուսական սիրային քնարերգության մեծագույն վարպետներից է:

Կարդաց մի քանի բանաստեղծություն, այդ թվում՝ «Վերջին սերը», որից հիշողության մեջ մինչև հիմա մնացել են հետևյալ տողերը.

Помедли, помедли, вечерний день,
Продлись, продлись очарование.

կամ ամենավերջին տողերը.

О ты, последняя любовь!
Ты и блаженство и безнадежность.

— Ի՞նչ կհասնի սրան:

Զվյագինցևայի աչքից չվրիպեց ռուսական պոեզիայի իմացության իմ ամենաթույլ կողմը՝ պատահականությունը, անհավասարությունը:

Եվ հետո հանկարծ.

— Դիտեք, Ռուբեն, Տյուտչևը՝ ամենաքնարականը ռուս բանաստեղծներից, օժտված էր հումորով նույնիսկ իր կյանքի ամենածանր պահերին: Պատմեմ մի դեպք: Ալեքսանդր երկրորդը, իմանալով, որ Տյուտչևը մերձիմահ է, այցելել է բանաստեղծին: Ալեքսանդր Երկրորդի գնալուց հետո հարազատներին ու ընկերներին Տյուտչևն ասել է. «Նորին կայսերական մեծության այցելությունից հետո անհարմար է դոնե վաղը չմեռնել»:

Նրա պատմածը հետաքրքիր էր, բայց ես մտածում էի, թե ինչու պատմեց ու եկա այն եզրակացության, որ նա, նրբազգաց հոգի, չներեց իրեն Տյուտչևի պատճառով ինձ վրա կատարած հարձակումը և պատմած հումորիկ դեպքով փորձեց մեղմել անհարկի շիկացած մթնոլորտը:

Շատ տարիներ հետո, երբ լույս տեսավ «Դոկտոր Ժիվագոն», առաջ բերելով տխուր, ավելի շուտ ողբերգական պատմություն բանաստեղծի անձի շուրջ, իմ հարցին, թե իրեն ո՞ւր է գալիս վեպը, ասաց, որ Պաստեռնակն իրեն տվել է կարդալու ձեռագիր վիճակում, ինքը չի տպավորվել, համարել է թույլ գրվածք և չի թաքցրել իր կարծիքը հեղինակից, նա ասել է. «Վերա, դուք չեք հասկանում, սա ամենանշանակալի գործն է, որ ես ստեղծել եմ երբևիցե»:

Մի անգամ ասաց.

— Ռուբեն, դուք անցյալ տարի լավ էիք ռուսերեն խոսում...

—Ուրեմն՝ առաջադիմելու փոխարեն հետադիմում եմ:

— Ո՛չ, ո՛չ:

— Ուրեմն՝ ի՞նչ:

— Ուրեմն՝ այն, որ անցյալ գալուս ռուսերեն դուք խո-

սում էիք այնպես, ինչպես հայը կխոսեր: Եվ դա ուներ յուրահատուկ հմայք:

— Իսկ հիմա՞:

— Իսկ հիմա ռուսերեն աշխատում եք խոսել ռուսի պես: Իզուր ջանք. նախ՝ դա չի հաջողվի, երկրորդն էլ՝ ինչո՞ւ, ինչո՞ւ չպահպանել ազգային, միայն ձեզ հատուկ գույնը:

Մի փոքր հետո շարունակեց.

— Եթե իմանամ չեք նեղանա, ավելի անկեղծ կլինեմ:

— Ասեք, ինչ որ ուզում եք, ես ճիշտ կհասկանամ:

— Այդ տեսակետից վրացի մտավորականներն առավել են ձեզանից. մի երկու-երեք հոգի, որոնց ռուսերենը նույնքան կատարյալ է, որքան ռուսինը, դուք էլ այդպիսի մարդիկ ունեք՝ Լևոն Քալանթար, Սուրեն Քոչարյան... Վրացիները ռուսերեն արտաբերում են վրացավարի, ոչ միայն շամաչելով, այլ ընդգծելով, կարծես ուզելով ասել, թե խոսողը վրացի է: Եվ դա դուր է գալիս:

Մեր սրտագին և անկեղծ զրույցները Սևանա կղզում միշտ ռուս բանաստեղծների շուրջն էր: Ամենից ավելի Պաստեռնակի: Մի երեկո սիրած բանաստեղծին կարդում էր առանձնապես ներշնչված: Դա ամռանքի երեկո էր. լիճը խաղաղ էր, մենք նստած էինք մեջքներս վանքի պատին արած, վերևում լուսինն էր, մեր շուրջը ցանկալի խաղաղություն: Խիստ կամերայինն էր ամռանքի երեկոն, քանի որ տոմսեր չէին վաճառվել, և համերգասրահը ընդամենը մի ունկնդիր ուներ, որի առաջ սակայն արտիստը կարդում էր այնպես, ասես իր առջև հարյուրավոր մարդիկ լինեն ու իրեն ունկնդրում էին հողն ու երկինքը, հայկական մեր փոքրիկ ծովն ու շրջապատող լեռները...

Հայաստան կատարած իր այցելություններից մեկի ժամանակ ես հիվանդ էի: Նաիրի Զարյանին ասել էր, որ ուզում է ինձ տեսնել և խնդրել, որ ուղեկցի իրեն:

Եկան:

Զրույցն ուներ իր պարտադիր ներածական մասը՝ իմ առողջությունը: Դրան հաջորդեցին գրական հարցերը:

— Ռուբեն, լսել եմ, որ գրականությունը թողել եք և անցել թատրոն: Ճի՞շտ է: Ես չեմ հարցնում, թե ինչու, երևի

լուրջ պատճառներ ունեք այդպիսի կտրուկ շրջադարձի համար։

— Ոչ մի լուրջ պատճառ,— միջամտեց Նաիրին,— խաղաղ ծովը գերադասում է փոթորկոտից։

— Կարծում եմ, որ դա չի խանգարի,— վրա բերեց Վերա Կլավդիևնան,— շարունակելու մեր բարեկամությունը, մանավանդ որ այստեղ ևս ընդհանուր եղերք ունենք։

Նա հարցական նայեցի իրենն։

— Նա իմ երիտասարդ տարիներին թատրոնով էի հափշտակված և որոշել էի դերասանուհի դառնալ։

— Ի՞նչ ես ասում,— զարմացած բացականչեց Նաիրին,— իսկ դու, գիտե՞ս, Վերա, որ ես նույնիսկ դերասանություն եմ արել երիտասարդ տարիներիս։

— Ես հաճախել եմ դպրոց և սովորել թատերական դրամատիկական արվեստ։

— Նոր միայն հասկացա,— ասաց Նաիրին, ձեռքի ափը տանելով դեմքին,— թե մեր այս Վերան ինչո՞ւ է բանաստեղծությունն այդպես լավ կարդում։

— Ես նույնիսկ աշխատել եմ թատրոններում, Մեյերհոլդի ձեռքի տակ եմ եղել։

Զրույցին հաջորդած լռությունը խախտեց Զվյագինցևան։

— Երբեմն լինում է, որ մարդ իր կյանքն արվեստում ըմբռնում է բանաստեղծությունից և բանաստեղծությամբ էլ ավարտում։ Շատերը սկսում են որոնելով, մինչև որ մի օր հասկանում են, որ իրենք կոչված են պոեզիայի համար։ Օրինակ՝ ձեզ հայտնի է, թե մինչև պոեզիան ինչո՞վ էր Պաստեռնակը տարված։

— Ոչ,— ասաց Նաիրին։

— Ես էլ չգիտեմ,— ասացի ես։

— Կոմպոզիտորությամբ։ Սկրյաբինը նույնիսկ հույսեր է կապել նրա հետ։

— Ինչո՞ւ չշարունակեց։

— Չուներ բացարձակ լսողություն և կարծում էր, որ դա կխանգարի։ Որքան էլ Սկրյաբինը համոզել է, թե դա վճռական նշանակություն չունի, չի լսել։

— Ափսո՛ս,— ասաց Նաիրին։

— Ինչո՞ւ եք այդպես ասում։

— Որ կոմպոզիտոր լիներ, չէր գրի «Դոկտոր Ժիվագոն» և հիմա գլխին չէր գա այս ծանր փորձանքը:

Ես այնպես հասկացա, որ Նաիրին ասաց կատակով, Վերա Կլավդիևնան ընդունեց լուրջ:

— Ինչո՞ւ եք այդպես ասում, Նաիրի. հայտնի չէ, թե ինչպիսի կոմպոզիտոր կլիներ Պաստեռնակը, գուցեև լավերից մեկը, գուցեև միջակ, բայց պոեզիան հիմա զրկված կլիներ մեծագույն դեմքից:

Ես նայեցի Նաիրուն և նրա դեմքին կարդացի անհամաձայնություն, բայց հարկ չհամարեց հյուրին առարկել:

Թեյասեղանը պատրաստ էր, և զրույցը թևակոխեց ուրիշ ոլորտներ:

Մեր հանդիպումները սկսեցին պակասել: Զվյագինցևան Երևան էր գալիս և պահանջ չէր զգում ինձ հանդիպելու, ես Մոսկվա էի գնում և իրեն զանգ չէի տալիս: Մեր հետագա հանդիպումները պատահական էին, միմյանց հանդիպելու ցանկությունից անկախ, հանգամանքների բերումով, և մեզ կապող հիշողություններն էին՝ արդեն Սևանա կղզին, Պաստեռնակը...

Երկար ժամանակ չէինք հանդիպել: Թևանցուկ արեց և տարավ մի անկյուն:

— Հաճելի նորություն եմ ձեզ հայտնելու: Պաստեռնակը պիես է գրում: Կոչվում է՝ «Կույր գեղեցկուհին»: Ինձ ծանոթացրեց բովանդակության և կառուցվածքի հետ: Ես մեծ բան եմ սպասում, իսկ մինչև հիմա իմ գեղարվեստական բնազդը ինձ չի դավաճանել:

Վերա Զվյագինցևան չկա... Նրա հիշատակը ինձ համար մնում է սիրելի:

Նա շատ բան արեց Հայաստանի համար, թարգմանելով Քուչակին, Թումանյանին, Իսահակյանին, ժամանակակից բանաստեղծներին: Հայաստանի սիրահար էր ու Հայաստանի նվիրյալ:

Նա երկու հայրենիք ունեցող բանաստեղծ է՝ Ռուսաստան և Հայաստան:

Խաչեք իմ ձեռքերը, իմ կոպերը փակեք,
Միևնույն է, ես չեմ մահանա.
Կյանք կառնեմ ես նորից, կանցնեմ ծով ու եզերք,

Օվկիաններ կլողամ ես անահ,
Ու նորից, ու նորից այս լեռները կգամ,
Ես կգամ երկիրն իմ հրաշք.
Ես չեմ լա, արցունքներ տեսել է նա այնքան,
Իմ վիշտը նրա հետ չեմ կիսի...
Կլսեմ ես միայն հայոց երգը կամաց,
Կնայեմ Զանգվի խննի ջրերին,
Եվ կյանքս, որ արդեն մի մազից է կախված,
Ես կտամ խստաշունչ այս հողին:

Ունի՞, արդյոք, մեկնության կարիք բանաստեղծական այս խոստովանանքը, որի անկեղծությունը հաստատված է տասնամյակների ընթացքում:

Իմ գրադարանում նրա մի երկու գիրքը կա իր մակագրությամբ, ինձ նվիրված մեկ-երկու բանաստեղծություն՝ «Первое лето в Армении», որտեղ սակայն, իմ անունը չի հիշված, բայց նամակով զգուշացված է, որ ձոնված է ինձ: Նամակը գրվել է 1969-ին՝ իմ ծննդյան 50-ամյակի օրերին, որտեղ ես բնորոշված եմ որպես «Мой первый друг в Армении, первый мой спутник по ее тропам».

Երբ նա մահացավ՝ որոշվեց, որ շիրմաքարը կանգնեցվելու է հայ գրողների միջոցներով: Խաչքար կերտվեց: Դա հայ գրողների ցանկությունն էր, նրանց հոգու պարտքը: Նրանցից մեկն էլ, բնականաբար, ես էի...

ԴԱՐՁՅԱԼ ՍԵՎԱՆԱ ԿՂԶՈՒՄ

Սևանա կղզում մի անգամ լինելուց հետո պահանջ էի զգում ամեն ամառվա գեթ մի ամիսն անցկացնել այնտեղ: Ունենալով Հովասուն Դիլիջանի գեղեցկության ըմբռնումը, իմ մեջ արթնացել էր նոր սեր՝ Սևանա լճի սերը: Ու ես Սևանա կղզում եղա 1935, 1936, 1938 և 1940 թվականներին: Հիշում եմ այդ այցերը միասին, որովհետև չեմ կարող ասել, թե այն, ինչ պատմելու եմ, որ թվին է տեղի ունեցել: Եվ վերջապես, միևնո՞ւյն չէ...

Վերցնում էի նավակ, սովորել էի թիավարել, անցնում լճի խորքերը, որտեղից հազիվ էր երևում կղզին ու նրա վրա մեր հանգստյան տունը: Վերևը՝ երկինք, ներքը՝ ծով, ուրիշ ոչինչ,

արտասանում էի Տերյանից իմ սիրելի բանաստեղծությունները:

Հանդուգն քայլ էր իմ արածը. ես լողալ չգիտեի, ով կարդացել է «Արուս Ոսկանյան» հուշս, կիմանա, թե այդ պատճառով ինչպես, իմ կամքից անկախ, լճի հատակն հասա, ու եթե չլիներ մեր սքանչելի դերասանուհին, ես հիմա այս տողերը գրելիս չէի լինի: Պատկերացրեք, իմ անխոհեմ խիզախությունը, կզզուց հեռանում էի շատ և շատ, իսկ եթե հանկարծ լիճը փոթորկվեր: Քանի՜-քանի անգամ եմ տեսել, թե ինչպես է րոպեների ընթացքում լճի հանդարտությանը փոխարինել ալեկոծությունը: Ու ես ինչպես պիտի հասնեի ափ, եթե միայն հասնեի...

Սևանա կղզում ամառային ամիսներին ապրել են Ավետիք Իսահակյանը, Միքայել Մանվելյանը, Նաիրի Զարյանը, Վահրան Անանյանը, Արուս Ոսկանյանը, Փանոս Թեռլեմեզյանը, Մկրտիչ և Վարսենիկ Յուղբաշյաններն իրենց որդու՝ Կարենի հետ, Խորեն Սարգսյանը: Շատ գրողներ կային, որոնց թվում «Մի կտոր հողի համար» պիեսի հեղինակ Լևոն Սաղաթելյանն իր կնոջ ու երկու աղջկա հետ: Հումորով մարդ, որն այնքան լսած անեկդոտներ չէր պատմում, որքան կյանքի զվարճալի դեպքեր: Դրանք իր կամ ուրիշի հետ պատահած պատմություններ էին, որ նա անում էր համ ու հոտով, գրական լեզվով, բայց քյավառաբարբառի առոգանությամբ, դեպքի ու հերոսների դիպուկ բնութագրությամբ, միջավայրի հյութեղ զգացողությամբ: Քահ-քահ ծիծաղում էինք և հաճախ, երբ Երևանից նոր մարդ էր գալիս, խնդրում էինք՝ «Լևոն Նիկիտիչ, այս պատմությունն արա, թող լսի», նա սիրահոժար կատարում էր մեր խնդրանքը: Մենք էլ մեր հերթին երկրորդ անգամ էինք լսում՝ առաջին անգամ լսողի հաճույքով: Ինքն էլ էր բավականություն ստանում, գուցե ոչ այնքան իր պատմությամբ հիանալով, որքան գոհ լինելով, որ մարդկանց զվարթ տրամադրության մեջ է պահում, և դա՝ այն մոտալ տարիներին...

Ցավում եմ, որ Լևոն Սաղաթելյանի պատմությունները գրի չառա և այդպես կորան:

Շատերն են կյանքից քաղած զվարճալի պատմություններ անում: Նրանց պատմածը ո՞ւր, Սաղաթելյանի պատմածները

ո՛ւր: Նրա ամեն մի պատմածը ճշմարիտ հումորեսկ էր: Ու եթե ինձ հետագայում վիճակվել է դարձյալ այդպիսի բավականություն ստանալ, ապա՝ Ժան Էլոյանից միայն, որի բանավոր պատմվածքները ոչ միայն իրենց զվարթ բովանդակությամբ, այլև կառուցվածքով՝ սկիզբ, զարգացում, ավարտ, գրական ստեղծագործությանը հավասար վարպետությամբ էին արված: Այստեղ տարբեր տարիներ հանգստացել է մի համակրելի կին, Վարյա Մելքումյան, Հայտնի բժիշկ Հարությունյանի կինը: Դերասանուհի՝ որը մեծ հաջողություններ չհասավ, բայց ինչ որ արեց՝ արեց ըմբռնումով ու որակով:

Ես այնպես էի ընտելացել նրա Գլաֆիրային՝ «Եգոր Բուլըչովը» ներկայացման մեջ, որ չէի պատկերացնում, թե այդ դերը կարող է ուրիշը խաղալ և այլ կերպ խաղալ: Ու երբ վերաբեմադրվեց «Եգոր Բուլըչովը», ամբողջ կազմը փոխվեց, բացի Վաղարշյանից և Մարգունուց, եկան փոխարինելու երիտասարդները: Մելքումյանի փոխարեն Գլաֆիրա խաղում էր Ամալյա Արազյանը: Լավ էր: Դերը բռնում էր իրեն, և ինքն էլ ջանք չէր խնայում հաջողության հասնելու համար: Եվ այնուամենայնիվ՝ այն չէր: Երբ Վաղարշյանը սիրտը բացում էր Գլաֆիրայի առաջ՝ սիրում էր Գլաֆիրային, ես զարմանում էի, թե ինչպես է կարողանում մի ուրիշի սիրել այնպես, ինչպես սիրում էր Մելքումյանի Գլաֆիրային: Ես կարծում էի, որ Մելքումյանը մի հատ է և ստեղծված է այդ դերի համար, ու Վաղարշյան-Բուլըչովը միայն նրան պիտի սիրի, միայն նրա առաջ կարող է անկեղծանալ...

Ահա այս Վարյա Մելքումյանը երկու թե երեք անգամ հայտնվեց Սևանա կղզում, մի անգամ մենակ, մի ուրիշ անգամ իր աղջկա՝ Զեմֆիրայի, և նրա մտերիմ ընկերուհի Անահիտի հետ: Այս Անահիտը, որին բոլորը, չգիտեմ ինչու Բոբո էին կոչում, Պողոս Մակինցյանի և դերասանուհի Նվգինե Սեբարի դուստրն էր: Երկուսն էլ փոքր էին, հազիվ 12 տարեկան: Երկուսն էլ գեղեցիկ էին և դժվար էր մեկին առավելություն տալ մյուսի նկատմամբ: Մեկը թուխ էր, մյուսը՝ ցորնագույն: Մեկը սևաչյա, մյուսը կապտաչյա: Երկուսն էլ մաքրամաքուր արտահայտություն ունեին...

Հենց որ ժամը 10-ն էր լինում, սևանաբնակիչներից մի երեսուն մարդ հավաքվում էր, որովհետև գիտեին, թե հիմա

ուր որ է Զեմֆիրան և Անահիտը հայտնվելու են լողազգեստներով։ Նետվում էին ջուրը լողալու, մեկ հայտնվում էին ջրի երեսին, մեկ՝ սուզվում։ Երևի մի կես ժամ մնում էին ջրի մեջ և դուրս գալիս կղզի՝ ժպտուն դեմքերով, երջանկացած, լողազգեստները կիպ կպած, ընդգծելով նրանց դեռ չձևավորված մարմնաձևերը, ջրերը վազում էին մազերից, դեմքերին ջրի կաթիլներ էին, և իրենք էլ արևի ճառագայթների լույսի շրջանակի մեջ առնված, ասես, ջրահարսեր լինեին...

Մի տարի, եթե չեմ սխալվում 1940-ին, գրողների հանգըստյան տանն էին ապրում նաև Խորեն Սարգսյանը և Արամ Բաբայանը։ Այդ տարի ևս եկել էր Վարյա Միլքումյանը, որը սակայն ապրում էր մյուս հանգստյան տանը։ Հիշյալ երեք տղամարդիկ շրջապատեցինք դերասանուհուն մեր անկեղծ համակրությամբ և անսքող ուշադրությամբ։ Դերասանուհին շոյված էր, չուներ երկրպագու և հանկարծ միանգամից հայտնվեցին երեքը։

Կիրթկին էր տիկին Վարյան, մաքուր և անբասիր այն մտավորականներից, որ թեև ծառայում էր հայ թատրոնին, բայց ռուսական դաստիարակություն ուներ և լավ չգիտեր հայոց մշակույթը, մեր պատմությունը։ Մենք էլ, կարծես, դա գիտեինք, և մեր հանդիպումները մի երկու անգամ դասախոսական զրույցների վերածվեցին։ Շատ շուտ հասկացանք, որ եթե շարունակենք ուսուցողական մեր բարեկամությունը՝ մի գեղեցիկ օր տիկինը մեզ կլքի, քանի որ, որքան էլ հետաքրքիր էին իրեն մեր այդ զրույցները, նա չէր եկել համալսարանական դասընթաց անցնելու, այլ՝ հանգստանալու։ Խորեն Սարգսյանն ավելի, քան Արամ Բաբայանը, ևս ավելի պակաս Արամ Բաբայանից՝ սրամտության այնպիսի հարուստ պաշար ասպարեզ բերինք, որ տիկին Վարյան սրտանց ուրախանում էր, և երեքիս ուղղված նրա աչքերի տաք հայացքը զգացված շնորհակալության նշան էր։

Բոլոր երեկոներին չորս միասին էինք՝ շրջում էինք, զրուցում, կատակում։ Ու երբ քնելու ժամը հատնում էր, ճանապարհում էինք դերասանուհուն և վերադառնում մեր հանգըստյան տուն։ Բոլոր օրերը անբաժան էինք, մի բան, որ չէր կարող վրիպել մյուս հանգստացողների աչքից։ Երկու հանգըստյան տների մեր անմիջական շրջապատը համակրական

կատակի նյութ էր դարձրել մեր հանդիպումները և մեզ անվանում էին միջնադարյան ասպետներ, իսկ Վարյային՝ Դուլսինեա:

Մենք հասկանում էինք, որ հանգստյան տան սկսված այս «ռոմանը» չի շարունակվելու քաղաքում, որ ամեն մեկս մեր գործին ենք լինելու, բայց երևի ինչպես երեքս, այնպես էլ տիկին Վարյան, հաճույքով ենք հիշելու Սևանա կղզու դիշերները: Եվ իսկապես, անջատման ժամկետը վրա հասավ, տիկին Վարյան ավելի շուտ մեկնեց, մենք՝ մի քանի օր հետո: Բժիշկ Հարությունյանը եկել էր կնոջը Երևան տանելու: Ճանապարհելիս տիկին Վարյան ներկայացրեց մեզ ամուսնուն, ասաց, թե այս երեքն իրենց վրա էին վերցրել իր անվտանգությունը կղզում: Բժիշկը մեկնեց ձեռքը մեզ հետ ծանոթանալու, ոչ մի խոսք չասաց, մոայլ երևաց ու, ինչպես Խորեն Սերգեևիչը ենթադրեց հետո, մեր կավալերությունը հաճելի չէր բժշկին: Տարիներ անց, ես մի քանի հանդիպում ունեցա բժշկի հետ և ինձ այնպես թվաց, թե ամուսինը կնոջից պակաս համակրելի չէր: Ջերմ, բարյացակամ մարդ, ուշադիր զրուցակից, լայն հայացքների տեր:

«Եգոր Բուլըչովի» հերթական ներկայացումն էր հայտարարված, և միջնադարյան ասպետների եռյակը որոշեց դիտել ներկայացումը և ծաղկակողով ուղարկել Գլաֆիրայի դերակատարուհուն՝ մի երկտողի հետ միասին: Ինչ էինք գրել՝ միտում չէ, բայց հիշում եմ, որ մեր ազգանունները դնելու փոխարեն ստորագրել էինք՝ «Սևանա կղզու երկրպագուներ»:

Շատ տարիներ անցան: Վախճանվեց դերասանուհին, իր ամուսինը՝ նույնպես: Այս աշխարհից հեռացան Խորեն Սարգսյանը և Արամ Բաբայանը: Միջնադարյան քառյակից մնացի միայն ես...

ՄԻ ԱԼԵԿՈ ԺՈՂՈՎ

Համալսարանի ասպիրանտ լինելով, գնացել էի պարապմունքի: Պարզվեց, որ ոչ մի պարապմունք չկա: Մեծ դահլիճում ուսանողական ժողով է: Քննում էին մի քանի ուսանողի հարց: Ժողովը բուռն էր, ինչպես 1937-ի բոլոր ժողովները-

րը՝ կրքերով լի, կատաղի, հարձակողական, մարդուն սոսկացնող ու ոչնչացնող մեղադրանքներով։ Երբ մտա դահլիճ, ժողովն սկսված էր։ Տեղավորվեցի ծանոթ ուսանողի կողքին։

Ամբիոնի մոտ կանգնած էր մի տղա, որի հորն ու մորը ձերբակալել էին, և ինքը հիմա մեղա էր գալիս։ Ինչ մեայն չէր ասում իրեն աշխարհ բերած ծնողների մասին։ Մեղադրում էր իրեն, որ չի ճանաչել ծնողներին, ուրեմն ինքը զգոն չի եղել, հետևապես արժանի է խստագույն պատժի։ Հորն ու մորը անվանեց քաղաքական տականք։ Եվ ասաց, թե պաշտոնապես հայտարարում է ի լուր բոլոր ներկաների, որ ինքը այլևս իր ծնողների զավակը չէ, որ ինքը հրաժարվելով իր ծնողներից, հրաժարվում է նաև հորական ազգանունը կրելուց, որ ինքը հենց այսօրվանից Պողոսյան չէ այլևս, իսկ թե ինչ, դրա մասին կմտածի հետո։

Քաոմնելի էր լսել։ Բայց ոչ ոք չէր համարձակվում թեկուզ կողքի նստածին հայտնել իր վերաբերմունքը։ Իսկ կոմերիտական քարտուղարը, օդը սղոցելով, համարյա ճչալով, գովաբանում էր հորից ու մորից հրաժարված ուսանողին, հայտարարում նրան այն ցանկալի օրինակը, որին հետևելու և նմանվելու կարիքն ունեն շատերը։

Հաջորդը մի աղջիկ էր։ Անունը չեմ հիշում։ Նրա հայրն էր բանտարկված։ Սրա առաջ ևս նույն խնդիրն էր ծառացած։ Քարտուղարը ծանր խոսքեր ասաց։ Մի երկուսը նույնպես խոսեցին։ Այդ երկուսը աղջիկներ էին, որոնք ևս խստագույն խոսքեր ուղղեցին աղջկան, կոչ անելով, որ նրա միակ փրկությունը հորից հրաժարվելն է։

— Այո՛, այո՛,— գոռում էին տեղից ինչ-որ ձայներ։

Ջայն տվեցին աղջկան։ Ամբիոնին մոտեցավ գեղեցկադեմ ուսանողուհի՝ ոսկեգույն մազերն ուսերին թափած։ Տխուր երկնագույն աչքերով նայեց դահլիճում նստածներին, նայեց լուրջ ու սպասածից ավելի երկար։ Մեղմություն կար աչքերում, բայց ոչ խեղճություն։ Նրա հայացքի տակ դահլիճը քարացավ։ Ոչ մի շշուկ։ Ամբիոնի մոտ էր սուրբ անմեղությունը։ Ինչ ասեմ՝ հակակրոն ժամանակներ էին ու ինքս էլ աստվածամերժ անձ էի, բայց ինձ թվաց, որ իմ դիմաց կանգնած է սրբություն, մադոննա և ականջիս հնչում է «Ավե Մարիան»։ Եվ իսկապես հնչեց ախորժալուր, ազդեցիկ ձայն.

— Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք պահանջում ինձանից։ Ի՛նչ լավ բան արեց իմ նախորդը, որ դուք նրան դատապարտելու փոխարեն գովաբանում եք և հետևելու օրինակ հայտարարում նրան։ Նրա արածն անբարոյականություն էր։

— Լավ մտածիր, թե ինչ ես ասում։ Ինչո՞ւ ես ինքդ քեզ կործանում,— ճչաց կոմերիտմիության առաջին քարտուղարը։

— Զսփավորիր խոսքերդ,— գոռաց ուրիշը դահլիճից։

— Ես ասում եմ այն, ինչ մտածում եմ։ Ես կոմերիտական եմ։ Երբ ընդունվում էի, երդում տվի՝ ծառայել հեղափոխությանը, օգտակար լինել երկրին, լինել ազնիվ։ Ինչո՞ւ եք մղում ինձ դեպի անազնվություն։

Կանգ առավ, շունչ քաշեց և շարունակեց խոսքը՝ կտրական, հատու։

— Ես իմ ծնո՞ղից հրաժարվեմ։ Երբե՛ք։

Տեղից ձայներ լսվեցին՝

— Զայնից զրկել։

— Իջեցնել ամբիոնից։

— Իմ հայրը ինձ համար եղել է և մնում է ամենալավը։ Նա չէր կարող մեր երկրին թշնամի լինել, չէր կարող ժողովրդի թշնամի լինել։ Նա բանտ է նստել հանուն հեղափոխության։ Ես հավատում եմ իմ հորը։

— Ի՞նչ է, կառավարությունը սխալվե՞լ է,— հեգնաբար ռեպլիկ տվեց մի ուսանողուհի։

Դահլիճը, որ մինչ այդ ալեկոծված էր, սսկվեց։ Լռության մեջ լսվեց քարտուղարի ձայնը.

— Դու, ուրեմն, կասկածի՞ տակ ես առնում մեր կուսակցության և կառավարության կարգադրությունները։

— Ո՛չ,— կասկածի չեմ ենթարկում։

— Ուրեմն ի՞նչ։

— Ուրեմն այն, որ միշտ էլ եղել են և լինում են թյուրիմացություններ։ Իմ հոր ձերբակալումը թյուրիմացություն է։ Կանցնի ժամանակ, կտեսնեք, որ այդպես էլ կլինի, հայրս կվերադառնա տուն։ Այն ժամանակ ի՞նչ եք ասելու։

— Խոսքից զրկել,— պահանջում էր մի ուսանողուհի,— և հեռացնել կոմերիտմիությունից։

— Նաև համալսարանից,— գոռում էին ուրիշները։

— Վերջին խոսքդ ասա,— դիմեց նրան քարտուղարը։— Հրաժարվո՞ւմ ես, թե ոչ։

— Իմ հայրը եղել է իմ հայրը և մնում է իմ հայրը։

Դահլիճը ալեկոծվեց։

Աղջիկը բարձրացրեց ձեռքը, և դա մոգական ազդեցություն ունեցավ, իր մաքուր աչքերով նայեց ժողովականներին և ասես դյութեց բոլորին։ Ես հասկացա, թե ինչ մեծ պարգև է գեղեցկությունը, մանավանդ եթե նրան միացած է համբերը։ Ես հասկացա կյանքի կարևոր իմաստներից մեկը՝ ինչ մեծ ուժ է գեղեցկությունը, երբ նրան միացած է մաքրությունը։ Դա բարոյական հզոր նեցուկ է, անզեն ելնում է զինված բանակի դեմ ու հաղթում։

— Ի՜նչ ուզում եք արեք։ Ձեր խղճի գործն է դա։ Բայց ես էլ իմ խիղճն ունեմ։ Հեռացրեք ինձ կոմերիտմիության շարքերից։ Հանեք համալսարանից։ Իմ ապրած տնից շպրտեք դուրս, փողոց։ Փողոցի կին դարձրեք մի անմեղ աղջկա։ Եվ դարձյալ կասեմ, որ հայրս անմեղ է, ու ես նրանից հրաժարվողը չեմ։ Ավելի շուտ կյանքիցս կհրաժարվեմ, բայց չեմ հրաժարվի հորիցս։ Ի՞նչ եք ուզում ինձանից, ի՞նչ...

Եվ աղջիկն ուշագնաց ընկավ։ Նրան տարան մի լսարան։ Բայց չհետաձգեցին հարցի քննարկումը։ Ջսպասեցին՝ աղջիկը ուշքի՞ եկավ, թե ոչ։ Այնպիսի ժամանակներ էին, որ մարդիկ խիղճը կորցրած էին գործում։ Քարտուղարը մոտեցավ ամբիոնին, իր պարտքը համարեց հակադրվել աղջկան և առաջարկեց հեռացնել կոմերիտմիության շարքերից և խնդրել համալսարանի ռեկտորատին՝ հնարավոր չհամարել նրա համալսարանում մնալը։

Եվ հաջորդ օրն իմացա, որ համալսարանի ռեկտորը համաձայնել է կոմերիտական կազմակերպության որոշման հետ։

Ես այլևս չտեսա այդ աղջկան։ Ասում էին, որ հայրը երեք տարուց վերադարձել է, իհարկե, բայց թույլ չեն տվել ապրել Երևանում, և նա աղջկան առել ու մեկնել է Միջին Ասիա։

ՎՏԱՐՎՈՒՄ ԵՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒԱՅԻՑ

Ընդամենը մի տարի եղա ասպիրանտ։ Բայց այդ մի տարին ինձ համար նշանակալի եղավ մի քանի առումներով։ Նախ՝ հանդիպումը մի այնպիսի մարդու հետ, ինչպիսին Պողոս Սոտնիկյանն էր։ Նա լատիներեն էր դասավանդում։ Հարցն այն չէր, թե որքան սովորեցի լատիներեն։ Հարցն այն բարոյական բարձր նկարագիրն էր, որ ուներ ուսուցիչս, և որը կարող էր օրինակ լինել շատ շատերի համար։ Երկրորդը՝ այն հոգևկան մեծահոգությունը, որ նկատեցի Սիմոն Հակոբյանի մեջ։

Ես ուզում եմ խոստովանել իմ հանդուգն, աննեերելի արարքներիցս մեկը, որի պատմությունը չեմ արել պրոֆեսորիս նվիրված հուշերում։

Երբ Սիմոն Հակոբյանն առաջին անգամ մտավ լսարան, երբ ծանոթացավ ամեն մեկիս հետ, հարցուփորձ անելով, թե ի՞նչ ընտանիքից ենք, որտեղացի՞ ենք, ի՞նչն է մեզ դրդել ընտրել բանասիրության ասպարեզը, ասաց նաև, որ ուսման ընթացքը կյանքի բարդ երևույթներից է, և ինքը համոզված է, որ գոյություն ունի փոխուսուցում ուսուցչի և աշակերտի միջև։

— Ուսուցիչը սովորեցնում է, աշակերտը սովորում,— ասում էր նա,— բայց դա չի նշանակում, թե ուսուցիչը աշակերտից չի սովորում։ Այնպես որ՝ դուք կսխալվեք, ես կուղղեմ, ես կսխալվեմ, դուք կուղղեք։ Քաշվելու ոչինչ չկա։ Տարիներ կանցնեն, և դուք կունենաք աշակերտներ կամ կրտսեր ընկերներ և կտեսնեք, որ նրանցից բան ունեք սովորելու։ Այնպես որ, կոչ եմ անում լինել անկեղծ, ասել ինչ որ մտածում եք և նույն իրավունքը տալ ինձ։

Այն տարիներին դասախոսություններ լսելու փոխարեն, ուսանողները ռեֆերատներ էին գրում։ Դրա նպատակն էր ուսանողների մեջ զարգացնել ինքնուրույնություն։ Բաժանեց ռեֆերատների թեմաները, և Հովհաննես Դանալանյանը հանձն առավ «Դանթեն»։ Ես այդ թեման ավելի լավ գիտեի, քան մնացած բոլոր թեմաները, բայց արդեն ուշ էր և ընկերոջս չէի ուզում խնդրել, որ պիջի։ Այնուամենայնիվ, այն կարծիքի էի, որ իմացածս քիչ է և սկսեցի պատրաստվել։ Կարդացի

Ալ. Ջիվելեգովի նոր գիրքը՝ «Դանթեն», որ նոր էր լույս տեսել «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով։ Կարդացի նաև ուսուցչիս գրած համալսարանական առաջադրանքը հեռակա ուսանողների համար։ Հասկացա այն տարբերությունը, որ կար Ջիվելեգովի և Հակոբյանի մեկնաբանությունների միջև։ Իմ ելույթի ելակետը դարձավ Էնգելսի հայտնած այն միտքը, թե Դանթեն... «միջնադարի վերջալույսի վերջին բանաստեղծն է և միաժամանակ նոր ժամանակների արշալույսի առաջին բանաստեղծը»։ Էնգելսի վերջալույսը և արշալույսը նրանք մեկնել էին բոլորովին այլ կերպ։ Հակոբյանը շեշտում էր վերջալույսը և դրանով կապում նրան միջնադարի հետ, Ջիվելեգովը շեշտը դրել էր արշալույսի վրա և այդ ձևով վերածրնության դարաշրջանի հետ կապում բանաստեղծին։ Իրավացին, իհարկե, Ջիվելեգովն էր։ Ու ես ելույթ պատրաստեցի այս ոգով ընդդեմ Հակոբյանի։

Եկավ ռեֆերատի օրը։ Ղանալանյանի ռեֆերատը կարճ տևեց, ընդամենը քսան րոպե։ Հարցեր կա՞ն։ Ոչ ոք։ Ո՞վ է ուզում արտահայտվել։ Ես ձեռք բարձրացրի։ Խոսեցի մնացած 25 րոպեն։ Իմ արածն արած չէր, բայց ես չէի հասկանում։ Հասկանում էին իմ ընկերները և վրդովված պահանջում էին, որ ես չշարունակեմ իմ խոսքը։ Սիմոն Հակոբյանն առաջարկեց ինձ շարունակել, հայտարարելով, որ ընդմիջում չի լինի։ Ես խոսեցի մի կես ժամ էլ ու նստեցի։

Էլ ո՞վ է ուզում արտահայտվել։ Ընկերներս ինձ դեմ էին, բայց չխոսեցին, որովհետև անհրաժեշտ չափով պատրաստ չէին հակադրվելու համար, վերջապես, նրանց վրդովմունքն ըստ էության չէր, այլ ավելի ուսանողական պատշաճության խախտելու հետ էր կապված։

Խոսեց Սիմոն Հակոբյանը։ Եվ ես մնացի զարմացած։ Հասկացա, թե ինչ է նշանակում բարոյական հաղթանակ։ Նա ինձ չհշտամբեց։ Ընդհակառակը՝ նույնիսկ պաշտպանեց, ասելով, որ իր գրածն անցած-գնացած տեսակետի վրա է հիմնված, որ եթե ինքը գրեր, կգրեր, ինչպես մեկնաբանել է Ջիվելեգովը։

Պարզապես ինձ սպանեց ու թողեց։

Ես հիմա եմ հասկանում, որ նա վրդովված էր, նույնիսկ վիրավորված՝ «Շատ էլ ասացի, թե ուղղենք միմյանց, բայց

ոչ այդ ձևով»: Որևէ խիստ խոսք չասաց, նույնիսկ գովեց ինձ, ասելով, լավ է, որ հետևում եմ գրականության նորություններին: Չգիտեի, թե ամոթից ուր կորչեմ: Ընկերներս չնեղեցին ինձ: Ներեց ուսուցիչս: Եվ դրանով էլ հաղթեց ինձ: Դասընկերներիս հանդիպելիս մտաբերում ենք մեր ուսանողական տարիները, հիշում ենք մեր ուսուցիչներին, անմիջապես իմ աչքի առաջ է կանգնում Սիմոն Հակոբյանը, ես ինձ վատ եմ զգում: Ես հիմա պատմեցի իմ կյանքի պատմության տխուր էջերից մեկը, ոչ միայն իբրև անկեղծ խոստովանություն, այլ նաև իբրև ապաշխարանք, եթե ճիշտ է, որ ոչ մի ձայն չի կորչում, ինչ որ ասվում է բարձրաձայն, պահպանվում է օդում, ու եթե ճիշտ է, որ իբր այն աշխարհում լսում են մեզ, ապա թող հասնի իմ ձայնը պրոֆեսորիս, ու թող նա թողություն տա իր ուսանողին՝ անվայել արարքի համար:

Այս երկար ու բարակ պատմությունն արի այն պատճառով, որ մի օր գնացի Սիմոն Հակոբյանի տուն, գերմաներեն (որքան որ գիտեի) ողջունեցի գերմանուհի տիկնոջը, ասացի, որ ուզում եմ տեսնել պրոֆեսորին:

Մի փոքր հետո երևաց ուսուցիչս.

— Ռուբեն, դո՞ւ ես. ինչ կա չկա:

Ես սիրտս բաց արի:

Ասեմ, որ պատմածս դեպքը տեղի էր ունեցել երկրորդ կուրսում, իսկ հիմա ես ասպիրանտուրայում էի: Իսկ դրանց արանքում ընկած տարիներին պրոֆեսորս բազում ապացույցներ է տվել, որ ինքը բարձր է մանր վիրավորանքներից, ոչ միայն շատ ընդառաջումներ է արել ինձ, այլ հաճախ հարգել ուրիշների համար իմ արած միջնորդությունները:

Եթե կար մի մարդ, որի անկեղծ ու մտահոգ վերաբերմունքի վրա ոչ մի կասկած չունեի՝ Սիմոն Հակոբյանն էր: Այդպիսի մարդ էր նաև մի այլ պրոֆեսոր ևս՝ Հայկ Գյուլիքեխյանը, բայց ես նրա հետ խոսելիս ինձ միշտ կաշկանդված էի զգում, չէի բացվում մինչև վերջ:

Ես ասացի Սիմոն Հակոբյանին, որ դեռ միջնակարգից երազել եմ բարձրագույն կրթություն ստանալ Մոսկվայում կամ Լենինգրադում: Գերադասում եմ Լենինգրադը գիտական դպրոցի տեսակետից, բայց, ֆիզիկապես նվազ լինելով, վախենում եմ, որ օդի խոնավությունը ճակատագրական լինի

առողջության համար: Ուստի մնում է Մոսկվան: Բարձրագույնը չհաջողվեց այնտեղ ստանալ, գոնե ասպիրանտական տարիներս անցկացնեմ Մոսկվայում: Տենչում եմ Մոսկվայում սովորելու մասին: Ես բացատրում էի պրոֆեսորիս, թե ինչ կարող է տալ ուսումնածարավ երիտասարդին Մոսկվայի նման քաղաքը՝ պրոֆեսորները, գրադարանները, թանգարանները: Մի այլ առիթով պատմել եմ, չեմ ուզում կրկնվել, որոշվեց, որ ես կմեկնեմ Մոսկվա՝ մասնագիտանալու հունա-հռոմեական գրականության պատմության մեջ, մանավանդ որ համալսարանում այդ առարկայի դասախոսի տեղը թափուր էր: Լսեց Հակոբյանն ինձ ուշադիր, ծանոթացավ և ընդունեց իմ ծրագիրը, քաջալերեց ու խոստացավ ամեն ինչ անել ընդառաջելու իմ ցանկությանը:

Որոշվեց այսպես՝ ես այստեղ կանցնեմ լատիներեն, իսկ հին հունարենը կսովորեմ Մոսկվայում: Բուն առարկան՝ հին հունական գրականություն, ես կպարապեմ այստեղ, ձեռք բերելով այնքան գիտելիք, որ ինձ պատրաստ զգամ մոսկովյան պրոֆեսորներիս առաջադրանքները կատարելու: Ես թափով անցա գործի, բայց կես ճանապարհից թերանում էի լատիներենի դասերին հաճախել, զլանում էի ժամերով և օրերով կորցնել հանրային գրադարանում՝ ուսումնասիրելով Էսքիլեսի և Սոֆոկլեսի ողբերգությունները, նրանց շուրջ եղած գրականությունը:

Կանչեցին Կոմերիտմիության կենտրոնական կոմիտե: Ինձ ընդունեց առաջին քարտուղարը՝ Արամ Շահբաթյանը, մի համակրելի երիտասարդ, ծագումը բանվորական, իր մեջ եղած հարուստ հնարավորությունների շնորհիվ աստիճան առ աստիճան հասել էր այս բարձր պաշտոնին: Առաջարկեց ու ես առանց մեծ վարանումների ընդունեցի Հայպետհրատում մանկա-պատանեկան գրականության բաժնի վարիչի պաշտոնը: Այս գործն ինձ ավելի էր ժպտում, քան պրոֆեսորի ապագան: Մեկն ինձ համար սրտի գործ էր, մյուսը՝ սոսկ գիտակցություն:

Իմ պրոֆեսորներից լսել եմ խորհուրդներ կենտրոնանալու գործունեության երկու ասպարեզներից մեկնումեկի վրա, լսել եմ կշտամբանք վերջ տալու երկփեղկված կյանքով ապրելուն: Բայց ես իմ մեջ ուժ չէի գտնում վճիռ կայացնելու:

Ինչ որ չկարողացա ինքս վճռել, վճռեց կյանքը և այն էլ բավական դժբախտ զունավորումով։

Ես զրկվեցի միանգամից երկու տեղից։

1937-ին ոչ միայն հայտնի դեմքերի մեկուսացումներ եղան, այլև անհանդուրժողական վերաբերմունք այն երիտասարդ ուժերի նկատմամբ, որոնք կապված էին մեկուսացված դեմքերի հետ։ «Մանկլավիկ» արհամարհական պիտակն էին տալիս նրանց։ Չհանդուրժել՝ նշանակում էր գործից, պաշտոնից ազատել և նրանց փոխարեն բերել քաղաքականապես ավելի վստահելի մարդկանց։

Ես չէի ներշնչում քաղաքական բարեհուսություն, հետևապես միանգամայն սպասելի էր, որ ինձ վտարեն գործից։ Ավելին, հարց էր ծագում՝ ո՞վ էր վստահել ինձ այդ կարևոր ասպարեզը։ Պատահակա՞ն էր դա, հարցի չխորացած ուսումնասիրությա՞ն հետևանք, թե գուցե դիտավորություն։

Մի օր էլ համալսարանի գրասենյակում հանձնեցին ինձ համալսարանի տնօրենի հրամանը՝ Զարյանին ազատել ասպիրանտուրայի պարապմունքներից պարբերաբար բացակայելու համար։

Գարեգին Պետրոսյանը, որ մի ժամանակ ուսմասվար էր, ասաց, թե ազատման բուն պատճառն այլ է, որ ինձ համարում են Զարենցի, Բակունցի, Ալազանի մանկլավիկ, բայց չուզեցին նման կարգի ձևակերպում տալ։ Հետո մխիթարեց ինձ, ասելով, թե առանձնապես շատ չպետք է ազդվել և միաժամանակ նշեց, որ շատերն են դիսերտացիա պաշտպանել առանց ասպիրանտական դասընթացն անցնելու։ Եվ մեծավարի իր ձեռքը դրեց ուսիս ու ասաց, որ հեշտ եմ պրծել, որ շատ չմտածեմ, որովհետև կարող էր ավելի վատ լինել։

Իմ երկու ընկերը՝ Ժիրայր Հակոբյան, Սարգիս Բայանդուր, որոնց հետ կապված էի մանկությունից, դեռ 1922-ին, նույնպես հեռացված են իրենց պաշտոններից՝ ցերեկ լինեի, թե երեկո միասին էինք մինչև ուշ գիշեր։ Ուզում ենք հասկանալ, թե ինչ է կատարվում, գլուխ չենք հանում։ Վիճում ենք տաք-տաք, շախմատ խաղում ու բաժանվում հաջորդ օրը նորից հանդիպելու պայմանով։ Եվ այսպես օրեր, շաբաթներ, ամիսներ՝ տագնապած սրտով, չիմանալով, թե վաղվա օրն ինչպիսին է լինելու մեզ համար։

Այլևս լատիներեն չեմ պարապում։ Այլևս հրատարակչական գործերով չեմ զբաղվում։ Ուսուցիչ եմ Երևանի մանկավարժական ուսումնարանում։ Միայն ուսուցիչ։ Ես ու իմ ուսուցիչ ընկերներն ենք։ Ես ու իմ աշակերտները։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ

(Ի լրումն «Հուշապատումի»)

Հրապարակեցի ուսուցիչներիս նվիրված հուշերիս շարքը պարբերական մամուլի տարբեր էջերում։ Դրանց մեջ արձանագրել էի նրանց կյանքի ողբերգական անցքերը ևս, չծավալվելով, սեղմ ու համառոտ, առանց քաղաքական գնահատականների։ Իմ սերնդակիցներիս դա լավ հասկանալի է։ Ոչ միայն գրող էինք, այլ նաև խմբագիր, նաև գրաքննիչ։ Լավ գիտեինք, թե ինչ կարելի է տպագրել և ինչ չի կարելի։ Սակայն պարզվեց, որ ոչ, չգիտենք։ Խմբագիրն ու գրաքննիչը շատ էջեր են ջնջել «Հուշապատումի» ձեռագրերից։ Այստեղ ուզում եմ տեղ տալ այդ էջերին, ոչ միայն պատմվող անձի դիմագիծը լրացնելու, այլ նաև մեր ապրած ժամանակների գրաքննական խըստության մասին որոշ գաղափար տալու նպատակով։

***

«Հովհաննես Պողոսյան» խորագրով իմ ակնարկից կրճատվեց ներքոհիշյալ հատվածը։ Դա հաջորդում է Մամբրե Մատենճյանի գրվածքներից ժողովածու կազմելու մասին զրույցին։ Ասված է, թե 1936-ին մթնոլորտը փոխվեց, Մատենճյանով զբաղվելու ժամանակը չէր, մանավանդ որ Պողոսյանին նշանակեցին «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր։

Հովհաննես Պողոսյանի մեջ ներքին հակասություն կար, պայքար՝ խղճի և պարտականության միջև։ Եվ այդ հակասությունը սրվում էր, որովհետև թե՛ մեկը, թե՛ մյուսը սրբազան էին նրա համար։ Ու նա, շատերի նման, ենթարկվելով ժամանակի պահանջին, տանջվում էր անելանելի հակասությունների մեջ։

Գյուլիքևխյանի տունը «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրության շենքի դեմ-դիմացն էր գտնվում։

Դեպքը տեղի է ունեցել 1937-ի վաղ աշնանը, կարծես սեպտեմբերին, երբ դեռ շոգ էր, ու մարդիկ պատուհանները բաց էին թողնում։ Գիշերվա ուշ ժամին, առանձնասենյակի պատուհանից Պողոսյանը նկատում է, որ Հայկ Գյուլիքևխյանի սենյակը հանկարծ լուսավորվել է։ Հասկացել է, որ նրա «հետևից» են եկել։

Պողոսյանը, որ շատ լավ էր ճանաչում Գյուլիքևխյանին, հուզմունքից փշաքաղվում է, գիշերը չի կարողանում քնել, բայց մի օր հետո, իր իսկ խմբագրած թերթի էջերում իր ճանաչած Գյուլիքևխյանը հայտարարված էր «ժողովրդի թշնամի»։

Ժամանակն էր այդպես...

ՀԱՅԿ ԳՅՈՒԼԻՔԵՎԽՅԱՆ

(Ի լրումն «Հուշապատումի»)

Ողբերգական դեպքերով լի է եղել Գյուլիքևխյանի կյանքը։

Գերմանիայում կորցրել է ընտանիքը և խուսափում է՝ անդրադառնալ իրեն պատահած դժբախտությանը։ Եվ այդպես էլ մեզանից ոչ ոք, նույնիսկ իր իսկ որդեգրած Զարիկը փոքրիշատե չգիտե, թե իսկապես ի՞նչ է եկել այդ մարդու գլխին։

1937-ի սև ձեռքը նրան էլ հասավ։

Զարիկը ոչնչի առաջ կանգ չառավ։ Մեկնեց Մոսկվա, դիմում-դիմումի հետևից գրեց։ Ոչ մի արձագանք։ Եվ մի օր Կրեմլի պատերի տակ սպասում է և Բերիայի մեքենայի հայտնվելուն պես իրեն նետում է մեքենայի տակ։

Մեքենան կանգ է առել։

Բերիան հարցրել է Զարիկին՝

— Ի՞նչ ազգի ես։

— Հայ։

— Չի կարող պատահել։

— Հայուհի եմ։

— Հայը վախկոտ է, հոր համար իր կյանքը վտանգի տակ չի դնի։ Երևի քո ա.րյան մեջ վրացական արյուն կա, և դու չգիտես։

Բերիան խոստանում է Ջարիկին դիմումը հանձնել Ստալինին և միջամտել նրա հորն ազատելու համար։

Դեպքը տպավորություն է թողել։ Ջարիկի դիմումի վրա Ստալինը մակագրել է՝ «Քննել»։ Դատել են Գյուլիքևիչյանին ու ճանաչել զրպարտված։

— Ավետիք, դարձավ նա Իսահակյանին,— ես անբախտ մարդ դուրս եկա։ Ընտանիքս կորցրի, հիմա էլ երեք ու կես տարի բանտ նստեցի անմեղ տեղը։

Լռեց։ Ջարիկն արցունքն աչքերին քաշվել էր անկյունը։

— Ջարիկս էլ որ չլիներ՝ ի՞նչ էի անելու։ Կորած էի։

Եվ այն մարդը, որ 1906-ից կուսակցության անդամ էր, դուրս մնաց նրա շարքերից։ Նրան այլևս պատասխանատու պաշտոններ չվստահեցին։ Առաջարկված էր զբաղվել գիտահետազոտական աշխատանքով և մեկ էլ, եթե կամենար՝ մանկավարժությամբ։

Մեր դասախոսներից մեկը, ինստիտուտի ռեկտորից հանձնարարություն ունենալով, եկել էր ներողություն խնդրելու՝ նրա անունից ինստիտուտում պատահած անախորժ դեպքի համար։ Հիշեցնեմ՝ Գյուլին եկել էր դասախոսություն կարդալու թատերական ինստիտուտում, մինչդեռ վերադասից կարգադրություն էր եկել՝ ազատել աշխատանքից քաղաքական անբարեհուսության պատճառով։

Գյուլիքևիչյանը թույլ չտվեց երկար խոսելու։

— Ես գիտեմ, լավ գիտեմ, որ մեղք չունի, կարգադրել են, նա էլ արել է։ Ով էլ լիներ՝ ստիպված էր նույնն անել։ Այդ իրավունքը տալիս եմ նրան։ Միայն թե նախօրոք զգուշացներ, որպեսզի ինստիտուտ չգայի և չստեղծվեր այդ անհարմար դրությունը ո՛չ ինձ համար, ո՛չ էլ՝ մյուսների։ Ինչ եղել եղել է։ Ես ավելի ծանր օրեր եմ տեսել...

Ասում էր, բայց իսկապես դա ծանր հարված էր։ Եվ նա չդիմացավ։ Օր օրի փոխվում էր, նիհարում։ Չեմ կարող ասել, թե ինչքան ժամանակ էր անցել՝ անկողին ընկավ։ Տարան հիվանդանոց։ Լավ հիշում եմ՝ խորեն Սերգեևիչի հետ գնացինք առաջին հիվանդանոց. անկողնում կուչ էր եկել, գլուխը փոք-

րացել, աչքերը մարած էին։ Զարիկի խոսքը՝ «Տես, թե ովքե՞ր են եկել», մնաց անարձագանք։

Մյուս օրը լուր առանք, թե այդ գիշեր հանգել է։ Զդիմացավ։ Դա, ըստ երևույթին, վերջին հարվածն էր։

Աշտարակը խորտակվեց։

ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

(Ի լրումն «Հուշապատումի»)

Գնացի համալսարան, լատիներենի հերթական պարապմունքներն էր։ Միջանցքում հանդիպեցի ռեկտորատի քարտուղարուհուն, որն առաջարկեց անցնել գրասենյակ։ Ճանապարհին, մինչև տեղ կհասնեինք, լուռ էր, ոչ մի խոսք չասաց։ Մռայլ էր ու անտրամադիր, մինչդեռ սովոր էի նրա ժպտադեմ արտահայտությանը։

— Ցավում եմ,— ասաց նա, երբ տեղ հասանք,— որ պիտի վշտացնեմ, բայց ինչ կարող եմ անել։ Իմ պարտականությունն է։

Ասաց ու մեկնեց մի թուղթ։

Ասպիրանտուրայից հեռացվելուս հրամանն էր։ Գրված էր՝ պարապմունքներից հաճախ բացակայելու պատճառով ասպիրանտուրայից ազատել։ Երևի պետք է իմանայի, որ այդպես է լինելու, բայց անակնկալի եկած, մոլորվեցի, ասես մեկը մուրճի ծանր հարված իջեցրեց գլխիս։

Դուրս եկա համալսարանի շենքից ու գլխիկոր քայլեցի Աբովյանով դեպի ցած, չեմ կարող ասել, թե տուն գնալու փոխարեն ինչու էի իջնում դեպի հրապարակ, երևի գնում էի գրողների տուն։

Այժմյան Թումանյան փողոցի անկյունում իմ պրոֆեսորն էր կանգնած՝ Սիմոն Հակոբյանը։ Սպասում էր տրամվայի գալուն։ Դիմացի մայթից տեսավ ինձ և ձայն տվեց։

— Ռուբե՛ն։

Մոտեցա։

— Տխուր ես երևում։ Ի՞նչ է պատահել։ Հիվա՞նդ հո չես։

Պատմեցի։

— Պարզ է։ Ամեն ինչ պարզ է։

Ջեռնափայտը հանդիպեց քարի։

— Ոչինչ, մի մտածիր, տաշած քարը գետնին չի մնա։

Լսեցի ու միտս մնաց, բայց այն ժամանակ չգիտեի ժողովրդական ասացվածքի իմաստը։ Երեկոյան Արամ Ղանալանյանի մոտ էի, չասելով թե ով է ասել և ինչ առիթով, հարցրի։ Բացատրեց։

— Ես կգնամ համալսարան։ Վաղը։ Անպայման կգնամ։ Ամեն ինչ կանեմ, որ վերանայեն քո հարցը։ Արսենին ու Գրիգորին կվերցնեմ ու միասին կգնանք։

Տերտերյանի ու Ղափանցյանի մասին էր խոսքը։

— Ա՛յ կտեսնես, ամեն ինչ լավ կլինի։

Սիրելի պրոֆեսոր, շատ սիրելի Սիմոն Հակոբյան, մաքուր հոգի և աղնվասիրտ ու միաժամանակ միամիտ մարդ, նույնիսկ այն խառնակ ժամանակները կարողացաք պահպանել ձեր հոգու լավատեսությունը, գտաք ջերմ խոսք ձեր ուսանողի համար, հույս ու հավատ ներշնչեցիք։

Առավոտյան դեմ լուր տարածվեց, որ այդ գիշեր Սիմոն Հակոբյանին տարել են։

ԱՐՇԱԿ ԲՈՒՐՋԱԼՅԱՆ

(Ի լրումն «Հուշապատումի»)

Ինչ ասեմ և ինչպես չպատմեմ։

1937 թվականն էր։ Գերագույն խորհրդի ընտրություններն էին։ Այն ժամանակ, նաև հետո ընդունված էր, որ երկրի ղեկավարների թեկնածուներն առաջադրում էին հանրապետությունները։ Այդ կապակցությամբ Երևան էր ժամանել Անաստաս Միկոյանը։

Ահա այդ առիթով արվեստի, ավելի ճիշտ թատրոնի, գլխավորապես օպերայի և բալետի թատրոնի աշխատողները Միկոյանի պատվին բանկետ էին կազմակերպել «Ինտուրիստ» հյուրանոցի ռեստորանում (այժմյան «Երևան» հյուրանոցը)։

Հրավիրված էր նաև Արշակ Բուրջալյանը, որն այն ժամա-

նակ օպերային թատրոնի գլխավոր բեմադրիչի պաշտոնն ուներ։

Միկոյանը նստած է սեղանի գլխավերևում։ Իր շուրջն են թատրոնի գլխավոր երգիչ-երգչուհիները։ Բուրջալյանը բավական հեռու է նստած ու երկու կողքին տղամարդիկ են, դեմքերը ծանոթ, բայց ոչ մի կերպ ի վիճակի չէ հիշելու, թե ովքե՞ր են, անուննե՞րն ինչ է, որտեղի՞ց գիտե նրանց։ Հենց որ Բուրջալյանը բան է հարցնում, պատասխանում են ժպտադեմ ու պատրաստակամ, երևի կիրթ ու քաղաքավարի մարդիկ են, իրենից երիտասարդ են, վերջապես՝ ըստ երևույթին գիտեն Բուրջալյանի արժեքը։

Առաջին կենացը Միկոյանի պատվին է։ Հասկանալի է, այդպես էլ պետք է լիներ։ Շռայլ խոսքեր, գովեստ ու մեծարանք։ Ցնծագին կանչեր։ Բոլորը ոտքի են կանգնել ու բաժակները բարձրացրած շրջապատել են կենացվորին։ Մոտեցել է նաև Արշակ Բուրջալյանը։

Միկոյանը աջ ու ձախ շնորհակալություն է հայտնում, բաժակը չխկացնում դիմացինի բաժակին։ Արշակ Բուրջալյանին ճանապարհ են տալիս, իսկ Միկոյանը չի տեսնում կամ էլ ձև է անում, որ չի տեսնում, թեև մարդիկ դիմում են Միկոյանին։

— Անաստաս Իվանովիչ, ընկ. Միկոյան, Արկադի Սերգեևիչը, Արկադի Սերգեևիչը։

Բայց Արկադի Սերգեևիչը նրանց համար էր հեղինակություն, Միկոյանի համար՝ ո՞վ էր որ։ Հետո պարզվեց, որ այո, ձև է արել, որովհետև ինչպես երևում է, երգիչներից մի երկուսը հասցրել էին ամբաստանել Բուրջալյանին Միկոյանի առաջ, ինչ-որ ծանր մեղքեր բարդել նրա վրա, և նա էլ հավատացել էր, որ այդպես է։ Այլապես ինչպես բացատրել, որ նա Բուրջալյանի իրեն պարզված բաժակին ընդառաջ չգնաց, ցուցադրաբար երեսը շրջեց։

Բուրջալյանն իրեն կորցրեց։ Դա տեսան շատերը։ Հասկացան, որ Բուրջա-լյանի հաշիվները մաքրված են։

Շփոթված ու վիրավորված, վիրավորված ու անպատվված Բուրջալյանը, իր մեջ ուժ գտնելով, մի կերպ տեղ հասավ, զբաղեցրեց իր աթոռը։ Հուզված էր։ Հանգստանալու համար որոնեց ծխախոտը։ Չէր հիշում, թե որ գրպանումն էր։ Վերջապես գտավ։ Հիմա փնտրում է լուցկին։ Ոչ մի գրպանում

չկա։ Չկա ու չկա։ Տեսնելով, որ հարևանները ծխում են, ծխախոտը բերանին շրջվեց ձախակողմյան հարևանին, որ կրակ առնի, բայց հարևանը երեսը շուռ տվեց։ Հակվեց դեպի աջակողմյան հարևանը, սա էլ մեջք արեց։ Արդեն պարզ էր։ Ամեն ինչ պարզ էր։ Ոչ ոք չէր ուզում գործ ունենալ իր հետ։ Բուրջալյանն ուժ գործադրեց իր վրա, մնաց մի հինգ րոպե ևս, այդ ընթացքում ոչ ոքի հետ չխոսեց։ Ի՞նչ պիտի խոսեր։ Նա ինքն իր մեջ էր, ինքն իր հետ։ Հիմա ուր որ է կգան համապատասխան մարդիկ համապատասխան տեղից և կառաջարկեն հեռանալ իրենց։ Պետք է շտապել տուն, պետք է տեսնել Անահիտին, ասել, որ ինքն անմեղ է, ոչ մի հանցանք չունի։ Վերկացավ ու սուսուփուս ճանապարհվեց տուն։

Բուրջալյանի մահից հետո Անահիտ Ղուկասյանը պատմել է ինձ։

Անահիտը զարմացել է, թե ինչու է շուտ եկել, բայց ավելի է զարմացել, տեսնելով ամուսնու այլայլված դեմքը։ Պատմել է ամեն ինչ։ Ասել, որ հիմա կգան իր հետևից։ Խնդրել է պատրաստել՝ ինչ որ պետք է տանի հետը։

Արցունքն աչքերիս պատրաստություն էի տեսնում։ Իսկ ինքը ծխում էր։ Ծխում էր անընդհատ և կնոջը ասում, թե եղածը թյուրիմացություն է, որ ինքը մեղք չունի, ոչինչ չի արել, կապացուցվի իր անմեղությունը, ու ինքը մի քանի օրից տանը կլինի։

Աղջիկս՝ Մագդան, քնած էր։ Երկար նայեց դստեր անմեղ դեմքին։ Կռացավ ու համբուրեց։

— Մագդային կասես, որ գնացել եմ Թիֆլիս բեմադրություն անելու։

Արդեն գիշերվա մեկն էր։ Հայտնի էր, որ կալանելու նպատակով գիշերվա ուշ ժամերին էին հայտնվում։ Եվ ամուսինները, կողք-կողքի դրված աթոռներին նստած լուռ սպասեցինք մինչև կլսվի դռան թակոց...

Մի փոքր հետո լսվեցին ոտնաձայներ։ Ծանր ոտնաձայներ։ Բարձրանում էին ներքևի հարկից։

— Թը՛փ, թը՛փ, թը՛փ...

— Եկան,— շունչը պահած ասաց Բուրջալյանը։ Հետո շրջվեց դեպի ինձ։

— Ո՛չ մի լաց, ո՛չ մի հառաչ: Պահիր քեզ տղամարդու պես:

— Թը՛պ, թը՛պ, թը՛պ...

Շարունակվում են ոտնաձայները: Բարձրանում են ոտնաձայները դեպի հաջորդ հարկը: Ուրեմն իր հետևից չէին եկել: Տեսնես ում համար են եկել: Դժվար է որոշել: Ո՞ւմ չէին տանում:

Գիշերն անցավ: Ոչ ոք չեկավ: Մտածեցինք, որ միամիտ մարդիկ ենք: Ինչո՞ւ պետք է անմիջապես գային: Տեւորիստ չէ, որ կամենան րոպե առաջ կանխել ռումբի պայթյունը: Պարզ չէ՞, որ պետք է ինչ-որ ձևակերպումներ անեն: Ի՞նչ է պատահել որ: Այսօր չեկան, վաղը կգան:

Տանից դուրս չեկանք: Անհամբեր սպասեցինք գիշերվան: Երկրորդ գիշերն էլ նույնն էր: Ոտնաձայնի ամեն թմփոցի վրա մտածում էինք, թե ահա եկան: Բայց ոտնաձայների թփթփոցները շարունակվում էին, դե արի ու գլխի ընկի, թե այս գիշեր ո՞ւմ հետևից են եկել:

Նույն ապրումները, նույն տանջալի սպասողական վիճակը կրկնվեց նաև երրորդ գիշերը: Չէ, չեկան, չտարան:

Երեք օր որ անցավ, Բուրջալյանը որոշեց թատրոն գնալ, գնալ գործի:

Օպերայի թատրոնն այն ժամանակ Աբովյան փողոցի վրա էր, ռուսական թատրոնի այժմյան շենքում: Վերադարձավ ու պատմեց. մի երկուսը բարևել են ու անցել: Մի երկուսը հարցրել՝ «ինչպե՞ս եք» ու պատասխանը չառած անցել: Մոտեցել է հայտարարությունների տախտակին ու կարդացել, որ աշխատանքից ազատված է: Նայել է, թե ե՞րբ է հրամանը տրված: Միկոյանի բանկետի հաջորդ օրվա ամսաթիվն էր: Ո՛չ աջ է նայել, ո՛չ ձախ, շրջվել է ու դուրս եկել թատրոնից, չուզենալով ոչ ոքի տեսնել, ոչ էլ որևէ մեկից բացատրություն պահանջել: Այն օրերին ամեն զրույց ու խոսակցություն, մանավանդ ամեն ինչո՞ւ, լինի զարմացած թե վրդովված, վտանգավոր էր:

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

(Ի լրումն «Հուշապատումի»)

Համալսարանն ավարտեցի 1936-ին: Ծանր ժամանակներ էին: Մեր պրոֆեսորներից շատերին մեկուսացրին: Ի՞նչ մեղք էին գործել՝ ոչ ոք չգիտեր: Արտասահմանում կրթություն ստացածները կասկածի տակ էին ընդհանրապես: Այդ թվում նաև Բեռլինում ուսանած Կարապետ Մելիք-Օհանջանյանը, նրան էլ «տարան»: Հինգ տարի անց վերադարձավ: Շտապեցինք տեսնել: Երկար մորուք էր թողել: Ո՛չ ընկճված էր, ո՛չ էլ նույնիսկ... դառնացած: Ես հիմա եմ հասկանում. ինքը տարիքով, մենք երիտասարդ, չէր կամենում, որ ազդվենք, ճնշվենք և պահում էր իրեն այնպես, ասես, արկածներով լի ճանապարհորդությունից էր վերադարձել: Մեկ-մեկ, երբ որևէ ծանր դեպք էր պատմում և տեսնում, թե ինչպես ենք տպավորվում, անմիջապես առույգ շեշտով ասում էր.

— Տղամարդը դոնե մի անգամ կյանքում պետք է ծանր փորձության առաջ կանգնի, որպեսզի պարզի՝ տղամա՞րդ է, թե չէ... թեկուզ ինքն իր համար:

Ասում էր ու ծիծաղում:

Մտածեցինք, որ պետք է մեր ուսուցչին օգնել: Տարբեր առաջարկներ եղան: Ես այն ժամանակ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրն էի: Առաջարկեցի հոդված գրել: Ջեռքը դրեց ուսիս.

— Չէ, սիրելիս: Հոդվածը ա կ տ իվ աշխատակցություն է: Հարկավոր չէ: Դոնե հիմա հարկավոր չէ: Ես համոզված եմ, որ դրա ժամանակն էլ կգա: Ավելի լավ է պ ա ս ս իվ աշխատակցություն: Թարգմանելու բա՞ն չկա. հավատա, որ լավ կանեմ: Ի դեպ, իմ ռուսերենը վատ չէ, թեև այդ դեպքում, կարծես, կարևորը հայերենն է:

Լռեց:

— Թեև ազատված եմ, բայց դեռ վստահելի չեմ: Պետք է ավելի շրջահայաց լինել և կարիք չկա, որ իմ պատճառով որևէ մեկը գլխացավանքի մեջ ընկնի:

Որոշվեց՝ կթարգմանի Վանդա Վասիլևսկայայի «Միածանը», որը մաս առ մաս լույս կտեսնի ամսագրում և ապա առանձին գրքով:

ՄԻ ՀՈՆՈՐԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

30-ական թվականների կեսերին Հայպետհրատը ֆինանսական դժվարություններ ուներ և չէր կարողանում գրողների պարտքերը մարել: Հրատարակչության տնօրենը՝ մի համակրելի ու ձեռներեց, իր գործին լավատեղյակ մարդ՝ Էդուարդ Զոփուրյան, պայմանավորվել էր գանձապահ Ասատուրի հետ, որ եթե գրողից ստացված դիմումի վրա իր ստորագրության պոչը թեքված է դեպի աջ, նշանակում է չպետք է վճարել, թեև գրողին ինքը հաստատ խոսք էր տվել: Վճարվում էր, եթե պոչն ուղիղ գծով իջնում էր ցած: Ուզած-չուզած այսպիսի միջոցների էին դիմում: Ինչ արած՝ ճեղքվածքը մեծ էր, պարտքերը շատ էին:

Եվ ահա Հայպետհրատի վարչական գործի գլուխ կանգնեց Հայկ Դոնոյան անունով մի երիտասարդ, որը կուսակցական աշխատանքից էր բերվել հրատարակչական գործերը բարելավելու համար: Եվ չէին սխալվել: Ինքը գրականության մարդ չէր, բայց կյանքի փորձը նրան հուշեց շրջապատել իրեն բանիմաց մարդկանցով, որոնց վստահելով, գործը մղեց առաջ: Վարչական ձիրք ուներ, շատ բան կարգավորեց և իր առաջին գործերից մեկը եղավ հրատարակչությունը ֆինանսական ճեղքվածքից հանելը: Դա նրան հաջողվեց: Ի պատիվ իրեն ասվելու է, որ գրողի բարոյական նշանակության ըմբռնումն ուներ և վատ էր զգում, երբ տեսնում էր ժողովրդի մեջ անուն հանած գրողներին գանձապահի պատուհանի մոտ հերթի կանգնած: Եվ որոշեց, որ պետք է հոնորարն ուղարկել գրողների տուն: Հրավիրեց Իսկուհի Վարդանյան անունով մի երիտասարդ կնոջ և առաջարկեց հանձն առնել այդ գործը:

Ես կազմել էի Շիրվանզադեի երկերի միհատորյակը, ծավալուն մի ժողովածու, որի համար ինձ հասնում էր բավական մեծ գումար, մեկ հազար ռուբլի: Բոլորովին անտեղյակ դիրեկտորի նորամուծությունից, գնացի հրատարակչություն իմանալու՝ հոնորար տալի՞ս են, թե ոչ: Երբ մտա հաշվապահություն, գլխավոր հաշվապահը՝ Մանյա Հայրյանը, շրջվեց դեպի Իսկուհին և ասաց՝

— Ռուբեն Զարյանը այս երիտասարդն է, հոնորարը տուր իրեն, որ մեկ էլ չգնաս և հասնես տուն:

Իսկուհին վտիտակազմ կին էր, կողքին՝ մեծ պարկ, որը ինչպես պարզվեց, լի էր բաժանվելիք հոնորարներով: Իսկուհի Վարդանյանի աշխատանքային առաջին օրն էր և առաջին մարդը ես էի, որին տալու էր հոնորար:

— Խնդրեմ, այստեղ ստորագրեք:

Գտա իմ անունը և ստորագրեցի:

— Ստացեք:

Իմ առաջ դրեց փողի մի կապոց, որը ես, իմ սովորության համաձայն, առանց հաշվելու, դրի գրպանս:

Գլխավոր հաշվապահը դարձավ ինձ.

— Ընկեր Զարյան, ստանալիք գումարի չհաշվելու ձեր այդ սովորությունը բոլորովին չեմ սիրում, եթե հանկարծ պակա՞ս լինի:

— Համաձայն եմ:

— Իսկ եթե ավելի լինի:

Հիմնավոր էր ասված և առարկելն անմտություն կլիներ:

Մոտեցա լուսամուտին և հաշվեցի: Մեկ հազարի փոխարեն տվել էր երկու հազար: Մեկ էլ հաշվեցի, իսկապես ստանալիքս կրկնապատիկ էր: Մոտեցա գլխավոր հաշվապահին և ասացի, որ մեկ հազար ավելի է տվել: Իսկուհի Վարդանյանը, որ մի քայլ այն կողմ էր կանգնած, ուշագնաց վայր ընկավ:

— Տեսնո՞ւմ եք,— ասաց ինձ հաշվապահը, իսկ մի քանի աղջիկ ջուր ցանելով ուշքի բերին Իսկուհուն:

Նույն տարին ես անցա աշխատանքի պետհրատ, և Իսկուհի Վարդանյանը, միշտ չարքաշ կյանք ունեցած վանեցի այդ կինը, երախտագիտության զգացումից իմ գլխովն էր պտտում:

ԼՈՒՐԵՐ ԹԻՖԼԻՍԻՑ

Շատ ու մռայլ լուրեր էին դրանք: Իմացանք, որ կալանավորված են բանաստեղծ Տիցիան Տաբիձեն, «Արսեն Մարբելի» վեպի հեղինակ Միխայիլ Ջավախաշվիլին: Լուր հասավ, որ բանաստեղծ Պաուլո Իաշվիլին անձնասպանություն է գործել գրողների տանը օրը ցերեկով: Թատրոնի մարդկանցից մեկուսացված է Սանդրո Ախմետելին...

Ուրիշ անուններ էլ էին տալիս։

Հայկական շրջանակից շատ մեռրդ է կալանավորվել՝ Արշավիր Մելիքյանը, Վահան Տեր-Առաքելյանը։ Ասում էին, որ Տեր-Առաքելյանին տարել են գիշերով, երբ նա գրչակից ընկերներին իր նոր պոեմն է կարդալիս եղել։

Կալանավորվել են գրականագետներ Հարություն Սուրխաթյանը, Պողոս Մակինցյանը, Նորայրը։

Լուր առանք, որ շատ ուսուցիչներ են բանտ նետված և դրանց մեջ իմ ուսուցիչներից Նիկոլ Սարգսյանը, Կարո Աղաբաբյանը, Մարգար Ավետիսյանը, Գարեգին Սեյրանյանը, Գրիգոր Սիրունյանը։

Տալիս էին ուրիշ ծանոթ անուններ ևս...

Թիֆլիսում ապրում են ու ստեղծագործում ինձ հասակակից հայ գրողներ, որ մտերիմ ընկերներս են, ու ես, հասկանալի է, անհանգիստ եմ նրանց ճակատագրի համար՝ Բենիկ Սեյրանյան, Մկրտիչ Ասլանյան, Սուրեն Ավչյան, Մարտին Քարամյան... ինչպես կարող էի հանգիստ լինել մանավանդ այն պահից, երբ լսեցի, որ մեկուսացված է մեր ընկերներից արձակագիր Ռուբեն Լուսինյանը։

Փառք աստծո, փոթորկալի այդ օրերը նրանց կողքով անցան, թեև նրանք, ինչպես շատ մտավորականներ մեր երկրում, ապրել են 1937 թվական կոչվածը տագնապահար սրտով, որովհետև ոչ ոք չգիտեր, թե ում ինչի համար են կալանքի տակ առնում։

ՀԱԿՈԲ ԵՎ ԷՍԹԵՐ ԶՈՐՅԱՆՆԵՐ

(Գրված 1989-ի հունվարի 4-ին)

Իմ դիմաց նստած են ուսուցչիս՝ Հակոբ Զորյանի զավակները՝ Զորին և Էռնան, գիտությունների թեկնածուներ. մեկը ֆիզիկոմաթեմատիկական, մյուսը բժշկական, հարգելի մարդիկ։ Կարդացել են «Մայրամուտից առաջ» գրքի առաջին մասը և դժգոհ մնացել իրենց հորը նվիրված էջերից։

Ես բացատրություն եմ տալիս։ Չեմ կարող ասել, թե ասածս որքանով է համոզիչ նրանց համար։ Այնուհետև ծայր

առավ ըրույց, որ հետաքրքիր էր անկախ ամեն ինչից, ու ես մտածեցի, որ լավ կլինի, եթե լսածս հաղորդակից դարձնեմ ընթերցողիս։

Նախ՝ իմ բացատրությունը։

Իմ ուսուցիչները Թիֆլիսում, նաև ավագ ընկերներս, ինձ ներշնչել էին պաշտամունքի հասնող սեր Հակոբ Մանանդյանի և Նիկողայոս Ադոնցի նկատմամբ։ Բացի այդ, ուսումնարանում սովորելիս, ինչպես արդեն ասել եմ, չեմ անցել պատմություն։ Այդ պատճառով համալսարան գալիս հույս ունեի լսելու հայոց պատմությունն իր բոլոր մանրամասնություններով։ Բայց, ավա՜ղ, հույսերս չարդարացան։ Նախ, երբ ընդունվեցի համալսարան, խոր հիասթափություն ապրեցի, իմանալով, որ աշխատանքից հեռացված են Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Յոլափ Խանզադյանը, սրանց հետ միասին նաև Հակոբ Մանանդյանը, որոնց դասախոսությունները լսելու կարոտն էր ինձ բերել Երևան։ Հայոց պատմության դասընթացը մեզ կարդում էր Հակոբ Զորյանը, որի դասավանդածն իմ սպասած պատմությունը չէր։ Այն ժամանակվա սոցիոլոգիական միտումների ոգով դասախոսությունները շարք էր դա, միտումներ, որոնց տուրք էր տալիս մեր դասախոսների մեծ մասը նույնպես։ Զորյանը, մասնագիտությամբ սոցիոլոգ, միանգամայն անկեղծ էր իր համոզումներում։ Այդ դիրքերից էլ մեր պրոֆեսորը խիստ քննադատում էր Մանանդյանին, և ես, որ երիտասարդ էի և ունեի կուռքեր, դա ընկալում էի որպես անձնական վիրավորանք։ Դժգոհ էի, բայց կասկած չունեի, որ մեր դասախոսն ազնիվ ու շիտակ մարդ է։

Այժմ այն մասին, թե ինչ լսեցի։

Խոսողը Զորին էր։ Էռնան մեկ-մեկ էր միայն միջամտում, լրացնում եղբոր ասածը։ Երկուսն էլ հուզված էին։

— Մեր հայրը կրթությունը ստացել է Պոլսում, հենց այն դպրոցում, որտեղ սովորել է նաև մեր մայրը՝ Էսթերը։ 1912—1914 թվականներին ուսուցչություն են արել Օրդուի գավառական դպրոցում, իսկ Օրդուն հորս ծննդավայրն էր։ Հենց որ սկսվել է պատերազմը, նրանք վերադարձել են Պոլիս։ 1915-ին մորս աքսորել են, աշխատել է որբանոցում։ Աքսորվելու պատճառը նրա հասարակական-քաղաքական հայացք-

ներն էին: Էսթերը եղել է ըմբոստ բնավորության տեր, բռնություն չհանդուրժող, անհանգիստ ոգի: Այնքան ընտանեկան անդորր որոնող չի եղել, որքան հասարակական ասպարեզ, կամեցել է ուժերը նվիրել հայրենիքի ազատագրության սուրբ գործին: Երեք տարուց հետո վերադարձել է Պոլիս, զբաղվել ուսուցչությամբ, 1921-ին մեկնել է Բեռլին մանկավարժություն և հոգեբանություն ուսանելու: Բեռլինում է եղել նաև Զորյանը: Հանդիպել են որպես վաղեմի ծանոթներ, մտերմացել են և, ունենալով գրեթե նույն հայացքները և նպատակները, ամուսնացել են:

Մեր հոր բեռլինյան կյանքում կա մի կետ, որ շատ քչերը գիտեն: Իմանալով, որ Թալեաթ փաշան եկել է Գերմանիա, հայ երիտասարդների մի խումբ, թվով հինգ մարդ, նախագահ ընտրելով Շահան Նաթալիին, հայերի դահճի վրա մահափորձ անելու կոմիտե են կազմել, որի կազմում էին Սողոմոն Թեյլերյանը, Հակոբ Զորյանը ու ևս երկու մարդ, որոնց ազգանունը չեմ հիշում: Թեյլերյանը ապրել է իմ հոր տանը:

1925-ին Զորյանն ավարտել է Բեռլինի համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետը՝ պաշտպանելով դիսերտացիա՝ «Հայ ժողովրդի սոցիալական շերտավորումը միջին դարերում», որի համար նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի աստիճան:

Նույն թվականին երկու հրավեր է ստացել միաժամանակ, մեկը Խորհրդային Հայաստանից, մյուսը՝ Փարիզից: Փարիզում խմբագրելու էր ինչ-որ հանդես, իսկ Հայաստան գալով՝ դասախոսելու էր համալսարանում:

Զորյանի որոշումն անբեկանելի էր՝ մեկնել հայրենիք, անպայման Հայաստան, ծառայել երկրի վերաշինությանը: Էսթերը նույն համոզման էր, բայց գտել են, որ նախ պետք է ամուսինը մեկնի, հետո՝ Էսթերը, մինչև որ պաշտպանի դիսերտացիան: Բայց Էսթերը ստիպված ավելի շուտ է մեկնել Երևան, մտածելով, թե հետո կգա և կպաշտպանի: Իմանալով անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն դասավանդել է բուհերում, իսկ Զորյանը տարբեր պաշտոններ է ունեցել՝ պատմության թանգարանի տնօրեն, հանրային գրադարանի դիրեկտոր, համալսարանում պատմության ֆակուլտետի դեկան, հետո նաև ամբիոնի վարիչ:

Մեր ծնողները լավ շրջապատ են ունեցել. Սիմոն Հակոբյան, Զապել Եսայան, Մկրտիչ Ջանան, Հրաչյա Ներսիսյան, Նղիշե Զարենց, որի հետ ծանոթացել էին բանաստեղծի Բեռլին կատարած այցի ժամանակ: Սիրել են թատրոնը և բաց չեն թողել ոչ մի նոր ներկայացում:

Շատ բան կարելի է պատմել մեր հոր մասին: Մտաբերեմ, սակայն, նրա կյանքի ողբերգական կետը:

Վրա հասավ 1937 թվականը, մեր երկրի պատմության ամենամռայլ էջը:

Օգոստոս ամիսն էր, մենք երկուսով ամառանոցում էինք, ես տասը տարեկան էի՝ էնանի՝ երկու: Օգոստոսի 10-ի գիշերն եկել են ու մեր հորը տարել:

Մեզ հայտնի չէ, թե ինչ զրպարտագրի հիման վրա ներքին գործոց ժողկոմատը տեղեկություն է ունեցել, որ իբր Երևանում գործել է պրոֆեսորներից կազմված ընդհատակյա խումբ, որը պատրաստվել է պետական հեղաշրջում կատարել և իբր նույնիսկ որոշել, թե ապագա կառավարության մեջ ով ինչ պորտֆել է ունենալու:

Այդ խմբից մեկն էլ եղել է հայրս: Մյուսները՝ Կարապետ Մելիք-Օհանջանյան, Սիմոն Հակոբյան, Աշխարհաբեկ Քալանթար, Հովհաննես Նավակատիկյան, Լևոն Ռոտինյան, Հակոբ Հովհաննիսյան, Ստեփան Ղամբարյան, Պապա Քալանթարյան, Արշակ Տոնյան, Գևորգ Գրձելյան, Հովհաննես Ակունյան, Ասյա Վերմիշյան, Ռուբեն Ղամբարյան, Բեկ Հովսեփյան, Արտաշես Քալանթարյան: Գուցե նաև ուրիշներ:

Հայրս չի հասկացել, թե իրեն ինչո՞ւ են բանտարկել, ինչպե՞ս կարելի է մարդու ճակատագրի հետ խաղալ անհիմն մեղադրանքով: Հուսահատ օրեր է ապրել, անձնասպան լինելու փորձ է արել:

Ջինվորական տրիբունալն է քննել «պրոֆեսորների գործը»: Դատավարության ժամանակ ոչինչ չեն կարողացել հաստատել, և դատախազը հարցրել է՝ ճի՞շտ է, որ ինքը մասնակից է եղել Թալեաթի սպանությանը: Հորյանը զարմացել է, որովհետև այդ մասին ոչ ոքի ոչինչ չէր ասել, հետո հիշել է, որ մեր գրողներից մեկին, նույնպես կալանավորված, լավ տրամադրության պահին պատմել է: Մեղադրյալը պատասխանել է՝ ճիշտ է:

խանել է, որ այո, ճիշտ է, և իր կյանքի ամենալուսավոր էջն է դա, և ինքը հպարտ է զգում դրա համար:

Նվ դա է դարձել նրա հիմնական մեղադրանքը:

Աքսորել են Ուրալի կողմերը: Աքսորի ճանապարհին մինչև Չելյաբինսկ Հակոբ Զորյանը և Կարապետ Մելիք-Օհանջանյանը միասին են եղել: Բարեկամացել են: 1941-ի դեկտեմբերի 31-ի գիշերը Նոր տարի են դիմավորել: 1942-ին վախճանվել է:

Մայրիկին բանտարկել են նույն տարվա հոկտեմբերին: Երեխաներս մնացինք որբ: Զրկվեցինք բնակարանից: Լավ գրադարան ուներ հայրս, ոչ միայն հայերեն հրատարակություններ, Պոլսից ու Բեռլինից բերված գրքեր: Արտասահմանում ունենալով մտերիմ մարդիկ, միշտ ստացել են պատմագիտական նորույթներ: Հարուստ գրադարան էր դա, ափսոս, որ ոտքի տակ գնաց, կորավ անհետ:

Շրջապատի մարդիկ երես դարձրին, և միակ մարդը, որ երեխաներիս տեր կանգնեց, մեր ազգականն էր Եվնիկե անունով: Բարի ու ազնիվ կին, որին երկուսս էլ հիշում ենք երախտագետ սրտով: Բացի դա՝ իր ձեռքը մեր գլխին պահեց աքսորից վերադարձած Կարապետ Մելիք-Օհանջանյանը: Չենք մոռանա երբեք:

Մայրիկին աքսորել են Կարագանդա, հետո էլ ավելի հեռավոր մի տեղ, բոստանի պահակ է եղել, մտածելով, որ եթե բուժքույր լիներ, ավելի օգտակար կլիներ: Տուն է դարձել 1946-ին: Չեն թողել, որ Երևանում ապրի: Ապրել է Քանաքեռում, հետո պահանջել են, որ մեկնի Սևան, որտեղ աշխատել է օդերևութաբանական կայանում: Ուրախ է եղել, որ ընկել է մտավորական միջավայր: Ուժեղ բնավորություն ուներ, մեծ կամք: 1949-ին նորից են բանտարկել, նորից են աքսորել, այս անգամ Կրասնոյարսկ՝ Տառա կոչվող սակավամարդ վայր: Անմարդկային պայմանների մեջ ապրելով, զավակներին լավատեսական ոգով նամակներ է գրել: Ազատվել է Ստալինի մահից հետո, 1954-ին: Ապրել է մինչև 1962 թվականը, վախճանվել է 70 տարեկան հասակում, ականատես լինելով, որ իր զավակները ինքնուրույն կյանքի տեր, իրենց ծնողների երախտիքը չմոռացող, շրջապատից հարգված մարդիկ են:

Նոր էի Թիֆլիսից վերադարձել Երևան, ուրեմն 1933-ի աշնանն էր, Երևանի գրական-գեղարվեստական շրջաններում մի անծանոթ էր հայտնվել՝ կիրթ արտաքինով, կլորադեմ, արդեն ճերմակած գլխով, եղջրաշրջանակ ակնոցն աչքերին, միշտ կոկ հագնված: Ով էր՝ չգիտեի, բայց տեսել եմ նրան գրողների տանը, «Կաֆե-տուրիստում», Աբովյան փողոցում:

Հարցրի՝ ո՞վ է: Զարմացած նայեցին ինձ, որ նշանակում էր՝ մի՞թե չգիտես: Ասացին, թե Զավեն-Տիգրանն է:

Անունը ծանոթ էր: Լինելով համալսարանի բանասիրականի ուսանող, իմ օրը մեծ մասամբ անցել է հանրային գրադարանում, որտեղ թերթել եմ նախահեղափոխական տարիների պարբերական մամուլը: Կարդացել եմ, գրառումներ արել: Եվ հաճախ հանդիպել եմ Զավեն-Տիգրանի գրական-թատերական հարցերին նվիրված հոդվածներին: Ասեմ նաև, որ նրա հոդվածները տպավորություն էին թողել ոչ միայն շարադրանքի ոճը, այլ նաև մոտեցումը, արվեստի յուրահատկությունների նուրբ ըմբռնումը:

Գրողների տան հավաքույթներին, որոնց հաճախ ներկա է եղել, չեմ հիշում, որ ելույթ ունեցար: Հետաքրքիր էր, թե ի՛նչ դիրք կբռնի, ի՛նչ կասի: Տեսնես ի՞նչ է մտածում: Նրա լռությունը խորհրդավորության շղարշով էր պատում անձը:

Ինչ գիտենք իր մասին:

Ծնվել է 1874-ին, Սեբաստիայում, ազգանունը՝ Զուքասպյան:

Զավեն-Տիգրանն ուսանել է Պոլսո կեդրոնական վարժարանում: Ուսումը շարունակելու համար մեկնել է Փարիզ և ժնև: Ապրել է Թեհրանում, եղել է ֆրանսերենի ուսուցիչ: Հետո հաստատվել է Թիֆլիսում. և խմբագրել «Երկրի ձայն», այնուհետև՝ «Սուրհանդակ» թերթերը, իսկ 1921—1922 թ.թ. Պոլսում ֆրանսերեն լույս տեսնող «Զարթոնքը»: Խմբագրել է նաև Պոլսո «Ժամանակը»: Տասական թվականներին ընդունված էր «Տարեցույցներ» կազմել: Մեկն էլ ինքն է կազմել, թուրքական տարեցույց՝ «Նեվալը Միլլի» և հրատարակել 1914-ին: Համուտ թուրքագետ էր: Քեմալականների հաղթանակից հետո մեկնել է Փարիզ:

Փարիզում ծանոթացել է Հանրի Բարբյուսի հետ, նամակագրական կապ ունեցել։ Աշխատել է Գեորգի Դիմիտրովի հետ «Բալկանյան ֆեդերացիայի խմբագրատանը։

1933-ին փոխադրվել է Երևան, լինելով «Յումանիտեի» և «Մոսկու դեյլի նյուզի» թղթակիցը Երևանում։

Ես այդպես էլ նրա հետ ծանոթանալու բախտ չունեցա։ Մի անգամ ցերեկով գրողների տուն մտա։ Մի խումբ գրողներ, նրանց հետ նաև Զավեն-Տիգրանը, խոսում էին Կոմիտասի մասին։ Խոսքն այն մասին էր, որ մի Թրքուհի հովանավորել է Կոմիտասին։ Բայց բոլորի իմացածը պատահական, վայրիվերո տեղեկություններ էին։ Բոլորը դարձան Զավենին, և նա պատմեց ինչ որ գիտեր։

Ահա ինչ մնաց հիշողության մեջ նրա պատմածից։

Երեք քույր են եղել։ Մեկը բանաստեղծուհի՝ Նիգյար Հանըմ։ Հրատարակածս «Տարեգրքում» նկարը կա։ Մյուս քրոջ անունը չեմ հիշում։ Երրորդը, որ Կոմիտասի ծանոթն էր՝ Խալիդե Էդիպ Հանըմ։ Երևելի գեղեցկուհի։ Զարգացած կին, ընտիր անգլիագետ։ Խելոք ու խորամանկ կին։ Բնավորությամբ արկածախնդիր, ազատ վարքի տեր։ Մտերիմ կապեր է ունեցել Թալեաթ փաշայի և այն ժամանակվա Թուրքիան կառավարող մի շարք մարդկանց հետ։

Խալիդե Հանըմը իսկապես մոտ է եղել Կոմիտասին։ Վերջինս հաճախ այցելել է նրա տուն՝ մտավորականների հավաքույթներին։ Մասնակցել է զրույցներին, մտքեր, տեսակետներ հայտնել, երգել ու նվագել, առաջ բերելով ընդհանուր հիացում, մանավանդ որ բացի մայրենի լեզվից, իմացել է Թուրքերեն, քրդերեն, գերմաներեն, ֆրանսերեն։

Այս պատմությունը բոլորը լսեցին հետաքրքրությամբ։ Գուցե ուրիշ մանրամասնություններ էլ է ասել, չեմ հիշում, միտս է մնացել այսքանը։

Նրա հայերենը արևմտահայերենի խառնուրդ ուներ, և դա առանձին հրապույր էր տալիս նրա խոսքին։

Վրա հասավ 1937 մռայլ տարին։ Իմացանք, որ մի դժխեմ գիշեր նրան էլ են տարել։ Ավելի ուշ իմացանք, որ չի դիմացել դժոխային տանջանքներին, մանավանդ որ չի ուզեցել չգործած մեղքերը առնել իր վրա և վախճանվել է հազիվ մի տարի անց։

***

Այս գիրքը գրելիս մտածեցի, որ արժե պահել այս մոռացված մարդու հիշատակը: Նրա կյանքին վերաբերող իմ տեղեկությունները չափազանց սակավ էին: Նայեցի «Հանրագիտարանը»՝ ոչինչ չէր գրված: Ջեռքս առա Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարանի» առաջին հատորը, այնտեղ էլ չկար:

Մի օր ընկերոջս հարցրի, թե ինչու այդ պատվական մարդը տեղ չի գտել բառարանում: Պարզվեց, որ ինչպես Զավեն-Տիգրանը, այնպես էլ շատ ուրիշ անուններ, թվով մի քանի հարյուր մարդ, որոնք 1937-ի զոհերն են եղել կամ էլ պատկանել են դաշնակցական և այլ կուսակցության, հրատարակչության պահանջով դուրս են մնացել բառարանից, և Գառնիկ Ստեփանյանը իմ առաջ դրեց Զավեն-Տիգրանին նվիրված ձեռագիր քարտը, որից քաղված են այստեղ հիշված կենսագրական բոլոր տվյալները:

Ակամա հավելում. խեցեգործության վարպետ, իմ լավ ընկեր Համայակ Բդեյանի արվեստանոցում ծանոթացա Թիֆլիսից Երևան փոխադրված Անուշավան անունով համակրելի երիտասարդի հետ: Ստեպ-ստեպ հանդիպել եմ նրան, որն իր զրույցներից մեկի ժամանակ պատմեց Հոր մասին:

Հայրը՝ Նիկողայոսը, լավ արհեստավոր է եղել, դերձակ, որ կարել է կանանց վերարկուներ և մանթոներ: Ավարտել է Պետրոգրադի կար ու ձևի դասընթացները: Ուրիշ կրթություն չի ստացել, բայց վարձել է ֆրանսերենի ուսուցիչ և դաշնամուրի դասատու, որ պարապեն իր հետ: Վարպետ Նիկողայոսը համոզված է եղել, որ վաղ թե ուշ արյունարբու բռնապետ Ստալինի մասին ասվելու է ճշմարտությունը: Գիտեր՞ կալ Ստալինի մասին ասվելու է ճշմարտությունը: Գիտեր՞ ինքը կապրի՞ մինչև այդ օրը, բայց գիտեր, որ այդ օրը անպայման գալու է: Ու խնդրել է որդիներին՝ եթե վախճանված լինի, անպայման այցելեն գերեզմանատուն ու տեղյակ պահեն դրա մասին: Ու երբ կայացվել է Բերիային մերկացնող որոշումը, եղբայրները այցի են գնացել Հոր շիրիմին և կարդացել բարձրաձայն: Հետո էլ նույնն արվել է 1957-ին, կուսակցության 20-րդ համագումարից հետո, երբ լսվել է Ն. Խրուշչևի զեկուցումը անհատի պաշտամունքի դեմ: Լսե՞լ է

հանգուցյալը, թե ոչ, որդինները չգիտեն, բայց խղճները հանդիստ է, որ կատարել են նրա պատվերը։

Ջավեն-Տիգրանը զավակներ ունե՞ր, թե ոչ։ Չգիտեմ ինչու այն տպավորությունն էի, թե մենակ մարդ է։

Հայտնի է նրա մահվան տարին, բայց ոչ գերեզմանը, որ որդին, դերձակ Նիկողայոսի որդիների օրինակով կանգնի նրա շիրիմի մոտ և կարդա Ստալինի դատապարտման պաշտոնական փաստաթուղթը։

ՀԱՅՐԸ ԵՎ ԴՈՒՍՏՐԸ

Թիֆլիսում հայ ուսուցիչներ շատ կային։ Մեկը մյուսից նախընտրելի, իրենց գործը սիրող, իրենց գործի մեջ հմուտ։ Նրանց մեծ մասը 1937-ի զոհը դարձան։

Դրանցից մեկն էլ Հաբեթ Խաչատրյանն էր, որի տուն մուտք ունեի՝ լինելով նրա ավագ դստեր՝ Նելլիի ընկերներից։

Եթե ասեմ, որ նա սովորել և ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, կարծում եմ, շատ բան ասած կլինեմ։ Հայտնի է, թե ճեմարանցիներն ինչ լայն պատրաստության տեր էին, անկախ նրանից, թե ավարտելուց հետո գործունեության ինչ ասպարեզ են ընտրել։

Լավ ուսուցիչներ է ունեցել Հաբեթ Խաչատրյանը, բայց նրանցից ամենանշանավորը Կոմիտասն է եղել, որ անփոխարինելի դեր է խաղացել աշակերտի կյանքում։ Խաչատրյանը ոչ միայն երգչախմբի մենեջերն էր, դրամատիկ տենոր, այլ նաև խմբավարի աջ թևը։ Հետո Կոմիտասը երգչախմբի ղեկավարումը հանձնել է Հաբեթենակին, ինչպես սովորաբար կոչել է նրան։ 1912-ի ամռանը Սարիղամիշում հանգստացել են միասին։ Կոմիտասը նոտագիր նամակներ է հղել Խաչատրյանին։ Այդ նամակները վերցրել է Անտոն Մայիլյանը ու չի վերադարձրել։

Հաբեթ Խաչատրյանն իգդիրցի էր։ Նրա մտածողությունն ու հոգեբանությունը ժողովրդական էին։ Ոչ միայն լավ է իմացել լեզու և պատմություն, գրաբար ու բարբառներ, այլև հայ մարդու, հատկապես գեղջկական աշխարհը, ապրելակերպը. նիստ ու կացը, ծեսերը, սովորույթները, բանահյուսությունը՝

հնքիաթ, առակ, ասացվածք, վերջապես՝ երգ ու երաժշտություն:

Իրեն նվիրել է մանկավարժության: Դասավանդել է մաթեմատիկա և հայոց լեզու: Սարիբեկյանի հետ մաթեմատիկայի դասագրքի հեղինակ էր: Մի քանի տարի Ախալքալաքում եղել է ուսուցիչների վերատրակավորման դասընթացների ղեկավար:

Ուսուցչություն է արել, երբեմն էլ՝ տեսչություն: Իր կնոջ՝ Արուսյակ Խաչատրյանի հետ, նույնպես ուսուցչուհի, դասավանդել է աշխարհագրություն, եղել է շատ քաղաքներում՝ Բաթում, Բաքու, Աշխաբադ, Թիֆլիս: Ուսուցիչ էր Բաքվում ու թեև հայացքներով դաշնակցականների հետ կապված մարդ, ծանոթություն ու շփումներ է ունեցել Ստեփան Շահումյանի հետ, փրկարար դեր խաղացել նրա կյանքում: Եվ հեղափոխական գործիչն էլ նրա կյանքի նեղ պահին օգնության ձեռք է մեկնել՝ 1918-ի ջարդերի ժամանակ օգնել է, որ անցնի Պարսկաստան: Պարսկաստանի Ռեշտ քաղաքում՝ նրա ղեկավարած դպրոցում ուսուցչություն է արել Հրաչյա Աճառյանը: Վերջինս գրել է իր կյանքի պատմությունը և նկարագրել ուսուցչական կյանքը Ռեշտում և այդ կապակցությամբ հիշել Հաբեթ Խաչատրյանին, բարյացակամ տողեր նվիրելով նրան:

Իմ ծանոթության շրջանում նա 72-րդ աշխատանքային դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչն էր: Ուսուցչություն է արել նաև 70-րդ դպրոցում: Թեև դասավանդել է մաթեմատիկա, բայց ուսուցիչների երկարատև բացակայության դեպքերում փոխարինել է նրանց, հատկապես հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին: Նրա աշակերտներից է եղել Խաչիկ Մոմջյանը, մեր երկրի ճանաչված փիլիսոփաներից, որը աշակերտության տարիներին աչքի է ընկել քիմիայից: Աչքի ընկնող, պարզապես փայլուն աշակերտ է եղել Ռուբեն Ղորթմազյանը, դժբախտաբար շուտ, 22 տարեկանում վախճանվել է: Նրա աշակերտներից է նաև Մխիթար Ջրբաշյանը, որի հետ կապել է մաթեմատիկական փայլուն ապագա, հետագայում ակադեմիկոս: Նաև Արամ Ղանալանյանը, հետագայում Հայկական Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, որի կյանքում, ինչպես պատմել է ընկերս՝ Հաբեթ Խաչատրյանը, խաղացել է բախտորոշ դեր: Նա այն ուսուցիչներից էր, որ աշա-

կերտներին տարբերակել են, ամեն մեկի մեջ որոնել ուրույն գծեր, անհատական նկարագիր։

Նրանից շատ բան եմ լսել Սիկոլ Աղբալյանի մասին։ Պատմում էր իր տեսած ներկայացումներից։ Սիրանույշի պաշտամունքն ուներ։ Հիացած էր դերասան Շահխաթունիով։ Հիշում էր Զարիֆյանի խաղը վանահոր դերում։ Մոտ հարաբերությունների մեջ է եղել Փանոս Թեոլեմեղյանի, վահան Տեր-Առաքելյանի, Կարո Աղաբաբյանի, Արշավիր Մելիքյանի, Դրաստամատ Տեր-Սիմոնյանի, Պետիկ Թորոսյանի հետ։

Պարզ մարդ էր Հաբեթ Խաչատրյանը՝ օրինակելի հայր, բարի ու ընդառաջող, ազնիվ բնավորությամբ, կատակի ու սրամիտ խոսքի սիրահար։ Լավ զրուցակից էր, համով-հոտով պատմող։

Հակառակ իր նվիրված գործունեությանը, Հաբեթ Խաչատրյանը երեք անգամ բանտ է նստել։ Մեկ անգամ 20-ական թվականներին, մեղադրվելով, թե մի ժամանակ դաշնակցական է եղել։ Երկրորդ անգամ՝ 1935-ին, դպրոցում ի լուր շատ ուսուցիչների, հանդգնել է ասել, թե Բերիայի գրքում անտեսված է Շահումյանի դերը անդրկովկասյան հեղափոխական շարժումների պատմության մեջ։ Մի տարուց հետո ազատել են, թույլ չտալով սակայն, որ ապրի Անդրկովկասում, ինչպես նաև Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, և նա ստիպված ընտանիքն առել ու մեկնել է Ռոստով։ 1938-ին նորից է ձերբակալվել ու աքսորվել հեռավոր ճամբարներ, առանց նամակագրության իրավունքի ու իր մահկանացուն կնքել անհայտության մեջ։

Ես այստեղ էլ կավարտեի այս տխուր պատմությունը, եթե չփեսանայի Խաչատրյանների ընտանիքին, դառնալով նրա՛ց ավագ աղջկա ամուսինը։ Նրանով հափշտակված եմ եղել 1926-ից, Ցագվեր ամառանոցավայրում, բացատրվել եմ ու մերժվել։ Ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ հետո ես այլևս չեմ հանդիպել մի կնոջ, որ ունենա լուսնի ձգողական ուժը, ինչպես նա։ Շատ տարիներ անց, երբ նա հեռացավ ամուսնուց, ես նորից բացատրվեցի, և նա իր յոթ տարեկան տղայի հետ մեր տուն մտավ, բերելով ինձ բախտ ու երջանկություն։ Նա ինձ հեռու է պահել ծայրահեղ քայլերից և մեծ մասամբ ճիշտ է եղել։ Նրա դերն իմ կյանքում ճակատագրական է եղել։ Նա

համաձայնեց իմ կինը լինել, իմանալով, որ թոքախտավոր եմ։ Իր առաջ նպատակ դրեց փրկել ինձ և հասավ դրան, ու եթե ես մինչև հիմա ապրում եմ և կատարելապես առողջ, դրա համար նախ և առաջ պարտական եմ կնոջս՝ նրա մարդկային անձնվեր նկարագրին։

ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Երկու անգամ բանտ է նստել։ Մեկ՝ Հայաստանի անկախ հանրապետության օրերին, մեկ էլ՝ 1937 թվականին։ Ես չգիտեմ, թե կյանքի պարադոքսալ այս ընթացքն ինչպես մեկնել։ Ուրեմն՝ ձեռք են բարձրացրել մեկ կոմունիստական գաղափարներ որդեգրելու պատճառով, մեկ էլ այդ նույն գաղափարի մարդիկ նրան հայտարարել են ժողովրդի թշնամի։

Դիլիջանի Ստեփան վարժապետի դուստրը, ստանալով գիմնազիական կրթություն, նվիրվել էր երկրում ժողովրդական կարգեր հաստատելուն, իսկ հետո էլ ծառայել կրթական գործին։ Երբեմն կառքով, երբեմն մեքենայով, ավելի հաճախ ոտքով շրջել է գյուղերը, այցելել դպրոցները և վերադառնալով Երևան, շատ դռներ է բախել, պետական շատ այրերի միջամտությանն է ապավինել, որ կարելի լինի օգտակար լինել ժողովրդական լուսավորության տարածման գործին։

Մի խոսքով, իր գործն ու ասպարեզը սիրող պաշտոնյա։ Պաշտոնյա՞։ Ո՛չ, գործի՛չ՝ բառիս բուն իմաստով։ Առավոտյան դեմ աշխատանքի է գնացել և մխրճվել գործի հետ կապված մտահոգությունների մեջ, որոնցից շատերը համարյա լուծելի չէին։ Գալիս էր տուն, ընտանիք բերելով աշխատանքային մթնոլորտը։ Քուն մտել՝ մտորելով վաղվա անելիքների շուրջ. ո՞ւմ պետք է հանդիպի, ի՞նչ հարցեր է լուծելու, ի՞նչ խորհրդակցության է մասնակցելու, ի՞նչ հարցեր է արծարծելու։

Մի խոսքով, հագեցած կյանք, և չնչին հաջողությունները նրան թվացել են հաղթանակներ, որովհետև գոհացում պահանջող հարցերը շատ էին, գոհացնելու միջոցները՝ սակավ։

Իր կյանքը կապել է այնպիսի լուսավոր անձնավորության հետ, ինչպիսին Ներսիկ Ստեփանյանն էր։ Մասնագիտու-

թյամբ տնտեսագետ, բայց մեկը գրականությունն ու արվեստը նրբորեն ըմբռնող այն մարդկանցից, որոնց գոյությունն ու գործունեությունը ժողովրդի հոգևոր կյանքի մակարդակն են որոշում: 30-ական թվականներին Թիֆլիսում հաճախ եմ լսել Ներսիկ Ստեփանյանի անունը որպես տնտեսագիտական մտքի փայլուն ներկայացուցչի, որի մտքերն ու առաջարկները հարգի էին Անդրկովկասում:

Կյանքի այսպիսի ընկերը ունենալով, Սերիկ Դավթյանը ուզեր-չուզեր չպետք է մնար ուսման այն կետի վրա, որ նրան տվել էին դպրոցն ու համալսարանը: Նա հասկացել է, որ կյանքից հետ չմնալու համար՝ պետք է պաշարն ընդարձակի, հարստացնի: Նա լավ կրթություն էր ստացել, ավարտել էր Թիֆլիսի իգական գիմնազիան, սովորել Սարատովի համալսարանի պատմաբանասիրական բաժնում, մի տարի էլ Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետում: Նրա հայերենը ժողովրդական խոր արմատներ ուներ: Ռուսերենը լավ էր: Մի փոքր էլ գերմաներեն գիտեր: Պատմական գիտելիքները, հայկական, հետո էլ եվրոպական, հիմնավոր էին այնքան, որ նրա նոր ընկալումները կենսական շարունակության համար ունեին բարերար հող: Գեղարվեստական պատրաստությունը վայրիվերո տպավորությունների դումար չէր: Լավ գիտեր, թե ով է Հովհ. Թումանյանը և ինչ տեղ ունի մեր ազգային մշակույթի մեջ: Գիտեր, թե ինչ արժեքներ են Սարյանն ու Կոջոյանը կամ Թամանյանը: Նրա համար առեղծվածներ չէին, ոչ էլ լոկ համբավավոր անուններ չէին գիտության այնպիսի դեմքեր, ինչպես Աճառյանն ու Աբեղյանը: Լինելով թվածո անունների կրտսեր ժամանակակիցը, նա իր վրա կրել է նրանց ազդեցությունը ու, չնայած իր պաշտոնին, միշտ էլ ունեցել է խոնարհ երկրպագություն այդ մեծությունների նկատմամբ:

Սերիկ Դավթյանի հետ անձնական ծանոթություն ունեի դեռ 30-ական թվականների կեսերից, բայց մտերիմներ եղանք 50-ական թվականներից:

Աքսորից վերադարձել էր 1947-ին և նրան թույլ չէին տվել Երևանում ապրել և նա հաստատվեց ծննդավայրում՝ Դիլիջանում:

Պաշտոն էին տվել՝ վարել քաղաքային գրադարանը:

Ու ես, ամառները, որ ապրել եմ Դիլիջանում, հաճախ եմ այցելել նրա գրադարանը՝ ընթերցանության գիրք վերցնելու։ Հիշում եմ՝ նա իր շուրջը համախմբել էլ լավ երիտասարդություն։ Եթե նկարչության ձիրք ունեին, վանիկ Շարամբեյանից էին օգնություն խնդրել։ Եթե ձեռագործ անող աղջիկներ էին, ինքն է պարապել հետները։

Երբ իրավունք ստացավ փոխադրվել Երևան՝ առաջարկեցի նրան աշխատել արվեստի ինստիտուտում։

Ես համակված էի ժողովրդական արվեստի ուսումնասիրությունը լավ հիմքերի վրա դնելու ձգտումով։ Չհամարելով նրան արվեստաբան, դիլիջանյան մեր զրույցներից հասկացել էի, որ նա պատրաստի ազգագրագետ է, որ լավ գիտի այն ժողովրդական կենցաղը, ծեսերն ու սովորույթները, որոնցից ծնվում են գորգը, մանավանդ կարպետը, խուրջինը, ժանյակը...

Նա սիրով եկավ ինստիտուտ և իբրև մեր աշխատակից էլ ավարտեց իր արգասավոր կյանքը։

Գրքեր գրեց, դիսերտացիա պաշտպանեց։ Ամենակարևորը՝ գործ գլխավորեց, արշավախմբերի մասնակից եղավ։

Նա ապրում էր Թումանյան փողոցում, ու ես հաճախ էի այցելում նրան։ Զրույցը տարբեր հարցերի շուրջն է եղել։ Ես նրան հարցուփորձ եմ արել մեր կուսակցական և պետական այն ղեկավարների մասին, որ գործի գլուխ էին մինչև 1937 թվականը։ Հեղափոխական պայքարի, պետական գործունեության, աքսորի բովով անցած, մեծ կենսափորձի տեր արդարամիտ մարդ. նա բնութագրում էր անաչառ, նշելով ամեն մեկի լավն ու վատը։

Այս զրույցների մեջ մեծ տեղ ունեին իր բանտարկության ու աքսորի պատմությունները։ Շատ է պատմել Մագադանից։ Զարմանալի բան. հակառակ այդ ծանր փորձությանը, նրա մեջ չկար ո՛չ մաղձ, ո՛չ դառնություն։ Պահպանել էր կյանքի սերը, լավատեսությունը։ Կենցաղային հետաքրքիր դրվագները, լավատեսությունը։ Կենցաղային հետաքրքիր դրվագներ է պատմել, կատակախառն պատմություններ և այն հաներ է պատմել, կատակախառն պատմություններ և այն համոզման էր, որ մարդու ճշմարիտ էությունը, նրա բարոյականության չափը ստուգվում է բանտում և աքսորում։

Մարդու ստույգ ճանաչողություն ուներ։ Հայտնում էր իր կարծիքը մեզ շրջապատող մարդկանց մասին, զգուշացնում

հեռու մնալ պաշտոնասեր, երախամատոր մարդկանցից, և նրա ասածները, ցավոք, մեծ մասամբ ճիշտ դուրս եկան։

Սիրում էր երիտասարդներին, մանավանդ նրանց, որոնք հոտառություն ունեն, ճաշակ և մի բանի հասնելու անկեղծ ձգտում։

Աշխատասեր էր չափազանց։ Թույլ էինք տալիս, որ անհրաժեշտ գրքեր, նյութեր հավաքած մեկնի Դիլիջան՝ իր հայրական տանը հանգիստ պայմաններում պարապի։ Շատ է պատահել այցելության ենք գնացել իրեն և միշտ տեսել պարապելիս...

Այն կարծիքի էի, որ մեր միջավայրում նա միակն էր, որ կարող էր կիրառական արվեստի տերմինների բառարան կազմել, և նա գործի անցավ։ Ինչ-որ չափով աշխատեց, բայց, ափսո՜ս, չհասցրեց ավարտել։

Մենք երկար աշխատեցինք միասին, ու ես, անկեղծ ասած, զարմացած էի նրա բնավորության մի գծի վրա։ Ծայրահեղ կարգապահ։ Մեծ պաշտոններ է ունեցել, որոնք, թվում է հավակնոտ պիտի դարձնեին բնավորությունը, բայց հակառակ դրան՝ համեստության մարմնացում։ Ինստիտուտի ղեկավարության կարգադրությունները նրա համար օրենքի ուժ ունեին։ Ո՛չ անցյալը, ո՛չ տարիքը, ո՛չ հեղինակությունը նրան թույլ չէին տալիս տարբերվել ուրիշներից, կամ որևէ արտոնություն շահել։ Ինչպես բոլորը, այնպես էլ ինքը։ Աշխատակիցներից խմբեր կազմած մեկնել ենք Ալավերդի, Նոյեմբերյան, չեմ հիշում, որ մերժած լինի։ Անմռունչ միացել է գնացողներին և ճանապարհի դժվարությունները կրել մյուսների պես։

Ես նրան հաճախ եմ տեսել Իսահակյանների, Սարյաններ ի տանը։ Նրան միշտ սիրով են ընդունել թե բանաստեղծն ու նկարիչը, թե տիկին Սոֆիկը և տիկին Լյուսին՝ ամեն մի այցին շրջապատել փայփայանքով։

Ես հաճախ եմ նրա հետ խորհրդի նստել։ Միշտ էլ լսել եմ այնպիսի խրատներ, որոնք ինձ հեռու են պահել սխալներից։

Մեր աչքի առաջ սկսեց նիհարել։ Հետո անկողին ընկավ։ Էլի էր հիվանդացել, միշտ էլ ժպիտով էր հաղթահարել ցավը։ Վերջին անգամ ժպիտ չկար դեմքին։ Զգում էր, որ վեր չի կենա։ Այդպես էլ եղավ։ 85 տարեկան հասակում կնքեց իր

մահկանացուն ու նա, ինչպես հազորդեց դուստրը՝ Ներիկը, խնդրել էր, որ իրեն տաննենք Դիլիջան և այնտեղ հողին հանձնենք։

Այդպես էլ արինք։

ՉԵՐԱԶԻ ԴՈՒՍՏՐԸ

Երբ շնքսպիրագիտության հայկական կենտրոնը ստեղծելու վրա էի ու մտահոգված, թե ովքեր են աշխատելու, ինձ խորհուրդ տվին նկատի ունենալ Բյուրական Անդրեասյանին։ Ասացին՝ «Անգլիագետ է և ազնիվ նկարագրի տեր մարդ»։ Հրավիրեցի զրույցի՝ համոզվելու, թե հարմա՞ր է արդյոք։ Իմ բոլոր հարցերին գոհացուցիչ պատասխան տալուց հետո, ինձ հանկարծակիի բերեց.

— Դուք գիտե՞ք, որ ես Չերազի դուստրն եմ։

— Մինա՞ս։

— Ո՛չ։ Մինոս Չերազը այդպես էլ չամուսնացավ։

— Հապա՞։

— Նրա հղբորորդու։

— Վահե՞ն։

— Այո։ Այդ իմանալուց հետո՞ էլ ինձ կընդունեք աշխատանքի։

— Իհ՛։ ինչո՞ւ ոչ։

— Մորս էլ 1937-ին են բանտարկել։

— Ի՞նչ անենք։

— Ուզում եմ իմ խղճի առաջ հանգիստ լինել։ Ուզում եմ մեր տան պատմությունն անել, որ քիչ թե շատ մանրամասն իմանաք ծնողներիս գլխին եկածը և նոր միայն վճիռ կայացնեք։

— Ես որոշումն ընդունել եմ։ Դուք վաղվանից մեր աշխատակիցն եք։ Ինչ վերաբերում է ձեր պատմությանը, կլսեմ, որքան էլ մռայլ լինի։

Ծանր լռություն իջավ։

— Հայրս Չերազների գերդաստանից է, ամիրայական ընտանիքից։ Պապիս պապը Թուրքիայի տիրապետության դեմ ուղղված հունական ապստամբության մասնակիցներից է։

Երկու որդի է ունեցել՝ Մինաս և Գասպար: Գասպարը մասնագիտությամբ իրավաբան էր, զարգացած մարդ, եվրոպական լեզուներ իմացող, հրապարակախոս, տպագրվել է «Բյուզանդիոնում» և «Բազմավեպում»: Եղել է նաև մանկավարժ, բացի այդ՝ մանկագիր: Պոլսում լույս են տեսել երեխաների համար գրված նրա գրքույկները: 1915-ին Վարուժանի, Սիամանթոյի և այլ մտավորականների հետ աքսորվել է: Աքսորի ճանապարհին մի թուրք սպա, որի հետ Գասպարը սովորել էր համալսարանում, ազատել է նրան, բայց Պոլիս հասնելու ճանապարհին ցնորվել է:

Ահա այս Գասպարի որդին՝ Վահանը, որ իմ հայրն էր, իրեն նվիրել է մարզական ասպարեզին: Դեռ 1908-ին հիմնել է ֆուտբոլի առաջին հայկական թիմը «Տորք» անունով: Անդրանիկի թարգմանիչն է եղել, մասնակցել է շատ ճակատամարտերի: Երբ կազմավորվել է Հայկական անկախ հանրապետությունը, հորս հրավիրել են Հայաստան՝ ղեկավարելու մարզական կյանքը Եղնիկ Քաջունու և Տիգրան Խոյչանի հետ միասին: Երկուսն էլ կան, հիմա ապրում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հայրս սկաուտական շարժման հիմնադիրներից էր Հայաստանում, որդեգրելով «առողջ հոգին առողջ մարմնի մեջ» նշանաբանը: Ոչ մի կուսակցության չի հարել:

Հայրս, մորս՝ Վարդանուշի, երկրորդ ամուսինն էր: Առաջինը՝ Պողոս Զեննեյան, դպրոցի տնօրենն էր, ուսանել էր Շվեյցարիայում: 1915-ին նրան մի քանի հարյուր աշակերտների հետ թուրքերը փակել են դպրոցում ու շենքը կրակի տվել: Այրիացած մայրս ու նրա տալը՝ Թագուհին, էջմիածին են փախել, հետները բերելով մի քանի հարյուր որբ մնացած երեխա: Գաղթի ճանապարհին գտել են անտեր մնացած գրադարան, և մայրս ու Թագուհին մի-մի գիրք են տվել երեխաների ձեռքը, որ բերեն Հայաստան:

Հայրս ու մայրս հանդիպել են միմյանց 1916-ին գաղթի ճանապարհին, բայց ամուսնացել են ուշ, էջմիածնում՝ 1924-ին: Նրանց պսակից երկու շաբաթ հազիվ անց, հորս բանտարկել ու աքսորել են Սիբիր: 1926-ին վերադարձել է և մի տարի չանցած՝ նորից բանտարկել են, փոխադրել Թիֆլիս և առանց դատ ու դատաստանի, հարցաքննության ժամանակ քննիչը ատրճանակի մի գնդակով սպանել է:

Ինձ պահել է մայրս: Նա հաշվապահ էր Լենինականի որբանոցում, թատրոնում և այլ հիմնարկներում: Մայրս սիրված մարդ է եղել: Որբուհիները նրան շատ էին սիրում: Նույնը և հայրս, որ Ալեքպոլի ամերիկյան որբանոցներում մեծ գործեր է տեսել, իբրև ուսուցիչ և դաստիարակ: 1936-ին մորս ազատել են աշխատանքից: Մեր տունն այլևս մարդ չէր գալիս, խուսափում էին: Մի աղջիկ, որին մայրս խնամել էր որբանոցում, որպես մեքենագրուհի աշխատում էր ներքին գործոց ժողկոմատում, 1937-ին, ուշ գիշերով եկել է մեր տուն և մորս խորհուրդ տվել հեռանալ Լենինականից, գնալ Ռուսաստանի խորքերը, ասելով, թե ինքը լսել է, որ մի քանի օրից իրեն տանելու են:

— Ո՞ւր գնալ: Օտարության մեջ ո՞ւմ վրա հույս դնել: Վերջապես, ի՞նչ եմ արել, որ բռնեն:

Այս մտատանջության մեջ էր մայրս:

1937-ի ուշ աշնանը, գիշերվա ժամը 3-ին եկան մեր տուն մի կին և չորս տղամարդ: Խուզարկություն: Տակնուվրա արին տունը: Հարուստ գրադարան ունեինք, մեծ մասամբ օտար լեզուներով գրքեր: Շատը տարան, իսկ ինչ որ չտարան, պահանջեցին այրել:

Ես տասը տարեկան էի: Զայնս գլուխս էի գցել:

— Ինչ՞ եք ուզում մեզանից: Ո՞ւր եք տանում մորս, անխիղճնե՛ր:

Մորս տարան: Մնացինք տատս ու ես: Երևի իմ կյանքի ամենամղձավանջային օրն էր դա: Ես միանգամից մեծացա, սկսեցի շատ բան հասկանալ, քան իմ հասակի երեխան կարող էր ըմբռնել: Այդ օրերի հասցրած վերքը մինչև հիմա էլ մխում է սրտիս մեջ ու երևի երբեք չի սպիանա: Ինձ թվում էր, որ ինձանից ավելի դժբախտ երեխա չկա աշխարհիս երեսին: Ի՞նչ իմանայի, որ նույն դժբախտության մեջ էին հազարավոր երեխաներ:

Դրանից հետո մորս չտեսա ու մինչև օրս էլ չգիտեմ, թե ե՛րբ ու որտե՛ղ է աչքերը փակել մայրս: Ուր գնում էինք տատ-ի հետ, ասում էին՝ այստեղ այդպիսի մարդ չկա: Մեր բոլոր դիմումները մնացին անպատասխան:

Հայրս մեղադրվել է դաշնակցական լինելու համար, թեև նա երբեք դաշնակցական չի եղել: Մայրս այդպես էլ չիմա-

ցավ, թե իր մեղքն ի՞նչ էր։ Երևի այն, որ դաշնակցականի կին է եղել։ Ասում են, որ մորիցս պահանջել են, որ խոստովանի ամուսնու և իր գաղտնի գործունեությունը։ Բայց նա ի՞նչ պետք է խոստովաներ։ Խոշտանգել են այնքան, որ մահացել է։

Ինձ տեր կանգնեց մորեղբայրս՝ վարդգես Անդրեասյանը, որին ճանաչում եք։ Ջերազ ազգանունը փոխարինվեց Անդրեասյանով։ Հարցը հո միայն մարդասիրությո՞ւնը չէ, որ քեռին իր խնամքի տակ առավ մի որբ երեխայի։ Հարցը քաղաքացիական խիզախությունն էր։ Չէ՞ որ իմ ճակատին դրոշմված էր «ժողովրդական թշնամու զավակ» լինելու խարանը։ Քեռիս հայրություն արեց։ Մարդ ու կին պահեցին, մեծացրեցին ինձ։

Մորս ձերբակալումից հետո մեր տուն ոտք դնող չկար։ Այնքան խորն էր վիրավորանքս, որ ես ինքս սկսեցի մարդկանցից խուսափել, հանդիպելու առիթներ չփնտրել։ Ես լավ սովորող եմ եղել դպրոցում, դրանից հետո կրկնապատկված ուժերով էի սովորում, որ ամոթով չմնամ ուսուցիչներիս առաջ, որոնք ինձ լավ էին վերաբերում։ Ու ես տարիք էի առնում, մեծանում որպես աշխարհի խորթ զավակ։ Ես մեծացա, ամուսնացա, ընտանիք կազմեցի, երեխաներ ունեցա, շատ բան փոխվեց իմ կյանքում, մեր երկրում նույնպես շատ բան փոխվեց և այնուամենայնիվ մի փուշ մնաց սրտիս մեջ։

Ահա իմ ամբողջ պատմությունը։

Հազիվ զսպելով արցունքներս, լսեցի Բյուրակն Ջերազին, ու մտածեցի, որ արևմտահայերից շատերի ճակատագիրը հար և նման է այս սրտակեղեք պատմությանը։

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ

1938-ի աշնանն էր, հոկտեմբեր ամսին։ Կանչեցին Կենտկոմ, գաղափարական հարցերով զբաղվող քարտուղար Սարգիս Ղևոնդյանի մոտ։

— Ընկեր Զարյան, մտադիր ենք ձեզ հանձնել Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչի պաշտոնը։ Ի՞նչ կասեք։

խառն էին, և տեղաշարժերն անխուսափելի։ Հակված էի մտածելու, որ ճիշտը վերջին բացատրությունն է։

Առավոտյան քայլերս ուղղեցի դեպի պետհրատ, որ հեռու չէր իմ տնից, ներկայացա գեկավարությանը։ Ծանոթություն։ Դիրեկտորի հետ ունեցած մի կարճ երկխոսությունից հետո հայտնվում եմ իմ սենյակում, մեն մենակ իմ գրասեղանի հետ, բացում եմ դարակս և այնտեղ գտնում Միքայել Նալբանդյանի գրաֆիկ մի նկար, որ մինչև հիմա էլ չհասկացա, թե ո՞ր նկարչի ձեռքի գործն է։

Նայում եմ նկարին և մտածում, թե քանի՞ տարեկան էր Նալբանդյանը, ընդամենը 31, երբ հանձն առավ մեկնել, հասնել Հնդկաստան, Կալկաթա քաղաքը՝ ստանալու Նոր Նախիջևանի հայկական համայնքի կրթական հաստատությունների համար հայ վաճառականի թողած ժառանգությունը։ 31 տարեկան։ Ես քանի՞ տարեկան եմ՝ 29։ Քեզանից ընդամենը երկու տարով փոքր։

Մտածում եմ և հանկարծ մի ներքին ձայն ասում է ինձ՝ «Իուբե՛ն, դեռ գործ չարած, մի կորցրու գլուխդ,— ինչպես ես թույլ տալիս քեզ համեմատվելու Նալբանդյանի հետ։ Դու որտեղ, նա որտեղ։ Դու միշտ համեստ ես եղել, համեստ էլ մնա, պարզապես թևերդ քշտիր ու գործ արա։ Լսիր ինձ, միշտ ունկնդիր եղիր իմ ձայնին։ Ես քո խիղճն եմ, նա՛, որ քեզ հեռու է պահել սխալ քայլերից և ամեն անգամ, երբ չես լսել ինձ, սայթաքել ես։ Մի հուսահատվիր և հավատա ինքդ քեզ։ Դու կարող ես։ Եվ կանես ամեն ինչ այնպես, ինչպես պետք է։ Քեզ մի համեմատիր ուրիշի հետ, ով էլ լինի նա՝ Նալբանդյան կամ Զարենց, թե մի շարքային, անգամ քո արժանիքները չունեցող մի պարզ մարդ։ Ուրիշի կյանքը երբեք չի կրկնվում ուրիշի մեջ։ Եվ պետք էլ չէ։ Ամեն մի անձնավորություն անկրկնելի է։ Դրանով է կյանքը գեղեցիկ և հարուստ։ Ինչո՞ւ կրկնել ուրիշի կյանքը, երբ այդ ուրիշը ուրիշ է և երբեք դու չես կարող այդ ուրիշը լինել, ավ էլ նա կարող է լինել այն, ինչ դու ես։ Գործի անցիր այն վստահ համոզվածությամբ, թե դու հենց այս գործի համար ես ծնված։ Ջափավորիր քեզ, թող միտքդ, միտքդ իշխի զգացմունքներիդ վրա, պոռթկումներդ սանձահարիր։ Միայն իմացիր մեծի հետ վարվել կրտսերի խոնարհությամբ, բայց քեզնից փոք-

ըերի հետ էլ քեզ պահիր մեծ եղբոր պես։ Միշտ աշխատիր հասկանալ ուրիշներին։ Մի շտապիր բորբոքվել ու մեղադրել, դա հեշտ է, աշխատիր հասկանալ, ճանաչել, ըմբռնել։ Երբեք չմտածես, որ եթե պաշտոն ունես, ուրեմն՝ թուրդ կտրում է։ Թող մարդիկ իմանան, որ թուր ունես, բայց մի շտապիր պատյանից հանել։ Մեծերի հարգը պահիր, մնալով ինքդ քեզ հավատարիմ, երիտասարդներին ընդառաջող եղիր, նրանց առաջ ճանապարհ բացող։ Դե՛, կարծում եմ, մեր զրույցը երկարեց, ես ձանձրացա, երևի դու նույնպես։ Հիշիր միայն՝ մինչև օրս այլ կյանք էր, հիմա՝ ուրիշ։ Դե՛, ուրեմն՝ ի գործ»։

ԻՆՉ ԿԱՐ ԳՐԱՍԵՂԱՆԻՍ ԳԶՐՈՑՈՒՄ

Իմ մասին խոսելիս ամբիոնից ասվում է, թե երիտասարդ Զարյանը Հայպետհրատում հաջորդեց կյանքից ողբերգականորեն հեռացած Զարենցին։ Իմ և Զարենցի արանքում եղել են Ռաֆայել Աթայանը, նաև Ալազանը, Համլակ Սիրասը, Սահակ Կիրակոսյանը, և նոր միայն ես՝ 1938-ի հոկտեմբերի չեմ հիշում քանիսից։ Նրանք եղել են կարճ ժամանակով, իսկ ես 1938-ից մինչև 1947-ը։

Տասը տարի...

Այն ժամանակ Հայպետհրատը Ալավերդյան փողոցի վրա էր, առաջին տպարանի վերին հարկում։

Առաջին օրն իսկ զբաղվեցի կարգի բերելով գրասեղանս, որի դարակներում ինչ ասես որ չկար՝ պայմանագրեր, նամակներ, զանազան գրություններ։ Այդ թղթերը ցույց տվի հրատարակչության տնօրենին, որը աչքի անցկացնելուց հետո, առաջարկեց պատռել և դեն գցել։

Ահա այդ թղթերի մեջ էր նաև Մարտիրոս Սարյանի ինքնակենսագրական տեղեկանքը, որը դրի մի թղթապանակի մեջ ու պահեցի։

Մեքենագրված յոթ էջանոց այս տեղեկանքը Սարյանը տեղ-տեղ ենթարկել է խմբագրական ճշտումների։ Նկատելի է և ուրիշի ձեռք, որը նույնպես ուղղումներ է արել։ Որքան

հասկացա՝ կապույտ մատիտով արված ուղղումներն արել էր արվեստաբան Ռուբեն Դրամբյանը։

Այդ թղթերի մեջ էր և Մարիետա Շահինյանի կարճառոտ նամակը՝ «Հարգելի ընկերներ»։ Ըստ երևույթին, նամակն ուղղված էր Հայպետհրատի ղեկավարներին։ Ինչպես երևում է, հրատարակչությունը ծրագրել է Սարյանին նվիրված հոդվածների ժողովածու լույս ընծայել և դիմել են Շահինյանին, որ նա ևս հոդված գրի։ Մ. Շահինյանն իր նամակում խնդրում է իրեն ուղարկել Սարյանի նոր, իրեն անծանոթ նկարների վերատպությունը և մյուս հոդվածները, որպեսզի չկրկնվի։ Սարյանի ինքնակենսագրականը, հավանաբար, գրվել էր այդ ժողովածուի համար։ Թերևս դրանով պետք է բացվեր գիրքը։ Սարյանի ինքնակենսագրականը թվագրված է՝ 1933։ Մարիետա Շահինյանի նամակի գրության ժամանակը հայտնի չէ։

ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԻՆՔՆԱԳՐԵՐԸ

Գտածս թղթերի մեջ էին նաև Ռաֆայել Պատկանյանի «Տագնապ», «Մի երգիլ, իմ սոխակ», «Կարինի սոխակ» ոտանավորների ինքնագրերը։

Որտեղի՞ց էին, հասկանալի չէր։ Ինչ-որ մեկը ձեռագրերի վրա մատիտով գրել էր՝ «Պատկանյանի ինքնաձեռագիրը»։ Իսկ մեկի տակ («Կարինի սոխակ») գրված է նաև «Որով երգել է Գենջյանը»։

Պահեցի, որ չկորչի։

Տարիներ անց, Սահակ Կիրակոսյանին, որ Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր ինձանից առաջ, հարցրի, թե Ռ. Պատկանյանի ինքնագրերը որտեղի՞ց են։ Ասաց.

— Մի մարդ եկավ հրատարակչություն։ 1937-ին էր կարծեմ։ Քառասունն անց մարդ էր, գուցեև հիսունն արդեն բոլորած։ Խոսում էր ռուսերեն, պարզվեց, որ հայերեն չգիտե, ասաց, որ Նոր Նախիջևանի բարբառով կարող է վենցաղային հարցերի շուրջ բացատրվել։ Հայտնեց, որ ինքը Ռաֆայել Պատկանյանի թոռն է ու իմ սեղանին դրեց պապի ինքնա-

գրերից երեքը: Ասաց, որ եկել է Ռոստովից՝ թե Մոսկվայից, (չեմ հիշում) և ուզում է իմանալ, թե ինչո՞ւ իր պապի երկերը չեն հրատարակվում:

Ես չէի կարող նրան ասել իսկական պատճառը, թե իր պապը ազգայնամոլ բանաստեղծ է եղել, հետևապես մեզ համար անընդունելի է և այլն, բայց խոստացա զբաղվել այդ հարցով և իրեն նամակ գրել, խնդրեցի թողնել հասցեն, նա էլ ասաց, թե հիմա չի կարող ինձ հասցե թողնել, որովհետև վերադառնալուն պես նոր բնակարան է ստանալու, բայց հենց որ պարզ լինի նոր բնակարանի հասցեն, կգրի ինձ: Գնաց, ու ես նրանից երկու թե երեք ամիս ոչ մի նամակ չստացա: Իսկ թե հետո ինչ եղավ, քեզ լավ հայտնի է:

ԵՍ՝ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տասը տարվա չափ ես գործի մեջ եղա: Տնօրեններ փոխվեցին՝ Դոնոյանին հաջորդեցին Եվգենյա Մելիքյանը, Հարություն Մկրտչյանը, Տաճատ Ալեքսանյանը...

Ես հատկանում էի մի շատ կարևոր բան. երբ ոտք ես դնում նոր բնագավառ, պետք է ծրագիր ունենաս, պետք է իմանաս, թե ի՛նչ ես ուզում անել, ի՛նչ ճանապարհով ես ընթանալու: Եթե ոչ՝ ավելի լավ է ոչինչ չարած հեռանալ, քան սպասել, որ ուրիշները ցույց տան դուռն ճանապարհը:

Իմ կյանքի հորիզոնում ընդգրկվեցին այնպիսի մարդիկ, ինչպես Ավետիք Իսահակյան և Դերենիկ Դեմիրճյան, Մանուկ Աբեղյան և Հրաչյա Աճառյան, Մարտիրոս Սարյան և Հակոբ Կոջոյան, Ստեփան Մալխասյան և Գրիգոր Զափանցյան, Ստեփան Զորյան և Միքայել Մանվելյան, Նաիրի Զարյան և Գեղամ Սարյան, Հովհաննես Շիրազ և Խաչիկ Դաշտենց, Հրաչյա Քոչար և Սուրեն Վահունի, Սողոմոն Տարոնցի և Սիրաս, Քրիստափոր Թափալեցյան և...

Գործի անցա և կես տարու չափ ճանապարհս չէի գտնում: Աստիճանաբար գտա ինձ ու ականջիս Զարենցի խրատն էր՝ «Մենք՝ ժամանակակիցներս, մեր անցյալի շարունակությունն ենք, օրինական ժառանգ այն բոլորի, ինչ որ ստեղծել է մեր ժողովուրդը խորհնացուց և ավելի վաղնջական դարերից

ակսած»: Եվ գործունեության ծրագիրը հետզհետե գծագրվեց, ասպարեզ բերել մեր այն դասական հեղինակներին, որոնք արգելքի տակ են եղել՝ Աբովյան («Վերք Հայաստանի»), Րաֆֆի («Սամվել», «Դավիթ Բեկ», «Կայծեր»), Մուրացան («Գևորգ Մարզպետունի»): Հիմա, երբ գրվում են այս տողերը, թվում է, թե ի՞նչ զարմանալի բան է, որ, բայց այն ժամանակ հանդգնություն էր այդ մասին մտածելն անգամ, մնաց դրանց հրատարակությունը գլուխ բերելը: Պետք էր համոզել, պետք էր ապդել, հող նախապատրաստել ու եթե Աբովյանի գործը համեմատաբար հեշտ եղավ, ապա Րաֆֆունը՝ դժվար: Բայց, ի վերջո, դա էլ հաղթահարվեց:

Համոզիչ լինելու համար բերեմ մի փաստ միայն:

1938-ի տարվա վերջերին, եթե չեմ սխալվում նոյեմբեր ամսին, այսինքն հենց այն ժամանակ, որ նոր էի գործի անցել, գրողների տան ամբիոնից պաշտոնական մի զեկուցման ժամանակ ասվել է.

«Րաֆֆին և Պատկանյանը պատմական փաստեր են, հետևապես չի կարելի ոչնչացնել: Պատմական մոտեցում է պետք: Պետք է ճիշտ լուսաբանել նրանց դերը մեր գրականության մեջ: Մենք գիտենք, որ Րաֆֆին և Պատկանյանը եղել են ազգայնականության դրոշակակիրներ: Շատ տարիներ նրանք թունավորել են մեր երիտասարդությանը, թեև երկուսն էլ իրենց գործունեության հատկապես վաղ փուլում ունեցել են լուսավորական, դեմոկրատական հայացքներ, սակայն Րաֆֆին և Պատկանյանը մեր գրականության մեջ հանդիսանում են բուրժուական ռոմանտիզմի և ազգայնամոլության ամենավառ արտահայտիչներ:

Այս երկուսի հարցը պետք է միայն այսպես դնահատել, այլապես կգնանք պատմական ճշմարտության դեմ: Այդպես է հարցը դնում կուսակցությունը: Այդպես ենք հարցը դնում նաև մենք՝ գրողներս»:

Այսպիսի հայտարարությունից հետո արի ու մտածիր Րաֆֆի հրատարակելու մասին, և այնուամենայնիվ՝ Րաֆֆին մտքիցս դուրս չեկավ: Էլ ինչ երիտասարդ, եթե չկարծի, որ թուրը կտրում է:

Նշանակալի եղավ, մանավանդ որ հիմա էլ շարունակվում է այն ժամանակ սկսած «Հայ պատմագիրների մատենաշա-

րը աշխարհաբար թարգմանությամբ», մանավանդ որ միմյանց հաջորդեցին՝ Բուզանդ, Խորենացի, Կորյուն, Եղիշե:

Իմ ուշադրության կենտրոնում էին Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Գեղամ Սարյանը: Ոչ միայն ժողովածուներ, այլ նաև և մանավանդ, եթե նոր գործեր էին ասպարեզ բերում՝ «Պապ թագավոր», «Վարդանանք», «Արա Գեղեցիկ»: Ոչ պակաս չափով իմ ուշադրությունը կենտրոնացած էր նոր անունների վրա՝ Գևորգ Էմին, Մարո Մարգարյան, Սիլվա Կապուտիկյան, Հրաչյա Հովհաննիսյան, Անահիտ Սահինյան, Վիգեն Խեչումյան:

Ես հասկանում էի, որ ընթերցողի հոգևոր պահանջմունքներն ավելի լայն են, նրան հարկավոր է ապահովել թարգմանական գրականությամբ ևս: Ու իմ մեծ նախորդի օրինակով ձեռնամուխ եղա հրատարակելու ռուս դասականներին, արևմտյան հեղինակներին: Եվ այստեղ ինձ սատար եղան թարգմանիչներ՝ Համազասպ Մազմանյանը, Հարություն Հարությունյանը և Վահե Միքայելյանը:

Անում էին իրենց գործն ինչպես պետք է, որքան ներում էր իրենց ուժն ու կարողությունը: Ես էլ իմ հերթին աշխատում էի նրանց լավ նայել, որ ականջները չպահեն այս ու այն կողմ, թե որտեղից թարգմանելու ինչ առաջարկ կարող է արվել: Նրանք ինձ համար թարգմանիչներ չէին, որ եկան հանձնարարություն ստացան, պայմանագիրը ստորագրեցին ու գնացին: Երեքն էլ ինձանից մեծ էին, երեքն էլ ինձանից շատ բան գիտեին, երեքն էլ կյանքի ավելի երկար ճանապարհ էին կտրել, փորձություններից անցած մարդիկ էին, երեքն էլ լավ դրուցակից էին:

Ես շատ բան եմ սովորել նրանցից. հիշում էի, որ Թումանյանը Մազմանյանի բանաստեղծական ապագայի հետ հույսեր է կապել ժամանակին: Մազմանյանը նստում էր իմ դիմաց և իր մոնղոլատիպ կոպերի նեղ կտրվածքից նայող աչքերի հայացքը կենտրոնացնում մի կետի ու դատողությունները անում: Նա հավատացնում էր՝ ով հասնի կենտրոնացմանը, հանճար է: Մարդկանց հենց այդ կենտրոնացումն է պակասում: Կենտրոնացումն է, որ բնության մեծագույն պարգևն է, կյանքի է կոչում հոգեկան այնպիսի ուժեր, որ

շատ անգամ մարդկանց մտքով չի էլ անցել, թե իրենց մեջ դրանք կան։

Հարություն Հարությունյան, ծաղկատար դեմքով այդ հրմայիչ ներսիսյանցին խոսում էր հանդարտ ու միշտ ժպիտը դեմքին, ասես թարգմանչի զբաղմունքը լինի աստվածային պարգև, որ բախտի բերումով հասել է նաև իրեն։ Եվ խոսելիս նա այն միտքն էր զարգացնում, թե մեր այժմյան գրողների լեզուն զուրկ է ժողովրդական շնչից, հյութեղությունից։

Վահե Միքայելյանն այն կարծիքի էր, որ ժողովրդական շունչ ասածը հասարակացնում է լեզուն։ Գրքային լեզվի ներկայացուցիչներից էր, որին ավելի հաջողվում էին կերպարի դատողական-խոհական մասերը և հակառակը՝ չէին հաջողվում հոգեկան ապրումներն ու հուզական բռնկումները։ Միքայելյանը կետադրության բեռնաթափման կողմնակից էր և շատ ջանք թափեց, որ ստորակետների առատ գործածությունը զգալի չափով վերանա։

Այս երեք թարգմանիչները, այս երեք նվիրյալները 30-ական և 40-ական թվականներին իմ հոգեկան կյանքի անբաժանելի մասը կազմեցին, ու հանդիպումը նրանց հետ նույնքան սիրելի ու հաճելի էր ինձ, թող չափազանցություն չթվա, եթե ասեմ, ինչպես մեր գրականության մեծերի հետ հանդիպելն ու խոսելը։

Մի երկու խոսք Հակոբ Սահիկյանի մասին. նախկին քահանա, ազնվագույն անձնավորություն, որ կարող էր ինձ հայր գալ և այդպես էլ խոսում էր, ոչ թե մեծի հովանավորող ձայնով, այլ այն ջերմությամբ, որ կարող է հայրը որդու հանդեպ ունենալ, ներել սայթաքումները, նրբանկատության պակասը, երբեմն կոշտ խոսքը, բայց սրտանց ուրախանալ, ոգևորվել նրա չնչին հաջողությամբ, համարելով դա սանդուղքի առաջին աստիճանը, որով նա բարձրանալու է։ Անկեղծության տրամադրող ուժ կար նրա մեջ, ու ես չէի կասկածում, որ եթե պահանջ զգայի սիրտս բանալ, ապա իբրև խոստովանահոր անպայման կընտրեի նրան։

Տարիներ հետո իմացա, որ Հ. Թումանյանի մոտիկներից է եղել։

Մի երկու խոսք էլ ուզում եմ ասել գրքի ձևավորման արվեստի մասին։

Սարյանը գրքի ձևավորման մեծ ցանկություն չուներ։ Հակոբ Կոջոյանն ավելի էր հակված, և ես կարեցածիս չափ աշխատեցի պահել նրան հրատարակչական գործի հետ կապված՝ Ավ. Իսահակյանի «Հատընտիրը», Մորուս Հասրաթյանի կազմած «Սայաթ-Նովան», Ն. Զարյանի «Արա Գեղեցիկը»։ Կար մի բայց... Ես հասկանում էի, որ Կոջոյանի նման նկարիչը կարող է հատուկենտ միայն ձևավորել, միայն հատուկ դեպքերում, սակայն հարկավոր էր մի նկարիչ, որ իր վրա վերցներ հրատարակչության հետ մշտապես գործակցելու պարտականությունը, որ ինչ էլ առաջարկես ու խընդրես, չմերժի, հանձն առնի, ոչինչ չհամարի իր արժանապատվությունից ցածր, մանավանդ որ չկար Տաճատ Խաչվանքյանը, այդ նպատակով հատուկ կրթություն ստացած նկարիչը, որի անվան հետ գրքի ձևավորման պատմության փառավոր էջեր են կապված։ Այդ նկարիչը կարո Տիրատուրյանը եղավ։ Նախ՝ ընտիր, ազնիվ ու մաքուր անձնավորություն, վերին աստիճանի համեստ մարդ, երկրորդ՝ աշխատասեր ու ճշտակատար։ Սա գործ էր, որ ժամկետների հետ կապված լինելով, ուշացումը, հանձնարարությունը ժամկետին չանելիով, ուշացումը, խախտում էր գործունեության ընթացքը և առաջ բերում ծանր հետևանքներ։ Վերջապես համոտ ձեռք ուներ և հայկական ոճի զգացողություն։

Աճեց ու վարպետացավ, դարձավ փնտրվող նկարիչ։ Շատ գործ արեց Տիրատուրյանը, մեծ վաստակի հասավ։

Անփոթորիկ չանցավ իմ կյանքը պետհրատում աշխատելիս։ Նախ՝ երկու անգամ լուրջ հիվանդացա և երկար ժամանակով դամվեցի անկողնուն։ Երեք անգամ իմ հարցը լրջացավ այնքան, որ ղեկավարությունը մտահոգվեց, թողնե՞լ ինձ գործի մեջ, թե ոչ։ Երկու անգամ բախտիս աստղը փրկեց ինձ, հանելով ինձ ծանր վիճակներից։ Ինձանից դժգոհների թիվն այնքան էլ փոքր չէր, որոնց զգալի մասը ապաշնորհ մարդիկ էին, լավագույն դեպքում՝ միջակություններ, որոնց առջև պինդ փակել էի հրատարակչության դռները։ Ջեմ հիշում դեպք, որ շնորհալի գործը սեղանին մնար։ Մեր գրականության ափագանուն, որոնք, դեռ ողջ, բայց դասական հեղինակներ էին արդեն, ինքս էի համոզում, որ նոր գիրք բերեն, որ վաղուց չեն հրապարակվել։ Կարծես չեղավ մի դեպք իմ

հրատարակչական գործունեության ընթացքում, որ ես խախտած լինեմ նրբանկատությունը նրանց նկատմամբ, բացի երևի Դեմիրճյանի «Մանրապատումի» հետ կապված պատմությունից, բայց եթե այդպիսիք եղել են, ապա միշտ էլ նրանք մեծահոգի ներողամտությամբ են վարվել ինձ հետ:

Տնօրենի հետ իմ հարաբերությունները լավ էին, ընկերական, ինձ գնահատում էր, գուցե նույնիսկ իմ արժանիքներից ավելի, և պաշտպանում ինձ անհարկի հարձակումներից. հավատալով և վստահելով: Ես չարաշահում էի նրա վստահությունը: Ես արդեն ուսումնասիրել էի, թե ինչին ինքը կարող է արգելք լինել և երբեմն որոշ գործեր, որոնց ընթացքը որպեսզի չկասեցվի, համարելով դրանց հրատարակությունն անհրաժեշտ, ուղարկում էի տպարան, առանց իր համաձայնության, արժանանալով դրա համար նրա բարկացած նկատողությանը: Եվ այսպես շատ անգամներ եմ տնօրենից դիտողություններ և նկատողություններ ստացել, գալով այն եզրակացության, սխալ թե ճիշտ, որ գլուխ բերված գործն իմ ինքնասիրությունից բարձր է: Թող մի տեղ էլ արժանապատվությունդ խոցվի, բայց գործը, որ քո կարծիքով հանրօգուտ արժեք է, թող ընթացք ստանա, գլուխ գա, լույս տեսնի:

Փոթորիկներ անցան իմ գլխով:

Ես շատ բան հասկացա, շատ բան էլ չհասկացա ու այդպես էլ մինչև հիմա մնացին չհասկացված: Երիտասարդ էի, հախուռն, հոխորտուն, իմ ներքին ձայնի խրատներին հլու, բայց ավելի հաճախ չհետևած և այն մարդկանց կարծիքին, որ վերահսկում էին հրատարակչական գործը, ես այլևս չպետք է շարունակեի զբաղվել հրատարակչական գործով: Նրանք մտածում էին՝ որքա՞ն կարելի է հանդուրժել. մի անգամ սխալվեց, ներողամիտ եղանք, իսկ երկրո՞րդ, երրո՞րդ անգամ: Իմ վերջին սխալը, եթե միայն դա սխալ էր, եղավ Անահիտ Սահինյանի «Խաչմերուկներ» վեպի հրատարակությունը, որի խմբագիրն էի: Հրատարակելը մի սխալ էր, խմբագրելը՝ կրկնակի. սա էր իմ մեղադրանքը: Կին ունեցող մինիստրը սիրահարվել է երիտասարդ աղջկա, թողել է կնոջը և ամուսնացել այդ աղջկա հետ: Ինչպե՞ս կարելի է: Մի՞թե այդպիսի բան լինում է կյանքում: Իրականությունը ծուռ հայելու մեջ: Ինչ մեղք ունի Անահիտ Սահինյանը. երիտասարդ գրող, մի

բան հասկանում է, տասը չի հասկանում, խմբագիրն էլ, մանավանդ եթե բաժնի վարիչ է, հենց նրա համար է, որ երիտասարդ գրողի ձեռքը բռներ, հասկացներ, մի խոսքով՝ փոխել տար հայելին... Եվ որոշվեց այսպես, նպատակահարմար գտնել Ռուբեն Զարյանի ուժերը կենտրոնացնել գիտության վրա, ազատելով նրան Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչի պաշտոնից:

Ազատման բաղաքավարի ձևը գտնված էր: Բայց ոչ ոք ինձ չհարցրեց, թե ես՝ Զարյանս, ինչպե՞ս եմ հարմար գտնում, որտե՞ղ եմ կամենում ուժերս կենտրոնացնել, գիտությա՞ն մեջ, թե հրատարակչական գործում: Ես էի և հանկարծ կարող էի ասել, թե ավելի լավ է հրաժարվել Գիտությունների ակադեմիայից և մնալ ու ավելի խորանալ հրատարակչական աստպարեզում: Բայց, կրկնում եմ, հարցնող չկար...

Չեմ ասում, թե իմ տասնամյա հրատարակչական գործունեության մեջ սխալներ, վրիպումներ ու թերացումներ չեն եղել: Եղել են, ինչպես չէ: Բայց իմ ընդհանուր գործունեությունը եղել է ճիշտ: Հազար ներողություն այսպիսի անհամեստության համար: 1938-ին իմ նշանակմանը սաստիկ դեմ էր Նաիրի Զարյանը, որն իր մղած գրական պայքարում ինչ-ինչ դեմքերի վարկաբեկելու նպատակով, ինձ որակել էր ազգայնամոլ և այդ պաշտոնին անարժան: Եվ ուրախ եմ, որ նույն Նաիրի Զարյանը քառորդ դար հետո հրապարակավ ասաց. «Հաճախ չէ, որ զուգադիպել են մեր հայացքներն ու համակրանքները գրականության և արվեստի աստպարեզում: Ես վերին աստիճանի բեղմնավոր եմ համարում քո աշխատանքը Հայպետհրատում: Հայրենական պատերազմի օրերին իբրև գեղարվեստական բաժնի վարիչ և «Խորհրդային գրականություն» ամսագրում իբրև նրա գլխավոր խմբագիր, և նույն այդ ժամանակաշրջանում, դու կարողանում էիր տարբերել գրական իսկական տաղանդը ապաշնորհ գրողամոլությունից և դրանով իսկ զարկ էիր տալիս գրականության աճին»:

Երբ Նաիրին այս խոսքերն ասում էր, դահլիճում էին Զորյանն ու Մահարին, ի՞նչ էին մտածում նրանք, չգիտեմ, բայց ուզում եմ հավատա ընթերցողը, որ եթե այդ գնահատականը տային նրանք, երևի այդքան չուրախանայի, ուրախ էի, որ

ասողը Նահրին էր, որն ըստ իր անկեղծ խառնվածքի, կարող էր մի հայտարարություն անել և հետո, եթե համոզվեր, որ սխալվել է, քաջությամբ հերքեր ինքն իրեն։

ԱՍՄՈՒՆՔԻ ՎԱՐՊԵՏԸ

Ես աշխատում էի բաց չթողնել Սուրեն Քոչարյանի ասմունքի երեկոները և մեկն եմ եղել նրան ծափահարողներից։ Եվ դա այն ժամանակները, երբ նրա բերած արվեստը նորություն էր հայ իրականության մեջ և այդ ասպարեզն, ինչպես ընդունված է ասել՝ խանձարուրի մեջ էր։

Ձափածո ստեղծագործության արտասանությունը հայտնի էր տակավին անցյալ դարի 60-ական թվականներից։ Շատ հնարավոր է, որ ավելի վաղ էլ է գոյություն ունեցել։ Ոչ մի հետազոտող միտք դեռ ջանք չի թափել իմանալու, թե ինչ ճանապարհ է անցել ասմունքը մինչև Սուրեն Քոչարյանը։

Գեղարվեստական երեկոներին, ի թիվս երգի ու երաժշտության, երբեմն նաև պարի, արտասանվել են Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի բանաստեղծությունները։ Հաճախ արտասանությունները կատարվել են դաշնամուրային նվագի ուղեկցությամբ, և դա կոչվել է մելոդեկլամացիա։

Բայց որ բացի չափածոյից կարդացվեն նաև արձակ էջեր, երբեմն ամբողջ վեպ, ինչպես «Վերք Հայաստանի», կամ ամբողջական գիրք, ինչպես «Դեկամերոնը» կամ բազմահատոր «Հազար ու մի գիշերները», և ասմունքը ոչ թե երեկոյի համար լինի, այլ լինի երեկոյի բուն և միակ նյութը, նորություն էր, որը ռուսական իրականության մեջ ավելի վաղ էր գոյացել, որի լավագույն ներկայացուցչին՝ Ձակուշնյակին, բախտ էի ունեցել լսելու դեռ իմ պատանեկության տարիներին։ Եվ ահա իմ կյանքում առաջինը Սուրեն Քոչարյանը եղավ, որ, լինելով Երևանի առաջին պետթատրոնի դերասան, հրավիրում էր ասմունքի երեկոներ։

Ի պատիվ մեր գեղարվեստական մտավորականության, Սուրեն Քոչարյանի նախաձեռնած գործն անմիջապես գնահատվեց ու քաջալերվեց բավական չէ, այլ իր արածի առաջին իսկ տարիներից եղան մարդիկ, որ կարողացան պատմա-

կան նշանակության վերագրումով մոտենալ, ու նա, թեև բոլորովին երիտասարդ, լավ հիշում եմ, որ մի հոդվածում հռչակվեց նախահայր։

Ես չգիտեմ, թե 20-ական թ.թ. նա առանձին երեկոներ ունեցել է, թե ոչ։ Եթե չեմ սխալվում, հանդես է եկել արտասանությամբ, օրինակ, «Անուշի», կարծեմ, մելոդեկլամացիայով։ 30-ական թվականների սկզբներից շարունակելով լինել պետական թատրոնի դերասան, իսկ հետագայում հեռանալով թատրոնից, կուլտուրայի տանը կազմակերպում էր ասմունքի երեկոներ՝ կարդում Չարենց, Վշտունի, Հովհաննես Թումանյանի «Գիքորը», հետագայում նաև բանաստեղծի հեքիաթները, Սունդուկյանի «Վարինկի վեչերը»՝ «Մակակո» վերնագրով։ Երբեմն էլ պատահում էր, որ ամբողջ երեկոն նվիրում էր մի հեղինակի, օրինակ Հովհաննես Թումանյանին։

Սուրեն Քոչարյանը 20-ական թվականների սկզբներին մոտավորապես երկու տարու չափ ապրել էր Մոսկվայում և լըսելով ասմունքի ռուս վարպետներին, ինձ հայտնի չէ, թե ինչ է ուսանել նրանցից, ինչ է փոխառել։ Ինքը մշակել է իր ոճը, սկզբում ռոմանտիկ, փոքր-ինչ պաթետիկ, հետագայում, երբ մանավանդ սկսեց արձակ գործեր կարդալ, տիրապետող դարձավ ավելի իրապատում կատարումը։ Դա էլ դարձավ գերիշխողը նրա արվեստում։

Հորինել էր իր բեմական միջավայրը. բեմում դրված էր բազկաթոռ։ Բեմ էր գալիս Քոչարյանը, համերգասրահը դիմավորում էր ծափահարությամբ։ Նա խոնարհում էր գլուխը և որքան էլ երկարատև լինեին ծափերը, չէր բարձրացնում գլուխը։ Երբ դադարում էր ծափահարությունը, նա բարձրացնում էր գլուխը և կաշառող ժպիտ դեմքին, որ ես միշտ բացատրել եմ այսպես՝ «Շնորհակալ եմ, զգացված, այս սրտագին վերաբերմունքից ինձ պարտավորված եմ զգում։ Կարդարացնե՞մ, արդյոք։ Կաշխատեմ, ոչ մի ջանք չեմ խնայի»։

Համեստ է դեմքը, բայց սուր հայացքը որսում է ավելի համեստության խաղ։ Նա, իհարկե, գիտե, որ կարող է։ Նա, իհարկե, գիտե, որ համերգասրահի ժողովուրդն իրեն սիրում է և լսարանի առջև նա իրեն զգում է այնպես, ինչպես ամեն մեկը լուսանկարվելիս, երբ կամենում է ավելի հաճելի տեսքով ներկայանալ լուսանկարի ապագա դիտողներին։

Նստում էր բազկաթոռին, և անմիջապես չքանում էր քիչ առաջվա ժպիտը: Հանում էր ակնոցը և դնում գրպանը: Դեմքը կենտրոնացած է, բայց նա չի շտապում սկսել ամունքը: Նայում է իր մատների ծայրին, նշանակում է այլևս ունկնդիրների հետ չէ. ամփոփվում է ինքն իր մեջ, հեռանում է այս աշխարհից, որ մտնի այլ աշխարհ, որ հիմա, մի փոքր հետո նա ներկայացնելու է իր երկրպագուներին:

Համբերության սահմանները հայտնի են: Հայտնի է և արվեստագետին, բայց նա չի շտապում սկսել: Չկա չարաշահում իր հանդեպ եղած ջերմ վերաբերմունքի: Ու հենց որ թվում է, թե ունկնդրի համբերությունը հատնելու վրա է, սկսում է:

Ունկնդրի ականջին հասնում է Քոչարյանի ձայնը՝ թավ, խորք ունեցող, առնական, ականջ շոյող: Եվ մի փոքր հետո չկա ամունքողը, չկա համերգասրահը, չկան կողքդ նստած մարդիկ, արվեստագետը կարողացել է քեզ տանել հեռու մի աշխարհ՝ Դիքորի, Մակակոյի աշխարհը, և սիրտդ կծկվում է ցավից, հազիվ ես զսպում քեզ, որ լաց չլինես և չճչաս Մակակոյին ծաղր ու ծանակի առարկա դարձնող մարդկանց վրա:

Երբ արձակ է կարդում՝ Թումանյան, Սունդուկյան, Ծուղուրյան, Դարբինյան, Զորյան, նույնիսկ կենցաղային շեշտեր կան, բայց արվեստագետի համար կարևորը ոգին է, միտքը...

Ի՜նչ դժվարին գործ՝ առանց բեմազգեստի, առանց դիմահարդարման, մեն-մենակ, առանց խաղընկերների և՛ Դիքոր է, և՛ Համբո, և՛ Բազազ Արտեմ, և՛ Նատո, այդ բոլորը ձայնի շնորհիվ, մի երկու բնորոշ շարժման օգնությամբ...

Ծափահարում են մարդիկ ոգևորված ու անկեղծ, գնում ամեն մեկը տուն տպավորված, ազդված, տանեցիներին իրենց հիացմունքը հայտնելով, կշտամբելով տանեցիներին, թե ինչու հրաժարվեցին միանալ և իրենց հետ վայելել ճշմարիտ արվեստի պարգևած բավականությունը:

Եվ ոչ ոք չգիտե, որ նույն այդ Քոչարյանը, որ բնությունից շռայլորեն օժտված արվեստագետ է, մարդկանց գեղեցիկի հաճույքը պատճառելու համար տքնաջան գործ է անում տանը, հեղինակի գործի հիման վրա կոմպոզիցիա է ստեղծում՝ կրճատում է, բառեր է փոխում, տեղափոխություններ կատարում, մի խոսքով այնպիսի աշխատանք, որ պահանջում է ոչ միայն ժամանակ, այլ նաև վերլուծական միտք, դարա-

շրջանի իմացություն, մարդկային հոգեբանության ճանաչում, ճաշակ, բարբառների իմացություն։ Ուրեմն՝ ոչ միայն արվեստագետ, այլ նաև բանասեր։

Տարիներ անցան, և նա, բնակվելով Մոսկվայում, մեկ-մեկ հյուրախաղերի էր գալիս Հայաստան։ Ունեցավ հետևորդներ ոչ թե մեկը, այլ շատ-շատերը։ Ոչ մեկը նրանցից Քոչարյան չեղավ, բայց նրա գործը շարունակեցին ազնվաբար։

Տարիներ անցան, և նրա ունկնդիրների շառավիղը մեծացավ։ Մեծացավ և համբավը, մանավանդ կարդում էր երկու լեզվով, հավասարաչափ տիրապետելով ռուսերենին ու հայերենին։ Ու ինչ հեղինակներ ասես, որ նրա ասմունքի նյութը չդարձան՝ Տոլստոյ, Շեքսպիր, Ռուսթավելի, Բոկաչչո, Հոմեր, ժողովրդական այնպիսի հորինվածքներ, ինչպես «Սասունցի Դավիթ» և «Հազար ու մեկ գիշերներ»։ Ու կարծում եմ սխալված չեմ լինի, թեև ասեմ, որ նրա համբավը ուղիղ համեմատական էր իր գործունեության սահմանների ընդարձակմանը։ Հայրենի ժողովրդի հանճարի ցոլքն էր Սուրեն Քոչարյանը, իր կրծքի տակ կրելով իրեն ծնող ազգության բոլոր առաքինությունները՝ տաք սիրտ, հզոր տարերք, ժողովրդասիրություն և մարդկայնություն, սեր ու հարգանք բոլոր ժողովուրդների նկատմամբ, դրա հետ միասին՝ ազգային արմատների խոր զգացողություն։

ՄԻ ԴԵՊՔ ՆԵՄԻՐՈՎԻՉ–ԴԱՆՉԵՆԿՈՅԻ ԿՅԱՆՔԻՑ

Լսել եմ թե կարդացել, չեմ հիշում, բայց ինձ թվում է հետաքրքիր, եթե անգամ մեկնումեկի երևակայության արդյունքն է։

Վլ. Նեմիրովիչ-Դանչենկոն թունդ զբաղված էր «Ռևիզորի» փորձերով։ Ամեն ինչ կարծես կարգին է, բացի ֆինալային «կենդանի պատկերից»։ Ինչ էլ մտածել է, միևնույն է, արհեստական տպավորություն է թողել։ Բազմահմուտ բեմադրիչը մոլորվել է, չգիտե ինչ անել։

Նշանակված է փորձ, ինչպես միշտ՝ տաս և կեսին։ Դերասանները հավաքվել են, իսկ Նեմիրովիչ-Դանչենկոն չկա։ Ջարմանալի է. բոլորին հայտնի է նրա ծայրահեղ ճշտապա-

հությունը: Անցել է տասը րոպե՝ չկա, քսան՝ դարձյալ չկա: Զանգահարել են տուն՝ «Վաղուց է դուրս եկել»: Սկսել են անհանգստանալ: Ի՞նչ կարող է եղած լինել: Դերասանները ներս ու դուրս են արել, աչքները թատրոնի մուտքին՝ ուր որ է կերևա: Ոմանք դուրս են գալիս փողոց, նայում՝ չի՞ գալիս: Եվ հանկարծ մեկը ձայն է տալիս.

— Եկա՛վ:

Նեմիրովիչ-Դանչենկոն մտել է թատրոն՝ մոայլատես, ոչ ոքի կողմը չի նայել, անցել է միջանցքով, առանց բարևելու պատերի տակ շարված դերասաններին: Ամենքը տարակուսանքի մեջ են:

Փորձի սկիզբը ազդարարող զանգը դերասաններին հրավիրել է փորձասրահ: Ներս է մտել Նեմիրովիչ-Դանչենկոն և կամացուկ ասել.

— Կառավարությունից եմ գալիս և հայտնելու եմ ձեզ շատ անախորժ նորություն:

Լռություն:

— Կառավարությունը որոշել է մեր թատրոնը փակել:

Բոլորը քարացել են:

— Ինչպե՞ս...

Նեմիրովիչ-Դանչենկոյի ձայնը.

— Խնդրում եմ ֆիքսացիայի ենթարկել ձեր հոգեկան ներկա վիճակը: Դա էլ կլինի «կենդանի պատկերի» ամեն մեկիդ բեմական զգացողությունը:

ՀՈՒԲԵԼՅԱՆ

1938 թվականին, ինչպես հայտնի է, փակվեց Մեյերհոլդի թատրոնը: Դա մեծ հարված էր աշխարհահռչակ բեմադրիչի համար: Թատրոնը փակվեց այն ժամանակ, երբ նա մտածում էր, թե ինչպես իր թատերական գործունեությունը շաղկապի բեմական արվեստի այն սկզբունքների հետ, որ Ստանիսլավսկու գլխավորությամբ մշակել էր Մոսկվայի գեղարվեստական թատրոնը:

Նրա բեմադրած «Կամելիազարդ տիկինը» վերանայումն էր իր բեմական շատ սկզբունքների: 1936 թվականին նա դի-

մեց ծայրահեղ քայլի, որին ընդունակ էր երևի միայն ինքը. հանդես եկավ հրապարակային դասախոսությամբ՝ «Մեյերհոլդն ընդդեմ Մեյերհոլդի»: Դուցե առաջին հայացքից զարմանալի թվա, բայց դեպքերին նայենք ըստ էության և հարցերի խորքը թափանցենք, ամենևին պատահական չէ, որ Մեյերհոլդի հոգեկան ճգնաժամի պահին նրան ձեռք մեկնողները Գեղարվեստականի պարագլուխները եղան: Ստանիսլավսկին հրավիրեց նրան իր գլխավորած օպերային թատրոնը:

Մեյերհոլդի շուրջը կասկածի ու անվստահության մթնոլորտ է:

Ահա մի դեպք, որ կապված է Նեմիրովիչ-Դանչենկոյի հետ:

Բոլորից Մեյերհոլդի ծննդյան 65-ամյակը: Հոբելյանական տարեթիվ: Եվ ի՞նչ: Մամուլը լուռ է: Թատրոնները, չիմանալուն տալով, չեն արձագանքում: Մեյերհոլդն անտրամադիր է: Նույնիսկ մտադիր չէ արվեստակից ընկերներին հավաքել ընթրիքի սեղանի շուրջ: Մեծարանքի խոսքեր պիտի ասվեին, մինչդեռ իր վիճակն այնպիսին էր, որ չէր պատշաճի, ինչպես գյումրեցին կասեր՝ «մեռած ու թաղած չէ»: Եթե գային ու համակվեին այն տրամադրությամբ, որ ուներ բեմադրիչը, հոբելյանական հավաքույթը դառնալու էր հոգեհանգիստ: Ուրեմն՝ ինչո՞ւ հավաքվել: Այդ հասկանում էր Մեյերհոլդը: Հասկանում էին և բարեկամները: Անձնվեր բարեկամներն էին միայն, որ այդ օրը իր հետ պիտի լինեին: Այնուամենայնիվ, ծննդյան օրը ծննդյան օր է: Մեյերհոլդը հագել էր իր տոնական զգեստը, կինը՝ դերասանուհի Զինաիդա Ռայխը, նույնպես: Թեև ձմեռ է, բայց սեղանի կենտրոնը զբաղեցնում է այդ օրվա առթիվ կնոջ գնած շքեղ ծաղկեփունջը:

Ամուսիններ, երկուսն էլ թատրոնի մարդիկ, միմյանց դիմաց նստած հիշում են իրենց առաջին հանդիպումը, գործունեությունը նույն թատրոնում, անցած տարիները, հաջողություններ, ձախորդություններ: Նայում են իրար, ժպտում և շամպայնի բաժակներն իրար զարկում, մտածում, թե իրենց կյանքի այս մոտալ օրերը կանցնեն, կգան լավ օրեր:

Երանի իմանային, թե ինչ լավ է ասել աշուղ Ջիվանին՝ «Ձախորդ օրերը կուգան ու կերթան»:

Թեև ո՛չ Մեյերհոլդն է սպասում, թե մեկնումեկը կգա, ո՛չ էլ Ռայխը, բայց ահա գալիս են բեմադրիչի ընկերներից մի

երկուսը, մի փոքր անց գալիս է Զինաիդայի ամենամոտ ընկերուհին: Հյուրն աստծունն է,— այսպես մտածելով, տանտերերը ժպտում են: Այն էլ այդ օրվա հյուրը: Բոլորը տեղավորվում են սեղանի շուրջը: Ուրախ բացականչություններ, որոնք, սակայն, ի վիճակի չէին փարատելու օրվա թախծալի տրամադրությունը: Եվ հանկարծ դուռը բացվում է, և դռների մեջ երևում է Վլադիմիր Նեմիրովիչ-Դանչենկոն՝ սպիտակ վարդերի մի մեծ կողով ձեռքին: Նեմիրովիչը ծաղկակողովը դնում է արվեստակից ընկերոջ ոտքերի մոտ, իսկ ինքը մինչև գետին երեք անգամ գլուխ խոնարհում Մեյերհոլդի առաջ ու լուռ դուրս գալիս:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Դեռ համալսարանական ուսանող էի, երբ ասացին, թե պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր Միքայել Մազմանյանը խնդրել է տեսնել իրեն: Գնացի երկակի տրամադրությամբ. մի կողմից գիտեի, որ Մազմանյանը Թամանյանի հակառակորդներից է, կոնստրուկտիվիզմի պարագլուխներից, հետևապես ինձ համար հաճելի չի լինելու հանդիպումն այդ մարդու հետ, մյուս կողմից՝ նույն այդ հանգամանքը ստիպում էր ինձ անպայման տեսնվել մի մարդու հետ, որ Թամանյանի նման հսկային հակադրվելու հանդգնություն է ունեցել:

Քարտուղարուհին ուղեկցեց ռեկտորի առանձնասենյակը մի շենքում, որը կառուցվել էր Թամանյանի իսկ նախագծով: Իմ դեմ նստած էր լայնադեմ, թիկնեղ մարդ, որ խոսում էր գրական պարզ լեզվով, որտեղ ժողովրդական խոսքի շունչը և գրքի ոճը խառնվել էին իրար և զգալի էր Թիֆլիսյան յուրահատուկ արտաբերությունը:

— Մտադիր ենք մեր մեծ դահլիճում կազմակերպելու երկու գրական դասախոսություն, մեկը պոեզիայի հարցերի մասին, մյուսը՝ արձակի: Ինձ մեր գրական հեղինակություններից մեկը երաշխավորել է ձեր թեկնածությունը, որպես ամենահարմարը: Ձեր ունկնդիրները լինելու են մեր ինստիտուտի ուսանողները և դասախոսներից ով ուզի: Ի՞նչ կասեք:

— Ես ուսանող եմ։

— Գիտեմ։

— Թերևս ավելի հարմար գա արդեն ավարտածներից որևէ մեկը։ Մի երկու անուն տվի։

— Գիտեմ, սիրելիս, գիտեմ, բայց ինձ ձեր անունն են տվել։

Համաձայնեցի։ Առաջին դասախոսությունը կայանալու էր մեկ և կես ամսից։ Ես ժամանակ ունեի պատրաստվելու ինչպես հարկն է։ Պատասխանատվության զգացումն ստիպեց ինձ գրել ասելիքս և վարդալ։ Դասախոսությանս ներկա էր և ինքը՝ Միքայել Մազմանյանը, որի գրական պատրաստության չափն ինձ, բարեբախտաբար, հայտնի չէր, այլապես շատ պիտի հուզվեի։

Ես լսել էի, որ այդ ինստիտուտի ուսանողները բազմակողմանի հետաքրքրություններով են ապրում՝ նոր ներկայացումներ բաց չեն թողնում, հաճախում են նկարչական ցուցահանդեսներ, կարդում են նոր լույս տեսած վեպեր, բանաստեղծություններ, հետևում են «Գրական թերթին» և «Խորհրդային գրականությանը», համերգների են լինում... Եվ իսկապես, զգացի, որ ուշադիր լսարան է, որ դահլիճում եղածները հեկել են հետաքրքրությունից, ներքին մղումով։ Իմ դասախոսությունը տևեց մի ժամի չափ, բայց ես հասկացա, որ կլսեին մի կես ժամ էլ։

Մի քանի հարց տվին։ Հարցերն էլ, որ սովորաբար բնորոշում են լսարանը, անմակարդակ չէին։ Ես հասկացա, որ սրանք կարդացել են Զարենց, Մահարի, Վշտունի, Զարյան, Նորենց, Սարյան, Տարոնցի, ծանոթ են գրական բախումներին ու վեճերին։

Դասախոսությունից հետո ինձ հետ զրույց ունեցավ Մազմանյանը։ Եվ, խոստովանություն լինի, նա ինձ ներշնչեց հարգանքի զգացում, թեև ինչպես հասկացա, այնքան էլ գոհ չէր իմ խոսքից։

Հիմա ինձ դժվար է բառ առ բառ վերականգնել նրա ասածը, բայց իր ասածի իմաստը հետևյալն էր։

— Մեր ուսանողները, ճիշտ է, գրականությամբ հետաքրքրվող մարդիկ են, բայց կարիք չկար կարդալ դասախոսությունը, որի հարցադրումներն ավելի սազական կլինեին գրողին, որի հարցադրումներն ավելի սազական կլինեին գրող-

Ներկա տան ամբիոնից ասվելու կամ եթե հանդես գալու լինեինք համալսարանի բանասիրականի ուսանողների առաջ: Այստեղ բնույթը պետք է լիներ ավելի հանրամատչելի: Այս մեկ: Երկրորդ՝ ինչո՞ւ գրավոր և ոչ բանավոր: Գրավոր խոսքը տպավորություն չի գործում: Ունկնդիրը դժվարանում է մտքերի ընթացքին հետևել: Բանավոր խոսքը միշտ էլ առավելություն ունի: Հարցերի պատասխանը ցույց տվեց, որ դուք բանավոր խոսքի ձիրքից զուրկ չեք:

Իր խոսքի ընթացքում հիշեց Մամբրե Մատենճյանին, որ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում իր ուսուցիչն էր եղել, 10-ական թվականների հռչակված գրական քննադատը, գրողների ահն ու սարսափը, փայլուն հռետոր, սուր բանավիճող, պատմեց նրա խոսքի արվեստի մի քանի հնարանքների մասին:

Խոսեց նաև ըստ էության, երկու թե երեք հարցում իմ պնդումները վիճելի համարեց և համոզիչ առարկություններ առաջ քաշեց:

Հաջորդ դասախոսությունը պետք է կայանար հաջորդ ուսումնական տարում, խնդրեց, որ անպայման հանդես գամ բանավոր խոսքով:

— Ես, օրինակ,— ասաց նա,— երբեք գրավոր չեմ խոսում:

Տեղի ունեցավ երկրորդ դասախոսությունը ևս: Նվիրված էր արձակին: Ես՝ հետամուտ ամրապնդելու առաջին ելույթիս թողած տպավորությունը, իմ բուն նյութի շրջանակներից ավելի հաճախ էի դուրս գալիս, քան անհրաժեշտ էր, շեղումներ էի կատարում, բերում տպավորիչ օրինակներ Ֆլոբերից, Տոլստոյից, ասում, թե ինչպես է մեկը հուզվել վեպի վերջին էջերը գրելիս, մյուսը խոստովանել է, որ ինքը չի կարծել, թե իր հերոսուհին կդիմի ողբերգական քայլի: Եվ տասը, տասընհինգ այդպիսի օրինակ բերի: Իմ դասախոսությունը թողեց տպավորություն: Ես հասկացա, որ այդ ինստիտուտի ունկնդիրն ինձ սիրեց: Բայց երբ գնում էի տուն, որ պոլիտեխնիկական ինստիտուտից հեռու չէր, մի անբավարարվածություն զգացում տանջում էր ինձ: Ես դժգոհ էի ինձանից: Ինչո՞ւ, չէի հասկանում: Երկու թե երեք օր այդ անհանգիստ մտատանջությունն ինձ չէր լքում: Վերջապես, հասկացա, որ իմ երկրորդ դասախոսության ժամանակ ես հետամուտ էի ավելի

տպավորություն թողնելու, քան իմ բանախոսած նյութի խորքերը թափանցելու նպատակը:

Իմ բախտից Մազմանյանը չկար, նա այդ ինստիտուտի ղեկավարը չէր արդեն, ճարտարապետ Գևորգ Քոչարի հետ մեկնել էր Իտալիա՝ երկարատև շրջագայության, կատարելագործման, թե չէ չէր խնայի և մի լավ դաս կտար:

Իմ կապերն ամրապնդվեցին պոլիտեխնիկական ինստիտուտի հետ և ամեն տարի մեկ, իսկ երբեմն երկու դասախոսություն էի կարդում. Թումանյան, Սասունցի Դավիթ, երկու թե երեք անգամ Աբովյան: Ես սիրեցի այդ լսարանը և կարծում եմ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նրանք էլ նույնը զգացումն ունեին իմ նկատմամբ:

Պատմեմ իմ մի անհամեստ քայլի մասին ևս: «Սասունցի Դավթի» հազարամյակի օրերն էին: Գրականագետներին հանձնարարված էր դասախոսություններով և զեկուցումներով հանդես գալ: Նախատեսված էր նաև պոլիտեխնիկական ինստիտուտը և դիմացը՝ իմ ազգանունը: «Սասունցի Դավթի» մասին մի քանի զեկուցում արդեն կարդացել էի և ինձ թվում էր, թե նյութը գիտեմ և վստահ լսարանիս վերաբերմունքի վրա, ես հանդուգն քայլի դիմեցի և փոխանակ կրկնելու այն, ինչ խոսել էի տարբեր հիմնարկներում, որոշեցի զեկուցել այն թեման, որով նույն օրը հանդես էր գալու Հովսեփ Օրբելին՝ «Սասունցի Դավթի» հայկական էպոսը և էպիկական ստեղծագործությունները», որքան գիտեի և որքան կարող էի: Իմաստասեր, գրականագետ, ասպետական պարտականությունների ուսուցչիս՝ կարո Մելիք-Օհանջանյանին, որը համալսարանում մեզ դասախոսում էր ժողովրդական ստեղծագործություն և այդ առթիվ խոսել էր նաև աշխարհի ուրիշ ժողովուրդների էպոսի մասին: Վերջացրի դասախոսությունս և շտապեցի Սունդուկյանի անվան թատրոն, ուր տեղի էր ունենում պլենումը: Ես հասա լավ պահի, մի կես ժամից իր զեկուցումը կարդաց Օրբելին: Հարցը միայն նյութի հարստությունը չէր, որի համեմատությամբ իմ հաղորդածը աղքատիկ տեղեկություններ էին: Հարցը ոչ էլ նրա հայտնած մտքերի խորությունն էր, որի նկատմամբ ես կասկած չունեի, երբ համարձակվում էի ամբիոնին մոտենալ: Հարցը այն զուգահեռներն էին, որ անցկացրեց Օրբելին, այն ընդհանրու-

թյունները և տարբերությունները, որոնց մասին խոսեց նա, բացահայտելով այն, ինչ ո՛չ իմ, ո՛չ էլ ուրիշների մտքով չէր անցնի երբեք: Դա զեկուցում չէր, դա մտքի փայլատակում էր: Ես չեմ հետևել և չեմ կարող ասել, թե որքան խոսեց Օրբելին, մի թե երկու ժամ և բազմամարդ դահլիճը լսում էր շունչը պահած: Օրբելին տարերքի մեջ էր: Մեկ խոսում էր հանգիստ, մեկ հանկարծ ձայնը բարձրացնում էր, խոսում բարկացած, ու մարդ այն տպավորության էր, թե կարծես վիճում է անտես հակառակորդի հետ: Ինքն էլ ամբիոնի մոտ կանգնած՝ սաստիկ տպավորիչ էր, ազդեցիկ ու գեղեցիկ:

Շատ մեծ անուններ և հեղինակություններ էին ներկա, շատերը խոսեցին հոբելյանական հանդիսավոր երեկոյին, միութենական պլենումում, գիտական նստաշրջանում. Պավլո Տիչինա՝ Կիևից, Յանկա Կուպալա՝ Մինսկից, Ավետիք Իսահակյան, Վսեվոլոդ Իվանով և Պավել Անտակոլսկի՝ Մոսկվայից, վստահ կարող եմ ասել, որ ոչ մեկի խոսքը չթողեց այնպիսի ցնցող տպավորություն, ինչպես Օրբելունը: Ես շատ եմ լսել Օրբելուն, և միշտ էլ հիացել եմ, բայց չեմ հիշում, որ այդ և այլ անգամներ նա հասած լիներ Սասունցի Դավթի զեկուցման մակարդակին:

Բոլորը խոսում էին Օրբելու մասին, նրա զեկուցումից: Խոր միտքը և զգացողությունը միացել էին իրար և կազմել վսեմ ներդաշնակություն, որի մասին շատերն են երազում, բայց քչերին է հաջողվում նվաճել այդ համաձուլվածքը:

Հոբելյանի կենտրոնը Օրբելին էր իր զեկուցումով: Ու եթե կար այլ կենտրոն ևս, ապա դա Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանն էր, դրված երկաթուղային կայարանում, ոչ այն, որ հիմա է մեզ հայտնի, այլ ուրիշը, որի թողած տպավորությունը նույնպես հիացրել էր մարդկանց:

Այս շփոթ հիացմունքի մեջ ես միակն էի գուցե, որ ինձ զգում էի ոչ այնքան լավ, մտածելով, թե ինչ անխոհեմ քայլ էր իմ արածը՝ հանդես գալ նույն զեկուցումով, ինչ որ Օրբելին, այն էլ մի լսարանի առաջ, որ ինձ լավ էր վերաբերում: Միակ մխիթարությունն այն էր, որ իմ լսարանից ոչ ոք ներկա չէր Սունդուկյանի անվան թատրոնում, քանի որ Օրբելու զեկուցման պահին պոլիտեխնիկական ինստիտուտի դահլիճի

քեմը զբաղեցրել էին արվեստի վարպետները, այլապես պետք է համեմատեին գյուղական խղճուկ խրճիթը արքայական շքեղ պալատի հետ։

ՀԱՅՈՑ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1939-ի խոր աշնանն էր, գուցե նույնիսկ ձմռանը, գնացել էի Սունդուկյանի անվան թատրոն, հիմա չեմ հիշում, թե ինչ ներկայացում նայելու։ Ճեմասրահում հանդիպեցի Սարգիս Մելիքսեթյանին։

— Ուրախալի լուր՝ շուտով թատերական ընկերություն կունենանք,— ասաց ավագ ընկերս։

Այդ պահին մոտեցավ Գուրգեն Ջանիբեկյանը։

— Ահա և հերոսը։

Շարունակեց Սարգիս Մելիքսեթյանը, ու ես այնպես հասկացա, որ թատերական ընկերության ստեղծման գաղափարը պատկանում է Ջանիբեկյանին։

Ես գիտեի, որ Մոսկվայում գործում է «Всероссийское театральное общество», հապավված՝ ВТО, որն իր սկիզբն առնում է անցյալ դարի 80-ական թվականներից տարբեր անուններով, բայց պարբերական և անընդմեջ գործունեությամբ։

Ավելի ուշ, Ջանիբեկյանից իմացա, որ այդ միտքը նրան տվել է Երևան ժամանած թատերագետ Իոհան Ալտմանը։ Ջանիբեկյանն ասել է, որ թատերական կյանքի շատ հարցեր լուծում են պահանջում, բայց հայտնի չէ, թե ինչ հաստատություն է զբաղվելու դրանցով։ Արվեստի վարչությունը պետական մարմին է և բացի դա նրա ուսերին է ընկած արվեստի բոլոր ճյուղերի ղեկավարությունը։ Ալտմանն ասել է, թե ինչո՞ւ չհետևել ВТО-ի օրինակին և չկազմակերպել Հայոց թատերական ընկերություն։ Խորհուրդ է տվել Ջանիբեկյանին ձեռնամուխ լինել և գործի անցնել, ունա էլ, հասարակական ջիղ ունեցող դերասան, թևերը քշտել ու աստիճանաբար է մտել։ Այդ մասին իմացել են Գրիգոր Ավետյանն ու Միքայել Մանվելյանը, Հասմիկն ու Օլգա Գուլազյանը, Արուս Ոսկանյանն ու Վաղարշ Վաղարշյանը։ Նաև ուրիշներ, և բոլորն էլ պաշտպանել են իրենց ընկերոջ գովելի նախաձեռնությունը։

— Ի՞նչ է անելու այդ ընկերությունը:

Իմ հարցի պատասխանը տվին Մելիքսեթյանն ու Ջանիբեկյանը, մեջընդմեջ, միմյանց լրացնելով:

Դա լինելու է կամավոր, հասարակական, ստեղծագործական հաստատություն, որն իր շուրջը համախմբելու է թատրոնի բոլոր աշխատողներին: Կազմակերպելու է նոր ներկայացումների քննարկումներ, թատերական հարցերի շուրջ աուդիտներ, օգնություն է ցույց տալու շրջանային թատրոններին, նյութական աջակցություն՝ ծերացած դերասաններին: Դերասանների ու բեմադրիչների, հատկապես երիտասարդ ուժերի պատրաստությունն ընդլայնելու և կատարելագործելու նպատակով նրանց գործուղելու է Մոսկվա, Լենինգրադ, միության տարբեր քաղաքների թատերական կյանքի հետ ծանոթանալու համար: Պայքար է ծավալելու բեմական խոսքի համար: Հիմնարկ-ձեռնարկություններում կազմակերպելու է հայոց թատրոնի անցյալին ու ներկային նվիրված դասախոսություններ: Կազմակերպվելու են ներկայացումների ստուգատեսներ, նոր պիեսների մրցույթներ և այլն, և այլն:

— Գործ շատ կլինի,— ամփոփեց Գուրգենը,— միայն թե ցանկություն լինի և աշխատող մարդիկ լինեն:

Զրույցից պարզվեց նաև, որ չհաշված Ռուսաստանը, ոչ մի այլ հանրապետություն չունի թատերական ընկերություն, առաջին քայլն անում է Հայաստանը: Եվ իսկապես, մի քանի տարի անց հայկական նախաձեռնությունն անցավ Բելոռուսիային, Վրաստանին և Ուկրաինային ու մինչև քառասունական թվականների կեսերը, միմյանց հաջորդելով, կազմակերպվեցին ազգային թատերական ընկերություններ մյուս հանրապետություններում ևս:

1940-ի գարնանը արվեստի գործերի վարչությունը որոշում կայացրեց՝ ընդառաջել Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների նախաձեռնող խմբի առաջարկին՝ Հայկական թատերական ընկերության ստեղծման վերաբերյալ: Ստեղծվեց կազմհանձնաժողով, որքան հիշում եմ, հետևյալ ընկերներից՝ Հայկանուշ Դանիելյան, Ա. Ոսկանյան, Վ. Վաղարշյան, Ա. Գուլակյան, Մ. Թավրիզյան, ռուսական թատրոնի դերասանուհի Ն. Կեմարսկայա, թատերագետ Ս. Մելիքսեթյան: Կազմկոմիտեի նախագահ նշանակվել է Գուրգեն Ջանիբեկ-

յանը, որը և հետագայում ընտրվեց նորաստեղծ Հայկական թատերական ընկերության առաջին նախագահ:

Այն ժամանակ թերահավատ մարդիկ կային՝

— Ո՞ւմ և ինչի՞ համար է ստեղծվում այդ նոր կազմակերպությունը:

— Հեղափոխությունից առաջ հասկանալի էր, հիմա, երբ մեր գլխին պետություն և կուսակցություն կա, ի՞նչ կարիք կա նոր կազմակերպություններ հնարել:

— Եթե խոսքը վերաբերում է զառամյալ դերասանների օգնությանը, դրա համար գոյություն ունեն Գեղաշխ, Սոցապ:

Թերահավատներից ավելի շատ էին լավատես մարդիկ, որոնք ոգևորված էին թատերական ընկերություն ստեղծելու գաղափարով և հասկանում էին դրա ոչ միայն անհրաժեշտությունը, այլ նաև պատմական նշանակությունը, մանավանդ որ ունեինք այդ գործի բավական հին ազգային ավանդներ: Շատերն էլ ասում էին, թե ինչո՞ւ գրողներն ու նկարիչները, կոմպոզիտորներն ու ճարտարապետները պետք է ունենան իրենց ստեղծագործական միությունները, իսկ մենք՝ թատերական աշխարհի մարդիկս՝ ոչ:

— Մենք ինչո՞վ ենք պակաս:

Ճիշտն ու արդարը սրանք էին, որոնք այն ժամանակ գուցեև շատ էլ լավ չէին պատկերացնում, թե ի՞նչ է անելու թատերական ընկերությունը, բայց զգում էին դրա կարիքն ու նշանակությունը:

Գրում եմ այս էջերը, երբ գործի հիմնադրումից 40 տարուց ավելի է անցել: Ես լավ գիտեմ, թե մեր թատերական կյանքում ինչ նշանակալի տեղ է գրավում ընկերությունը: Ակամա հիշում եմ «Արևելյան թատրոնի» դերասան Ստեփան Էքշյանին, որ մի քանի ամիս աշխատավարձ ստացած չլինելով և տեսնելով օթյակներում հայոց մեծահարուստներին, քեմից ասվելիք իր մենախոսության նյութը փոխել է ու խոսել հայ դերասանի թշվառ վիճակից:

Բոլորը մնացել էին զարմացած, թե ինչպես է հաջողվել Ջանիբեկյանին համոզել վերադաս մարմիններին, որպեսզի Ալավերդյան փողոցում գտնվող կառավարության հին շենքը տրամադրվի նորաստեղծ ընկերությանը: Այստեղ, սակայն, ընկերությունը կարճ մնաց: Հենց որ պատերազմն սկսվեց,

այդ շենքը տրամադրվեց զինվորական կազմակերպություննե-
րի, իսկ ընկերությանն առաջարկվեց փոխադրվել Աբովյան
փողոցի 22 շենքի երկրորդ հարկը, Խանոյանի լուսանկարչա-
տան հարևանությամբ և բավականանալ այն դահլիճով, որից
օգտվում էին նաև նկարիչներն ու կոմպոզիտորները:

Առաջին իսկ տարուց թատերական ընկերությունը հետա-
քրքիր զեկուցումների մի շարք կազմակերպեց, որոնցից
երկուսին ներկա եղա՝ բեմական խոսքի մասին (Արուս Ոս-
կանյան), թատրոնը հին Հայաստանում (Գարեգին Լևոնյան):
Կայացավ Արմեն Արմենյանի պատվո երեկոն, «Պատվի հա-
մար» և «Խաթաբալա» ներկայացումների քննարկումները:

Շատ մարդ չէր գալիս հավաքույթներին, մի երեսուն,
ամենաշատը հիսուն հոգի, բայց ծանրակշիռ լսարան էր դա:

Հիշում եմ, որ թատերական ընկերության գործունեության
առաջին ամիսներից Արուս Ոսկանյանը գործուղվեց շրջանա-
յին թատրոններ: Նա էլ արվեստի խանդավառ գործիչ, եռանդը
շատ, ոգևորությամբ մեկնեց՝ շրջանային թատրոնների դերա-
սանների համար բեմական խոսքի շուրջ զրույցներ ունենալու:
Երբեմն էլ, պատմում էր դերասանուհին, դիտել է որևէ ներ-
կայացում և հաջորդ օրը դիտողություններ արել, թե որ դե-
րասանն ինչ մեղանչումներ է արել լեզվի դեմ:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ Ջանիբեկյանը ճիշտ
հիմքերի վրա էր դրել աշխատանքը, գործի ասպարեզ քաշե-
լով լուրջ ուժեր, որոնց հայտնած մտքերը, նույնիսկ այն
դեպքում, երբ վիճելի էին թվում, հետամուտ էին թատերական
արվեստի առաջընթացին:

Մի խոսքով՝ ստեղծագործական միությունների կողքին
սկսեց գործել թատերական ընկերությունը, որի օրինակով
հետագայում ստեղծվեց նաև երգչախմբային ընկերություն:

ՆՈՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ղազիշե Հովհաննիսյանը, այն ժամանակ բոլորովին երի-
տասարդ, հետաքրքրվում էր կերպարվեստով և նկարչական
հարուստ գրականություն ուներ տանը: Մի օր եկավ հրատա-
րակչություն, ներկայացավ, ասաց, թե ինքը մտադիր է Ռա-

ֆայելի մասին գիրք գրել։ Կամեցավ իմանալ՝ հրատարակչությունը հա՞նձն կառնի լույս ընծայել։ Որքան միտս է, ասացի, թե Ռաֆայելի մասին հայերեն արժե գրել այն դեպքում, եթե հեղինակը նոր խոսք ունի ասելու, ինչպես դա ժամանակին արել է Կորգանովը Բեթհովենի վերաբերյալ իր հայտնի աշխատությամբ, իսկ եթե նպատակ ունի հայոց լեզվով ամփոփելու այն, ինչ շատ ուրիշ հեղինակներ արել են արդեն, ապա այդ դեպքում թերևս ավելի նպատակահարմար է թարգմանել Ա. Ջիվելեգովի «Ռաֆայելը», որ գիտական լինելով, կարդացվում է վեպի նման։ Չհամոզվեց, դժգոհ գնաց։

Նա այդպես էլ իր Ռաֆայելը» չգրեց, բայց մի ժամանակ նկարիչների միությունում դեկավար դիրքի հասավ, արևմտաեվրոպական կերպարվեստի պատմության դասընթաց կարդաց Երևանի թատերական ինստիտուտում և գրեց մեկ-երկու գիրք, հայ արվեստագետների մասին, մինչև հիմա էլ չգիտեմ, թե ինչու՝ ստորագրելով Ե. Կուրդոյան։

Ահա այս Եղիշեն 1938-ին իր տանը երբեմն-երբեմն հավաքույթներ էր կազմակերպում, իր շուրջը համախմբելով իր հասակակիցներին՝ նկարչական ալբոմներ նայելու, երաժշտություն լսելու, զրուցելու, վիճելու, զվարթ ժամանակ անցկացնելու։

Ես էլ եմ հրավիրվել մասնակցելու մի այդպիսի հավաքույթի։

Եղիշեն ապրում էր Ամիրյան փողոցում։ Ամիրյան-Տերյան անկյունի շենքի երկրորդ հարկում։ Ջբաղեցնում էր ոչ մեծ տարածություն։ Ամուրի էր, բայց նրա տանն իդեալական մաքրություն էր տիրում։

Երբ բացի Եղիշեի տան դուռը, այնտեղ արդեն բավական մարդ կար, ծանոթ դեմքերից իմ համալսարանական դասընկերներ Ալիս Մանուկյանը և Գարեգին Հովսեփյանն էին։ Մյուսներն անծանոթ էին։ Ինձ նստեցրին մի սիրունատես աղջկա կողքին։

— Ծանոթացեք Դորայի հետ,— ասաց տանտերը։

Երեկոյի ընթացքում իմացա, որ իսկական անունը Շաղիկ է, մտերմական շրջաններում նրան Աշիկ էին կոչում, իսկ ինքը, ենթադրեցի ես, արևմտյան կինոնկարի ազդեցության տակ վերանվանվել է Դորա։ Լավ չմտածեցի այդ աղջկա ճա-

շակի մասին, ինչպես կարող էր հայկական Շաղիկ գեղեցիկ անունը փոխարինել ինչ-որ Դորայով: Մի երկու բաժակ արդեն խմել էի, մի փոքր գինովցած էի, շրջվեցի, որ նախատեմ, չգիտես, թե ինչու վերապահելով ինձ այդպիսի իրավունք: երբ տեսա նրա հաճելի դեմքը, գաղափարական մարդն անմիջապես տեղի տվեց էսթետի առաջ և մտածեցի՝ որ ոչինչ, հանուն իր այս հրապույրի թերևս ներելի է նրա այդ զանցանքը: Բայց նա, երևի, հասկացավ ինձ:

— Գիտեք, դա անցյալ է, մի քանի տարի առաջվա պատմություն, պատանեկան հասակի մոլորություն, ես հիմա Շաղիկ եմ, բայց ընկերներս հին սովորությամբ շարունակում են ինձ Դորա կոչել:

Շաղիկի հայերենն ընտիր էր, լավ տիրապետում էր ռուսերենին, հումորի զգացում ուներ, կարդացած էր: Ասող-խոսող էր: Պարզվեց, որ թավջութակահար է:

Զրույցի ընթացքում ես չգտա расплывчатый բառի հայերեն թարգմանությունը:

— Ինչպե՞ս կլինի հայերեն,— շրջվեցի դեպի սեղանակիցները:

— Հայրս թարգմանում է ջրջրիկ:

— Ո՞վ է ձեր հայրը:

Շաղիկը զարմացած, որ նշանակում էր՝ «Մի՞թե չգիտեք», ասաց՝

— Նիկոլ Աղբալյանը:

Ես լեզուս կծեցի: Ուրեմն՝ իմ կողքին նստած է հռչակավոր քննադատի, դաշնակցական կուսակցության պարագլուխներից մեկի դուստրը:

Սեղանակից տղաները, ամենքն անխտիր հաճոյախոսություններ էին անում նրան: Եվ ինքն էլ աջ ու ձախ սիրալիր ժպիտներ էր շաղ տալիս: Մի խոսքով, այս աղջիկը... աղջիկ, աղջիկ եմ ասում, բայց պարզվեց, որ ամուսնացած է և զավակի մայր է արդեն:

Ես սեղանապետն էի և մտադիր էի Շաղիկի կենացը խմել վերջում՝ «կենացները քանի գնում քաղցրանում են» սկզբունքից ելնելով, բայց տանտերն ասաց, թե հիմա ուր որ է Շաղիկի ամուսինը կգա նրան տուն տանելու, ուստիև ինքն

առաջարկում է նրա կենացը հիմա խմել և մի փառահեղ կենաց առաջարկեց, գովաբանելով նրան ամեն տեսակետից։

Սեղանի տղամարդկանց տրամադրությունը փոխվեց, երբ իմացան, որ Շաղիկն ամուսին ունի, նույնիսկ երեխա։

Մի փոքր հետո երևաց Շաղիկի ամուսինը, Թիֆլիսեցի մի տղա, ճարտարապետ, որ մեր հարցերին պատասխանում էր ռուսերեն, քաղաքավարության համար նստեց մի հինգ րոպե, հետո ներողություն խնդրեց, որ տանում է կնոջը և Շաղիկի հետ դուրս եկավ։

Շաղիկի գնալով ինչ-որ մի բան պակասեց մեր հավաքույթից։ Ինչպես լինում է նման դեպքերում՝ չգիտեինք, ինչ ասենք, ինչ չասենք։

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

Ես չեմ կարող իմ կյանքի պատմությունն անել և չհիշել մի մարդու, որի լուսավոր պատկերը մինչև հիմա էլ, թեև նրա մահից քառորդ դարից ավելի է անցել, մնացել է իմ հիշողության մեջ։

Խոսքը Երվանդ Շահազիզի մասին է։

Ինձ և ուրիշ երիտասարդների նրա հետ կապողը խաչատուր Աբովյանի կյանքի և գործի նկատմամբ մեր ունեցած հետաքրքրությունն էր։

Երբ հանդիպեցի՝ 80 տարեկան էր, գուցեև մի փոքր ավելի և գործ ունեցա հետը շուրջ տասնհինգ տարի, ու ես հասկացա, որ կա հասակ, երբ մարդու համար միևնույն է, թե ինչպես է իր տունը կահավորված, ինչպիսին է մահճակալը, որի վրա քնում է գիշերը և սեղանի վրա սփռո՞ց կա, թե ոչ։ Այդպիսի մարդկանց համար երկրորդական, տասներորդական նշանակություն է ստանում կենցաղը։ Իր մտահոգության կենտրոնում աչքերի լույսն է, չլինի, թե կորցնի, հանկարծ չթուլանա հիշողությունը և սկսի մոռանալ անուններ, թվականներ կամ շփոթել դեպքերը։ Ես հասկացա, որ այսօրինակ մարդիկ ապրում են հոգեկան շատ բարձր կյանքով, ու եթե ուզում են ապրել, ապա այն պատճառով միայն, որ դեռ անելիք ունեն, պարտք գրականության առաջ, թանկագին նպատակներ և անկատար ծրագրեր։

Ի պատիվ այդ մարդկանց, որոնց շարքին էր պատկանում նաև երվանդ Շահազիզը, պետք է ասվի, հոգատար էին երիտասարդների նկատմամբ, հասկանում էին, որ իրենք գնացող են, հետևապես գալու են նորերը, ուստի հարկավոր է ձեռքը պահել այդ երիտասարդների գլխին:

Եվ նա իր ձեռքը պահեց նաև իմ գլխին և իրեն շրջապատող բոլոր այն երիտասարդների, որոնք հասկանում էին, թե իրենց առջև մարդ է, որ ծնվել է Աբովյանի անհայտացումից ութ տարի հետո ու թեև պատանի, բայց Ստեփանոս Նազարյանցի և Միքայել Նալբանդյանի ժամանակակիցն է եղել:

Ու եթե իրեն շրջապատող երիտասարդների նկատմամբ Շահազիզը համակրանք ուներ ու հույս, որ ապագայում օգտակար են լինելու բանասիրությանը, այն պատճառով, որ իրեն լսում, հարցնում էին, հետևում իր խորհուրդներին, մի խոսքով, ինպես ինքն էր ասում, ուշիմ են և ձգտումնառատ:

Երբեմն նա մեզ չափավորում էր, ասում, թե մեծ-մեծ հարցերի հետևից մի ընկեք, ամենաճիշտը, ամենալավը և ամենաօգտակարը թանգարանում աշխատելն է, նոր և անհայտ էջեր հայտնաբերելն ու հայտնաբերածի մեկնությունն է:

— Բանասերի լավագույն դպրոցը թանգարանն է,— կրկնում էր նա շատ անգամներ:

Շահազիզին շրջապատողներս, որ ոչ միայն թանգարանում էինք տեսնում նրան, այլ նաև տանը, լսում իրեն և մեր բավականությունը կրկնակի էր լինում, երբ պատմում էր դեպքեր և իրադարձություններ, որոնք մեզանից շատ առաջ էին տեղի ունեցել, և պատմելիս գործածում էր մի ոճ, որ պատմած ժամանակներին էր վերաբերում՝ սոքա, նոքա, և մենք իմանում էինք, ոչ միայն մեր չիմացածը, այլ նաև առնում պատմվող ժամանակների բույրը:

— Ռուբեն,— ասում էր նա,— դուք, կարծեմ, թատրոնով եք հետաքրքրվում նաև: Գիտեք չէ՞, որ ես հանդիպել եմ Պետրոս Ադամյանին, տեսել նրա խաղը:

— Ինչո՞ւ հիշողություններ չեք գրում:

— Գրել եմ, գրել:

Այդ ասելով, նա պատմում էր Ադամյանի օրերից, և ոգեվորության պահին էլ մեղմ էր ու հանդարտ:

...«Համլետում» Ադամյանի հետ Օֆելյայի դերը կատարել

է մի սիրունիկ օրիորդ՝ Հեղինե Սալտիկյան անունով։ Ես հիացած էի նրանով, հանդիսականները՝ նույնպես, և նա, պատկերացրեք, ապագայում դարձավ իմ կինը։

Առաջին անգամ նրանից լսեցի Օլգա Շահբազյանի հետ արտիստի ունեցած պատմությունը, ինչպես նաև այն սերը, որ եղել է Ադամյանի և Եվգենյա Խոխլովայի միջև։

Չէր սիրում, երբ շտապում էինք և մեր առաջին իսկ եզրակացությունը հանձնում հասարակության ուշադրության։

— Մի՛ շտապեք, ծանր ու թեթև արեք։ Թողեք, որ ձեր մտքով անցածի վրայից ժամանակ անցնի, թեկուզ մի քանի ամիս և տեսեք, եթե ձեր մտքից անցածն առաջվա նման ձեզ համոզիչ կթվա՝ նոր միայն հրապարակեք։

Գիտեի, որ նա է մեր գրական թանգարանի հիմքը դրել։ Եւ գիտեի, որ Շահազիզին ենք պարտական, որ բերել և հանձնել է նույն թանգարանին Պետրոս Ադամյանի թղթերը և որքա՜ն ճիշտ կլիներ, եթե գրականության և արվեստի թանգարանն այսօր կրեր այդ պատվական մարդու անունը։

Իմ գրադարանում պահվում են Շահազիզի մի քանի հրատարակությունները իր մակագրությամբ։ Դրանք թանկ հիշատակներ են։

Հետո, երբ տարիներ անցան, ես մտածեցի, թե բազմավաստակ մարդիկ գնում են, և մենք՝ նրանց մոտիկ կանգնած երիտասարդներս, որ շատ բան ենք սովորել նրանցից, պարտքի տակ ենք մնում։ Ու ես երջանկորեն ուրախ եմ, որ ինձ վիճակվեց տակավին իր կենդանության օրոք պարտահատույց լինել։ Երբ բոլորեց Երվանդ Շահազիզի ծննդյան 90-ամյակը, գրականության ինստիտուտը, որի աշխատակիցն էի, որոշեց նշել բազմավաստակ բանասերի հոբելյանը, և Խորեն Սարգսյանն առաջարկեց ինձ հանձն առնել հոբելյանական զեկուցումը։ Երբ հոբելյանական երեկոն ավարտվեց, Շահազիզին շրջապատեցին շատ նշանավոր մարդիկ, այն ժամանակվա գիտության և գրականության հռչակավոր դեմքերը՝ Ավետիք Իսահակյան, Հրաչյա Աճառյան և ուրիշներ։ Ես անկյունում կանգնած սպասում էի իմ մոտենալու հերթին։ Ինքը մոտեցավ ինձ, սեղմեց ձեռքս, շնորհակալություն հայտնեց և բարեմաղթեց, որ իր օրինակով ես էլ արժանանամ 90-ամյա հոբելյար լինելու և հոբելյանիս զեկուցում կարդա ծերունու վաստակը

գնահատող մի երիտասարդ բանաստեղծ նույն հասակի, ինչ ես եմ հիմա. այն ժամանակ 37 տարեկան էի։

Բոլորս համոզված էինք, որ նա կբոլորի իր ծննդյան 100-ամյակը։ Բայց այդպես չեղավ։ Շահազիզը վախճանվեց 96 տարեկան հասակում։

Նա մահացավ ամռանը, Երևանից բացակայածս ժամանակ, ոչ ոք չտեղեկացրեց ինձ։ Վերադարձա Երևան և նոր իմացա։ Ինձ թվաց, թե հարազատներիցս մեկին եմ կորցրել։

Բանաստեղծներիս հետ՝ Հրայր Մուրադյան, Արամ Ինճիկյան, Նշան Մուրադյան, գնացի գերեզմանատուն։ Երկար կանգնեցինք թարմ շիրիմի առաջ։ Վերադարձին լուռ էինք։ Ինչ էին մտածում ընկերներս, չգիտեմ, բայց իմ մըտքով անցավ, որ Շահազիզի մահով այրվեց 19-րդ դարի հետ մեզ կապող վերջին կամուրջը։

ԱԲՈՎՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

30-ական թվականներին հոդվածներ եմ գրել, առաջաբաններ։ Մեծ մասամբ դասական հեղինակների մասին՝ Նար-Դոս, Հովհաննես Հովհաննիսյան, Վրթանես Փափազյան։ Ամենից շատ և ամենից ավելի խաչատուր Աբովյանի մասին եմ գրել։ Ըստ իս՝ ամենից նկատելին «Աբովյանի կյանքը» գրքույկն էր։

Աբովյանն ինձ համար այն իդեալն էր, որին թվում էր, թե պետք է նմանվել, որից պետք է օրինակ առնել։ Ու ես այն կարծիքին էի, ու հիմա էլ մնում եմ նույն մտքին, որ հարկավոր է Աբովյանի կյանքի պատմությունը գրել, գիտականից բացի, հանրամատչելի, այնպես, որ վեպի նման կարդացվի։

Անշուշտ, գիտությունն իր դերն է կատարում, արվեստն՝ իր։ Բայց եթե մեր նպատակը արվեստի մարդուն ճանաչել տալն է, ամենալավ ճանապարհը փաստագրական վիպագրությունն է։

Եթե Աբովյանի մասին այդպիսի գիրք գրվի, այն ժամանակ երևի ընթերցողը կհասկանա, թե ինչ է նշանակում մի մարդու կյանքի ընթացք, երբ նա գնում է յուրացնելու համամարդկային մշակույթը, առանց կտրվելու ազգային արմատներից։ Ու ինչ է նշանակում անկեղծ ու պոռթկուն հոգի, որի

համար ժողովրդի շահը վեր էր անձի բարօրությունից, բայց որին այս աշխարհից տանողը նրա հոգին բզկտող հակասությունները եղան, երբ նա ստիպված էր ծառանալ այնպիսի հեղինակությունների դեմ, որոնք իր սրբությունն էին մի ժամանակ: Դա մի կյանք էր, որ ապրում էր ինքն իր հետ դու-ով խոսելով:

Ես ուզում էի այսպիսի գիրք գրել: Ոչ վեպ, բայց կյանքի պատմություն, որ կարդացվեր նույն հաճույքով, ինչպես վեպն է կարդացվում: Ես չեմ ասում, թե կարող էի, բայց իմ մեջ ձգտում կար, նաև հավատ: Բայց ինչպես հաճախ է պատահում կյանքում, ծրագրում ես ու չես անում: Մի խոսքով, ես այդպես էլ չգրեցի իմ փափագած գիրքը:

Ափսոս, որ տարիների ոգևորությունս կես ճանապարհին մնաց, ու ես եղա Աբովյանի մասին գրքույկի հեղինակ և մի շարք նորահայտ նյութերի հրապարակող:

1938-ին հրապարակեցի «Ո՞վ է Աբովյանը» խորագրով մի հոդված: Դա գրական այն փորձերից էր, որով գրականագիտական նոր սերունդը ջանք է թափել հաստատելու հայ մեծ լուսավորականի ժողովրդայնությունն ու դեմոկրատիզմը իր հակադրություն պաշտոնապես ընդունված այն հայացքի, թե Աբովյանը ռուսական ցարիզմի գործակալն է եղել Անդրկովկասում:

«Աբովյանի կյանքը» խորագրով գրքույկը «Վերքի» հեղինակի հանդեպ այդ սխալաշատ մտայնության վերանայումներից էր:

Այսօր այդ գրքույկը գուցեև չի ներկայացնում այն հետաքրքրությունը, ինչ մեր աբովյանագիտության արշալույսին: Իհարկե, կուզեի, որ դա իր արժեքը պահպանած գործ լիներ նաև այսօր, բայց մի՞թե հեղինակը, գրիչը ձեռքն առնելիս, մտածում է իր գրած էջերի երկարակեցության մասին, հեղինակի համար կարևորն այն ազդեցությունն է, որ գրածն ունենում է իր հետ ապրող սերունդների վրա, իսկ հետո ինչ կլինի... կվճռի ժամանակը: Մի գրքույկի համար քի՞չ բան է թե-կուզ որոշ ժամանակ գրավել մարդկանց, ժամանակակիցների մտքերը: Դրանցից հետո թող, որ գերազանցվի ուրիշից: Այդպես է մշակույթի զարգացման տրամաբանությունը:

Ես իմ կյանքի այդ օրերը երբեք չեմ մոռանա։

1939-ի գարնանն էր...

Ավելի լավ է՝ սկսեմ հեռվից։

Գրողների միության Լենինականի բաժանմունքի պատասխանատու քարտուղարը Անդրանիկ Հովսեփյանն էր։ Դա մի պաշտոն էր, որ վարում էր նա սիրով ու ճկուն։ Հայտնի էր Ղուկաս Ղուկասյանին նվիրված «Սիրտ» վեպով։ Կազմակերպչական ձիրքի տեր մարդ էր՝ քաղաքի մշակութային կյանքի տերն ու տնօրենն էր։ Քաղաքի ղեկավարները հավատում էին նրան և համոզված էին, որ ինչ անում է, ճիշտ ու լավ է անում, մշակութային կյանքի բոլոր հարցերի լուծումը վստահել էին իրեն։

1938—39 թվականներն էին։ Աբովյանական շարժման աշխույժ տարիներն էին։ Աբովյանի պատմական ծառայությունն ու նշանակությունն էր վերանայվում։ Հոդվածներ էին գրվում, արխիվային նոր նյութեր էին հրապարակվում, զեկուցումներ և դասախոսություններ էին կարդացվում։ Գրական մթնոլորտի կենտրոնը Աբովյանն էր։

Այդ շարժմանը ես էլ մաս ունեի։ Եվ իմ արած գործերը, հատկապես «Վերքե» առաջաբանը, լավ արձագանք էր գտել Լենինականի «Բանվոր» թերթի էջերում։

Մի օր պետական հրատարակչություն եկավ Անդրանիկ Հովսեփյանը և հրավիրեց Լենինական՝ քաղաքի հասարակայնության համար Աբովյանի կյանքի և գործունեության մասին դասախոսություն կարդալու։

Աբովյանի հետ կապված ոչ մի խնդրանք չեմ մերժել, համարելով, որ դա իմ հոգու պարտքն է, իսկ հիմա կանչը Լենինականից էր՝ իմ ծննդավայրից, որի հանդեպ պարտքի զգացում ունեի։

Նշանակված օրը մեկնեցի Լենինական։ Կայարանում դիմավորեց ինձ Անդրանիկ Հովսեփյանը Լենինականցի մի քանի գրողի հետ միասին, որոնցից միտս մնաց միայն «Գող» պատմական դրամայի հեղինակ Լյուդվիգ Միքայելյանը, որի հանդեպ միշտ էլ համակրական զգացում եմ ունեցել։ Փոքրինչ գավառական շեշտով, բայց ռոմանտիկ անձնավորություն,

որ մեծ հավատով ու աղնիվ սրտով էր գրական ասպարեզ մտել: Որքան էլ կյանքը փոխվեց, ինքը մնաց հավատարիմ իր մաքուր նկարագրին:

Քաղաքային կուլտուրայի տան դահլիճը լեփ-լեցուն էր: Հիմա այդ շենքում տեղավորված է Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Աբովյանի հարցը հուզում էր ամենքին: Ես գիտեի, բայց նորից հասկացա, որ Աբովյանը մեր ժողովրդի համար հայ նոր գրականության նախահայրը չէ միայն, այլ հայկականության խտացած արտահայտությունը, որը թերևս խաչաձևումն է այն բոլորի, որին ժողովուրդը ճակատագիր անունն է տալիս: Մի խոսքով՝ ոգի է:

Երբ մոտեցա ամբիոնին, ծափահարեցին, շա՞տ թե քիչ, միտս չէ, բայց հասկացա, որ չի կարելի ի միջի այլոց խոսել, շահագործել բանավոր խոսքի շնորհը ու մի քանի րոպե անց զարմանալի, շատ զարմանալի բան կատարվեց ինձ հետ: Մի կողմից՝ պատասխանատվության զգացումս բարձրացավ, մյուս կողմից՝ այնպիսի զգացում ունեցա, որ իբր անծանոթ չէ ինձ այս լսարանը, որ ես առաջին անգամ չէ, որ այս մարդկանց համար խոսում եմ: Դա վստահություն ներշնչեց ինձ:

Դասախոսությունը երկար տևեց, համարյա երեք ժամ: Առանց ընդմիջման: Լսում էին: Դա սովորական ունկնդրություն չէր: Դահլիճում կարծես չկային տարբեր բնավորություններ, կրթության տարբեր աստիճաններ, նյութի իմացության տարբեր չափեր: Երեք հարյուրից ավելի մարդ, մի մարդ դարձած՝ հարազատ ու նվիրական:

Աբովյանի հանդեպ մանկությունից բերած երախտագետ զգացումը, համակրանքն ու ցավը նրա ողբերգական ճակատագրի նկատմամբ, հոգեկան տանջող հակասությունները, այս բոլորը միասին առած՝ նրանց միասնացրել էր, իսկ թե ինչ ներշնչում էր եկել վրաս, չգիտեմ, բայց ես համակ ոգևորություն դարձած, դասախոսի և հեռատես հնարանքները մոռացած, խոսում էի ժամանակի զգացողությունը կորցրած: Չէի ուզում ավարտել:

Գրում եմ ու մտածում՝ անհամեստ չեղա՞ արդյոք, չստացվեց դասախոսության ինքնափառաբանում: Եթե այդպես է, ապա թող ինձ ների մեծահոգի ընթերցողը, պարզապես կա-

մեցա պատմել իմ երջանիկ օրերից մեկը՝ ընդգծելու երևույթի հոգեբանական այն կողմը, թե ինչ է մարդու համար ծննդավայրը, հողի ու կարոտի զգացողությունը, ինչ ուժ է, երբ մարդուն հավատում են, ու ինքը համակվում է այդ հավատով։

Գարնանային այդ անմոռանալի երեկոն, մայիսի 20-ը, մնաց իմ հիշողության մեջ։ Մի շաբաթ չանցած՝ Անդրանիկն ուղարկեց ինձ դասախոսության աղագրությունը, որ փոքր-ինչ մշակելով, լույս տեսավ որպես Խաչատուր Աբովյանի երկերի ժողովածուի ներածական հոդված և նույն տարին էլ առանձին գրքույկով՝ «Աբովյանի կյանքը» վերնագրով։

ԻՆՉ Է ԿՅԱՆՔԸ

Անցնում էի Սպանդարյան փողոցով դեպի Աբովյան։ Հանդիպակաց մայթում օրորաքայլ անցնում էր Հակոբ Սլկունին։ Միմյանց լավ ճանաչում էինք։ Կարդացած և անպայման խելոք մարդ էր, բայց դժբախտաբար, իրեն խմելուն էր տվել։ Վշտացած ու մի փոքր էլ շարացած մարդ էր։ Ինքը ոչինչ չէր ասում, բայց բոլորն էլ գիտեին, որ զարգացում և կարողություն ունի, բայց իրեն դրսևորելու, իր ընդունակությունը կառավարող կամք չունի։

Տեսա, որ Սլկունին անցնում է մյուս մայթով, չտեսնելու տվի։ Ինքը նկատեց ու կանգ առավ։ Այնպիսի շեշտակի հայացք նետեց վրաս, որ մեխվեցի տեղում։ Մատով նշան արեց, կանչում է։ Վիրավորված, մտածեցի՝ չգնամ, երեխա հո չե՞մ նրա համար, շատ էլ մի քանի տարով մեծ է, մատով կանչելը ո՛րն է, բայց մտածեցի, որ խմած մարդու հետ չարժե գլուխ դնել, գնացի։

— Լսեք, սիրելի բարեկամ,— դիմեց նա ինձ ռուսերեն, ու նրա աչքերից կշտամբող հայացք էր ինձ նայում։

Շարունակեց.

— Կարդացի ձեր «Աբովյանի կյանքը»։ Երեկ երեկոյան վերջացրի։ Այստեղ Աբովյանի կյանք չկա... ամեն ինչ կա, բայց ոչ կյանք։ Էպոխա, պատմություն, գործունեություն՝ մանկավարժական, գրական, լուսավորական, բայց ոչ կյանք։ Կա նաև հոգեկան դրամա սոցիալական հողի վրա, բայց կյանք չկա։

Մի պահ լռեց և նայեց շուրջը, տեսնելով, որ մի երկու հետաքրքրված անցորդ կանգնել լսում են իրեն և, ըստ երեվույթին, չկամենալով վշտացնել իր բարեկամին, ավելացրեց.

— Ես այս բոլորն ասում եմ, որովհետև գնահատում եմ ձեզ, բայց ձեր աշխատությունը կոչել եք «Աբովյանի կյանքը», մինչդեռ այստեղ կյանք չկա, հասկանո՞ւմ եք ինչ է նշանակում կյանք:

Նորից լռեց և խոր շունչ քաշեց:

— Ինչո՞ւ չեք գրել, թե ինչ ծաղիկ էր սիրում: Կամ թե Երևանի երկնքին նայելիս ի՞նչ է անցել նրա մտքով: Ինչպիսի աղջիկներ էր սիրում՝ թո՞ւխ թե ճերմակ, սևա՞չյա թե կապտաչյա, գե՞ր թե նիհար... Ինչո՞ւ չեք գրել: Ինչո՞ւ չեք գրել, թե կնոջ հետ ինչ հարաբերությունների մեջ է եղել. պարդոն, կարծեմ, դրա մասին մի-երկու տող կա: Իսկ մնացածի մասին ինչո՞ւ չեք գրել: Չեք գրել, որովհետև մտածել եք, որ չեն տպագրի: Է՛հ, թող չտպագրեին: Ի՞նչ կլինի որ: Ոչինչ էլ չէր լինի: Ո՛չ գրականությունը կտուժեր, ո՛չ էլ դուք, փառք աստծո, այդ գրքի հոնորարի կարիքը չունեիք:

Լռեց, նայեց շուրջը, տեսավ, որ շատ մարդ է հավաքվել և գոհ, որ իր լսարանն ընդարձակվել է, ոգևորված առաջ տարավ խոսքը:

— Գիտե՞ք ինչ բան է կյանքը:

Ես սխալվեցի և գլխով նշան արի, թե գիտեմ:

— Ո՛չ, չգիտեք:

Բարձրացրեց ձայնը և հետն էլ աջ ձեռքը: Եվ ապա կամաց, համարյա շշուկով, բայց այնպես, որ լսեմ, ասաց.

— Կյա՞նքը, լսե՛ք, թե ինչ է: Ասեմ ձեզ, որ իմանաք:

Նորից նայեց շուրջը:

— Անտոն Պավլովիչը մեռնում է: Վերջին շնչի վրա է: Նայեց մահճակալը շրջապատած մարդկանցից մեկին խնդրող մարդու հայացքով: Չհասկացավ: Նայեց ուրիշի, սա էլ չհասկացավ: Սրանք շփոթված նայեցին միմյանց: Չեխովը խոսել չէր կարողանում, հայացքն ուղղեց բժշկին:

— Մի բակալ շամպանսկի...

Թարգմանեց բժիշկը Չեխովի հայացքը:

Անտոն Պավլովիչի շնորհակալ հայացքը մնաց բժշկի վրա:

Սլկունին մի պահ լուռ մնաց և եզրակացրեց.

— Ա՛յ, սա է կյանքը։
Դադար.
— Հասկացա՞ք։
Ես ոչ մի ձայն չհանեցի։
— Հասկացաք։
Ասաց ու գնաց։

ՏԻԿԻՆ ԱՂԱՎՆԻՆ

Ես նրա մասին լսել էի, բայց չէի տեսել։ Լսել էի, որ ծնվել է Պոլսում, նախնական կրթությունը ստացել այդտեղ, բայց հետագա ուսուցումը շարունակվել է Անգլիայում։ Ուսանել է Լոնդոնի արքայական երաժշտական ակադեմիայում և նույն քաղաքի Գեղարվեստից ակադեմիայում։ Տիրապետում է մի շարք լեզուներ՝ անգլերեն, ֆրանսերեն, հուներեն, իտալերեն, թուրքերեն։ Դաշնակահարուհի է, նկարչուհի։

Մայրն է Ծովակ անունով տասնմեկ տարեկան հրաշամանուկ երեխայի, որ 1934-ին առաջին մրցանակն է շահել միջազգային նկարչական ցուցահանդեսում և մեծ հույսեր են կապվել նրա հետ։ Մասնակցել է նկարչական մրցույթների և ամեն անգամ արժանացել առաջին մրցանակի։ Դա բավական չէ։ 1939-ից սկսած նույն երեխան երաժշտական մրցույթներում աչքի ընկնող տեղեր է նվաճել երաժշտական հորինումների համար։

Չեմ հիշում, թե երբ և ինչպես ծանոթացանք, բայց միտս է, որ առաջին իսկ հանդիպումից համակրանք ունեցա իր հանդեպ։ Երևի դրա պատճառն իր անկեղծ ու անմիջական խառնվածքն էր։ Մի պատճառն էլ այն էր, որ խոսքի ու զրույցի սիրահար լինելով, տիկին Աղավնին ասելու և մանավանդ պատմելու շատ բան ուներ, շփվել էր այնպիսի մեծությունների հետ, ինչպես Կոմիտասը, Դանիել Վարուժանը և շատ ուրիշներ։ Մի քսան տարով մեծ լինելով ինձնից, պահում էր իրեն այնպես, ասես մի տարիքի ենք։ Անկախ նրանից, որ մեր հանդիպումների ժամանակ ինձ սակավ էր հերթ հասնում խոսելու, ինձ ճնշված ունկնդիր չէի համարում։

Աղավնի Մեսրոպյանի տան դռները բաց էին մեր մտավորականության առաջ։ Ով ասես, որ չէր լինում նրա տանը,

մեծ մասամբ գրականության և արվեստի մարդիկ էին, Եղիշե Չարենցից սկսած...

Մի անգամ պատմեց Չարենցի վերջին այցը։

Եկել է ու խնդրել Աղավնուն, որ նվագի Բեթհովենից։ Աղավնին նվագել է։ Չարենցը լսել է թախծոտ տրամադրությամբ։ Մի փոքր հետո սենյակից դուրս է եկել։ Մայրը որդուն ուղարկել է տեսնելու, թե ինչ եղավ բանաստեղծը։ Չարենցը մատը դրել է շրթներին, այսինքն՝ «դու լուռ մնա, թող մայրդ նվագի», իսկ ինքը սանդուղքներով իջել է, խնդրելով բաց թողնել դուռը։ Գնացել է նվագի ուղեկցությամբ։

Հրաժեշտի այցը։

Մի զարմանալի նկատում։ Որքան էլ անկեղծ ու անմիջական խառնվածք՝ պահանջում էր, որ մարդիկ հարգեն ժամադրությունը, եթե խոստացել են՝ գան անպայման, չեն ժամադրվել՝ չհայտնվեն անսպասելի։

Հաճախ էր պատահում, որ փողոցում հանդիպած վաղեմի ծանոթն ասում էր՝

— Աղավնի, այս երեկո ձեզի պիտի գամ։

— Եկուր, անպայման եկուր, կարոտնիս առնենք։

Կամ ինքն էր դիմում.

— Ինչու չեք երևա, վաղուց է տեսած չեմ, անհանգիստ հո եղած չեք։ Այս իրիկուն կսպասեմ ձեզի։

Շատ էր սիրում հյուր ընդունել, հյուրերով շրապատված լինել։ Եվ, այնուամենայնիվ, չէր սիրում, ավելին, չէր հանդուրժում անսպասելի այցերը։ Բայց կային մարդիկ, որոնց վրա չէին տարածվում անգլիական այդ խիստ կարգն ու կանոնը։ Այդ մարդկանցից էր Վահրամ Փափազյանը։ Նա կարող էր գիշերվա կեսին էլ հայտնվել՝ զրուցելու և խմելու մի գավաթ սուրճ, որի պատրաստումը մշտապես իր վրա էր առել ամուսինը՝ Բագրատ Համբարձումյանը։ Իսկապես այդ սուրճը պատրաստվում էր սուրճի և շաքարավազի իրեն միայն հայտնի չափերի խառնուրդով, որը խմում էինք կում-կում, չշտապելով, որպեսզի շուտ չհասնի վայելքի ավարտը։

Ինձ այնպես էր թվում, որ Փափազյանը Աղավնուց, նրանց տանից ծննդավայրի կարոտն էր առնում։ Իսկապես, Պոլսո շունչ կար այդ տան մեջ։ Թեև Փափազյանն ընդհանրապես խոսում էր արևելահայերեն, բայց պոլսեցու հանդիպելով,

անցնում էր արևմտահայերենի։ Աղավնու և նրա ամուսնու հետ Փափազյանը միայն արևմտահայերեն էր խոսում։ Երբեմն էլ լսելի էին լինում թուրքերեն և ֆրանսերեն բառեր ու ոճեր։ Մի քանի անգամ եղել եմ Փափազյանի հետ այդ տանը և միտս է, որ երկուսով վերհիշում էին քաղաքը, սովորույթները, Նոր տարին, Ծննդյան օրը, Զատիկը, պոլսեցի մտավորականների ընտանեկան հավաքույթները, բարքերը, հիշում էին ինչ-որ մարդկանց, որ բնորոշ տիպեր էին...

Տան ոգին տիկին Աղավնին էր։ Նա էր մթնոլորտ ստեղծողը։ Կարող էր ժամերով զբաղեցնել հյուրերին։ Համով-հոտով պատմել գիտեր, իմացածն այնքան շատ էր, որ չգիտեր, թե ինչը պատմի, ինչը բաց թողնի։ Նա պատմում էր, և մեծությունները կանգնում էին քո աչքի առաջ՝ կենդանի, այնպես, ինչպես եղել են։ Խոսքը պարզ էր, և պատմելիս հուզվում էր, վերապրում, երբեմն աչքերը խոնավանում էին, բայց միշտ ուժ էր գտնում հորդացող զգացմունքների առաջն առնելու։

Պատմում էր մեր գրականության և արվեստի մեծերի մասին, լավ հասկանալով այն տարբերությունը, որ կար իր և նրանց միջև։ Նա պատմում էր գրականության և արվեստի մեծերի մասին հրճվանքի այն զգացումով, որ ճակատագրի բերումով իրեն բախտ է վիճակվել այդ մեծ դեմքերին հանդիպելու, ծանոթ լինելու և նրանց հետ շփվելու։

Ինքն էլ էր հյուր գնում։ Նախապես հայտնի էր դարձնում այցի օրն ու ժամը։ Գալիս իր տոնական զգեստներից որևէ մեկը հագած։ Երբեք չէր գնա դատարկաձեռն։ Հետը կբերեր որևէ քարցրավենիք կամ իր նկարներից մեկնումեկը, իսկ նա մեծ մասամբ աշխարհն ու մարդկանց նկարում էր մանուկների աչքերով։ Զափով փոքր նկար էր լինում դա, շրջանակված և առնում էր տանտիրոջ համաձայնությունը, որ ինքը որոշի, թե որ պատից կախվի նկարը։ Ուր էլ գնար, աշխույժ խոսակցություն էր սկսվում, հետաքրքիր պատմություն էր անում, և իր շուրջը տարածում ֆրանսիական օծանելիքի անուշահոտ բուրմունքը։

Շատերը, որոնց թվում նաև ես, խորհուրդ էին տալիս տիկին Աղավնուն՝ ժամանակ գտնել և գրի առնել իր հուշերը, ասելով, թե մեղքի տակ է ընկնելու, եթե հանկարծ ապագա սերունդների առաջ իր պարտքը չկատարած գնա աշխարհից։

Ուրիշների նման չէր ասում, թե ժամանակ չունի, թե դժվարին գործ է դա, որ ինքը հուզվում է իր կյանքի անցած-գնացած դեպքերը, իրեն հանդիպած ականավոր մարդկանց հիշելիս: Խոստանում էր, ասում, թե դրա կարևորությունը ինքն էլ է հասկանում:

Արեց: Շատ բան հասցրեց թղթին հանձնել:

Աղավնի Մեսրոպյանը ներկայացրեց Կոմիտասին նվիրված հուշերի մի գեղեցիկ գրքույկ:

Դերենիկ Դեմիրճյանին խնդրեցի կարծիք հայտնել, իմանալով, որ նա համակրանքով է վերաբերում հուշերի հեղինակին, ինչպես և նրա խոր հետաքրքրությունը Կոմիտասին վերաբերող ամեն ինչի նկատմամբ:

Տիկին Աղավնու սրտովն էր առաջարկածս:

Դեմիրճյանը կարճ ժամանակից բերեց կարծիքը, մեկ ու կես էջի չափով գրված: Այնքան լավ էր գրված, որ մտքովս անցավ Դեմիրճյանի գրածը կցել գրքին որպես առաջաբան: Նախապես առա Դեմիրճյանի համաձայնությունը և ապա միայն հայտնեցի հրատարակչության որոշումը Աղավնի Մեսրոպյանին, որի ուրախությանը չափ չկար:

Խմբագիր նշանակվեց Սամսոն Դասպարյանը, որը մի 7—8 էջի չափով կրճատեց տեքստը: Տվեց նաև համաձայնություն, որ Դեմիրճյանի գրածը կցվի որպես առաջաբան:

Ձեռագիրը տվեցի կարդալու նկարիչ Սուրեն Ստեփանյանին և խնդրեցի, որ հավանելու դեպքում հանձն առնի գրքի գեղարվեստական ձևավորումը: Հետաքրքիր ձևավորում արեց նկարիչը, որն իր իմաստային լուծումով շատ էր տարբեր այն տարիներին հրատարակվող գրքերի միատիպ ձևավորումներից: Սա անհրաժեշտ համարեցի հիշատակել, որովհետև իմ անփութության պատճառով նկարչի անունը չի հիշատակված գրքում:

Դեմիրճյանի առաջաբանը մեքենագրվեց՝ տպարան ուղարկելու համար, իսկ ձեռագիրը մնաց ինձ մոտ:

1946-ին Աղավնու եղբայրը եկավ Երևան: Փարիզից եկավ մասնակցելու Հայաստանի Գրողների միության երկրորդ համագումարին: Դա առաջին համագումարն էր, որին մասնակից եղան սփյուռքահայ գրողները:

Տիկին Աղավնու ուրախությանը չափ չկար: Մի եղբայր՝ մի

աշխարհ: Իր լավ ծանոթներին հրավիրում էր իրենց տուն՝ եղբորը տեսնելու, եղբոր հետ զրուցելու: Եղբոր հետ շրջում էր իր ծանոթ մարդկանց տները:

1943-ի հուլիսի 20-ին վախճանվեց Արուս Ոսկանյանը: Մի կես տարի չանցած, նույն տարվա դեկտեմբերին, արվեստի աշխատողների տանը նրա հիշատակին երեկո կազմակերպվեց: Հանդես եկան արվեստի ականավոր դեմքեր՝ Դերենիկ Դեմիրճյան, Միքայել Մանվելյան, Օլգա Գուլազյան, Նաիրի Զարյան, Գուրգեն Ջանիբեկյան: Ջեկուցեց Սարգիս Մելիքսեթյանը: Դերասանուհու արվեստին նվիրված հուշախառն խոսք էր դա, գրված հմուտ գրչով, որ մեծ տպավորություն թողեց ունկնդիրների վրա: Ընդհանրապես այդ օրը ոչ ոք սառն ու հանգիստ չխոսեց: Ամենքն էլ հուզված էին:

Այդ երեկո ելույթ ունեցավ նաև Աղավնի Մեսրոպյանը, դերասանուհու ընկերուհին, որոնց մտերմությունը սկսվել էր աշակերտական տարիներից: Նրա ելույթը լավ էր կազմված, առանձնապես արժեքավոր էր ճանաչողական առումով, նա նկարագրեց Էսայան երկսեռ վարժարանը, Պոլսո լավագույն հայկական կրթական օջախը, ուսուցման դրվածքը, աշակերտական ցերեկույթները: Պատմեց իրենց ուսուցիչների մասին, որոնք աշակերտել էին հայտնի մարդկանց՝ Մկրտիչ Պեշիկթաշլյան, Արշակ Ջուխաջյան: Պատմեց, թե նրանք ինչպես էին վարժարանի սաների մեջ արթնացնում սեր դեպի արվեստը՝ բանաստեղծություն, երաժշտություն, թատրոն, նկարչություն:

Այս բոլորի մասին պատմելուց հետո, նա խոսեց երրորդ դասարանի աշակերտուհի, տասնամյա Արուսյակ Դարպասյանի ելույթների մասին. հակառակ մանկական հասակին՝ ճիշտ շեշտադրումներ, հիանալի առոգանություն, քաղցր ձայն, հարուստ դիմախաղ: Իրենց վարժարանի ցերեկույթների ճանաչված արտասանողն էր, նյութ ունենալով մեծ մասամբ Պետրոս Դուրյանի և իրենց վարժուհի Սիպիլի բանաստեղծությունները՝ «Լճակ», «Ժանյակներ»:

Միտս է մնացել տիկին Աղավնու գեղեցիկ ձևակերպված այն խոսքը, երբ հինգերորդ դասարանի աշակերտուհի էր՝ դեռահաս Արուսյակ Դարպասյանն շնորհագեղ արտաքինով, համայքով, չարաճճի երազային հայացքով խոովում էր վար-

ժարանի պատանի սանների և իրենց փողոցի հայ և հույն պատանիների նորազարթ սրտերը: Պատմեց Վահրամ Փափազյանի և Արուսի սերը: Խոսեց այն մասին, որ ինքը խոստացել է Արուսին գրել ու նկարագրել նրա մանկության ու պատանեկության տարիները:

Հիշեց, թե ինչպես մի մտերմիկ զրույցի ժամանակ դերասանուհին ասել է, թե ինքը մի ծանր նախազգացում ունի, որ երկար չի ապրելու:

Իր ելույթը եզրափակեց՝ «Փա՛ռք անոր մեծ հիշատակին» կոչով:

Փորձ եմ անում մտաբերելու, իսկ ե՞րբ հեռացավ այս աշխարհից տիկին Աղավնին ու չեմ հիշում: Ջեմ էլ ուզում մտածել մահացած տիկին Աղավնու մասին, որովհետև նա և մահ հասկացությունները պարզապես անհարիր էին:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմեմ իմ կյանքից մի դեպք. ավելի ճիշտ՝ Ստեփան Աղաջանյանի մի կտավի հետ կապված խոստովանություն անեմ:

Ծանոթ չէի նկարչի հետ: Տեսնում էի նրան փողոցով անցնելիս՝ բարձրահասակ, հաղթանդամ, մեծ մասամբ գլխաբաց, արդեն ճերմակին տվող առատ մազերով: Տեսնում էի նրան նաև պատկերահանդեսներում:

Աղաջանյանի աշխատանքների անհատական ցուցահանդեսն էր: Թվականը լավ չեմ հիշում, բայց երևի 1938-ը կլիներ: Գնացի: Հազարից մեկ պիտի լիներ, որ բաց թողնեի նոր ցուցահանդես, այն էլ Աղաջանյանի:

Մտա ցուցահանդես: Կային այնպիսի նկարներ, որոնց առջև երկար էի կանգնում: Նկարներ էլ կային այնքան հրապուրիչ, որ վերադառնում էի նորից դիտելու:

Աչքս ընկավ ոչ այնքան մեծ կտավի վրա: Կոչվում էր «Իմ բակը»: Կտավի քնարական տրամադրությունը գրավեց ինձ այնքան, որ ես գնելու փորձ արի: Դիմեցի, ասացին՝ «վաճառված է»: Վշտացա:

Մի երկու թե երեք օրից կրկին եկա ցուցահանդես, բայց ոչ այնքան հենց այնպես նայելու, որքան հավանածս նկարի

առաջ կանգնելու և երեկվա իմ տպավորությունը ստուգելու համար։

Թող ներող լինի ընթերցողը, եթե շեղվեմ իմ պատմությունից և այստեղ հիշեմ համանման դեպք, այս անգամ՝ կապված Արմենակ Տեր-Աբրահամյանի հետ, եթե չեմ սխալվում դարձյալ նույն տարին տեղի ունեցած։

Օպերայի և բալետի թատրոնը բեմադրեց Հարո Ստեփանյանի «Լուսաբացին» օպերան։ Գնացի լսելու։ Ջեմ ասի, թե ոգևորված հեռացա թատրոնից, բայց մի մեներգ, պահակ Սեթոյի երգը՝ Տեր-Աբրահամյանի կատարմամբ, ընկավ սրտիս մեջ ու մնաց։ Պահանջ ունեի նորից լսելու։ Տոմս էի առնում ու գնում այն արարին միայն, որտեղ Սեթոն երգելու էր գիշերային երգը։ Եվ այդպես մի քանի անգամ։

Այս նույն պահանջը զգացի ցուցահանդեսի կտավի նկատմամբ։ Զարմանում եմ, թե ցուցահանդեսի կազմակերպիչները, տեսնելով ինձ երկար կանգնած նույն նկարի առջև, ինչպես չեն մտածել, թե այս երիտասարդի միտքը ծուռ է։ Ավելի լավ է դեպքերը հաղորդեմ իրար հետևից ու անշտապ, ինչպես այդ անում է Սունդուկյանի Գիքոն, հուսով, որ ընթերցողս, երևի, Շուշանի նման անհամբեր չէ։

Իմ տանը, տանս պատից այդ նկարը կախված տեսնելու ցանկությունս այնքան մեծ էր, որ մի պահ պատկերացրի, թե նկարն իմն է և մտահոգված էի, թե ո՞ր պատից եմ կախելու։

Անցավ մի քանի ամիս։ Նշանակում ստացա Հայպետհրատում։ Գործի անցա։ Մի քանի օր անց մտա հարևան սենյակը, ուր տեղավորված էր քաղաքական գրականության բաժինը։ Բաժինը վարում էր համակրելի անձնավորություն՝ Ներսիսյանցի Գևորգ Քացախյանը։ Եվ, ով զարմանք, տեսա պատից կախված Ստեփան Աղաջանյանի «Իմ բակը»։

Ժամանակ անցավ։ Ավելի մոտիկից ճանաչեցի հրատարակչության աշխատողներին։ Ընկերական պարզ հարաբերություններ ստեղծվեցին։ Եվ մի օր հարևան սենյակիս առաջարկեցի նկարների փոխանակություն։ Ուրախացավ։ Պարզվեց, որ իմ սենյակի բնանկարն իրեն ավելի է դուր գալիս։

Ջեմ հիշում, թե որքան ժամանակ անցավ, և հրատարակչությունը տեղափոխվեց Տերյան փողոցում գտնվող իր այժմյան շենքը։

Աղաջանյանի նկարն իմ ձեռքով տարա և սեփական ձեռքով կախեցի սենյակիս պատից: Նոր շենքում երկու թե երեք անգամ սենյակափոխ եղա, և ամեն անգամ նկարը ինձ հետ փոխադրվում էր սենյակից-սենյակ:

Եվ մի օր էլ միտք ծագեց՝ ունենալ այս նկարի կրկնօրինակը իմ տանը: Թող մշտապես աչքիս առջև լինի:

Կարո Տիրատուրյանը գրքերի ձևավորման լայն ասպարեզ ուներ պետհրատում: Տաճատ Խաչվանքյանը չկար այլևս: Միքայել Արուտչյանն ապրում էր Մոսկվայում: Հակոբ Կոջոյանը մեկ-մեկ էր երևում: Նոր դեմքեր էին ասպարեզ գալու: Առաջինը և ամենագործունը եղավ Տիրատուրյանը, որ տառի լավ զգացողություն ուներ: Երկար ժամանակ նա մենակ էր: Ես էլ աջակցում էի նրան: Մի օր խնդրեցի Կարոյին անցնել ինձ մոտ՝ գրքի ձևավորման հետ կապ չունեցող գործով:

Լսեց խնդրանքս, ասաց, որ դա դժվար գործ չէ, միայն թե ինքը չի կարող անել, կխնդրի եղբորը՝ գունանկարիչ Մկրտիչ Տիրատուրյանին, և համոզված է, որ չի մերժի:

Կարոն և Մկրտիչը բերին նկարն ու դրա պատճենը: Այնպիսի համոզմունքով էր արված, որ ոչ-մասնագետ աչքը չէր որոշի, թե ո՞րն է իսկականը, որը պատճենը: Ես գոնե չկարողացա որոշել: Մի երկու աշխատակցի կանչեցի, նրանք էլ չտարբերեցին:

Տիրատուրյանները խորհուրդ տվին պատճենը թողնել հիմնարկում, իսկականը տանել տուն: Մեղավոր, բայց գայթակղիչ առաջարկ: Ջեմ ասի, թե միանգամից կարողացա վանել ինձնից նկարիչ եղբայրների տված խորհուրդը, մանավանդ որ այդ մասին նրանք խոսեցին հանգիստ ու պարզ, ասես սովորական բանի մասին է խոսքը: Չհամաձայնեցի, տուն տարա Մկրտիչի կրկնօրինակածը, բայց եղբայրների տված չարը միտքը ընկավ հոգուս խորքը և այլևս չլքեց ինձ: Ու մի օր էլ չդիմացա՝ բնօրինակը տուն տարա:

Երևի դեր խաղաց և այն կասկածը, որ Տիրատուրյան եղբայրները գցեցին իմ սիրտը. «Վաղը, որ դուք չլինեք, այս նկարը մնալո՞ւ է հիմնարկում, թե անհետանալու է, հայտնի չէ, և ոչ ոք չի իմանալու, թե որտեղ է»:

Եվ հիմա էլ այդ կտավն ինձ հրապուրում է: Երևի դեր է խաղում նկարի հետ կապված պատմությունը ևս, քանի որ

դա մտել է իմ կենսագրության մեջ իբրև հաճույք և մեղք միաժամանակ։

Իմ տան հյուրերը, եթե ձախ նկարչության ծայրահեղ երկրպագուներ չեն, տանը կախված պատկերներին նայելիս երկար կանգնում են Աղաջանյանի կտավի առջև։ Միայն նկարիչ ընկերներս են անմիապես ճանաչում հեղինակին, մյուսները հիանում են և հետաքրքրվում, թե ո՞ւմ գործն է։

Կտավի վրա նկարված է մի տան բակ. միհարկանի կավաշեն տուն է դա, ցախատունը կողքին։ Երկու լուսամուտ և մի դուռ։ Ամեն անգամ նայելիս, ինձ թվում է, թե ուր որ է տնակից դուրս կգա գլուխը կապած պառավ, մածնի պուլիկը ձեռին։ Բացի դա, տնակի մի մասը ծածկող ծառը, հետնամասում երևացող երկինքը, տան կիսաբաց դուռը պատկերված են այնպիսի մեղմ ու թախծալի տրամադրությամբ, որ դիտողին, մանավանդ, եթե նրա կյանքի օրերն անցնում են մեծ քաղաքում, հետևապես աղմուկի ու փոշու մեջ՝ ծնում է այդպիսի խաղաղ անկյունում առանձնանալու կարոտ և գուցե աշխարհի վրա մտորելու ցանկություն...

Այս նկարի հետ կապված է մի դեպք, որ եթե ուրիշը պատմեր, երևի չհավատայի։ Սենտիմենտալ պատմություն է դա։ Խոստովանություն լինի, բոլորս էլ, երևի չնչին բացառությամբ, հակված ենք սենտիմենալության, բայց, չգիտես ինչու, ամաչում ենք ընդունել, որ դա այդպես է։

1947 թվականն էր։ Հիվանդ էի։ Վիճակս թեև ոչ անհուսալի, բայց ծանր էր։ Ու եթե չլիներ տան ու հրատարակչության խնամքը, ինչպես նաև բժիշկներիս, հատկապես հայտնի բժիշկներ Արշա Վարդազարյանի և Աշոտ Կարապետյանի հրաշագործությունը, երևի ոտքի չկանգնեի։

Մահճակալս դրված էր այն պատի տակ, որից կախված էր «Իմ բակը»։ Նկարը համարյա չէի տեսնում։ Օրերից մի օր վիճակս ծանրացավ այնքան, որ մերոնք խուճապի մատնվեցին, բժիշկ-բժշկի հետևից եկան, սրսկումներ արին։ Ու եղավ մի պահ, որ ինձ թվաց, թե կյանքիս վերջին պահն է։ Ու, երևակայեցեք, որ հաշտված այն մտքի հետ, թե գնում եմ այս աշխարհից, մտատանջության մեջ էի՝ ինչո՞ւ նկարը կախված չէ դիմացի պատին, որ վերջին անգամ նայեմ...

Ես գիտեմ, որ շատերը քմծիծաղ կտան այս տողերը կար-

դալիս։ Գուցեև իրավունք ունեն։ Բայց ինձ հետ պատահածը մնում է իրական մի զգացողություն, որից հետո հեգնաբար չեմ վերաբերում նման պատմություններ լսելիս, մտածելով առաջվա պես, թե մարդիկ սիրում են «գեղեցկացնել» իրենց կյանքի վերջին ժամը։

Սղաջանյանի այս պատկերի պատմությունը շատ անգամ եմ արել, պատմել եմ նաև ամբիոնից։ Ու ես, որ լսելով նրանց հիմա հանձնում եմ ընթերցողի ուշադրությանը, որպես մեղք գործած մարդու անկեղծ խոստովանություն, մանավանդ որ հրատարակչական նկարներից ոչ մեկը չկա այժմ, այդ թվում և Սղաջանյանի պատկերի կրկնօրինակը և հայտնի չէ դքանց տեղը։

ՀՈՎՍԵՓ ԿՈՒՍԻԿՅԱՆ

Իմ թղթերի մեջ պահվել են նրա գրած նամակները։ Դրանք 16-ն են։ Առաջին նամակը գրված է 1940-ի փետրվարի 28-ին, վերջինը՝ 1959-ի նոյեմբերի 12-ին։ Սկզբում նա ինձ դիմում էր՝ «Հարգելի ընկ. Ռ. Զարյան», 1944-ից՝ «Սիրելի ընկեր Ռուբեն Զարյան», իսկ 1956-ից՝ «Սիրելի բարեկամ ընկեր Ռուբեն Զարյան»։ Այդ նամակները գրվել են շուրջ 20 տարվա ընթացքում։ Ձեռագիրը նույնն է, ոչ մի փոփոխություն, հանդարտ ու անվրդով մարդու ձեռագիր, պարզ և ընթեռնելի։ Ձեմ կարծում, թե բոլոր նամակները գրվելիս նա խաղաղ է եղել և անհուզմունք, բայց ձեռագրերը պահպանում է մի կայուն ոճ։

Ինձ թվաց, թե այս ձեռագիրն ունեցողը օրվա խիստ կարգապահություն ունի՝ միշտ նույն ժամին է արթնանում, նույն ժամին քուն մտնում, նախաճաշի, ճաշի ու ընթրիքի ստույգ ժամեր ունի, օրվա նույն ժամերին է աչքի անցկացնում լրագրերը, որոշակի ժամերի իրեն հանձնում է ազատ ընթերցանության և պարզ է, թե օրվա ի՞նչ ժամերի է գիտությամբ պարապում, մի խոսքով, կազմակերպված օր, բաժանված ըստ ժամերի այնպես, որ ամեն մի խախտում բացասաբար է ազդում տրամադրության վրա։ Հետո, տարիներ անց, զգույշ հարցրի, պարզվեց, որ ենթադրությունս հիմքից զուրկ չի եղել։

Մինչև իմ ուսանողական տարիները, ես ավելի գիտեի իր

հորը՝ Կարապետ Կուսիկյանին, գրականագետ, որ սերտ առընչություն ուներ «Գարուն» ալմանախի հետ, լինելով դրա խմբագիրներից մեկը։ Ինձ միշտ զարմացրել է, թե ինչպես է, որ Տերյանից, Մակինցյանից, Խանզադյանից տարիքով շատ մեծ լինելով, Կարապետ Կուսիկյանը նրանց գրական համախոհներից է եղել։

Հովսեփ Կուսիկյանի մասին գաղափար ունեցա ուսանողական տարիներից, որովհետև լսում էի, որ նախ Հակոբ Զորյանը, հետո Վահան Ռշտունին ուզում են հրավիրել նրան Երևան, պատմական ճյուղի ավարտական կուրսի ուսանողների և պատմության մեջ մասնագիտացող ասպիրանտների համար Բյուզանդիայի պատմության վերաբերյալ դասախոսություններ կարդալու։

Մի քանի անգամ հանդիպել ենք Երևանում և Մոսկվայում ու երկար զրույցներ ունեցել։

Ահա այդ զրույցների ընթացքում պատմել է իր կյանքից դեպքեր, հիշել անցած-գնացած օրերը։ Հիմա ի մի բերելով այդ բոլորը, աչքիս առաջ գծվում է հետաքրքրական պատկեր։

Պարզվում է, որ Կուսիկյանները ազնվական գերդաստան են եղել և հեռավոր նախնին, որից սկիզբ է առնում իրենց տոհմը, կոչվել է Փիլիպոս։ Ուսուցիչների զավակ է, ծնվել է Մոսկվայում։ Ծնողների հանդեպ երախտագետ զգացում ունի. հայրը մղել է նրան դեպի դասական լեզուներ՝ հին հունարեն, լատիներեն։ Գրաբար նույնպես։ Հետագայում սովորել է նաև սանսկրիտ։ Մայրը սեր է արթնացրել ֆրանսերենի և իտալերենի նկատմամբ։ Ուսուցիչներից հիշում էր Գ. Խալաթյանին, Ռ. Վիպպերին, Ն. Պոպովին։ Առաջինը խորհուրդ է տվել լավ ուսումնասիրել հին Հունաստանի, նաև հնագույն Արևելքի պատմությունը։ Երկրորդը՝ բորբոքել է հետաքրքրություն անտիկ աշխարհի նկատմամբ ընդհանրապես, հին Հունաստանի և հին Հռոմի՝ մասնավորապես։ Երրորդը խորհուրդ է տվել խորանալ Բյուզանդիայի պատմության մեջ։

Փայլուն ավարտելով Լազարյան ճեմարանը, ընդունվել է Մոսկվայի համալսարանի պատմագրական ճյուղը, բայց այն օրից, որ որոշել է Բյուզանդիայի պատմությամբ զբաղվել, սկսել է ունկնդրել իրավաբանական ճյուղի դասախոսություններ նույնպես, ոչ միայն պետական իրավունքի, քաղաքացիա-

կան իրավունքի դասընթացներ, այլ նաև հռոմեական իրավունքի։

Ավարտել է համալսարանի երկու ճյուղն էլ՝ պատմաիրավական և երեք տարի անց՝ իրավաբանական։ Երկուսն էլ, եթե չեմ սխալվում, ավարտել է առաջին կարգի դիպլոմով։ Համալսարանավարտ Կուսիկյանը լազարյան ճեմարանում ուսուցիչ է կարգվել, աշխատել Մոսկվայի տարբեր դպրոցներում, որպես բազմակողմանի զարգացած մարդ, դասավանդել է շատ առարկաներ՝ տնտեսական աշխարհագրությունից մինչև փիլիսոփայության պատմություն։ Հեղափոխությունից հետո դասախոսել է բարձրագույն ուսումնական հաստատություններում, միաժամանակ կապվել գիտահետազոտական ինստիտուտների հետ։

Հիացմունքով էր խոսում Նիկողայոս Մառից, որի ձեռքի տակ միաժամանակ ուսումնասիրել է հաբեթաբանություն։

Կուսիկյանը բազմաբնույթ հետաքրքրություններ է ունեցել՝ պատմական, տնտեսագիտական, փիլիսոփայական, բանասիրական, լեզվաբանական, գրականագիտական։ Ի վերջո, ինձ թվում է, որ նրա նախասիրությունների առանցքը Բյուզանդիայի պատմությունն էր 10—11-րդ դարերում, առնչված Հայաստանի հետ։

Նա արժեք էր տալիս «Սամվել» վեպի իր ռուսերեն թարգմանությանը։

Որքան հիշում եմ, Կուսիկյանի հետ նամակագրություն ունենալուս պատճառը Համազասպ Համբարձումյանն էր, որին խնդրել էի հանձն առնել Հոմերոսի «Իլիականի» և Էսքիլեսի «Շղթայված Պրոմեթևսի» թարգմանությունը։ Հարկավոր էր ունենալ հին հունարեն լավ իմացող խմբագիր։ Երևի Համազասպ Համբարձումյանի խորհրդով ընտրությունս կանգ է առել պրոֆ. Հովսեփ Կուսիկյանի վրա։

Կուսիկյանն արծարծել է մի կարևոր հարց։ Ես նրան, ինչպես երևում է, գրել եմ, որ բացի իրենից, լինելու է նաև բանաստեղծ խմբագիր։ Նա կամենում է իմանալ, թե ինչպես են երկու խմբագիրներն համագործակցելու, քանի որ մեկն ապրում է Մոսկվայում, մյուսը՝ Երևանում։ Խորհուրդ է տալիս, որ բանաստեղծ-խմբագիրը լինի Ավետիք Իսահակյանը։ Մտածելով, որ նա կարող է չհոժարել, ասում է, թե ծնկաչոք խընդ-

րելով պետք է հասնել նրա համաձայնությանը: Այն ժամանակ, ըստ Կուսիկյանի՝ «Իլիականի» նոր հրատարակությունը կլինի «մեր մեծ վարպետի ձեռքով հղկված և դրոշմված»:

Հիմա չեմ հիշում, իմ խնդրանքով, թե իր նախաձեռնությամբ նա գրել էր ընդարձակ հոդված «Հայրենիքի պաշտպանության գաղափարը հայոց գրականության մեջ» հարցի շուրջ «Սովետական գրականության» ամսագրում հրատարակելու համար: Կուսիկյանն ուշացրել էր, և ամսագրի խմբագիրը պատվիրել էր ուրիշին: Այժմ հոդվածն ստացվել է: Կատարված է ահագին աշխատանք, պարզ է, որ չի կարելի թողնել անտպագիր և առա հեղինակի համաձայնությունը դա լույս ընծայելու առանձին գրքույկով, խորհուրդ տալով, սակայն, որ մեջբերումներ չանի այսօրվա անցողիկ հեղինակներից, որոնք այսօր կան, վաղը չեն հիշվելու:

Նամակներում նկարագրել է, թե ինչպես է գրել այդ հոդվածը. պատերազմի ահեղ օրերին, ռումբերի որոտի տակ, երբ ամեն պահ թշնամին կարող էր խուժել Մոսկվա:

Ոչ այնքան կյանքի, որքան գրքի մարդ էր Կուսիկյանը, և հոգեկան ինչպիսի տոկունություն ուներ, ինչ հերոսական ոգի, որ «վերք Հայաստանին» ձեռքին՝ ռումբապաստարան է իջել օրվա մեջ մի քանի անգամ, կամ տուն վերադարձել, որտեղ, սակայն, սառնամանիք էր, համարյա այնպես, ինչպես փողոցում, բայց նա հույսը չի կորցրել, աշխատել է, համոզված, որ դա իր հայրենասիրական պարտքն է, պետք է գրի, պետք է կարդա, պետք է խմբագրի: Մի խոսքով՝ ապրի պատերազմական ժամանակներին վայել բովանդակալի կյանքով:

1944-ին գրած մի նամակից պարզվեց, որ նա գիրք է գրում Վահան Տերյանի մասին՝ «Հիշողություններ և կոմենտարներ», մոտ 15 մամուլ:

Տերյանը Կուսիկյանի համար եղել է ոչ միայն մեծ պոետ, այլև անձնապես թանկագին մարդ, «կարծես թե հարազատ եղբայրս էր»: Մտադիր էր այդ գիրքը նվիրել Ալեքսանդր Մյասնիկյանի հիշատակին, որը նույնպես նրա համար եղել է եղբոր նման բան:

Մյուս գիրքը, ավելի մեծ ծավալով, շուրջ քսան մամուլ, նվիրված էր լինելու Մովսես Խորենացուն:

Ի՞նչ եղան այդ գրքերը, գրվեցի՞ն, թե մնացին որպես մբ-տահղացումներ։

Ինձ համար խիստ հաճելի էր կարդալ նրա մի նամակի հետևյալ տողերը.

«Ձեզ, սիրելի ընկ. Զարյան, ես շատ հաճախ եմ մտաբերում, որովհետև մեր խաչատուր Աբովյանը իմ «Աստվածաշունչն» է, իսկ ամեն անգամ՝ «Վերք Հայաստանին» կարդալիս՝ միշտ պահանջ եմ զգում Ձեզ հետ խոսելու բազմատեսակ հարցերի մասին»։

Ես ուղարկեցի պրոֆ. Կուսիկյանին «Սիրանույշ» գրքից մի օրինակ։ Իսկ հետագայում, ինչպես հայտնի է, գրեցի նաև «Ադամյան» մենագրությունը։ Այս վերջինը գրելուս մղում տվողներից մեկը Կուսիկյանն է եղել։

«Ձեր գրքի («Սիրանույշի» մասին է խոսքը-Ռ. Զ.) կապակցությամբ ես մտածեցի, որ լավ կլիներ, եթե գրեիք և Պետրոս Ադամյանի մասին։ Ծնողներս նրա հետ մոտ ծանոթ լինելով, շատ բան են պատմել ինձ։ Երբ ես կարդում եմ այն բոլորը, ինչ տպագրվում է Պ. Ադամյանի մասին մեզանում, տեսնում եմ, որ շատ բան չի համապատասխանում իսկականին կամ շատ բան պակասում է։ Զբաղվեցեք, իսկ ես մեծ սիրով կաշխատեմ բոլոր ունեցածս տրամադրել Ձեզ, այն բոլորը, որ մասնավորապես գրել եմ և գրում եմ մեմուարներիս մեջ։ Սակայն միայն Ձեզ կամ ոչ ոքի»։

Ադամյանը գրելիս չէի հիշում Կուսիկյանի առաջարկը։ Շա՛տ ափսոս...

Նամակներից մեկում նա խոսում է Գրիբոյեդովի Հայաստանի հետ ունեցած կապերի մասին։ Խորհուրդ է տալիս միանալ վ. Պարսամյանին և գրել մի գիրք «Գրիբոյեդովը և Հայաստանը», որտեղ հատուկ գլուխ նվիրվի «Խելքից պատուհասի» երևանյան բեմադրությանը, որ առաջինն էր։

«Ես ամեն օր, երկու անգամից ոչ պակաս, անցնում եմ այն տան կողքով (Պուշկինի հրապարակում),— գրում է Կուսիկյանը,— որտեղ լինում էր Ա. Ս. Գրիբոյեդովը, և ամեն անգամ մտածում եմ այն մասին, թե որքան պատվաբեր է հայերիս համար, որ «Խելքից պատուհասի» գերհանճարեղ հեղինակի անունը ընդմիշտ կապված է Հայաստանի հետ։ «Պիտո»

է՝ ինչպես կգրեր Մ. Նալբանդյանը՝ շատ և շատ հաճախորեն հիշեցնել այդ մասին սովետական ընթերցողներին»։

Ես նկատել եմ, որ մոսկվաբնակ հայերի մեծ մասը, երկար տարիներ ապրելով հայրենի հողից հեռու, մանավանդ նրանք, որ ծնվել են այնտեղ և ստեպ-ստեպ են այցելել Հայաստան, գրում էին և խոսում ուրույն հայերենով, մի ոճով, որտեղ միահյուսված էին ժամանակակիցն ու հինը։ «Այժմս ոչ է հնարավոր», կամ՝ «Կուզեմ, որ լինեք մեծաչափ եռանդով»։

Կուսիկյանի մասին միտք անելիս, միշտ այն համոզմանն եմ եղել, որ նրա գլուխը կատարյալ հանրագիտարան է։ Ինչ հարցնեիր՝ կպատասխաներ։ Կասեր շատ ավելի, քան դիմացինը կակնկալեր, բայց նա միշտ կունենար դեմքի տարակուսած արտահայտություն՝ արդյո՞ք գոհացրեց, թե հարցն ունի մի այնպիսի կողմ, որ իրեն հայտնի չէ։

Ես զարմացած եմ մնացել նրա համեստության վրա։ Համեստ մարդկանց քիչ չեմ հանդիպել, բայց չեմ տեսել մի ուրիշին, որ նման լիներ Կուսիկյանին։ Վերագրում եմ դա շատ բան իմանալուն։ Իրոք, շատ իմացողը միայն գիտե, թե աշխարհիս երեսին որքան անհայտություններ կան։

Շատ տարիներ են անցել։ Նամակների թերթերը դեղնել են։ Կուսիկյանի անունը հիմա տրվում է հազվադեպ, այն էլ նեղ մասնագիտական գրականության մեջ։ Մինչդեռ ժամանակին ո՞վ չի դիմել նրան, ո՞վ նրա աջակցությունը չի խնդրել։ Բացի գիտական զբաղումներից, Կուսիկյանը բախել է պետական հաստատության դռներ և միջնորդ եղել որևէ մեկին թոշակ նշանակելու համար, կազմակերպել է դոկտորական դիսերտացիաների պաշտպանություն, մոսկովյան հրատարակություններին համար հայերեն գրքերի գրախոսականներ և գրել և իր հեղինակությամբ միջնորդ եղել, որ դրանք ռուսերեն թարգմանվեն։ Խորհրդատվություն է պետք մեկին, Կուսիկյանը կա ու կա, Երևանից մարդ է եկել Մոսկվա, Կուսիկյանը վկրողներ իր գործերը և օրերով կգնար հետ՝ նրա հարցերին լուծում տալու համար, Երևանից ստացել է գրչակից ընկերոջ գիրք՝ կկարդար անմիջապես և կհայտներ կարծիքը, երբեմն կարճ, երբեմն երկար, բայց միշտ բնորոշ, ստույգ, ու սրտանց ուրախանալով ամենքի հաջողության համար։

Նա գնաց այս աշխարհից հանգիստ խղճով ու խաղաղ սրտով, նա ոչ ոքի ոչինչ պարտք չէր։ Բայց շատերն էին նրան պարտք։ Եթե մանավանդ նկատի ունենաք, որ անգամ հայկաբանության շատ մեծեր նրա բարոյական աջակցության կարիքն են ունեցել։ Ինչպես հեշտ ու շուտ մոռանում են մարդիկ, թե իրենց նեղ վիճակում ով է ձեռք մեկնել, թեև լավ ճանաչելով Հովսեփ Կուսիկյանին, ասվելու է, որ նա բարի գործեր շատ է արել, համոզված, որ դա իր պարտքն է՝ ընկերական, գիտական, հասարակական, ազգային, մանավանդ որ նրա հայացքը շատ լայն ընդգրկում ուներ՝ Խորենացու ժամանակակիցներից մինչև մեր օրերը։ Կուսիկյանի նման մարդիկ հասարակայնության բարոյական նեցուկներն են։

ԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՄ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ինչ որ հիմա պատմելու եմ, վերաբերում է իմ կյանքի մի մանրամասնության, որ թերևս անհետաքրքիր թվար, բայց բնորոշ է ժամանակի գրական կազմակերպության խմորումներին։

1939-ին որոշեցի կուսակցության մեջ ընդունվել։ Ինձ հետ միաժամանակ դիմում տվեցին նաև Գարեգին Բեսը և Էդվարդ Թոփչյանը։ Երկուսն էլ իմ ընկերներն էին, նույն սերնդի մարդիկ, միմյանց սիրող ու գնահատող և մի տեսակ ուրախ էինք, որ մեր կուսակցական հարցը վճռվելու է նույն օրը։ Սկզբնական կազմակերպության քարտուղարը Վահան Գրիգորյանն էր, ազնիվ ու բարյացակամ մարդ։

Հրավիրվեց գրողների միության կուսակցական կազմակերպության դռնբաց ժողով։ Սկզբում Գարեգինի հարցը քննվեց։ Ոչ մի հարց էլ չտվին։ «Մեր Գարեգինն է» ասին ու միաձայն ընդունեցին։ Թոփչյանի հարցի քննությունը փոքրինչ ավելի երկար տևեց, որովհետև հորը հիշեցին և գովեստի խոսքեր շռայլեցին այդ պատվական մարդու առիթով։ Էդվարդի մասին ոչ մի խոսք։ Նա էլ ընդունվեց։ Ես հանգիստ ու անվրդով սպասում էի իմ հերթին, չիմանալով, որ կուժն ու կուլան իմ գլխին է ջարդվելու։

Հրապարակվեցին իմ կենսագրական տվյալները։ Քաղաքական կարգի հարցերի մի տարափ տեղաց։ Պատասխանեցի

որքան գիտեի և ինչպես կարող էի։ Սկսվեց և չվերջացավ մտքերի փոխանակությունը։ Մի երկու ջերմ խոսք ասվեց, այնպես, ի միջի այլոց, որի միտքն այն էր, թե «բոլորս էլ լավ ճանաչում ենք, երկար-բարակ խոսելու կարիք չկա, սրան էլ ընդունենք, ինչպես մյուսներին և գնանք տուն»։

Ո՛չ ես էի կարծում, ո՛չ էլ իմ մասին դրական կարծիք հայտնողները, թե ինչ է լինելու հետո։

Ձայն խնդրեց Նաիրի Զարյանը և խիստ բացասական արտահայտվեց, ինձ ազգայնամոլ հայտարարեց, հիշեցրեց, որ ես մոտ եմ եղել «ժողովրդի թշնամիներ» Զարենցին ու Բակունցին և առաջարկեց չընդունել։ Նրան հետևեց Սուրեն Վահունին։ Նաև մի երկուսը։ Բոլորն էլ նույն ոգով, ինչ Նաիրին։ Նաիրին երկու անգամ էլ ոտի կանգնեց ու բավական երկար միջամտեց մտքերի փոխանակությանը։ Ու բոլորն էլ Նաիրու նման հայտարարեցին, թե ճակատագրական սխալ կլինի գրականության համար, եթե ես ընդունվեմ կուսակցության մեջ։ Մթնոլորտը շիկացած էր։ Ես ձայն չէի հանում, հոգուս խռովքը քողարկող ժպիտ դեմքիս, իբր հանգիստ եմ, բայց իրականում գառնացած էի, ընկճված։ Ժողովին ներկա էր Ստեփան Զորյանը, որն, ըստ երևույթին, հասկացել էր, թե ինչ է կատարվում ինձ հետ, ստիպված եղավ միջամտելու։

— Ընդունում եք՝ ընդունեք, չեք ընդունում՝ մի ընդունեք, ի՛նչ եք տանջում մարդուն։

Ասաց, երևի մտածելով, թե ինքը, որպես անկուսակցական իրավունք չունի ըստ էության միջամտելու կուսակցականների միջև ակիզբ առած մի վեճի, որի արմատները գրական խմբակցությունների հակամարտությունների մեջ է, իսկ ինքը գրական բոլոր կարգի բախումներից հեռու կանգնած գրող է։

Ես չէի ընդունվի կուսակցության մեջ, եթե չլիներ Հրաչյա Քոչարը, որն այն ժամանակ նույնպես նաիրական էր։

Երբ Քոչարը ոտքի կանգնեց, ժողովականները հանդարտվեցին։ Ի տարբերություն իր մյուս ընկերների, խոսում էր անվրդով հանգստությամբ և համոզվածության շեշտով, որ ընդհանրապես հատուկ էր նրան։

Եթե կարճ ամփոփեմ նրա միտքը, կստացվի այսպես.

— Ինչ որ ասում էին Ռուբեն Զարյանի գաղափարական

այլթաքումների մասին, ճիշտ էին ասում: Նա արժանի է ամենախիստ քննադատության: Բայց...

Ասաց ու կանգ առավ: Բավական երկար դադար տվեց: Նայեց կողքի նստածներին, նայեց իմ կողմը և տպավորությունն այնպես էր, կարծես հայտնում էր, թե իր ասած «բայցը» կարողացա՞ն, արդյոք, ժողովականները գնահատել, թե ոչ, և շարունակեց.

— Բայց ընկերների եզրակացությունը, թե Զարյանին կուսակցության մեջ չպետք է ընդունել, սխալ է:

Նաիրին, Վահունին և իր համախոհներն անբավական նայեցին Քոչարին:

Քոչարը շարունակեց.

— Կրկնում եմ՝ սխալ է: Ես կարծում եմ, որ ընկեր Զարյանն այս երեկոյից կանի օգտակար եզրակացություններ և ուժ կգտնի իր մեջ վերանայելու իրեն, կկարողանա անկողմնակալ մարդու աչքերով ինքն իրեն վերաքննել: Հենց դրա համար էլ պետք է ընդունենք նրան, որ մեր մեջ լինի, մեր շրջապատում, մեր ազդեցության տակ վերադաստիարակվի կուսակցական ոգով:

Քվեարկության արդյունքն իմ օգտին էր:

Ես այդ գիշեր չքնեցի: Մղձավանջային գիշեր էր: Անսպասելի էր եղածն ինձ համար, թեև կարծես թե պետք է իմանայի և սպասեի:

Մի ամիս էր անցել, Գարեգին Բեսին, Էդվարդ Թոփչյանին ու ինձ կանչեցին Սպանդարյանի կուսշրջկոմ հաստատվելու: Մեզ առանձին-առանձին կանչեցին բյուրոյի նիստին:

Սպասում էինք Վահան Գրիգորյանի դուրս գալուն, որ իմանանք, թե ինչպես լուծվեց մեր հարցը: Վերջապես դուրս եկավ: Տխուր և տրտում մոտեցավ մեզ, ձեռքը դրեց ուսիս և նայեց ինձ այնպիսի հայացքով, որ ես ինձ նախապատրաստեցի վատագույն լուրը լսելու:

— Ռուբեն,— ասաց նա,— քեզ ընդունեցին: Իսկ ձեր հարցը,— դարձավ նա Բեսին և Թոփչյանին,— հետաձգեցին:

Հետո պարզվեց, որ երկուսն էլ մեղադրվում են գաղափարական ինչ-ինչ զանցանքների մեջ: Ժամանակ էր պետք պարզելու համար: Մի որոշ ժամանակ հետո, չեմ հիշում, թե երբ, նրանք ևս ընդունվեցին:

ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հակոբ Հարությունյան...

Տեսնում էի մեկ-մեկ։ Չգիտեի թե ով է։ Տպավորիչ չէր արտաքուստ, կարճ, գիրուկ, միշտ անփույթ հագնված և չէի ասի, թե դեմքը քիչ թե շատ արտահայտում էր իր հոգեկան աշխարհի հարստությունը։

— Գերմաներենի դասատու է,— ասաց մեկը։

Պարզվեց, որ նա գերմաներեն դասավանդում է ոչ թե ուսանողներին, այլ ասպիրանտներին։ Գևորգյան ճեմարանն է ավարտել։ Ամեն ինչ պարզ էր։ Գևորգյան ճեմարանի հիմնական օտար լեզուն գերմաներենն էր, և ավարտողներից շատերն էին այնքան տիրապետում, որ ի վիճակի էին հանգիստ խղճով հանձն առնել դասավանդումը։

Պարզվեց, որ մեր դասընկերներից նրան բավական մոտիկից ծանոթ էր Հովհաննես Ղանալանյանը։ Նա ասաց, որ դասավանդում է գերմաներեն՝ իր նյութականն ապահովելու նպատակով, թե չէ փիլիսոփա է։ Դասավանդած գերմաներենն էլ ճեմարանում սովորածը չէ, փիլիսոփայական կրթություն ստանալու նպատակով յոթ տարի ապրել է Գերմանիայում։

Հիշեցի, որ Ախալքալաքում ուսուցիչ եղածս ժամանակ կարդացել էի իր մի հոդվածը։ Ինչպես էր կոչվում հոդվածը՝ այժմ չեմ հիշում, տպագրվել էր «Գրական դիրքերում» ամսագրում և թողել այնքան տպավորություն, որ մինչև հիմա էլ հիշողությունս պահպանել է նրա հայտնած մի միտքը՝ գեղարվեստական գրականության մեջ պատկերավոր համեմատությունը վկայություն է գրչի տկարության, երբ հեղինակը չի կարողանում երևույթը նկարագրել այնպես, ինչպես կա, համեմատության օգնության է դիմում։ Լավ հիշում եմ, որ բերված էր Հովհ. Թումանյանի «Գիքորը» որպես գեղարվեստական արձակի հազվագյուտ նմուշ, որտեղ հեղինակը ոչ մի համեմատություն չի արել։

Ծանոթացա իր հետ համալսարանն ավարտելուց հետո։ Մեր զրույցներից պարզվեց, որ Ալաշկերտի գյուղերից է։ 12 տարեկանում Ակռել հասել է Վաղարշապատ և ընդունվել Գևորգյան ճեմարան։ Ութ թե ինը տարի սովորել է ճեմարանում։ Կոմիտասի աշակերտն է եղել։ Ունեցել է շատ հարգար-

Ժան ուսուցիչներ, բայց Կոմիտասը եղել ու մնացել է իր պաշտամունքը: Աչքի է ընկել իր ընդունակություններով ու երբ ավարտել է, ուղարկել են Գերմանիա որպես էջմիածնի թոշակառու:

Մինչև Գերմանիա մեկնելը վաղարշապատում հրատարակել է երկու գրքույկ, մեկը՝ «Մկրտիչ Պեշիկթաշլյան», մյուսը՝ «Կանտի ճանաչողության տեսությունը»:

Այդ գրքերի հեղինակն ընդամենը քսանմեկ տարեկան է եղել:

Ես շատ մոտ չեմ եղել իր հետ, բայց մի քանի անգամ ընկերներով այցելել ենք իր տուն: Պարզ և ջերմ մարդ էր: Սիրում էր շփվել մարդկանց հետ, մտքեր հայտնել, ավելի շատ լսել, թե ուրիշներն ինչ են ասում: Բարյացակամ էր, ընդառաջող, դժվարության մեջ գտնվողներին օգնության հասնող: Վերին աստիճանի հետաքրքիր հավաքույթներ էին, ես կասեի՝ ուսանելի:

Հակոբ Հարությունյանը, հակառակ իր բազմակողմանի նկարագրին, գուցե միակն էր իմ ճանաչած մարդկանցից, որ ամբողջական տպավորություն էր թողնում: Ոչ թե երաժշտություն գիտեր ու լեզվաբանություն, ոչ թե փիլիսոփա էր ու գրականագետ, այլ տպավորությունն այնպես էր, որ այդ ասպարեզները մեկն առանց մյուսի չեն լինում, որ դրանք մի համացություն են, մի ամբողջականություն, որ անհնար է պատկերացնել մեկն առանց մյուսի. եթե լեզվաբան է, ուրեմն արդեն փիլիսոփա է և՝ հակառակը: Շատ պատրաստված մարդկանց եմ հանդիպել, որոնցով հիացել եմ: Հակոբ Հարությունյանն ինձ ծանոթ մարդկանցից միակն էր, որ թողել է ներդաշնակ ամբողջականության տպավորություն: Նրան լսելիս մնացել էի զարմացած այն բանից, որ նա որևէ միտք հաստատելու համար կռվաններ էր բերում տարբեր բնագավառներից և դա այնքան ապացույց չէր բազմակողմանի գիտելիքների տեր լինելու, որքան այն բանի, որ ըստ նրա՝ ամեն ինչի հիմքը մեկն է, հետևապես միևնույն է, թե բերածդ օրինակը կամ արածդ դատողությունը փիլիսոփայությունի՞ց կլինի, լեզվաբանությունի՞ց, թե՞՝ երաժշտությունից:

Ես շատ մեծ անհատականությունների հետ եմ շփվել և նկատել, որ հոգեկան կացությունը, տրամադրությունը, բար-

յացակամությունն ու անբարյացակամությունն իրենց դրոշմն են դրել նրանց մտքերի վրա, որի հետևանքով երբեմն տարբեր են եղել նրանց վերաբերմունքն ու գնահատականը նույն հարցի կամ նույն անձի վերաբերյալ։ Հակոբ Հարությունյանը բոլոր պայմաններում և բոլոր պարագաներում մնում էր անդրդվելի, նա չէր փոխում իր կարծիքը որևէ մեկի ստեղծագործության վերաբերյալ, նույնիսկ այն դեպքում, երբ հանկարծ իմանում էր, թե նա իր մասին խիստ բացասաբար է արտահայտվել։ Ես քանիցս եղել եմ վկա, երբ նման առիթներով փորձել են անվանարկել իր հակառակորդին՝ նա ընդդիմացել է։ Համոզված էր, որ բանաստեղծի կամ երաժշտի ստեղծագործությունը աշխարհ գալուց հետո ազգային արժեք է, ժողովրդական հարստություն, և դրանց գնահատականը չի կարող կախում ունենալ նրանց հեղինակների հետ մեր անձնական հարաբերություններից։

Մի օր պատմեց, որ ինքը Կոմիտասի օրինակով շրջել է գյուղերը և հավաքել ժողովրդական երգեր։ Շուրջ երկու հարյուր երգ ուներ հավաքած, դրանք պատրաստ են տպագրության, բայց հրատարակիչ չունի։

Մի օր էլ իր տանը խոսեց Կոմիտասից, ասաց, որ ինքը գրել է նրա երաժշտական դիմանկարը, բերեց ձեռագիրը, դրեց սեղանին։ Հարցրինք, թե որքան կլինի, ասաց, որ մեծ չէ, հազիվ մի չորս մամուլ, կատարելապես պատրաստ կլինի երկու ամսից։ Որքան ինձ հայտնի է, այդ գործն այդպես էլ հրապարակ չբերեց։

Առանձին էջեր կարդաց, և հիշողությանս մեջ մնաց նրա հայտնած այն միտքը, թե Կոմիտասը երկու դարաշրջանների սահմանագլխին է կանգնած, մի կողմում՝ հազարամյակների երաժշտությունն է, մյուս կողմում՝ նոր, իր ժամանակվա երաժշտությունը։ Կոմիտասը միջնորդն ու փոխանցողն է հնի ու նորի։ Նորը ասելով՝ հասկացվելու է ոչ միայն այսօրվանը, այլև վաղվանը։ Ու եզրակացնում էր, որ Կոմիտասով հազարամյակների երաժշտական մշակույթն իր ավարտին է հասնում և նույն Կոմիտասով սկիզբ է առնում երաժշտական նոր մշակույթ, որը ժողովրդական մշակույթի փոխակերպումն է ավելի բարձր ու կատարյալ ձև առած արվեստի։

Միտքս են մնացել նրա դատողությունները, ավելի շուտ՝

բնորոշումները, թե Կոմիտասի համար ինչ է նշանակում ժողովրդական ստեղծագործությունը։

Կոմիտասի հավատը ժողովրդականի ու նրա ապագայի նկատմամբ անսասան է։

Կոմիտասը՝ սպառազինված ժողովրդականով, ամբողջ աշխարհն է անցնում, հրապարակ բերում ժողովրդականը։

Կոմիտասը մոլեռանդ հավատ ուներ ժողովրդականի ստեղծագործ ուժի և ժողովրդականի հաղթանակի նկատմամբ։

Ինձ վրա մեծ տպավորություն թողեց նրա այն ձևակերպումը, մանավանդ որ ասողը փիլիսոփա էր, թե Կոմիտասն ինքնամփոփ բացարձակություն է։ Կոմիտասը նրա համար ոչ թե սիրելի ուսուցիչ էր, այլ ժողովրդական ոգի, որը գալիս էր իրենից, իր նման հազարավորներից, որոնք, սակայն, չունեին Կոմիտասի հանճարը, և Կոմիտասն իր և իր նմանների խտացումն էր մեկ անհատի մեջ։

Մի օր էլ նա կարդաց մի հետազոտական ակնարկ, նվիրված հայ եկեղեցական երաժշտությանը, կարդաց ամբողջը՝ սկզբից մինչև վերջ, որը թեև ավելի մատչելի կլիներ երաժըշտագիտական պատրաստություն ունեցողներին, բայց ինձ թվաց հետաքրքիր ու եթե դա ժամանակին չի տպագրվել, ապա կարծում եմ, արժե, որ գոնե հիմա, եթե պահպանվել է, հրապարակ բերվի։

Հակոբ Հարությունյանի անձնավորությունը մի մտորում էլ է առաջ բերում։

Հողի զգացում։

Նրա անձի, նրա բոլոր մտքերի ու դատողությունների մեջ ես զգում էի հողի ձայնը, զգում Ալաշկերտը, այն լեռներն ու կիրճերը, այն դաշտավայրերն ու սառնորակ աղբյուրները, այն բոլորը, որ շրջապատել է նրան մանկության երջանիկ տարիներին։

Նա գիտեր Գյոթե, ինչպես ոչ ոք մեզանում, նա գիտեր Հեգել ու Կանտ և գիտեր լավ, և այդ բոլորը նրան դարձրին իմաստուն, բայց չկտրեցին հողից ու նա չդադարեց ժողովրդական մտավորական լինելուց, որին, ավա՜ղ, վիճակված չէր երկար ապրել։

Երբ շատ տարիներ անցան, ու ինձ հանձնարարվեց արվեստի ինստիտուտի ղեկավարությունը, միտք հղացա թարգմանել

տալ Հեգելի «Էսթետիկան»։ Բայց ո՞վ էր լինելու թարգմանիչը։ Այդպես էլ չգտա։ Հիշեցի Հակոբ Հարությունյանին, ա՛յ թե ով կաներ լավ։ Ու ինձ չներեցի, որ լինելով Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչ, այն ժամանակ չեմ մտածել այդ մասին, մանավանդ որ Հակոբ Հարությունյանը ասպարեզի վրա էր, այն ժամանակ նա երևի հիսուն տարեկան հազիվ լիներ, ուժն ու կարողությունը վրան։

Ինձ մոտ եկավ Հակոբ Հարությունյանի եղբայրը՝ Ափոն, ու սեղանիս դրեց Հակոբ Հարությունյանի «Մանյակ» խորագրերով ժողովածուն, որի մեջ ամփոփված էին եղբոր հավաքած ժողովրդական երգերը, գրի առնված դեռ Գևորգյան ճեմարանի սան եղած ժամանակներից։ Ես անմիջապես հանձն առա դրա հրատարակությանը։

Հոգու պարտք էր դա, որ արվեց որպես ավագ ընկերոջ արժանավոր մարդու հիշատակի պահպանման տուրք։

ՏԵՐՅԱՆԻ ԱՆՏԻՊԸ

Պետհրատում զբաղեցնելով գեղարվեստական գրականության բաժնի վարիչի պաշտոնը՝ կամենում էի գնալ Չարենցի բացած ճանապարհով և հավատարիմ մնալ նրա հրատարակչական ավանդույթներին, անել այն, ինչ ինքը ծրագրել էր, բայց ինչ-ինչ պատճառներով չէր կարողացել իրագործել։

«Գրական թերթի» հաղորդումներից ինձ հայտնի էր, որ Չարենցը մտադիր է եղել հրատարակել Վահան Տերյանի անտիպ բանաստեղծությունների ժողովածուն։ Հայտնի էր նաև, որ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի կարգադրությամբ, գրական թանգարանի տնօրինությունը Տերյանի անտիպ բանաստեղծությունների ձեռագրերը տրամադրել էր Չարենցին՝ իր ծրագրած ժողովածուն կազմելու նպատակով։

Տարիներ անց (1956) «Գրական թերթում» տպագրված Չարենցի օրագրից պարզ եղավ, թե ինչպիսի խնամքով է բանաստեղծը վերաբերվել Տերյանի ձեռագրերին. «Մի տարի է մոտ, որ ես Գրական թանգարանից՝ Խանջյանի կարգադրությամբ վերցրել եմ Վահան Տերյանի ձեռագրերը՝ նրա անտիպ երկերը հրատարակության համար պատրաստելու նպատա-

կով։ Ես սկսեցի արտագրել ձեռագրերը, որպեսզի միշտ ձեռքի տակ ունենամ, և բնագրերը չփչանան հաճախակի թերթելուց։ Բայց դեռ չեմ վերջացրել և չեմ էլ շտապում»։

Ու ես, որ երկրպագուն եմ Տերյանի և Զարենցի, որոշեցի գլուխ բերել իմ մեծ նախորդի անկատար մնացած ցանկությունը, բայց, ընդլայնելով նրա ծրագիրը՝ ոչ թե «Անտիպ բանաստեղծություններ», այլ «Բանաստեղծությունների լիակատար ժողովածու»։ Վերապահելով ինձ կազմողի համեստ դերը, խնդրեցի Ավ. Իսահակյանին լինել ժողովածուի խմբագիրը։ Ստացա վարպետի համաձայնությունը և ձեռնամուխ եղա ժողովածուն կազմելու գործին։

Գիրքն ընդգրկում էր Պողոս Մակինցյանի հրատարակած կարմրակազմ հատորների չափածո տեքստը։ Բայց դա բավական չէր։ Ամեն նոր հրատարակություն, եթե հնարավոր է, պետք է ինչ-որ բան ավելացնի նախորդին։ Մտքիս դրի գտնել այն մարդկանց, որոնք կարող էին Տերյանից չհրապարակված էջեր ունենալ։ Բնականաբար ամենից առաջ դիմեցի դերասանուհի Եվգինե Սեբարին, որը Տերյանի մտերիմ ընկերոջ՝ հայտնի գրականագետ ու մեր առաջին տերյանագետ Պողոս Մակինցյանի կինն էր. հնարավոր էր, որ ամուսնու թղթերի մեջ լինեին Տերյանի անտիպ էջերից։ Նա ինձ տրամադրեց չհրապարակված յոթ բանաստեղծություն։ Գիտեի, որ գրականագետ Հովհ. Ղազարյանը զբաղվել է Տերյանի արխիվով, ուստի և կիմանար չհրապարակված ինչ է մնացել։ Նա էլ իր հերթին ինձ հանձնեց քսաներեք անտիպ բանաստեղծություն։ Գրական թանգարանի աշխատակցուհի Պարգևուհի Սիմոնյանն էլ՝ մեկ բանաստեղծություն։ Այնուհետև ծանոթացա Գրետա Շահխաթունու հետ, որ երիտասարդ տարիներին մտերիմ է եղել բանաստեղծի հետ և որին Տերյանը նվիրել է «Ափսոս չէ, Մարգո, այս երեկոն» բանաստեղծությունը։ Պարզվեց, որ նրա մոտ ևս կան անտիպ էջեր։ Բարյացակամ և համակրելի կին, որի համար թանկ էր Տերյանի հիշատակը, սիրով տրամադրեց անտիպ մի բանաստեղծություն, որ լույս էր տեսնելու առաջին անգամ։ Բանաստեղծ Գևորգ Էմինը, լսելով, որ կազմում եմ Տերյանի ժողովածուն, մի գեղեցիկ օր իմ գրասեղանին դրեց թղթերի մի փոքրիկ կապոց։ Բացեցի և, ո՜վ զարմանք, տեսնեմ

Տերյանի անտիպ բանաստեղծություններն են՝ Չարենցի ձեռքով արտագրված։

Այն ժամանակ Չարենցի անուն տալն իսկ արգելված էր, ուստիև «Հրատարակչության կողմից» հակիրճ խոսքում Տերյանի անտիպ բանաստեղծությունների այս շարքի ձեռքբերումը ձևակերպվեց այսպես՝ «Պետհրատի հանձնարարությամբ պատրաստված Տերյանի անտիպ բանաստեղծությունների ժողովածուից», որ ժամանակին պատրաստելիս է եղել Չարենցը։ Այդպիսի ժողովածու չի եղել Հայպետհրատի չհրատարակված նյութերի մեջ, ինձ, գոնե, չի հանդիպել։ Ահա այդ քառասուն բանաստեղծության համար մենք պարտական ենք Գևորգ Էմինին։ Եվգինե Սեբարից բացի, մյուսները բոլորը ողջ են և կարող են վկայել ասածիս ճշմարտությունը։

Բոլոր անտիպ նյութերն ամփոփեցի ժողովածուի «Անտիպ էջեր» բաժնում։ Չարենցի ձեռագրերը պահվում են իմ թղթերում և արխիվային այլ նյութերի հետ շուտով կդառնան գրականության և արվեստի թանգարանի սեփականությունը։

Շատ չանցած հիվանդացա այնքան ծանր ու երկարատև, որ չէի կարող հետևել հրատարակության ընթացքին։ Խնդրեցի հետաձգել ժողովածուի տպագրությունը կամ, հակառակ դեպքում, չգրել, որ կազմողը ես եմ։ Պետհրատի ղեկավարներն ընդունեցին երկրորդ առաջարկը։

Կրկին վերադառնալով Տերյանի «Բանաստեղծություններիր լիակատար ժողովածուին», ասեմ, որ «Սովետական գրականություն» ամսագրում գիրքը ենթարկվեց քննադատության, որտեղ խիստ խոսքեր էին ասված անանուն կազմողի հասցեին։ Հիմա, շուրջ կես դար հետո, մեր դրական հասարակությունը թող իմանա, թե ո՞վ է ժողովածուն կազմողը, ուստիև ո՞վ է պատասխան տալու գրքի թերությունների ու արժանիքների համար։

ԳՐԵՏԱ ՇԱՀԽԱԹՈՒՆՈՒ ՊԱՏՄԱԾԸ

Այս գրառումը կատարվել է մի հիանամյակ առաջ։

1939-ին ինձ այցելեց Գրետա Շահխաթունի անունով մի կին։

— Շահխաթունի՞:

Զարմացա ես:

— Այո, Շահխաթունի:

— Ազգակցական որևէ կա՞պ ունեք հռչակավոր դերասանի հետ:

— Ինչպե՞ս չէ: Զարմիկներ ենք,— եղավ նրա պատասխանը:

Քառասունի մոտ, նիհարավուն, իր տարիքի համեմատ մաշված կին էր: Աչքերը թախծոտ էին, զրուցակցին նայում էին տխուր-տխուր, նույնիսկ այն ժամանակ, երբ խոսակցության բերումով ժպտում էր: Խոսում էր կամացուկ ձայնով, համարյա շշուկով: Մտավորական մարդու դրոշմ կար դեմքին, համայիլ կին էր, վաղեմի գեղեցկության հետքերը պահած:

Ասաց, որ Տերյանից անտիպ բանաստեղծություններ ունի և հարցրեց, թե չե՞մ ուզենա արդյոք, նկատի ունենալ պատրաստվող ժողովածուի համար: Հետաքրքրվեցի՝ ո՞վ է իրեն ասել, թե Տերյանի նոր ժողովածու է պատրաստվում, ասաց՝ Շադիկը՝ Նիկ. Աղբալյանի դուստրը: Ստանալով համաձայնությունս, նա հարկ համարեց զգուշացնել, որ բանաստեղծությունը նվիրված է մեր իշխանություններից մերժված մի մարդու: Ես «քաջաբար» ասացի, թե դա արգելք լինել չի կարող: Հազիվ երկու տարի էր անցել 1937-ից: Բայց, երևի, ճիշտ գործող բնազդներ կան: Բանաստեղծությունը լույս տեսավ, և ոչ ոք դրանից պատմություն չսարքեց: Դրանից հետո երկու անգամ էլ հանդիպեցինք, և իմացա, որ «Ա՛խ, ափսոս չէ Մարգո, այս երեկոն» տրիոլետի քնարական հերոսուհին ինքն է:

— Դուք Գրետա եք, այնպե՞ս չէ:

— Դա իր պատմությունն ունի:

Ես խնդրեցի, որ պատմի իր մասին, ավելի շուտ՝ անի տրիոլետը գրելու պատմությունը: Ինչ որ պատմեց, ես տեղնուտեղը գրի առա, մտածելով, որ մի օր կհրապարակեմ: Ետ այդ շարի ու գրառումս էլ կորավ անթիվ-անհամար թղթերի մեջ: Հետագայում Տերյանի հատորները պատրաստելիս, նրանք հանդիպել էր վաչե Պարտիզունին և խնդրել, որ գրի իր հուշերը Տերյանի մասին:

Շատ տարիներ անց, երևի 70-ական թվականներին, ես

հատուկ այցելեցի Շահխաթունուն: Գտել էի գրատումս, որ բավարար չէի համարում, լրացումներ էին հարկավոր:

Հիշեց անցած-գնացած տարիները: Շնորհակալ հուզմունքով էր հիշում ամեն ինչ և, ինչպես մեր առաջին հանդիպման ժամանակ, այնպես էլ հիմա, զգալ էր տալիս իր համեստ բնավորությունը:

Ահա նրա պատմածը, որ գրի եմ առել ինչպես լսել եմ բառ առ բառ:

— Բանաստեղծությունը, որ հիմա ձեր տրամադրության տակ է, ինչպես տեսնում եք նվիրված է Արշամ Խոնդկարյանին: Նրա կինը իմ քույրն էր, Աստղիկ անունով: Ես քրոջս մոտ էի, որ վահան Տերյանը էջմիածին եկավ: Նրա հետ էին Պողոս Մակինցյանն ու Աշոտ Հովհաննիսյանը: 1916 թվականն էր, հունվար ամիսը: Մակինցյանը Երևանում էր աշխատում: Տերյանը նրա հյուրն էր, մեծ մասամբ Երևանում էր լինում, մեկ-մեկ գալիս էր էջմիածին: Աշխատում էի Երևանում. գաղթականների համար դպրոցներ կային, որտեղ որբ երեխաներին դասավանդում էի ռուսերեն:

Այնպես որ, Տերյանին Երևանում ավելի շատ եմ հանդիպել:

Ես 18 տարեկան էի: Նոր էի ավարտել դպրոցը:

Տերյանը երկու անգամ էջմիածին եկավ, հիմա չեմ հիշում, թե որ գալուն է գրել: Հիշում եմ, որ միասին գնացինք ակումբ, գրադարանում, ինչպես պատահեց, մնացինք մենակ: Մեղ հետ էր նաև ակումբի պահակը՝ Աբելյանով ազգանունով մի ծերուկ:

Չեմ հիշում, թե ինչ էր ասում Տերյանը: Խոսում էր, խոսում, իսկ ես հափշտակված լսում էի պաշտելի բանաստեղծին: Ամաչում էի, բայց և բախտավոր անսահման. չէ՞ որ իմ զրուցակիցը Տերյանն էր:

Չէր սիրում, որ ինձ Գրետա են կոչում: Ասում էր՝

— Ավելի լավ է Մարգո:

Խոսելիս սիրում էր ռուսերեն խոսքեր, արտահայտություններ խառնել:

Տրիոլետը գրեց էջմիածնում, գրադարանի ընթերցասրահում:

Տերյանը Երևանում ապրում էր Մակինցյանի տանը: Այդ

շենքի առաջին հարկում «Чашка чая» անունով թեյարան կար։ Այդտեղ ես, ինչպես նաև ուրիշ աղջիկներ մատուցողներ էինք։ Տերյանը քանի անգամ է առաջարկել նստել, բայց ես, ինչպես և մյուս աղջիկները իրավունք չունեինք նստելու։ Այնպես որ մեր զրույցները ոտքի վրա կանգնած մարդու կարճ հարց ու պատասխան էին։

Ահա այդ ժամանակ էր, որ Բրյուսովը ժամանեց Երևան և դասախոսություն կարդաց հայկական պոեզիայի մասին։ Բեմում նստած էին, հիշում եմ, Արսեն Տերտերյանը, Մարտիրոս Հարությունյանը, նաև Տերյանը։ Բեմի կենտրոնում Բրյուսովն ու Մակինցյանն էին։

Երբ իր խոսքի ընթացքում Բրյուսովը հասավ Տերյանին, շրջվեց նրա կողմը, ծափահարեց, ժողովուրդն էլ ծափահարեց։

Ընդմիջման ժամանակ Տերյանը դահլիճ եկավ, գտավ ինձ ու տարավ բեմի հետևը։

— Գնանք, ձեզ ներկայացնեմ Բրյուսովին։

Ես, իհարկե, ուզում էի, բայց նաև ճնշված էի զգում ինձ։

— Валерий Яковлевич, познакомтесь, вот вам найрянка.

Բրյուսովը բռնեց իմ պարզած ձեռքը և իսկույնևեթ գտավ զեղեցիկ կոմպլիմենտ.

— Теперь я не удивляюсь, что ваша поэзия так прекрасна.

Եվ հետո ավելացրեց.

— Вы, конечно, Терьяна не читали на русском языке. Во второй половине вечера я прочту для вас Терьяна.

Ես էլ ասացի։

— В вашей передаче это будет прекрасно.

Բրյուսովը կարդում էր մի փոքր երգեցիկ ձայնով և շատ տպավորիչ։

1917 թվին Տփխիս էի գնացել, և Տերյանն էլ այնտեղ էր։ Հիշում եմ, որ Սուրխաթյանը դասախոսություններ ուներ, Տերյանի հետ միասին գնացինք նրան լսելու։ Հիմա չեմ հիշում, թե ինչին էր դասախոսությունը նվիրված, բայց միտս է, որ խոսեց նաև Տերյանի մասին, խոսեց ներշնչված և հիացումով։ Հետո վեր կացավ Մամբրե Մատենճյանը և քննադատեց Տերյանին, քարը քարի վրա չթողեց, пух и прах.

— Դուք գուցե պատասխանեք,— դարձա ես Տերյանին։
— Хвалу и клезету приемли равнодушно и не оспаривай глупца,— եղավ նրա պատասխանը։

Շահխաթունին շփոթում է, Մատենճյանը ոչ թե Սուրխաթյանի դասախոսության առիթով է ելույթ ունեցել, այլ հատուկ դասախոսություն է կարդացել ու խիստ քննադատության ենթարկել Տերյանին։

Քրոջս՝ Հասմիկի հետ, ճանապարհվեցինք Ախալցխա՝ ուսուցչություն անելու։

Պետերբուրգից ուղարկեց մի ոտանավոր.

Այսօր գալու է Մարգոն իմ,
Սիրտ իմ, խնդա ու դողա,
Սիրտ իմ, գարուն է հիմա,
Այսօր գալու է Մարգոն իմ,
Ես բազմալար երգեհոն եմ,
Ես խելագար մի տղա...
Այսօր գալու է Մարգոն իմ,
Սիրտ իմ, խնդա ու դողա։

1917 թվի գարնանը Տերյանը եկավ Սուխումից, որտեղ առանատորիայում բուժվում էր, պետք է գնար Ախալքալաք, իրենց գյուղը՝ Գանձա, եկավ Ախալցխա մայիսի սկզբներին էր, կարծեմ։

Դա իմ վերջին հանդիպումն էր Տերյանի հետ։

Ուզում եք, որ մի երկու մանրամասնություն էլ հաղորդեմ մեր ընտանիքից, խնդրեմ։

Իմ Օհան պապը եղել է Շահրիար գյուղի (հիմա՝ Նալբանդյան) կալվածատերը։ Բեկի անուն է ունեցել։ Ռուսաց զորքերից փախչող սարդարը Սարդարաբերդի բանալիները հանձնել է պապիս։ Երևանին իր հաղթական զորքերով մոտեցող Պասկևիչին պապս դիմավորել է աղուհացով և բերդի բանալիները հանձնել նրան։ Այդ պատճառով նրան տրվել է ազնվականի կոչում։ Նրա տղաները որպես дворяне զինվորականներ են եղել։ Նրանցից մեկը հասել է գեներալի աստիճանի։ Հայրս, որ նույնպես զինվորական է եղել, գնդապետ էր թե փոխգնդապետ, լավ չեմ հիշում։ Իսկ հորեղբայրս՝ վաղարշակը, սովորել է Մոսկվայում, լազարյան ճեմարանում։ Մտերիմ է եղել Պերճ Պռոշյանին։ Իրեն նվիրել

է թատրոնին: Տաղանդավոր դերասան էր: Դերասանություն է արել նաև որդին՝ Արշավիր Շահխաթունին, որի մասին դուք լավ գիտեք: Բայց հորեղբայրս, չնայած իր հաջողություններին, չի շարունակել իր թատերական գործունեությունը: Հայրը սպառնացել է, թե կզրկի ժառանգությունից:

Մենք երեք քույր և մի եղբայր էինք:

Աստղիկը՝ ինչպես ասացի, Արշամ Խոնդկարյանի կինն էր: Օդեսայի համալսարանն ավարտած պատմագետ էր: Ամուսնու վտարանդվելուց հետո այստեղ նրան վատ վերաբերեցին: Տարիներ շարունակ աշխատել է դպրոցներում: 1937 թվականին բանտարկեցին և աքսորեցին: Տասը տարի աքսորական ճամբարներում տպրեց ու վերադարձավ: 1965 թվականին վախճանվեց քաղցկեղից:

Եղբայրս՝ Ավետիք Շահխաթունյան, դաշնակցական կուսակցության լիդերներից էր, «Հորիզոնի» խմբագիրներից: 1918 թվին վախճանվեց թոքերի բորբոքումից Թիֆլիսում: Ունեցավ երկու աղջիկ , որոնցից մեկը հիմա աչքի ընկնող մարդ է, ավիոկոնստրուկտոր՝ Անտոնովի նախկին կինը:

Մյուս քույրս՝ Հասմիկը, որի պատրաստած սուրճն ենք վայելում, ավարտել է Երևանի գիմնազիան, ուսուցչություն է արել, դասավանդել է ռուսաց լեզու, աշխատել է հանրային պրադարանում:

Ես ավարտել եմ գիմնազիա, 10 տարի ուսուցչուհի եմ եղել: Ընդունվել եմ համալսարանի քիմիական ֆակուլտետը: Ավարտել եմ 1933 թվականին և աշխատել գիտահետազոտական լաբորատորիայում ագրո-քիմիայի գծով: Հետագայում՝ 1939—1956 թվականներին աշխատել եմ բժշկական ինստիտուտի ընդհանուր քիմիայի ամբիոնում, որպես ասիստենտ: Հիմա թոշակառու եմ:

Ահա բոլորը, կարծես, որ կարող էի ասել ձեզ: Տերյանը մի քանի նամակ է գրել ինձ, որոնք տպագրված են, ինչպես նաև մի քանի բանաստեղծություն: «Այսօր գալու է իմ յարը» նույնպես ինձ է նվիրված:

Վերջացրեց իր պատմությունը ու սեղանին դրեց կարմիր թանաքով գրված թերթիկ, վրան այն բանաստեղծությունը, որ Տերյանը Սուխումիից ուղարկել է Կրետա Շահխաթունուն, համարելով սևագիր, անմշակ:

Տեսնո՞ւմ ես, Մարգո, ինչպես արագ
Անցավ բոլորը և դարձավ հուշ.
Այժմ ո՞վ է, ասա, գրկում ըզգույշ
Իրանըդ այնքան, այնքան բարակ.
Եվ ո՞վ է լըսում, ասա, անույշ,
Խոսքերըդ սիրո ու սևեռակ,
Հուրհրիդ խառնում մի նոր կըրակ՝
Արբեցած փայլով աչքերիդ նուշ.
Ես ձըմեռ օրով տեսա գարուն
Ու մայիսից վատ տեսա հունվար.
Եվ մի՞թե, մի՞թե նրա համար,
Որ հյուսեմ հուշերն այս ոլորուն,
Եվ անքուն մաշեմ գիշերը գով
Քո կարոտով ու քո երազով...

Վ. Տ.

Դրանից հետո այլևս չեմ հանդիպել Գրետա Շահխաթունուն: Ու երբ մի օր կգրվի «Տերյանի ուղեկիցները» խորագրով գիրք, համոզված եմ, որ մի երկու էջ էլ կհատկացվի այդ համակրելի կնոջը, որի անունը Շահխաթունի էր, Գրետա, Մարգո:

Փխրուն էակ էր նա՝ համեստ, զգայուն, շնորհակալ սրտով:

ԿԱՐԵՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Թերթում էի Մարտիրոս Սարյանի ալբոմը, և աչքովս ընկավ Կարեն Կամսարականի դիմանկարը: Ու միտքս սլացավ հետ, դեպի 30-ական թվականների սկզբները, երբ ես գիտաշխատող էի կուլտուր-պատմական թանգարանի գրական բաժնում: Թանգարանում էր աշխատում Կարեն Կամսարական անունով կարմրերես մի երիտասարդ, որ ավելի ռուսի էր նման, քան՝ հայի: Ինձ Կարենը հետաքրքիր էր թվում, ինքնատիպ երիտասարդ էր, սովորել էր Երևանի գիմնազիայում: Խորհրդային կարգերի օրով գիմնազիան փակվել էր և բոլոր աշակերտների հետ տեղափոխվել էր Աբովյան դպրոցը, որ նոր էր բացվել: Թեև թունդ հայասեր էր, բայց ռուսախոս էր:

Հայրը՝ Ստեփան Կամսարական, գյուղատնտես էր, մայրը՝ բժշկուհի։

Հակասություն կար նրա արտաքին պահվածքի և խառնվածքի միջև։ Եթե չասեմ գոռոզամիտ, ապա հպարտ բան կար Կարենի կեցվածքի մեջ։ Մինչդեռ բնավորությամբ պարզ ու բարի էր, դյուրահաղորդ, մարդամոտ, ընդունակ՝ ունեցած վերջին կոպեկը տալ կարիքի մեջ գտնվողին։ Եվ դա ի ցույց չէր, անում էր անկեղծ, սրտանց։

Կարենը կինոյի մեծ սեր ուներ, նկարահանվում էր զանգվածային տեսարաններում։

Ինչ-որ ժամանակ ապրել էր Օդեսայում, կապվել էր ուկրաինական կինոարվեստի մարդկանց հետ։ Ոչ առանց պարծանքի պատմում էր Դովժենկոյի մասին։ Հիշում ու պատմում էր նրա «Աերոպագ» կինոֆիլմից։ Երբ ընկերներն ասում էին, թե կինոնկարն իրենց վրա տպավորություն չի թողել, «Չե՛ք հասկացել»,— կտրում էր նա։ Պատմում էր ուկրաինացած մի վրացու մասին Կավելարիձե անունով, որը նույնպես կինոյի աշքի ընկնող աշխատող էր։ Ընդհանրապես հոգեպես շատ կապված էր Ուկրաինայի և ուկրաինացիների հետ։ Ուկրաինայի պաշտամունք ուներ։ Պարծանքով էր արձանագրում, որ «Ալմաստ» օպերան առաջին անգամ բեմադրվել է Օդեսայում։

Մի օր ինձ ասաց.

— Ռուբեն, դու ինձ լավ ես վերաբերում, լավ է, բայց դա չէ կարևորը, կարևորն այն է, որ ես եմ քեզ լավ վերաբերում։ Հասկանու՞մ ես։

Ես ասի, որ չեմ հասկանում։

— Ես՝ Կարեն Կամսարականն եմ, ազնվական տոհմից, Կամսարականների վերջին շառավիղը։ Ու մի օր, երբ վերականգնելու լինեն հայոց թագավորությունը, ես եմ լինելու գահի միակ թեկնածուն։ Ու ես կհիշեմ քեզ այդ ժամանակ։ Հասկացա՞ր։

Այս խոսքերն ասելիս՝ չէիր հասկանում, լուրջ է ասում, թե կատակ է անում։ Բայց որ իր խոսելակերպի, քայլվածքի ու նստվածքի մեջ էլ նրան մեղնից տարբերող բան կար, անկասկած է։

Ես կատակի տվի։

— Թագավորական հրամաններդ ի՞նչ լեզվով ես արձակելու՝ ռուսերե՞ն, թե հայերեն։

— Հայերեն։ Միա՛յն հայերեն։

Դժգոհ էր Սարյանի նկարից։

— Ինչո՞ւ է ինձ դուրս բերել заядлый հարբեցող, թեև, հասկանում եմ, որ որպես դունանկարչական գործ լավն է։

Ու մի օր լուր առանք, որ Կարենին ձերբակալել են։ Խանջյանի թաղամից մի տասը օր հետո էր երևի։ Ուրիշ երիտասարդների էլ էին մեկուսացրել։ Տարիներ անցան, այդ երիտասարդները վերադարձան, իսկ Կարենի ճակատագիրը մնաց անհայտ։ Մեր ընկեր Կարեն Կամսարականից հիշատակ մնաց Սարյանի դիմանկարը։

ՀԱՄԱՋԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1936-ին, ամիսը չեմ հիշում, բայց միտս է, որ ցուրտ եղանակներ էին, ծանոթացա Համազասպ Համբարձումյանի հետ։

Գիտեի, որ կրթությամբ և զբաղմունքով իրավաբան է։ Թերթել էի նրա բանաստեղծությունների երկհատորյակը, և, անկեղծ ասած, չէի տպավորվել։ Գիտեի, որ հայրն է Վիկտոր Համբարձումյանի, այն երիտասարդի, որի անունն արդեն հայտնի էր աշխարհի աստղագետներին։

Իմ առաջին հանդիպմանը նա կլիներ շուրջ 60 տարեկան։

Հանդիպեցի Ալիս Մանուկյանի տանը։

Համազասպ Աստղուրովիչը Երևան էր եկել դատեր՝ Գոհարիկի հետ։ Հայր և աղջիկ հակապատկերներ էին։ Հայրը բուռն ու վրակոտ էր, խոսելիս աղմկալի ու անդիջում։ Անգամ ամենասովորական դատողություններն անելիս, կողքից նայողը այն տպավորության էր լինելու, թե մեկի հետ թունդ վեճի է բռնվել։ Կտրուկ էր և իր բնորոշումներն անելիս կարող էր խիստ, ավելի լավ է ասել՝ կոշտ արտահայտություններ թույլ տալ։ Գոհարիկը մեղմ էր, երբեք ձայնը չէր բարձրացնի, կարծիք հայտնելիս՝ անվերապահ չէր, միշտ կզգուշացներ, որ գուցեև ինքը սխալվում է, բայց այսպես է կարծում։ Նա ավելի մորն էր գցել։ Դա ուրիշ բնավորություն էր։

Համազասպ Աստուրովիչը խոսքասեր և խոսքաշեն մարդ էր։ Հանդիպելիս դու կարող էիր ոչինչ չասել, լինել միայն ունկնդրի վիճակում, և նա հանդիպման բոլոր ժամերին կխոսեր, մարդկանց ուշադրությունը կպահեր իր վրա, դատողություններ կաներ, կարծիքներ կհայտներ, դեպքեր կպատմեր։ Եվ այդ բոլորը հետաքրքիր էին ոչ միայն ըստ բովանդակության, այլ նաև ըստ մատուցման ձևի։ Մարդիկ կան, որ միտք հայտնելիս այնպիսի տպավորություն են թողնում, թե հիմա այս պահին այդպես մտածեցին և, ասես, նրանց հետաքրքիր է իմանալ դիմացինի կարծիքը՝ ինքը ճի՞շտ է, արդյոք։ Համազասպ Աստուրովիչը դրա հակապատկերն էր։ Ինչի մասին խոսեր՝ կաներ դատողություն, որի մասին խորհել է վաղուց, եկել է որոշակի եզրակացության և ինչ որ հիմա է ասում, ոչ թե կարծիք է, այլ համոզմունք։

Ես այն տպավորության էի, թե նրա հետ վիճել հնարավոր չէ, ընդհանրապես հնարավոր չէ նրան վերահամոզել։ Ճիշտն այն է, ինչ որ ինքն է ասում։ Երկու հանգամանք նրան շատ էին օգնում. մեկը՝ գիտելիքների մեծ ընդգրկում։ Ինչ միայն չգիտեր՝ գրականություն և արվեստ, պատմություն և փիլիսոփայություն, կրոն և բնագիտություն... Երկրորդն էլ՝ իր մասնագիտությունն էր՝ իրավաբանությունը, որի դեպքում գործի է դրվում իրենց ասպարեզում ընդունված իրավաբանական տրամաբանությունը, երբ կարելի է, ծայրահեղ արտահայտված՝ ապացուցել, որ սևը ճերմակ է և հակառակը։

Մեջբերումները, սովորաբար, անում էր բնագրով՝ հին հունարեն, լատիներեն, ռուսերեն, անգլերեն տեղնուտեղը թարգմանում։ Թվում էր, թե գիտե մարդկության պատմության ամենահին ժամանակներից, գիտե ոչ ի միջի այլոց, հարևանցի, այլ հիմնավոր։

Ոչ մի բանի մասին չէր խոսում անտարբեր։ Ամեն ինչ սրտին մոտ էր ընդունում։ Կամ հիանում էր ու ոգևորվում, կամ ժխտում և բացասում։ Երկու դեպքում էլ՝ կրքոտ շեշտով։ Զափանիշները լայն էին, համաշխարհային։ Տեղական, ազգային մտածողում նրա համար գոյություն չուներ։

Նա համակրական վերաբերմունք ուներ իմ նկատմամբ և դրա գլխավոր պատճառն այն էր, որ հանձին ինձ գտել էր ուշադիր ունկնդրի, երբեք չէի խանգարում իրեն, վեճի չէի

բռնվում, ամենաշատը կարող էի օգտվել դադարից և հարց տալ։

Նա նկատել էր, որ ես հատուկ սեր և հետաքրքրություն ունեմ հին հունական գրականության և թատրոնի նկատմամբ, ուստիև հաճախ էր հիշում Հոմերոսին, հույն թատերագիրներին, լատին բանաստեղծներին։

Մի օր հարց տվի.

— Չէիք կամենա, արդյոք, բնագրից թարգմանել անտիկ դրամատուրգներին։

— Ո՞ւմ նկատի ունեք։

— Էսքիլեսին թեկուզ։

— Ինչո՞ւ չէ։

— Լավ կլիներ, եթե այժմյան սերունդը կարդար «Շղթայված Պրոմեթևսը» թարգմանված բնագրից։

— Ժամանակ ունեմ։ Թարգմանության փորձ՝ նույնպես։ Վերջապես բանաստեղծ եմ։

Պայմանավորվեցինք՝ ինքը թարգմանում է, ես տպագրում։ Լավ հիշում եմ, որ նա նախընտրում էր որպես խմբագիր ունենալ Հովսեփ Կուսիկյանին, որն իր թարգմանությունը կհամեմատի հունական բնագրի հետ։ Ինձ շատ ուրախացրեց Համազասպ Համբարձումյանի այն հայտարարությունը, թե ինքը կընդունի խմբագրական ամեն առաջարկ, որ կանի Կուսիկյանը, որովհետև մեծ հավատ ունի Կուսիկյանի հունագիտության վրա։

Մեր զրույցների ընթացքում արծարծվեցին ավելի լայն ծրագրեր՝ Էսքիլեսից հետո Սոֆոկլես և մի գեղեցիկ օր հին հունական թատերագիրների ամփոփ ժողովածու կստացվի։

Պատերազմի տարիներն էին։ Կնոջ և որդու հետ միասին նա Թաթարիայի խորքերն էր անցել, ապրում էր Ելաբուգա քաղաքում։ Թարգմանել էր «Պրոմեթևսը», ուղարկեց ինձ։ Ծանոթացա և ուղարկեցի Մոսկվա՝ Կուսիկյանին։ Կուսիկյանը խմբագրել էր և բավական բարձր գնահատել թարգմանչի աշխատանքը։ Արել էր նաև առաջարկ՝ լավ կլինի, եթե թարգմանությունը բանաստեղծական խմբագրության ևս ենթարկվի։ Իր կարծիքով լավագույն թեկնածուն Ավ. Իսահակյանն էր, եթե, իհարկե, ժամանակ ունենա և տրամադրություն այդպի-

սի դժվարին գործի տակ մտնելու։ Խնդրեցի Ավ. Իսահակյանին աչքի անցկացնել ու եթե անհրաժեշտ համարի՝ ուղղումներ անի, ասելով, թե դրա միտքը տվել է պրոֆ. Կուսիկյանը, որը թարգմանությունը նախապես համեմատել է բնագրի հետ։

Իսահակյանը ստանձնեց այդ պարտականությունն ի սեր հին բարեկամի, վարձատրություն չստանալով կատարած դժվարին աշխատանքի դիմաց։ Իսահակյանի շտկումներից բերեմ մի քանի օրինակ.

անմարդի	ամայի
նպերտ	գոռոզ
ուժգնակի	ուժգին
բոբիկ	բոկոտն
մեծն արքա	վեհապետ
գավազան	գայիսոն
ժանտալի	պժգալի

Եվ այսպիսի բազմաթիվ բառեր։ Ահա երկու տողի խմբագրության նմուշ ևս.

Քնքշանք անել կարող ես դու.— հպարտությունն իմ սակայն,
Կամ դժնությունն իմ բնույթի դու պարսավել չհանդգնես։

Այսպես է թարգմանել Համբարձումյանը։
Իսահակյանը, սակայն, խմբագրել է՝

Դու կարող ես քնքուշ լինել, բայց պարսավել չհանդգնես,
Իմ ցասումը խիստ ու վայրագ և բնույթս դժնի ու սեգ։

«Պրոմեթևսը» խմբագրելիս մի օր եղա Իսահակյանի տանը և բանաստեղծի սեղանին տեսա Էսքիլեսի տարբեր թարգմանություններ՝ ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն։

«Շղթայված Պրոմեթևսը» լույս տեսավ «Սովետական գրականություն» ամսագրում։ Համբարձումյանը գոհ էր։ Վերջապես, երկար ընդմիջումից հետո հայ գրականության դռները նորից բացվել էին իր առաջ։ Բայց լսել էր, որ հայ բանաստեղծներից մի երկուսը տրտնջացել էին, դժգոհել, համարելով, որ նրա թարգմանությունը բանաստեղծական չէ։ Վրդովված էր և ինչ որակում միայն չէր տալիս նրանց հանդուգն պահ-

վածքին, ասելով, թե նրանք ուզում են հին հունական գրականության գոհարները թարգմանել ռուսերենից։

Մի երեկո գնացի Իսահակյանի տուն և այնտեղ տեսա Համազասպ Համբարձումյանին։ Թեյասեղանի շուրջը հիշվեց Նազարեթ Շիրակունին։ Պարզվեց, որ նա Համբարձումյանի առաջին ուսուցիչն է եղել։ Ըստ Վարպետի պատմածների՝ Շիրակունին հավաքել և հրապարակել է ժողովրդական բանահյուսության նյութեր՝ հեքիաթներ, երգ ու տաղ և այլն։

Համազասպ Համբարձումյանը տիկին Հռիփսիմեի հետ Երևանում հաստատվել է 40-ական թվականներին։ Սկզբում սենյակ են վարձել թատերագիր Անուշավան Վարդանյանի տանը, Չարենցի երբեմնի բնակարանում, Սունդուկյան փողոցում, այժմյան Լենինի պողոտան, հետո երկու սենյակ է գնել նույն փողոցի դիմացի շենքում, մինչև որ բնակարան է ստացել ակադեմիայից։ Նա մի զրույցի ժամանակ խոստովանեց, որ իր համար ծանր էր ապրել այն բնակարանում, որի տերը մի ժամանակ Չարենցն էր և հիմա ոչ ոք չկար այդ ընտանիքից։

Համազասպ Համբարձումյանը հետագայում դարձավ Երևանի համալսարանի պրոֆեսոր, նվիրելով իրեն հունա-հռոմեական գրականության դասընթացին։

Ես մի երկու անգամ եղել եմ նրա դասախոսության ունկընդիրներից։

Ու ինձ հասկանալի դարձավ այդ օրը մի միտք։ Ուրիշ դասախոսներ ջանում էին պատկերացում ստեղծել, թե հազարավոր տարիներ առաջ մարդիկ ինչպես են ապրել ու մտածել։ Համազասպ Համբարձումյանը ամեն ինչ բացատրում էր այնպես, ասես, հենց ինքը այն ժամանակների հույներից է, ինքն է այդպես մտածում և զգում։ Վերամարմնավորվում էր։ Ձայնը մեկ բարձրացնում էր, մեկ իջեցնում, մեկ մոայլվում էր դեմքը, մեկ խանդավառ ցնծության մեջ էր լինում։ Դրան համապատասխան էր և շարժմունքը։ Մի անօրինակ բան էր կատարվում։ Մենք տեսնում էինք ճակատագրին ենթարկված մարդու տառապանքը։ Դասախոսն ապրում և վերապրում էր, մտքեր էր հայտնում, բանավիճում այլ մասնագետների հետ, իր տեսակետի պնդումն անում։ Հաճախ էին հիշվում Սոկրատ, Պլատոն, Արիստոտել իմաստասերները, և հավատացնում ձեզ,

երբեմն թվում էր, որ ոչ թե մեզ պատմում են Սոկրատի ու Պլատոնի մասին, այլ մեր առջև իրենք՝ Սոկրատն ու Պլատոնն են կանգնած, զարգացնում են իրենց ըմբռնումներն ու հայացքները, և մենք էլ իրենց աշակերտներն ենք, որ ենթարկվել ենք նրանց մտքի թռիչքին, երկաթե տրամաբանությանը, ապացույցների պերճախոսությանը, մտքի փայլին:

Ընդմիջման զանգը հնչեց: Զանգի ձայնը չհասավ դասախոսին: Նա շարունակեց խոսել: Հետաքրքիրն այն էր, որ ո՛չ ուսանողները, ո՛չ կողմնակի ունկնդիրները քայլ չարին դեպի դուռը, դեպի միջանցք, ո՛չ դիրքը փոխեցին, ո՛չ դեմքի արտահայտությունը, շարունակեցին դասախոսին լսել կլանված:

Այդ դասախոսությունից հետո, ամեն անգամ, որ հանդիպում էի իմ ավագ ընկերոջը, ինչի մասին էլ խոսեր, նույնիսկ ամենաարդիական խնդրի շուրջ, միևնույն է, ինձ թվում էր, թե նա հին Աթենքի բնակիչն է, որ մնացել է ողջ ու հիշեցնում է անցած-գնացած ժամանակները...

ԱՇՓԱԼԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԻՆՁ

Հոբելյանի օրերին գրականագետների երկու խումբ կազմվեց, մեկը մեկնելու էր շրջանային կենտրոնները Սասունցի Դավթին նվիրված դասախոսություններ կարդալու, մյուս խումբը նույնն էր անելու մայրաքաղաքում: Ես ընդգրկված էի երկրորդ խմբում: Տվին ինձ մի թուղթ, որի վրա նշված էր, թե որ օրը, որտեղ պետք է կարդամ դասախոսություն:

Սմեն մեկիս բաժին էր ընկել մի տասը դասախոսություն: Մի յոթ անգամ հանդես գալուց հետո, այլևս ո՛չ տրամադրություն ունեի, ո՛չ էլ ցանկություն դասախոսություն կարդալու: Սմեն տեղ նույնն էի ասում և կրկնությունն իր հետ բերեց տաղտուկ, որից ես չգիտեի, թե ինչպես ազատվեմ: Հատկանում էի հանձնարարության լուսավորական նշանակությունը, առաջին մի քանի դասախոսություններն էլ կարդացի սիրով, նույնիսկ ոգևորությամբ, բայց հետո ձանձրացա, և ինձ թվում էր, թե իմ հերթական դասախոսությանը ներկա է նախորդ դասախոսության ունկնդիրներից մեկը, որի հայացքն ասում է՝ «Այ սիրելիս, ա՛յ Զարյան, մարդ եղիր, խիղճ ունեցիր,

այստեղ էլ ուրիշ բան ասա, թե չէ ինչի նման է, ամեն տեղ նույնն ես կրկնում»։

Իմ ութերորդ դասախոսության օրն էր, որ կարդալու էի «Հայէլեկտրաէներգո» հիմնարկի աշխատողների համար։

Այդ նույն օրը պետհրատ եկավ երգիծաբան Աշոտ Փալանջյանը, որ ընթերցողին հայտնի էր Աշխալ ծածկանունով, որը, ինչպես նկատեց ընթերցողը, իր անվան և ազգանվան առաջին վանկերի գումարից էր կազմված։

Փափուկ ու մեղմ մարդ, համեստ ու առաքինի, որի հանդեպ համակրանք ունեի։ Եվ ընդհանրապես նկատել էի, որ շկար մեր գրական աշխարհում մարդ, որ համակրանք ու սեր չունենար նրա նկատմամբ։ Վերին աստիճանի ազնիվ անձնավորություն, որ իր երգիծական զբաղմունքը մի կողմ դրած, «Խորհրդային Հայաստան» լրագրի աշխատակից էր դարձել՝ ընտանիքը պահելու նպատակով։

Գրասեղանիս տպագրված, բայց տակավին լույս չտեսած մի գրքի ազդանմուշը տեսավ։ Ջեմ հիշում, թե ինչ գիրք էր, բայց Աշխալի աչքերը փայլեցին, գիրքը ձեռքն առավ ու վրա բերեց.

— Ես անհամբեր եմ այս գիրքն ունենալու։ Ջե՞ս տա ինձ։

Ազդանմուշն իրավունք չունեի տալու, բայց այդ պահին մխտքս մի պահ լուսավորվեց։

— Մի պայմանով։

— Բոլոր պայմանների տերն եմ։

— Այսինչ հիմնարկում այսօր նշանակված է իմ դասախոսությունը Սասունցի Դավթի մասին։

— Հետո՞։

— Հետո այն, որ եթե հանձն առնես փոխարինել ինձ, այս գիրքը քոնն է։

Աշխալը պայմանը ծանր ու թեթև չարեց.

— Սիրով։

— Ուրեմն՝ գիրքը քոնն է։

— Դե՛, տուր։

— Ո՛չ, գիրքը կտանաս վաղը, երբ կգաս ու կպատմես, թե ինչպես անցավ զեկուցումդ։

— Տղամարդո՞ւ խոսք։

— Տղամարդու։

Հաջորդ օրը Աշփալը եկավ։

— Է՛հ, ինչպես անցավ։

— Փառահե՛ղ։

— Ասացիր, որ ես հիվանդ եմ, լավ չեմ զգում և այդ պատճառով դու ես փոխարինում։

— Չէ՛։

— Բա ինչպես։

— Գնացի ու ներկայացա։ Ասացի, որ եկել եմ Սասունցի Դավթի մասին զեկուցում կարդալու։

— Բա չասի՞ր, որ դու Աշոտ Փալանջյանն ես։

— Չէ՛։

— Իսկ ասացիր, որ Ռուբեն Զարյանը չես։

— Չէ՛։

— Բա ի՞նչ ասացիր։

— Ոչինչ։

— Զարմանալի է։

— Հետո՞։

— Նախագահը դարձավ դահլիճին ու ասաց, թե գրականագետ Ռուբեն Զարյանը մեզ համար հիմա զեկուցում կկարդա Սասունցի Դավթի մասին։

— Դու այդ ժամանա՞կ էլ չասացիր, թե դու Աշփալն ես, Ռուբեն Զարյանը չես և ինչ պատճառով ես փոխարինում ինձ։

— Չէ՛, ոչի՛նչ չասացի ու սկսեցի։

— Ինչո՞ւ։

— Որովհետև իմ կարծիքով նրանց համար միևնույն էր, ես էի դնացել, թե դու։

— Շա՞տ մարդ կար։

— Դահլիճը լեփ-լեցուն էր։

— Լա՞վ էին լսում։

— Լավ։

— Ինչքա՞ն խոսեցիր։

— Մի ժամի չափ։

— Ուրեմն՝ ունկնդիրներդ գոհ էին։

— Այնքան գոհ, որ նախագահը վերջում ունկնդիրների անունից շնորհակալություն հայտնեց հետաքրքիր ու բովանդակալի դասախոսության համար և հույս հայտնեց, որ Ռու-

քեն Զարյանը երևի չի մերժի և միաժամանակ հետո այլ նյութի շուրջ էլ դասախոսություն կկարդա մեզ համար։

— Այդ ժամանա՞կ էլ չասացիր, թե դու Զարյանը չես։

— Ջասացի, պարզապես գլուխ տվի ծափահարող ունկնդիրներին, որ նշան էր նաև այն բանի, թե երբ իմաց տաք՝ նորից կգամ, սեղմեցի նախագահի ձեռքը, թողի հեռախոսիդ համարը, որ երբ պետք լինի, զանգ տան ու պայմանավորվեն քեզ հետ, ու դուրս եկա գոհ, որ ընկերոջս փրկեցի և էլ ավելի գոհ, որ փափագած գիրքն այսօր ստանալու եմ։

— Եղա՞վ։

Ես բան չգտա ասելու։ Նա գիրքը դրեց թևի տակ ու գնաց։

ՄԵԿ ԱՆՀԱՅՏՈՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ

1940-ի հունվար կամ փետրվար ամիսը կլիներ։ Իմ աշխատասենյակում նստած աչքի եմ անցկացնում նոր ստացված գրքի ազդանմուշը։ Գիրքն առնում էի ձեռքս, հոտ քաշում։ Դա կազմի վրա քաշվող լիդերինի խիստ յուրահատուկ հոտն է, որ հասկանալի է ու սիրելի միայն և միայն հրատարակիչներին։

Հեռախոսային զանգ։ Վերցնում եմ լսափողը։

— Ալլո՛։

Լսվում է անծանոթ ձայն։

— Ձեզ հետ խոսում է «Հայէլեկտրաէներգո» հիմնարկի դիրեկտորը։

— Լսում եմ։

— Ընկեր Զարյան, դուք անցյալ տարի դասախոսություն կարդացիք մեր հիմնարկի աշխատողների համար։

— Այո, իհարկե։

— Ձեր ունկնդիրները շատ գոհ մնացին, քանի ամիս է անցել, մինչև հիմա հիշում են թե՛ ձեզ, թե՛ ձեր կարդացած զեկուցումը։

— Շնորհակալ եմ։

— Եթե հիշում եք, դուք խոստացաք նորից գալ մեզ մոտ և նորից կարդալ դասախոսություն մեր ընկերների համար։ Հիշո՞ւմ եք։

— Հիշում եմ։

Ասում եմ, բայց ոչինչ միտս չէ։

— Ջանգահարում եմ և խնդրում, որ ձեր ավտծ խոսքը կատարեք։

— Ինչի՞ մասին եք ուզում որ խոսեմ։

— Աբովյանի։

— Ե՞րբ։

— Երբ որ ձեզ հարմար է։

— Հաջորդ շաբաթ։

— Թող լինի հաջորդ շաբաթ, բայց ո՞ր օրը։

— Չորեքշաբթի։

— Բարի։

Մի պահ լռում է ձայնը և ապա կրկին լսվում.

— Ուրեմն՝ չորեքշաբթի օրը երեկոյան ժամը ութին։ Պայմանավորվեցի՞նք։

— Այո, բայց բոլոր դեպքերում թողեք ձեր հեռախոսի համարը, որ եթե անակնկալ լինի, զանգեմ։

— Մի՞թե որևէ բան կարող է խանգարել։

— Ո՛չ, ի՞նչ եք ասում, բայց կյանք է, այսօր կանք, վաղը չկանք։

— Աստված մի արասցե։

Հայտնում է համարը, անուն-ազգանունը։

Հեռախոսը կախելն ու մտքիս պայծառացումը մեկ եղավ։ Հիշեցի, որ դա այն հիմնարկն է, որտեղ իմ փոխարեն դասախոսության էր գնացել Աշփալը։

Դե արի ու սայլը ցեխից հանիր։

Աշփալը նորի՞ց կգնա։ Հազիվ թե։

Եթե ես գնամ, կզարմանան, մանավանդ արտաքինով շատ ենք միմյանցից տարբեր։ Խայտառակությունը կպարզվի։ Կարող են զանգահարել քաղաքային կոմիտե, հայտնել եղածը և իմ արածը ոչ ոք հումորով չի ընկալի, կհամարեն կարգապահության չարամիտ խախտում։

Մինչև հաջորդ չորեքշաբթին հինգ օր կա։ Պետք է ելք գըտնել։

Ջանգահարում եմ Աշփալին և պատմում։ Քահ-քահ ծիծաղում է։

— Տեսնում ես, սիրելիս, բռնվեցինք. ժողովուրդն իզուր

չի ասում՝ գողության և բ...ն օրը քառասուն օր է։ Այսինքն՝ մի օր բռնվելու են։ Հիմա ի՞նչ ես մտադիր անել։

— Խնդրել քեզ, որ կրկին գնաս։

— Անկարելի է։

— Ինչո՞ւ։

— Եթե բացվի՝ մի անգամը կարող է կատակի տեղ անցնել, իսկ երկու անգամ՝ պարզ հանցանք է։

— Բա էլ ո՞ր օրվա ընկերն ես։

— Վերջապես, ես ո՞ր օրվա Աբովյանի մասին խոսք ասողըն եմ։

— Կարդացել ես, նույնիսկ գրել։

Նկատի ունեի «Աբովյանի կյանքը» գրքույկի մասին Աշփալի գրախոսականը, որ լույս էր տեսել «Խորհրդային Հայաստան» լրագրում։

— Շատ էլ։

— Ուրեմն՝ ո՞չ։

— Ոչ և ոչ։

Ես ձայն չեմ հանում։

— Իսկ ի՞նչ անել, ի՞նչ խորհուրդ ես տալիս։

— Խորհուրդ եմ տալիս, որ այս անգամ ինքդ գնաս։ Նախ՝ գուցե չհիշեն։ Երկրորդը՝ եթե հիշեն և զարմանան, ապա գաղտնիքը բացիր և դու կտեսնես, որ անկեղծ զվարճանքից այն կողմ չի անցնի գործը։

— Իսկ քո խիղճն էլ հանգիստ կլինի, հա՞։

— Երևակայիր, որ այնքան էլ ոչ, բայց, որպեսզի իսկապես հանգիստ լինի, այս նյութի շուրջը վոդևիլ կգրեմ։

Սիրտ չեմ անում ինքս գնալ։ Բայց օրերն անցնում են, իսկ մտքովս որևէ խելքը գլխին ելք չի անցնում։ Ով խմանա, գուցե կարողանամ Աշփալին համոզել։ Որպեսզի ժամանակ շահեմ, զանգահարեցի «Հայէլկտրաէներգո» հիմնարկի պետին և ասացի, թե տասը օրով ինձ ուղարկում են Մոսկվա մի կարևոր խորհրդակցության մասնակցելու, կարծելով, թե այս կարգի ստերը մեծ մեղք չեն։

— Ափսո՞ս։

— Իսկ ի՞նչ է եղել որ։

— Բոլորը անհամբեր էին, հիշելով ձեր փայլուն դասախոսությունը։

— Նղած-չեղածը տասը օր է։

— Ինչ արած, կսպասենք։

Մի քանի օր անց նորից դիմեցի Աշփալին, նորից մերժում ստացա։ Որոշեցի սիրտ անել և գնալ ինքս, կամ հենց սկզբից բացատրել «գաղտնիքը», կամ էլ ոչինչ չասել, եթե իրենք հարցում չանեն, մի խոսքով՝ թողնել ամեն ինչ դեպքերի պատահական ընթացքին։

Չանգահարեցի հիմնարկի պետին, ասացի, որ վերադարձել եմ Մոսկվայից և պայմանավորվեցի, թե որ օրն եմ գնալու։

Երբ մտա՝ տնօրենը տարակուսած նայեց ինձ, սեղմեց ձեռքս, բայց ոչինչ չասաց։ Վերաբերմունքի մեջ չկար այն խանդավառությունը, որով խոսում էր հեռախոսելիս։ Մտանք նիստերի լսի-լեցուն դահլիճը։ Տնօրենը ասաց, թե ընտանիքի որոշ անդամներ ևս եկել են ձեզ լսելու։

Դահլիճում նույնպես քիչ չէին տարակուսած դեմքերը։ Ինչ-որ բան կարծես թե սկսել էին հասկանալ։ Ես զգում էի այդ, և դա ինձ խանգարեց կենտրոնացնել մտքերս։ Ուժ գործ դրի վրաս։ Ես հասկացա, որ այստեղ պետք է կարդալ լավ դասախոսություն, եթե հնարավոր է նույնիսկ շատ լավ։ Աստիճանաբար հունի մեջ մտա, դահլիճը կարծես ենթարկվեց ինձ, սկսեց հետևել մտքիս ընթացքին։

Խոսեցի երկու ժամի չափ, գուցեև մի փոքր պակաս, բայց բոլոր դեպքերում ավելի շատ, քան իմ դասախոսության համար սահմանված ժամկետն է առհասարակ։ Լուռ լսում էին։

Վերջացրի։ Շատ հարցեր տվին։

Հանկարծ մեկը ձեռքը բարձրացրեց։

— Ես, նաև մյուս ունկնդիրները, ուզում ենք իմանալ՝ Զարյանը որ մեկդ եք, նա՞, որ խոսեց Սասունցի Դավթի մասին, թե՝ դուք։ Մի զարմացեք՝ երկու դասախոս ունեցանք, երկուսն էլ ազգանունով նույնը, արտաքինով տարբեր։

Ես չկորցրեցի ինձ ու սրի ներանց պատմությունը, ինչպես որ եղել էր։ Մի ուրախ տրամադրություն համակեց դահլիճը։

Մի աղջիկ վարդերի փունջ մատուցեց, խնդրելով, որ բաժին հանեմ նաև Փալանջյանին, զգուշացնելով միաժամանակ, որ դրանք տանու վարդեր են։

Նախագահը, որ նույն ինքը պետն էր հիմնարկի, շնորհա-

կալութիւն հայտնեց, կրկնելով այն, ինչ միշտ ասվում է նրման դեպքերում։

— Համարելով, որ մեկ անհայտով հավասարումը լուծված է,— ասաց նա,— և համոզմունք հայտնենք, որ մեր նոր հանդիպումը ընկեր Զարյանի հետ շատ չի ուշանա և լիահույս լինենք, որ այդ հանդիպմանը կներկայանա ինքը Զարյանը և ոչ թե կրկնակը, որից, ի դեպ, նույնպես զոհ էինք։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մի հին պարտք է ծանրացած հոգուս վրա, ինչպես էլ լինի՝ գրել Մարիամ Թումանյանի մասին։ Անցան տասնամյակներ, ու ես պարտքս չմարեցի։

Մեղքն իմն է, անշուշտ։ Կամ ձևը չգտա կամ փախցրի ներկայացած առիթը։ Նոր ծրագրեր ունեցա, հին մտադրություններից շատերը մոռացվեցին։ Մոռացվեց նաև Մարիամ Թումանյանի մասին գրելու ցանկությունը։ Ու հիմա, շատ տարիներ անց, ուզում եմ մի քանի էջ նվիրել նրան, պատմել ոչ այնքան իմ հանդիպումներից, որքան մի արժանավոր կնոջ մասին, որի հասարակական գործունեությունը կարող է օրինակ ծառայել շատերին, մինչդեռ այսօր նա մոռացված անուն է։ Պատճառը մեր անտարբերությունը չէ միայն։ Պատճառը շար նախանձն է և անհարկի խոսակցությունները նրա անձի շուրջը դեռ այն օրերից, մանավանդ որ նա ընդունակ էր բարձրանալու իր ապրած ժամանակի հասարակական նախապաշարումներից։ Պատճառն իր անկեղծությունն էր, ճշմարտախոսությունը։ Մեր ժամանակներում էլ դեր խաղաց նաև իր ազնվականական ծագումը։ Ինչ եղել եղել է։ Հիմա այդ բոլորն անցել է, և ընդարձակվել է մեր հայացքը, այլևս նեղմիտ մոտեցումներ չունենք, և մարդկանց ու երևույթներին նայում ենք ըստ էության։ Իմ պարտքն է, թեկուզ շատ համառոտ, պատմել նրա մասին, որ եկող սերունդները մի փոքր պատկերացում կազմեն, թե ով է եղել նա, մանավանդ որ իր անձը և կյանքն արժանի են այդ պատվին։

Մինչև հանդիպելս գիտեի նրա մասին։ Իմ կցկտուր տեղեկությունները կապված էին այն բարերար դերի հետ, որ նա

ունեցել է Հովհաննես Թումանյանի կյանքում, գրական կյանքում (որի հետ, ի դեպ, ազգակցական կապ չի ունեցել)։ Բացի այդ և գուցե դրանից առաջ ես մեր հանդիսաներից մեկում տեսել էի նրա լուսանկարը՝ գեղեցկատես կին։ Լուսանկարին կցված էր համառոտ կենսագրական։

Դժվարանում եմ հիշել, թե մենք երբ հանդիպեցինք։ 1939 թվականին էր, կամ 1940։ Մարիամ Թումանյանը, արդեն առաջացած տարիքով կին, հայտնվեց հրատարակչական իմ սենյակում և ուղղակի ներկայացավ։

— Մարիամ Թումանյան։

— Իշխանուհի՞։

Նա շիկնեց և շատ կամացուկ, կարծես չկամենալով, որ ուրիշն էլ լսի, ասաց՝

— Այո։

Ում մտքով կանցներ, թե իշխանուհի Մարիամ Թումանյանն իր ոտքով կարող է գալ ինձ մոտ, մանավանդ որ կարծում էի, թե ողջ չէ։

Առաջարկեցի, որ նստի։

Երբ նստեց, ես զգացի, որ իմ առջև բազմած է հպարտ և ինքնասեր կին, մեծ կյանք տեսած անձնավորություն, որ ո՛չ միայն դրամ և միջոցներ է ունեցել, ավելի պարզ արտահայտված՝ հարստություն, ո՛չ միայն գեղեցիկ է եղել, այլ նաև իր հայացքներն ունեցող մարդ։ Ծագումով ազնվական էր։ Տեսքն էլ ազնվականական էր։ Ու մի պահ մտքովս անցավ, թե իմ դիմաց նստած կնոջ երակներում կապույտ արյուն է հոսում։

Թեև խնդրատու էր նա, բայց արժանապատվություն էր ոտքից գլուխ, խոսելու ձևը, պահվածքը, նայվածքը։ Ու ես չէի ասի, թե այդ բոլորի մեջ հավակնոտ շեշտ կար։ Բնա՛վ։ Նրա պահվածքի ենթատեքստը կարծես ասելիս լիներ, որ թեև եկել է խնդրելու, բայց իր հարուստ անցյալը թույլ է տալիս մնալ մի արժանապատվության վրա, որ վաստակված է ոչ թե ծագումով, այլ գործով, ո՛չ թե հարստությամբ, այլ ազնիվ ու նվիրված ծառայությամբ։

Հայտնեց, որ գրել է իր կյանքի պատմությունը և ուզում է տպագրության հանձնել։ Զգուշացրեց, որ գրածը վերաբերում է իր մանկությունից մինչև խորհրդային կարգերի հաս-

տատման առաջին երկու տարին: Ուզում է իմանալ, թե հրատարակչությունն ինչպես կնայի իր առաջարկին:

Նա, իհարկե, նախապես հարցրեց, թե ես գոնե ընդհանուր պատկերացում ունե՞մ իր հասարակական գործունեության վերաբերյալ: Իմ դրական պատասխանից նա ավելի վստահ դարձավ:

Պայմանավորվեցինք, որ ես կծանոթանամ գրածին և նոր միայն կխոսենք տպագրության մասին: Համաձայնեց, բայց ավելացրեց, թե անկախ իմ ապագա տպավորությունից, ինքը կամենում է հենց սկզբից նախազգուշացնել, որ գրածը կարող է խմբագրվել լեզվի և ոճի տեսակետից, բայց հիշողությունները պետք է լույս տեսնեն առանց կրճատվելու և որովհետև դա մի անգամ է տպագրվելու, ուստի ինքը կամենում է, որ իր գաղափարական դիրքորոշումները պահպանվեն, և վերջը թողնի անկեղծ խոստովանության տպավորության: Ես ասացի, որ այդ բոլորի մասին կարելի է խոսել ձեռագրին ծանոթանալուց հետո միայն:

Նա ելավ տեղից, որ հրաժեշտ տա, հարցրի՝

— Ձեր իշխանական ծագումը հո՞ր կողմից է, թե մոր:

— Երկուսի էլ,— եղավ պատասխանը:

— Հայրս՝ Մարկոս Դոլուխանյան, բնիկ շուշեցի էր, ազնվական տոհմից: Մայրս՝ թեև Թիֆլիսում ծնված, սերում է Շուշվա մելիքներից՝ Մելիք-Բեգլարյան: Այդ բոլորի մասին գրված է իմ հիշողություններում:

Նա գնաց, իսկ իմ միտքը երկար ժամանակ Մարիամ Թումանյանի հետ էր: Թերևս նաև այն պատճառով, որ առաջին անգամ էի կյանքում տեսնում և զրուցում իշխանուհու հետ:

***

Ծնվել է Թիֆլիսում, 1870-ին: Հայրը միջնակարգ կրթություն է ստացել, բայց ինքնակրթությամբ առաջադիմել է, անուն հանել: Նրել է Թիֆլիսի քաղաքագլխի օգնական, կազմակերպել է առևտրական և արդյունաբերական ընկերություններ, հինգ տարվա չափ նախագահը հայոց բարեգործական ընկերության: Մայրը ոսկե մեդալով ավարտել է օրիորդաց ինստիտուտը, գեղեցիկ և հյուրասեր կին է եղել, երեխաների

հանդեպ խիստ և պահանջկոտ: Իրենց տան լեզուն ռուսերենն էր, ընդհանրապես ընտանիքում ռուսական ոգին է իշխել: 70-ական թվականների վերջերից ընտանիքում հայասիրական հոսանքն ուժեղացել է և բարձր դասակարգի շատ հայ աղջիկներ ընդունվել են Թիֆլիսի Գայանյան գպրոցը, որը գտնվում էր Մուղնու եկեղեցու գավթում: Մարիամն էլ է ընդունվել և սովորել հինգ տարի, հետո ուսումը շարունակել է ռուսաց իգական գիմնազիայում: Բայց հայրը վարձել է ուսուցիչ՝ Միսաք Արամյան, որը նրա հետ պարապել է հայոց լեզու, հայոց գրականություն, հայոց պատմություն: Սովորել է նաև գրաբար, կարդացել է Խորենացի ու Եղիշե: Աշակերտուհու անվանակոչության օրը ուսուցիչը նվիրել է նրան Ագաթանգեղոս:

— Ես հավատում եմ,— ասել է ուսուցիչը,— որ դուք, որ այնքան սիրով և մտադրությամբ մեր ազգային լեզուն ու պատմությունը սովորելու ջանքն եք ունեցել, կշարունակեք այսուհետև ևս նույն կորովով և ճիգով:

— Այո, սիրելի ուսուցիչ, ես արդարացրի ձեր հավատը և վստահությունը, որոնք սուրբ մնացին ինձ համար և այսօր թարմ շիրմիդ առաջ խոնարհում եմ գլուխս և շնորհակալություն հայտնում քեզ, որ վառեցիր սրտիս մեջ սեր դեպի մայրենի լեզուն և գրականությունը, որ ես կաշխատեմ կտակել նաև զավակներիս:

Տակավին 17 տարեկան չդարձած, ամուսնացել է իշխան Գեորգի Թումանովի հետ, որ հայերեն չգիտեր, վրացացած հայ էր: Ջարգացած մարդ էր, Թիֆլիսի ռուսական թերթերի խմբագիր, վրաց թատրոնի հովանավորներից, վրացական դրամատիկական ընկերության հիմնադիրներից: Հայրը գրող էր, քույրը՝ նույնպես, եղբայրը՝ վրաց թատրոնում բեմադրիչ:

Անդրանիկ որդու հետ իշխանուհին հայերեն է խոսել և դրա համար ծաղրվել սկեսուրից և տալից: Ուժ է գտել իշխանուհին դիմադրելու այդ տգետ և դատապարտելի վերաբերմունքին և հավատարիմ մնացել ազգային ձգտումներին: Նրա որդու համար հայ դաստիարակչուհի է վարձել և նրա հետ կազմակերպել ցերեկույթներ, որին մասնակցել են Ղազարոս Աղայանի որդին՝ Մուշեղը, Հովհաննես Թումանյանի Մուշեղ անունով

զավակը, Ավետիս Ահարոնյանի որդին՝ Վարդգեսը, և սրանց հետ Ներսիսյան վարժարանի մի քանի աշակերտ:

Դաշնամուր էին նվագում առանձին կամ չորս ձեռքով, բանաստեղծություններ արտասանում հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, խմբական երգեր երգում, ժողովրդական պարեր պարում: Մեկ գործողությամբ վոդևիլներ ներկայացնում՝ «Խեչոյի թուզը» և այլն:

1897-ից սկիզբ է առել իշխանուհու հասարակական գործունեությունը:

Հրատարակչական ընկերության օգտին կազմակերպվել է պարահանդես, որի կառավարչուհին Մարիամ Թումանյանն է կարգվել: Դրանից հետո նա ընտրվել է հրատարակչական ընկերության վարչության անդամ: Այնուհետև վարչության անդամ է դարձել շատ ընկերությունների՝ բարեգործական, դրամատիկական, երբեմն նախագահ, երբեմն էլ նախագահի փոխանորդ, մեկ-մեկ էլ ձեռնամուխ է եղել նոր ընկերություններ ստեղծելու:

1883-ին առաջին անգամ ուղևորվել է արտասահման՝ մոր և քրոջ հետ: Մեկնել է Ավստրիա, Վիեննա, որտեղ բախտ է ունեցել հանդիպելու Խրիմյան Հայրիկին, որի երկրպագուներից էր: Ուրիշ անգամներ էլ գնացել է Շվեյցարիա, Ֆրանսիա, Իտալիա: Հիվանդության պատճառով երկար ժամանակ ապրել է օտարության մեջ, մի անգամ նույնիսկ մինչև երեք տարի:

Սիրելով պատմությունը, արվեստի տարբեր ճյուղեր, Մարիամ Թումանյանը մեծ սեր է ունեցել հատկապես գրականության և նրա անվանի մարդկանց նկատմամբ: Նա մոտիկից ծանոթ էր Գաբրիել Սունդուկյանին, Սմբատ Շահազիզին, Գրիգոր Արծրունուն, Պերճ Պռոշյանին, Մուրացանին, Գևորգ Բաշինջաղյանին, Տիգրան Նազարյանին, Եղիշե Թադեոսյանին, Աբգար Հովհաննիսյանին, Փիլիպոս Վարդազարյանին, Լևոն Շանթին և ուրիշներին: Բարեկամություն է արել Հովհաննես Թումանյանի հետ, բարձր է գնահատել նրա տաղանդը, խորապես համոզված, որ նա ավելի մեծ ուժ է, քան կարծվում է: Նյութապես օգնել է, հրատարակելով նրա մանկական գործերը, կազմակերպել է նրա երկերի ժողովածուի հրատարակությունը:

Նկատելով սիրելի բանաստեղծի հիվանդությունը՝ իշխա-

նուհին դիմել է Պետերբուրգի հայոց եկեղեցու խորհրդին, խնդրել նշանակել թոշակ և ստացել է մերժում: Թումանյանի օգտին ներկայացում է կազմակերպել: Թումանյանը շնորհակալ սրտով է ընդունել իշխանուհու բարեկամությունը, որին նա Մարմար է կոչել:

Թումանյանից բացի՝ իշխանուհու տան մշտական այցելուները եղել են հայ շատ մտավորականներ, և այս ձևով հիմք է դրվել հինգշաբթի օրերը նրա տանը պարբերաբար հավաքվելուն:

Իշխանուհին ծանոթ էր նաև Ստեփան Լիսիցյանի հետ և համակրանքով է վերաբերվել նրա գործունեությանը: Լիսիցյանը հրատարակել է «Հասկեր» անունով մանկական ամսագիր: Լիսիցյանն առաջարկել է Մարիամ Թումանյանին աշխատակցել: Թումանյանը, հիշելով իր մանկության տարինները՝ առաջարկել է «Հասկերում» բացել նոր բաժին՝ «Մարիամ տատիկի տոպրակից» անվամբ և տպագրել խրատական զրույցներ, պատմություններ և այլն:

Հայկական օպերա ունենալու ձգտումից, Թումանյանի ստեղծագործական սիրուց, թե մի այլ մղումից, իշխանուհին Կոմիտասին ուղարկել է Թումանյանի ժողովածուն և հայտնել իր սրտի փափագը՝ ստեղծել «Անուշ» օպերա: Կոմիտասը համաձայնել է գրել որոշ հատվածներ, նույնիսկ մի երկու կտոր կատարել է իշխանուհու տանը, բայց ինչ-ինչ պատճառներով օպերան չի ավարտել:

1899-ի գարնանը իշխան Գոլիցինը կարգադրել է Հայոց բարեգործական ընկերությանը ընդունել նոր կանոնադրություն, որով սահմանափակվելու էր նրա գործունեությունը Թիֆլիս քաղաքով միայն, բացի այդ՝ փոխվելու էր գործունեության բնույթը: Ընկերությունը զուտ բարեգործությամբ քիչ է զբաղվել, ավելի կրթական-մշակութային օջախներ է կազմակերպել և այլն: Հայոց բարեգործական ընկերությունը բազմաթիվ ճյուղավորումներ ուներ գավառներում, պահել է դըպրոցներ, գրադարաններ, ընթերցարաններ, ժողովրդական տներ մշտական բեմով:

Հայկական գորգարվեստի պատմություն գրողները պետք է անպայման հիշեն Մարիամ Թումանյանին, որը հայկական գորգերի ստեղծման և տարածելու մեջ նշանակալի ներդրում

ունի դեռ նախահեղափոխական տարիներից։ Նա սեփական միջոցներով կազմակերպել էր գործագործական ուսումնարան-արհեստանոց, նպատակ ունենալով այդ արհեստը տարածել քաղաքի չքավոր դասակարգի մեջ։ Իշխանուհին լավ օգնականներ ուներ՝ ախալցխացի մի կին կառավարչուհի էր, Ալեքսանդրապոլից էլ վարպետ ուսուցանող էր հրավիրել։ Չքավորներին իշխանուհին որոշ նպաստ էր տալիս՝ դրամ և հագուստ։ 1901-ին Մարիամ Թումանյանն այդ ուսումնարան-արհեստանոցի աշխատանքների մասին զեկուցել է Կովկասի տնայնագործական աշխատողների առաջին համագումարում և 1909-ին՝ հայ տնայնագործների համագումարում։

Բարեգործական ընկերության վերակազմելուց հետո՝ անդամներն սկսել էին անկանոն հաճախել նիստերին, հասարակությունը սառել էր ընկերությունից, բայց պետք էր շարունակել գործը, մանավանդ որ մի հայ վաճառական մեծ գումար էր կտակել։ Ծանր ու թեթև են արել, թե ինչ անեն այդ գումարի հետ և տարբեր առաջարկներ ունենալով, որոշել են աղջիկների որբանոց բացել։ Վարչությունը Մարիամ Թումանյանին է վստահել գործի կազմակերպումը և վերահսկումը։ Նա հանձն է առել և լծվել աշխատանքի սիրով և մեծ եռանդ ներդրել գործը հաջողությամբ առաջ մղելու համար։ Սկզբնական շրջանում քսան որբուհի է ընդունել։ Շատ տիկինների դուր չի եկել, որ նա մահճակալները վարշավայից է բերել տվել, հատուկ լվացարաններ է պատվիրել, լողարան և այլն։ Իշխանուհու ականջին շշուկներ են հասել, թե իբր նա մտադիր է բարիշնյաներ պատրաստել, մինչդեռ բավական է որբերին կերակրել, հագցնել և մի թեթև ուսում տալ։ Մինչդեռ իշխանուհին լայն ծրագիր ուներ՝ այդ աղջիկներից պատրաստել կուլտուրապես զարգացած անձնավորություններ, որպեսզի ցրվելով երկրի զանազան կողմերը, լուսավորություն տարածեն։ Իսկ մի տիկին նույնիսկ ասել էր, որ եթե այդ որբերից լավ աղախիններ պատրաստեն, միանգամայն ճիշտ կլինի։ Բարեգործական ընկերության վարչությունը վստահությամբ է վերաբերել իշխանուհու ձեռնարկումներին։

«Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում» խորագրով գրքի 235-րդ էջում գրված է.

«Սկզբի 3—4 տարիներում չափազանց դժվար էր մի այդ-

պիսի հիմնարկության կանոնավորումը։ Սոսկալի աղքատության ճիրաններից խլած, կեղտերի մեջ կորած փոքրիկ որբերին պահել պահպանելը ոչ միայն լարված ուշադրություն էր պահանջում, այլև կատարյալ անձնազոհություն։ Սակայն իշխ. Թումանյանի անսպառ եռանդը և սրտագին, իստակ մայրական վերաբերմունքը դեպի որբուհիները տարիների ընթացքում վերացրին բոլոր դժվարությունները։ Տիկին Թումանյանը ամբողջ օրեր էր անցկացնում որբանոցում, իր ձեռքերով լվանում, մաքրում էր որբերին, օգնում էր օր. Դանդուրյանին, խրախուսում էր նրան անվհատ տանել իր ծանր պաշտոնը, որին դեռ սովոր չէր օրիորդը։ Որբերի շահերը իշխ. Թումանյանը պաշտպանում էր ամեն տեղ, իսկ որբանոցի բարեկեցությունը նրա հոգսերի գլխավոր առարկան էր»։

Մեծ էր իշխանուհու և դաստիարակչուհու ուրախությունը, որ որբուհիները հենց առաջին տարին կերպարանապոխվեցին, վայելուչ ձևեր ունեցան, դարձան մաքրասեր։ Բացի այդ՝ լավ էին սովորում։ Այնքան աչքի ընկան ուսման մեջ, որ ընդունվեցին Հովնանյան և Գայանյան վարժարաններն իրենց կրթությունը շարունակելու։ Մի կարճ ժամանակից որբուհիները արվեստի հակումներ են դրսևորել, գրել են պիեսներ, բանաստեղծություններ հորինել, երգ ու երաժշտություն հյուսել։

Որբուհիները սիրում էին իշխանուհուն և նրան հանդիպելիս մայրիկ էին կոչում։ Դա, ինչպես ինքն էր ասում, որբանոցում իր ծավալած աշխատանքի բարոյական ամենամեծ վարձատրությունն էր։

Այս հոգեմաշ աշխատանքը հյուծել է իշխանուհու առողջությունը։ Լուրջ հիվանդացել է նա և մի քանի տարով մեկնել Շվեյցարիա։ Թեև բժշկին խոսք էր տվել, վերադարձին ձեռնպահ մնալ հասարակական գործունեությունից, վերստին ներգրավվել է՝ սկզբում հեքիաթներ է հրատարակել առանձին գրքերով, գունավոր՝ մանկական ընթերցանության համար, հետո շարունակել է աշխատակցել «Հասակեր» ամսագրին, վերջապես, մի քանի այլ գործիչների հետ մեկտեղ ձեռնամուխ է եղել կազմակերպելու աշակերտական աշխատանքային գաղութ։ Դրա նպատակն էր փրկել փողոցի կործանիչ ազդեցությունից չքավոր դասակարգի երեխաներին, առանց ազգի և կրոնի խտրության։ Այդ գործի մեջ ընդգրկվել էին ութսուն

երեխա։ Հողատարածություն էին վերցրել, վարդենի կզի, քաղաքից դուրս, Օրթաճալայի մոտ՝ և տարվա տաք օրերին ապրում էին վրաններում, հող մշակում, ընթերցանությամբ ու մարզանքով զբաղվում։

1914-ին սկսած պատերազմը վերջ դրեց այս լավ գործին և ընդհանրապես հասարակական կյանքը Թիֆլիսում մարեց։

900-ական թվականների վերջերից Թումանյանը կազմակերպել է թոքախտի դեմ պայքարող ընկերություն և ինքն էլ դարձել նրա վարչության նախագահը։ Կազմակերպել է հանգանակություն, ներկայացումներ, համերգներ։ Իր առջև մեծ, շատերի կարծիքով անիրագործելի նպատակ էր դրել, կուտակած դրամով Աբասթումանում՝ Արագինդո կոչված վայրում, կառուցել թոքախտավորների առողջարան։ Իր այս նշանակալի ձեռնարկը գլուխ բերելու համար՝ նա դիմել է փոխարքայի տիկնոջ և էրկզախի հեղինակությանը, համոզել նրանց աջակցել իրեն։ Գործը հաջող ընթացք է ստացել։ 1912-ից սկսվել է առողջարանի կառուցումը։ 1917-ին Թիֆլիսում տեղի ունեցավ կուրորտային համագումար և Արագինդո առողջարանի հարցի, նրա նշանակության և նպատակահարմարության շուրջ զեկուցումով հանդես է եկել իշխանուհին։ Այդ տարի առողջարանը մասամբ էր պատրաստ և կարող էր մի հիսուն հիվանդ ընդունել, բայց արագինդոցիները անիշխանաբար ըմբռնելով հեղափոխությունը, թալանել և տակնուվրա են արել առողջարանի կառուցված մասը։ 1921-ին Վրաստանում խորհրդային կարգեր են հաստատվել և պետությունն իր վրա է վերցրել Մարիամ Թումանյանի սկսած գործը, շարունակել ու ավարտի հասցնել։

1915-ից հետո սկսվել էր գաղթականների մեծ հոսք՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ։ Մ. Թումանյանը ուրիշների հետ միասին միտք է հղացել բացել արհեստանոցներ և մարդկանց հեռու պահել մուրացկանությունից։ Այս գործը գլխավորել է իշխանուհին, որպես աջ թև ունենալով Թիֆլիսի արհեստավորաց դպրոցի տեսուչ Հովհաննես Ակունցյանին։ Կազմակերպել են կազմարարական արհեստանոց։ Գործն այնպիսին էր, որ այդտեղ բացի տղամարդկանցից, կարող էին աշխատել նաև կանայք ու երեխաներ։ Բացի դրանից՝ բացել են տակե-

բիչների, դերձակների, կոշկակարների, վերջապես ջուլհակների արհեստանոցներ։

Տիկին Թումանյանը, ըստ իրենց տան սովորության, ամառներն անց է կացրել Դիլիջանում։ Դիլիջանի գեղեցիկ բնությունը, հովասուն օդը խիստ առողջարար էին իր և զավակների վնասված թոքերի համար։

Դիլիջան հասնելով, նա տեսել է, որ սա ևս հեղեղված է գաղթականներով։ Այստեղ էլ Մարիամ Թումանյանը մեծ գործ է տեսել՝ որոշելով կազմակերպել ջուլհականոց և գորգագործական արհեստանոց։ Հակառակ մինչևիկյան կառավարության արգելքին՝ Թիֆլիսից տեղափոխել է մի քանի գործիք և ներկեր։ Բացի այդ՝ նա իր հետ Դիլիջան է տարել նաև հմուտ ջուլհակուհի և գորգագործական ուսումնարանի վարպետուհու, համոզելով նրանց, թե ինչ մեծ գործ է սպասում իրենց։

Թիֆլիսում եղած ժամանակ Թումանյանը դիմել է նկարիչ Եղիշե Թադևոսյանին և խնդրել իր համար հայկական ոճով գորգանկարներ պատրաստել։ Գունանկարչի ցուցումներով նկարչուհի Օլգա Աճեմյանը նկարել է երկու տարբերակ։ Գործը մեծ հաջողություն է գտել։ Իշխանուհու գլխավորած արհեստանոցը շատ պատվերներ է ստացել։

Այդ նույն ժամանակ նրա անձնական կյանքը հարվածի տակ էր։ Իր հետ Դիլիջանում ապրող աղջիկը թոքախտով ծանր հիվանդ էր։ Աղջիկը համարյա մերձիմահ էր, որ հեռագիր է գալիս Թիֆլիսից՝ ամուսինը վախճանվել է։ Մեկնել է Թիֆլիս։ Ամուսնու թաղումից հետո վերադարձել է Դիլիջան։ Միառժամանակ անց կորցրել է աղջկան։ Երկու ծանր կորուստ հաջորդել են միմյանց։ Իր միակ մխիթարությունը աշխատանքն էր, Դիլիջանի ջուլհականոցը, գորգարվեստը։

Բայց գործն առաջ մղել հնարավոր չէր։ Երկրի վիճակը խառն էր, թուրքական զորքը շատ մոտ տարածության վրա էր և այդ պատճառով «շունը տիրոջը չէր ճանաչում, այնքան էին խառնվել իրար»։

Դիլիջանում լուրեր էին տարածվել, որ շուտով կարմիրները գալու են։ Մարիամ Թումանյանը մեծ հույսեր է կապել բոլշևիկների, ինչպես ինքն էր ասում՝ մեծամասնականների հետ, վստահ, որ «մեծամասնականները հարգում են աշխատանքը, պաշտպանում բանվորներին»։ Մեծամասնականների

գալուց հետո Դիլիջանի ընդհանուր մթնոլորտը բարելավվել է։ Սա իշխանուհու վկայությունն է։ Թումանյանն իր հույսը դրել էր հեղկոմի վրա, որի նախագահն իր ծանոթներից էր, ուսուցիչ, համոզված, որ կօգնի իրեն վերաբացելու ժամանակավորապես փակված ջուլհականոցը։ Բայց նա ոչ միայն չի օգնել, այլ մի քանի օրից առաջարկել է արհեստանոցը հանձնել գորգագործության գաղափար չունեցող մի երիտասարդի։ Պատճառաբանությունն այն էր, որ Թումանյանը իշխանուհի է, սոցիալապես անհարազատ տարր։

— Սիրտս կակծում էր, որովհետև ես զգում էի, որ անարդար կերպով եմ տուժել։ Բանվորները հեռվից տեսնելով ինձ, խմբով մոտենում էին և խնդրում վերադառնալ արհեստանոց։ Բայց ինչ կարող էի անել, քանի որ դասակարգային հողի վրա էր դրված հարցը։

Մարիամի փոխարեն նշանակվածը գողություն է արել և անմիջապես հեռացվել աշխատանքից և խստագույնս պատժվել։ Հեղկոմի կազմը փոխվել է, նոր մարդ էր նախագահը, որը Մարիամ Թումանյանին առաջարկել է կրկին ստանձնել արհեստանոցի ղեկավարությունը։ Նա համաձայնել է շարունակել աշխատել։ Նորից ստանձնելով գործը, աշխատել է նույն եռանդով, նույն նվիրվածությամբ։ Հեղկոմը խնդրել է նրան, որ նույնանման արհեստանոցներ կազմակերպի Քարվանսարայում և Ղարաքիլիսայում։ Բայց նրան վիճակված չէր ընդարձակել գործունեությունը, որովհետև հիվանդությունը վերսկսել էր, և բժիշկը ծանոթանալով աշխատանքի պայմանների հետ, խստիվ արգելել է բրդի հետ գործ ունենալ։ Ստիպված թողել է պաշտոնն ու մեկնել Թիֆլիս։ Սրտում մեծ կըսկիծ կար, որ թողնելու է սիրելի գործը, սիրելի բանվորներին, բայց ինքը բավարարված էր, որովհետև հետագայում լսելու էր իր աշխատանքի ճշմարիտ գնահատականը՝ իշխանուհի Մարիամ Թումանյանը, որ դեռ հեղափոխությունից առաջ հայտնի է եղել իր հասարակական գործունեությամբ, այժմ, հեղափոխությունից հետո շարունակել է ապրել հասարակական շահերով և նվիրումով ծառայել իր սիրած գործին, «օգնել հնի փլատակների վրա կերտելու նոր ձևի ու բովանդակության հասարակարգ»։

Այսպիսի գնահատականի քչերն են արժանացել, նույնիսկ

սոցիալապես ընդունելի մարդիկ, ուր մնաց ազնվական ծագում ունեցողը՝ իշխանական տիտղոսով։ Սոցիալապես խորթ մարդկանցից շատերին հեղափոխության ալիքը դուրս է շպրտել ասպարեզից, այնքան հեռու աշխարհներ, որ վերադարձի ոչ մի հույս չունեին։

Այո, եզակի դեպք է, որ Մարիամ Թումանյանն արժանացել է մի գնահատականի, որ կարող էր պատիվ բերել ամեն մարդու։ Բայց խնդիրն այն է, որ ինքը՝ Մարիամ Թումանյանն էլ, եզակի էր։ Նա այն բարեգործներից չէր, որ ունեցած կարողության տոկոսներից բաժին է հանել բարեսիրական նպատակներով։ Նա գործիչ էր, հասարակական դեմք։

Հոգեկան վառ կերտվածք ուներ Մարիամ Թումանյանը, ոչ միայն ծագումով էր ազնվական, այլ նաև նկարագրով, խառնվածքով։ Բավական է աչքի անցկացնել նրա հիշողությունները և համոզվել, թե որքան շիտակ է նաև քաղաքական հարցերում, անկախ նրանից, թե իր պատրաստության չափը որքան էր նրան թույլ տալիս ճիշտ հասկանալու հեղափոխությունը ու նրա ընթացքն իր բոլոր հետևանքներով։

Ես գրեցի այս տողերը իբր հետնորդ սերնդի երախտապետ սրտի պարտք։

Բարությունը և երախտագիտությունը երբեք իրար հավասար չեն եղել։ Բարության սահմանները հայտնի չեն։ Երախտագիտությունն իր պարզ չափերն ունի։ Ուրեմն և չկարծեք, թե այս մի քանի էջով կարելի է նոր սերնդի պարտքը փակված համարել։ Ես արի ինչ որ կարող էի ու չեմ էլ հավատում, թե իշխանուհուն ճանաչողներից շատ մարդիկ մնացած լինեն հիմա։ Ուրեմն մնում է, որ երիտասարդ մարդիկ ուսումնասիրեն այս երևելի կնոջ կյանքի պատմությունը և գրեն նրա մասին։

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՄ ԴԻՍԵՐՏԱՑԻԱ

Այն տարիներին, խոսքը 1939-ի մասին է, մեկը կարող էր մի քանի տեղ աշխատել։ Ես օրինակ, բացի պետհրատից՝ աշխատում էի նաև ԱՐՄՖԱՆ-ի[1], այսինքն՝ ԽՍՀՄ Գիտությունն-

[1] Армянский филиал Академии наук СССР.

ների ակադեմիայի հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող։ Իմ հետազոտելիք նյութը Աբովյանն էր, նրա ժամանակը, նրա ժամանակակիցներն ու նախորդները։ Մեր ինստիտուտի տնօրենը Հովիկ Մելիքյանն էր, գիտական քարտուղարը՝ Խորեն Սարգսյանը։

ՍՐՄՖԱՆ-ի նախագահությունը, որի պրեզիդենտը Հովսեփ Օրբելին էր, փոխպրեզիդենտը՝ Սահակ Կարապետյանը, գիտական քարտուղարը՝ Հրանտ Բատիկյանը, լսելու էր իմ գիտական հաշվետվությունը։ Նիստը վարում էր Սահակ Կարապետյանը։ Օրբելին երբեմն էր միայն լինում Երևանում։ Ես խոսեցի քառորդ ժամի չափ, նյութ ընտրելով Հարություն Ալամդարյանին և Մեսրոպ Թաղիադյանին։ Ըստ երևույթին լավ տպավորություն թողի, որովհետև իմ այդ հաղորդումից մի ամիս անց ինձ կանչեց Հրանտ Բատիկյանը և տարավ Սահակ Կարապետյանի մոտ։ Մինչև փոխպրեզիդենտի մոտ գնալը, ասաց, թե ուզում են պաշտոն առաջարկել ինձ, բայց, թե ինչ, չասաց.

— Ավելի լավ է, թող ինքն ասի։

Սահակ Կարապետյանը հարցրեց իմ որպիսությունը, հարցուփորձ արեց գործերիս ընթացքի մասին և ապա ասաց՝

— Ընկեր Զարյան, մեր հասարակության շահերը և ձեր անձնականը պահանջում են, որ դուք ամենամոտ ժամանակներում դառնաք գիտությունների թեկնածու։

Այն ժամանակ ՍՐՄՖԱՆ-ը պաշտպանության իրավունք չուներ։ Եթե ես պատրաստ լինեի պաշտպանության, ապա պետք է մեկնեի Մոսկվա կամ Թիֆլիս։

Ասացի, թե թեմա ունեմ, հավաքել եմ նյութեր, մասամբ էլ շարադրել եմ, բայց տարրական պայմաններ չունեմ տանս գործն ավարտին հասցնելու համար։ Եթե ես մի երեք ամիս ապրեմ հյուրանոցային պայմաններում, պատրաստ կլինեմ պաշտպանության շատ շուտով։

— Կարելի է իմանալ, թե ի՞նչ է ձեր դիսերտացիայի նյութը։

— Աբովյանի «Նախաշավիղը», նրա պատմությունն ու նշանակությունը։

— Եվ ձեր կարծիքով բավարա՞ր կլինի պաշտպանելու համար։

Ասաց ու նայեց Հրանտ Բատիկյանին, որը չմացավ հաստատի, թե բացասի, ինչպես ինքը հետո ասաց, գաղափար չուներ «Նախաշավիղից»։

— Ես կարծում եմ, որ կբավարարի թեկնածուական դիսերտացիային ներկայացվող պահանջներին,— վրա բերի ես։

— Ավելի լավ։

Մի կարճ դադարից հետո առաջ տարավ խոսքը.

— «Ինստուրիստ» հյուրանոցում շուտով ձեր տրամադրության տակ կլինի սենյակ երեք ամիս ժամանակով։

Մի շաբաթից տեղափոխվեցի հյուրանոց, որտեղ հատկացրին ինձ շքեղ սենյակ։ Տեղափոխվեցի գրքերիս և թղթերիս հետ։ Տեղափոխվեցի՝ երևակայելով, կարևորություն տալով իմ անձին, ներկայիս և ապագայիս։ Այդ երեք ամիսը գիշերը ցերեկ արի, ցերեկը գիշեր, աշխատեցի։ Ունեի պետհրատի ղեկավարության համաձայնությունը աշխատանքի չներկայանալու։ Ո՛չ մի հանդիպում ընկերներիս հետ, ո՛չ ներկայացում, ո՛չ համերգ կամ կինոնկար։ Ընկերներս էլ տեղս չգիտեին, այլապես գալու էին և խանգարելու։

Վերջացրի գործս, և երբ սևագիրը մեքենագրված էր, հայտնեցի, որ շատ քիչ աշխատանք է մնացել։ Շատ չանցած մեր ինստիտուտը ևս ստացավ լեզվից և գրականությունից դիսերտացիաների պաշտպանության իրավունք։ Մինչ այդ էլ իմ դիսերտացիան լույս տեսավ առանձին գրքով, որը «Նախաշավիղի» ինքնատիպ հրատարակություն էր, որ մասնագիտական լեզվով կոչվում է անաստատիկ, հայերեն՝ լուսատիպ նմանահանություն։

Մի երեկո հավաքվեց գիտխորհրդի պատկառելի կազմը և 1940-ի ապրիլի 23-ին կայացավ պաշտպանությունը։

Այն ժամանակ չկար այժմյան պաշտպանության խիստ կարգ ու կանոնը։ Ավտոռեֆերատի փոխարեն գրում էինք հիմնական դրույթները մի երկու էջի չափով։ Ընդդիմախոսներից մեկը բավական է, որ լիներ դոկտոր կամ պրոֆեսոր, կարող էին նույնիսկ գիտական աստիճան չունենալ։ Պաշտպանելու հաջորդ օրվանից դու արդեն քո աստիճանի տերն էիր։ Ես օրինակ, որպես թեկնածու, մի ամիս հետո արդեն մեկ ուրիշի

պաշտպանության ընդդիմախոս էի։ Գիտական աստիճանը չէր բերում աշխատավարձի հավելում, ինչպես հիմա է, ուներ միայն բարոյական նշանակություն։

Ջայնձ ինձ ասին, որ գիտխորհրդի անդամներին ծանոթացնեմ աշխատանքիս հիմնական դրույթների հետ։ Չէի գրել, որովհետև չէր պահանջվում, մտածում էի, թե ինչ-որ պետք է, կասեմ։ Չկարողացա, և դրա պատճառը Մանուկ Աբեղյանի ներկայությունն էր, այն մեծ հեղինակության, որից սաստիկ ակնածում և պատկառում էի։

Իմ առաջին ընդդիմախոսը Հովիկ Մելիքյանն էր, որ կարծես թե միայն աչքի էր անցկացրել գիրքը։ Մյուս ընդդիմախոսը Խորեն Սարգսյանն էր։ Նա բարեխղճորեն ուսումնասիրել էր իմ գործը, ուստիև աշխատությունն արժևքավորելուց հետո քննադատական լուրջ դիտողություններ արեց։

Սկսվեց մտքերի փոխանակություն, ելույթ ունեցան Ավետիք Իսահակյանը, Ստեփան Զորյանը, Աբաղին, Աբարատ Ղարիբյանը։

Իմ պատասխան խոսքը, ինչպես ասացին, սառցվեց։ Դրանով ինձ հաջողվեց ինչ-որ չափով մեղմել ներածական խոսքիս տխուր տպավորությունը։

Փակ քվեարկությունն իմ օգտին էր, անցա միաձայն։ Երբ նիստը հայտարարվեց փակված, շատերը մոտեցան ինձ, շնորհավորեցին։ Մոտեցավ նաև Գարեգին Լևոնյանը։

— Շատ ուրախ եմ,— ասաց այդ անսահման բարի մարդը։ Վայրկենական արագությամբ միտքս սլացավ դեպի մանկության տարիները, ու ես հիշեցի Լևոնյանի այցը մեր տուն և զրույցը առաջին դասարանցուս հետ։

Իսահակյանը, որ նույնպես մոտեցել էր, կատակեց.

— Դե, որ այդպես ուրախ ես, վեր կենայիր և մի երկու խոսք ասեիր։

Լևոնյանը չշփոթվեց.

— Խոսք չասացի, բայց հոդված եմ գրել։

Իրեն չբավարարեց ասածը և անմիջապես վրա բերեց.

— Քո բանավոր ելույթը կմոռացվի, իսկ իմ հոդվածը կմնա։

Իսահակյանը տեղի տվեց.

— Ճիշտ ես, Գարեգին։

Հետո գնացինք ռեստորան։ Այնտեղ էր, որ Ավետիք Իսահակյանն ասաց.

— Ինձ համար միևնույն չէր, թե ինչպես կանցնի քո պաշտպանությունը, սիրելի Ռուբեն, բայց չնեղանաս, եթե ասեմ, որ այսօր, ով էլ պաշտպանելու լիներ, դու թե մեկ ուրիշը, անգամ ոչ սիրելի մարդ, միևնույն է, գալու էի ներկա լինելու առաջին պաշտպանությանը։ Կանցնի տասը-քսան տարի, որքան դիսերտացիաներ են պաշտպանվելու, և այդ բոլորի սկիզբը այսօրվա օրն է համարվելու, մեծ իրադարձություն մեր ինստիտուտի կյանքում...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՐԿՈՆ

Բոլորել էր Ավետիք Իսահակյանի ծննդյան 65 ամյակը։ «Լիտերատուրնայա գազետայում» լույս տեսավ գրականագետ Սուրեն Գայսարյանի հոդվածն այդ առիթով, ու Հայաստանում կազմակերպվեցին երեկոներ տարբեր հաստատություններում՝ կազմելով գրողներից հոբելյանական հանձնախմբեր, որևէ նշանավոր գրողի ղեկավարությամբ։ Ես ընդգրկվեցի Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի խմբում, որի ղեկավարը Նաիրի Զարյանն էր։ Բացի ինձանից խմբում էին Հովհաննես Շիրազը, Արամ Ինճիկյանը և էլի մի երկու հոգի։

Բացման խոսք ասաց Նաիրին։ Փառահեղ խոսք էր՝ անկեղծ և ոգեշունչ։ Էլ ավելի փառահեղ զեկուցում կարդաց Արամ Ինճիկյանը, որը բանիմաց, լուրջ գրականագետ էր։ Խանդավառ մեծարանք էր նրա խոսքը, բանաստեղծի անցած ուղու ստույգ բնութագրմամբ, ինքնատիպ վերլուծումներով։ Կարծում եմ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ դա Իսահակյանի մասին այդ օրերին լսածս խոսքերից լավագույնն էր։

Բայց արի տես, որ դահլիճը լավ չէր լսում, ուսանողները միմյանց հետ խոսում էին, և Նաիրին մի երկու անգամ փորձեց սաստել նրանց, բայց ապարդյուն։

Նաիրիից երկտող ստացա։

— Մարդը հրաշալի զեկուցում է կարդում, լսող չկա։ Պետք է փրկել դրությունը։ Մի երկու խոսք ասա։

— Պատասխանեցի.

— Իսահակյանի հետ կապված ոչ մի հետաքրքիր միտք չկա գլխումս այս պահին։

— Նշանակություն չունի, մի բան գտիր և խոսիր։

— Այս ինստիտուտում եղել եմ մի քանի անգամ և ինձ հարգանքով են վերաբերել։ Ինչո՞ւ կորցնել ունեցածս։

— Սատանան տանի, կարգապահություն գոյություն ունի՞ թե չէ։

Շփոթված շրջվում եմ դեպի Նաիրին.

— Ինչի՞ մասին խոսեմ։

— Թեկուզ՝ մոր կերպարը Իսահակյանի պոեզիայում։ Հուզիչ նյութ է։

Չէի հասցրել միտքս կազմակերպել, որ Ինճիկյանն ավարտից զեկուցումը։

Ձայնը տրվեց ինձ։

Խոսեցի, բայց բանի նման չէր իմ խոսքը։ Ոչ մի լուրջ մարդ գրոշի արժեք չէր տա այդ խոսքին։ Գոնե մի ինքնատիպ միտք հայտնեի, բայց դահլիճը լուռ լսում էր։

Շիրազը, որ չէր լսում, թե ով ինչ է ասում, ինչ է կատարվում շուրջը, գլուխը կախ խորասուզված գրում էր, ջնջում, նորից գրում։ Խնդրեց Նաիրիին ձայն տալ իրեն և կարդաց տեղնուտեղը գրած հանպատրաստից բանաստեղծությունը, որն ունկնդիրներն ընդունեցին խանդավառ ծափահարությամբ։

Նաիրին ամփոփեց երեկոն, մի կրակոտ ճառ էլ հիմա ասաց, բոլորովին տարբեր առաջին խոսքից։

Ճանապարհ ընկանք դեպի «Ինտուրիստ», մի գավաթ սուրճ խմելու։

Նաիրին իր հերթին, ես էլ իմ, գովեցինք Արամին՝ կարդացած լավ զեկուցման համար։

— Անկե՞ղծ։

— Անկեղծ։

— Բայց դահլիճը կարծես տրամադիր չէր լսելու։

— Նշանակություն մի տուր, ուսանողներն են, անկազմակերպ ժողովուրդ։

Երբ Արամը գնաց, Նաիրին դարձավ ինձ, իր սովորության համաձայն ձեռքի ափով երեսը շփեց։

— Էդ ինչ զարմանալի ժողովուրդ են ուսանողները՝ Արամի

ընտիր զեկուցումը չէին հավանել, իսկ քո, ներիր ինձ, խառնափնթոր խոսքից ոգևորվել էին։ Ռուբեն, երբեք քեզ չէի տեսել այդքան անօգնական վիճակում։ Դու իրավացի էիր։ Երբ մարդ բան չունի ասելու, չպետք է խոսի։

Երբ մենակ մնացի, քայլում էի մտամոլոր և ինքս ինձ ասում.

—Չէ՛, «Քաջ Նազար» հեքիաթը համաշխարհային արժեք է։

ԳԼԽԻՍ ԵԿԱՆ ՓՈՐՁԱՆՔԸ

1939-ը և 1940-ը եղան Աբովյանի տարիներ. ոչ մի տարի Աբովյանը չի հրատարակվել այնքան, որքան այդ երկու տարին։ «Երկերի ժողովածուի» երկու հատոր, «Վերք Հայաստանի» առանձին հրատարակություն, «Նախաշավիղի» ինքնատիպ տպագրությունը՝ լուսատիպ նմանահանություն, Աբովյանի գրվածքների մանրատիպ հրատարակության մատենաշար՝ «Բայաթիներ», «Թուրքի աղջիկը» և այլն, Մանուկ Աբեղյանի, Ստեփան Զորյանի և նման մարդկանց առաջաբաններով։ 1939-ին լույս տեսավ իմ «Աբովյանի կյանքը», հաջորդ տարին վերահրատարակվեց և Հրայր Մուրադյանի «Խաչատուր Աբովյան» դիրքը։

Այս բոլոր հրատարակությունները կատարվում էին հատուկ խնամքով։

Ես մտքիս դրի, որ աբովյանական հրատարակությունների այս շարքում առանձնանա «Վերք Հայաստանին»։ Նախ՝ համաձայնություն ստացա, որ թեկուզ տպաքանակի մի մասը լույս տեսնի բարձրորակ թղթի վրա, տեսք ու շուք ունենա։ Խնդրեցի Մարտիրոս Սարյանին ստանձնել Աբովյանի դիմանկարի պատրաստումը։ Համոզելու հարկ չեղավ, հանձն առավ առաջին իսկ խոսքից։ Կարո Տիրատուրյանն էլ պատրաստեց կազմն ու անվանաթերթը։ Ես էլ ինձ վրա վերցրի առաջաբան գրելը։ Դա կարճ խոսք էր, մեքենագրական մի քանի էջ։

Առաջաբանը լավ ընդունելություն գտավ։ Դա վերլուծական նպատակներ չուներ, բնութագրություն էր և գնահատական, շարադրանքը դատողական բնույթի չէր, ավելի քնարա-

կան էր, ընթերցողն ստանում էր այն տպավորությունը, թե մի շնչով է գրված: Իմացա, որ Հակոբ Խաչատրյանցին այնքան է դուր եկել, որ թարգմանել է ռուսերեն «Լիտերատուրնայա գազետայի» համար, որի տպագրությունը կանխել է Սիրասը: Թե ինչու, այդ մասին՝ մի փոքր հետո: Ռուսերեն թարգմանությունը Խաչատրյանցի խնդրանքով Մոսկվայից իր հետ բերել էր նույն Սիրասը՝ հանձնելու ինձ:

Ահա հենց այդ առաջաբանը կատարյալ փորձանք դարձավ իմ գլխին:

1940-ին մեկնել էի Դիլիջան՝ ամռան շոգ ամիսներն այնտեղ անցկացնելու:

Ամեն օր վերցնում էի «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ» թերթերը, շաբաթը մի անգամ էլ՝ «Գրական թերթի» նոր ստացված համարը: Օրերից մի օր թերթերում աչքիս ընկավ իմ ազգանունը, այն էլ թերթի խմբագրական հոդվածում: Պարզ էր, որ լավ առիթով չեմ հիշված: Տհաճ ուրիշ ազգանուններ էլ կան: Սկսեցի կարդալ: Պարզվեց, որ հոդվածի պատճառն ու գլխավոր գործող անձը ես եմ, մյուսները հիշված են ի միջի այլոց: Մեղադրանքը՝ ազգայնամոլություն: Պարզվեց, որ Բաֆֆուն հայտարարելով Աբովյանի հետևորդ, տարբերություն չեմ դրել նրանց սոցիալ-քաղաքական, վերջապես՝ դասակարգային էությունների մեջ: Եթե Աբովյանը հայտարարվում է դեմոկրատ, արդեն հաշվվել և ընդունել էին, որ դա այդպես է, ուրեմն՝ պարզ հետևություն, Բաֆֆին նույնպես դեմոկրատ է: Ուրեմն՝ պարզ է, առաջաբանի հեղինակը դասակարգային հավասարության նշան է դնում Աբովյանի և Բաֆֆու միջև, տարբերություն չդնելով բուրժուական և դեմոկրատական հայրենասիրությունների միջև:

Այս բոլորն այն պատճառով, որ ես վամեցել էի ասել, թե Աբովյանն ազդել է հետագա շատ գրողների վրա, այդ թվում նաև Բաֆֆու, և իմ այդ միտքն արտահայտել էի պատկերավոր համեմատությամբ՝ «Աղասու ձին Բաֆֆիի շատ հերոսների տակ խաղաց»:

Մի խոսքով՝ ազգայնամոլի պիտակը ճակատիս է:

Վշտացա, ապրումներ ունեցա: Քուն չէր գալիս աչքերիս:

Դիլիջանի ծանոթներից շատերն ինձ մոտեցան: Հարցուփորձ էին անում: Ոմանք ոչ մի կերպ չէին կարողանում հաս-

կանալ, թե ինչ մեղադրելի բան կա իմ գրածի մեջ։ Ոմանք, որ ավելի տարիք ու փորձ ունեին և ճաշակել էին կյանքի շատ դառնություններ, հանգստացնում էին, թե ոչինչ, կանցնի, այսօր ասում, խոսում են, վաղը կմոռանան։ Ոմանք էլ ասում էին՝ լավ մտածի, ով չի սիրում քեզ, նրա արած գործը կլինի։ Շատերն էլ, որ չէին կարդացել առաջաբանը, խմբագրական հոդվածը առիթ եղավ գիրքը գտնելու և կարդալու։ Շատերն ինձ նահատակ էին համարում, ոմանք էլ՝ մեղքի մեջ բռնված գաղափարական հանցագործ։

Այդ օրերին Դիլիջան եկան վարդգես Համազասպյանը և Գեղամ Ալեքյանը, անհրաժեշտ համարեցին այցի գալ, տեսնել ինձ։ Սիրտ տվին ու գնացին։ Ու ես նրանց մարդկային այդ արարքը երբեք չմոռացա։

Սեպտեմբերին վերադարձա Երևան, գրողների տանը ժողով գումարվեց, որին մասնակցեց նաև Կենտկոմի քարտուղար Ս. Կարապետյանը։ Ոչ ոք ինձ չպաշտպանեց, բոլորը մեղադրեցին, մեկը խիստ, մյուսը մեղմ։ Ես էլ ելույթ ունեցա, բացատրություն տվի, որ ավելի մեղայական բնույթ ուներ, ասի, թե իմ միտքը ինչ է եղել։ Ինձ խորհուրդ էին տվել ընդունել, ասել, որ քննադատությունը ճիշտ է, որ ես պետք է այս ասեի, այն ասեի ու չեմ դրել, որ կմտածեմ, եզրակացություններ և հետևություններ կանեմ իմ հետագա գործունեության ընթացքում։ Խոսեց Կենտկոմի քարտուղարը, քննադատական էր խոսքը, երբեմն նույնիսկ չափազանց խիստ, բայց պղպջի նաև համակրանք, հասկացա, որ քննադատում, մեղադրում է, բայց չի ուզում կործանել։ Դա զգացին նաև մյուսները և ինձ հանգստացնում էին, ասում, որ շատ էլ մեծ նշանակություն չտամ, բայց անեմ համապատասխան եզրակացություն, սրանից հետո ունենամ դասակարգային մոտեցում գրականության պատմության հարցերում։

Հավաքույթից հետո ընկ. Ս. Կարապետյանն ասաց, որ վաղն անցնեմ իր մոտ, ինձ հետ խոսելիք ունի։

Գնացի, և նա, չթաքցնելով իմ հանդեպ ունեցած համակրական վերաբերմունքը, ուզեց հետս ոչ պաշտոնական, մտերմական զրույց վարել, ունենալով անկեղծ մտահոգություն իմ ներկայի և ապագայի վերաբերյալ։

Նա ասաց, որ ինքը ստացել է գրություն, որով Կենտկոմի

ուշադրությունն է հրավիրում գլուխ բարձրացող ազգայնամոլական տրամադրությունների վրա մեր գեղարվեստական-գիտական մտավորականության որոշ գրվածքներում։ Բերված էին փաստեր։ Ամենավատ փաստը Աբովյանի առաջաբանն էր։ Ասաց նաև, որ այդ գրության հեղինակը իմ ընկերներից է, որի անունը ինքը հարմար չի գտնում տալ։ Այնպես որ պետք է գործել, ինչպես ժողովուրդն է ասում՝ տասը անգամ չափել, մի անգամ կտրել։ Գրականության պատմության հարցերը քննության առնելիս դասակարգային մոտեցում պետք է ունենալ, պետք է տարբերել դարաշրջանների քաղաքական-հասարակական պայմանները։ Ավելին, ասաց, որ գրության մեջ հայտնված է նաև այն միտքը, թե ժամանակին Նիկոլ Աղբալյանը ևս հավատարմության դիծ է քաշել Աբովյանի և Րաֆֆու միջև, այնպես որ, ըստ այդ գրության, առաջաբանում հայտնված միտքը փոխառված է դաշնակցության գաղափարական զինանոցից։ Բայց,— շարունակեց նա իր խոսքը,— այս էլ ասեմ, որ ասված է, իսկ օրինակ չի բերված, աղբյուրը չի մատնանշված, այդ պատճառով էլ Կենտրոնական կոմիտեն խստության չդիմեց, պարզապես անհրաժեշտ համարեց հրապարակելով խմբագրական հոդված, ազգայնամոլական տրամադրությունների առաջն առնել։ Ինչ վերաբերում է անձամբ իրեն, ապա չի կասկածում, որ այս գրության բուն շարժառիթը պրոֆեսիոնալ նախանձն է։ Բայց իր խորհուրդն է, անկեղծ և ընկերական խորհուրդը, այս ամբողջ պատմությունը չվերագրել միայն մարդկային չարության, այլ նայել հարցին ըստ էության, աշխատել հասկանալ, թե քննադատության մեջ ինչն է ճիշտ և համոզվելու դեպքում ընդունել ու վերակառուցվել։

Հարցրի՝ գրությունը ձեռագի՞ր է, թե մեքենագրված։

— Մեքենագրված։

Յույց տվեց գրության առաջին էջը, արտասահմանյան մեքենայի վրա էր տպված, բարձրորակ թղթի վրա, տառերի վերին մասը մանուշակագույն, ներքևի մասը՝ կարմիր։

Այդպիսի մի մեքենա տեսել եմ ընկերներիցս մեկի մոտ։ Ո՞ւմ մոտ, չհիշեցի։ Լարում եմ հիշողությունս։ Դարձյալ չեմ հիշում։ Որոշում եմ ջանք չթափել։ Դուցե ավելի լավ է, որ չիմանամ ով է գրողը։ Այսպես, կասկածն ընդհանուր է, բո-

լորն են և ոչ ոք չէ, իսկ այնպես պետք է իմանամ ու հոգեպես տանջվեմ և մտածեմ, թե ահա ինչպիսին է եղել Հուդան։

Սատանան տանի գրողին։ Եթե նա ողջ է և կարդում է իմ այս գրածն ու կարմրում, ես ինձ բավարարված կզգամ։ Իսկ դրա մասին ավելի լավ է չմտածեմ, կասկածներից հեռու մընալ, ապրել անվրդով սրտով և ավելի լավ է մտահոգվել հասկանալու մեղադրանքն ըստ էության։

Երբ տարիներ անցան, շատ տարիներ և մեր հասարակապետական պատկերացումները փոխվեցին, Բաֆֆու մասին գրքեր լույս տեսան, որտեղ ասվեց, որ Բաֆֆին Աբովյանի աշակերտն է եղել, կրել է նրա ազդեցությունը, այսինքն՝ այն, ինչ ասել էի ես։ Ես դիմեցի Հովհ. Մամիկոնյանին, այն ժամանակ նա բարձր պաշտոն էր զբաղեցնում և խնդրեցի բացատրել, թե ինչ տարբերություն կա իմ ասածի և հիմա հայտնվող տեսակետի միջև, և ինչու իմ գրածը քարկոծվեց, հայտարարվեց ազգայնամոլական, իսկ հիմա նույնն ասում են ուրիշները, և դա ընդունվում է իբր սովորական ճշմարտություն։

Նրա պատասխանն ինձ արտառոց թվաց։

— Այն ժամանակ դա էր ճիշտ, հիմա՝ սա։

Եվ հետո ավելացրեց.

— Դիալեկտիկական մոտեցման հարց է։

ԳՐԻԳՈՐ ԶՈՒԲԱՐ

Սա Գրիգոր Զուբարի ո՛չ կենսագրությունն է, ո՛չ էլ մանավանդ նրա իրավաբանական-հասարակական գործունեության վաստակի ուրվագծումն ու գնահատականը։ Սրանք անձնական տպավորություններ են, իսկ մեծ մասամբ ամփոփումը Մարիամ, Ղուկաս Զուբարյաններից և Հովհաննես Զարդարյանից տարբեր ժամանակ լսածս զրույցների։ Նրանք իմ լավ ու վաղուցվա ընկերներն են և տարիների ընթացքում հաճախ է խոսք բացվել Գրիգոր Զուբարի մասին։

Ծանոթ եմ եղել Զուբարի հետ, բայց անձնական շփումներ չեմ ունեցել, և անկեղծ ասած, չեմ էլ կարծում, թե հիշում էր ինձ, գիտեր թե ով եմ, կարծում եմ պարզապես նրա համար մեկն էի իրենով հիացած այն երիտասարդներից, որ առիթ

էին որոնում իրեն մոռեննալու, հետը շփվելու, իրեն լսելու, անկախ նրանից՝ դա հրապարակային ելույթ էր, թե պարզ զրույց։

Մինչև Հայաստան վերջնականապես փոխադրվելս, գիտեի երկու Զուբար. մեկը Գևորգ, մյուսը Եղիա։ Գևորգ Զուբարն ինձ հայտնի էր Անտոն Մայիլյանի «Թատրոն և երաժշտություն» հանդեսից, որտեղ դեռ աշակերտական տարիներից հանդիպել էի նրա հոդվածներին։ Եղիա Զուբարը Երևանում հրատարակվող «Վերելք» ամսագրի խմբագիրն էր, որն իր գլխավորած հանդեսի էջերում զետեղեց պոեզիայի մասին գրած իմ հոդվածը։

Երևանում հաստատվելուց հետո իմ հայտնություններից եղավ երրորդ Զուբարը, Գրիգոր Զուբարը։

Նա Հայաստան է եկել 1919-ին։ Ավելի ճիշտ՝ նախ Թիֆլիս, հետո՝ Երևան։ Կնոջը գրել է՝ «Եկել եմ ահի, մահի, սուվի երկիր, բայց կանչողը մեր երկիրն է»։ Կուսակցական պատկանելիությամբ էսէռ էր։ Լինելով ձախ էսէռ, ավելի հակված էր դեպի բոլշևիկները։ Դրանով պետք է բացատրել նրա կապն ու մոտիկությունն այնպիսի հեղափոխականների հետ, ինչպես Սերգո Օրջոնիկիձեն էր, Ալեքսանդր Մյասնիկյանը, Լուկաշինը և ուրիշները։

Ապրիլի սկզբներին իմանալով, որ կարմիր բանակը ուր որ է Երևան է մուտք գործելու, դաշնակցականները որոշել են Հայաստանից հեռանալ։ Սիմոն Վրացյանը, Զուբարի ազգականներից լինելով, իր պարտքն է համարել Երևանը թողնելուց առաջ, զգուշացնել նրան.

— Բոլշևիկները վաղը մյուս օրը այստեղ են լինելու։ Ես գնում եմ Ջուլֆայի վրայով։ Գնանք։

— Գնացեք, եկողը չեմ։

Մնացել է ու առաջին իսկ օրերից թևերը քշտել է ու աշխատել։ Աշխատել է, ինչպես ինքը գիտեր աշխատել, ինչպես հատուկ էր նրան։ Դաշնակցական Սիմոն Վրացյանն իր ազգականն էր, բայց ազգակա՛ն էր նաև Լուկաշինը ու իր համոզմունքներով հարում էր վերջինիս։

Երբ Հայաստանն անցել է խորհուրդներին, Զուբարը լայն գործունեություն է ծավալել։ Նա գիտեր, թե պետության գլուխ կանգնած մարդու համար ինչպիսի կարևոր անհրաժեշտու-

թյուն է օրենքների իմացությունը: Եվ մինչև 1937 թվականը եղել է Մյասնիկյանի, Լուկաշինի, Սահակ Տեր-Գաբրիելյանի, Աղասի Խանջյանի, հանրապետության շատ ղեկավարների խորհրդատուն:

Նա ժամանակ չի ունեցել տանը լինելու, կնոջով ու երեխաներով զբաղվելու: Եթե տանն է եղել, ապա առանձնասենյակում փակված կատարել է պետական առաջադրանքներ:

Նորաստեղծ Հայաստանը պետք է սահմանադրություն ունենա, ո՞վ պետք է նախագծի մշակման գործը գլխավորի, իհարկե՝ Գրիգոր Զուբարը:

Եթե ստեղծված է հայկական խորհրդային հանրապետություն, որ ունի դատարան, ո՞վ է մշակելու իրավաբանական տերմինները: Իհարկե Գրիգոր Զուբարը, որի աջ թևը բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանն էր այդ հարցում:

Եթե հանրապետություն է և ունի ժողովրդական կոմիսարիատներ, ուրեմն նաև արդարադատության կոմիսարիատ: Ո՞վ է գլխավորելու. եթե կուսակցական լիներ, իհարկե՝ Զուբարը, ուրեմն մնում է, որ նա լինի կոմիսարի տեղակալը:

Եթե ունես պետական համալսարան ու քո այդ բարձրագույն հաստատությունն էլ՝ իրավաբանական ֆակուլտետ, ո՞վ է ուսանողներին կարդալու պետական իրավունք և սահմանադրություն, հռետորական արվեստ: Իհարկե Գրիգոր Զուբարը:

Եթե պետություն ունես, և այդ պետությունն էլ՝ դատարան, ո՞ւմ կարելի է վստահել հանրապետության օրենսգրքի նախագծի մշակման գործը, եթե ոչ Գրիգոր Զուբարին:

Եվ սրա կողքին՝ հողային դեկրետների մշակում: Աշխատակցություն մամուլին՝ զանազան ստորագրություններով՝ Գ. Զ., Ղրիմեցի և այլն: Հազար ու մի գործ: Ու այդ նիհար, վտիտակազմ մարդը ե՞րբ ժամանակ ունենար մի փոքր հանգիստ առնելու:

Բացառիկ նվիրվածություն:

Ու իր երեխաներին՝ Մարիամին, որին ընկերուհիները միշտ ու հիմա էլ կոչում են Մարուսիկ, Ղուկասին, որ կրտսերն էր, դաստիարակել է նվիրվածության ոգով:

Երբ ուսանելու նպատակով փոխադրվեցի Երևան, Զուբարը դատապաշտպանությամբ այլևս չէր զբաղվում, հետևապես նրան լսելու առիթ չէի ունենալու: Բայց իմ բախտը բերեց, աշ-

նանը Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում կազմակերպվեց Սկսել Բակունցի նոր հրապարակված «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայությունը» վերնագրով գրքի քննարկումը: Որպես զեկուցող հանդես եկավ Զուբարը: Ես նրան առաջին անգամ էի լսում: Տպավորությունս մեծ էր:

Մի երկու օրից իմացանք, որ Զուբարին համոզել է խոսել Հայկ Գյուլիքևիխյանը: Զուբարը հրաժարվելիս է եղել: Բակունցը, իմանալով նրա դիրքը, ասել է. «Եթե հանձն առնես՝ ուրեմն վերջ մեր ընկերությանը»: Եվ այդ ճնշումն էլ պատճառ է դարձել, որ նա հանձն առնի՝ ընկերությունը ընկերություն, ճշմարտությունը ճշմարտություն:

Առաջին տպավորությունը Զուբարից զարգացումն էր, պատրաստությունը, երբ խոսում էր, ասես առատության եղջյուրից թափվում էր միտք, ասածն հաստատող օրինակներ, շեղումներ դեպի պատմության հեռավոր ժամանակները, Եգիպտոս ու Հայաստան, հին Հունաստան և հին Հռոմ, միջնադարն իր ինկվիզիցիայով, վերածննդության ժամանակներն իր հսկա արվեստագետներով, ֆրանսիական մեծ հեղափոխությունը, էնցիկլոպեդիկ մտածողության ժամանակները, դեկաբրիստներ և նարոդնիկներ: Ի՞նչ ընդգրկում: Միջբերումներ՝ լատին, ընդհանրապես հին աշխարհն իր բանաստեղծներով:

Ինչ չգիտեր:

Պատմություն և փիլիսոփայություն, նկարչություն և երաժշտություն, կրոն ու իրավագիտություն, բարոյագիտություն և տրամաբանություն, հոգեբանություն և մանկավարժություն:

Ես չեմ ասի, թե երբևէ մեկ էլ վկա եմ եղել բանավոր խոսքի այդպիսի վարպետության:

Ինչ տրամաբանություն: Երկաթյա և կուռ: Ես լսում էի ու զարմանում, թե ինչպես է նա հարցի խորքերը թափանցում: Միտքն ինչ ճկուն ընթացք ունի: Ինչպես է բուն նյութից հեռանում ու վերստին վերադառնում իր ելման կետը՝ հաստատելու արծարծված ճշմարտությունը:

Վերջապես, մտքի ինչ ճարտար ձևակերպում: Ես լսել էի փայլուն հռետորների: Ու Զուբարը, եթե նրանց չէր գերազանցում, չէր էլ զիջում: Մտքի թռիչք, մտքի փայլ: Ինձ համար դժվար է ասել, թե ինչն էր նրան ավելի բնորոշ՝ խոսքի շող-

շողա՞նքը, թե դատողական կշռադատությունը, մտքի խանդավառ թռի՞չքը, թե մտքի սառը քննական վերլուծականը։ Թերևս և՛ մեկը և՛ մյուսը։ Ու ես, որքան կարողացա հասկանալ, նա չուներ խոսքի կաղապար, դա մտքի կենդանի ընթացք էր, որ ըստ պահանջի ընդունում էր տարբեր ձևեր, հետամուտ լինելով մի հիմնական նպատակի, իր մտքի ճշմարտացիության հաստատմանը։

Երբ ես հանդիպեցի, նա հիսուն տարեկան չկար։ Երևի քառասունը մի փոքր անց։ Լսում էիր ու զարմանում, թե երբ է ամբարել այդքան պաշար։

Վերջապես, դա ինչ հիշողություն էր։ Ես օտար բառերի սիրահար չեմ, բայց սա այն դեպքն է, երբ պետք է ասեմ՝ ֆենոմենալ։

Երևանի համալսարանի հիմնադիրներից է եղել Զուբարը։ Ի պատիվ դրա՝ լուսավորության ժողովրդական կոմիսար Աշոտ Հովհաննիսյանի խորհրդով Գրիգոր Զուբարի՝ «Խորհրդային Միությունը և իրավունքը» հարցի շուրջը դասախոսությամբ է կատարվել բարձրագույն ուսումնական հաստատության բացումը։

Ինչպես հայտնի է, Չարենցի կյանքում մի ծանր դեպք կա։ 1926-ի սեպտեմբերի 5-ին Աբովյան փողոցում կրակել է, այն ժամանակ հայտնի թավջութակահար Արտեմ Այվազյանի քրոջ՝ Մարինայի վրա։ Ահա այդ առիթով էլ բանաստեղծը կալանավորվել է։ Պետք է դատավարություն լիներ։ Չարենցի կինը՝ Արփենիկը, խնդրել է Զուբարին հանձն առնել դատապաշտպանությունը։ Զուբարը շատ զբաղված լինելով, մերժել է։ Այդ ժամանակները նա ընդհանրապես զբաղվելիս չի եղել դատապաշտպանությամբ։ Բայց հետո հանձն է առել և դրա պատճառը այն գրողներն էին, որոնք եկել են Զուբարի մոտ և զգուշացրել՝ «Զուբար, քեզ պատիվ չի բերի այդ խուլիգանին պաշտպանել, ամոթ է»։ Ա՛խ, այդպե՛ս, ուրեմն, պետք է հանձն առնել։ Ու համաձայնել է։ Յոթ օր փակվել է և ուսումնասիրել Չարենցի գործերը, որ լավ իմանա նրա ստեղծագործությունը։ Նա հասկանում էր, որ պետք է լավ զինված լինի, որովհետև Մարինայի հայրը, որպես տուժած կողմ, հանդես էր գալու, իսկ նա մասնագիտությամբ նույնպես իրավաբան էր։

Զուբարը մի քանի անգամ գնացել է բանտ, տեսնվել Զարենցի հետ ու ասել, թե իր որ հարցին ինչպես պատասխանի։ Դատավարության ժամանակ Զարենցը բոլորովին ուրիշ բաներ է ասել ու խառնել դատապաշտպանի բոլոր հաշիվները։

Մի օրինակ։

— Քաղաքացի մեղադրյալ, երևի տուժածը գեղեցիկ լինելով հրապուրել է ձեզ, և նրա մերժումը խոցել է ձեր արժանապատվությունը։

— Еще этого не хватает! Որտեղի՞ սիրուն է։

Ու վիրավորական որակում է տվել տուժածի արտաքինին։

Երբ Զուբարն ասել է, որ մեղադրյալը բանաստեղծ է, արվեստագետ մարդ, նրանք նուրբ և զգայուն հոգի ունեն, որոշ տարօրինակություններ, պետք է մտնել նրանց հոգեվիճակի մեջ, առանձնահատուկ մոտեցում ունենալ, Մարինայի հայրը տեղից բացականչել է.

— Он понимает поэзию столько, сколько мои щиблеты.

Զուբարը, տեսնելով ստեղծված վիճակը, որոշել է ճարի փոխարեն արտասանել «Ամբոխները խելագարվածը»։ Դահլիճը լեփ-լեցուն է եղել մարդկանցով։ Արտասանելիս Զուբարը զգացել է, որ դահլիճից բացի, դատավորն ու ատենակալներն են հափշտակված բանաստեղծի պոեմով, ավելի խանդավառ է շարունակել։ Վերջում՝ բուռն ծափահարություն, աղաղակներ։ Ու երբ մի պահ դահլիճը խաղաղվել է, Զուբարն օգտվել է առիթից ու ասել՝

— Орлам случается и ниже кур спускаться, но курам до орла никогда не подняться.

Նորից ծափահարություններ, նորից աղաղակներ։

Զարմանալի է, բայց խանդավառությունը համակել է նաև տուժած կողմին՝ Սարգիս Այվազյանին, այնքան, որ նա պաշտոնապես հրաժարվել է իր հայցից։

Հիշում եմ Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության քննարկումը։ Հիշում եմ Զուբարի ելույթն ընդդեմ Աշոտ Հովհաննիսյանի՝ ի պաշտպանություն Ռաֆայել Պատկանյանի՝ պետք չէ մեկին պաշտպանելու համար ուրիշին նսեմացնել. ինչո՞ւ մեկը հեղափոխական դեմոկրատ, մյուսը՝ թունոտ ազգայնամոլ։ Աշոտ Հովհաննիսյան և

Գրիգոր Զուբար։ Երկու հակա իրար դեմ։ Երկու թնդանոթ միմյանց դեմ։ Այդ օրը Զուբարին ոչ ոք չպաշտպանեց։ Հակառակ Աշոտ Հովհաննիսյանի նկատմամբ իմ բոլոր հարգանքին, ասեմ, որ ապագան լինելու էր Զուբարի կողմը։

Ես չեմ եղել, բայց լսել եմ, որ Զուբարը մի անգամ էլ է հակադրվել Ա. Հովհաննիսյանին, երբ պատմության ինստիտուտում քննարկվելիս է եղել «Հայոց պատմության» բազմահատորյակի պրոսպեկտը։ Ինչպես իմացա՝ խոսել է ի պաշտպանություն զորավար Անդրանիկի և Խրիմյան Հայրիկի։

1937-ի տուժածներից էր Գրիգոր Զուբարը։

Ստալինի մահից հետո վերադարձել է և ուժերը ներածին չափով ընդգրկվել երկրի աշխատանքների մեջ։ Երբ բոլորել է մեր համալսարանի 40-ամյակը, Զուբարին, որպես առաջին դասախոսի, տրամադրվել է ամբիոնը՝ ողջունելու «Խորհրդային Միությունը և Արևամանուկը Հայաստանի»։

Այս տողերը, որ նվիրված են Գրիգոր Զուբարին, ճիշտ չի լինի ավարտել, առանց նրա կնոջ՝ տիկին Մարթայի մասին երկու խոսք ասելու։

Մարթա Մահտեսյան, դուստր Մարկոսի, որին սակայն մեծացրել է նրա անզավակ եղբայր Ղուկասն՝ իր կնոջ՝ Շողակաթի հետ։ Մարթան և Գրիգորը հանդիպել են ըստ երևույթին հայկական ակումբներում, որտեղ Գրիգորը ելույթներ էր ունենում։ Մարթան ապրում էր Դոնի Ռոստովում, Գրիգորը՝ Նոր Նախիջևանում, որտեղ գարունն ավելի վաղ էր գալիս ու այն ժամանակ, երբ Դոնի Ռոստովում դեռ մանուշակը ծաղկած չէր լինում, Գրիգորը նրան մանուշակների փնջեր էր տանում։

Հասել է պսակադրության օրը և Մագթաղինեն Մարթային զգուշացրել է.

— Խուզի (Նախիջևանի բարբառով՝ գառնուկս), եկեղեցում դու կհանդիպես քո իսկական ծնողներին։

— Ինչպե՞ս։

Ու նա անում է պատմությունը։

Մարթան ավարտել է Պետրոգրադի Бестужевские Высшие женские курсы։

Այդ դասընթացներն է ավարտել նաև Աշոտ Հովհաննիսյանի կինը՝ Վարյա Քեշեկեզյանը, դարձյալ Նորնախիջևանցի։

Մարթա Զուբարը լեզուներ սովորելու բացառիկ ձիրք է

ունեցել։ Այնքան լավ է իմացել հին հույներեն և լատիներեն, որ համալսարանից հրավեր է ստացել դասական լեզուների դասընթաց վարելու։ Սիրտ չի արել հանձն առնել։

Երեկոյան ուշ ժամերին, երբ ամուսինը փակվում էր առանձնասենյակում, Մարթան Մարիամին ու Ղուկասին կարդում էր Գոգոլ, Չեխով...

1936-ին առաջին անգամ դատերը տարել է Մոսկվա, այցելել է «Ново Девичье» գերեզմանատունը։ Գնացել է ծաղիկներով։ Մոտեցել է մի շիրմաքարի. «Սա իմ պրոֆեսորն է», հետո մի ուրիշ՝ «Սա էլ իմ պրոֆեսորն է»։ Ասես շոյում էր շիրմաքարը ու հեռանում, թողնելով վրան ծաղիկներ։

Հիմա ո՛չ Գրիգորը կա, ո՛չ Մարթան։ Մարիամը և Ղուկասն իրենց ընտանիքներն ունեն։ Ղուկասը մեր նշանավոր քանդակագործներից է, իսկ Մարիամը կինն է մեր հռչակավոր նկարիչ Հովհաննես Զարդարյանի։

«ԽԱՂԱՂ ԴՈՆ»

1940-ին լույս տեսավ «Խաղաղ Դոնի» չորրորդ հատորը։ Կարդացի ու ցնցվեցի։

1941-ի գարնանն էր, մարտ ամիսը։ Հիվանդ էի։ Ամեն երեկո ջերմություն բարձրանում էր՝ 37.01, 37.02։ Տանեցիները կարծում էին, թե մրսած եմ։ Երբ վեպն ավարտեցի, զգացի, որ այրվում եմ։ 39-ի էր հասել ջերմաստիճանս։ Ռաֆայել Մանվելյանը, որ այն տարիներին գրողների միության բժիշկն էր և հետևում էր հիվանդությանս, վերագրեց վեպի առաջացրած հուզմունքին։ Նա ասաց, թե իրեն հայտնի են ուրիշ դեպքեր ևս, երբ գրքի ցնցող տպավորության պատճառով բարձրացել է հիվանդի ջերմությունը։ Օրեր անցան, իսկ ջերմաստիճանս չիջավ։ Մանվելյանը անհանգստացավ։ Մի օր բերեց իր հետ պրոֆ. Ռ. Գյանջուցյանին, որ հայտնի էր իբրև թոքերի լավագույն մասնագետ, մանավանդ՝ որպես անվրեպ ախտորոշող։ Բուժող բժշկիս և մերոնց ասել էր, թե թոքերի պրոցես է սկսված, ուստիև պետք է մասնագիտական բուժում սկսել, տեղափոխելով ինձ տուբդիսպանսեր, իսկ հետո, հենց որ օրերը տաքանան, տանել Դիլիջան։

Տուբդիսպանսերի գլխավոր բժիշկը Արշա Վարդազարյանն էր: Նոր մարդ էր ինձ համար: Մի օր պրոֆ. Գյանջուգյանն այցի եկավ Արշա Նիկիտիչովնայի հետ ու ասաց, որ ես հուսալի բժշկի ձեռքերում եմ:

Պրոֆեսորը չքննեց ինձ, բավականացավ մի խորհրդով միայն:

— Ես չեմ ճանաչում ձեզ, բայց Գյուլին, ներեցեք, պրոֆ. Գյուլիքևխյանը որոշ բաներ ասել է ձեր մասին, ուստի հարկ եմ համարում զգուշացնել, որ սրված զգացումները հակացուցիչ են ձեզ, ո՛չ խանդավառվել, ո՛չ հիասթափվել, ո՛չ ոգևորվել, ո՛չ էլ հուսահատվել: Պահպանեք ձեր ներքին աշխարհը հանգիստ ու անվրդով: Փորձեցեք անտարբեր լինել: Երիտասարդ եք, կյանքի շատ տարիներ են սպասում ձեզ, այնպես որ, ամենից շատ դուք պետք է շահագրգռված լինեք պահպանել ձեզ:

Արշա Նիկիտիչովնան օրը գոնե մի անգամ այցելում էր ինձ: Իրեն այնպես էր պահում, ասես հասակակիցներ էինք և վաղեմի ծանոթներ:

Մի օր էլ եկավ, ձեռքին գիրք կար:

— Ի՞նչ եք կարդում:

Յույց տվեց՝ «Խաղաղ Դոնի» չորրորդ հատորն էր:

— Կարդացե՞լ եք:

— Այո: Ի՞նչ տպավորության եք:

— Գիրքն ինձ հափշտակեց ու տարավ: Մեծ ուժով է գրված:

Բժշկուհին գնաց, իսկ միտքս կենտրոնացավ վեպի աշխարհի վրա, կյանք առան իմ տպավորությունները, խոհերն ու ապրումները, աչքիս առաջ կանգնեցին Մելեխովն ու Ակսինյան:

Վեպից առա հոդի զգացողություն: Ես հասկացա, որ հեղինակը գրքերով մեծացած մարդ չէ, հոդի մեջ է որոնել ճշմարտությունը և նրա աչքերով նայել կյանքին, մարդկանց, նրանց սիրուն և բախումներին: Ես զարմացած մնացի Ակսինյայի հանդեպ Մելեխովի սիրո վրա՝ առողջ, բնազդական, ոչ մի գռեհկություն: Դա հիմն էր գեղեցկության, կրքի, վայելքի: Դա այն բարձրագույնն է, երբ մարդու մտքով կարող է անցնել, թե դրանից հետո ինքը կարող է և չապրել: Այն զգացումն

է դա, երբ մարդ, ամենաքաղաքակիրթն անգամ զգում է իրեն բնության մաս, բնությունից ներշնչված, երբ երկուսի հանդիպումը շիկացման հասնելով, նրանց դարձնում է մի մարդ, նախաստեղծ կյանքի այն զգացողությամբ, երբ վերանում է աշխարհի չարն ու բարին, ո՛չ աստված կա, ո՛չ սատանա, կա վայելքի այն պահը, երբ դու ես և աստվածը, և սատանան, երբ քո զգացողություններից այն կողմ չկա ոչինչ ու մնում ես զարմացած, թե այդ ինչպես է, որ կրակից չես մոխրանում: Ինձ զարմացրեց նաև Մելեխովի կնոջ սերը՝ հանդուրժող սպասող, համոզված, որ բոլոր մոլորությունները ժամանակավոր են, մշտականն ու հարատևը սիրո այն զգացումն է, երբ կինը կին չէ միայն, այլ քույր ու մայր՝ միաժամանակ: Եթե այդ բազմաշերտ ասեմ, թե բազմերանգ զգացումը կա՝ ուրեմն ինքն է այն վերջին ու հաստատուն նավահանգիստը, ուր հանգրվանելու է թափառումների սովոր նավը: Այս սերը չի մերժում կիրքը, բայց նրա համար դա հետևանք է, ոչ պատճառ: Կիրքը մեծ ու շարժիչ ուժ է, բայց եթե զոհողության ընդունակ չէ, ուրեմն սեր չէ, իսկ եթե սեր էլ է, ապա բարձրագույն արտահայտությունը չէ:

Ես հիացած էի մնացել ոճի պարզության վրա, զարմացնելու, ընթերցողին ցնցելու, տպավորություն գործելու ցանկության կատարյալ բացակայության վրա: Հրաչյան, խոսքը Ներսիսյանի մասին է, հուզական դերասան էր և նրա համար տանջալի էին բեմում գտնվելու առաջին մի քանի րոպեն, նա չգիտեր, թե ինչ անի ձեռքերի հետ, որ ոտքն առաջ դնի, մինչև որ կերպարի թափանցումը հասնում էր մի աստիճանի, երբ ապրումը համակում էր իրեն, ու ինքը Օթելլո էր և ոչ թե Օթելլոյի դերը կատարող արվեստագետ, ու գեղարվեստական բնազդը նրան ճիշտ էր հուշում, թե որ պահին ինչ անի: Ինձ թվում է, որ Շոլոխովն էլ այդպես էր: Բառի, ածականի ճշտությունը ոչ թե որոնումների արդյունք էր, այլ բնական ծնունդ հոգեկան ստույգ կացության:

Ո՞վ կմոռանա Ակսինյայի մահը: Ավելի ճիշտ՝ մահը չէ, այլ այն, որ Մելեխովն իր ձեռքով գերեզման է փորում և թաղում սիրելի էակին: Շեքսպիրյան ուժով գրված տեսարան է դա, որ կարդում ես ազդված, պահի ողբերգական ներգործությունը հասնում է այնպիսի չափերի, որ շունչդ կանգ է առ-

նում, դադարում ես կարդալ... Ահավոր բան. պաշտելի այն կինը, որի հավասարը չկար Մելեխովի համար ողջ աշխարհում, որ սեր էր, համայք ու գեղեցկություն, ամեն ինչ, ինքնամոռացության և վայելքի ինչ վայրկյաններ է պարգևել, և հիմա, նրան, որ տաք է, նույնիսկ չի սառել, ինքը պետք է հողին հանձնի:

Այսպիսի տեսարան մտահղանալու համար՝ մեծ երևակայություն էր պետք ունենալ, իսկ պատկերելու համար՝ հզոր գրիչ:

Հոգեկան աշխարհի վերլուծությունը մրցում է բնավորությունների գեղարվեստական բացահայտման կարողության հետ: Ժողովրդաշունչ գործ է այս վեպը:

«Խաղաղ Դոնը» այն վեպերից է, որ անմահություն է բերում հորինողին և հյուսողին, ինչպես նաև երկրին ու ժողովրդին:

ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐ ԵՄ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ

1940-ի աշնանն էր: Երևի հոկտեմբեր ամիսը: Հրաչյա Գրիգորյանը «Կոմունիստ» թերթի խմբագիրն էր և մի երեկո գրողների, բանաստեղծների ու գրականագետների մեծ խումբ էր հրավիրել խմբագրատուն՝ խորհրդակցելու, թե ով ինչ առաջարկ ունի և ով ինչով կարող է օգտակար լինել թերթն ավելի հետաքրքիր դարձնելու համար՝ պատմվածք, ակնարկ, բանաստեղծություն, գրախոսական, գրական որևէ խնդրի շուրջ հոդված և այլն: Կանչված էի նաև ես: Խորհրդակցության կեսին խմբագրի հեռախոսը հնչեց: Մի երկու րոպե լուռ մնաց Գեղամ Սարյանը, որ ձայն էր խնդրել և իր առաջարկներն էր անում, մինչև Գրիգորյանը կավարտեր հեռախոսով խոսելը: Խմբագիրն ինձ նշան արեց մոտենալու:

— Գնա Կենտկոմ: Սահակ Կարպովիչը սպասում է քեզ:

— Ի՞նչ հարցով:

— Չգիտեմ:

Սահակ Կարապետյանը Կենտկոմի գաղափարախոսական հարցերով զբաղվող քարտուղարն էր:

— Գրական մամուլն իր բարձրության վրա չէ,— սկսեց

նա,— Կենտկոմը որոշել է փոխել խմբագիրներին, նշանակել նոր ու թարմ ուժեր:

Խոսում էր և նայում ինձ, ըստ երևույթին, կամենալով տեսնել, թե իր ասածն ի՞նչ տպավորություն է թողնում վրաս: Ես էլ լսում եմ հանգիստ և նույնիսկ անտարբեր, մտածելով, թե հարցը, որի համար կանչված եմ, հետո է արծարծվելու:

— Որոշել ենք,— առաջ է տանում իր միտքը քարտուղարը,— ձեզ նշանակել «Գրական թերթի» խմբագիր, Գառնիկ Ոսկանյանին՝ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր:

Ա՛յ քեզ անակնկալ: Չէի սպասում: Անկեղծ ասած՝ այնքան էլ սրտովս չէր, քանի որ չէի կամենում հրաժեշտ տալ պետհրատում կատարածս աշխատանքին: Կյանքի կտրուկ փոփոխություններն ինձ միշտ երկյուղ են ներշնչել, բացի այդ ինձ շատ էր զարմացնում և այն, որ երկու ամիս առաջ նույն Կենտկոմի բյուրոն ինձ մեղադրել էր ազգայնամոլության մեջ և հանկարծ այդպիսի առաջարկ: Ինչպե՞ս հասկանալ: Եվ վերջապես, կկարողանա՞մ արդյոք:

Լռությունն, ըստ երևույթին, երկար տևեց:

— Ի՞նչ եք ասում:

— Երկու ամիս առաջ ես ամենախիստ քննադատության եմ ենթարկվել գաղափարական սայթաքումների համար, ինչպե՞ս կարող եմ հիմա գլխավորել գաղափարախոսական այդպիսի պատասխանատու գործ:

Սահակ Կարպովիչը նախապատրաստված էր, որ այդպիսի հարց կարող է ծագել:

— Առավել ևս, պետք է գնահատեք Կենտկոմի առաջարկը: Համարեք մեր առաջարկը ոչ թե անհեռևողականություն, այլ վստահության նշան:

— Ես սիրում եմ հրատարակչական գործը , անկեղծ ասած, չէի կամենա փոխարինել մի այլ, թեկուզ ավելի բարձր պաշտոնով:

— Խմբագիր դառնալով, դուք կշարունակեք ձեր հրատարակչական գործը վարել: Ուրեմն, ինչպես, համաձա՞յն եք:

— Գիտեք ինչ, Սահակ Կարպովիչ, զգացված եմ այս բարձրը վստահության համար, չեմ կասկածում, որ իմ թեկնածությունը դուք եք տվել, բայց թույլ տվեք անկեղծ լինել:

Եթե անխուսափելի է խմբագիր լինելս, ապա կգերադասեի ամսագրի խմբագիր նշանակվել։

Սահակ Կարպովիչն անակնկալի եկավ ու զարմացած նայեց ինձ։

— Ես գիտական աշխատող եմ, գրում եմ, ջնջում, մի ամիս հետո նորից վերադառնում գրածիս։ Գործի մեջ գիտաշխատողը, դուք լավ գիտեք, դանդաղաշարժ է, իսկ Գառնիկ Ոսկանյանը օրաթերթի պատասխանատու քարտուղար է։ Ուզիչուզի միտքը պետք է արագ գործի, վայրկյանների ընթացքում կողմնորոշվի, որոշում ընդունի։ Մի՞թե ավելի ճիշտ չէր լինի, եթե Գառնիկը նշանակվեր «Գրական թերթի» խմբագիր, ես՝ «Սովետական գրականության»։

— Իրավացի եք։ Իհարկե, այդպես ավելի ճիշտ կլիներ։ Բայց հիմա ուշ է, որոշման նախագիծը արդեն համաձայնեցված է առաջին քարտուղարի հետ և ոչինչ փոխել հնարավոր չէ։ Մնում է հաշտվել։

— Ինչ արած։

Տեղիցս վեր կացա։

— Հա՛, մի զգուշացում անեմ։ Կկանչվեք բյուրոյի նիստի՝ հարցի քննարկմանը մասնակցելու։ Գրիգոր Արտեմևիչը կհարցընի ձեզ՝ «Համաձա՞յն եք», կասեք՝ «Այո»։ Հարցումն ունի սոսկ ձևական բնույթ, որովհետև մենք նախապես ենք առնում նոր պաշտոնում նշանակում ստացողների համաձայնությունը և ապա միայն հարցը փոխադրում բյուրո։

Երբ ես արդեն դռան մոտ էի, ձայն տվեց.

— Իմ մեղքն է։ Ինչպես մտքովս չէր անցել։ Ձեմ ներում ինձ։

Ասված էր անկեղծ և կաշառող ձայնով։

Գիշերը քուն չեկավ աչքերիս։ Մտատանջ էի։ Մի կողմից, միանգամայն անկեղծ, չէի ուզում, որ այդ առաջարկն արված լիներ ու ես հանգիստ շարունակեի իմ գործը։ Մյուս կողմից՝ և դարձյալ միանգամայն անկեղծ, շոյված էի հեռանկարից, իմանալով, որ դառնալով «Գրական թերթի» խմբագիր, ուզեհուզեի, գտնվելու էի գրական իրադարձությունների կենտրոնում։

Իհարկե՝ նախընտրում էի ամսագիրը, գիտակցելով հան-

դերձ, որ գործը պետք է կարողանամ կազմակերպել այնպես, որ ամոթով չմնամ Ս. Բայանդուրի խմբագրությամբ ճաշակով և հաջողությամբ լույս տեսնող «Սովետական արվեստ» միամսյա հանդեսի առաջ: Բայց դրա մասին մտածելն իզուր էր, քանի որ ինձ վիճակված էր խմբագրել թերթը և ոչ թե ամսագիրը: Պետք էր համակերպվել այժմյանից: Ու ես սկսեցի մտածել այն մասին, թե ինչ կարելի է անել, որ թերթը հետաքրքրքիր լինի և միաժամանակ ծառայի գրականության առաջընթացին: Ավելին, նույնիսկ սկսեցի մտածել, թե ինչ ուժեր կարող եմ հավաքագրել շուրջս՝ խմբագրական գործը հաջողությամբ առաջ տանելու և հեղինակային որակյալ աշխատակցություն ապահովելու համար:

Հաջորդ օրը հրավիրվեցի բյուրոյի նիստին: Նախասենյակում շատ մարդ կար, բացի նոր նշանակվող խմբագիրներից, հները, գրողների միության պատասխանատու դեմքեր և ուրիշ մարդիկ, որ հրավիրված էին այլևայլ հարցերի կապակցությամբ:

Իմ ազգանունը տվին, ներս մտա: Մատնացույց արին սեղանի մոտ դրված աթոռը: Նստեցի: Սենյակը լեփ-լեցուն էր բազմաթիվ մարդկանցով, բայց ոչ ոքի չէի տեսնում, բացի իմ դիմաց նստած Գրիգոր Արտեմևիչ Հարությունյանից:

Սահակ Կարպովիչը սկսեց խոսել. նկարագրեց գրական մամուլի ներկա վիճակը, վերակառուցման ծրագիր առաջադրեց, առաջարկեց Գառնիկ Ոսկանյանի և իմ թեկնածությունները, որպես ապագա խմբագիրների, բնութագրեց, հիմնավորեց, թե ինչու պետք է գլխավորենք այդ դժվարին գործը:

Գրիգոր Արտեմևիչի ուղղված սիրալիր ժպիտն ինձ գոտեպնդեց:

— Համաձա՞յն եք,— հարցրեց նա:

— Ո՛չ,— թռավ իմ բերանից:

— Ինչո՞ւ:

Զարմանք կար նրա հարցում:

Ես ասացի նույնը, ինչ որ նախորդ օրն ասել էի Սահակ Կարպովիչին, բայց ավելի սեղմ ու ավելի կազմակերպված:

— Իրավացի է,— ինձ հասավ Գրիգոր Արտեմևիչի ձայնը,— պետք է հարգել նրա խնդրանքը։

Ես դուրս եկա բյուրոյի նիստերի սենյակից և հայտնեցի, թե ինչ որոշվեց և գրողների միության ներկայացուցիչների դեմքին կարդացի զարմանք։

Այլևս հետաձգելի ճանապարհ չկար, մնում էր գնալ և գործը կախ աշխատել։

1983

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքն ավարտվում է 1949-ի դեկտեմբերի 31-ի օրով: Դրանից հետո իմ կյանքը թևակոխել է նոր փուլ: Ամենաքիչը երկու գրքի նյութ կա, բայց կգրե՞մ, թե չէ, չգիտեմ:

Ես Գիտությունների ակադեմիայի աշխատող եմ, ինձ վրա է դրված արվեստի ինստիտուտի գլխավորումը: Բացի դա՝ ես հետազոտական կյանքի պահանջ ունեմ, վաղուցվա փափագ՝ գրել մենագրություն՝ «Փափազյան», նրա կյանքն ու գործը: Գրել եմ «Ադամյան», նաև «Սիրանույշ»: Եթե այս մեկը էլ անեմ, կստացվի եռագրություն մեր մեծագույն ողբերգակների մասին: Ունեմ և ուրիշ ծրագրեր՝ ուզում եմ վերադառնալ Ադամյանին:

Ո՞րն անեմ, որը՝ ոչ:

Ինստիտուտը կլանում է ժամանակս, մի քանի անգամ որոշել եմ հրաժարվել զբաղեցրածս պաշտոնից, բայց դժվարացել եմ: Ես պատրաստի ինստիտուտ ղեկավարելու չեմ եկել: Դա իմ ստեղծած ինստիտուտն է, իմ երկրորդ տունը: Բայց կրկնում եմ, ինստիտուտը կլանում է ժամանակս: Այս երեսուն և ավելի տարիների ընթացքում մեկ անգամ չէ, որ դառնացել է հոգիս, բայց տեսել եմ նաև մեծարանք, պատիվ, արժանացել բարձր տիտղոսների: Իմ ամենամեծ բավարարությունը, սակայն, եղել է այն, որ ես պաշտոնս համարել եմ բախտավորություն, որը հնարավորություն է տալիս ուրիշների կյանքում լինելու: Եվ այդ ուրիշները մեծ մասամբ, երբեմն չեն էլ հասկացել, թե ինչ է արվել իրենց

համար։ Վշտացել եմ, բայց շարունակել եմ լինել ուրիշների կյանքում։

Իմ կյանքի այս շրջանը, մանավանդ վերջին տարիները երկու բնորոշ հանգամանք ունեն։ Եթե առաջ բոլոր հավաքույթներում ամենակրտսերը ես էի, ապա այժմ գրեթե բոլոր հավաքների ավագն եմ։ Վերջապես, առաջ սխալներս շատ էին, ճիշտ քայլերս սակավ, հիմա երևի հակառակն է՝ սխալներս են սակավաթիվ, ճիշտն է շատ։

Մնում է ինձ ասել, որ «Ինքնապատումի» բոլոր չորս գրքերն էլ գրվել են հիվանդանոցում, ինչպես նաև հիմա գրվող այս տողերը, ամառվա ամիսներին՝ Նորքում և Պիցունդայում։ Բայց ինձ հասնող արձակուրդը տարվա տասներկու ամիսներից հուլիս և օգոստոսն են, բոլոր դեպքերում՝ երկուսն են միայն։ Ես էլ երիտասարդ չեմ, շուտով յոթանասունհինգ եմ բոլորելու։ Իսկ այն, ինչ ծրագրում եմ անել, պահանջում է նվազագույնը մի քանի տարվա առույգ կյանք։

Ես ո՞րն անեմ՝ «Ինքնապատումը» շարունակեմ, թե իմ այս գործերը։ Երկուսն էլ իմ սրտի ձայնն են, բայց սրտի ձայնի կողքին կա նաև պարտքի զգացում։

Ո՞րն անեմ ու ե՞րբ։

Ուրեմն՝ թող օրհնված լինի կյանքը։ Երևի ճիշտն այն է, ինչ լինում է։

ՊԱՏԵՐԱԶՄԸ...

Պատերազմի լուրը տարածվեց Երևանում՝ ինչպես ամպրոպի ճայթյուն։

Երևան քաղաքի մթնոլորտը պատերազմը հայտարարելու օրից միանգամայն փոխվեց։ Մարդկանց դեմքերն ունեին մտահոգ արտահայտություն։ Շատերը, մանավանդ տարիքով մարդիկ, դատողություններ էին անում.

— Գերմանացուն չեք ճանաչում, կազմակերպված ու կարգապահ ժողովուրդ են, իսկ պատերազմի ժամանակ դա է կարևոր։

— Ա՛յ մարդ, ինչ եք ասում, Նապոլեոնն ինչ արեց, որ Հիտլերն ինչ անի։ Վերջը պարզ է։

Խուճապահար մարդիկ էլ են պատահել, դժբախտաբար։ Կանայք գործի անցան, որ ռազմաճակատ մեկնած ամուսինների, եղբայրների ու զավակների տեղը թափուր չմնա։ Շատ կանայք էլ, նաև աղջիկներ, տանը նստած՝ ռազմիկների համար գուլպա էին գործում։

Մի խոսքով բնավորությունների և ոգու փորձության տարիներ էին։

Մեր շատ գրողներ կանչվեցին դինկոմիսարիատ՝ Վախթանգ Անանյան, Համայակ Սիրաս, Հրաչյա Հովհաննիսյան, Գևորգ Հայրյան, Գուրգեն Բորյան, Գարեգին Բես, Սերգեյ Պայազատ, Քրիստափոր Թափալչյան, Խաչիկ Հրաչյան, Հարություն Մկրտչյան, Սողոմոն Սողոմոնյան, Էդվարդ Թոփյան, Գուրգեն Հովնան և շատ ուրիշներ։

Կանչվածների մի մասն անմիջապես մեկնեց, մի մասը քաղաքացիական զգեստը փոխած դինվորականի, գալիս էին գրողների տուն, երկու-երեք օրից մեկնելու էին։ Քիչ չէին և այն գրողները, որոնք դիմում էին կենտրոնական կոմիտե և ասում, թե կամենում են իրենց գրիչը փոխարինել զենքով։ Մի մասին մերժում էին, ավելի կարևոր համարելով թիկունքում նրանց մնալը, մյուսներին ընդառաջում, սրատեսությամբ հայրենասիրություն համարելով հայրենիքի համար մարտնչելու նրանց վճիռը։ Օրինակ՝ Հրաչյա Քոչար։

Գրողների մի մասն էլ գործեցին որպես ռազմական լրագրողներ։

Թիկունքում մնացած գրողներից խմբեր էին կազմվում, որոնք մեկնում էին կոլտնտեսություններ, գործարաններ ու ֆաբրիկաներ, ուսումնական հաստատություններ, հետներն ունենալով նաև դերասաններ, երաժիշտներ ու երգիչներ։

Մեզ թվում էր, որ պատերազմը երկար չի տևի, որ մեր երկիրը ռազմականապես հզոր է և երեք ամսից, ամենաշատը կես տարուց հայրենիք ներխուժած թշնամին կշպրտվի հետ։ Առաջին օրերի մեր անհաջողությունները վերագրվում էին պատերազմի հանկարծակիությանը։ Զարմանալի էր, բայց փաստ էր, որ մեր զորքերի նահանջը երկարում էր։

Ծանր վիրավորներին ուղարկում էին թիկունք, որտեղ ամենաշատապ կերպով հոսպիտալների էին վերածվում դպրո-

ցական մեծ շենքերը: Հոսպիտալներում էին լինում գրողական խմբերը արվեստի վարպետների հետ:

Ես «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրն էի և հասկանում էի, որ անհրաժեշտ է վերակառուցվել, նյութերի կեսից ավելին պետք է պատերազմական ոգուն համապատասխաններին, թեկուզև որակի հաշվին:

Նույն վերակառուցումը հրատարակչության մեջ էր: Հիշում եմ, որ Աշոտ Աթանասյանը գերմաներենից թարգմանել էր Լիոն Ֆեյխտվանգերի «Օպենհայմների ընտանիքը» խոշոր գրվածքը, և ես գործի անցնելուն պես որոշեցի ուղարկել տպարան: Մինչև այս կողմ, այն կողմ, հասավ 1939 թվականը: Նոր էին սկսել շարել, թե ձեռագիրը դեռ գրաշարանոցի պահարանում էր, լավ չեմ հիշում, որ Ռիբենտրոպը եկավ Մոսկվա, և կարգադրություն ստացանք հակաֆաշիստական ոգի ունեցող բոլոր գրքերի տպագրության առաջն առնել: Թարգմանության ձեռագիրը տպարանից հետ բերվեց: Եկավ հասավ 1941 թվականը, հունիսի 22-ը, պատերազմը սկսվեց և «Օպենհայմների ընտանիքը» նորից ուղարկվեց տպարան:

Շտապ կերպով հայրենասիրական պիեսներ էին գրվում, աներևակայելի արագությամբ պիեսի էին վերածվում «Սամվել», «Գևորգ Մարզպետունի» պատմավեպերն ու բեմ հանվում:

Համերգային ծրագրերը փոխվեցին:

Նկարիչները մի կողմ դրին իրենց ունեցած վաղեմի մտահղացումները և իրենց պարտքը համարեցին նկարել պլակատներ, պատերազմական տեսարաններ: Գիտության մարդիկ ևս իրենց հիմնարար գործի կողքին սկսեցին գրել հայրենասիրական ոգով գրքույկներ, որոնք փառաբանում էին մեր անցյալ ռազմական փառքը:

Լավ հիշում եմ, որ մոտս եկավ Վահրամ Թերզիբաշյանը և ասաց, թե ինքն ուզում է գիրք գրել՝ «Մեր քաջարի նախնիք»: Ընդառաջվեց, և գիրքը լույս տեսավ 1943-ին Հակոբ Կոջոյանի պատկերազարդումներով:

Բոլորն անխտիր ընդգրկված էին պատերազմական մրթնոլորտի մեջ:

Սովինֆորմբյուրոյի լուրերն հաղորդող Լևիտանի ձայնը,

որ հուժկու էր և խորհրդավոր, անհամբեր էին լսելու և այն պեպքերում, երբ պիտեինք, որ մեր զորքերը շարունակում են նահանջել։

Գերմանացին շարունակում էր առաջխաղացումը, հասնելով երկրի խորքերը... Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից և այլ քաղաքներից էվակուացվում էին ծերունիներ ու պառավ կանայք, իրենց աղջիկների, հարսների, դպրոցական հասակի երեխաների, թոռների հետ միասին։ Ով երեք սենյակ ուներ, մեկը զիջում էր նրանց, ով չորս ուներ, զիջում էր երկուսը։

Մեր տանն էլ ապրեց ազգությամբ հրեա, ուկրաինական գրող Զլատա Կամենկովիչի ընտանիքը, որոնց ինքս բերի երկաթգծի կայարանից։ Լվովից էին եկել։

Հիմնարկներ էին փակվում, հաստատություններ միանում։ «Գրական թերթը» փակվեց։ Փակվեց նաև «Սովետական արվեստը»։ «Սովետական գրականությունը» դարձավ «Սովետական գրականություն և արվեստ»։ Գրականության թանգարանը իբրև ինքնուրույն միավոր դադարեց գոյություն ունենալ, միանալով լեզվի և գրականության ինստիտուտին։ Պատահում էր նաև հակառակը։ 1943-ին կառավարությունը որոշում ընդունեց ստեղծելու Հայկական գիտությունների ակադեմիա։ Ժողկոմխորհի որոշումով սահմանվեց ակադեմիկոսների առաջին կազմը։ Հայագետներից ընտրվել էին Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, որ համամիութենական ակադեմիայի իսկական անդամներ էին, Սանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Գրիգոր Ղափանցյան, Արսեն Տերտերյան։ Առաջին կազմում մի գրող կա միայն՝ Ավետիք Իսահակյան։

Ակադեմիայի առաջին պրեզիդենտը Հովսեփ Օրբելին էր, փոխպրեզիդենտը՝ Վիկտոր Համբարձումյանը։

Ակադեմիայի ստեղծումը խոշոր իրադարձություն էր մեր ժողովրդի կյանքում, այն էլ պատերազմի տարիներին։

Պատերազմի լուրը ստացա Դիլիջանում, որպես թոքախտավոր այնտեղի առողջարանում էի հունիսի առաջին օրերից։ Պետք էր շտապ մեկնել Երևան, առողջարանը որպես այդպիսին դադարել էր գործելուց, այժմ վերածվել էր հոսպիտալի։

Ես չեմ հիշում մի գրող, որ պատերազմի տարիներին մի կողմ քաշվեր, սպասողական դիրքում լիներ, մինչև պատերազմը վերջանար, որ հանգիստ շարունակեր իր գործը: Եթե անուններ տալու լինեմ, ապա պետք է բերեմ գրողների ցուցակը, որոնք իրենց գործուն մասնակցությունը բերին, ամեն մեկն իր խառնվածքի համեմատ, խաղաղասիրտ Գեղամ Սարյանից մինչև անհանգիստ Դերենիկ Դեմիրճյանը:

Այսքանը միայն ասեմ, որ դեռ պատերազմը չսկսած Ստեփան Զորյանը ձեռնամուխ էր եղել «Պապ թագավոր» պատմական վեպը գրելուն: Այդ վեպը պատմական երկարատև հետախուզումների արդյունք էր: Պատերազմի տարիներին գրողը արագացրեց աշխատանքը, որպեսզի կարելվույն չափ շուտ լույս աշխարհ բերի վեպը: Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը» պատերազմական ժամանակների ծնունդ էր որպես վիպական մտահղացում, բայց պատմական նյութի յուրացումը և դրա շուրջ ունեցած մտածումներն երեք տասնամյակի պատմություն ունեին և այդ պատճառով ուշ սկսված «Վարդանանքը» լույս տեսավ ավելի վաղ սկսված և փաստորեն ավարտված «Պապ թագավորից»: Դեր խաղաց նաև այն, որ Զորյանն ըստ իր սովորության խնամում էր ամեն մի նախադասություն, մինչդեռ Դեմիրճյանը կարևոր համարեց ոգին և լեզվական վրիպումներին այդքան նշանակություն չտվեց, նկատի ունենալով ժամանակը:

Թեև ուշ լույս տեսավ, բայց այս նույն ժամանակների, խոհերի և ապրումների ծնունդ էր նաև Նաիրի Զարյանի «Սրա Գեղեցիկ» դրամատիկական պոեմը, որը նույնպես մեր գրականության նշանակալի երկերից է:

Մամուլում լույս էին տեսնում Հրաչյա Քոչարի՝ ռազմաճակատից ուղարկվող պատերազմական ակնարկները: Դրանք կրում էին պատերազմական շունչ, համակված այն ապրումով, որ կարող էր ունենալ կրակների ու բոցերի միջով անցած մարդը միայն: Քոչարի թղթակցությունները ռազմաճակատից այնպիսի պարբերականություն ստացան, որ մեզ համար նրանց ընթերցումը դարձավ կենսական պահանջ: Այդ ակնարկները լի էին պայծառ լավատեսությամբ, ճշմարիտ հայրենասիրությամբ, հաղթանակի խոր հավատով:

Հովհ. Շիրազի վեցատողանի «էքսպրոմտը» չափածո այն

ընդհանրա-պոեմներից է, որ բերնեբերան անցավ, թողեց պայթող ռումբի տպավորություն: Ոչ պակաս նշանակալի էր նաև Նաիրու «Զայն հայրենականը»:

Խանութները դատարկվել էին, ուտելիքը սահմանափակվել: Սպեկուլյացիան գլուխ էր բարձրացրել: Նման երևույթների առաջն առնելու և կարգուկանոն մացնելու նպատակով քաղաքացիներին բաժանվեցին լիտեր «Ա.»և լիտեր «Բ»՝ հաց, շաքար, կարագ ստանալու համար:

Ինձ բաժին հասավ լիտեր Բ-ն:

ԻՄ ԼԻՏԵՐ Բ–Ն ԿԱՄ ԴԱՐՁՅԱԼ ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ես չեմ զբաղվել Թումանյանով, բայց միշտ էլ զգացել եմ Նվարդ Թումանյանի բարի վերաբերմունքը, մանավանդ այն ժամանակ, երբ հիվանդացա թոքախտով: Ջանք էր տալիս ծանոթ բժիշկներին, բերում էր, որ նայեն, ստուգեն: Երբ պատերազմն սկսվեց, և մթերքը սահմանափակվեց, մարդկանց բաժանեցին երեք խմբի՝ «Ա.», «Բ», «Գ»: Ես ընկա երկրորդ խմբի մեջ, որը մատակարարվում էր ըստ լիտեր «Բ»-ի: Խիստ հուզված էր տիկին Նվարդը: Նա զարմանում էր, թե ինչպես կարելի է այդպիսի բաժանումներ անել, նկատի չունենալ մարդկանց առողջությունը, մանավանդ այնպիսի հիվանդների, որոնց համար սնունդը ամեն ինչ է: Առևտրի ժողովրդական կոմիսարի մոտ գնաց, ինչ դուներ մփայն չբախեց, որպեսզի իմ լիտեր «Բ»-ն դարձներ լիտեր «Ա.» և չհանգստացավ, մինչև չհասավ նպատակին:

Գրականության ինստիտուտի գործավարը տվեց ինձ հեռախոսափողը:

— Ձեզ հետ խոսում է ընկեր Մարգարյանի քարտուղարուհին:

— Ո՞վ:

— Առևտրի ժողկոմի քարտուղարուհին:

— Լսում եմ:

— Ընկեր Մարգարյանը խնդրում է այսօր ժամը 3-ից հետո գալ իր մոտ: Կարո՞ղ եք:

— Այո։

Տիկին Նվարդին ասացի, որ առևտրի ժողկոմը կանչել է ինձ։

— Տեսնո՞ւմ եք, ընկեր Ռուբեն, թերահավատ էիք։ Հենց այսօր լուծվելու է ձեր հարցը։ Հետո, խնդրում եմ անպայմանն ինձ զանգ տաք և հայտնեք։ Լա՞վ։

Դեռ մի ժամ կար, բայց ես չկարողացա ոչնչով զբաղվել։ Չհասկացա, թե ինչու է այդպես դանդաղ անցնում ժամանակը։

Ժողկոմն ասաց, որ միջնորդություն է եղել իմ լիտեր «Բ»-ն փոխելու լիտեր «Ա»-ի, ինքը մեծ դժվարությամբ ընդառաջ է գնում, նախ, հասկանալով, որ հիվանդ մարդուն պետք է օգնել, երկրորդ՝ հարգել միջնորդներին։ Վերջապես, խնդրում է չտարածել այս փոփոխությունը, որովհետև մի օրինակը իր հետևից կարող է բազմաթիվ օրինակներ բերել։ Իսկ իրենք շատ ու շատ ծանր կացության մեջ են։

Եկա ինստիտուտ՝ Նվարդը չկար։ Զանգահարեցի և հայտնեցի։ Ուրախությանը չափ չկար։

— Շնորհավորում եմ։

— Տիկին Նվարդ, ես գիտեմ, որ ձեզ եմ պարտական, ընդունեք իմ ու մեր տանեցիների անկեղծ շնորհակալությունը։

— Ոչ միայն ինձ։

— Մյուսներին չգիտեմ, ձեզ հայտնելով, հայտնում եմ, ուրեմն, նաև նրանց։

— Ընկեր Ռուբեն, տեսնում եք, որ ամեն ինչ, ի վերջո, լավ է վերջանում։

ԻՆՉՊԵՍ ԵՍ ԹԱՏԵՐԱԳԵՏ ԴԱՐՁԱ

Ես միշտ սիրել եմ թատրոնը, նույնիսկ այնքան, որ ուզեցել եմ դերասան դառնալ։ Այնպիսի դերասաններ, ինչպես Հովհաննես Աբելյան և Վահրամ Փափազյան, իմ պաշտամունքն էին պատանեկության տարիներից։ Ես երկրպագու էի Հասմիկի, Օլգա Գուլազյանի և Սրուս Ոսկանյանի։

Ես պատկերացնում էի ինձ դերասան նույնիսկ այն ժա-

ժանակ, երբ կարծես հաշտվել էի թատրոնից հեռանալու մտքի հետ: Ու ամեն անգամ, երբ այդպիսի դեպքերում փակում էի աչքերս, ինձ տեսնում էի Համլետի դերում. ներկայացումը վերջացել է, ու ես բեմի վրա կանգնած եմ խոնարհ գլխով, իսկ հանդիսատես բազմությունը ոտքի կանգնած ծափահարում է, ծաղիկներ նետում բեմ, գոչում՝ «բրավո՛»: 1933-ին, Թիֆլիսում մի քանի թատերախոսական գրեցի, բայց ոչ իմ ստորագրությամբ, այլ՝ «Թատրոնասեր»: Մի խոսքով սիրտս չէր կարվում թատրոնից:

Երևանում հաճախում էի բոլոր նոր ներկայացումներին, երբեք բաց չէի թողնում Փափազյանի հյուրախաղերը: Ներկա եղա Երևան հյուրախաղերի եկած Բաքվի հայ թատրոնի երեք ներկայացմանն ու Ժասմեն-Կրուչինինայի խանդավառ երկրպագուներից էի: Սակայն սիրտ չէի անում թատրոնի մասին ո՛չ հոդված գրել, ո՛չ էլ գնալ ու մասնակցել որևէ նոր բեմադրության քննարկմանը, թեև թատերական շատ ասուլիսների եմ ներկա եղել, ուշադիր լսել, թե ով ինչ է ասում:

Ես ինձ գրականության մարդ էի համարում: Արդեն հեղինակ էի երևի տասը-տասներկու հոդվածի, գրքերի առաջաբանների, Աբովյանով էի զբաղվել, թեկնածուական դիսերտացիա պաշտպանել: Ունեի երկու այնպիսի պաշտոն, ինչպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Հայպետհրատում, և «Սովետական գրականություն» ամսագրի պատասխանատու խմբագիր, որ ինձ հնարավորություն էին տալիս գրական իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը լինելու: Համեստությունը մի կողմ դրած՝ հաջողություն էլ ունեի: Ճիշտ է, «Վերք Հայաստանիի» առաջաբանի համար խստագույնս քննադատվել էի և այն գրողներն էլ, որոնց ստեղծագործությամբ այնքան էլ ոգևորված չէի առանձնապես, գրքերին ընթացք չէի տալիս, ինձ հայտարարում էին ոչ ավել ոչ պակաս խորհրդային գրականության գաղափարական հակառակորդ, մի որակավորում, որ եթե տարիներ առաջ արվեր, կարող էր և ճակատագրական լինել ինձ համար: Բայց այդ բոլորով հանդերձ, չեմ կարող չարձանագրել նաև, որ ինձ սիրում, գնահատում և վստահում էին գրական շատ հեղինակություններ:

Այն պատմությունը, որ ես հիմա անում եմ, վերաբերում է 40-ական թվականների սկզբներին։

1941-ի վերջերին, հաջորդ տարվա սկզբներին քաղաքում լուր տարածվեց, որ Սունդուկյանի անվան թատրոնը պատրաստվում է բեմադրելու «Համլետը»։

Այս լուրը տարբեր արձագանքներ ունեցավ. ոմանք զարմացած էին, թե ինչ ժամանակ է «Համլետ» ներկայացնելու, երբ երկիրն ահեղ պատերազմի մեջ է։ Ոմանք էլ տարակուսում էին, թե ո՞վ է Համլետ խաղալու, թատրոնի այժմյան կազմում, չտեսնելով հարմար թեկնածու այդ դերի համար։ Գուցե Հրաչյա Ներսիսյա՞նը։ Մեծ չէ՞, արդյոք։ Հետո, երբ հայտնի դարձավ, որ Համլետ խաղալու է Վաղարշյանը, մարդիկ շտապեցին չարախոսել, ինքը թատրոնի ղեկավարն է, ինչ ուզում է, այն էլ անում է։

Փողոցում պատահեցի Արուս Ոսկանյանին. ուզեցի իմանալ իր կարծիքը։ Նա էլ հոռի էր տրամադրված։ Ասաց, թե Վաղարշի դերը չէ, զուր է փորձում, մի խոսքով տպավորությունն այն էր, թե թատրոնում հիմա ձեռնամուխ են եղել հանդուգն քայլի, որը հայտնի չէ, թե ինչով կվերջանա։ Սարգիս Մելիքսեթյանը հեռատեսաբար լուռ էր։ Արմեն Գուլակյանը, որ թատրոնին մոտիկ կանգնած մարդկանց հայտնի էր որպես Վաղարշյանի հակառակորդ, կանխագուշակում էր ձախողում։ Լևոն Քալանթարը բացահայտ չէր խոսում, բայց նրա ժպիտն ասում էր, թե ավելի լավ է հիմիկվանից զուշակություններ չանել, մի քիչ էլ համբերություն ունենանք և սպասենք։

«Համլետի» առաջին ներկայացումը, որի հանդիսատեսներից էի, տեղի ունեցավ փետրվարի, հիմա չեմ հիշում, թե քանիսին։

Տուն վերադարձա վիրավորված սրտով։

Հարցն այն չէր, որ Վաղարշյանի մարմնավորած Համլետը չափից ավելի վճռական էր։ Գուցեև, նկատի ունենալով պատերազմական ժամանակներն, այդպես էլ հարկավոր էր։ Շատ հնարավոր է, թեև, խոստովանություն լինի, այն ժամանակ ես այդպես չէի մտածում։ Հարցն այն է, որ Վաղարշյանը մարմնորող Համլետ էր, բայց ոչ փիլիսոփա, իր նպատակին ձգտող Համլետ էր, որը կասկածներ չուներ, ոչ էլ երկվու-

թյուն։ Եվ առավել համոզչության հասնելու նպատակով դերասանը անխնա կրճատել էր Համլետի խոսքի դրեթե բոլոր այն մասերը, որտեղ նա կասկածում է կամ երկմտում։ Միայն չէր համարձակվել «Լինել, թե չլինել» մենախոսությանը ձեռք տալ, ըստ երևույթին մտածելով, թե դա արդեն կարող է չափազանց լինել։ Ճիշտ է, «Համլետը» և Շեքսպիրի մյուս ողբերգությունները չէին ներկայացվում առանց տեսարաններ, մասեր կրճատելու, որպեսզի ներկայացումը չերկարաձգվի։ Սա դարձնելով պատրվակ, Վաղարշյանը կրճատել էր բոլոր այն մասերը, որոնք հակասում էին Համլետի իր ըմբռնմանը։ Եվ ստացվել էր միակողմանի Համլետ։

Ներկայացումը վեճերի տեղիք տվեց. դերասանն ուներ պաշտպաններ, ուներ նաև հակառակորդներ։ Պաշտպանների թվում էր օրինակ Մարտիրոս Սարյանը, նաև ուրիշ հայտնի մարդիկ։ Հակառակորդներից էին Ավետիք Իսահակյանը և ուրիշներ։ Իմ տպավորությունն այնպես էր, որ քննադատողների թիվն ավելի էր։

«Կոմունիստ» թերթում լույս տեսավ Բաբենչիկովի դրական հոդվածը։ «Խորհրդային Հայաստանում» տպագրվեց թերթի խմբագրի՝ Հովհաննես Մամիկոնյանի՝ լրագրի ամբողջ էջը զբաղեցնող խիստ քննադատական հոդվածը։

Այս երկու հոդվածները վերստին բորբոքեցին եղած վեճերը։

Չէր անցել մի ամիս էլ, որ Համլետի դերով բեմ բարձրացավ Գուրգեն Ջանիբեկյանը։ Այս Համլետը Վաղարշյանի հասկացած ու խաղացած Համլետի հակապատկերն էր։

Վաղարշյանը զրույցի ժամանակ ասաց, թե Ջանիբեկյանը երիտասարդական տարիներին տեսել է Հովհաննես Ջարիֆյանին և նրա Համլետի տպավորության տակ է խաղում։ Ես դժվարանում եմ ասել, թե Վաղարշյանը ճիշտ էր, թե ոչ, բայց որ Ջանիբեկյանի Համլետը Վաղարշյանի դեմ ուղղված բանավիճային խաղ էր, վեր էր կասկածից։

Վաղարշյանի ձեռքին շատ հաճախ կարելի էր տեսնել դաշույն։ Ջանիբեկյանի ձեռքին՝ դիրք։ Երբ Համլետը վախճանվում էր, Վաղարշյանը խնդրել էր, որ կրծքին դաշույն դնեն՝ իբրև մարտնչող կյանքի խորհրդանիշ։ Ջանիբեկ-

յան-Համլետի կրծքին գիրք էին դնում. փիլիսոփա էր, գրքից անբաժան մարդ:

Վաղարշյանը «Լինե՞լ, թե չլինել» հայտնի մենախոսության ժամանակ քաշվում էր մի կողմ և կիսապառկած էր ասում: Պարզ երևում էր դերասանի նպատակադրումը՝ ձեռք առնել ամեն միջոց, չեզոքացնելու Համլետի այդ նշանավոր խոսքը, մի խոսքով հասնելու այն բանին, որ իբր Համլետի առաջ «լինել չլինելու» հարց չի էլ կանգնած: Ջանիբեկյանը հայտնվում էր բեմի խորքից, գիրքը ձեռքին, դանդաղ գալիս էր բեմառաջք, կանգնում կենտրոնում և վշտահար ձայնով ասում մենախոսությունը: «Լինել, թե չլինել» մենախոսությունն ասելիս, Վաղարշյանն առաջին տողն ասում էր շուտասելուկի նման, առանց դադար տալու, անտեսելով Դանիմարքայի իշխանի հարցադրումը, հետևապես կարճ դադարն անհրաժեշտ էր հակադիր վիճակները իրարից բաժանելու համար: Ջանիբեկյանն էլ, հակադրվելով Վաղարշյանին, ասում էր՝ «Լինե՞լ», կանգ էր առնում, մի երկար դադար տալիս, հետո ասում էր՝ «Թե», կրկին դադար էր տալիս, ճիշտ է, ավելի կարճ և ապա միայն ասում էր՝ «Չլինել»:

Ջանիբեկյանի խաղն ուներ պաշտպաններ, օրինակ, Հովհ. Մամիկոնյան, մի փոքր ավելի ուշ՝ Ի. Ալտման, և այնուամենայնիվ, ուշադրության կենտրոն չդարձավ՝ անկարող լինելով փարատել Վաղարշյանի շուրջ առաջացած վեճը:

Բունդ թատերասերները պահանջ էին զգում ներկայացումը երկու անգամ նայել, տեսնել և՛ մեկի Համլետը, և՛ մյուսինը և նոր միայն կողմնորոշվել: Երկուսն էլ կողմնակիցներ ունեին:

Ես «Համլետը» մի քանի անգամ տեսա: Այն վեճը, որ ունեի Վաղարշյանի հետ, հենց այնպես ինքս իմ մեջ, ստիպում էր նորից ու նորից դիտել՝ ճշտելու և համոզվելու համար, սխա՞լ թե՝ ճիշտ:

Մի քանի անգամ թատրոնում պատահել եմ Գուրգեն Ջանիբեկյանին, որ այդ ժամանակները Հայկական թատերական ընկերության նախագահն էր և իմ հին ու լավ բարեկամը: Ոչ մի անգամ չհարցրեց, նայե՞լ եմ իր Համլետը, թե ոչ, բայց հաճույքով լսում էր Վաղարշյանի խաղի հասցեին արվող իմ քննադատական դիտողությունները և հավանություն

տալիս: Ինձ թվում էր, որ նա չէր հարցնում իմ կարծիքն իր խաղի մասին, ենթադրելով, թե իրեն հավանում եմ, քանի որ ինձ իր արվեստակից ընկերոջ խաղը չէր համոզում: Նրանց լուսաբանությունները միմյանց հակառակ էին, գործում էր մի պարզ տրամաբանություն՝ եթե նրան չի հավանում, ուրեմն, պետք է որ ինձ հավանի: Մինչդեռ բնավ այդպես չէր: Ես Վաղարշյանի հետ վեճ ունեի: Ջանիբեկյանի խաղն ինձ վրա տպավորություն չէր գործել, ըստ իս նա պարզապես չպետք է խաղար այդ դերը:

Հայկական թատերական ընկերությունը կազմակերպեց «Համլետ» ներկայացման քննարկումը:

Մայիս ամիսն էր:

Ես մտադիր չէի խոսք ասելու, բայց ցանկություն ունեի ներկա լինել և լսել, թե ով ինչ է ասում: Բայց հանգամանքները դասավորվեցին այնպես, որ ես ելույթ ունեցա, որը և ճակատագրական եղավ իմ կյանքի հետագա ընթացքի համար:

Քննարկման նախորդ օրը թատրոնում էի և դերասանական օթյակում հանդիպեցի Գուրգեն Ջանիբեկյանին:

Հարցրի՝

— Վաղը շա՞տ մարդ է խոսելու:

— Շատ: Այնքան, որ երևի չկարողանանք մի օրում ավարտել:

— Ուրեմն հետաքրքրությունն այդքան մե՞ծ է:

— Այո, շատ մեծ է:

Հետո դարձավ ինձ.

— Ռուբեն, խոսողների ցուցակում դու էլ կաս:

— Ես ցանկություն չեմ հայտնել:

— Բայց դու ասելիք ունես: Եթե հրաժարվես, ինձ անհարմար վիճակի մեջ կդնես: Հարցրին, ասի, թե ինքն է խնդրել:

— Ինչո՞ւ ես այդպիսի բան արել, Գուրգեն:

— Դա պարզապես բերանիցս թռավ: Ներողամիտ կլինես:

Կրկնում եմ, իմ մտքով չէր անցել ելույթ ունենալ, բայց Գուրգենի ասելուց հետո, ասես, թե մի ներքին ձայն ինձ շըշընջաց՝ «Իսկ ինչու չէ, եթե Գուրգենն ասում է, նշանակում է արժեք է տալիս իմ տպավորություններին, որոնցից մի քա-

նիսին նա իսկապես ծանոթ էր»։ Ու ես հակվեցի իմ խոսքն ասել։ Ըստ երևույթին, դերասան ընկերոջս հորդորների ազդեցության տակ վստահություն եկավ վրաս։

— Գուրգեն, եթե պնդում ես, որ ես անպայման խոսեմ, ապա այդ դեպքում թող ինձ ձայն տան երկրորդ օրը։

— Լավ։

— Իսկ եթե բան է, այնպես պատահի, որ վաղը սկսվի, վաղն էլ վերջանա, ուրեմն, ես չեմ խոսի։ Լա՞վ։

Քննարկումը, մինչև հիմա էլ չգիտեմ, թե ինչու, կազմակերպված էր Սունդուկյանի անվան թատրոնի հսկա դահլիճում, օրը ցերեկով։ Շատ մարդ էր եկել, «Համլետ» ներկայացման հանդիսատեսներից ոչ պակաս։

Վերջապես քննարկումն սկսվեց։

Զեկուցողը Հովհաննես Մամիկոնյանն էր։ Նա խոսեց, երևի, մի ժամի չափ՝ հասարակությանը ներկայացնելով տպագրված հոդվածի ընդարձակված տարբերակը։ Հավաքված բազմությունը, որտեղ քիչ չէին նաև Մամիկոնյանի համալսարանական ուսանողները, ուշադիր լսեցին զեկուցումը։ Մամիկոնյանը համալսարանում դասախոսում էր արևմտաեվրոպական գրականություն։ Նա լավ էր տիրապետում նյութին, նրա շուրջ եղած գրականությունը քաջ հայտնի էր իրեն։ Պարզ խոսք ուներ, միտքը վերացական չէր գործում, իր միտքը հաստատում էր փաստեր և օրինակներ բերելով, բայց նրա խոսքի գլխավոր հմայքը կուռ տրամաբանությունն էր, որով նրա ասածը համոզիչ և ունկնդրին անառարկելի էր թվում։

Դահլիճը Մամիկոնյանի կողմն էր։

Ձայնը տրվեց Վաղարշ Վաղարշյանին, որը նշանակված էր հարակից զեկուցող։ Արտիստը երկար չխոսեց, կարճ ձևակերպեց իր մոտեցումը, բայց, ինչպես հետո պարզվեց, Վաղարշյանը հանձն էր առել հարակից զեկուցման պարտավորությունը ոչ այնքան զեկուցողից պաշտպանվելու կամ նրան հակադրվելու նպատակով, որքան Մամիկոնյանին վարկաբեկող մի փաստ հրապարակելու համար։

Ես չգիտեմ, թե ովքեր, բայց Մամիկոնյանին չսիրող և ընդհակառակը՝ Վաղարշյանին համակիր մարդիկ տրամադրել էին արտիստին նյութեր, որ իբր «Համլետ» ներկայաց-

ման առիթով գրված թատերախոսական հոդվածում նա սեփականել է Կոգանի մտքերը և այլն:

Մի պահ քննարկման մթնոլորտը սառեց: Հետո անսպասելի լուրը ունկնդիրների քննության նյութ դարձավ, անակընկալի եկան Մամիկոնյանի ուսանողները ևս, ըստ երևույթին, մի պահ գտնվելով Վաղարշյանի պայթեցրած ռումբի ազդեցության ներքո, լուռ մնացին, բայց հետո սթափվեցին, իրենց սիրելի դասախոսին ուղղված մեղադրանքը համարելով անձնական վիրավորանք նաև նրա ուսանողների համար, սկսեցին ռեպլիկներ տալ և հարակից զեկուցողի խոսքի վերջին մասը դահլիճի աղմուկի պատճառով լսելի չեղավ:

Հայտարարվեց ընդմիջում: Բոլորն անխտիր քննարկում էին Մամիկոնյանի վրա բարդվածը, թեր ու դեմ կարծիքներ էին հայտնվում: Եվ դուցե այդ ժամանակ ավելի, քան ուրիշ անգամներ, ես զգացի, թե ինչ է բազմություն ասվածը, ինչ է ամբոխը, շատերը չարախնդում էին, շատերն էլ զարմացած էին ու չէին հավատում, մտածում, որ երևի բանավիճային մի հնարանք էր դա, որով Վաղարշյանը կամենում էր մեղմել կամ ի չիք դարձնել քննադատից իրեն հասած հարվածը:

Ես նկատել եմ մի իրողություն. մարդիկ ավելի հաճույքով քննադատություն են լսում, քան՝ գովեստ: Զարմանալի է, տարօրինակ, բայց մարդիկ սիրում են, երբ մեկը մյուսի վրա ցեխ է շպրտում, սիրում են մարդկանց բռնել հանցանքի մեջ, հաճույք են ստանում, տեսնելով, որ նա խեղճացել է՝ «դե, տեսննենք, սիրելիս, ե՞րբ և ինչպե՞ս ես արդարանալու»:

Ընդմիջումն ավարտվեց: Մարդիկ վերադարձան դահլիճ: Սկսվեց մտքերի փոխանակությունը: Երկու տպավորություն կհայտնեմ:

Առաջին. քննարկման մասնակիցները չանդրադարձան Մամիկոնյանի դեմ Վաղարշյանի հարուցած մեղադրանքին, նրանք փորձեցին քննության առնել ներկայացումն ըստ էության:

Երկրորդ. քննարկման կազմակերպիչները հասկացան, որ թատրոնի դահլիճում այդպիսի քննարկում կազմակերպելը

սխալմունք էր, ուստի, որոշեցին, որ հաջորդ նիստը, եթե, իհարկե, երկարաձգվի քննարկումը, անել դրողների տան դահլիճում, որն այնքան փոքր էր, որ հիմիկվա հավաքվածների մի քառորդն էլ ներկա չէր լինի։

Մի լրացում էլ. ելույթ ունեցողներից ոչ ոք Զանիբեկյանի Համլետի մասին չխոսեց։ Ոմանք պարզապես չէին խոսում, ոմանք էլ անհրաժեշտ էին համարում դիմել Զանիբեկյանին, ներողություն խնդրել, որ չեն խոսելու, ասելով թե իրենց հուզողը Վաղարշյանի մեկնաբանությունն է։ Այնպես որ, բստ էության, այդ երկու օրվա հավաքույթը, չհաշված զեկուցողի խոսքը, ամբողջապես նվիրված էր Վաղարշյանին, ու եթե պահպանված լիներն այդ ելույթները, և մեկը կամենա դրանից ժողովածու կազմել, ապա մի գիրք կստացվի։

Վաղարշյանին ոչ ոք պաշտպանության տակ չառավ, բոլորն էլ քննադատում էին, տարբերությունն այն էր միայն, թե ով ինչպես էր ասում, ինչպես էր հիմնավորում իր միտքը։

Գրողների տան հավաքույթը բազմամարդ չէր, նույնիսկ մի քանի աղատ աթոռ կար, բայց ներկա էին մեր այն ժամանակվա գեղարվեստական մտավորականության աչքի ընկնող դեմքերը՝ Ավետիք Իսահակյան և Մարտիրոս Սարյան, Արշակ Բուրջալյան և Լևոն Քալանթար, Արմեն Գուլակյան և Տիգրան Շամիրխանյան, Վարդան Աճեմյան և Արուս Ոսկանյան, Միքայել Մանվելյան և Օլգա Գուլազյան, Գուրգեն Գաբրիելյան և Համբարձում Խաչանյան, Ռուզան Վարդանյան և Խաչատուր Եսայան, Տիգրան Հախումյան և Վահրամ Թերպիրաշյան, Ավետ Ավետիսյան և Գուրգեն Զանիբեկյան, Արման Կոթիկյան և շատ ուրիշներ։ Այնտեղ էր նաև Կենտկոմի քարտուղար Սահակ Կարապետյանը, որը քննարկման նախորդ օրը չկար։ Նրա այս անգամվա ներկայությունն ուներ իր պատճառները։ Այդ մասին հետո։ Քննարկման նախագահը Անդրանիկ Շահինյանն էր։

Միտս է մնացել հոգեբան Միքայել Մազմանյանի ելույթը ոչ բուլոջ մանրամասնություններով, այլ իր ռեպլիկով։ Նկատեմ, որ զբաղմունքով հոգեբան լինելով, նա մեկ-մեկ թատերախոսականներ է գրել։ Նա հիշեց Փափազյանի Համլետը, հիացած խոսեց, ասաց, որ դա պատմական-սոցիալական և

հոգեբանական մոտեցման գեղարվեստական խոր վերլուծության դասական օրինակ է: Վաղարշյանը տեղից ռեպլիկ ավեց, թե նա քան տարուց ավելի է, որ խաղում է այդ դերը, իսկ ինքը՝ ընդամենը մի քանի ամիս:

Մազմանյանը չկորցրեց իրեն և շատ հանգիստ պատասխանեց.

— Ընկեր Վաղարշյան, դուք էլ ձեր հարակից խոսքում ասացիք, թե ձեր մարմնավորած խաղը քսան տարվա բազմակողմանի ուսումնասիրության արդյունք է:

Դահլիճը ծիծաղեց: Ընդհանրապես այս երկրորդ հավաքույթը տարբերվեց առաջինից այն տպավորությամբ, որ մարդիկ եկել էին միմյանց հասկանալու: Մամիկոնյանը լուռ նստած էր և իր համար նշումներ էր անում պատասխան խոսք ասելու նպատակով: Վաղարշյանը լուռ լսում էր, երբեմն դեմքին ժպիտ, որի միտքը գոնե ես թարգմանում էի այսպես, որ ինչ ուզում եք, ասեք, մեկ է, ես մնում եմ իմ համոզման: Ջանիբեկյանի դեմքին, հակառակ իր անմիջական խառնվածքին, խաղաղ արտահայտություն կար և չկար վրդովմունք, թե ինչու իր մասին չեն խոսում: Ռեպլիկներ լինում էին մեկ-մեկ, բայց դրանք նյարդային չէին դարձնում մթնոլորտը:

Գալով ինձ, անկեղծորեն խոստովանելու եմ, որ թեև պատրաստ էի խոսելու, բայց տատանվում էի՝ խոսե՞լ թե չխոսել, հարցի լուծումը թողել էի պատահականության:

Ես իսկապես պատրաստ էի, որովհետև քննարկման երկու հավաքույթները միմյանցից բաժանված էին մի շաբաթով, ես հնարավորություն ունեի միտքս կազմակերպել հնարավորին չափ լրջորեն: Ամեն մի խոսողին, ինչպես քննարկման առաջին օրը որոշվեց, տրվում էր քսան րոպե ժամանակ, խնդրելով դրա սահմաններից չանցնել: Ես նախագահին երկտող ուղարկեցի, խնդրելով ինձ կրկնակին տալ, գրելով, թե ասելիքս շատ է, վախենում եմ չկարողանամ մտքերս ամփոփել այդքան ժամանակում: Ստացա բացասական պատասխան: Ձայնը տվեցին Ջանիբեկյանին, բայց նա խնդրեց իրեն մի փոքր ուշ ձայն տալ, նախագահն ասաց՝ կամ հիմա, կամ երբեք: Ջանիբեկյանն ասաց, թե ինքը հրաժարվում է և, անկեղծ ասած, ինձ այնպես թվաց, թե

նրա ձայնի մեջ վիրավորվածության շեշտ կար։ Ձայն տվին մի ուրիշի, հիմա միտս չէ, ում, որը խոսեց, հետո կարծեմ Գուլակյանին ձայնը տրվեց, բայց նա հայտնեց, որ չի կամենում արտահայտվել։ Ես, որ առաջին կարգումն էի նստած, կես լուրջ-կես կատակ, դիմեցի նախագահին.

— Հրաժարվողների ձայնը հավելեք իմ ելույթին, ես խոսեմ։

Կարծում էի, թե կմերժվեմ, բայց նախագահը հարգեց խնդրանքս և անմիջապես ձայն տվեց ինձ։ Ես, խոստովանությյուն լինի, հուզված էի։ Փաստորեն առաջին անգամն էր, որ թատերական հարցերի շուրջ արտահայտվելու էի, այն էլ այնպիսի հարցի քննարկման շուրջ, ինչպիսին «Համլետի» բեմադրությունն է և այնպիսի մարդկանց ներկայությամբ, որ մեր գրականության և արվեստի աշքի ընկնող դեմքերն էին։ Թե ինչ ասի՝ չեմ պատմի այստեղ, քանի որ ելույթս հրապարակված է։ Այսքանն ասեմ, որ ինձ լսում էին ուշադիր, նույնիսկ լարված։ Դա բացատրում եմ նրանով, որ ես, որպես գործող անձ, այդ լսարանի համար նորություն էի։ Նորություն էր ոչ այնքան իմ անձը, որ կարող էր հայտնի լինել, հենց թեկուզ իմ հոդվածների, վերջապես, զբաղեցրածս պաշտոնների շնորհիվ։ Նորություն էի որպես թատերական հարցերի քննարկման մասնակից։ Ջէին սպասում, չէին կարծում և հանկարծ ասպարեզ է գալիս մեկը, բերելով իմացություններ, խոսելու շնորհք։ Եթե սրա վրա գումարենք և այն, որ Վաղարշյանի դեմ ուղղված իմ քննադատական խոսքն ունկնդիրների մեծ մասի սրտովն էր, միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչու ներկա գտնվողները, ինչպես օրինակ, նույնիսկ Սարյանը, իմ ելույթն ընդունեցին լավ։

Ես հիմք ունեի այդ տպավորությանը լինելու հենց այն պատճառով, որ նախագահը չընդհատեց ինձ, մանավանդ որ ես խոսեցի շուրջ երկու ժամի չափ։ Ոչ մի ռեպլիկ չեղավ։ Եվ հետագայի արձագանքները եկան հաստատելու իմ այդ տպավորությունը, որը արձանագրեցի ես այստեղ որպես իմ կյանքի գլխավոր դեպքերից մեկը, խախտելով համեստության ամենատարրական պահանջները։ Հուսով եմ, որ ընթերցողս, հասկանալով ինձ, կգտնվի ներողամիտ։

Վերադառնանք ասուլիսին։

Իմ ելույթից հետո մտքերի փոխանակությունը չշարունակվեց, ավելի շուտ՝ ընդհատվեց։ Մամիկոնյանին, որ զեկուցողն էր, ձայն չտրվեց իր առարկությունները անելու։ Եվ դա, ամենայն հավանականությամբ, համաձայն Սահակ Կարապետյանի պահանջի, որ իր վրա վերցրեց քննարկումն ամփոփելու պարտականությունը։

Ես անհրաժեշտ եմ համարում ասել, որ քաղաքի կուսակցական շրջաններում կար անբավականություն «Համլետի» քննարկման շուրջ։

— Ինչո՞վ են զբաղված մեր արվեստագետներն ու տեսաբանները։ Մի կերպ հանդուրժեցինք, որ երկրի համար այսպիսի ծանր օրերին «Համլետ» են բեմադրել ու հիմա էլ, բան ու գործ թողած, երկու օր, պատկերացնո՞ւմ եք, երկու օր ժամերով ջուր են ծեծում՝ Վաղարշյանը ճի՞շտ է մեկնաբանել արքայազնի կերպարը, թե՝ ոչ։

— Ինչ է, դուք բան գործ չունեք, ինչ է, դուք խիղճ չունեք, քաղաքացիության զգացում չունեք։ Կերչում ողբերգություն է տեղի ունեցել, մեր հանրապետության շատ տներում լաց ու շիվան է, իսկ դուք ինչո՞վ եք զբաղված։ Մի՞թե չեք հասկանում, որ ամեն բան իր ժամանակն ունի։ Բա հիմա դրա՞ ժամանակն է։

Ես չեմ կարծում, թե այս դիտողությունները, որոնց անկեղծ հուզմունքը, կասկածի տակ չեմ առնում, ճիշտ է։ Եթե այդպես լիներ, մեր կառավարությունը 1943-ին որոշում չէր կայացնի Հայաստանում Գիտությունների ակադեմիա հիմնելու մասին։ Եթե այդպես լիներ՝ 1944-ին Երևանում չէր կայանա Մոսկվայից արտոնված Շեքսպիրյան համամիութենական փառատոնը։

Սա էլ իր նպատակներն ուներ ապացուցելու, որ մեր կյանքի ամենածանր պայմաններում անգամ հոգևոր կյանքը չենք դնում մի կողմ, ձեռնամուխ ենք լինում նոր ու մեծ գործերի, ինչպես հայկական ակադեմիայի ստեղծումն է, որի ապագա բարգավաճման հանդեպ հայրենի ժողովուրդը, կուսակցությունն ու կառավարությունը կասկած չունեն։ Այսպես կարող է վարվել թեկուզև ծանր վիճակում գտնը-

վող այն երկիրը, որ իր վերջնական հաղթանակի նկատմամբ ոչ մի վարանում չունի:

Ասացի, որ այս քննարկումը ճակատագրական եղավ ինձ համար: Ինձ շատերը մոտեցան և դրվատանքի խոսքեր ասացին. Արուս Ոսկանյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, անգամ Վաղարշ Վաղարշյանը, Սարգիս Մելիքսեթյանը, Միքայել Մանվելյանը, Լևոն Քալանթարը, Արմեն Գուլակյանը, Միքայել Մազմանյանը, էլ չեմ ասում իմ գրչակից ընկերների մասին: Այս գովեստներն իրենց նշանակությունն ունեցան անպայման: Ես մտածեցի, որ կարող եմ նաև թատրոնով զբաղվել:

Խնդիրն այն է, որ ինձ միշտ կարծել եմ քննադատ և ոչ թե պատմաբան, թեև պատմությամբ ավելի եմ զբաղվել, քան՝ քննադատությամբ:

Գրականության պատմության ուսումնասիրությունը համարում եմ շատ կարևոր գործ, բայց քննադատության համեմատ ավելի կրավորական զբաղմունք: Քննադատությունը միշտ էլ համարել եմ գործուն ասպարեզ: Պատերազմի լեզվով ասած՝ կրակափիծ: Երկուսն էլ կարևոր զբաղմունք են, սակայն էապես իրարից տարբեր: Հեշտ չէ լավ պատմաբան լինել, բայց ավելի դժվար է լավ քննադատ լինել: Պատմաբանները շատ են, քննադատները՝ սակավ: Պատմաբանը պետք է կուլտուրա ունենա, ճաշակ, միտք ու տրամաբանություն: Բայց ինչ բացատրություն էլ պատմաբանը տա «Քաոսին», «Քաոսը» ժամանակի քննությունը բռնած գործ է: Իմ խոր համոզումով «Քաոսի» քննադատին է դժվար եղել, որովհետև նա է որոշել վեպի կենսունակությունը, այն, թե այսօր հաջողություն ունի, իսկ վա՞ղը, տարինե՞ր հետո... կմնա՞, թե կմոռացվի: Եվ հենց այդ ժամանակ էլ որոշել է, որ «Քաոսը» հայ գրականության պատմությանն է պատկանելու: Սա է քննադատի խորհուրդը:

Ալեքսանդր Ծատուրյանը մեծ հաջողությունների չի հասել, բայց ապագայում, շատ տարիներ անց, բանաստեղծի հոբելյանից հոբելյան, պատմաբանները գրել են, թե նրան՝ դեմոկրատ բանաստեղծին բուրժուական քննադատները թերագնահատել են: Եվ ի՞նչ... մի պահ լույս է ընկել Ծատուրյանի վրա, նրա շուրջ աշխուժություն է առաջացել, իսկ հե-

տո, մի երկու տարի անց մոռացվել է նորից: Ուրեմն՝ հարցը ո՛չ բուրժուականի մեջ է, ո՛չ էլ թերագնահատության, այլ գրական ճակատագրի ստույգ սահմանման:

Ուրիշ օրինակ հիշեմ:

Գրիգոր Արծրունին «Էվելինա» վերնագրով վիպակ գրեց և ինչ փառաբանությունների միայն չենթարկվեց, բայց ի՞նչ... կարճ ժամանակ անց ոչ ոք չէր հիշում այդ գործը:

Ուրեմն՝ բժշկական լեզվով ասած՝ քննադատը պետք է լինի դիագնոստիկ, ախտորոշող:

Պուշկինի օրոք ապրել է Բեննեդիկտով ազգանունով բանաստեղծ: Մեծ հաջողություն է ունեցել ժամանակին: Բայց նրա առիթով Բելինսկին արտահայտվել է խիստ, ասել է, որ չի ապրի, այսօր կա, վաղը մոռացվելու է: Այդպես էլ եղել է: Նույնիսկ Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի փորձերը, Բեննեդիկտովին նոր կյանք հաղորդելու, հաջողությամբ չպսակվեցին: Մի փորձ էլ արվեց ավելի ուշ, դարավերջին, Մերեժկովսկին Բեննեդիկտովին հռչակել է ռուս սիմվոլիստների նախահայր, բայց դա էլ չի օգնել:

Ուրեմն՝ Բելինսկին իրավացի էր հակառակ Մերեժկովսկու դժգոհության, հակառակ Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի նման մարդկանց այն հայտարարության, թե Բեննեդիկտովի նկատմամբ իրենց ուսուցիչը սխալ է եղել...

Հայ գրականության պատմության մեջ հայտնի է Նիկոլ Աղբալյանի թափանցման անզուգականությունը:

«Երգեր ու վերքերը» լույս տեսնելուն պես՝ Աղբալյանի հոդվածը «Մուրճում» ստույգ որոշել է Իսահակյանի ոչ միայն այդ ժամանակների, այլ ապագա կյանքի: Լույս են տեսել «Մթնշաղի անուրջները» և Աղբալյանը «Հորիզոնում» ողջունել է ճշմարիտ բանաստեղծի ասպարեզ գալը: Եվ, վերջապես, Չարենցի առաջին գործերին ծանոթանալով, նույն Աղբալյանը իր դասախոսության ժամանակ հայտարարել է, թե հայոց բանաստեղծության երկնակամարի վրա նոր աստղ է երևացել:

Իսահակյան, Տերյան, Չարենց...

Սրա վրա կարելի է գումարել նաև Ստ. Զորյան և ուրիշներ...

Ստեփան Զորյան ասացի և հիշեցի, որ նա է հայտնաբերել Համո Սահյանին, Ալազանը՝ Հովհաննես Շիրազին:

Այս բոլոր շեղումներն արի, ունենալով մի նպատակ՝ ասելու, որ պատմաբանը, այնուամենայնիվ, գործ ունի անցած-գնացած, արդեն պատմության պատկանած գրողների հետ, իսկ քննադատը՝ իր ժամանակակիցների, որոնց հետ անմիջական շփման մեջ է, հանդիպում է, բարեկամություն է անում, սեղան է նստում գրողի հետ, միասին ճանապարհ են գնում: Դժվարին վիճակ, որպեսզի չընկնի գրողի ազդեցության տակ:

Մի օրինակ հիշեմ:

«Համլետի» բեմադրության առաջին ամիսներին Աբովյան փողոցով իջնող տրամվայում հանդիպեցի մեր մի գրականագետ ընկերոջը:

Հարցրեց՝

— «Համլետը» տեսե՞լ ես:

— Տեսել եմ:

— Վաղարշյանի՞ն:

— Վաղարշյանին:

— Ի՞նչ կարծիքի ես:

— Քննադատական:

— Ախ, եթե թույլ տային, պատառ-պատառ կանեի:

— Իսկ ո՞վ է խանգարում քեզ կարծիքդ հայտնելու:

Մեկ տարի չանցած, մեր այդ ընկերը, որ արդեն բավական բարձր պաշտոն ուներ և պատասխանատվություն էր կրում կազմակերպվելիք Շեքսպիրյան փառատոնի առիթով բեմադրվող ներկայացումների կապակցությամբ, Վաղարշյանի հետ միասին լենինական էր մեկնել: Եվ... լենինականից վերադարձավ հեղաշրջված, որպես Վաղարշյանի Համլետի խանդավառ պաշտպան:

Իմ միտքն այն է, որ քննադատը պետք է հոգեկան անկախության ուժ ունենա, որպեսզի չենթարկվի գրողի կամ արվեստագետի ազդեցության:

Մի օր գրողների տանը Մկրտիչ Արմենը հետաքրքիր դեպք պատմեց.

— Բարձրանում եմ Աբովյան փողոցով և տեսնում, որ իջնում է մեր քննադատներից մեկը: Ինձ տեսնելուն պես

անցավ մյուս մայթը: Մտածեցի, որ գուցե ինձ չտեսավ, թե չէ ինչ պատճառ ուներ ինձանից խուսափելու: Մի քանի օր հետո թերթում լույս տեսավ նրա քննադատական հոդվածն իմ գրքի մասին:

Ուրեմն՝ քննադատ լինելու համար ոչ միայն պետք է ձիրք ունենալ, պատրաստություն, ճաշակ և հոտառություն, ոչ միայն թափանցում, այլ նաև կամք, բնավորություն, անկախություն: Իսկ դա դժվարին հատկություն է, որ քչերին է տրված, եթե չունես այդ հատկությունը, կդժվարանաս ուժ գտնել և տհաճություններ պատճառել ընկերոջդ, որ քեզ սիրում է, և դու էլ նրան և քո արածը, այսինքն՝ նրա գիրքը խորագույն քննադատության ենթարկելը, նա համարելու է դավաճանության հավասարազոր քայլ: Բայց չէ՞ որ քննադատը, եթե իր պարտքը չկատարի, եթե քննադատելու է չքննադատի, քննադատվելիքը գովի, դա էլ կլինի դավաճանություն գրականության, արվեստի նկատմամբ: Բայց, երևվի, դա ոչինչ, որովհետև, ո՛չ գրականությունը, ո՛չ էլ արվեստը մարդիկ չեն, հետևապես չես զգա այդ տհաճությունը...

Միտս է մնացել Ավ. Իսահակյանի արած պատմությունը, որ ժամանակին գրի չեմ առել, ուստի վերապատմում եմ հիշողությամբ.

— Երեք հոգով ճանապարհ ընկանք Ալեքսանդրապոլ: Ես էի, Հովհաննեսն ու Նիկոլը: Խոսքը Թումանյանի և Աղբալյանի մասին է: Տեղ հասնելուց երկու օր անց, հայտնվեց Պետրոս Մոճոյանը՝ Գյումրիի բանաստեղծը, և հրավիրեց իրենց տուն ճաշի: Գնացինք և, ինչ տեսանք, հրաշալի սեղան է պատրաստված: Կերանք, խմեցինք, խոսեցինք, կատակներ արինք, տանտիրուհու գովքն արինք, տան օջախի կենացն առաջարկեցինք: Պետրոսն իր բանաստեղծությունների ժողովածուից, որ կարծեմ նոր էր լույս տեսել, բերեց երեք օրինակ և նվիրեց մեզ՝ ամեն մեկիս մի-մի ջերմ մակագրությամբ: Դեմքը փայլում էր ուրախությունից, մենք շնորհակալություն հայտնեցինք ու վերադարձանք հյուրանոց:

Գիշերվա կողմն անկողին մտանք, մեր սովորության համաձայն միանգամից չէինք քնում, ամփոփում էինք օր-

վա տպավորությունները: Հովհաննեսը Պետրոսի գիրքը ձեռքն առավ, ինչ-որ տողեր, ինչ-որ էջեր կարդաց բարձրաձայն, որ մենք էլ լսենք: Կարդաց՝ բոլորս քրքջացինք:

— Դե, հիմա ո՞վ է ձեզանից քաջը, ճշմարիտ տղամարդը, որ հոդված գրի ու լավ ներկի այս հեղինակին,— ասաց Թումանյանը և այնպես թվաց, թե խոսքն ինձ է ուղղում:

— Ինձ ինչի՞ ես ասում, Հովհաննես ջան, քննադատին թողած բանաստեղծի՞ն ես դիմում, երկու համերկրացիներին ինչի՞ ես ուզում կռվացնել:

— Որ էդպես է,— ասաց Թումանյանը,— ես ինչի՞ պիտի խառնվեմ էդ գործին, ես բանաստեղծ, նա բանաստեղծ, գրեմ, որ Պետրոսը մտածի, թե նախանձի՞ց եմ դրդված գրել:

— Ուրեմն, մնում է,— միջամտեցի ես,— որ Նիկոլն անցնի իր անմիջական պարտականությունների կատարմանը:

— Մտածում եք, թե ինչ եք ասում,— պաշտպանվեց Աղբալյանը,— մարդու տուն մտնեմ, վայելեմ նրա շքեղ սեղանը, հետո էլ կանգնեմ սևացնեմ տանտիրոջ գիրքը: Չէ՛, ես ուտող ուրացող չեմ:

Վերադարձանք Թիֆլիս, անցավ ինչ-որ ժամանակ, մեկ էլ «Մուրճի» էջերում լույս տեսավ Թումանյանի գրախոսականը Մոճոռյանի գրքի մասին, որտեղ ասված էր՝ «Այս գրքի մասին ստիպում է խոսել ոչ թե արժանիքը, այլ այն հանգամանքը, որ լռությունը կխաբե հեղինակին, և նա, իրան շարունակ բանաստեղծ համարելով, իզուր և նույնիսկ վնասակար աշխատանք կանի գրականության համար»:

Ուրեմն՝ նույնիսկ մեծ մարդիկ էլ ունեցել են այդ ապրումները: Կենցաղային առումով թերևս ճիշտ էին երեքն էլ, բայց գրականության առաջ, իր կոչման ու խղճի առաջ իրավացին, իհարկե, Թումանյանն էր, որ չմտածեց, թե ինչ կասի Պետրոս Մոճոռյանը:

Այս բոլոր խորհրդածությունները, որ արի, այն նպատակն ունեին, որ ասեմ, թե ինչպես իմ ելույթի շուրջ եղած սրտագին մթնոլորտը մղեց ինձ մտածելու, թե ինչու չզբաղվել թատրոնով: Ճիշտ չի լինի, եթե ասեմ, որ այդպես մտածել եմ միանգամից, այդ գիշեր կամ այն նույն օրերին:

Եթե այդպես չլիներ, երևի ես հաջորդ տարի գրողների տանը չէի կարդա Շիրազի մասին իմ կարդացած զեկուցումը, որ լավ էր թե վատ, այլ հարց է, ճի՞շտ էր թե սխալ, այստեղ քննության առնելու հարց չէ նույնպես: Խնդիրն այն աղմուկն է, որ բարձրացավ դրա շուրջը և, բնականաբար, կատարեց իր դերը, ունեցավ նշանակություն:

Թերևս դեր էր խաղում և այն իրողությունը, որ թատերագիտությամբ զբաղվող միակ մասնագետը Սարգիս Մելիքսեթյանն էր: Տիգրան Հախումյանը բազմակողմանի զբաղմունքի տեր մարդ, մեկ-մեկ էր թատրոնի մասին գրում: Նույնը և Վահրամ Թերզիբաշյանը: Սրանցից շատ ավելի պակաս չափով էին թատրոնով զբաղվում Սուրեն Հարությունյանը և Գառնիկ Ստեփանյանը: Մի՞թե լավ չէր լինի, եթե Մելիքսեթյանի կողքին, լիներ իրեն՝ թատրոնին նվիրված ուրիշը ևս, մանավանդ, եթե այդ մեկը կրթությամբ գրականագետ էր, իսկ թատրոնի հիմքը գրականությունն է, փորձով բանասեր և այլն, և այլն:

Թերևս կողմնորոշող դեր խաղաց նաև այն, որ 40-ական թվականների վերջերին հրավիրեցին Երևանի Թատերական ինստիտուտ՝ թատերագիտական մասնաճյուղի երեք կուրսում վարելու թատերական քննադատության դասընթացը:

Թերևս դեր խաղաց և այն հանգամանքը, որ ես հասկանում էի այն տարբերությունը, որ կար գրական և թատերական քննադատների միջև, նկատի ունենալով, որ առաջինի քննության առարկան պահպանվում է առհավետ, իսկ երկրորդինը՝ այսօր կա, վաղը չկա և թատերական քննադատը շնորհակալ պարտք է առնում իր վրա՝ պահպանելու իր այսօրվա տեսածը գալիք սերունդների համար:

Ասում են, թե առաջին սերը պահպանում է իր ձգողական ուժը մինչև մարդու կյանքի վերջը: Ինչ իմանաս, գուցե առաջին սիրո օրենքի ուժով ես պետք է վերադառնայի թատրոն և վերադարձա: Կրկնում եմ դարձյալ, որ իմ հոգեկան աշխարհում այդ շրջադարձը միանգամից տեղի չի ունեցել ու հավանաբար ճիշտ էլ չի լինի, եթե բացատրվի նաև որպես փախուստ քննադատությունից, որովհետև թատրոնի ասպարեզում, ըստ էության, դեռ ոչինչ չարած, լինելով

երկու թե երեք հոդվածի հեղինակ ընդամենը, վերստին ենթարկվեցի քննադատական ոմբակոծության, արդեն որպես թատերագետ։

Մի խոսքով, ժամանակ անցավ, ու ես ուժերս կենտրոնացրի թատրոնի վրա, ինձ վերապահելով դեպքից դեպք միայն գրականության անդրադառնալու հաճելի իրավունքը։ Գրեթե ինձ հետ միաժամանակ, կամ փոքր ավելի հապաղելով, լիակատար շրջադարձի նույն ճանապարհը բռնեցին նաև Թերզիբաշյանը, Հարությունյանը և Ստեփանյանը։

ԻՆՉՊԵ՞Ս Է ՄԱՐԴԸ ԲԱԽՏԻ ԿՈՂՔՈՎ ԱՆՑՆՈՒՄ

«Համլետի» ասուլիսից մի քանի օր է անցել, որ ինձ ասացին, թե Խորեն Սարգսյանը խնդրում է անցնել իր առանձնասենյակը։ Նա այն ժամանակ գրականության և լեզվի ինստիտուտի դիրեկտորի պաշտոնակատարն էր։

Գնացի։ Տեսնեմ բազկաթոռին նստած է Մարտիրոս Սարյանը։

— Ռուբեն,— դարձավ ինձ մեր տնօրենը,— Մարտիրոս Սերգեևիչը քեզ հետ գործ ունի։

Ես, որ խոնարհ հարգանքով բարևել էի նկարչին, զարմացած էի, թե ինչ գործ կարող է ունենալ ինձ հետ, թեև ծանոթ էինք միմյանց, և հրատարակչական գործ էլ ունեցել էի հետը։ Ես զարմացած նայեցի Սարյանին, իսկ նա մի պահ դադար տալուց հետո միայն դարձավ ինձ։

— Ռուբեն...,— դարձավ ինձ նկարիչը։

— Գուցե զրույցի բնույթն այնպիսին է, որ ես չպետք է ներկա լինեմ,— ասաց Խորեն Սարգսյանը։

— Ո՛չ, ո՛չ։ Ես աշխարհից ու մարդկանցից գաղտնիք չունեմ,— կատակի տվեց արվեստագետը։

— Ռուբեն, ես դեռ «Համլետի» քննարկման տպավորության տակ եմ, և, անկեղծ ասած, բոլորովին էլ համաձայն չեմ քեզ հետ։

Ես ուզեցի միջամտել, բայց նա նկատելու չտվեց և առաջ տարավ խոսքը.

— Դու երիտասարդ մարդ ես, ուրեմն՝ պետք է ավելի

առաջադեմ մտքերի տեր լինես, ինչ ես ընկել պառավ մարդկանց աղդեցության տակ: Ջեն հավանում, թող չհավանեն: Նրանք պահպանողական մարդիկ են, իրենց դարն ապրել են, իսկ դու երիտասարդ ես, եռանդով լի, նոր ես ոտք դրել ասպարեզ:

— Մարտիրոս Սերգեևիչ...

— Սպասիր, սպասիր, ես չեմ ևկել վիճելու, ուրիշ գործով եմ ևկել, պարզապես քեզ տեսա, հիշեցի ու իմ պարտքը համարեցի հայտնել անհամաձայնությունս: Քո մտքով չանցա՞վ, արդյոք, որ Վաղարշյանի Համլետը դո՞ւ ես, քո ընկերներն են, այն երիտասարդներն են, որ հիմա ռազմաճակատում մահու կռիվ են տալիս, որպեսզի ոչ մի երիտասարդ աղջիկ առանց սիրո չմնա, ոչ մի հարս չայրիանա: Շարունակե՞մ, ասեմ՝ ոչ մի մայր անզավակ չմնա, ոչ մի երեխա անհայր չմեծանա... Դու խելոք տղա ես, պատրաստված մարդ, այդ ինչպես պատահեց, որ չմտածեցիր այս մասին և կյանքից կտրված գնահատական տվիր:

Ես ձայն չէի հանում, որ նա շարունակի, հետաքրքիր համարելով նկարչի դատողությունները:

— Լավ, չշարունակենք, ասեմ, թե ինչի համար եմ ևկել: Ռուբեն, ես ուզում եմ քեզ նկարել: Համաձա՞յն ես:

— Մեծ պատիվ է ինձ համար:

— Խոսքի համար մի ասա, եթե Սարյանը կամենում է մեկին նկարել, իսկապես մեծ պատիվ է: Ճի՞շտ եմ ասում, Խորեն:

— Այո, իհարկե,— տարակուսելով ասաց իմ ավագ ընկերը, որովհետև ո՛չ նա, ո՛չ էլ ես լավ չէինք հասկանում լուրջ է ասում, թե կատակ է անում: Խոսելիս նկարչի դեմքին մի խորամանկ ժպիտ կար:

— Հա՛, ուրեմն կգաս, որ նկարեմ:

— Խորեն, չկամ արվեստաբանները տարածում են, թե իբր Սարյանը նկարում է միայն բարձր պաշտոնյաներին:

— Մի՞թե:

— Երևակայիր, կան այդպիսի շար մարդիկ: Դու հիմի վկա ես, որ նկարելու եմ Ռուբենին: Նա էլ հո բարձր պաշտոնյա չէ:

Խորեն Սերգեևիչը ժպտում էր։

— Ես նկարում եմ, եթե մարդու դեմքն ինձ գունանկարչորեն գրավում է։ Օրինակ՝ Ռուբենը։

Դարձավ ինձ.

— Եթե նկարեի մինչև «Համլետը», ուրիշ մարդ կստացվեր։ Հիմա ունեմ բոլորովին այլ ճանաչողություն։ Երբ դու խոսում էիր, մի պահ ես ներկայացումն էլ մոռացա, քննարկումն էլ ու քո մտքերին էլ չէի հետևում, ինձ դու շատ ավելի հետաքրքիր թվացիր, քան մինչև հիմա կարծել էի։

— Առաջ ինչպե՞ս էիք կարծում,— հարցրեց Սարգսյանը։

— Բարի, հեզ ու խոնարհ, որ ո՛չ ներվ ունի, ո՛չ էլ... ոգի։

— Իսկ հիմա՞։

— Հիմա տեսա, որ և՛ ներվ ունի, և՛ ոգի։ Տեսա վիրավորված սրտի տեր երիտասարդ, որ մարտնչում է...,— մի փոքր հապաղեց, հետո միայն ավելացրեց,— իր իդեալի համար։

Լռություն տիրեց։ Հավատացած, որ ինձ խոսք չի հասնում, լուռ սպասում էր իր խոսքի արձագանքին և տեսնելով, որ ոչ մեկս ձայն չենք հանում, վրա բերեց.

— Դե, ես գնացի։ Պայմանավորվեցինք, կսպասեմ։

Խոստացա և չգնացի։ Դժվար թե կարողանամ արդարանալ, պատճառաբանել չգնալս։

Իմ բնավորության մեջ նկատել եմ երկվություն. մի կողմից ուժեղ փափագ մեծ մարդկանց հետ շփվելու, նրանց մոտիկից ճանաչելու, մյուս կողմից՝ երկյուղ, թե իրենք որտեղ, ես որտեղ, ինչպես եմ պահելու ինձ իրենց հետ, ինչ պիտի ասեմ, ինչ պիտի խոսեմ։

Ես կարծում եմ, որ բնավորությանս այս գիծն ինձ խանգարեց գնալու. մեծ արվեստագետն իր ոտով եկել և քեզ նկարելու առաջարկ է անում, իսկ դու խոսք ես տալիս և չես գնում։ Իսկ միշտ չէ, որ բախտն իր ոտով գալիս է և կանգնում մարդու առաջ։

Այդ տարիներին Սարյանը արել է իր մի քանի լավագույն դիմանկարները... գուցե քոնն էլ լավ ստացվեր։ Ինչ պիտի անես դու, որ մարդիկ քեզ ճանաչեն, իսկ եթե Սարյանը քեզ նկարեր և իսկապես լավ ստացվեր, ապա օտարներն ան-

դամ կհետաքրքրվեին, թե ո՞վ է մեծ նկարչի ուշադրությանն արժանացած այս երիտասարդը և գուցե նրանց հայտնի դառնար նաև այն համեստ վաստակը, որի տերն ես դու:

ԻՄ «ԳՅՈՒՏԸ»

Նայում եմ «Համլետը»: Երրորդ թե չորորդ ներկայացումն է: Կողքիս նստած է Նշան Մուրադյանը: Երրորդ արարին հաջորդած ընդմիջմանը Նշանը հարց է տալիս՝ «Ինչի՞ համար է Հորացիոն»:

Իսկապես, պիեսում ինչո՞ւ է տեղ գտել Հորացիոն: Երբեք չէի մտածել դրա մասին: Գրականության տեսությունից հայտնի է, որ թատերագրական ստեղծագործության մեջ ամեն կերպար դրամատիկական ֆունկցիա պիտի ունենա պարտադրաբար: Դրամատիկական գործողության առումով Հորացիոն իրոք ֆունկցիա չունի: Այն գործողությունը, որ ընկած է ողբերգության հիմքում, կարող է զարգանալ առանց Հորացիոյի:

Լսվում է երրորդ զանգը: Ուշացածները շտապում են մթան մեջ գրավել իրենց տեղերը: Վարագույրը բացվում է: Ներկայացումը շարունակվում է: Ես նայում եմ, բայց չեմ տեսնում: Միտքս Նշանի հարցի շուրջն է պտտվում:

Մտածում եմ, մտածում... և հանկարծ գտնում եմ լուծումը:

Համլետը մենակ մարդ է էլսինորի պալատում: Հետևապես, նա իր մտքերը պետք է հայտնի մենակ մնացած պահին, մենախոսությունների ժամանակ: Շեքսպիրը թատրոնի մարդ լինելով, հասկանում էր, որ ո՛չ Բերբեջը, ո՛չ էլ նրանից ավելի հանճարեղ որևէ դերասան, թեկուզև ամենազորավորն աշխարհիս երեսին, հերոսի հոգու խոստովանությունները, նրան հուզող խոհերն անկարող է արտահայտել մենախոսությունների ժամանակ այդպիսի մեծ չափերով: Ուրեմն, պետք է գտնվի ելք, այլապես հանդիսատեսը կմատնվի ձանձրույթի: Իսկ ինչպե՞ս, ո՞րն է ելքը: Գործող անձանց թվում պիտի լինի մեկը, որին Համլետը համարի սրտամոտ անձնավորություն և նրա հետ խոսելիս անկեղծ լինի այնպես, ինչպես

ինքն իր հետ: Քանի՞ մենախոսություն է ասում Համլետը ներկայացման սկզբից մինչև վերջ: Ասենք՝ 10 մենախոսություն: Մի հինգն էլ, ասենք, ընդունել է դիալոգի ձևը, բայց միայն Հորացիոյի հետ: Ահա թե ինչի համար է Հորացիոն:

Չորրորդ արարի ընդմիջմանն այս բոլորն ասացի Նշանին: Տեղից վեր թռավ: Ուրախացավ, և ինչպես հատուկ էր իր ռոմանտիկ խառնվածքին, ոգևորվեց և չափազանցված գովեստներ շռայլեց իմ հասցեին:

— Դու գիտե՞ս, որ հիմա գյուտ արիր:

Ավելի ոգևորվեց, երբ ասացի, թե Հորացիոն էլսինորի պալատում այն մարմարյա սյունն է, որին հենվում է Համլետը հոգնած ժամանակ:

«Համլետի» նոր բեմադրության քննարկման կապակցությամբ աչքի անցկացրի բավական գրականություն, ոչ միայն նոր, ինձ անծանոթ, այլ նաև մի ժամանակ կարդացած: Կարդացի նաև Բելինսկու նշանավոր վերլուծությունը, որ գրված է Մոչալովի դերակատարման կապակցությամբ: Կարդացի և հանկարծակիի եկա. այնտեղ գտա այն բացատրությունը Հորացիոյի կերպարի մասին, որ տվել էի Նշանին:

Ամեն մարդ երկակի զգացում է ունենում, երբ իր հայտնած մտքին հանդիպում է հռչակավոր հեղինակի գրքում:

Նախ՝ վշտանում է, որ կանխվել է և ապա սփոփում իրեն այն ուրախ զգացումով, որ իմ մտքով անցել է այն, ինչ մի ժամանակ գրել է մի մեծ մարդ:

Ես հիշեցի, որ մի տասնհինգ տարի առաջ, երբ տարված էի թատրոնով ու դրամատիկական դասընթացների էի հաճախում, ագահաբար կլանում էի թատրոնին վերաբերող գրականությունը, կարդացի նաև Մոչալովի Համլետին նվիրված Բելինսկու ընդարձակ հոդվածը: Այո, շատ լավ հիշում եմ, որ կարդացի: Ուրեմն՝ ի՞նչ: Ուրեմն այն, որ գտնվեց իմ «գյուտի» հետքը: Ու ես եկա այն եզրակացության, որ հաճախ է պատահում, որ կարդացած ինչ-որ միտք, ինչ-որ դատողություն մեզ դուր է գալիս, ինչ-որ ժամանակ հիշում ենք, հետո՝ մոռանում: Այսինքն՝ ուղեղի մի խորշում մնում է, որովհետև մտաբերվելու առիթ չի ներկայանում: Այդպես էլ երևի այս դեպքում է եղել:

Երբ օրեր անց այդ մասին պատմեցի Նշան Մուրադյանին,

նրա հայացքում կարդացի հիասթափություն: Մինչև այդ բարձրացել էի նրա աչքին իբրև մեկը, որ կարողացել էր լուծել իրեն տանջող հարց: Իսկ հիմա պարզվեց, որ հարցի լուծումը պատկանում է ուրիշին, թեկուզև Բելինսկուն, որի գրվածքը կարող էր ինքը ևս կարդացած լինել, ինչպես ես էի կարդացել մի ժամանակ:

ՄԻ ՕՐ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

«Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագիր Հովհաննես Մամիկոնյանը զանգահարեց, խնդրեց անցնել խմբագրություն: Հոդված էի գրել իր իսկ պատվերով: Առաջարկներ ուներ:

Գնացի: Բացատրեց որոշ բան: Դիտողությունների մի մասը սրտովս չէր, սակայն պատվախնդրության ժամանակ չէր: Պատերազմական տարիներ էին, ամեն մեկը պարտավոր էր կատարել ինչ օրվա առաջադրանքն էր: Համաձայնեցի, բայց խնդրեցի, որ հոդվածի տակ իմ ստորագրությունը չդրվի: Մամիկոնյանը չառարկեց, ասաց, թե պետք է իսկույն անցնել քարտուղարության սենյակը, արագորեն կատարել շտկումները, քանի որ հոդվածը լույս է տեսնելու հաջորդ օրը:

Մամիկոնյանի տրամադրությունը տեղը չէր: Ի բնե քչախոս այդ մարդը հիվանդի տպավորություն էր թողնում: Հարցըրի: Հաստատեց, բայց ասաց, թե անհրաժեշտ գործեր կան, չի կարող հետաձգել: Սահակ Կարպովիչը կանչել էր Կենտկոմ:

— Գնամ, տեսնեմ ինչ նոր հրահանգներ կան: Ապա վերադառնալու եմ խմբագրատուն, որպեսզի առաջնորդող գրեմ: Տեսնենք պիտի կարողանա՞մ:

Ասաց ու դուրս եկավ սենյակից: Ես էլ շարժվեցի դեպի քարտուղարության սենյակը, զբաղեցրի մի անկյուն, սկսեցի նայել հոդվածս: Գրիչս առաջ չէր գնում: Ընդհատում էի և դիտում շրջապատս, մարդկանց: Մի անբացատրելի զգացում էր պատել ինձ: Առաջ էլ եղել էի այս խմբագրատանը: Որքան ծանոթ դեմքեր կային այն ժամանակ՝ Հրաչյա Քոչար, Քրիստափոր Թափալճյան, Ղևոնդ Կոմունի, Սիմոն Նալբանդյան և շատ ուրիշներ, որոնց մեծ մասի գրքերը լույս էին

տեսել պետհրատում՝ իմ բաժնի գծով և այդ առիթով ծանոթացել էի նրանց հետ: Մի քանիսին էլ գիտեի ավելի վաղ:

Հիմա բոլորը մեկնել էին բանակ: Խմբագրությունում մնացել էին հազիվ մի քանի հոգի: Գիտեի մի երկուսին միայն՝ Մամիկոնյանին, Աշոտ Փալանջյանին (Աշփալ) և Գառնիկ Ստեփանյանին, որի «Պետրոս Ադամյան» գրքույկը լույս էր տեսել 1941-ին, այսինքն մեկ տարի առաջ, և լավ գնահատականի էր արժանացել մամուլում: Առաջարկել էի նման մի գրքույկ էլ գրել դերասանուհի Սիրանույշի մասին: Համաձայնել էր, բայց վերահաս պատերազմը տակնուվրա էր արել ինչպես մեզնից ամեն մեկի, այնպես էլ նրա ծրագրերը:

Գառնիկին պահել էին խմբագրությունում, նրա վրա դնելով մի քանի լրացուցիչ պարտականություն: Առաջ սոսկ ոճաբան էր, հիմա նաև դպրոցական-կոմերիտական բաժնի վարիչ, ռազմաճակատից ստացվող նամակներին ընթացք տվող, պատասխանատու քարտուղարի տեղակալ, կուսակցական կազմակերպության քարտուղար, որը կրկնապատկում էր նրա պատասխանատվությունը խմբագրության մեջ:

Թերթի ողջ աշխատանքները կենտրոնացել էին քարտուղարությունում: Դուրգեն Սարյանն ու Գառնիկ Ստեփանյանը քարտուղարներն էին: Յերեկներն աշխատում էին երկուսով, գիշերները՝ հերթապահում փոխնիփոխ: Բացի այդ երկուսից՝ կային երկու թարգմանիչ՝ Կարո Վարդանյանն ու Ալեքսանդր Այվազյանը, նաև 2—3 բաժնի վարիչ:

Այդ օրվա հերթապահը Գառնիկն էր: Ինչպես ասում են, գլուխ քորելու ժամանակ չուներ: Մեկը մտնում էր, մյուսը դուրս գալիս: Ստեփանյանը նայում էր բոլոր նյութերը, Աշփալի օժանդակությամբ համեմատում էր թարգմանությունները, խմբագրում բաժիններից ստացվածները, ստորագրում, կանչում ցրիչին, ուղարկում տպարան, հեռախոսով կապվում թողարկիչ Տրիբունի հետ, ասում, թե թերթի օրվա մակետում ինչ փոփոխություններ պետք է արվեն, որ նյութը պիտի հանվի, տեղը ինչ դրվի:

Հեշտ էր Գառնիկի հետ գործ ունենալ: Բարի ու մարդկային, չէր սիրում բախումներ, հակասություններ, որոնցից տուժելու էր գործը:

Անտրտունջ ընդունում էր բոլոր նյութերը, կարդում, խմբագրում, պահելով պատասխանատվության զգացումը։ Աշխատում էր այնքան լարված, որ վրաս ուշադրություն դարձնելու ժամանակ չուներ։ Եվ ես լրիվ հասկանում էի դա։

Մինչ ես ավարտել էի աշխատանքս և դիտում էի պատից կախված մեծ քարտեզը, որի վրա փոքրիկ դրոշակներով ցույց էր տրված ռազմաճակատային գործողությունների տեղաշարժը, որ Մամիկոնյանը վերադարձավ Կենտկոմից և, իսկույն դիմելով Գառնիկին, ասաց.

— Սահակ Կարպովիչը առաջարկեց ամբողջ համարը հատկացնել թիմուրականների առաջիկա հավաքին, որի կազմակերպչական գործի մեծ մասը դրվում է քեզ վրա։ Տեղի է ունենալու պիոներների պալատում։ Պետք է կազմակերպել ելույթները, հավաքին մասնակից դարձնել Հովսեփ Օրբելուն, Արուս Ոսկանյանին և այլ ականավոր դեմքերի։ Համարի առաջնորդողն էլ գրելու ես դու։ Պետք է զարկ տալ գունավոր մետաղների հավաքման գործին։ Լինելու է նաև կոմերիտականների համաքաղաքային հավաք, որին նույնպես հատկացնելու ենք հատուկ համար։ Այդ հարցն էլ պետք է նախապատրաստել Դեղամ Ալեքյանի հետ։

Գառնիկը լուռ լսում էր այս հրահանգները։ Զարմանքս մեծ եղավ, երբ նա տվեց այնպիսի հարց, որը դրանցից տասնապատիկ ավելի աշխատանք էր պահանջելու և կարող էր կատարել միայն ինքը։ Հարցրեց.

— Իսկ հեռանկարային համարների մասին խոսեցի՞ք Կենտկոմում, այն էջերի, որոնց մասին մտածել ենք։

— Խոսեցի։ Սահակ Կարպովիչը համաձայնեց «Զարկ, Կովկաս», «Անեծք գերմանացիներին», և «Մեր հերոսական նախորդները» համարների պատրաստմանը, պայմանով, որ դրանք չխանգարեն ընթացիկ աշխատանքներին, որոնց մասին արդեն ասացի։

— Անշուշտ, մանավանդ որ երկար ժամանակ են պահանջելու, մի քանի անգամ պետք է լինել հանրային գրադարանում, նյութեր հավաքել հայկական ջարդերի, Վարդանանց պատերազմի, կովկասյան ժողովուրդների անցյալի հերոսական դրվագների մասին։

Ասաց ու գնաց Մամիկոնյանը՝ հանձնարարությունների

տարափի տակ թողնելով կուսակազմակերպության քարտուղարին։

Ի դեպ նույն 1942 թ. աշնանը «Խորհրդային Հայաստան» օրաթերթը հարտարակեց վերոհիշյալ բոլոր բացառիկ համարները, որոնց նյութերի ճնշող մասը պատկանում էր Ստեփանյանի գրչին։ Կարող եմ ասել, թե դրանք նրա լրագրողական գործունեության ամենահաջողված էջերն են։

Երբ Մամիկոնյանը վերոհիշյալ հրահանգները տալուց հետո մեկնեց, Ստեփանյանը վերցրեց ռազմաճակատից ստացված նամակներից մի քանիսը և սկսեց նայել։

— Լավ բանաստեղծություններ է ուղարկում Արշալույս Սարոյանը, ճանաչո՞ւմ եք, հարցրեց ինձ, կարծեք նոր միայն նկատելով ներկայությունս։

— Հանդիպել եմ Լենինականի «Բանվոր» թերթի էջերում։ Խոստումնալի երիտասարդ է,— ասացի։

— Ուզում եմ հոդված գրել և ընթերցողներին ներկայացնել մարտիկ-բանաստեղծներից մի քանիսին։

— Վատ չի լինի։

Հետո վերցրեց մի ուրիշ նամակ, նախքան կարդալը երկարեց ինձ ու հարցրեց.

— Ճանաչո՞ւմ եք այս ձեռագիրը։

— Ծանոթ ձեռագիր է,— ասացի։

— Իմ համալսարանական դասընկերներից՝ Քրիստափոր Թափալեցյանից է նամակը,— ասաց ու սկսեց կարդալ։

Դեմքին նկատելի հուզում կար։

— Ծանրոց էինք ուղարկել,— շարունակեց զրույցը Ստեփանյանը,— շնորհակալություն են հայտնում ռազմաճակատային «Կարմիր զինվոր» թերթի խմբագրությունում աշխատողները։ Գրել է Քրիստը, ստորագրել են նաև ուրիշներ՝ Սիմոն Նալբանդյանը, Սուրեն Գրիգորյանը, Մուկուչ Մինասյանը, Գեղամ Ղուկասյանը։

Արդեն ուշ էր։ Մթնում էր։ Աշփալն սկսեց փակել լուսամուտների թանձր վարագույրները, որպեսզի երբ էլեկտրական լույսերը վառվեն, ոչ մի շիթ չթափանցի դուրս։ Լուսաքողարկման հրահանգը խիստ էր։

Պատրաստվում էի տուն գնալ։ Ստեփանյանը առաջարկեց միասին դուրս գալ։ Հենց այդ պահին հնչեց հեռախոսը։

Մամիկոնյանն էր: Տանից էր խոսում: Ասաց, թե ջերմություն ունի, չի կարողանա գալ և առաջնորդողն էլ չի գրել: Թող գրի Գառնիկը:

Անտրտունջ համաձայնեց նաև այդ հանձնարարությանը: Նա մնաց, որ առաջնորդողը գրի, ապա հերթապահի գիշերը:

— Միշտ այսպես տենդո՞տ է ձեր աշխատանքային օրը,— հարցրի սենյակից դուրս գալու պահին:

— Այո, մի քիչ ավելի, մի քիչ պակաս: Ամեն օր: Խթանը ռազմաճակատի պահանջն է: Կարծում եք թե առաջնորդող հոդվածը թղթի վրա՞ եմ գրելու:

— Հապա ի՞նչ եք անելու:

— Ժամանակ չկա: Նստելու եմ մեքենագրուհու մոտ և նայելով մի քանի փաստեր պարունակող կոնսպեկտիս, թելադրելու եմ: Նույնն անում են մյուսները, իսկ թարգմանությունները բոլորն այդպես են պատրաստում:

Դուրս եկա: Ամեն կողմ համատարած մթություն էր: Փողոցներում մարդ չէր երևում: Շարժվեցի դեպի տուն՝ մըտքումս վերլուծելով այդ մի քանի ժամվա ընթացքում տեսածս: Թիկունքն ապրում էր նույն տենդոտ առօրյայով: Որքան անձնվիրությամբ էին գործում գրչի այս մշակները՝ մոռացած տուն, ընտանիք, հանգիստ, մոռացած ամեն, ամեն ինչ:

ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒԼԻ ՎԵՊԸ

Լավ չեմ հիշում պատերազմի նախօրյակին էր, թե պատերազմի առաջին տարին, Լյուսի Թարգյուլը բերեց «Կոմիտաս» վերնագրով վեպը: Խնդրեց, որ կարծիքի չուշարկեմ, ինքս կարդամ, որ անաչառությանս հավատում է և իմ հասցեին մի քանի շոյիչ խոսք ասաց: Ես փորձ արի հրաժարվելու, ասելով, թե շատ զբաղված եմ:

Լյուսի Թարգյուլը պնդեց, որ ես կարդամ: Թեկուզ մի տարի հետո, բայց ես կարդամ: Այդպես էլ եղավ: Կարդացի ու չհավանեցի և նրան հաղորդեցի իմ տպավորությունը: Անակընկալի եկավ: Երևի չէր սպասում: Վշտացավ, թե նեղացավ, չեմ կարող ասել: Տաքացած առարկում էր, վիճում, չէր համաձայնում իմ եզրակացության հետ: Ժպիտը, որով խո-

սում էր ինձ հետ, եթե բառերով արտահայտելու լինեի, կստացվեր՝ «Չես հասկացել վեպս» կամ «Ուշադիր չես կարդացել»:

Մնում էր մի ելք, որ ուրիշն էլ կարծիք հայտնի:

— Խնդրում եմ պատահական մարդու ձեռք չզցել:

Ասի, եթե ուզում է, կարող եմ Դերենիկ Դեմիրճյանին խնդրել, որ կարդա, համաձա՞յն է:

— Ոչ մի դեպքում: Նա ո՞ւմ է հավանում, որ ինձ հավանի: Անգամ Իսահակյանի մասին բարձր կարծիքի չէ:

Հարցրի՝ խնդրե՞մ Իսահակյանին կարդալ:

— Չի կարդա:

Ասի, որ այնպես կխնդրեմ, որ չի մերժի, կասեմ, որ Կոմիտասին անձամբ ճանաչել է, և միայն ինքը կարող է ճիշտ որոշել, թե վեպն ստացվե՞լ է, թե ոչ:

— Շատ լավ կլինի:

Լյուսի Թարգյուլը ոգևորվեց և շնորհակալ աչքերով նայեց ինձ:

Ես հարցրի՝ կարող ենք նրա կարծիքը վերջնակա՞ն համարել: Եթե կարծիքը դրական լինի, որոշում ենք խմբագրել վեպը և տպագրության հանձնել, բացասականի դեպքում ձեռագիրը տալիս եմ իրեն, ու ինքը սուսուփուս գնում է տուն:

— Համաձայն եմ:

Իսահակյանը երկու-երեք օրը մեկ գալիս էր հրատարակչություն, գալիս էր հատկապես իմ բաժինը, նստում մի ժամ, կես ժամ: Երբեմն էլ այնպես էր լինում, որ նույն ժամին ուրիշ գրողներ էլ էին գալիս, ու զրույցը երկարում էր:

Մի օր խնդրեցի հանձն առնել կարդալ Թարգյուլի վեպը: Մերժեց: Ջանացի, որ կարդացել եմ, բայց ասացի, որ հեղինակը միայն իր խոսքին է հավատում: Հանձն առավ, բայց մի կես տարի անցավ մինչև կարդաց: Լյուսին գնում-գալիս էր: Անհամբեր էր: Մեկ հարցական նայում էր աչքերիս, մեկ ուղղակի հարցնում էր.

— Չի՞ կարդացել:

Վերջապես Իսահակյանը կարդաց, ու մի երեկո, երբ իր մոտ էի, ասաց, թե գեշ (իր խոսքն է) տպավորություն ունի վեպից, գուցե ուրիշի տամ կարդալու, ինքը չի ուզում տիկ-

նոջը վշտացնել: Ես համառեցի, որ գրի, և նա գրեց մի ընդարձակ կարծիք: Լյուսին ծանոթացավ Իսահակյանի կարծիքին, հազիվ զսպեց իրեն, որ լաց չլինի, դեմքը գույն տվեց, գույն առավ, բայց ոչինչ չասաց, ինքն էր որոշել, որ իր և իմ միջև դատավոր լինի Իսահակյանը: Եվ ինքը հավատում էր նրա արդարամտությանը: Զեռագիրն առավ ու գնաց:

ԴԵՐԱՍԱՆՈՒՀՈՒ ՄԱՀԸ

Որ Արուս Ոսկանյանը սիրված դերասանուհի էր, հայտնի է: Բայց այն, ինչ տեղի ունեցավ նրա մահվան և թաղման օրերին, գերազանցեց ամեն պատկերացում:

Շատերը գիտեին, որ Արուս Ոսկանյանը հիվանդ է, բայց ոչ ոքի մտքով չէր անցնում, թե հիվանդությունը կարող է նրան այս աշխարհից տանել: Դրա մասին չէին մտածում նաև այն ժամանակ, երբ քաղաքում լուր տարածվեց, թե նրան սխալ են բուժել, չեն իմացել, որ նրան բծավոր տիֆն է գամել անկողնուն, իսկ բուժել են այլ, չունեցած հիվանդությունից: Երբ պարզվեց դա, բժիշկները շտապեցին ուղղել իրենց սխալը: Բոլորը կարծում էին, թե նա դեռ երիտասարդ է և ուժ կունենա դիմադրելու:

Նրա մտերմուհին՝ Արուս Մանասյանը, արվեստագետին խորապես նվիրված մարդ, որ խնամել է անվանակցին հիվանդանոցում, պատմեց, թե դերասանուհին, բարձր տաքություն ունենալով ու ենթարկված լինելով հալյուցինացիայի, մի երկու անգամ իրեն լուսամուտից դուրս նետելու փորձ է արել, բժիշկներն ու բուժքույրերը մի կերպ պահել են: Ասաց նաև, որ բարձր տաքության մեջ մոտեցել է լուսամուտին և գոռացել.

— Մարդի՛կ, մեռնում է ձեր դերասանուհին, փրկեցե՛ք, խնդրո՛ւմ եմ, փրկեցեք...

Մարդիկ, թատրոնի ու նրա երկրպագուն լինելով, չէին մտածում, թե իրենց սիրելի դերասանուհու համար մահ կա, որ նա այս աշխարհից կարող է գնալ իրենցից շուտ: Կարծում էին, ոչ, հավատացած էին, թե եղել է ու պիտի լինի, զարդարել է իրենց կյանքը, զարդարելու է իրենց որդիների ու

թոռների կյանքը նույնպես: Տարօրինակ է, բայց այդպես է, մարդիկ, իսկապես, չէին կարծում, թե նա տարիք է առնելու: Բոլորին այնպես էր թվում, թե նա գարունն է, եկել է մարտին, բայց չի գնալու մայիսի հետ և միշտ խաղալու է Ռաուտենդելայն: Ոչ ոք ոչ ոքի չէր խոստովանում, թե նա սիրո այն կայծն է, որ բեմում առկայծելով, մտել է սրտեր, տակնուվրա է արել հոգու խաղաղությունը, երբեմն մի պահ մնալով այնտեղ, երբեմն պահպանելով իր անհանգիստ ներկայությունը մշտապես, նույնիսկ այն ժամանակները, երբ սրտի տիրոջ գլխին ձյուն է նստել:

Ոչ մեկի համար նա Հովհաննես Թումանյան չէր, որ մանկության օրերին «Շունն ու կատուն» է, երիտասարդության ժամանակ՝ «Անուշ» և «Փարվանա», իսկ ծերության՝ իմաստուն քառյակների հեղինակ: Բոլորի համար նա Տերյան էր, սիրո խոստովանության բանաստեղծ, կարոտի ու երազանքի երգիչ, որ չէր ուննենալու ծերություն: Բոլորը գիտեին, որ Տերյանն աչքերը փակել է 35 տարեկան հասակում, և ցավում էին ու ախ քաշում, բայց ոչ ոք չէր պատկերացնում նրան ծերացած: Իսկ Թումանյանը, որ վախճանվել է 54-ը հազիվ բոլորած, ծերունի էր թվում ամենքին, խոր ծերունի:

Արուսի մահը անսպասելիություն էր: Քիչ է ասել, որ այդ մահով ամեն մեկիս կյանքից հեռացել է մի թանկագին աշխարհ: Այդ մահը նշանակում էր, որ մեր հոգեկան կյանքից ինչ-որ բան, որ ներկա էր, դառնում է անցյալ, այրող մի զգացում, հիմա դառնում է հուշ, հիշողություն:

Հոգեկան շատ խլրտոցներ, որ պահում էին մարդուն, և նա իր աչքին թվում էր անտագնապ, ջերմացած, աշխարհն իր գրկի մեջ առած, հասկանում էր, որ իրեն մեկը կողոպտել է, ու այդ մեկի անունը մահն է, որի դեմ ամենքն անզոր են:

Իմանալով Արուս Ոսկանյանի մահը, շտապեցի թատրոն: Դերասաններին գտա շփոթված: Ջէին պատկերացնում թատրոնն առանց Արուս Ոսկանյանի: Ապշած էին բոլորը: Վաղարշ Վաղարշյանը, լինելով մտքի գործոնն միջամտության կողմնակիցն արվեստում, Արուսին համարում էր համախոհ և զինակից ճաշակի, հայացքների, մոտեցման և դիրքավորման: Ես

ակամա հիշեցի այն հակառակությունը, որ այս երկու դերասանը, նրանց հետ նաև Մրկտիչ Ջանանը, ունեին բեմադրիչի բռնակալության ժամանակներում:

Հուզված և ցնցված էին Հասմիկն ու Օլգա Գուլազյանը, Աննիկ Մկրտումյանը: Տարբեր անկյուններ քաշված՝ հեկեկում էին Մայրանուշ Պարոնիկյանը և Ամալյա Արազյանը: Տեղ չէր գտնում Գուրգեն Ջանիբեկյանը, որ խոր համակրանք ուներ Արուս Ոսկանյանի անձի և խաղերի նկատմամբ: Միքայել Մանվելյանը, Ավետ Ավետիսյանը, Դավիթ Մալյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Համբարձում Խաչանյանը, Վաղինակ Մարգունին խմբվել էին և կսկիծն աչքերում դեպքեր էին հիշում դերասանուհու կյանքից:

Վաղարշյանին, որ այն ժամանակ թատրոնի գեղարվեստական ղեկավարն էր, կանչեցին հեռախոսի մոտ: Վերադարձին մի երկու կարգադրություն արեց, հետո մոտեցավ և ասաց.

— Դուք լավ չեք պատկերացնում, թե թատրոնի համար ինչ ծանր կորուստ է սա: Մեծ տաղանդ կորցրինք: Դա ճիշտ է, բայց ճիշտ է նաև այն, որ կորցրինք դեպի արվեստի ապագան ուղիներ հարթող արվեստագետին:

Դագաղը դրված էր մայր թատրոնի ճեմասրահում:

Շատ մարդ էր եկել հրաժեշտ տալու դերասանուհուն: Ճեմասրահը լիքն էր բազմությամբ: Բազմությամբ լիքն էր նաև Կոմունարների այգին: Վշտահար դեմքեր էին, աղջիկներն ու կանայք հաճախ էին թաշկինակը մոտեցնում աչքերին:

Դագաղը դուրս բերին թատրոնից, դուրս բերին դեպի Մարքսի փողոց տանող այգու մուտքից, որտեղ կարմիր ու սև լաթերով պատած բեռնատար մեքենա էր կանգնած: Պարզվեց, որ այստեղ ևս դերասանուհուն ուղեկցելու համար շատ մարդ է հավաքվել: Դա ժողովրդական թաղում էր: Ոչ թե այն իմաստով, որ շատ մարդ կար, թեև այդպես էր: Ժողովրդական եմ ասում այն պատճառով, որ արվեստի վարչության սահմանած կարգ ու կանոնը, հուղարկավորները, հատկապես երիտասարդությունը, մեծ մասամբ ուսանողներ, մի կողմ դրին և իրենց ձեռքն առան թաղման ողջ տնօրինու-

թյունը: Տեղի ունեցավ զարմանալի բան, դագաղը բարձրացրին գլխներից վեր և ձեռքերի վրա պահած՝ շատ երկար ճանապարհ անցան և այդպես տարան հասցրին մինչև քաղաքային պանթեոն:

Ես այլևս այդպիսի դեպք չեմ հիշում:

Գերեզմանատանը շատերը խոսեցին: Ոչինչ չեմ հիշում: Ո՛չ միտս է, թե ովքեր խոսք ասացին, ո՛չ էլ հիշում եմ, թե ով ինչ ասաց: Կսկիծն այնքան խորն էր այդ օրը, որ ոչ մի պերճախոսություն իրեն արդարացնել չէր կարող, նույնիսկ ամենագեղեցիկ խոսքն ի վիճակի չէր արտահայտելու այն, ինչ կատարվում էր հուղարկավորների հոգում: Ինձ այնպես էր թվում, թե կսկծի ամենահարազատ արտահայտությունը կլիներ լռությունը:

Ես տուն էի դառնում մենակ, չէի ուզում ոչ մեկին միանալ: Ես ուզում էի հասկանալ, թե ի՞նչ է եղել Արուս Ոսկանյանն ինձ համար, մի երիտասարդի, որ սիրել է թատրոնը ու երկրպագել նրա մեծերին:

Դեռ ոչ մի լուսանկար երբեք չի փոխարինել լուսանկարվողին: Ամենալավ լուսանկարն իսկ պահպանում է արտաքին պատկերը լոկ, դու չես լսում նրա ձայնի թովչանքը:

Արուսը գեղեցկության դրոշակակիրն էր թատրոնում: Խոսքը արտաքին գեղեցկության մասին չէ, թեև ով չի հմայվել նրանով՝ Ռաուտենդելայնը տեսնելուց հետո: Գուցե ոչ մի այլ դերասանուհի երիտասարդության վրա չի ունեցել այն ազդեցությունը, ինչ Արուս Ոսկանյանը: Քանի՞-քանի երիտասարդներ են հրաժարվել իրենց հարսնացուներից, որովհետև նրանք իրենց հոգու նկարագրով նման չեն եղել նրա ներկայացրած Դեզդեմոնային, Նորայի հոգեկան կերտվածքին: Նա այն արվեստագետն էր, որ իր խաղով մուտք էր գործում մարդկանց կյանքից ներս, ճակատագրեր էր փոխում: Դժբախտանում էին, թե բախտավորվում, դա այլ հարց է, բայց որ հարստանում էին, վեր է կասկածից: Տեսնել Արուսին և չընկնել նրա հրապույրի կախարդանքի տակ, անհնար է: Բնական ու հասկանալի էր, որ նրա երկրպագու երիտասարդ հանդիսատեսն ուզելու էր, որ իր հարսնացուն ուննենա նրա անձնավորած հերոսուհիների հոգու ազատու-

թյունը: Ըստ Արուսի՝ նրա մարմնավորած Դեզդեմոնան ու Նորան հոգեկան անկախություն ունեցող կանայք էին: Ով տեսել է դերասանուհու Կատերինան «Ամպրոպում», կհամաձայնի, որ նրա խաղը սիրո ու գեղեցկության փառաբանում էր: Եվ, ընդհանրապես, Արուս Ոսկանյանի կյանքը թատրոնում եղավ սիրո և գեղեցկության պաշտպանություն, կարծես մարդկանց ասելիս լիներ, թե սերն ու գեղեցկությունը մեծ ուժ են, բայց նաև անպաշտպան են, քանի դեռ բիրտ ձեռքեր կան, անմաքուր բաղձանքներ, ուստի, ով այր արարածներ, պաշտպան հանդիսացեք կանանց հենց թեկուզ այն բանի համար, որ կյանքում ամենայն բանի սկիզբը կինն է:

Դերասանուհու գեղարվեստական ըմբռնողությունը հանգում էր հոգեկան մաքրության համար մղվող անհավասար կռվի: Դերասանուհու խաղերի հարստություն: Դերասանուհին՝ կարծես ասելիս լիներ, եթե կնոջ հոգին լավ պեղեք, ապա այնտեղ կգտնեք հոգեկան տոկունություն, հոգեկան արիություն՝ իր ազնվությունը, հոգեկան գանձերը, հոգու բարությունը պաշտպանելու համար:

Քանի տարի է անցել Արուս Ոսկանյանի մահից: Ջորս տասնամյակից ավելի: Ու ամեն անգամ, երբ դերասանների լսարանն եմ մտնում ինստիտուտում ծանոթացնելու հայ թատրոնի պատմությանը, նրա ընթացքին, օրինաչափություններին, դեմքերին ու, երբ հերթը հասնում է Արուս Ոսկանյանին, պատմելիս ղգում եմ, որ քննախուզական միտքն ու հիացումը խառնվում են իրար: Ես չգիտեմ, թե ինչ տպավորության են լինում ուսանողներս իմ պատմածից, բայց ես հեռանում եմ լսարանից չբավարարված զգացումով. հաջողվե՞լ է արդյոք գեթ մեկնումեկին՝ վերլուծել և պատկերացում տալ ծաղկի գեղեցկությունը, ժպիտի հմայքը, բազմանըշանակալի հայացքը, կանացի հրապուրանքը: Երևի ոչ: Ուրեմն՝ ինձ էլ չի հաջողվի, եթե անգամ հարյուրավոր էջեր գրեմ և սիրելի արտիստուհու գովքն անեմ: Ուրեմն ինձ՝ դասախոսիս, մնում է բախտավորություն ու սփոփանք փնտրել, որ տեսել եմ նրան, զգացել ներգործությունը նրա գեղեցկության և հմայքի, որը ոչ մի խոսքի ու նկարագրության ենթակա չէ:

ԱՐԱՋՈՒ ՏՎԱԾ ԴԱՍԸ

Նոր եմ նշանակվել «Սովետական գրականություն» ամսագրերի խմբագիր։ Արագին պատմվածք բերեց։ Մերժեցի։ Ձայն չհանեց, ձեռագիրն առավ ու գնաց։ Բերեց ուրիշը։ Կարդացի և որոշեցի տպագրել։

Կրճատեցի պատմվածքի առաջին էջը, մի քանի տող էլ՝ երկրորդից։ Վերնագիրն ինձ հաջող չթվաց՝ փոխեցի, դարձրի «Պրոֆեսորը»։

Ամսագիրը լույս տեսավ։ Արագին եկավ խմբագրություն, խնդրեց փակվել։ Եկել էր իր վրդովմունքը հայտնելու։

— Ես մեծ, դու փոքր, հետևապես ինձանից քեզ խրատ կհասնի։ Ուրեմն՝ լսիր։ Դու քանի գլուխ ունես, որ բոնում կրճատում ես մի ամբողջ էջ և հեղինակին ոչինչ չես ասում։ Դա բավական չէ, փոխում ես վերնագիրը առանց հեղինակի համաձայնությունն առնելու։

Մի պահ շունչ քաշեց և շարունակեց.

— Ես հո երեկվա գրողը չեմ, թեև երիտասարդի հետ էլ այդպես վարվել չի կարելի։

Երևում էր, որ հուզված է։

— Տպագրել թե չտպագրել՝ խմբագրի իրավունքն է։ Մի պատմվածք բերի՝ ետ դարձրիր, ձայն չհանեցի, ասացի, չի ուզում, թող չուզի, խմբագիր մարդ է, իր գործն է։ Բայց ո՞վ է իրավունք տվել՝ գրվածքը փոփոխել։ Դրա իրավունքը ո՛չ քեզ է տրված, որ երիտասարդ խմբագիր ես, ո՛չ էլ տարեց ու փորձված խմբագիրներին։

Մի պահ լուռ մնաց։

— Լավ է, որ ինձ հետ ես այդպես վարվել, փափուկ մարդ եմ, բա որ ուրիշն իմ տեղը լիներ, գիտես ինչ օյին կբերեր գլխիդ։

Ու շարեց կովազան գրողների մի քանի անուն։

Ես ձայն չէի հանում, տված դասը ճիշտ էր։

— Էս մեկը քեզ խրատ։ Սրանից հետո միշտ հարցրու հեղինակին, կհամաձայնի՝ լավ չէ, պատմվածքը ձեռքը տուր՝ ճանապարհիր։

ՕՐԲԵԼՈՒ ԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ

1942-ին, ամիսը չեմ հիշում, Հովսեփ Օրբելին իր ընտանիքով և «էրմիտաժի» մի քանի աշխատակցի հետ, որոնք իրեն մտերիմ էին, փոխադրվեց Երևան։

Գալն ու գործի անցնելը մեկ եղավ։ Այն ժամանակ տակավին ակադեմիա չէինք, այլ համամիութենական ակադեմիայի հայկական մասնաճյուղ, որի պրեզիդենտն էր Օրբելին, ես էլ՝ լեզվի ու գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող։ Մեր հաստատության հապավված անունը Արմֆան էր։

Օրբելու գալով մեր հաստատությունը գիտական նոր թափ առավ, թարմ շունչ զգացինք, հասկացանք, որ մեր գլխին գիտական անսասան հեղինակություն է կանգնած, որի ընդգրկումները շատ ավելի ընդարձակ էին, քան հայոց պատմությունն էր, մեր հնագիտությունն ու արվեստը։

Օրբելու հետ ամեն հանդիպում բովանդակալի էր և առիթ՝ նոր մղումների։ Ճիշտ է, այդպիսի հանդիպումներ շատ չեմ ունեցել, հատուկենտ, բայց ինձ հաճելի էր իմանալ, որ իմ համեստ անձը արժանացել է անվանի գիտնականի բարյացակամությանը։

Երկու նկատում։

Գիտնական և գործիչ Օրբելին վառ անհատականություն էր։ Տաք խառնվածքի տեր, անմիջական, ճշտախոս ու բուռն։ Ես նկատել եմ, որ նրա ներկայությամբ գունաթափվում էի, խեղճանում։ Ինձ հնազանդ աշակերտ էի զգում, դասը չիմացող, քննությանն անպատրաստ ուսանող։ Ես ձեթի ճրագ էի՝ հրդեհված երկնքի առաջ։

Ուսանելի էին նրա բոլոր զրույցները, ինչի մասին էլ որ խոսեր, լիներ կյանքի մի հարց, թե գիտական խնդիր։ Ես, ինձ թվում է ոչ միայն ես, եթե հաշիվ տալու լինեի, թե երիտասարդներս ինչ փոխ առանք Օրբելուց, պետք է խոստովանեմ, իհարկե՝ շատ բան, շատ գիտելիք, ստացանք նաև ուղղություն, կողմնորոշում, թե ինչը ինչպես արվի, որ ճիշտ լինի ու լավ և միաժամանակ համապատասխանի գիտության դասական ավանդույթներին։ Այս բոլորի հետ միասին, եթե

ուզենանք մեզ վրա ունեցած նրա ներգործության սահմանները որոշելիս պարզել գլխավորը, ապա երևի դա կլինի լայն շունչը, քննարկվող նյութի կամ արծարծվող հարցի մեծ ընդգրկումը, որ նշանակում էր պարզաբանումն այն աղերսների, որ կան ազգայինի և համամարդկայինի միջև։

Ես ականջիս օղ արի Օրբելու-զրույցներից բխող այս խրատը։ Աշխատեցի նույնը հաղորդել իմ աշակերտներին, երիտասարդ ընկերներին, բացի դա՝ իմ գիտական գործունեության ընթացքում, մանավանդ ապագա այն տարիներին, երբ գիտական հաստատության ղեկավար էի, գտնել դրա կիրառման տարբեր ձևերը։ Դա դարձավ ինձ համար գործունեության պաթոս։ Եվ հիմա, երբ շատ տարիներ են անցել այդ ժամանակաշրջանից, և միտք եմ անում բոլորի շուրջ, ծանրութեթև անում տեսածս, լսածս, արածս, հանգում եմ կարևոր եզրակացության, որ ցանկանալ այդպիսին լինել, քիչ է։ Քիչ է նաև այդ ուղղությամբ քայլեր անել, մտածածդ կիրառել, ուժերի ներածին չափ։ Կրթական հիմք էր պետք դրա համար։ Ես չունեի այդ հիմքը։ Իմ ստացած վայրիվերո կրթությունը հեռու էր բավարար լինելուց։ Պետք է ոչ թե ձրգտում լիներ, այլ անդիմադրելի պահանջ, որ ուննենա մղումի ուժ, իսկ դա երևի հնարավոր էր, եթե ստացածս կրթությունը գիմնազիական դասական կրթություն լիներ։

ՊԱՀԱԿԸ

30-ական թվականների վերջերին և 40-ական թվականների սկզբներին գրական թանգարանն ուներ պահակ, որին բոլորը Մինաս բիձա էին ասում։ Վանեցի էր։ Լռակյաց էր, արդեն վաթսունին մոտ, ինքն իր մեջ ամփոփված։ Տխուր էր Մինաս բիձան, դեմքին ժպիտ չտեսանք։ Ծննդավայրի կարոտից հալումաշ էր լինում։ Տեսել էր կոտորած ու գաղթ, հարազատների կորուստ և չէր հասկանում, թե աշխարհն ինչու է հայի համար անարդար ստեղծված։ Չգիտեր, թե ումն է մեղքը՝ Թուրքի՞նը, թե գերմանացո՞ւնը, որ չբռնեց բարբարոսների ձեռքը, չկանգնեցրեց նրանց։ Գուցե աստծո՞ւնը, որ

երկնքի բարձրությունից տեսնում է այդ բոլորն ու ձայն չի հանում, չի սաստում: Ապրում էր՝ սրտի մեջ կսկիծ ու մորմոք: Եվ չնայած սրտի տանջալի ապրումներին, հույսը չէր կորցնում, համոզված, որ գալու է տուն դառնալու բախտավոր օրը:

Թանգարանի աշխատակիցները կարեկցանք ունեին Մինաս բիձու նկատմամբ, հասկանում էին նրան և սրտացավ քնքշությամբ էին վերաբերում: Չեմ հիշում, որ մեկնումեկը կոշտ խոսքեր ասեր և ինչո՞ւ ասեին, երբ նա լուռ ու մունջ միշտ իր պարտականության վրա էր:

Հիմա չեմ հիշում, թե ով, ասաց, թե ուրբաթ օրը Մինաս բիձու ծննդյան օրն է, եկեք փող հավաքենք ու մի լավ նվեր առնենք: Ինչ առնենք: Միտք արինք ու որոշեցինք մի ղույգ կոշիկ: Մինաս բիձու ոտքին հնամաշ կոշիկներ էին: Միտքը լավ էր, անշուշտ, բայց այն ժամանակ, պատերազմի ահեղ օրերին, կոշիկ առնելը դյուրին բան չէր: Ինչ երկարացնեմ, զանգ տվինք սրան-նրան, վերջը մի ղույգ կոշիկ առանք: Մինաս բիձան ուրախացավ, գոհ սրտով նայեց բոլորին: Հաջորդ օրը տեսանք, որ ոտքին դարձյալ հնամաշ կոշիկներն են: Մյուս օրն էլ: Եվ այդպես ամեն օր: Չհասկացանք: Հարցրինք՝ ինչու նոր կոշիկները չի հագնում:

Նրա դեմքին ժպիտ երևաց, խորհրդավոր գաղտնիք ունեցող կամ երանելի մի միտք փայփայող մարդու ժպիտ էր դա:

Պարզվեց, որ ուխտ է արել, որ նոր կոշիկները պահի և հագնի Վան քաղաք մտնելիս: Ուրեմն ուզում էր նոր կոշիկները հագին ոտք դնել Վան: Զգացվեցինք: Այդ օրերին էլ մարդիկ միմյանց ականջի փսփսում էին, թե շուտով Մոսկվայից կարգադրություն է գալու, որ մեր զորքերը շարժվեն դեպի Թուրքիա...

Այդ կարգադրությունը չեկավ: Պատմածս օրերից երևի երկու ամիս էլ չէր անցել, որ Մինաս բիձան վախճանվեց: Թաղման սակավամարդ հուղարկավորները զարմանքով տեսան, որ դագաղում դրված էին նոր, չհագած կոշիկներ...

ԿՈՆՍՏԱՆԴԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Գամսախուրդիան եղավ Իսահակյանի տանը, եղավ նաև Դեմիրճյանի մոտ։ Ծանոթացավ շատ հայ գրողների հետ։ Իրեն առանձնապես մոտ ու հարազատ զգաց առաջին երկուսի հետ։

Ասես գտել էր կորցրած եղբայրներին։

Իսահակյանի հետ եղավ հայկական գյուղերում։

Ներկա եմ եղել նրանց մի հանդիպմանը։

Խոսեցին հայ և վրաց պատմություններից, այդ երկու ժողովրդին իրար կապող պատմական ընդհանուր իրադարձություններից։ Հետո դատողություններ արին այն փիլիսոփայությունից, որ բնորոշ է մեր երկու ժողովուրդների համար՝ որպես քրիստոնեական վարդապետություն կրող ու տարածող ազգություններ։ Իսահակյանը գիտեր վրաց պատմությունը, և Գամսախուրդիան զարմացած չէր դրա վրա, բայց Իսահակյանը հաճելիորեն շոյված էր, երբ տեսավ, թե հայոց պատմությունից ինչպիսի մանրամասնություններ են հայտնի վրաց գրողին։

Հիմա բառացի չեմ հիշում Գամսախուրդիայի հրաժեշտի խոսքերը, ասված Իսահակյանին, բայց միտս մնաց նրա ձևավակերպումը։

— Եկա որպես բարի հարևան, գնացի որպես հարազատ եղբայր։

Դա սիրուն խոսք չէր, Գամսախուրդիայի հետագա կյանքը եղավ իր հրաժեշտի խոսքի հաստատումը։ Նրա ելույթները Հայաստանի գրողների համագումարում, Դեմիրճյանի թաղման առիթով գերեզմանատանն ասված խոսքը և այլ բազմաթիվ հայտարարություններ, որ նա արել է Հայաստանի ու հայ գրականության, հատկապես Իսահակյանի և Դեմիրճյանի հասցեին, եղել են թունդ բարեկամության վկայություններ։

Երբ նա Վրաստան մեկնելուց առաջ եկավ Հայպետհրատ, ու ես նրան ուղեկցեցի հրատարակչության տնօրենի՝ Եվգենյա Մելիքովայի առանձնասենյակը, վերջինս ոտքի կանգնեց և հրավիրեց նշանավոր վիպասանին նստելու, Գամսախուրդիան չնստեց։

— Ոչ մի դեպքում. քանի կինը ոտքի վրա է, տղամարդը չի կարող նստել։

Մեր տնօրենը հաճելի խոսքեր ասաց, հրավիրեց նրան կրկին այցելել Հայաստան, խոստացավ նրա մի այլ գործի հայերեն թարգմանությանը ևս ձեռնամուխ լինել։

— Ես շատ երկրներ եմ տեսել, քալբատոնո, շատ լեզուներ գիտեմ, աշխարհի պատմությունն ինձ լավ հայտնի է, հայտնի է նաև աշխարհի մշակույթը, այդ պատճառով ես գլուխ եմ խոնարհում հայ արվեստի ու այդ արվեստը ծնող ժողովրդի առաջ։

Մեկնեց Գամսախուրդիան և մի շաբաթ, նույնիսկ ավելի, հայ գրական շրջաններում նրա անունն էր հոլովվում։ Հայ գրողներն իրենց շոյված էին զգում, որ Գամսախուրդիան այդքան բարձր կարծիք ունի հայոց պատմության, հայ գրականության մասին։ Շատ գրողներ անկեղծացան և խոստովանեցին, որ իրենք լավ չգիտեն վրաց պատմությունն ու վրաց գրականությունը։ Հիացած էին Գամսախուրդիայով և պետք է ասեմ, որ հիացմունքի միակ պատճառը մեր պատմության հանդեպ նրա ունեցած վերաբերմունքը չէր, այլ իմացությունների չափազանց մեծ շրջանակը, դատողությունների լայն շունչը, խոր վերլուծումները, ընդհանրացումներ անելու բացառիկ կարողությունը, միտքը միշտ ինքնատիպ և համարձակ ձևակերպելու սերը։ Գամսախուրդիայի այցը համարեցին մեր ժողովուրդների եղբայրական դաշինքը ամրապնդող քայլ։

Մեկնելուց մի օր առաջ հարցրի, թե նրան ի՞նչն էր բերել Հայաստան։

— Ես եկա այստեղ հավերժության հետքերը գտնելու։

Գամսախուրդիայի մեկնելուց քսան օր հազիվ անցած կլիներ, որ հրավիրեցին գրողների միության կուսակցական կազմակերպության ժողով։ Օրակարգը՝ «Նացիոնալիզմի վտանգը հայ խորհրդային գրողների շրջանում»։

Երբ հավաքվեցինք ժողովի, ոչ ոք չգիտեր, թե ի՞նչն է մեր հավաքվելու առիթը և զարմացած էինք՝ մի՞թե այդպիսի վտանգավոր միտումներ կան՝ ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս...

Պարզվեց, որ մեկը՝ գուցեև մի քանիսը, արտահայտել էին անհիմն անհանգստություն Գամսախուրդիայի Հայաստան

գալու կապակցությամբ, ասելով, որ նա իր ընտրյալների ժամանակ ազգայնամոլ տրամադրություններ է դրսևորել, և Իսահակյանն ու Դեմիրճյանը ընկել են նրա ազդեցության տակ, իրենք ևս արտահայտել են համանման տրամադրություններ այն ժամանակ, երբ մենք հիմա ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ օրհասական կռվի մեջ ենք մարդկության մեծագույն թշնամու՝ ֆաշիզմի դեմ:

Ի դեպ, այս էլ ասեմ, որ նացիոնալիզմի վտանգի մասին խոսում էին ընդհանրապես, Գամսախուրդիան հիշվեց ի միջի այլոց, մի փոքր ավելի ծանրացան Իսահակյանի և Դեմիրճյանի վրա, բայց որովհետև այս երեքից բացի այլ անուն չտրվեց, մեզ համար պարզ էր, որ առիթը երեքն էին, միայն թե դա չէր ասվում բացարձակապես:

Իսահակյանը և Դեմիրճյանը, որպես անկուսակցականներ, ներկա չէին ժողովին:

Ժողովը բուռն անցավ ու տևեց բավական երկար:

Այն ժամանակների կարգն այնպես էր, որ համարյա բոլորը պետք է արտահայտվեին ոչ այնքան բազմակողմանի լուսաբանության նպատակով, որքան մարդիկ պետք է իրենց վերաբերմունքը հայտնեին խնդրո առարկա հարցի շուրջ: Կրկնվում էին՝ նշանակություն չուներ, նշանակություն ուներ այն, որ պարզ էր դառնում, թե ով ինչ կարծիքի է:

Ուրեմն, ես ևս պետք է խոսեի, բայց ի՞նչ կարող էի խոսել, երբ որևէ այպանելի բան չէի տեսնում Գամսախուրդիայի և Իսահակյանի հանդիպումների մեջ, վերջապես, եթե տեսնեի էլ, ինձ թույլ չէի տա որևէ բան ասել: Ու, որովհետև չէր կարելի ձեռնպահ մնալ, ես խոսեցի այն վտանգի մասին, որ ազգայնամոլական տրամադրությունները ներկայացնում են ընդհանրապես, պատերազմի ժամանակ մասնավորապես, երբ ժողովուրդների բարեկամությունը մեզ այնքան անհրաժեշտ է հաղթանակի հասնելու համար: Մի խոսքով, ընդհանուր խոսքեր:

Մեր ընկերներից մեկն ընդհատեց ինձ.

— Այդ ընդհանուր դատողությունների փոխարեն ավելի լավ է ասես, թե ինչի մասին եք խոսում դուք և Նաիրին, երբ լինում եք Իսահակյանի տանը:

Ես չկորցրի ինձ և ասացի.

— Թողեք միտքս վերջացնեմ և հետո այդ հարցի պատասխանը տամ։

Եվ շարունակեցի խոսել ազգայնամոլության և նրանից բխող վնասակար հետևանքների մասին։ Որքան խոսեցի, չեմ կարող ասել, թերևս մի հինգ կամ վեց րոպեևս ու նստեցի, առանց պատասխան տալու ինձ տրված հարցին։ Դիտավորություն չէր արածս, պարզապես մոռացա, նստեցի ու նոր միայն հիշեցի, բայց տեսնելով, որ ո՛չ հարց տվողն է հիշեցնում, ո՛չ ժողովականները, ձայն չհանեցի և այդպես մնաց անպատասխան մի հարց, որ պատասխան էլ չուներ։ Ի՞նչ էինք խոսում Իսահակյանի հետ Նաիրին ու ես, երբ իր մոտ էինք լինում, ինչ որ ուրիշները՝ գրականության հարցեր, մարդկային հոգեբանության կամ մարդկային հարաբերությունների հոգեբանությանը վերաբերող հարցեր, երբ է վերջանալու այս ահեղ պատերազմը, և վարպետն ասում էր, որ մեր ժողովուրդների կյանքում սա առաջին պատերազմն է, որի մասնակիցն ենք ամենագործուն ձևերով, և թշնամու ոտքը չհասավ մեր հայրենիք, շնորհիվ ռուսների և Ռուսաստանի։

Երևի նա, որ ինձ տվել էր այդ հարցը, մտածեց, թե իր արածն այնքան էլ գովելի բան չէր, ուստի նորից չհիշեցրեց։

Ահա այդ օրը ես եզրակացություն կատարեցի. այն, ինչ տեղի ունեցավ մոռանալու պատճառով, կարելի է կիրառել գիտակցաբար, խոստանալ, ասել, որ, թե՝ «հետո կասեմ» և չասել, որովհետև կամ չես ուզում ասել, կամ էլ չգիտես, թե ինչ ասես, որովհետև հարցի պատասխանը չունես։

ԻՆՉՈ՞Ւ ԱՋԱՏԵՑԻՆ ԻՆՁ ԽՄԲԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ

Ես խմբագիր եղա երկու և կես տարի, այն էլ ոչ լրիվ։ Նշանակվելուս պատմությունն արել եմ, ասեմ նաև, թե ինչպես եղավ, որ հանվեցի։

Որպես խմբագիր գործի անցա նշանակվելուցս ավելի ուշ։ Նախորդ խմբագիրը պատրաստել էր նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարները։ Բայց նշանակվելուս պես՝ մտահղացի 1941-ի առաջին համարը պատրաստելով։

Գրողներից շատերին ուրախություն չպատճառեց իմ նշա-

նակումը: Ես դրան նշանակություն չտվի, քանի որ գրականության մեծերի համակրանքն իմ կողմն էր: Բացի այդ՝ ինձ թվում էր, թե սուրա աջ ու ձախ կտրում է, ինչ որ ուզեմ՝ կանեմ՝ ձեռքս բռնող չի լինի: Մի խոսքով՝ երիտասարդական մոլորություն, պարզ ասեմ՝ շատերին հանեցի իմ դեմ: Ջեղա ճկուն, շրջահայաց և հեռատես: Ես կարծում էի, որ գոյություն ունի լոկ մի չափանիշ՝ գեղարվեստական արժանիք: Երիտասարդ էի, չէի հասկանում, որ կյանքում շատ հարցեր որոշելիս դեր են խաղում այլ գործոններ ևս: Երբեմն ավելի վճռական, քան երկի գեղարվեստական արժեքն է: Իմ երիտասարդական ինքնահոխորտանքը հասավ այն չափերի, որ վշտացրի նաև իմ ավագ ընկերներին, համոզված, որ նրանք ինձ ճիշտ կհասկանան: Բայց ինքս չէի հասկանում, որ հասկանալը մի բան է, արժանապատվությունը՝ այլ բան:

Ավետիք Իսահակյանի «Սահակ աղան» ուղարկեցի տպարան, բայց հետո որոշեցի չտպագրել: Դերենիկ Դեմիրճյանի «Մանրապատումների» պատմությունն արել եմ, չեմ ուզում կրկնել, բայց դա բավական եղավ, որ Դերենիկ Դեմիրճյանը ինձանից դժգոհ մնա ու եթե չի միացել ինձ քննադատողներին, ապա նաև չի վիճել նրանց հետ, չի էլ հակադրվել նրանց: Բայց հետո կարգավորվեցին մեր հարաբերությունները և առաջվա պես բարեկամներ էինք, ասես գժտություն չէր եղել: Արազու պատմվածքի գլխին թե ինչ օյին բերի, պատմել եմ: Նաիրի Զարյանը տվեց ինձ մի պատվածք՝ «Քանդակագործը» կարդալու, մերժեցի, ա՛յն Նաիրու, որ կատաղի հակառակությունից անցել էր սրտագին բարեկամության, ուրեմն պետք է, որ ես գնահատեի և անխոհեմ քայլերովս նրան ևս չհանեի իմ դեմ: Գրում և միաժամանակ մտածում եմ՝ ի՞նչ անեի, Նաիրու թույլ պատմվածքը տպագրեի, բայց չէ որ դա ճիշտ չէր լինի: Նաիրին ավելի մեծահոգի եղավ ու լոյալ:

Նաիրու բարեկամները բացասական-քննադատական վերաբերմունք ունեին իմ նկատմամբ, ինչպես տարիներ առաջ և հետո ևս բավական երկար ժամանակ: Հետևապես իմ խրմբագիր նշանակվելը նրանք համարում էին գաղափարական անհեռատեսության հետևանք և պարզ է, որ իմ ամեն մի նույնիսկ աննշան սայթաքումը, էլ չեմ ասում թույլ տված լուրջ սխալները, բնականաբար օգտագործելու էին իմ դեմ,

ապացուցելու վերադաս մարմիններին, որ նրանք երբեմն որոշումներ ընդունելիս երկար-բարակ չեն մտածում:

Իմ մի սխալն էլ եղավ այն, որ կամեցա փոխել ամսագրի վերնագիրը: «Սովետական արվեստ», «Սովետական Հայաստան» և սրանց կողքին էլ՝ «Սովետական գրականություն»: Ուզում էի վերականգնել մեր հին վերնագրերից մեկը՝ «Գրական աշխարհ», «Լուսաբաց», «Նորք»: Բոլորն ինձ հետ համաձայն էին, նաև Կենտկոմի քարտուղարը՝ գաղափարական գծով, բայց խնդրի քննության ժամանակ Գևորգ Աբովն այսպիսի հարց դրեց՝ «Այդ ո՞վ է ուզում ազատվել խորհրդային բառից և ինչո՞ւ»: Եվ նրանք, որ ինձ հետ համաձայն էին, չպաշտպանեցին ինձ, մնացի մենակ: Եվ քանի որ վերնագիրը փոխելու առաջարկն իմն էր, ուրեմն, ստացվեց այնպես, որ ես ինչ-ինչ նպատակներով ուզում եմ սովետական բառից ազատվել: Եվ այն գրողները, որ իմ նշանակումից ուրախացած չէին, կասկածի տակ առան իմ քաղաքական բարեհուսությունը՝ ուրեմն այդպե՞ս է սկսում իր գործունեությունը որպես խմբագիր:

Երևի սխալ էր նաև այն, որ ես խմբագրական կոլեգիայի փոխարեն գրեցի խմբագրական մարմին, բիբլիոգրաֆիայի տեղ՝ մատենախոսություն: Այսինքն՝ հայացման կողմնակից էի: Հր. Քոչարը ամսագրի դեմ գրած հոդվածում արծարծել էր այդ հարցը: Երևի սխալ էր իմ արածը ոչ որպես սկզբունք, այլ որպես անժամանակ միջամտություն: Անժամանակ եմ ասում, որովհետև դա այն տարիներին էր, երբ առաջարկվեց և պաշտոնականացավ, որ հեղափոխության փոխարեն ասենք revolyutsiya, կուսակցության տեղ՝ partiya, ոչ թե հանրապետություն, այլ respublika և այլն, և այլն:

Անցավ ժամանակ, եկան 60-ական թվականները և պաշտոնապես հեղափոխությունը, կուսակցությունը, հանրապետությունը դարձան վերստին կիրառելի: Հարց է ծագում՝ ո՞ր ժխտումն էր ճիշտ՝ այս հասկացությունների հայկական ձեվերի՞ց հրաժարվելը, թե դրանց վերականգնումը: Իհարկե՝ վերջինը: Ուրեմն՝ իմ մտածողությունը եղել է այդ տրամաբանության մեջ: Շարունակենք դիտել մեր լեզվաշինության ընթացքը և արձանագրենք, որ մտավորականություն (ինտելիգենցիա) ենք ասում, մշակույթ (կուլտուրա), մրցույթ

(կոնկուրս), բեմադրիչ (ռեժիսոր), թատերագրություն (դրամատուրգիա), հարցազրույց (ինտերվյու), հյուրախաղեր (գաստրոլներ), հեռուստացույց (տելեվիզոր) և այլն, և այլն։ Ուրեմն՝ հաղթանակել է հասկացությունների հայացման միտումը։

Հարցին նայենք ըստ էության։ Ինչո՞ւ գործածել բիբլիոգրաֆիա, երբ ունենք այդ հասկացության այնպիսի գեղեցիկ ձևակերպում, ինչպիսին մատենախոսությունն է, ինչո՞ւ կարդող ենք ռեցենզիայի փոխարեն գործածել թատերախոսություն, ռեցենզենտի փոխարեն՝ թատերախոս, իսկ երբ բիբլիոգրաֆիայի տեղ մատենախոսություն է ասվել, դա որակել ամոթ և խայտառակություն, և քննադատությունը ձևակերպել այնքան խիստ, որ իմ արածը ի լուր աշխարհի հայտարարվի ոչ ավել և ոչ պակաս՝ հայոց լեզվի զարգացումը կասեցնող հետադիմական-պահպանողական քայլ։

Նույնը, երբ ես խմբագրական կոլեգիայի փոխարեն գրել էի խմբագրական մարմին։ Ինչո՞ւ կոլեգիա և ոչ մարմին։

Երկար ժամանակ ասվում էր գիտական սովետ, բայց հիմա ոչ ոք սովետ չի ասում, բոլորն էլ գիտական խորհուրդ են ասում։ Եթե ինձ մեղադրողներն ասեին, թե իրենք մատենախոսության փոխարեն առաջարկում են գրախոսություն, ուրիշ հարց։ Գոնե վիճելի համարվեր, առարկություններ հարուցեին և ոչ թե կտրական լինեին և կատեգորիկ ու մեղադրանք բարդեին իմ վրա, ներկայացնելով ինձ որպես պահպանողական մտածելակերպ ունեցող մարդու։

Ես այս բոլորը հիշում եմ, որպեսզի ասած լինեմ, թե ինչին է հետամուտ եղել իմ միտքը, հայացման միտումի հետևից եմ գնացել։ Գուցե հաջող չէր փորձս, այդ այլ հարց։ Այսօր էլ հայացման որոշ ձևեր ինձ հաջող չեն թվում, ոչ էլ այն կարծիքին եմ, թե ամեն ինչ հարկավոր է հայացնել։ Հաջողն ու անհաջողը հարցի մասնավոր կողմն է, խոսքը վերաբերում է սկզբունքին, որն այսօր արդարացված է գործնականորեն և որի առաջն այլևս ոչ ոք առնել չի կարող և պետք էլ չէ։ Ես հիմա էլ այն կարծիքին եմ, որ խմբագրական կոլեգիայի փոխարեն ավելի լավ կլինի, եթե գրվի խմբագրական մարմին։ Բայց սա կարծիք է լոկ, ոչ ավելի և ոչ էլ մանավանդ պարտադրություն, ու եթե մեկն ինձ առարկի և պնդի, թե

խմբագրական կոլեգիան ավելի լավ է, ավելի ճիշտ, իմ մտքով չի անցնի նրան օտարամոլ համարել։

Կարծում եմ, որ ինձ հասցեագրված մի մեղադրանքը արդարացի էր, խմբագիր կարգվելով ես ամսագրի հետ կապեցի մեր հայագետներին՝ Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Ստեփան Մալխասյան, Գրիգոր Ղափանցյան և ուրիշներ։ Կարծում էի, որ դա կհարստացնի ամսագրի բովանդակությունը և միաժամանակ կբարձրացնի ամսագրի հեղինակությունը։

Միտքս բարի էր, անշուշտ, բայց նրանց գործուն մասնակցությունը փոխեց ամսագրի դեմքը, նրանց գիտական հոդվածները այլ բնույթ հաղորդեցին ամսագրին, մինչդեռ գրողների միության հանդեսը պետք է արտացոլեր գրականության արդի վիճակն ու ընթացքը։ Մի խոսքով՝ մարտական ամսագիր լինելու փոխարեն, դարձավ համարյա ակադեմիական հանդես։

Այս մեղադրանքը ճիշտ էր։

Հրաչյա Քոչարի քննադատական հոդվածն իր ազդեցությունն ունեցավ ղեկավար ընկերների վրա։ Նրանք զգաստացան, բայց չշտապեցին կազմակերպչական եղրակացություններ կատարել, որոշեցին մի փոքր էլ սպասել, բայց հետո տեսան, որ չեմ փոխվում, հետևություն չեմ անում ու երևի դրվեր ինձ խմբագրի պարտականություններից ազատելու հարցը, եթե հանկարծ պատերազմը չսկսվեր։ Ժամանակ չկար այդ հարցով ղբաղվելու։ Դա թվում էր շատ փոքր հարց։ Փոքր հարց Կենտկոմի համար, բայց ոչ գրողների։ Պատերազմից երկու ամիս անցավ։ Իսկ ամսագրի շուրջ շիկացած մթնոլորտը պահպանվում էր։

Ահա այս թոհուբոհի ժամանակ բանակ կանչված Սիրասը Մոսկվայից վերադարձավ, և Կենտրոնական կոմիտեն առաջարկեց նրան խմբագրելու «Սովետական գրականություն» ամսագիրը։

Կրքերը խաղաղվեցին։ Սիրասն ավելի ընդունելի էր, քան՝ ես։ Իմ պատրաստած մի համարը լույս տեսավ նրա անունով և ոչ ոք չնկատեց դա։ Ամսագիրը դարձավ սովորական ամսագիր, դա էլ ոչ ոքի չզբաղեցրեց։

Սիրասը խմբագրեց ամսագրի մի քանի համար։

Մի օր ինձ կանչեցին Կենտրոնական կոմիտե և ասացին,

որ շարունակեմ որպես խմբագիր իմ պարտականությունները կատարել ամսագրում։

— Բայց ես վաղուց խմբագիր չեմ։

— Ձեր խմբագրի պաշտոնից հանելու մասին որոշում չի եղել։

— Իսկ Սիրա՞սը։

Ինձ բացատրեցին, որ Սիրասը բանակից ազատված չէ, որ նրա համար խմբագրից հարմար գործ չկար, մանավանդ իմ հիմնական գործը՝ պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչը կար ու կար, այնպես որ խմբագրի պարտականությունները նրա վրա դնելը ժամանակավոր քայլ էր միայն։

Ես ասացի, որ չեմ ուզում այլևս վերադառնալ խմբագրի գործին, թող ուրիշի նշանակեն։

Կենտկոմի քարտուղարն ասաց՝ ինչպես չեմ հասկանում, որ խմբագրի պաշտոնը Սիրասին ժամանակավորապես հանձնարարելը, հարկադրված քայլ լինելուց բացի, իմ օգտին էր, նպատակ ունեին խաղաղեցնելու իմ հանդեպ եղած վրդովմունքը։ Մի փոքր դժգոհ, վրդովված ձայնով ասաց, թե ես պետք է գնահատեմ հանրապետության ղեկավար մարմինների վստահությունն իմ նկատմամբ։

Ես սուսուփուս գործի անցա։

Չէի կարծում, որ ավելի ծանր մեղադրանքները հետո են լինելու։

Գրողների միության առաջին քարտուղարը Գևորգ Աբովն էր։

Ես անզգուշություն ունեցա գրողների տանը, մի ոչ բազմամարդ, բայց պաշտոնական հավաքույթում խիստ քննադատել նրա մի ոտանավորը, որը բառի բուն իմաստով ոտանավոր էր և ոչ թե բանաստեղծություն։ Ինձ մի քանիսը, այդ թվում և Արագին, խորհուրդ տվին այլևս այդպիսի անխոհեմ քայլեր չանել։ Ինչ վերաբերում է Աբովին, ապա նա ձայն չհանեց, լուռ մնաց, բայց գույն առավ, գույն տվեց և ինչպես երևում է, մի մատը խուփ արավ։

Բայց հետո այդ նույն ոտանավորը, որ չեմ հիշում, թե ինչպես էր կոչվում, հեգնանքով հիշվեց «Սովետական Հայաստան» թերթի մի հոդվածում։ Ու թեև ես չէի այդ հոդվածի հե-

ղինակը, այլ Հրաչյա Քոչարը, բայց Աբովը դրա սկզբնապատճառն ինձ համարեց։

Գրողների մի խումբ, կազմված Նաիրի Զարյանից, Գևորգ Աբովից և Սարմենից, մեկնեց Ղրիմ՝ ռազմիկների առաջ ելույթներ ունենալու։ Վերադարձից հետո Նաիրին համով-հոտով պատմում էր իրենց ճամփորդության մասին։ Ես խնդրեցի նրան գրել ակնարկ։ Նա էլ գրեց՝ «Տավրիդյան պարանոցում» խորագրով։ Բավական ընդարձակ էր ակնարկը, ու ես կիսելով, հրապարակեցի առաջին մասը մի համարում, շարունակությունը թողնելով հաջորդ համարին։ Հրապարակված մասում Աբովի և Սարմենի հետ կապված հումորիկ տեսարաններ կային, գրված աշխույժ ոճով։

Հանդիպեց Աբովը և արտահայտեց դժգոհություն «Տավրիդյան պարանոցից»։ Ես փորձ արի բացատրելու, որ եղածը բարեմիտ կատակ է և ոչ ոք չի ընկալել այնպես, ինչպես ինքը։

— Շարունակությունը մի տպագրիր։

— Ինչո՞ւ։

— Խորհուրդ եմ տալիս։

— Բայց ես կարող եմ չընդունել խորհուրդը։

— Չես կարող։

— Ինչո՞ւ։

— «Սովետական գրականությունը» Հայաստանի գրողների ամսագիրն է։

— Հետո՞ ինչ։

— Հետո այն, որ այդ միության առաջին քարտուղարը ես եմ։

— Ասածդ ընդունեմ որպես կարգադրությո՞ւն։

— Եթե ճիշտն ուզում ես իմանալ, այո։

— Բայց խմբագիրը ես եմ։

— Ուրեմն որոշե՛լ ես տպագրել։

— Այո։

— Տես, չփոշմանես։

— Չեմ փոշմանի։

— Ինչպես տեսնում եմ, քեզ համար մեկ է՝ կշարունակես խմբագիր մնալ, թե ոչ։

Խոսակցությունը սրվում էր, ու ես ինձ տիրապետել չէի

կարողանում, ինքնասիրությունս խոցված էր, աշխատում էի գեթ այս վեճի ընթացքում մնալ բարձրության վրա։

— Սկզբունքը ինձ համար պաշտոնից բարձր է։

— Ջմոռանա՛ս։

— Ջե՛մ մոռանա։

Աբովը գնաց, ես անցա խմբագրական սենյակ, ուզեցի աշխատել՝ չկարողացա, հոգիս դեռ խաղաղված չէր, և միտքս բնականաբար Աբովի վեճի հետ էր։ Հիշեցի Աբովի սպառնալիքները, մտքովս այնքան էլ խիստ բաներ չանցան, չհիշեցի Արազու և մյուս ընկերներիս խորհուրդը՝ զգուշանալ Աբովից, մտածեցի, որ շատ-շատ պիտի գնա Կենտրոնական կոմիտե և կանխի «Տավրիդյան պարանոցի» շարունակության հրապարակումը։ Բայց ես էլ իմ համառությունն ունեի, կանչեցի Վահան Գրիգորյանին և խնդրեցի պարզել, թե ինչ վիճակում են ամսագրի հերթական համարի մամուլները։ Վահանն ասաց, որ բոլոր մամուլները պատրաստ են տպագրության, բացի վերջին չորս էջից։ Ես շտապեցի տպարան, որտեղ տանու մարդ էի և չեմ հիշում, որ իմ որևէ խնդրանքը բանվորները մերժած լինեին։

Հանդիպեցի տպագրական բաժնի պետին։

— Ե՞րբ եք սկսելու ամսագրի տպագրությունը։

— Երբ ասեք։

— Հենց վաղը։

— Վաղը, թող վաղը լինի։

Երկու օրում բոլոր մամուլները տպագրվեցին։

Կենտկոմ ինձ կանչեցին այն ժամանակ, երբ ամսագրի այդ համարը լրագրավաճառ կրպակներում էր։ Ես ամսագրի պատրաստ համարը դրի Սահակ Կարապետյանի առաջ։ Թերթեց, աչքի անցկացրեց Նաիրու ակնարկը, ժպտաց, բայց ոչինչ չասաց։ Գաղափարական հարց չէր, անշուշտ, հետևապես միտք չուներ խիստ միջոցներ ձեռք առնել՝ կանխել ամսագրի վաճառքը, որ սկսված էր։

Ինձ թվաց, որ ես հաղթող դուրս եկա, բայց ավա՛ղ, բնավ էլ այդպես չէր։

Հանդիպեցի Աբովին։

— Քոնն արիր, էլի՛։

Ձայն չհանեցի։

Աբովի ձայնի մեջ, ոչ էլ դեմքի արտահայտության, ո՛չ խստություն կար, ո՛չ սպառնալի շեշտ: Դեմքին անհասկանալի ժպիտ կար:

Պարույր Սևակի առաջին բանաստեղծությունները խանդավառություն առաջ բերին: Բայց ընդհանուր ոգևորության մեջ տարակուսող ձայներ էլ կային: Դրանցից մեկը Աբովն էր:

— Այդ տղայի հետ դու իսկապես լո՞ւրջ հույսեր ես կապում:

— Այո:

— Անկեղծ ասած՝ ոչ մի լավ բան չեմ տեսնում:

Բայց երբ 1943-ի առաջին համարը լույս տեսավ, մեջն էլ նույն Սևակի նոր բանաստեղծությունը, Աբովը զանգահարեց ինձ արդեն որպես գրողների միության քարտուղար և ասաց՝ «Խրախուսելու նպատակով մի անգամ տպագրեցիր, լավ, ի՞նչ ես իրար հետևից ասպարեզ բերում դրան»:

Սևակի վերաբերյալ Աբովի խորհրդին նշանակություն չրտվի և նրա «Ռեքվիեմ» խորագրով շարքից առանձնացրել էի «Պարերգը»: Ուղարկեցի տպարան ամսագրի հերթական համարում հրապարակելու նպատակով:

Մի քանի օրից կանչվեցի Կենտկոմ: Սահակ Կարապետյանը իմ առջև դրեց «Պարերգի» սրբագրաթերթը:

— Հիմա ժամանակ չէ այսպիսի գործեր տպագրելու:

Ես հասկացա. ասվածը ոչ թե խորհուրդ էր, այլ կարգադրություն: Սրբագրաթերթը առա և գնացի խմբագրություն: Եթե չեմ սխալվում, այդ սրբագրաթերթը պետք է պահպանված լինի իմ թղթերում:

Սա էլ Աբովի գործն էր:

1943-ին մեկնեցի Թիֆլիս, վրաց գրողների տանը հայ մտավորականության համար դասախոսություն կարդալու: Պարոնյանի հերոսը կասեր՝ ոտքս կոտրվեր, բարով խերով չերթայի:

Դասախոսությանը ներկա պրոֆ. Մելիքսեթ-Բեկը վերջում մոտեցավ ինձ ու ասաց, թե ինքը հայտնաբերել է մի փաստաթուղթ, որ վերաբերում է Հովհաննես Թումանյանի ազնվական ծագմանը: Հարցրեց՝ կտպագրե՞մ: Եթե իմ փոխարեն խելքը գլխին մի խմբագիր լիներ, կասեր, որ ձեր առաջար-

կած նյութը անպայման հետաքրքիր է, բայց մեր ամսագրին ոչ սպասական, ավելի լավ է ուղարկեք ակադեմիայի «Տեղեկագրին», իսկ ես ասացի, որ կտպագրեմ։ Խնդրելով, որ ինքը մի կարճ ներածական գրի, ծանոթագրություններ տա։ Ասաց, որ այդ բոլորը պատրաստ է և, իմանալով, որ գիշերվա գնացքով վերադառնում եմ Երևան, պայմանավորվեց, որ կբերի կայարան։ Բերեց։ Դա Եփրեմ կաթողիկոսի կոնդակն էր։ Ճանապարհին ուզեցի կարդալ, բայց հոգնած էի, քունս տարավ և չկարդացի։ Հետաձգեցի։ Երբ տեղ հասա, կանչեցի Վահան Գրիգորյանին, խնդրեցի աչքի անցկացնել, տալ նայելու Վահե Միքայելյանին և ուղարկել տպարան։ Վահան դու Վահան, տեսնելով, որ կոնդակը գրաբար է, չի կարդում, հույսը դնում է Վահեի վրա։ Վահեն էլ կարդում է, թե չէ, հայտնի չէ, նյութն ուղարկում է շարելու, որը և տպագրվում է հերթական համարում։ Պարզվում է, որ այդ կոնդակում վիրավորական արտահայտություն կա մեր եղբայր ժողովրդի հասցեին։ Պատերազմական օրեր էին։ Ժողովուրդների եղբայրական դաշինքը մեզ հարկավոր է օդի, ջրի և հացի նման և հանկարծ... Ռուբեն Զարյանը հրապարակում է մի նյութ, որտեղ...

Ահա թե ինչ արջի ծառայություն մատուցեց պրոֆ. Մելիքսեթ-Բեկը։ Չեմ ուզում կարծել, թե Աբովն այնքան վատն էր, որ չարախնդում էր, բայց նա ոչ միայն որպես գրողների միության ղեկավար, ոչ միայն որպես հին կուսակցական, այլ նաև որպես «թշնամացած» մարդ, պարզ է, որ իրենը պետք է աներ։ Ոչ ոք ինձ պաշտպանել չէր կարող։ Այսպիսի վրիպումը պարզ է, որ չէր ներվելու։ Վերջապես համբերության բաժակը լցվել էր։ Կենտրոնական կոմիտեն որոշում կայացրեց «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրի պաշտոնից ինձ ազատելու վերաբերյալ։

Մինև այդ որոշումը մի դեպք էլ պատահեց։

Ահա այդ թեժ օրերին տպագրվել, ավարտվել էր ամսագրի 4—5 միացյալ համարը։ Մամուլները գտնվում էին կազմատանը, Աբովը կարգադրեց, որ համարը, եթե արդեն կազմը ված է, վաճառքի չհանվի, ուղարկվի իրեն։ Ծանոթանալով նյութերին, Աբովը այստեղ ևս գտավ մեղադրելի հիմքեր։

Նվիրդ Թումանյանից խնդրել էի, որ հոր հետ կապված

նյութ տա ամսագրին: Նա էլ առաջարկեց «Տերյան և Թումանյան» վերնագրով հոդված, որ ես գետեղել էի ամսագրի 4—5 համարում:

Այդ հոդվածում բանաստեղծի դուստրը վկայում էր, թե ինչ է ասել Տերյանը.

«Իվան Ֆադեևիչը ամեն օր չպետք է քաղաքում երևա, ամեն երեկույթի գա, հասարակության մեջ լինի, խոսի, ամեն բան անի, ամենքի համար վառվի, նա իրեն թանկ պիտի պահի, մեկ-մեկ պիտի երևա, էն էլ կառքով, он должен иметь свой въезд կամ պրոսպեկտով մի անգամ անցնի, որ ժողովուրդը նրան հեռվից տեսնի во весь рост, տեսնողը փողոցում կանգնի, մատով ցույց տա, ասի՝ Հովհաննես Թումանյանն անցնում է»:

Աբովը գտավ, որ գաղափարապես խոցելի նյութ է սա, թե այդ բոլորը Նվարդի ասածը չէ, այլ իբր ես եմ հուշել նրան, թե այսպես գրի, որ փոխանակ կոմունիստ Տերյանին ներկայացնելու իր դեմոկրատական ժողովրդական հայացքներով, վերագրվել է նրան արիստոկրատիզմ, սնոբիզմ և այլն:

Ուրեմն՝ ազգայնամոլությունը բավական չէր, ապոլիտիզմը նույնպես, մի նոր մեղադրանք էլ ինձ բաժին հասավ, դա էլ սնոբիզմն էր: Ասեմ, որ Տերյանի անունից Նվարդ Թումանյանի պատմածը տեղ է գտել 1969-ին լույս տեսած «Հուշեր և զրույցներ» գրքում:

Ամսագրի վերջին չորս էջը նորից էին տպագրել:

Տպագրել էին վարկաբեկիչ հաղորդում Շիրազի «Երգերի գրքի» մասին կարդացած իմ զեկուցման մասին, որպես գաղափարապես անընդունելի և արատավոր:

Լրատուի բաժնում «Հայաստանի սովետական գրողների ստեղծագործական խորհրդակցությունը» խորագրով ընդարձակ հաղորդում է տեղադրված, որտեղ ի թիվս քննադատական այլ դիտողությունների, որոնց ենթարկվեցին Դեմիրճյանն ու Նաիրին, Շիրազը և Կարինյանը և ուրիշներ, խստագույն խոսքեր ասվեցին «Սովետական գրականություն» ամսագրի մասին, որ իբր «խմբագրությունը պատերազմի ժամանակի ընթացքում չի վերակառուցել իր աշխատանքը, հաճախ նրա էջերը լցվում են վերացական և սխեմատիկ բնույթի հոդվածներով. ամսագիրը հեռու է կանգնած այժմեա-

կանության հրատապ հարցերից»: Հաղորդման մեջ ասված է նաև, որ «մասնավորապես քննադատության ենթարկվեցին Դ. Դեմիրճյանի իրենց իդեոլոգիայով սխալ մի քանի պատմվածքները («Կոորդինատներ» և «Բժիշկ»), ինչպես նաև Ն. Զարյանի ճամփորդական նոթերը («Տավրիդյան պարանոցում»), որտեղ նա իրականությունն արտացոլելու փոխարեն տարվել է ճակատային իրականությանը ոչ հատուկ և նրա արտացոլումը չհանդիսացող օբիվատելական տրամադրություններով»:

Ինչ վերաբերում է Մելիքսեթ-Բեկին, ապա Ար. Ս. ստորագրությամբ մի փոքրիկ հոդված էր տեղավորված «Մի կեղծ բանաստիրության մասին» վերնագրով, որտեղ պրոֆեսորը համեմատված էր Գոգոլի հերոսներից Պետրուշկայի հետ, նրա գիտությունը հայտարարված է կեղծ և վնասակար:

Իմ անունը հանել էին իմ իսկ կազմած ու խմբագրած համարից և վերջին էջի տակ գրել էին «Խմբագրական կոլեգիա», ասես, եթե անունս մնար՝ աշխարհում շատ բան կարող էր փոխվել դեպի սարսափելին: Ուստի պետք էր շտապել և ժամ առաջ առնել աշխարհակործան վտանգի առաջը:

Ահա այսպիսի անփառունակ վախճան ունեցավ խմբագրի իմ պաշտոնը:

Ինձ կենտկոմ չկանչեցին: Կուսակցական վերադաս մարմինը չուզեց լսել իմ բացատրությունները: Ուրախ էի, որ ինձ փոխարինելու էին էդվարդ Թոփչյանով, իմ լավ ընկերոջով, բարյացակամ մարդով, զարգացած և նուրբ ճաշակի գրականագետով: Մի ամիս որ անցավ, Սահակ Կարապետյանի քարտուղարուհին զանգահարեց և հայտնեց, որ կենտկոմի քարտուղարը ուզում է տեսնել ինձ:

Արդեն կարիք չկար, որ ես փորձ անեի ինչ-որ կետեր պարզաբանել: Կենտկոմի քարտուղարը հույս հայտնեց, որ ես ճիշտ եմ հասկացել կատարվածը, որ երևի արդեն արած կլինեմ օգտակար հետևություններ: Բայց մի հանգամանք ուզեց շեշտել:

— Որպես խմբագիր ձեր սխալը եղել է այն, որ համարը կազմելիս ձեր աչքի առաջ եղել են Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Մանուկ Աբեղյանը: Մտածել եք, թե

համարը նրանց դո՞ւր կգա, թե ոչ: Աշխատել եք նրանց գոհացում տալ:

Չհամբերեցի:

— Իսկ դա վա՞տ է, որ:

Չէր սպասում, որ իր խոսքի կեսին կմիջամտեմ: Մի պահ լուռ մնաց, հետո շարունակեց.

— Լավ է, ո՛վ է ասում վատ է: Մի բայց կա: Արվեստը արվեստ, բայց քաղաքականության հարց էլ կա: Պետք է դա էլ աչքի առաջ ունենայիք և մտածեիք, թե նոր լույս տեսած հայ արին ինչպես կվերաբերվեն կենտկոմում, կենտկոմի մամուլի բաժնի աշխատակիցները:

Վերջում, ձեռքս սեղմելիս անհրաժեշտ համարեց ասել՝

— Ամեն մի անհաջողություն նաև օգտակար դաս է ապագա գործունեության համար:

ԻՄ ՄԱՅՐԸ

Պատերազմի օրերին կորցրի մորս...

Մորս, որի վրա էր մեր տան ամբողջ հոգսը, մի օր գտանք շփոթված ու այլայլված: Կորցրել էր մեր ստանալիք հացի համարյա մի ամսվա կտրոնները: Տակնուվրա էր անում տունը, նայում հնարավոր ու անհնարավոր անկյունները, ոչ մի տեղ չկային, ինչ էին եղել, որտե՞ղ ու ե՞րբ էր կորցրել, չգիտեր: Համարյա մի ամիս պետք է շուկայից հաց գնեինք, մասնավոր շատ բարձր գներով: Այդ կորուստով տուժել էին միանգամից երկու ընտանիք, և՛ որդունը, և՛ աղջկանը: Քրոջս տան հետ համեմատած, մերն ավելի ապահովված ընտանիք էր նյութապես և նա մի տնից կրում էր մյուս տուն:

Նա չներեց իրեն այդ կորուստը և... հիվանդացավ:

Սկսեց նիհարել կասկածելի արագությամբ, դեմքը դալկացավ:

1943-ին հանգավ:

Ա՜խ, իմ անգին մայրիկ...

Իր որդին գիտության թեկնածու էր ընդամենը և նրա կարծիքով Հայաստանի ամենահայտնի գիտնականն էր: Նա գիտեր, թե ինչ է գիտությունների doktorը, գիտեր կան և

ակադեմիկոսներ, բայց նրա համար միակը և ամենակարևորն իր որդին էր... մի Հայաստան և մի որդի...

Իմ լա՜վ ու միամիտ մայրիկ...

Շատ երիտասարդ՝ կորցրել էր ամուսնուն, իր անփոխարինելի վարոսին: Մյուս հարվածը, որ հասել էր նրան՝ խաբվածությունն էր: Հանգուցյալ ամուսինը թողել էր բավական կարողություն, և հույս ուներ անհայր մնացած զավակներին պահել այնպես, որ հոր բացակայությունը չզգան, մեծանան անկարիք ու ապահով և հանկարծ... խաբել էին ու կոտրած տաշտակի առաջ թողել իր իսկ ազգականները:

Ողբերգություն է խաբվածությունը: Առավել ծանր, երբ հարվածը գալիս է հարազատներից: Նա գտավ իր մեջ այնքան ուժ, որ կարողացավ իր չորս զավակին ոտքի կանգնեցնել, բայց մի վերք այդպես էլ չսպիացավ սրտում: Նա, որ հավատացել էր մարդկանց ու աշխարհին նայել պարզ ու անկեղծ, դարձել էր անհավատ, ամեն ինչ և ամենքին կասկածի տակ առնող:

Ա՜խ, իմ սիրելի ու խաբված մայրիկ...

Հաջորդ հարվածը քսանհինգը չբոլորած աղջկա մահն էր: Երգի ու պարի, ուրախ ու երջանիկ կյանքի համար ստեղծված աղջկա կորուստը: Ոչ մի կերպ չհասկացավ, թե ինչ օրինաչափություններ են գործում բնության ու հասարակության մեջ: Ինչպես կարող է պատահել, որ փոխանակ զավակը մոր դագաղի հետևից գնա, մայրն է աղջկան ճանապարհում դեպի հավիտենական հանգիստ:

Ա՜խ, իմ դժբախտ մայրիկ...

Ինչպես բոլոր մայրերի, այնպես էլ իմ մոր բարոյական ուժը հզոր էր, կսկծից չկորցրեց իրեն: Ավագ որդի ունի և նեղվածության մեջ ապրող աղջիկ, ազնվագույն արարած, որին երբեք չժպտաց բախտը, ինչ պիտի լինի նրա հալը, եթե ինքը չլինի:

Վերջապես կրտսեր որդին, գոնե նա իրականացնի ամուսնու տենչանքը՝ «Իմ զավակները պետք է Սորբոնի համալսարանն ավարտեն...»:

Ա՜խ, իմ խեղճ մայրիկ:

Լավ չէ, երբ երեխան մեծանում է առանց հոր, բայց դրժբախտություն է, երբ նա կորցնում է մորը, նույնիսկ իր

կյանքի այն տարիներին, երբ հաստատուն է ոտքի տակի հողը...

Երբ մայրը կա, մենք ապերախտաբար չգիտենք, թե ինչ արժեք է ծնողը, բայց երբ կորցնում ենք, նոր ենք միայն հասկանում, թե ինչ կորցրինք և դուցե այդ ժամանակ ավելի քան երբևէ, սրտի թրթիռով զգում ենք իմ համերկրացի քանաստեղծ Ավետիք Իսահակյանի և նրա կրտսեր եղբոր՝ Հովհաննես Շիրազի մայրական երգերի խորքը։

Մայրը կարող է իր ամուսնու նկատմամբ եսասեր լինել։ Մայրը կարող է իր քույրերին ու եղբայրներին նվիրված չլինել։ Բայց մայրը չի կարող իր զավակներին դավաճանել, մայրը չի կարող նրանց մինչև վերջ նվիրված չլինել։ Չլինել պատրաստ անձնազոհության, բնության պարգևած բնազդով՝ չի կարող չլինել ներող ու անքեն։

ՏԱԹԵՎԻԿ

Իմ երկրորդ աղջիկը ծնվեց պատերազմի ժամանակ։ Մայրս դեռ ողջ էր։ Անկեղծ խոստովանություն լինի՝ ուզածս տղա էր։ Միշտ չէ, որ աստված արժեք է տալիս մարդկանց նույնիսկ ամենահամեստ ցանկություններին։ Ինքն է որոշում ու տնօրինում։ Բնության օրենքներն անխմանալի են։

Երբ գնացի ծննդատունն, և ինձ բուժքույրը հաղորդեց աղջկաս ծնունդը, տրամադրությունս այնպես ընկավ, որ առանց շնորհակալություն հայտնելու՝ թողի հեռացա։ Երևի բուժքույրը նայում էր հեռացող հոր քայլերին և մտածում.

— Այս էլ մեր մտավորականությունը։

Երեկոյան դեմ խաղաղվել էի, և գիշերը երկար ժամանակ քուն չէր գալիս աչքերիս, մտատանջության մեջ էի, թե ինչ անուն եմ տալու աղջկաս։

Առաջին անունը, որ մտքովս անցավ՝ Ծովինարն էր։ Այս անունը դրոշմվել ու մնացել էր իմ մեջ Սասունցի Դավթի հազարամյակի օրերից։ Բայց մի փոքր հետո մեջս գործեց մի արթուն տրամաբանություն՝ Ծովինար անուն ունեցող աղջիկն անպայման ունենալու է կապույտ աչքեր, լինելու է ոսկեծամ, իսկ քո աղջկա հայրն էլ, մայրն էլ մեկը մյուսից

ավելի թուխ են: Յավով բաժանվեցի փայփայած Ծովինար անունից: Նոր անուն չեկավ մտքիս, թեև մեկը մյուսից գեղեցիկ հայկական անուններ ինչքան ասես կային՝ Գայանե, Հասմիկ, Կարինե, Անահիտ, Արմենուհի... Երևի մտքովս չէր անցնում, որովհետև հայկական լինելուց բացի, ուզում էի, որ տարածված անուն չլինի:

Լեզվի և գրականության ինստիտուտում գրասեղանս այն սենյակում էր, որտեղ նստում էր Մորուսը՝ իմ նախկին ուսուցիչը, հետագայում ավագ ընկերը: Աղջկաս ծնվելու օրն ինձ հանգստացնում էր. «Թե տղան շատ լավ է, մանավանդ տոհմ է շարունակում, բայց տան և ծնողների համար աղջիկն անփոխարինելի է իր կապվածությամբ ու ջերմությամբ»:

Գրքերը դասավորել էի սեղանիս, թղթերը նույնպես, մի երեք մատիտ սրել, բայց ո՛չ գիրք էի բացում, ո՛չ էլ մատիտ առնում ձեռս:

Ինչ-որ մեկը եկավ Մորուսի մոտ, ու նրանց միջև սկսվեց զրույց: Մորուսին այցելած մարդն ասաց.

— Հակոբը եկել է ռազմաճակատից:

— Ի՞նչ Հակոբ:

— Տանյայի:

— Տանյան ո՞վ է:

— Տաթևիկ Սազանդարյանը:

Տաթևիկ անունը լսելն ու վեր թռչելս, ծննդատուն վազելս մեկ եղավ: Տիկնոջս երկտող ուղարկեցի՝ «Նորածնի անունը դնում ենք Տաթևիկ»: Որոշումս ամեն տեսակետից պատճառաբանված էր, հայկական է և տարածված չէ, հնչեղ է:

Ծննդյան վկայականը դրի մորս առաջ՝

— Ի՞նչ տուլտի անուն ես դրել:

Ջոքանչս՝ տիկին Արուսյակը, կրճատեց աղջկաս անունը և կոչում էր Թևիկ:

Այդ անունը բացի երգչուհուց ոչ ոք չուներ: Հետո իմացա, որ դա երգչուհու հայրն է հորինել՝ Տիգրան Սազանդարյանը, հիմք ընդունելով Տաթևի վանքը, քանի որ ինքը Գորիսից էր: Բայց արի տես, որ այդ անունը տարածվեց:

Իմ կարծիքով դա այսպես եղավ:

Իմ աղջիկը ընդամենը հինգ ամսական էր, որ մայրս վախճանվեց, ու լրագրում լույս տեսավ սգո հայտարարություն

այն մասին, որ Ռուբենն, Նելլի և Տաթևիկ Զարյանները հայտնում են մոր, սկեսուրի և տատի՝ Հայկանուշ Դազանչյանի մահը...

Կյանքում Տաթևիկ Սազանդարյանը հայտնի էր Տանյա անունով։ Ոչ ոք նրան Տաթևիկ չէր ասում։ Ինքը՝ երգչուհին էլ, ծանոթանալիս ներկայանում էր Տանյա անունով։ Ոչ էլ այն տարիներին ընդունված էր մարդկանց հայրանունով կոչել, որ ավելի քառասնական թվականների վերջերի և հիսնականի սկզբներին գործածական երևույթ դարձավ, չհաշված մի երկու բացառություն։ Այնպես որ, Տաթևիկ անունը միայն համերգների և օպերայի ծրագրերի մեջ էր Սազանդարյան ազգանվան կողքին։ Մի տեսակ պաշտոնական անուն լիներ ասես։ Բացի այդ, երգչուհին այն ժամանակ ռուսախոս էր։ Եվ Տաթևիկ, տիպիկ աղգային, անունը շատ էլ չէր համապատասխանում իր նկարագրին։ Կրկնում եմ՝ այն ժամանակ և ոչ հիմա, երբ նախկին Տանյայից ոչ մի հետք չի մնացել, բառերբախտաբար։ Այնպես որ՝ երեսնական թվականների վերջերին և քառասնական թվականների սկզբներին մարդկանց թվում էր, որ Տաթևիկը արտիստական ծածկանուն է։ Եվ հանկարծ մահվան ինչ-որ հայտարարության մեջ կարդացին, որ մի աղջիկ, բոլոր աղջիկների նման սովորական արարած, կրում է այդ անունը։ Ուրեմն՝ մի շատ պարզ աղջիկ նույնպես կարող է կրել այդ անունը։ Զանգ էին տալիս մեզ նորածին աղջիկների մայրերը, ստանալու մեր համաձայնությունը իրենց աղջկա անունը Տաթևիկ դնելու։ Ասում էինք, թե նախ՝ դա ինչ համաձայնություն առնելու հարց է, երկրորդ՝ եթե իսկապես անհրաժեշտ է համաձայնություն, ապա պետք է դիմել այդ անվան առաջին կրողին։ Նույնիսկ դեպք եղավ, որ մայր զանգեց ու ասաց, թե իր աղջկա անունն ուզում է փոխել Տաթևիկ։ Հարցրինք, թե անունն ինչ է, ասաց՝ Գայանե։ Որքան էլ ասացինք, թե Գայանեն գեղեցիկ անուն է, ինչ կարիք կա փոխելու, համառեց, թե չէ այդպես ենք որոշել և Գայանեին վերանվանեցին Տաթևիկ։

Եվ այս ձևով Տաթևիկ անունը, որ ընդամենը մի բացառություն ուներ, Տաթևիկ Սազանդարյան, տարածվեց և դարձավ սիրելի անուններից մեկը։

ՌԱԶՄԻԿ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ

Օրը լուսանալուն պես միացնում էինք ռադիոընդունիչը և լսում ռազմաճակատի նորություննե՛րը։ Ի՞նչ են հաղորդելու՝ արդյոք թշնամին կրկին պաշարել ու գրավել է նոր քաղաքներ, թե մեր զորքերը ռազմաճակատի այսինչ հատվածում հարձակման են անցել ու հակառակորդին ստիպել նահանջել այսինչ բարձունքից։ Բացում ենք օրաթերթերը, և մեր աչքը փնտրում է ռազմաճակատից ստացված թղթակցություննե՛րը, առաջին հերթին՝ Հրաչյա Քոչարի ակնարկները։

1943-ի սկզբներին մի խումբ հայ գրողներ և արվեստագետներ՝ Նաիրի Զարյան, Ազատ Վշտունի, Գևորգ Աբով, Տիգրան Հախումյան, Սողոմոն Տարոնցի, Սարմեն, Էդվարդ Իսաբեկյան և Արմեն Չիլինգարյան, մեկնեցին ռազմաճակատ։ Վերադառնալով՝ պատմում էին իրենց տեսածը, ապրածն ու զգացածը։ Հափշտակված լսում էինք նրանց ու մնում հիացած, երբ նկարագրում էին մեր ռազմիկների կամքն ու տոկունությունը, վճռականությունն ու լավատեսությունը։

Որքան էլ այդ բոլորը հետաքրքիր էր, նույնիսկ անչափ, միևնույն է, ի վիճակի չէին գոհացում տալու մեր հետաքրքրասիրությանը այնպիսի չափերով, երբ պատմողը ռազմաճակատից Երևան փոխադրված վիրավոր զինվորներն էին, որոնց հանդիպում էինք հոսպիտալներում։ Բայց ավելի էր մեր հետաքրքրասիրությունը բորբոքվում, երբ հանկարծ լուր էինք առնում, թե մի քանի օրով ռազմաճակատից գալու են մի խումբ զինվորականներ և պատմելու են պատերազմից։

Ահա այդպիսի հանդիպման մասին եմ ուզում պատմել։

1943-ի փետրվարի առաջին օրերին հայտարարվեց, թե Ստալինգրադի ճակատամարտն ավարտված է մերոնց փառահեղ հաղթանակով, թշնամին նահանջում է, մեր զորքերը կրնկակոխ հետևում են նրանց։

Փետրվարյան հաղորդումներից շատ չէին անցել, երբ հայտնի դարձավ, թե այսօր Երևան է ժամանել և նույն օրն իսկ Երևանի աշխատավորության հետ հանդիպում է ունենալու, ո՞վ, պատկերացրեք, Ստալինգրադի պաշտպանների պատվիրակությունը։

Հանդիպումը Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում էր։

Համերգասրահը լեփ-լեցուն էր։ Դժվար էր ասել, նստածներն էին շատ, թե ոտքի վրա մնացածները։ Միջանցքը լի էր մարդկանցով։ Շենքի մուտքի առաջ ծով բաղմություն էր խռնված։ Ասում են՝ թեև հավաքույթն արդեն սկսված է, բայց մարդիկ չէին ցրվում։

Բախտավոր էր դահլիճում տեղ գտնողը։ Այդ բախտավորներից մեկն էլ ես էի։

Բեմ եկան Ստալինգրադի ճակատամարտի պատվիրակները։ Դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից։ Ամենքը ոտքի կանգնեցին։ Ես չեմ կարող ասել, թե երբ ընդհատվեց ծափահարությունը, բայց մի կարճ ժամանակից նորից բռնկվեց, երկար ու ցնծագին՝ ի պատիվ ամբիոնի մոտ կանգնած ավագ լեյտենանտ Հրաչյա Քոչարի։ Մեր գրչակից ընկերն էր ամբիոնի մոտ կանգնած։ Ուրիշներն էլ խոսեցին, այդ թվում ջութակահար Հակոբ Խանջյանը, վրացի Ս. Խուփերիան, բայց ոչ մեկի ելույթը չթողեց այն տպավորությունը, ինչ Քոչարի խոսքը։

Խոսում էր հանդարտ ու անվրդով, հաստատ շեշտով։ Խոսում էր, և դա միայն դատողություն չէր, ոչ էլ ռազմական դեպքի պարզ նկարագրություն։ Դա ապրված խոսք էր։ Մտովի տեղափոխվեցինք պատերազմադաշտ, զգացինք մեզ ահեղ կռիվների մեջ։ Մի պահ մեզ թվաց, որ զգացինք վառոդի հոտը, մեր աչքերով տեսանք խրամատները, լսեցինք հրամանատարի խոսքը՝ «Ի՛ մարտ»։

Լավ հիշում եմ, որ Քոչարն իր խոսքում հիշեց ռուս գեներալի, հերոսական մահով զոհված վրացի զինվորի, հիշեց իր ուկրաինացի ընկերոջը, ուզբեկի և այն միտքը հայտնեց, թե ստալինգրադյան հաղթանակի համար պարտական ենք այն մեծ զգացմանը, որ ըստ ռուսի՝ վրացու և հայի պատիվը իրենն է, ուզբեկն ու բելոռուսը ընդհանուր շահեր ունեն և ոչ մի հակասություն։ Հիշում եմ, որ ասաց՝ մերն է լինելու վերջնական հաղթանակը, որովհետև մեր երկրում բոլոր ազգությունները եղբայրական դաշինք ունեն կապած և հենց այդ պատճառով էլ մեզ ոչ ոք հաղթել չի կարող։ «Իմացյալ ժահի» շուրջն էին նրա բոլոր դատողություններն ու պատմությունները։ Ես չեմ հիշում, որ իր ելույթում Քոչարը հայրենիք ու հայրենասիրություն բառերն օգտագործած լիներ, բայց իր

ողջ խոսքը հայրենիքի սիրով էր տոգորված: Մեկ էլ հասկացա, որ Քոչարի խոսքի ուժն ու հմայքը հողի զգացողությունից են գալիս:

Որքան խոսեց՝ չեմ հիշում, բայց երբ ավարտեց, ես, և կարծում եմ նաև ողջ դահլիճը, ցավեցի, որ ավարտեց:

Ես չեմ հիշում, թե ուրիշներն ինչ ասացին: Չեմ հիշում նույնիսկ, թե մեր անունից ելույթ ունեցող Հովսեփ Օրբելին և Նաիրի Զարյանը ինչ ասացին:

Երևի մարդկային հոգին, եթե մանավանդ նրա տերը անմիջական խառնվածք ունի, ի վիճակի չէ միանգամից շատ բան ընկալելու, նա իր ներքին աշխարհը կենտրոնացնում է գլխավորի վրա և իր բոլոր հուզական ընկալումները պտտվում են դրա շուրջ: Որքան էլ Նաիրին հռչակավոր բանաստեղծ, Օրբելին՝ մեծահամբավ գիտնական, այդ օրը, այդ երեկոյի գլխավոր դեմքը Հրաչյա Քոչարն էր: Այն պատճառով, որ նա մեր ընկերն էր, որ գրչի մարդ էր, այն պատճառով որ շատերին էր հայտնի, որ չի սպասել, որ զորակոչեն իրենն, ինքնակամ է գնացել պատերազմ՝ իր հայրենասիրական պարտքը կատարելու: Նա մեր աչքում դարձել էր գրող-ռազմիկի խորհրդանիշ: Ուրիշ հայ գրողներ էլ են պատերազմ գնացել, մի քանիսը չեն վերադարձել, մի քանիսը շքանշաններով են տուն եկել, այնուամենայնիվ, պատերազմի երևելի դեմքը ամենքիս համար մնաց Հրաչյա Քոչարը:

«ՄՂԶԱՎԱՆՋԱՅԻՆ ՕՐԵՐ»

Ինձ համար հիմա, մի քանի տասնամյակ անց, դժվար է ստույգ վերականգնել ժամանակը: Կարծում եմ, որ 1943-ի գարնանն էր:

Իմ ծանոթներից մեկը՝ Գրիգոր Հովհաննիսյան, զանգահարեց, թե գործ ունի ու եկավ: Գրիգորը կոմերիտական կենտկոմի երկրորդ քարտուղարն էր այն օրերին: Ծագումով՝ սասունցի, կրթությամբ՝ պատմաբան, ազնիվ, ուղղամիտ երիտասարդ:

Հովհաննիսյանի ձեռքին թղթապանակ կար: Դրեց իմ առաջ: Վրան գրված՝ Գառնիկ Ստեփանյան. «Մղձավանջային օրեր»:

Ասաց, որ ձեռագրի հեղինակն իր ընկերներից է, այդ վեպը գրել է, մտադրություն չունենալով տպագրել։ Գրել է, որ տանեցիք կարդան, կարդան ընկերները։ Մի խոսքով ցանկություն է ունեցել պահպանել հոր կյանքի պատմությունը, որ իր հոր կյանքը լինելով, ըստ էության, ամեն արևմտահայ մարդու կենսագրությունը կարող է համարվել՝ մանրամասնությունների տարբերությամբ հանդերձ։

— Ես կարդացի գիրքը,— ասաց նա։— Կարդալը որն է, կլանեցի։ Ցնցված եմ։ Երկու գիշեր չքնեցի, լուսացրի մինչև առավոտ։ Խնդրեցի Գեղամ Ալեքյանին կարդալ։ Ճանաչո՞ւմ ես։ Նա առաջին քարտուղարն է, ես՝ երկրորդ։ Ինչ որ նկարագրված ու պատմված է այս վեպում, ծնողներիս հետ պատահած պատմություն է, նույն գաղթը, նույն կոտորածները։ Նույն սարսափներն ապրել եմ ես։ Հետաքրքիր էր իմանալ, թե ինչ տպավորություն կստանա մի մարդ, որ ծնվել ու մեծացել է այդ արյունալի դեպքերից շատ հեռու, այստեղ՝ Արևելյան Հայաստանում։ Երևակայիր, նա էլ կարդացել է գիշերն աչք չփակելով։ Երկուսս էլ գտնում ենք, որ վեպը պետք է տպագրել։ Հենց հիմա իսկական ժամանակն է։ Այս գրքում պատկերված է, թե ինչպես գերմանացիները հովանավորել են հարյուր հազարավոր հայերի կոտորածը Թուրքիայում։

Հովհաննիսյանը թղթապանակը թողեց գնաց։ Կարդացի նույն հափշտակությամբ, ինչ Գրիգորն ու Գեղամը։ Ուսուցիչներից լսել էի մեծ եղեռնի մասին, բայց այն, ինչ իմացա վեպի էջերից, ահավոր էր ու նորություն։ Հետևաբար նորություն պիտի լիներ մեր երիտասարդության համար։ Պետք է անպայման տպագրել այս գիրքը, որպեսզի շատ մարդիկ կարդան ու իմանան, թե ինչ ահավոր ոճիր է կատարվել մի անմեղ, աշխատավոր ժողովրդի նկատմամբ։

Չէի կասկածում, որ ընթերցողը ցնցվելու է։ Մի նոր աշխարհ է բացվելու նրա առաջ։ Մի նոր էջ է գրվելու մեր գրականության մեջ, որի հայրենասիրական խորհուրդը չափազանց մեծ է լինելու։ Զանգ տվի Գրիգոր Հովհաննիսյանին, հայտնեցի տպավորություններս, ասացի նաև, թե չեմ կարծում, որ գրքի տպագրությունը արգելքի հանդիպի։

Այս ամբողջ պատմությունը, որ արի ես, համընկավ Հրաչ-

յա Քոչարի, Հակոբ Խանջյանի և ուրիշների ռազմադաշտից կարճ ժամանակով Երևան գալուն:

«Մղձավանջային օրերը» պետք էր գրախոսության հանձնել: Ամենահարմար թեկնածուն Քոչարն էր: Ալաշկերտցի էր, և նրա սրտին պետք է որ վեպի նյութը մոտ ու հարազատ լիներ: Բացի այդ՝ Քոչարն այդ օրերին հերոսացած դեմք էր, որի կարծիքը կարող էր ճանապարհ հարթել: Բայց ժամանակ պիտի ունենա՛ր կարդալու ծավալուն գործը: Խնդրեցի՝ հանձն առավ: Կարդաց կարճ ժամանակում և հայտնեց միանգամայն դրական ու հիացական կարծիք:

Զանգահարեցի «Սովետական Հայաստանի» խմբագրություն, որտեղ այն ժամանակ աշխատում էր Գառնիկ Ստեփանյանը:

— Ձեր գիրքն ինձ մոտ է,— ասացի,— կարդացել եմ, լավ գիրք է: Տվել եմ կարծիքի և ստացել հավանություն: Որոշված է տպագրել: Անցեք հրատարակչություն՝ պայմանավորվելու տարբեր հարցերի շուրջ:

Ստեփանյանը եկավ: Պարզվեց գրքի ստեղծման ամբողջ պատմությունը:

1942-ի ամռանը «Սովետական Հայաստանի» խմբագիր Հովհ. Մամիկոնյանը հանձնարարել է Գառնիկ Ստեփանյանին կազմելու թերթի մի ամբողջ էջ, որը ցույց էր տալու, թե ինչպես պաշտոնական Գերմանիան ծրագրել և հովանավորել էր հայերի բնաջնջումը Թուրքիայում:

Ստեփանյանը երկու ամսից ավել աշխատել է հանրային գրադարանում, թերթել պարբերական մամուլ, շատ գրքեր: Գտել է պերճախոս տվյալներ, որոնք ընթերցողին տրամադրել էին ոչ միայն Թուրքիայի, այլև Գերմանիայի դեմ:

Ստեփանյանի կազմած էջը տպագրվել է: Խմբագրությունը ռազմաճակատից ստացել է գնահատական նամակներ:

Ահա այդ օրերին նա միտք է հղանում գրել հոր արկածային կյանքը, քանի որ այդ կյանքը շարքային արհեստավորի ճակատագիրն էր Առաջին համաշխարհային պատերազմի ու մեծ եղեռնի օրերին, տիպական՝ մի ամբողջ ժողովրդի համար:

Գառնիկը, որ հաճախ էր լսել հոր հետ պատահած անհավատալի դեպքերի մասին, այժմ խնդրել է նրան՝ պատմել

սկզբից, դեպքերի հաջորդականությամբ։ Ու հայրը պատմել է։ Որդին ժամանակ չի ունեցել գրի առնելու, մշակելու։ Ուղղակի ամեն գիշեր, երբ ավարտվել են խմբագրության աշխատանքները, նստել է մեքենագրուհու մոտ և թելադրել... Ընդհատվել է գիրք։ Մեքենագրուհին՝ լենինականցի աղջիկ՝ Երազիկ անունով, մեքենագրել է խորին հուզմունքով։

Այս բոլորն իմանալուց հետո, գրքի տպագրության գործն արագացնելու համար գնացի Կենտկոմ՝ Զավեն Գրիգորյանի մոտ, պատմեցի ամեն ինչ։ Հետաքրքրվեց, թե ով է լինելու վեպի խմբագիրը։ Ասացի՝ Հովհաննես Մամիկոնյանը։ Հաճախայնեց։ Բայց ցանկալի համարեց, որ իրենք էլ կարդան։ Կարդաց, թե ոչ՝ չգիտեմ, բայց հանձնարարեց ծանոթանալու Վարդան Ավետիսյանին։ Նա բաժնի վարիչ էր Կենտկոմում։ Ավետիսյանը նույնպես եկել էր այն եզրակացության, որ գիրքը արժանի է տպագրության։

Վեպն ուղարկվեց տպարան։ Շարվեց, բայց միառժամանակ մնաց։ Անհրաժեշտ համարվեց, որ ծանոթանան նաև Հայաստանի արտաքին գործերի մինիստրությունում։ Կարդացել էին երկու մարդ, երկուսն էլ պատմաբան։ Լավ հիշում եմ, որ գրախոսներից մեկը Երվանդ Սարգսյանն էր, Թուրքիայի պատմության հմուտ մասնագետ։ Մյուսին չեմ հիշում։ Երկուսն էլ հայտնել էին դրական կարծիք։

Ստեփանյանի գիրքը լույս տեսավ 1945-ին։ Շատ քիչ գրքեր են ունեցել այդպիսի հաջողություն։ Սպառվեց բառացիորեն մի քանի օրում։ Ձեռքից ձեռք անցավ։ Շատերն էին զանգահարում պետհրատ, զանգահարում ծանոթ-անծանոթ մարդիկ, խնդրում հրատարակչության աջակցությունը վեպը ձեռք բերելու համար, իսկ եթե հնարավոր չէ, խնդրում էին տալ, թեկուզ ժամանակավոր, որ կարդան։ Ոմանք, գիրքը կարդալուց հետո ուղարկում էին ռազմաճակատ՝ իրենց հարազատ հայ զինվորներին։ «Կարմիր զինվոր» ռազմաճակատային թերթը տպագրեց ընդարձակ հատվածներ՝ «Մղձավանջային օրերից»։ Ժողովրդական ուսուցիչ Սիմակը, որ այդ գրքով խանդավառվածներից էր, պատմում էր՝ ավարտական 10-րդ դասարանում ազատ շարադրություն է տվել, և աշակերտների մեծ մասը գրել է «Մղձավանջային օրերի» մասին։

Ուրեմն՝ նաև պատանեկության սեղանի գիրքն էր դարձել։

Այս բոլորը շատ լավ էր, բայց կարո՞ղ էին գտնվել մարդիկ, որ սխալ համարեին նման գրքի հրատարակությունը։ Պետք էր սպասել մամուլի կարծիքին, իսկ այդ կարծիքը եղավ ավելին, քան հեղինակն ու ես կարող էինք սպասել։

«Սովետական Հայաստան» օրաթերթում լույս տեսավ ականավոր մարքսիստ-գրականագետ Արտաշես Կարինյանի ընդարձակ գրախոսությունը, որը բարձր գնահատելով գրքի ճանաչողական արժեքը, մանրամասն վերլուծման էր ենթարկում «Մղձավանջային օրերը» որպես գեղարվեստական ստեղծագործություն։

Տպագրվեցին Քրիստափոր Թափալցյանի, Անուշավան Մակարյանի և ուրիշների՝ 5—6-ից ավելի գրախոսությունները, բոլորն էլ դրական, բոլորն էլ հիացական. շնորհավորում էին նոր արձակագրի մուտքը գրականություն։

Հանդիպեցի Ստեփանյանին։ Ասաց, թե տպագրվածի տասնապատիկն էլ ստացել է նամակներով։ Հետաքրքրվեցի։ Ցույց տվեց Հովհաննես Շիրազի նամակը, որը գրել էր.

«Սիրելի՛ Գառնիկ. կարդացի գիրքդ մեծ հաճույքով, գրեթե կլանված, չգիտեմ՝ ինչին վերագրել, արդյոք նրան, որ նման տեսարաններ ես էլ ունեմ իմ պոեմի մեջ, թե՝ մեր (իմ ու քո ու շատ շատերի) որբական օրերի հուշն էր, որ արցունք քամեց աչքիցս ու սրտիցս, թե իրոք մի անհայտ տաղանդ ես։ Ինչևէ՝ կարդացի կլանված, ինչպես նոր գրողներից քչերին և տեղ-տեղ մոռացա, որ գիրք եմ կարդում։ Ահա այս է գրողի մեծությունը՝ շղթայել ընթերցողին գրքի հետ։ Ունես մեղմ ու հանդարտիկ ոճ, հարկ ու պատշաճին պատկերներ, տիպականություն կա նկարագրածդ մարդկանց մեջ, հայրենաշունչ ես բնության նկատմամբ, գիտես արկածել և տակից դուրս գալ։ Կեցցե՛ս, այդպիսի մի երկուերեք գիրք էլ՝ ու դու կմնաս մեր նորագույն արձակագրության պարտեզում իբրև մի ուրույն հողմակոծ ուռենի»։

«Մղձավանջային օրեր» վեպից ընդարձակ հատվածներ թարգմանվեցին ռուսերեն և լույս տեսան «Դրուժբա նարոդով» հանդեսում՝ հեղինակին ծանոթացնող ջերմ տողերով։ Վերջապես ընդարձակ գրախոսություն լույս տեսավ ռուսերեն այդ հանդեսի մի այլ համարում։

Ստեփանյանի գիրքը նույնպիսի արձագանք ունեցավ Սփյուռքում: Շատ թերթեր տպագրեցին հատվածներ, իսկ «Զարթոնք», «Առավոտ» և «Լրաբեր» օրաթերթերը արտատպեցին ամբողջությամբ: Բեյրութում լույս տեսավ առանձին գրքով:

Այսպես, հայ խորհրդային գրականության մեջ սկիզբ առավ մեծ եղեռնի պատկերացումը, որին հետագայում հետեվեցին ուրիշները:

ԲԺՇԿՈՒՀԻՆ

1941-ի գարնանը, ինչպես արդեն պատմել եմ, հիվանդացա, ամռան գալուստը դիմավորեցի Դիլիջանի առողջարանում, որտեղ իմ բժիշկը Աշոտ Կարապետյանն էր. լավ բժիշկ, բացառիկ մարդ: Քաղաք վերադառնալուց հետո իմ բժշկական խնամքը հանձնվեց Արշա Վարդազարյանին: Աշոտ Վարդանովիչի նման մեղմ ու փափկանկատ չէր, ոչ էլ լռակյաց էր Ռուբեն Նիկիտովիչի պես: Բուռն էր և անմիջական, ճշմարտախոս, մարդու ճակատին զարկող:

Հիմնավոր կրթություն էր ստացել Արշա Նիկիտիչովնան: Լավ գիտեր ռուս գրականություն, հատկապես պոեզիա: Ոչ թե Պուշկին ու Լերմոնտով, ո՛չ էլ անգամ Տյուտչև, Բլոկ, դա ինքնին, այլ 10-ական թվականների ռուս բանաստեղծներին՝ Աննա Ախմատովա, Իգոր Սեվերյանին, Բալմոնտ, Գումիլյով: Որևէ միտք հաստատելու համար սիրում էր գրական մի թևավոր խոսք հիշել՝ Գրիբոյեդովից ու Գոգոլից, Տոլստոյից և Չեխովից: Մեծ հախույք էր նրա համար սիրած բանաստեղծությունն արտասանել, հենց այնպես, բավականության համար:

Մեր տանը ծանոթացել է շատ գրողների ու գրականագետների հետ, որոնց հետ հաճույքով վեճի էր բռնվում ու երբ դիմացինն ասում էր՝ «Դուք իրավացի եք», հաճույքից բարձրաձայն ծիծաղում էր:

Պարույր Սևակի կյանքում բախտորոշ դեր խաղաց, և բանաստեղծը միշտ հիշում էր և չգիտեր, թե ինչպես երախտահատույց լինի: Պարույրին ասում էի, թե պետք է պարզա-

պես իր գրքերից մի օրինակ նվիրել բժշկուհուն սրտագին մակագրությամբ, և ամեն ինչ կարգին կլինի: Ե՛վ նա գոհ կլինի, և՛ քո սիրտն էլ կխաղաղվի: Պարույրը դա համարում էր քիչ, մտածում էր, թե հարկավոր է ավելին անել, անել շատ ավելի նշանակալի բան, բայց ինքն էլ չգիտեր, թե ինչ և այդպես էլ ո՛չ համեստն արեց, ո՛չ էլ նշանակալին, ու մի օր էլ, երբ ինձանից առավ բժշկուհու մահվան լուրը, իրեն չափազանց վատ զգաց: Իրեն համարում էր պարտքի տակ, որ ինչ էլ աներ, չէր կարողանա այլևս մարել հավիտյան:

Իմ ընկերներից շատերին է օգնության հասել Արշա Նիկիտիչովնան: Նա էլ Աշոտ Վարդանովիչի նման պատրաստակամ էր, երբ էլ իմաց տայինք, կհայտնվեր կամ ժամ կնշանակեր, որ ինքներս գնանք իր տուն կամ հիվանդանոց: Մարդկանց բուժելը, հիվանդին ոտքի կանգնեցնելը իր սրբազան պարտականությունն էր համարում, ոչ միայն այն պատճառով, որ երդում էր տվել հավատարիմ մնալու Հիպոկրատին: Բժշկությունը համարում էր կոչում, կյանքի այն խորհուրդը, որի համար ինքն աշխարհ է եկել: Ինձ դժվար է ասել, թե հիվանդի վրա ավելի ազդում էր որպես բժիշկ, թե իբրև մարդ: Բժշկական միջամտությունների հետ միասին հավասարաչափ ուժով ներգործում էր մարդկային վառ նկարագրով: Նա բարձր բարոյականության օրինակ էր, որի խոսքն ու գործը ներդաշնակ էին: Եվ դրա կողքին կար մարդկային ոգու մեծ կամք, մարդու բանաստեղծացում:

Արշա Նիկիտիչովնան անզոր եղավ փրկելու սեփական կյանքը: Անզոր եղան և իր գործակից ընկերները: Դժբախտությունը պատահել է արտասահմանյան շրջագայության ժամանակ, ու ես չեմ եղել, դեպի գերեզմանատուն, նրա դագաղը ուղեկցողների թվում:

Երբ իմացա այդ դժբախտ լուրը, ապա ես հայ միջնադարյան արվեստի մասնագետ Լևոն Ազարյանի հետ, որ նրա ազգականներից էր, գնացի այցի Արշա Նիկիտիչովնա Վարդազարյանին և նրա թարմ շիրիմին դրի ճերմակ վարդեր, հիշելով, որ մի օր նա ասաց, թե ծաղիկների թագուհին ճերմակ վարդն է:

ՎԵՐՀՈՒՇ

Երեսուն և ավելի տարիներ առաջ

Պատմությունս, որ առանձնապես երկար չէ, մի փոքր հեռվից եմ սկսելու։

Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում Եղիշե Չարենցի մասին, Ստեփան Զորյանը պատմում էր, թե ինչպես բանաստեղծը 1918 թվականին Ղարսից Թիֆլիս է եկել ու մտել «Մշակի» խմբագրություն՝ տեսնելու Գարեգին Լևոնյանին, որը նրա «Դանթեական առասպել» գրքի մասին դրվատալի հոդված էր տպագրել։

1935-ին լույս տեսավ Հովհաննես Շիրազի «Գարնանամուտը»։ Արամ Ինճիկյանն ու ես առաջին արձագանքողներից եղանք։ Ես «Գրական թերթի» էջերում ողջունեցի Շիրազի մուտքը գրականություն, Ինճիկյանը «Գրական սերունդում» ողջունեց Շիրազի և Գրաշրջ գրական ասպարեզում հայտնվելը։

Շիրազը Լենինականից Երևան էր եկել հանդիպելու իր առաջին քննադատներին։ Նրան ասել էին, թե մեզ կարող է տեսնել գրական թանգարանում։ Եկավ։ Երկուսս էլ այնտեղ էինք։

Շիրազն այն ժամանակ գրեթե պատանի էր, հազիվ քսան տարեկան։ Մեզմ ժպիտ կար շրթունքներին, իսկ աչքերը երազկոտ էին։

— Ուրեմն դուք եք Զարյանն ու Ինճիկյանը։

Ասաց ու քթի տակ ծիծաղեց։

— Ես էլ կարծեցի, թե մենձ մարդոց պիտի հանդիպեմ, բեղ ու մորուքով։

Հիասթափություն կար հայացքի մեջ։

Երկուսիցս բացի, սենյակում թանգարանի ուրիշ աշխատակիցներից էլ կային։ Նրանք գործերը թողած՝ հետաքրքրված էին բանաստեղծով, որի առաջին գրքույկը ձեռքից-ձեռք էր անցնում, և բոլորը նրան մեծ ապագա էին գուշակում։ Մի պահ անհարմար լռություն տիրեց։ Այդ ուշադրությունը շփոթի էր մատնել նրան։ Ինճիկյանը հարցրեց.

— Ի՞նչ նոր գործ եք գրում, ընկեր Շիրազ։

— Շուտով լույս կտեսնի պոեմս, «Սիամանթո և Խջեզաբե»։

Ներկաներից մեկը, հիմա չեմ հիշում, թե ով, դիմեց նրան.

— Ընկեր Շիրազ...

— Ընկեր Շիրազ, ընկեր Շիրազ... Ընկե՞րս որն է, ըսեք Շիրազ ու վերջ։ Հա՛, կներեք, ընդհատեցի։

— Ուզում էի իմանալ, թե ով է ձեր ամենասիրելի բանաստեղծը։

— Իսահակյանը։

— Ուրի՞շ։

— Թումանյանը։

Մի փոքր լռելուց հետո։

— Հա՛, մեկ էլ Սայաթ-Նովան ու Նարեկացին։

— Չարե՞նցը։

— Չգացմունքային չէ։

Գրական թանգարանը ղեկավարում էր Խորեն Սարգսյանը, որի մոտ էին այդ օրը Դերենիկ Դեմիրճյանը և Ստեփան Զորյանը։ Խորեն Սարգսյանի դուռը բացվեց, ու երևացին Դեմիրճյանը և Զորյանը։ Շիրազը թեև առաջին անգամ էր տեսնում, ճանաչեց նրանց։ Բարձրացավ տեղից, մոտեցավ և, նեղվելով, ներկայացավ։ Դեմիրճյանը խրախուսական խոսքեր ասաց։ Շիրազը ակնածանքով նայում էր մեկ Դեմիրճյանին, մեկ՝ Զորյանին։

— Պետք է անպայման սովորել,— նկատեց Զորյանը։

— Ճիշտ կըսես, մյուս տարվանից տեղափոխվելու եմ Երևան, համալսարանում պիտի սովորեմ։ Ալազանը խոստացել է օգնել։

Մենք շատ զարմացանք, որ նա դու-ով խոսեց Զորյանի հետ և վերագրեցինք գավառականության։ Երբ Դեմիրճյանն ու Զորյանը գնացին, դիտողություն արինք մեծերի հետ դու-ով խոսելու համար։

Լսվեց նրա մանր ծիծաղը։

— Ինչի՞, յադ հո չեն, որ հետները դուք-ով խոսիմ։ Դեմիրճյանն էլ, Զորյանն էլ պաշտելի մարդիկ են։ Տեսած կա՞ք, որ տղան հոր հետ դուք-ով խոսի։ Զարմանալի բան կըսեք։

Մենք գիտեինք, որ Շիրազը բնությունից շռայլորեն օժտված անհատականություն է, բայց նրա նկատմամբ մեզ

պահում էինք մեծավարի: Դրա պատճառը թերևս այն էր, որ մեղանից փոքր էր, թեկուզև հինգ տարով ընդամենը, վերջապես, մենք ավելի վաղ էինք դրականություն ոտք դրել և վերաբերվում էինք նրան որոշ ներողամտությամբ, ինչպես մայրաքաղաքացին՝ գավառից եկածին:, Եվ ինքն էլ կարծես ընդունում էր իրեն առաջարկված այդ հարաբերությունը, երևի ամեն մեկիս մեջ տեսնելով այն բարյացակամին, որին կարող է ինքը ապավինել անծանոթ մայրաքաղաքում, ուր մարդկային բարքերն ու սովորությունները շատ էին տարբեր իր ծննդավայր Գյումրիից:

Սա մեր առաջին հանդիպումն էր: Հետո մի-երկու անգամ հանդիպեցի գրողների տանը: Հազիվ մի-երկու խոսքի փոխանակություն: Հետո էլ հանդիպեցինք պետհրատում: Երբ այստեղ գործի անցա՝ իմացա, որ Շիրազն իմ նախորդի, կարծեմ Սիրասի հետ համաձայնության էր եկել, որ իր բանաստեղծությունների հատորյակը լույս ընծայվի: Բավական ծավալուն մի ժողովածու էր: Գրքի խմբագիր նշանակված էր Սիմակը:

Շիրազի ժողովածուն վերնագիր չուներ: Հեղինակը հույսը դրել էր խմբագրի վրա: Սրա մտքով էլ խելքը գլխին վերնագիր չէր անցել: Մտածում էինք, թե գիրքն ինչպես կոչվի, որ լավ լինի:

Հանկարծ Շիրազի միտքը փայլատակեց:

— Կոչենք «Երգ Հայաստանի»,— բացականչեց ու ինքն իրենով հիացած նայեց մեզ:

Շտապեց բացատրել:

— Աբովյանն իր վեպը կոչել է «Վերք Հայաստանի», ես՝ «Երգ Հայաստանի»: Աբովյանը վշտի երգիչ է, ես՝ խնդության:

Համաձայնություն տվինք, և ձեռագիրն ուղարկվեց տպարան:

Տարիներն անցնում էին, և երիտասարդ բանաստեղծի համբավը տարածվում էր, նրա երկրպագուների թիվը՝ բազմանում:

«Երգ Հայաստանի» գրքի ազդանմուշը ստացվեց: Շիրազը եկավ: Ցույց տվի: Ուրախությունից թռչկոտում էր: Խնդրեց տալ իրեն: Օրեր անցան: Գիրքը վաճառքի հանվեց և շատ արագ սպառվեց:

Նա բերեց ինձ «Երգ Հայաստանի» ժողովածուն՝ ընծայա-

գրված, ու մենք սրտամոտ զրույց ունեցանք։ Ես ասում էի, թե ինչ եմ հատկապես հավանում իր գործերից, ասում էի, որ ինձ դրանք մարգարիտներ են թվում։ Եվ տեղնուտեղն առաջարկեցի կազմել նրա բանաստեղծությունների հատընտիր ժողովածուն։ Ինչպես որ երկու-երեք տարի առաջ կազմել ու հրատարակել էի Հովհաննես Հովհաննիսյանին։

— Ի՞նչ է, հույս չունի՞ս, որ նոր լավ բան գրեմ, ինձի սպառված հեղինա՞կ կհամարես։ Խելքին աշեք,— շրջվեց նա մի կողմ, կարծես դիմելով ուրիշներին, թեև սենյակում ուրիշ մարդ չկար։

Ես զարմացա, որ իր մտքով այդպիսի բան է անցնում։ Եվ կարծեմ փոքր-ինչ վշտացած արտահայտեցի միտքս, և նա մեղմացավ։

— Լավ, մի նեղանա, բան էր՝ ըսի։

Նրա կասկածը ցրելու և նրան վերջնականապես համոզելու նպատակով ասացի, թե հրատարակչությունը ծրագրել է Իսահակյանի «Հատընտիրը»։ Ասացի ու անմիջապես մտածեցի, որ ասածս անխոհեմություն էր։ Իսահակյանի օրինակը հաստատումն էր հենց իր ասածի, որ ես աշխատեցի բանաստեղծի դեմքի արտահայտությունից կռահել, թե ինչ է մտածում։

Դեմքն անվրդով էր։

— Իսահակյանը կլասիկ է։ Հասկանալի է,— և հանկարծ,— իսկ ես ումի՞ց եմ պակաս։ Հասկացող չկա, ո՛չ դու կհասկանաս իմ իսկական արժեքը, ո՛չ էլ ուրիշները։ Քու սխալն էն է, որ կկարծես, թե ես էլի «Գարնանամուտի» հեղինակն եմ, սկսնակ բանաստեղծ։ Սպասիր, ճտերը աշնանը կհաշվեն։ Լավ, ապագայի գործերը թողնենք ապագային։ Հիմի ի՞նչ կառաջարկես դու, հրապարակել իմ գործերի ծաղկեփունջը։

Լռություն։

— Մի պայմանով, ես կընտրեմ, դու կխմբագրես։

— Ես կընտրեմ, ես էլ կխմբագրեմ։

— Ճի՛շտ,— ասաց նա, ու չհասկացա, հավանությո՞ւն է տալիս մտքիս, թե հեգնում է։ Ու մինչ ես իմ հոգու ծալքերը թափանցելու ջանքեր էի անում՝ բացականչեց։

— Լավ։ Համաձայն եմ։

Ու ես սկսեցի ընտրություն կատարել։

Նոր էի գործի անցել, որ պայթեց պատերազմը։ Եվ ինչպես շատ ծրագրեր, այնպես էլ սա մնաց անկատար։

«Ամեն ինչ ռազմաճակատի համար»,— այս էր ժամանակի հրամայականը։ Դա հասկանում էին ամենքը։ Հասկանում էր նաև Շիրազը։ Ու մենք այլևս չանդրադարձանք հատընտիր հրատարակելու մտքին։ Դրա ժամանակը չէր։

Պատերազմի տարիներին շատ բանաստեղծություններ լույս տեսան հայրենի երկրի սիրո, նրա թշնամիների նկատմամբ ցասումնալի ատելության, ժողովրդական ոգու պայծառության, ընդհանրապես մեր հզորության ու հաղթանակի հավատի մասին։ Շարքային բանաստեղծությունները շատ էին, նույնիսկ շատ-շատ, բայց դրանք, պատկերացրեք, իրենց դերն այն օրերին կատարում էին։ Հայ բանաստեղծական միտքը ստեղծեց նաև գոհարներ։ Թող որ դրանք թվով շատ չլինեն, բայց այսօր էլ անտարբեր չես կարդում։ Այդ գոհարներից մեկն էլ Շիրազի «Էքսպրոմտ» խորագրով բանաստեղծությունը եղավ։ Իսկապես էքսպրոմտ այն իմաստով, որ գրվել է հանկարծ, ստեղծագործական ոգու աստեղային մի պահի՝ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրի գրասենյակում, բառացիորեն երկու րոպեում։ Շիրազն առանձնապես արժեք չէր տալիս գրածին։ Ասում են, թե շատ մեծ բանաստեղծներ հաճախ չեն հասկացել, որ իրենց գրչի տակից դուրս եկած տողերը անմահ են։ Շիրազի «Էքսպրոմտի» հաջողությունն անսահման մեծ էր։ Այդ վեց տողն անգիր գիտեին բոլորը և շատ աշակերտներ ու աշակերտուհիներ ոգևորված արտասանում էին բեմից։ Իսկ Իսահակյանն իր վճիռն արձակեց.

— Անմահ գործ է ստեղծել Շիրազը։

Հասավ 1942 թվականը, պատերազմի ողբերգական տարիներից մեկը։ Խորհրդակցություն կուսակցության Կենտրոնական կոմիտեում, հրավիրված են գաղափարական ճակատում պաշտոն զբաղեցնողները։ Եվ այնտեղ այն միտքը հայտնվեց, թե թիկունքն ու ռազմաճակատը անբաժան են։ Թիկունքն անսասան է ռազմաճակատով, ռազմաճակատը՝ թիկունքով։ Եվ ռազմաճակատն ավելի ամուր կլինի, եթե թիկունքում այնպիսի գործեր արվեն, որ առաջին հայացքից

խաղաղ ժամանակներին են վայել. մեր դպրոցները պետք է դպրոց լինեն, թատրոնները՝ թատրոն, գիտությունը՝ գիտություն: Հենց դա էլ մեր հզորության ապացույցն է:

Տասնամյակներ են անցել, ու հիմա հիշում եմ այդ խորհրդակցությունը և մտաբերում Անտոն Չեխովի հոբելյանական օրերը Մոսկվայում, Հայկական գիտությունների ակադեմիայի հիմնադրումը, շեքսպիրյան փառատոնը Երևանում:

Հաջորդ օրը հանդիպեցի Շիրազին և պատմեցի Կենտկոմի խորհրդակցության մասին:

— Եվ ի՞նչ:

— Եվ այն, որ կարծում եմ՝ ժամանակն է վերադառնալու քո հատընտիր ժողովածուն կազմելուն:

— Կարծո՞ւմ ես:

— Կարծում եմ:

Թափով աշխատանքի անցա: Մի ամսից ավելի աշխատեցի: Աչքի առաջ ունենալով նրա մինչ այդ հրատարակած գրքերը՝ «Գարնանամուտ», «Երգ Հայաստանի», «Բանաստեղծի ձայնը», առանձնացնում էի ընտիրները, իսկ գրքերի մեջ տեղ չգտած և դեռևս չհրատարակված չափածոյից լավագույնը հավաքեցի «Ամառնամուտ» խորագրի տակ: Երբ ժողովածուն պատրաստ էր, տվի Շիրազին՝ ծանոթանալու: Հաջորդ օրը եկավ մոտս ու առաջարկեց մի-երկու ոտանավոր հանել, ասաց՝ «չարժեն», մի հինգը առաջարկեց ավելացնել՝ «Ափսոս են, որ դուրս մնան»: Վիճեցինք, ծանրութեթև արինք, համաձայնության եկանք:

— Հիմի գանք գլխավորին,— ասաց նա ու նայեց ինձ մարտական հայացքով,— էս ինչի՞ ես դուրս թողել «Սիամանթոն ու Խջեզարեն»:

Բացատրություն տվի: Չհամոզվեց: Նա իրենը պնդեց, ես՝ իմը: Բորբոքվեց և հայտարարեց, որ համաձայն չէ գիրքը լույս ընծայել առանց «Սիամանթոյի»: Ես առաջարկ արեցի «Սիամանթոն» լույս ընծայել առանձին գրքույկով, պատկերազարդ: Չհամաձայնեց: Ուրեմն գործը գլուխ չի գա: Մի քանի օր անց Շիրազը փորձեց մեղմությամբ ազդել վրաս:

— Արի քարը փեշիդ թափիր:

Ու ելքը գտնվեց՝ տեղավորել «Սիամանթոն ու Խջեզարեն» ժողովածուի մեջ, սակայն ունենալով երկրորդ խմբագիր:

Ո՞վ էր լինելու այդ խմբագիրը: Մտածեցինք, մտածեցինք ու կանգ առանք Ավետիք Իսահակյանի վրա: Միասին գնացինք Վարպետի տուն:

— Վարպետ, «Սիամանթոն ու Խջեղարեն» կհավնի՞ս,— հարցրեց Շիրազը:

— Կհավնիմ:

Վարպետը հարցական նայեց սկզբում նրա կողմը, հետո՝ իմ:

— Ինչ կա որ:

— Իմ ընտիր գործերից չէ՞:

— Ընտիր է , ընտիր, իսկ ի՞նչ է պատահել:

Հաղորդակից դարձրի մեր վեճին և ասացի, թե ինչ խընդրանքով ենք եկել իր մոտ:

Վարպետը ժպտուն նայեց Շիրազի կողմը: Շիրազը նայում էր նրան այնպես, կարծես Իսահակյանի մի հատիկ բառը՝ «հա՛»-ն կամ «չէ՛»-ն ճակատագրական է լինելու իր համար:

— Համաձայն եմ:

Շիրազի ուրախությանը չափ չկար: Երբ դուրս եկանք, նայեց ինձ.

— Հը՛բը:

Լռություն:

— Ես շահեցի. հա՛մ իմ խոսքը եղավ, հա՛մ էլ Իսահակյանը խմբագիրս դարձավ:

Եվ դարձյալ լռություն:

— Դե գնա, որտեղ քոնը կըսես, էնտեղ էլ իմը ըսե:

Տրամադրությունը բարձր էր:

Ահա այդպես աշխարհ եկավ «Երգերի գիրքը»:

Գիրքը մի քանի օրում սպառվեց:

Շիրազը գոհ էր ու հպարտ: Շնորհակալ էր, որ պատճառ եղա գրքի լույս ընծայմանը: Բայց իմ մի քայլը մոռայլեց նրան, ու երկու բարեկամներիս բաժանեց իրարից, թեկուզև կարճ ժամանակով:

«Երգերի գիրքը» կազմելիս Շիրազի բոլոր գործերը կարդացի մի քանի անգամ և ինձ թվաց, թե զգացի բանաստեղծի անհատականությունը, հասկացա նրա ուժեղ և թույլ կողմերը: Պատրաստեցի զեկուցում, որով միտք ունեի խոսք բանալ ոչ միայն բանաստեղծի կարողությունների շուրջը, այլ

նաև այն մասին, որ նա պետք է մեծ հանդիպում ունենա կյանքի հետ, այլապես կկանգնի փակուղու առջև:

Ջեկուցումը կարդացի գրողների տանը: Վեճեր առաջացան, խոսեցին Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Գուրգեն Սևակը և ուրիշներ:

Շիրազը դժգոհ հեռացավ դահլիճից: Քիչ է ասել «դժգոհ»: Նա զեկուցումն ընդունեց որպես իր բանաստեղծական փառքի վրա սուվեր գցելու դավադիր փորձ: Մի ամբողջ տարի, նույնիսկ ավելի, գժտված մնաց: Ո՛չ գալիս էր ինձ մոտ, ո՛չ էլ հանդիպելիս բարևս առնում: Բայց ի՞նչ չի անում ժամանակը: Մեղմացավ, հայտնվում էր մեկ-մեկ, մանավանդ նոր բանաստեղծություններ էր գրել բավական շատ: Գրել էր նաև «Բիբլիական» պոեմը, որ նրան մեծ հռչակ բերեց: Ուզում էր դրանցից ընտրել և նոր ժողովածու հրատարակել: Ընտրությունը նորից ինձ վստահեց:

Սկսվեց խմբագրական աշխատանքը: Նորից հանդիպումներ, նորից զրույցներ, նորից վեճեր: Բացի արդեն եղածից, գրեթե ամեն օր մեկ կամ երկու, երեք նոր բանաստեղծություն էր բերում: Գալիս էր, թուղթ խնդրում և արագ-արագ գրում: Եվ իբրև ապացույց, որ հոգում քեն չի մնացել, մի թղթի վրա գրեց՝

Ռուբենին.

Ջահել օրերս, ջրերի նման,
Անուշ կարկաչով եկան, գնացին...

Մի անգամ էլ եկավ, թե երազում տեսել է ինձ, արթնացել է ու գրել բանաստեղծություն՝ «Գարնանամուտ», որը նվիրում է ինձ և թողեց ձեռագիրը մոտս: Մի քանի օր անցավ, «Ճանապարհ դեպի ծով» բանաստեղծության վերնագրի տակ գրեց, որ նվիրում է ինձ: Իսկական բանաստեղծական տակ գրեց, որ նվիրում է ինձ: Իսկական բանաստեղծական ոտանավորից. մի տարի առաջ թշնամի էր կարծում, այժմ ոտանավորներ է նվիրում: Գուցեև վերջին նվիրումն ուներ մի գաղտնի միտք, շարունակություն էր երկուսիս միջև առաջացած վեճի՞: Չգիտեմ: Այդպես եմ մտածում հիմա, երբ մտաբերում եմ ինձ նվիրված ոտանավորի (որի հետագա հրատարակություններից չգիտեմ ինչու իմ անունը չքացավ) այն տողերը,

ուր ասված էր, թե մեկ իմաստուն է եղել, մեկ խաբված և այժմ ոսկե գանձերը գրկած, տիղմը թողած, որպես խելառ հեղեղներից ծնված մի աղբյուր արդեն ծով է մտնում...

Ժողովածուն լույս տեսավ «Լիրիկա» խորագրով։ Շիրազի ոտանավորները կրկին հրապուրեցին ընթերցողին՝ իբրև նոր ապացույց նրա արտասովոր տաղանդի։

Ես չեմ շարունակի այս պատմությունը։ Հին թղթերիս մեջ գտել եմ մի փաստաթուղթ, որը մինչև հիմա մնացել է անտիպ և որը, սակայն, մեծ հետաքրքրություն կներկայացնի Շիրազի տաղանդի երկրպագուների համար։

«Սրգերի գիրք» և «Լիրիկա» ժողովածուները կազմելու օրերին նա հաճախ էր լինում մեր տանը։ Բնավորությամբ անհամբեր՝ ուզում էր իմանալ ի՞նչ եմ անում, ո՞ւր եմ հասել, ե՞րբ եմ ավարտելու և այլն, և այլն։ Մի խոսքով վերահրտկում էր գործի ընթացքը, միշտ ասելով, թե քիչ ժամանակ եմ նվիրում գրքին, դանդաղ եմ աշխատում։ Ու երբ գալիս էր, միասին էինք ընտրություն կատարում. կա՛մ ես էի նրան համոզում, կա՛մ նա էր ինձ վրա ազդում։

Մի օր խոսք բացվեց իր կյանքի մասին։ Եվ Ճաշասեղանի շուրջը պատմեց իր մանկությունն ու պատանեկությունը, պատմեց խորունկ թախիծով։ Բոլոր ներկաները զգացվեցին, ու ես ցավեցի, թե ինչու գրի առնող չեղավ։ Շիրազը լուռ ժըպտաց։ Ճաշից հետո մի փոքր հանգիստ առնելու սովորություն ունենալով՝ առանձնացա ննջարանում, իրեն թողի աշխատասենյակում, առաջարկելով, որ ինքը ևս հանգիստ առնի, մինչև աշխատանքի վերսկսումը, որը երբեմն տևում էր մինչև ուշ գիշեր։

Մի ժամ էր անցել, թե ավելի, չեմ կարող ասել, երբ աշխատասենյակիս դուռը բաց արի՝ գրում էր։ Ջուզեցի խանգարել և դուրս եկա։ Մի փոքր հետո, երբ եկա, նա ինձ պարզեց այն ընդհանուր տետրը, որի ամեն էջին բանաստեղծություններ կային։ Չհասկացա, թե ինչու է տալիս, երբ այդ տետրը վաղուց իմ տրամադրության տակ էր, շատ անգամ թերթել էի։ Ժպտաց։

— Մի լավ նայե, ցանկությունդ կատարված է։

Ի՞նչ տեսնեմ, որ լավ լինի։ Ազատ թուղթ չգտնելով, իր պատմածը գրի էր առել տետրի հակառակ էջերում։ Այդ տե-

տըրը, որ նա «Լիրիկա» էր կոչել, այդպես էլ մնաց ինձ մոտ։ Ու հիմա իմ պարտքն եմ համարում ասպարեզ բերել։

Իմ կյանքը եղավ գիշերվա մի երկիճք, մութը մշտական կարիճն ու վիշտ էր, իսկ աստղերը՝ ինձ հետ պատահած խնդությունները. ահա քեզ, սիրելի Ռուբեն, մի աստղ և մի պատառ մութ։

Մայրս ծնվել է Ղարսում, ուրեմն ղարսեցի է, անունը՝ Աստղիկ, հայրս ծնվել է Գյումրի նվիրական քաղաքում, ուրեմն գյումրեցի է, անունը՝ Թաթոս։ Մորական պապս բանաստեղծ է եղել, հորական պապս՝ քար կտրող փահլեվան, անունը Խոզի-ակռա, նրա համար, որ ատամներով ծառի ոստ ու գուցեև երկաթ է ծռել, ինչպես վարազը։ Մորական պապս խորամանկ է եղել, հորական պապս՝ մեղմ ու բարի, շիտակ։ Մայրս հեզ է, նույնիսկ հեզիկ ու ծայր աստիճան ինքնամփոփ, ինչպես վշտահար պախրա, ինչպես թփերի տակ քաշված լացակումած աչքերով մանուշակ, ինչպես ցողը ամպի մեջ, ինքը ցող է, իր վիշտը ամպ...

Հայրս նույնպես մեղմ է եղել (այս վկայեցին նրա ընկերներն անցյալ տարի, որոնք ալևոր էին), չարքաշ, անհիշաչար։ Այս երկու մեղմություններն ինձ աշխարհ են բերել Գյումրի նվիրական ու ցնորք քաղաքում, հազար ինը հարյուր տասնըհինգ թվին, մի ձմեռային մթին գիշեր։ Երբ ես բարուրի մեջ եմ եղել՝ ինձ գողացել է մեր կապույտ անունով գամփռը և ամինչև ուշ իրիկուն պահել իր բնում... Մայրս ասում էր, թե ես միշտ հայացքս երկինք էի հառում, միշտ աչքերս կապույտ երկնքին էր... Հայրս Արփաչայի և Արազի ափերին բոստանչի է եղել՝ իր ջահել ու կորիճ օրերին, իսկ երբ թեքվել է դեպի ծերության ձորը՝ արել է ամեն ինչ և փասպանդ է եղել, և պուզ կտրող, և բեռ կտրող և էլ չգիտեմ թե ինչ... Մայրս միշտ նրա մասին է խոսում, միայն թե հառաչում է, որ միշտ հացպակաս են եղել նրա ընտանիքի օրերը։ Հայրս շատ սիրել է ուրիշ-ուրիշ ազգերին։ Լազերի հետ բոստան է դրել Արազի չգիտեմ որ ափին, թուրքերի հետ քիրաքարվանի է գնացել, ռուսների հետ հացի ու արազի է նստել՝ բոստանի ուռենիների տակ։ Մի խոսքով, վատ մարդ չի եղել. «անշատ

մարդ էր»,— ասում էր մայրս, «փափուկ մարդ էր»,— ասում էին ալևորները, այսինքն Գյումրիի վերջին փշրանքները, վերջին մարդիկ... Մորս մասին քիչ գրեցի նրա համար, որ նրան կարող ես գալ և տեսնել, և ավելի խոր զգալ, թե ինչ ասել է մայր, իսկ հորս մասին կարող եմ երկարել, բայց վայ թե գլուխդ ցավեցնեմ, ուրեմն թող լռեմ, ասելով, որ մեղմ ու բարի է եղել, ինչպես իր և իմ հայրենի Շիրակա դաշտերի իրիկնային հովը, և ես նրան կորցրել եմ հինգ թե վեց տարեկան հասակում: Մեռել է սովից և ծեծից... չգիտեմ ինչու, միայն մեռած դեմքն է մնացել հուշերիս մեջ,— դեղնասպիտակ դեմքը. խաղա՞ղ... բարի... ինչպես մայրամուտը:

Հորս մահով մռայլվեց և կուչ եկավ մեր խրճիթը, երբ ձյունը հալվեց, չբացվեց գարունը, և կրկին ձմեռ էր, սով: Մի երկու-երեք տարի երկու քույրերիս (Գոհար և Մանիկ) հետ ծվարեցի մորս բարի ու նվիրական թևերի տակ, սովը սև ուրուրի պես պտտվում էր մորս և մեր գլխին, բայց չկարողացավ խլել մեզանից մեկնումեկին, և ահա մի օր մենք մեզ գտանք ոչ թե մորս թևերի տակ, այլ «խուժանի որբանոցում», ուր ցերեկները կերակրվում էինք, գիշերները արձակվում դեպի տուն: Լավ էր խուժանի որբանոցը, լավ էր մեր խրճիթից նրանով, որ գեթ հաց ու խաշած լոբի կար, ու աղմոսկ, ու խաղ, վատ էր միայն նրանով, որ օրնիբուն մայրիկիս երեսը չէի տեսնում...

Խուժանի որբանոցից քիչ հուշեր ունեմ, լավ հիշում եմ մի բան՝ կավից շինում էի գառ, ուլ, ձի, մարդ, նույնիսկ մի ամբողջ գյուղ և դրանով սիրվում էի մեծամեծների կողմից, ինչպես օրինակ, Հիսնամյա օրիորդ Սաթենիկից, որը անխբատիր բոլոր որբերին ծեծում էր վայրագորեն, իսկ ինձ, որ միշտ էլ մեղքի մեջ էի, չեռք չէր տալիս և եթե ձեռք բարձրացներ էլ՝ կշոյեր միայն՝ ուրիշներին ցույց տալով իմ շինած կավե շունը... Մեկ էլ հիշում եմ մեր կեսօրյա որբանոցի մռայլ շենքը, շրջակա ձորը, որ կոչվում էր Գյումրի չայի ձոր: Հենց այդ ձորը կլանեց իմ մանկությունը, այդ ձորում և նրա առափնյա դաշտավայրերում կորցրի իմ դալուկ, բայց պայծառ երազների մանկությունս, և հիմա՝ ամեն անգամ, երբ «տուն եմ գնում», ուզում եմ ասել թե՝ երբ

լեննինական եմ գնում, նախ մերոնց տեսնելով՝ իջնում եմ այդ ձորը և գնում եմ, գնում եմ գնացող ջրերի հետ, և սիրտս լալիս է, և աչքերս թրջվում են և հոգիս որոնում է՝ ո՞ւմ... չգիտեմ, ու երբեք, երբեք չի գտնում, շուրջը ձորն է, շուրջը դեսը, ջրերը, շուրջը բոստանների հավիտենական թվացող անդորրը, շուրջը նույն բլուրները, վերը նույն մանուկ երկինքը և միայն ու միայն մանկությունս չկա ո՛չ ձորում, ո՛չ մարգերում, ո՛չ դաշտի վրա, ո՛չ ծաղիկների մեջ, ո՛չ երկնքում, ո՛չ իմ հոգում ու ո՛չ էլ իմ երգերում... Ուրիշ էլ ի՞նչ հիշեմ, որ ուրախանաս, քիչ բան կա ուրախանալու,— թող խուժանի որբանոցը մնա իր տեղը, Փիլոյենց Մկոյի բոստանի ափին, ձորի եզրին, թող մնա այդ շենքը, որ հիմի բանտ է դարձել, բանտ՝ չարագործների համար, մենք առաջանանք... չարշարանքի ճանապարհով։

Խուժանի որբանոցի տանջանքների բեռով ոչ թե մտա քավարան մի, այլև, եթե առաջ դժոխքի երկրորդ-երրորդ հարկումն էի՝ իջա հատակը... Մեզ տարան Պոլիգոն, այս Պոլիգոնը, որ չի հեռանում մտքիցս, մի բանտ էր, նրա կամարները կարծես դևերի ձեռքեր էին, որ իջնում էին մեր՝ որբուկներիս ուսերին։ Ի բնե ես չար էի, այսինքն չարաճճի։ Եվ ինչքա՞ն եմ տուժել, ինչքա՞ն են պատժել, ինչքա՞ն են խոցել հոգիս, բայց չես էլ հարցնում, թե ինչ տեսակ էին պատժում։ Ահա մի տեսակը. չարություն էի արել, որքան մի թիթեռը կաներ, և մերկ ծնկներով ծնկի էին իջեցնում սուրսուր ավազախճի վրա, մինչև իրիկուն. ինչքա՞ն եմ կանգնել, ինչքա՞ն։ Մի օրինակ ևս և վերջ. եթե «մեծ» է հանցանքը, օրինակ՝ հաց գողանալը, որբանոցից փախչելիս բռնվեիր՝ վայ կգար գլխիդ, կբռնեին, կմերկացնեին և կտաներին բաղնիք... Բայց չես էլ ասում, թե ինչ բաղնիք, քոսով վարակված ու հիվանդ որբերին կար առանձին բաղնիք. հենց այդ էր ասածս բաղնիքը, միանգամայն առողջ, մաքուր, ինչպես լուսեղեն աղավնի, մանուկին բռնում էին և գցում այդ դեղին դժոխքի մեջ, դեղին էլ որ ասում եմ՝ նրա համար, որ քոսով վարակված որբերին բուժում էին դեղին ծծմբահեղուկ դեղով, և ողջ բաղնիքը, ոչ թե բաղնիք էր, այլ մի ծծմբահանք... Հիշում եմ, շատ բան եմ հիշում այդ դժնի դժոխքից. հիշում եմ, թե ինչպես էին ծեծում, ծեծկում, թե ինչպես օրնիբուն սուված

էին թողնում, և ինչքա՜ն եմ սուված մնացել և ինչքա՜ն եմ թափառել դայլի ձագի պես՝ ճաշարանի շուրջը։ Բայց հիմի եմ հիշում, թե ինչու փոքրիկ շան պես թափառում էի որբանոցին եզերող Շիրակիս անծիր դաշտերում ու ձորերում։

Հա՜, միտքս պարզեմ՝ կես-կուշտ, կես-քաղցած ծլկում էի որբանոցից դեպի դաշտերը և դեպի մանկություն, ուրիշները փախչում էին դեպի քաղաք, դեպի շուկա, իսկ ես՝ դեպի Արփաչայի քնքուշ հովիտները և տերը կորցրած որսորդի շան պես՝ թանչին էի տալիս մինչև իրիկուն, լողանում էի Արփաչայի սրբազան ջրերում, ծաղիկների մեջ քնում էի, վրաս Արփաչայի ուռենիներն էին ստվերում, ու բույր ու թույրի մեջ մոռանում էի, որ որբ եմ... Ինձ հետ էին երկինքը, Շիրակի երևակայություններ զարթեցնող ու խորացնող կապույտ երկինքը, դաշտերը, ձորերը, թռչունները, աղբյուրները, թիթեռները և այնքան էին հարազատ, որ մոռանում էի ոչ միայն որբությունս, այլև ինձ թվում էր, թե մորս գրկում էի, մինչդեռ մայրս ո՞ր նենգ ու ժլատ, քսու ու չար հարուստի տանը լվացք էր անում, մի կտոր ավելցուկ, մի կտոր չոր հաց ձեռք գցելու հույսով։ Ջերկարեմ. Պոլիգոն որբանոցը թողեցի և մի գիշեր փախա, լուսադեմին ինձ՝ մի խումբ որբերի հետ Լենինական նվիրական քաղաքի շուկայում գտա։ Որքա՜ն լավ էր, որքա՜ն լի, որքա՜ն շռայլ էին մարդիկ թվում։ Գողանում էինք, ծեծվում, ծեծկվում, և էլի կյանքը կախարդական էր թվում։ Մայրս խմացավ, որ որբանոցից փախել և բազար եմ իջել ու դառել խուժան ու անունս էլ ոչ թե Օնիկ է, այլ խուժան-Օվո՜... Մայրս ինձ գտավ, ընկա գիրկը, լացեց, լացեցի ու սիրտս բացվեց, աշխարհով մեկ եղա, իսկ մայրս՝ տիեզերքով մեկ... Մորս հետ գնացի մեր տուն, մեր խրճիթը չկար, մի հարուստի նկուղ էր մեր նոր տունը, մութ ու խոնավ, իսկական չղջիկի բուն, սիրտս կրծքիս տակ կծկվեց... Մայրս ինձ դպրոց տվեց և ինչ-որ սովորել էի որբանոցներում, ինչ-որ կլանել էի, նորից ինձ հետ էին, և կարճ ժամանակի մեջ բոլոր ուսուցիչներն ինձ սիրեցին, բայց «անտանելի չարությանս» պատճառով միշտ տեղս փոխում էին, դպրոցից դպրոց էի թափառում, բայց միշտ սիրվում էի ու միշտ ներբողվում. լավ նկարել գիտեի, պատանի երևակայություն՝ չգիտեմ ինչու. սակայն միշտ սար, միշտ ձոր,

միշտ լեռ, միշտ դաշտ, միշտ մարդ ու միշտ, ու ամեն տեղ շուն էի նկարում... Շատ լավ և չքնաղ հուշեր ունեմ այդ օրերից: Հիշում եմ, ինչպես մի օր հաց գողացա, օ՜, որքան քաղցր էր հաց գողանալը. հացի տերը՝ անուանը Եղնիկ, կարծեմ հարձակվեց, որ խփեր, բայց փախա: Մի ուրիշ անգամ մի դամփռ շան ձագ էի գտել և բերել դասարան, կապել էի իմ նստարանի ոտից. ընկերներս վայրկյան առ վայրկյան խփում էին շանը, և նա վնգստում էր, և ուսուցչուհին անհանգստանում էր. նա կարծում էր, թե դրսից է գալիս շան ձայնը, բայց երբ վերջապես նկատեց իսկությունը, բղավեց և ինձ ու իմ շանը դուրս արին... դպրոցից: Նորից շուկա, նորից հին ու սուրբ ընկերներիս մեջ եմ, և իրոք որքա՜ն ու ինչքա՜ն էինք նվիրված մեկմեկու, իսկական ընկերներ միշտ գտնում էի թշվառության մեջ: Բախտակից: Ահա այս անգամ էր, որ դանակով կողքս ծակեցին չար մարդիկ՝ մի գիլա խաղողի համար: Ահա այս ժամանակ էր, որ մայրս լացեց ինձ խփողի ոտներն ընկած, փոխանակ վրեժխնդիր լինելու, թվում էր նրան, թե իր աղաչանքներով կարող էր դանակով ինձ խփողին ստիպել վերքս լավացնել...

Զարմանալի՜ հոգի...

Մի իրիկնադեմ էր կարծեմ, վերքս բոլորովին լավացել էր, մոռացել էի ամեն ինչ, և հանկարծ երկրաշարժ... մեր նկուղն իջավ, երկինքը փրկեց մեզ. դուրսն էինք ես, մայրս, քույրս և էլի քույրս: Մեզ փայտե բարաք տվին քաղաքի ծայրին, դաշտերին մոտիկ, սրտիս մոտիկ, երկնքին մոտիկ: Մայրս միշտ ու միշտ ձգտում էր ինձ բազարից կտրել: Դարբնի աշակերտ տվեց, վեց ամիս մնացի, փախա, կոշկակարի աշակերտ տվեց մի բարի մարդու մոտ, փախա, նորից կոշկակարի մոտ գնացի, մնացի մոտ յոթ ամիս, նորից փախա, և նորից շուկան էր ինձ կախարդում: Սկսեցի ջուր ծախել, մի ձեռով ջուր ծախել, մի ձեռով հին գործս կատարել՝ գողանալ սոխ, խնձոր, հաց, յուղ, պանիր, տանձ, ինչ որ լավ բան պատահեր, բայց ոչ փող, բայց ոչ փող... չնայած այն բանին, որ համբավ կար, թե «Օվոն է, երկու մատով հանող Օվոն է»: Ջուր ծախելուց էլ բան չհասկացա, գնացի չոլերը, ավելի ճիշտ՝ Գյումրի-չայի ձորը, ուր անցավ իմ բախտավոր և անբախտ մանկությունը, բախտավոր էր նրա

համար, որ մանկություն էր, անբախտ էր նրա համար, որ սոված ու անուս էր...

Հավաքում էի հին կոշիկի մնացորդ՝ պադոշ, պղնձի կտորներ, երկաթ և բերում էի ու ծախում, մի օր էլ մտածեցի՝ մի բան որ ես գիտեմ՝ կոշիկ նորոգել, ինչո՞ւ համ պադոշը ծախամ, հազր ես կնստեմ... և նստեցի ու արդեն փինաչի եմ... Երեք տարի փինաչություն արի, հետո ինձ տարան տեքըստիլ, քույրս տարավ, մեծ քույրս, բայց շատ լավ հուշեր ունեմ փինաչի օրերիցս, մարդիկ գիտեին, որ գող Օվոն եմ, քչերն էին վստահում, քչերն էին կոշիկ տալիս, որ կարկատեմ, ես էլ անոթի չմնալու համար թողնում էի խուժան հասակակիցներիս, որ իրենց գողացածը բերեն և իմ դազգահի մեջ պահեն, ու ես դառնում էի մի տեսակ պահեստապետ՝ գողերի ավարի... Մինչև կեսօր փինա էի անում, կեսօրին գնում էի Արփաչայ, լողանում և շանս հետ թափառելով զիբիլնոցներում՝ հավաքում էի հին կոշիկներ, բառնում էի շանս և տուն գալիս... Մտանք տեքստիլ, իմ շատ հին ընկերներիս այնտեղ տեսա, բայց էլի ուշքս ու սիրտս դուրսն էր, հիմա էլ հիշում եմ, թե ինչպես գործից ուշանում էի և փախչում դաշտերը, իմ սիրած դաշտերը, իմ նվիրական դաշտերի գիրկը... քնում էի ուռենիների տակ: Հիշում եմ, թե ինչպես ձմեռները գնում էի գետափ և ցածրիկ ուռենի ծառերի վրա քնում... Եվ չէի սառչում... Բայց նորից փախա դեպի շուկա, ոսկի աշուն էր, խաղո՞ղ, տա՞նձ և խուժան Օվո՞...

Եվ ահա իմ սիրած խաղողը, և ահա ես, և ահա շռայլությունը շուկայի, բայց և ահա դատարկ գրպանս... Մարդիկ անուշ-անուշ վայելում են ոսկե աշունը, իսկ ես ի՞նչ ունեմ... Տեսա մի մարդ է գնում խաղողը թղթե տոպրակից ուտելով, հետևից գնացի, ուր գնաց՝ գնացի, և երբ ուտելը վերջացրեց՝ տոպրակը նետեց ցած: Վերցրի, մտքիս մեջ մտածելով, թե հո այդքան էլ ագահ ու չար մարդ չէր, որ մինչև վերջին գիլան կերած լիներ, և իրոք մի քանի գիլա թողել էր՝ մեկ-մեկ անուշ արի ու տոպրակը պատռեցի, բայց տոպրակի միջի երեսին մի ոտանավոր կար, կարդալ գիտեի, կարդացի, էնքան լա՛վն էր, էնքան լա՛վը, որ տեղնուտեղը բերան արի առաջին տունը.

Եվ սա էր այն առաջին շունչը, որ իմ պատանի հոգում զարթեցրեց ինչ-որ բան, ոչ թե առաջին ոտանավորն էր, որ ես կարդացել էի, այլ այն առաջին ձայնը եղավ դա, որ արթնացրեց քնած երազներս, որոնց պտուղը այսօր վայելում եմ... երգեր, պոեզիա... Դրանից հետո մտքիս ու սրտիս միջից չէր հեռանում.

Վտակը ժայռից ներքև է թռչում...

Հայց չգիտեմ ինչու, քանի մեծանում էի, այնքան առաջին ու երկրորդ քառյակները աչքիցս ընկնում էին և հոգուս մեջ հոգի էր դառնում վերջին տունը՝

Այնինչ բնության զվարթ համերգի
Ունկնդիրն անխոս հավիտենական՝
Ժայռը մտախոհ իր մռայլ մտքի
Ետևից ընկած լսում է նրան...

Եվ քանի մտածում էի աշխարհի ու բնության մասին, և քանի մոտենում էի աշխարհին ու հեռանում բնության գրկից, այնքան խորանում էր այդ վերջին տունը իմ հոգում՝

Այնինչ բնության զվարթ համերգի...

Ներից մտա դպրոց որպես չար, այսինքն չարաճճի, այսինքն ըմբոստ, խուժանամման, ինձ ընդունեցին գիշերային դպրոց, մեծահասակների մեջ, և ճիշտ որ, մի քիչ խեղճացա և կպա գրքերին: Ձեռքս ընկավ Թումանյանի գիրքը, ու կարդում եմ, ո՞նց եմ կարդում, կլանում եմ ու կախարդվում... Մեր ուսուցիչներից մեկը, մի կարճահասակ մարդ էր, ճերմակած գլխով, մեղմ մարդ էր, նա մեզ, կարծեմ, քաղաքագիտություն էր տալիս, մյուսներին՝ հայոց լեզու: Այդ մարդը լիրիկ Դեղամ Սարյանն էր... Եվ ահա գրեթե առաջին անգամն էի լսում բանվոր ու բուրժուա անունները, և երբ այդ գիշեր տուն էի դառնում՝ հեռվից, մթան միջից երևացին սարերը, ավելի մութ, ուռած փորերով, իսկ աստղերը, որ

անթիվ ու անհամար վառվում ու փայլում էին երկնքի մեջ՝ ինձ թվացին բանվորներ, իսկ սարերը կարծես թե ձգվում էին վեր, դեպի երկինք, դեպի աստղերը, և չէին կարող, սակայն, նրանց հասնել, ու ես եկա տուն, սոված էի, պառկեցի, կարծեցի, թե սովածությունից է, որ քնել չէի կարողանում, միտքս տանջվում էր, և հանկարծ վեր ելա ու գրեցի մի բան... իբրև թե ոտանավոր... այն բանվոր աստղերի ու բուրժուա սարերի մասին... Ի՞նչ եղավ իմ այդ աշակերտական երախայրիքը՝ չգիտեմ...

Դրանից հետո ձեռքս ընկավ Հովհաննիսյանի «Արազն եկավ», հափշտակվեցի և մյուս օրը մի բան գրեցի... Կարդացի, և բանից դուրս եկավ, որ նույն երգն էր... աղավաղված կերպով «Արազն եկավն» էր։ Բախտս նորից մթնեց, նորից վռնդեցին դպրոցից, մի աղջկա մազերը քաշել ու լացացրել էի։ Եվ այսպես մոռացա ուսուցչին էլ, աղջկան էլ, գիշերվա աստղերն էլ, սարերն էլ, Արազն էլ, միայն մի բան էր մնացել իմ հոգում...

Այնինչ բնության ղվարթ համերգի...

Նորից մտա տեքստիլ գործարան, բայց այս անգամ ոչ թե աշակերտ, այլ շպալ կրող և միաժամանակ էլ՝ ջուլհակ։

Օրեր, ամիսներ և տարի անցավ։ Մի ոտանավոր գրեցի, հիմա էլ հիշում եմ այդ.

Միտիկ, ծիտիկ
Սիրունիկ,
Իմ ծլվլան
Ժիր թռչնիկ։

Տարա անուն հանած սկսնակների մոտ, կարդացին, խնդացին վրաս. տխրեցի ու էլ չէի երևում նրանց մեջ։ Գնում էի էլի իմ հին խաղընկերների՝ դաշտի աղբյուրների և ուռենիների մոտ... Մի ընկեր ունեի, անունը՝ Արամ, հաց թխող Տուդիի տղան էր, նա էլ երազող էր, ամենքն ինձ «խելառ Օնիկ» էին կանչում ու ինձնից խուսափում էին, միայն Արամն էր ինձ հասկանում ու խելառ չէր ասում, միայն թե հերսս հանում էր, և ես նրան էլ չէի զիջում ու հայհոյում էի...

Դրա համար նա ինձ ձմռանը ձյան վրա լավ ծեծ է տվել մի անգամ: Բայց Թոթովական գրածներս հավանում էր ու գովում, մինչև օրս էլ անդավաճան ընկերս է, տա աստված, որ միասին իջնենք ծերության ձորը...

Բայց ես կարողացա մի քե երկու ոտանավորով արձագանքել այն ժամանակին, երբ մեքենան էր գվվում: Ահա այդ իմ առաջին ոտանավորը, որ կարդացի գրական խմբակի ժողովում և հավանեցին ու տպեցին գործարանի թերթում: Վերնագիրն էլ՝ «Առաջին անգամ» էր:

Առաջին անգամ, երբ ձեռք զարկի
Հաղթ մեքենայի պողպատ թևերին,
Նա զնգաց անուշ, հնչեց հաղթական
Ու նոր խանդությամբ լցրեց իմ հոգին:

Ժամանակի սկսնակները կարդացել էին և նույնպես հավանել, պոետ Գեղամ Սարյանը ևս հավանեց... Նրանից հետո մուսաս հրեշտակի պես սրտիցս կարծես թռավ և մնացի արցունքիս, դաշտերի, ծաղիկների հետ միասին... Մեկ-մեկ գնում էի գրական խմբակի գրական ժողովներին և լսում էի լուռ ու մոայլվում: Ինչո՞ւ էի մոայլվում՝ չգիտեի, գուցե նրանից, որ ընկերներս լավ էին երևում իրենց երգերով, իսկ ես ծաղկի ու ծիտիկի, առվի ու ուռենու մասին էի երազում ու գրում,— գուցե, բայց այդ թախիծս ցրվեց ցրվող օրերիս հետ, ու երբ կրկին լուսեղեն աղավնու պես Պառնասից, թե իմ հայրենի սուրբ Արագածից իջավ մուսաս ուսերիս և մի տարվա մեջ գրեցի «Գարնանամուտը», որ լույս աշխարհ եկավ, եկավ հազար ինը հարյուր երեսունհինգ թվի գարնանը, և ես այդ ողջ գարունն իմ մեջ զգացի...

ԵՐԵՍՈՒՆ ԵՎ ՅԱՎԱԼԻ ՏԱՐԻՆԵՐ ՀԵՏՈ

Տարիներ անցան: Տարիներ, որոնց ընդհանուր գումարը երեք տասնյակից ավելի է: Երկուսս էլ «իջել ենք ծերության ձորը»: Չկան մեր ընկերներից շատերը, ոչ միայն տարեց ընկերները, որոնց առջև երկուսս էլ գլուխ ենք խոնարհել: Չկան և նրանք, որ գրականություն մտան ինձանից և Շիրազից հետո: Եկել են նորերը: Դրանք նոր են և ուրիշ: Դրանց

համար մենք ծեր ենք մտքով և հոգով: Հիմա մենք սակավ ենք հանդիպում: Մեր ճանապարհները հեռացան միմյանցից: Նա մնաց գրականությանը հավատարիմ, հասնելով ժողովրդական հռչակի: Ես գնացի դեպի արվեստը, մեկ-մեկ դառնալով դեպի գրականության անդաստանը:

1964-ին մեկնել էի Հալեպ և Բեյրութ: Վերադառնալուց հետո պատահեցի բանաստեղծին, հիմա չեմ հիշում ինչ համգամանքներում, և պատմեցի, թե ինչպես, լինելով հայկական դպրոցներում, գրական շրջաններում, համոզվել եմ, որ Շիրազի պաշտամունքը կա այնտեղ:

Իսկապես այդպես էր, ասում էի, մտածելով, թե հաճելի լուր եմ բերել նրան: Լսեց, հանկարծ լրջացավ և նայեց ինձ մի հայացքով, թեև ժպտուն, բայց ավելի չարախինդ.

— Տեսա՞ր, որ իմ ըսածը եղավ:

Ասաց ու նայեց ինձ շեշտակի:

— Ես էն գլխից գիտեի, որ իմ ջուրը ուրիշ ջրեմեն է: Դու չգիտեիր, սիրելիս:

Հայացքը նորից խաղաղ-խաղաղ էր:

— Ուրախ եմ, որ գնացիր քո աչքով տեսար, քո սրտով զգացիր, թե խուժան Օվոն ինչ է հորիզոններից այն կողմ:

Եվ հանկարծ նորից հայացքը լարվեց:

— Է՛հ, ընկերներիդ ըսե՞լ ես, գիտե՞ն, իմացա՞ն: Էդ էլ հո ես չեմ ասողը:

Ձայնը հանդարտեց, աչքերը մեղմ ժպիտով նայեցին:

— Մի նեղանա, տարիքով մեծ ես ինձնից, բայց ես էլ գրականությամբս եմ մեծ: Մի նեղանա, որ սիրտս բանամ, կտեսնի՞ս քանի տեղից է վիրավոր: Դառնացած մարդ եմ: Ուրախ լուրերն էլ կասկածով կընդունիմ:

Մի փոքր հետո:

— Ինչ եղել՝ եղել է: Տարիք առանք: Կհավատա՞ս, թե չէ, որ ամեն անգամ սիրով կհիշեմ «Երգերը գրքի» ու «Լիրիկայի» տարիները, նույնիսկ մեր վեճերն ու կռիվները, էդ իմ գրական կյանքի պատանեկությունն էր:

Ու նայեց ինձ, և մի պահ այնպես թվաց, թե նայողը ոչ թե հիմիկվա Շիրազն է, այլ այն օրերի: Աչքերը երազկոտ էին, իսկ շրթունքներին ինձ լավ ծանոթ մեղմ ժպիտն էր:

— Լավ օրեր էին, բացի մի դեպքից, հիմի էլ որ կհիշեմ,

կփշաքաղվիմ։ Գլխի կընկնի՞ս, թե ինչի մասին է խոսքս, «Հայոց դանթեականի». դու ես դրա վկան, դու էլ մի օր պիտի պատմես, թող մարդիկ իմանան, թե իրենց բանաստեղծն ինչ ծանր օր է ապրել։ Տխուր հիշողություն է։

Վերջերս բանաստեղծը ցանկություն հայտնեց «Հատընտիր» լույս ընծայելու և հրատարակչությանը խնդրեց ինձ վստահել գործը, բայց հրատարակչությունից և ինձանից անկախ հանգամանքներ արգելք եղան, որ հանձն առնեմ այդ հաճելի պարտականությունը։

Հանդիպում ենք գրական տոնախմբություններուն ժամանակ, օրինակ՝ Ավետիք Իսահակյանի, հանդիպում ենք գրողների համագումարներում, հանդիպում ենք փողոցում, մեծ մասամբ պատահմամբ։ Գրական հավաքույթներում չի լինում։ Գրողների տանը նրան հազվադեպ կարելի է հանդիպել։ Հայտնվում է փողոցում և միշտ երկրպագուներով շրջապատված։

Գրում եմ այս տողերն ու մտածում՝ թե տեսնես ո՞ւր է հիմա նա, տա՞նը, բազմազավակ հոր պարտականությամբ, թե գրասեղանին կքած գրում է։ Չգիտեմ ուր է նա, գուցե փողո՞ց է դուրս եկել, անցնում է մայթով, ճերմակած գլխով, դառնացած սրտով, ինքն իր հետ մեն-մենակ ու աշխարհը ողջ մի բուռ դարձրած ու իր սրտի մեջ առած։ Անցնում է, և շատերը կանգ են առնում, նայում քայլող բանաստեղծի հետևից, և ասես, չկամենալով վրդովել նրա մենությունը, շշուկով միմյանց հաղորդում են.

— Շիրա՜զը, տեսե՛ք՝ Շիրազը...

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս բոլորը գրել եմ իր ողջ ժամանակ։ Նույնիսկ մտքովս անցավ դետեղել «Հուշապատումի» երրորդ գրքում, բայց հետո հրաժարվեցի այդ մտքից, խորհելով, թե ընթերցողի և իր աչքին կարող է վիրավորական երևալ հանգուցյալների շարքում լինելը։

Մեր հանդիպումներից մեկը, սակայն ոչ անձնական։

Հայաստանի գրողների համագումարն էր։ Օրակարգի հար-

ցերից մեկը երիտասարդական պոեզիայի խնդիրն էր: Մեր հայտնի բանաստեղծներից մեկը, լինելով ավանդապաշտ, իր ելույթում երիտասարդների պոետական նորարարական ջանքերը բնորոշեց քաղցկեղ բառով:

Շիրազը, որ իմ տպավորությամբ խոսելու ցանկություն չուներ, խնդրեց իրեն ձայն տալ:

Մոտեցավ ամբիոնին և խոսքն ուղղեց ոչ թե դահլիճին, այլ իրենից առաջ ելույթ ունեցած բանաստեղծին, սիրով, մտերմաբար, տվեց անունը և զարմանք հայտնեց, թե նա ինչպես կարող էր այսօրվա երիտասարդների արածին այդպիսի ծանր որակում տալ:

— Ես էլ եմ կարդում, ես էլ շատ բան չեմ հասկանում ու չեմ հավանում, մանավանդ որ իրենց ձայնն իմ սրտին չի հասնում, բայց ինձ թույլ չեմ տա նրանց այդպես կոչել: Մարդիկ փնտրում են, ինչ-որ բան են որոնում՝ կգտնեն կամ չեն գտնի: Բայց, ինչպե՞ս կարելի է, լեզուս էլ չի դառնում, քաղցկեղ կոչել: Իմ որդին՝ Արայիկը, քանդակագործ է: Ես նայում եմ և շատ հաճախ չեմ հասկանում, թե ինչ է անում, բայց զգուշանում եմ դիտողություն անել: Այդպես էլ այս տղաները, նրանք, սիրելիս, և նորից անունը տվեց, իմ և քո զավակներն են: Սպասենք, տեսնենք, համբերող լինենք: Չի կարելի, չի կարելի:

Ասաց ու նստեց:

Դահլիճը ծափերից որոտաց: Չէի ասի, թե դահլիճում երիտասարդ բանաստեղծների պաշտպաններից շատ կային: Ծափահարողներն այդ պահին երիտասարդ բանաստեղծները չէին: Ոչ էլ Շիրազն ու իր ժողովրդական հռչակը: Նրանց հուզեց մեծ ճանապարհ անցած բանաստեղծի իմաստությունը, նրա մարդկային կոչը՝ համբերատար լինել երիտասարդության նկատմամբ և հանդուրժող լինել նույնիսկ այն դեպքում, եթե եկող երիտասարդ սերնդի որոնումներն այնքան էլ հասկանալի չեն...

Մեր վերջին հանդիպումներից մեկը Լենինականում էր, գրողների միության այնտեղ անցկացվող պլենումի ժամանակ: Նախագահության սեղանին իրար կողքի էինք նստած: Վերջին նիստն էր: Ժողովուրդն ուզում էր սիրելի բանաստեղ-

ծին լսել։ Նախագահող Վարդգես Պետրոսյանը, որ միշտ շատ ուշադիր է եղել նրա նկատմամբ, դիմեց.

— Շիրազ, մի խոսք ասա...

Շիրազը ամբիոնին չմոտեցավ, տոքի կանգնեց և իր տեղից երկու խոսք ասաց, գրականության հարցերի շուրջ և հանկարծ ամենքի համար անսպասելի, խոսքը փոխվեց գանգատի, թե իրեն չեն տպագրում, որ իր «Դանթեականը» ահա քանի տասնամյակ է, որ մնացել է անտիպ, ուրիշ գործերի անուններ տվեց, տպագրության պատրաստ մնում են չհրապարակված, հետո դարձավ ինձ.

— Դե, ել պատմիր, թող մարդիկ իմանան, թե ինչ օյին բերին «Դանթեականի» գլխին, էդ տխուր դեպքերի միակ վկան հիմի դու ես։

Ես չարձագանքեցի, ոչինչ չասացի, մտածելով, թե դառնացած բանաստեղծ է, ասում է, բայց բնավ դրա տեղը չէ։ Կարծում եմ, որ ունկնդիր դահլիճն ուրիշ սպասելիքներ ուներ բանաստեղծից, կարծում էր, որ իր կարծիքը կհայտնի արդի հրատապ խնդիրների մասին։ Իմ լռությունը նրան դուր չեկավ։

— Չե՞ս ուզե, Կվախնա՞ս...

Եվ վերջին հանդիպումը։

Որդին գունանկարչական գործերի ցուցահանդես էր բացել լրագրողների տանը։ Գնացի։ Քաջալերական մի երկու խոսք ասացի տղային, ուզեցի հորն էլ մի երկու խոսք ասել, ուրախացնել, թե ինչ շնորհալի որդի ունի։ Բարևս չառավ, չուզեց նույնիսկ լսել ու հեռացավ...

Ինչու այդպես վարվեց՝ չհասկացա։ Իմ սիրտը մաքուր էր նրա նկատմամբ։ Միշտ պաշտպանել եմ նրան իր հակառակորդներից, հանուն նրա նույնիսկ ընկերներիս հետ տաքացել վիճել եմ, ընդհարվել։ Տեսնես ով ինչ է ասել, նա էլ կասկածամիտ, դյուրահավատ...

Շատ վշտացա, երբ իմացա Շիրազի մահը։ Լսել էի, որ հիվանդ է, նույնիսկ գիտեի, որ ծանր է, բայց չէի կարծում, թե այդքան մոտ է հավիտենական վախճանը։

Այդ ծանր բոթը հայտնեց մի ծանոթ՝ Ալեքսանդր Թամանյանի արձանի մոտ։

— Լսե՞լ եք։

— Ի՞նչ։

— Շիրազը մահացել է։

— Չի կարող պատահել։

Ու երկար լուռ մնացինք, մնացինք կարկամած, չգիտեինք ինչ ասեինք։

Ես ինքնաբերաբար գլխարկս հանեցի։ Նա էլ։ Բաժանվեցինք։

Ես գնում էի Գեղարվեստա-թատերական ինստիտուտ դասախոսություն կարդալու։ Ջանգահարեցի՝ վատ եմ զգում։ Գնացի մի պուրակ, նստեցի, ու իմ աչքերի առջև անց-ավ Շիրազի կյանքը...

Ու ես խորհում եմ...

Երբ Շիրազը հանդես եկավ՝ Չարենցը դեռ կար։ Երբ արդեն Չարենցը չկար, կային Նաիրին ու Գեղամ Սարյանը։ Շիրազը ստեղծագործում էր սրանց և ուրիշների կողքին։ Դրանցից մեկն էր, չէր ճանաչված իբրև առաջինը, թեև շատերի համար պարզ էր նրա անկրկնելի և վառ անհատականությունը, մանավանդ որ 40-ական թվականներին ստեղծում էր քնարական մարգարիտներ, հայրենասիրական բոցաշունչ քերթվածքներ։ Պատերազմն ավարտվեց։ Եկան 50-ական թվականները։ Գաղտնիքը ժամանակի մեջ էր։ Մթնոլորտը շիկանում էր, և բոլորի ուշերն այրվում էր ազգային ճակատագրի հարցերից։ Բանաստեղծներից Շիրազն առաջինն ընդգրկվեց այն նոր մթնոլորտի մեջ, որ բնավ էլ նոր չէր և հայի համար հոգեկան վաղուցվա մորմոք էր՝ գերված Արարատի կսկիծ, Վան, Սիփանա սար։ Քնարական ներշնչանքը երբեմն-երբեմն էր այցի գալիս, հիմա նա ժողովրդական երազանքների արվեստագետ էր, հայրենասեր, քաղաքացի։ Ու մարդիկ, ժողովրդական ամենալայն խավերը, որոնք միշտ էլ համակրանքով և սիրով են նայել Շիրազին, համարել նրան մեծ ապագայի տեր, ընկալեցին նրան հիմա որպես իրենց բանաստեղծի, որ երգում և ասում է այն, ինչից տրորվում և կուչ է գալիս իրենց սիրտը՝ Մասիս, Վան, Սիփան...

Շիրազն այդ տարիների առաջին բանաստեղծն էր։

Շիրազը դարձել էր մտքերի տիրակալ։

— Իսկ Սևա՞կը,— կհարցնի բանաստեղծի երկրպագու ընթերցողը։

Սևակը, որ մեծ տպավորություն էր թողել իր առաջին բանաստեղծություններով, երկար ժամանակ ինքն իրեն չէր գտնում: Վերջապես, գրեց «Անլռելի զանգակատունը», և Սևակի անունը բարձրացավ, համբավը ժողովրդականացավ: Եվ մարդկանց համար հիմա կա՛ Շիրազ, կա՛ Սևակ: Շատերի համար և՛ Շիրազ, և՛ Սևակ: Շիրազի պաշտամունքի կողքին կյանք առավ Սևակի պաշտամունքը: Պաշտամունքը խորացավ, երբ կարդացին «Մարդը ափի մեջ» գիրքը և համոզվացան, որ այդ ժողովածուն շարունակություն է այն կետի, որտեղ կանգ էր առել Զարենցը: Իսկ երբ հետամահու լույս տեսավ «Եղիցի լույսը», երկրպագուները նրան հռչակեցին հանճար: Եվ հյուսվեց բանաստեղծի անվան ժողովրդական առասպել, որի հերոսը, հակառակ Շիրազի կենսագրության, պաշտոն ուներ, գրողների միության քարտուղար էր, գիտական աստիճան ուներ, գիտությունների դոկտոր էր, և կառավարությունը նրան այնքան նշանակություն էր տալիս, որ նա դարձավ Խորհրդային Միության Գերագույն խորհրդի դեպուտատ:

Հիմա ընթերցողը հարց կտա, այս ի՞նչ է գրում Զարյանը, մեկ այս է ասում, մեկ բոլորովին այլ բան, և կուզենա որոնել հակասություն: Եվ կգտնի, եթե իր մոտեցումը լինի արտաքին: Իսկ եթե կամենա արծարծվող հարցի խորքերը մտնել, կհասկանա, որ ոչ մի հակասություն էլ չկա: Որոշողը ձիրքն է, հանճարը: Եթե հանճարը կա, ապա մեկի համար առաքինություն է պաշտոն և տիտղոս չունենալը, մյուսի համար՝ առավելություն, բազմակողմանիության նշան և ապացույց քաղաքացիության: Ժողովրդականության հասնելու ճանապարհները տարբեր են ու նաև անիմանալի:

Թող ներեն Շիրազի երկրպագուները, որոնցից մեկն էլ ես եմ, եթե հանդգնեմ այն միտքը հայտնելու, թե տասնամյակներ հետո Շիրազին գրականության մեջ պահողը լինելու են նրա քնարական բանաստեղծությունները, հայրենիքին նվիրված երգերից՝ 40-ական թվականներին գրվածները:

Հարցը միայն այն չէ, որ նրա քերթվածքները, «Գարնանամուտից» սկսած, բանաստեղծական ընտիր էջեր էին: Հարցն այն է, որ Շիրազի ասպարեզ մտնելով, ընդհատված ավանդույթը նորից կյանք առավ, և մեր չափածո գրականու-

թյունը կրկին ու կրկին վերադարձավ բնությանը, մարդկային հոգու մտերմական ապրումներին:

Շիրազը ասպարեզ եկավ 30-ական թվականների կեսերին: Այդ տարիներին, Չարենցից հետո, հայ բանաստեղծության վրա իշխում էին պաշտոնական թելադրանքները՝ ըործարան, կոլխոզ, ստալինապաշտություն, աշուղական նեյնիմներ, պետական քծնանք: Ահա այդ նույն ժամանակները մի նորեկ բանաստեղծ ըստ գրական մթնոլորտի՝ հանկարծ անսպասելի հիշում է իր երանելի ու տարաբախտ մանկությունը, երգում է սերը, հիանում Արագածով, գովերգում բնությունը, դաշտի ծաղիկը, փառաբանում արևը... մի խոսքով՝ լսվեց անկեղծ ու անմիջական ձայն: Շիրազի վաստակն այն է, որ նա վերադարձրեց կորածը. նոր ուժ հաղորդեց և վերստին հաստատեց ժողովրդական շնչի կենսունակությունը: Ժամանակի պահանջ էր դա: Եվ ճշմարիտ տաղանդն էլ այն է, որ զգում է ժամանակի պահանջը և ընդառաջ գնում նրան: Սա պատմական ծառայություն էր: Ուրեմն՝ նորարարը ոչ միայն նա է, որ գեղարվեստական մտածողության առաջ նոր ուղիներ է բացում, ինչպես Չարենցն ու Սևակն էին, նաև նա, որ վերականգնում է մոռացված անցյալից այն, որ չի կորցրել իր կենսունակությունը այսօրվա և վաղվա համար:

Սա բանաստեղծական խոսքի անխուսափելի ընթացք էր, որ պետք է լիներ անկախ ամեն ինչից, և Շիրազն եղավ առաջինը:

Սկսելով իր բանաստեղծական կյանքը որպես Իսահակյանի կրտսերը, Շիրազն ուներ իր ասելիքը, նկարագիրը, որ միայն իրենն էր, հետևապես 1943-ին իմ փորձերը, ապացուցելու, թե նա իսահակյանական քնարի ցոլքն է, իհարկե, արդարացի չէին: Այդ ժամանակ նա արդեն վերջնականապես ձևավորված բանաստեղծ էր՝ իր տրամադրություններով, որ ժամանակակից էին և հավերժական միաժամանակ:

Այդ չափածոն փառաբանում էր բնությունը, մեծարում մարդուն, գեղեցկության աննահմանություններ տեսնելով մեկը մյուսի մեջ, որ հայտնաբերվում են և դեռ հայտնաբերվելու են:

Ըստ այդ չափածոյի՝ աշխարհի ամենաբախտավոր բանաստեղծը Շիրազն է, հենց թեկուզև այն պատճառով, որ ավելի

լավ, քան ուրիշները, զգում և հասկանում է, թե ծնվելն ու աշխարհ գալը մարդու համար ինչ մեծ պարգև է ու վայելչություն:

Այս մտքրի մեջ էի և չգիտեի, թե քանի ժամ է անցել...

Ես ելա, որ գնամ տուն, իսկ այգու ծառերի կատարներն ասես հրդեհված լինեին...

Այն, ինչ եղավ Շիրազի թաղմանը՝ չեմ տեսել ոչ մի այլ գրողի հուղարկավորության ժամանակ:

Որ ասում են համաժողովրդական սուգ, սա էր: Դագաղը դրված էր օպերայի թատրոնի ճեմասրահում: Հոծ բազմություն էր գալիս, այնքան շատ մարդ, որ եթե մի ամբողջ օր առավոտվանից մինչև իրիկուն թատրոնի դռները բաց լինեին հրաժեշտի համար, միևնույն է, բոլորը չէին կարողանա մուտք գործել:

Իր գրչակից ընկերներից շատերը, ովքեր քաղաքում էին, պատ պահակ կանգնեցին: Ես էլ, իհարկե: Իմ կանգնած պահին, մի երկուսը մոտեցան և թղթեր դրին: Երբ ինձ փոխարինելու եկան՝ ես վերցրի այդ թղթերը, տեսնեմ Շիրազին նվիրված բանաստեղծություններ են, ժողովրդական ցավ ու կսկիծ արտահայտող չափածո տողեր: Տվեցի որդուն՝ Արա Շիրազին:

Սրտառուչ էր հայրենակիցների մասնակցությունը: Նախ՝ ոչ ոք չի կարող ասել, թե Լենինականից քանի մարդ էր եկել: Շա՜տ, չափազա՜նց շատ: Գուցե քաղաքի կեսից ավելին: Հետո, բեռնատար մեքենայով Գյումրվա հողէին բերել, որ Երևանի հողին խառնեն: Իսկ յոթանասունհինգ գյումրեցի երիտասարդ, բոլորն էլ Շիրազի տաղանդի երկրպագուներ, ուխտ էին արել ոտքով ճանապարհ ընկնել և հասնել բանաստեղծի թաղմանը, ինչպես դա առաջներում արել են ուխտագնաց հավատացյալները:

Թաղում էր ամբողջ քաղաքը: Վրան գումարած մոտակա շրջաններից եկած երկրպագուները: Դագաղը գերեզմանատուն էր հասել, իսկ հուղարկավորների թափորի վերջին շարքերը դեռ օպերայի թատրոնի մոտերքն էին:

Ես գիտեի, որ շատ մեծ է Շիրազի ժողովրդականությունը, բայց երբեք չէի կարծում, թե այդպիսի անընդգրկելի չափերի է հասել:

Կանցնեն տարիներ: Այս դեպքերի ժամանակակիցներից

կմնան մի կամ երկուսը, կպատմեն նոր սերունդներին՝ այս բոլորը և գուցե լինեն մարդիկ, որոնց անհավատալի թվա և կարող են կարծել, թե պատմածը լեգենդ է, որով մարդիկ սիրում են անցած-գնացածը գեղեցկացնել: Այդ պատճառով ըղձի ժամանակակցի վկայություն, թող մարդիկ կարդան ու իմանան, որ պատմածը ճիշտ է:

Ամեն մարդ իր Շիրազն ունի: Ես էլ իմ Շիրազը: Կանգնեն տարիներ: Ապագա մարդիկ կունենան իրենց Շիրազը, բնականաբար, կկամենան հասկանալ, թե որքան էլ սիրելի, որքան էլ ժողովրդական, ի՞նչն էր, որ նրա մահվանը հազարդեց կսկիծի այդպիսի անընդգրկելի չափեր: Այս տողերը գրում եմ հիմա, Շիրազի թաղումից մի քանի օր անց, անօրինակ թաղման անմիջական տպավորության ներքո: Այն, ինչ տեղի ունեցավ, բառիս բուն իմաստով ժողովրդական նախաձեռնություն էր: Հոբելյանը գուցե կարելի է կազմակերպել, թաղումը՝ երբեք: Թաղումը, վերջիվերջո, ո՛չ դամբանական ճառերն են, ո՛չ թերթերում լույս տեսած հոդվածները: Թաղումը՝ հուղարկավորության եկած ժողովուրդն է, որին ոչ ոք կազմակերպել չի կարող: Մարդկանց թաղման բերուղը սուտի ձայնն է, հոգու պարտքը, այն բարձր գիտակցությունը, որ իրենք եկել են ուղեկցելու Շիրազին դեպի անմահություն:

ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՀԵՏ

Իմ առաջին հանդիպումը Մարիետա Շահինյանի հետ 1943-ին է: Բոլոր տեսակետներով խրատական հանդիպում. և՛ կշտամբանք, և՛ գոտեպնդիչ խոսք: Դրան հաջորդել են հինգ հանդիպում ևս: Մեկը մյուսից հետաքրքիր: Բոլորը գրի են առնված, բայց խուսափեցի դրանք այստեղ տեղադրել, մտածելով, որ կխախտեմ գրքի տարբեր մասերի համաչափությունը: Հուսով եմ, որ մի օր կազմվելու է «Հայ գրողների հուշերը Մարիետա Շահինյանի մասին» խորագրով ժողովածուն և այնտեղ, կարծում եմ, որ իմ գրածը ևս տեղ կգրավի: Իսկ հիմա հրապարակում եմ վերջին հանդիպումը՝ թվով յոթերորդը...

***

Չարենցի հոբելյանն էր նշվում մեր երկրի մայրաքաղաքում: Երևանից Մոսկվա մեկնեց հայ գրողների պատվիրակությունը: Շատ զարմացանք, որ Մարիետա Շահինյանը Չարենցի հանդիսավոր նիստին չկար: Հետաքրքրվեցինք, ասացին, թե հիվանդ է, գտնվում է Պերեդելկինոյում, ուր գրողները ստեղծագործական տուն ունեն: Այնտեղ ամառանոց ունի նաև Մարիետա Շահինյանը: Բոլորս էլ ուզում էինք տեսնել նրան, բայց զգուշանում էինք անհանգստացնելուց:

Մոտենում էր Երևան վերադառնալու օրը: Հայտնեցին, որ Մարիետա Շահինյանը պատվիրակությունից մի քանի հոգու հրավիրել է իր մոտ: Դրանց մեջ էի նաև ես: Գնացինք: Այն մեքենան, որի մեջ Սիլվա Կապուտիկյանն էր, Վարդգես Պետրոսյանը ու իր կինը, ինչպես և Կոստյա Սերեբրյակովը, շուտ էր տեղ հասել: Մեր մեքենան, որտեղ Անահիտ Սահինյանը և Գրիգոր Մանասյանն էին, մի փոքր ուշացած հասավ: Սեղանի մոտ նստած էր նաև գրականագետ Սոֆյա Խիթարովան:

Արտաքնապես փոխված չէր, նույնն էր, ինչ որ Խաչատրյանի հոբելյանի տարին, բայց գանգատավոր էր առողջությունից:

— Լուրջ հիվանդ էի, հիմա ինչ, դուք ինձ լավ եք տեսնում: Տեղավորվեցի մի հիվանդանոցում, որտեղ քչերին է վիճակվում լինել: Մի երիտասարդ բժիշկ, որ ինձ անմիջապես ճանաչեց, ականջիս շշնջաց. «Գնացեք այստեղից, այստեղ չեք բուժվի: Գնացեք և զանգահարեցեք ինձ տուն և ես կասեմ, թե որտե՛ղ և ինչպե՛ս կարելի է բուժվել»: Երկու օր անց զանգահարեցի, ասաց, թե Տիբեթից եկած բժիշկ կա, Բադմաև ազգանունով, մոնղոլ է, որ հրաշքներ է գործում, բուժում է անհույս հիվանդներին անգամ: Շատերին է փրկել: Միայն նա կբուժի ձեզ: Զգուշացնեմ նաև, որ նրան հանդիպելը այնքան էլ հեշտ գործ չէ, ինքներդ պիտի լուծեք, ինչպես՝ չգիտեմ, ես խորհուրդ տալ չեմ կարող»: Եվ ավելացրեց՝ ապրում է Լենինգրադում, մեկ-մեկ գալիս է Մոսկվա: Ի՞նչ էր ինձ մնում անել՝ ինչ գնով էլ լինի, հանդիպել Բադմաևին:

Մարիետա Սերգեևնան կանգ առավ, նայեց մեզ այնպիսի

հայացքով, որ երևի ունենում են արկածային վեպերի հեղինակները՝ «Համբերեք, հետաքրքիրը դեռ առջևում է»:

— Բադմաև... ծանոթ ազգանուն: Մտաբերում եմ: Բադմաևի հորեղբայրը կամ գուցե նրա հայրը, չեմ հիշում, հեղափոխությունից առաջ ապրում էր Պետերբուրգում և բուժում էր միայն արքունիքի մարդկանց: 1912-ին, այն ժամանակ ես երիտասարդ, սիրունիկ աղջիկ էի և ոչ թե հիմիկվա պես գեշ պառավ, գնացի իր մոտ և ներկայացա: Նախ՝ շատ զարմացավ, որ առանց հանձնարարականի եմ եկել և հետո ասաց, թե դեմքիցս երևում է, որ առողջ եմ և իր օգնության կարիքը չունեմ: Իսկ հիմա՝ տասնամյակներ անց, նրա ազգականի մոտ եմ. կլոր դեմք, կոպերի շեղ ճեղքերից ինձ նայող խելոք և սուր աչքեր:

Պարզվեց, որ ճանաչում է ինձ, իմ գրքերից շատերն ունի իր գրադարանում: Ասաց՝ «Ինձ համար մեծ պատիվ է ձեզ բուժելը»: Չեմ ուզում հետ մնալ նրանից և պատասխանում եմ՝ «Ի՞նչ եք ասում, այդ ինձ համար է մեծ պատիվ բուժվել ձեզ նման մասնագետի մոտ»:

Ասեմ, որ մի աչքս արդեն չէր տեսնում, մյուսն էլ՝ շատ քիչ: Հուսահատվել էի: Չկարդալ և չգրել՝ նշանակում է գոյության իմաստազրկում: Եթե այդպես շարունակվեր, պիտի անձնասպանություն գործեի: Երևի մտածում եք, թե ինձ վայել չէ այդպիսի թուլությունը: Իհարկե, վայել չէ, բայց երբ կորցնում ես ապրելուդ իմաստը, դառնում ես ամեն ինչի ընդունակ: Հետո ասածս ուղղակի մի հասկացեք: Խոսքի ծայրահեղ ձևակերպումը հաճախ ստեղծված վիճակի չափը ցույց տալու միջոց է միայն: Իսկապես, ինչպե՞ս կարող էի ո՛չ կարդալ, ո՛չ էլ գրել, երբ դեռ շատ անելիքներ ունեմ: Օրինակ՝ հիսունից ավելի նամակ եմ ստացել Շոստակովիչից: Դրանք հրատարակում եմ հիմա առանձին գրքույկով: Աշնանը լույս կտեսնի: Հուշերս պիտի ավարտեմ: Վերջին գլուխը դեռ գրելու եմ: Հա՛, նախավերջինը տպագրության եմ հանձնել և «Новый мир»-ի ապրիլյան համարում կկարդաք:

Հա՛, բժիշկը, պատկերացնո՞ւմ եք, զարկերակս չստուգեց, թոքերս լսեց: Հարցրեց, թե ինչի՞ց եմ գլխավորապես գանգատվում: Լսեց և ասաց, որ կբուժի ինձ տիբեթյան բու-

սականությունից պատրաստած դեղերով: Դրանք Ռուսաստանում չկան: Եվ ավելացրեց. «Եթե ձեր բժիշկները Տիբեթում լինեն, չեն գտնի, որովհետև դրանք չորս հազար մետր բարձրության լեռներին են բուսնում, Հիմալայի գագաթին: Ձերոնք շնչահեղձ կլինեն, իսկ եթե անգամ դիմանան, չեն իմանա, թե ինչպես պատրաստել»: Հասարակ գործ չկարծեք, համաիզմի միջամտություն էլ կա»:

Ասում է և ժպտում: Ջեմ հասկանում՝ կատա՞կ է իր ասածը, թե լուրջ է խոսում: Բայց ինչ արած, եկել եմ, միակ հույսն նա է, ապավինել եմ իր իմաստությանը: Տվեց դեղերը և կարգ ու կանոն սահմանեց: Մի դեղ պետք է ընդունեմ նախաճաշից կես ժամ առաջ և ուտելուց կես ժամ հետո: Մի այլ դեղ պետք է ընդունեմ ճաշից մի ժամ առաջ և ուտելուց մի ժամ հետո: Վերջապես, երրորդ դեղն ընդունելու եմ քնելուց մի ժամ առաջ: Արի ու հիշիր: Պայմանները՝ կլիման չփոխել, ջուրը՝ նույնպես: Խստագույնս պատվիրված է կարգ ու կանոնը չխախտել: Դա էր պատճառը, որ Ջարենցի երեկոյին չկայի:

Յոթերորդ օրն է, ու ես ինձ լավ եմ զգում, երիտասարդացել եմ, սկսել եմ տեսնել: Առաջին երկու օրը այդ դեղերն ընդունելուց հետո աչքիս վագրեր երևացին:

Մեկը կատակին տվեց.

— Տիբեթյա՞ն վագրեր:

Դուրը չեկավ:

— Ես չգիտեմ, Տիբեթում վագրեր կան, թե չէ: Վերջապես, ինչ նշանակություն ունի: Վագրեր էին: Վախեցած զանգահարեցի բժշկին, նա թե՝ «Համբերեք, կանցնի» և ավելացրեց՝ «Լավ նշան է, ուրեմն լավանում եք»:

Եվ իսկապես: Ես ինձ հիմա լավ եմ զգում: Ու, երևակայեցեք, երբ ամեն ինչ կարծես արդեն անցել է, մահից վախենալու փոխարեն, սկսեցի մտածել, թե ի՞նչ է մահը, ի՞նչ է սպասում ինձ մահվանից հետո իբրև հավիտենական ճանապարհորդություն: Ծիծաղելի՞ է: Գուցե: Չգիտեմ:

Մի պահ կանգ առավ և ժպտուն հայացքով նայեց չորս կողմը:

— Ջարենցին սխալ են գնահատում: Նրա պոեզիան այն արժեքը չունի, ինչ որ «Երկիր Նաիրին»:

Առարկում ենք, նրանից պաշտպանում Չարենցի չափածո ժառանգությունը։

— Չգիտեմ, թերևս դուք եք ճիշտը։ Ես հայերեն չեմ կարդում, գուցե ռուսական թարգմանությունները լավը չեն։ Շատ հնարավոր է։ Բայց ես վստահաբար ասում եմ, որ «Երկիր Նաիրին» հանճարեղ գործ է։ Ուժեղ և առողջ է այն ժողովուրդը միայն, որ կարող է ինքն իրեն ծաղրել։ Հիշեք խնդրում եմ, Գոգոլի «Մեռյալ հոգիները»։ Ինչպիսի սեր կա նրա էջերում Ռուսաստանի նկատմամբ և ինչ անխնա ծաղր միաժամանակ։ Հանճարեղ վեպ է։ «Երկիր Նաիրին» պակաս չէ։ Համաշխարհային գործ է։ Ես գնացել էի Անգլիա, և ինձ հյուրանոցում տվին մի գիրք, ուր ծաղրված էր Անգլիան, նրա կառավարությունը։

Մարիետա Սերգեևնան քթի տակ մանր ծիծաղում է և հիշում մի քանի տող այդ գրքից։

— Միայն մեծ ժողովուրդը կարող է թույլ տալ իրեն այդպիսի ծաղր։ Հիշո՞ւմ եք, թե ինչ տողեր կան «Երկիր Նաիրիի» առաջաբանում։ Հիշեցնեմ, տեսնում եմ, որ չեք հիշում։

Բառերը հատիկ-հատիկ շեշտելով, փոքր-ինչ երգեցիկ ձայնով, իհարկե՝ ռուսերեն, արտասանում է. «Վաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն։ Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ...»։ Այդպես կարող է գրել հայրենիքը սիրող մարդը միայն։ Մազութի Համոն Սոբակևիչից ոչնչով պակաս չէ։ Գոգոլն իր վեպը պոեմ է կոչել, այդ արդեն սիրո նշան է։ Եթե հիշում եք, իր վեպի առաջաբանում Չարենցն ասում է «պոեմանման այս վեպում»։

Նա տվեց մեր գրողներից մեկի անունը։

— Ես սիրում եմ նրա պատմվածքները։ Վեպը, ինչպես էր վերնագի՞րը, հա՛, հիշեցի, սրտովս չէ։ Սիրելով հանդերձ, մի բան չներեցի նրան։

Մի պատասխանատու հավաքույթում, որտեղ նա էլ կար, հիմա չեմ հիշում, թե երբ, երևի հիսնական թվականների երկրորդ կեսը կլիներ, այստեղ՝ Մոսկվայում, ամբիոնից այն միտքը հայտնեցի, թե «Երկիր Նաիրին» պետք է թարգմանվի աշխարհի բոլոր լեզուներով։ Այդ վեպը պետք է հայտնի դառնա ամբողջ աշխարհին։ Եվ նա, նիստից հետո ինձ տարավ մի անկյուն և ամենայն խստությամբ ասաց, թե իբր ես

վտանգավոր առաջարկներ եմ անում, որ այդ վեպում ծաղրված է Հայաստանը և հայ ժողովուրդը, և առարկություն չվերցնող տոնով խորհուրդ տվեց այլևս չկրկնել և չպնդել այդ առաջարկը, այլապես չեմ խնայվի և հարվածի տակ կառնվեմ։

Մի՞թե նա, այդքան խելոք անձնավորություն, չէր հասկանում այդ վեպի իսկական արժանիքը։ Ես շատ եմ սիրում և գնահատում նրան, բայց երբեք նրան չեմ ների այդ սխալը։

Ես չեմ սիրում ֆրանսիական գրականություն։ Սիրում եմ անգլիականը և գերմանականը։ Այսինքն՝ ինչպե՞ս չեմ սիրում։ Բացառություններ կան՝ Պասկալ, Դեկարտ։

Իմ մտքով անցավ հարցնել՝ մի՞թե Ռաբլեին չի սիրում, բայց չուզեցի իմ հարցով ընդհատել նրա մտքի ընթացքը։

— Հայ գրականության շատ էջեր ինձ սիրելի են, բայց ամենից ավելի Զարենցի և Աբովյանի վեպերը։ «Երկիր Նաիրին» գրողը խելահեղ մարդ է եղել, ինչպես և «Վերք Հայաստանին» ստեղծողը։ Կարծում եք մի վեպի հեղինակ լինելը քի՞չ է։ Մի վեպ, բայց ինչպիսի՜ վեպ...

Դադար տվեց։ Եվ կրկին խնդրեց պատմել, թե ինչ կա-չկա Երևանում, Հայաստանում ընդհանրապես, ոչ միայն գրականության մեջ և արվեստում, երկրի կյանքում։

Ապրիլի 2-ին բոլորում է Մարիետա Շահինյանի ծննդյան 90-ամյակը։

Պետրոսյանը հրավիրեց Երևան.

— Ես շատ խոսեցի։ Հիմա դուք խոսեք, պատմեք, թե ինչ կա-չկա Հայաստանում։ Կարոտել եմ հայկական հողը, ափսոս, այլևս չեմ կարողանա գալ, առողջությունս չի ների։ Բայց նամակներ եմ ստանում։ Մանկական մի գրադարան կա Երևանում, նրա աշխատողներից մեկը, կարծեմ Կոշկակարյան, ճանաչո՞ւմ եք, նամակ է գրել ինձ, շատ ջերմ ու սրտացին նամակ է, ինձ ողջույններ է ուղարկել իրենց գրադարանի հազարավոր ընթերցողների անունից և խնդրել գրադարանի ալբոմում պատանիներին ապագայի բաղեմաղթություններ անել։

Շատ եմ սիրում Լենինական քաղաքը։ Ինձ շատ տղաներ են գրում, ուզում են իմանալ իմ խորհուրդը, թե ինչ մաս-

նագիտություն ընտրեն: Տեսնո՞ւմ եք, երիտասարդներն իմ կարիքն ունեն:

Ես հարցնում եմ.

— Մի անգամ դուք ասացիք Չարենցի նամակի մասին: Գտե՞լ եք, ասում էիք, որ կորել է...

— Այդ նամակը Յակով Սամսոնովիչի մոտ էր: Ի՞նչ եղավ, չգիտեմ: Այդպես էլ չիմացա: Մի քսան էջ կլիներ: Գրված էր վայրիվերո ռուսերենով, հայերեն միջամտություններով: Նամակը հասցեագրված էր ինձ, իսկ պատճենը՝ Ստալինին: Եվ ոչ թե հակառակը: Ծիծաղելի՞ է, չէ՞: Հիմա ծիծաղում եմ, բայց այն ժամանակ վախեցա, որ Ստալինից ավելի եմ կարեվորվել և դա ո՛չ ինձ կներվի, ո՛չ էլ Չարենցին:

Հարց եմ տալիս.

— 1936-ի՞ նամակ էր:

— Ոչ, 20-ական թվականների:

Ասում ենք, որ Չարենցի երեկոյին հիշվեց Յակով Սամսոնովիչը, որպես «Երկիր Նաիրիի» թարգմանիչ, հիշվել է նաև ինքը, իբրև առաջաբանի հեղինակ:

Դեմքը փայլեց:

— Եկեք շքեղ նշենք:

— Նախ, ոչ թե ապրիլի 2-ին, այլ մարտի 21-ին: Նոր տոմարը չեմ ընդունում: Հրավերի համար շնորհակալ եմ, չեմ կարող գալ, բժիշկները թույլ չեն տա:

— Երգիչնե՞ր ուղարկենք, որ մասնակցեն ձեր հոբելյանին այստեղ,— հարցնում է Կապուտիկյանը:

—Ուղարկեք այնպիսի բան, որ այստեղ չլինի:

— Ջուռնա-դհո՞լ ուղարկենք:

— Լավ կլինի:

Ու Սիլվան վանի ժողովրդական երգերից սկսեց երգել ու պարել, ինքն էլ նույն շարժումներն էր անում:

Մի-երկու խոսք էլ ասվեց, բայց բոլորիս ցանկալի էր, որ ինքը խոսի: Եվ նա նորից խոսեց:

— Ինչո՞ւ ձեզ հետ չէ Հրանտ Մաթևոսյանը: Ա՛յ իսկական գրող:

Նայեց շուրջն ու ասաց.

— Դուք գրողներ եք, հայ գրականության ճակատագիրը

Ձեզ նման մարդկանց ձեռքերումն է։ Զգուշացնեմ ձեզ մի պակասությունից։ Իսկական գրականություն համարյա չի ստեղծվում։ Դուք մի օր պատասխան եք տալու դրա համար։ Ի՞նչ է հարկավոր։ Մեզ պակասում է Կորդելիայի մթնոլորտը։ «Լիր արքան» է Շեքսպիրի գլուխգործոցը, և ոչ թե «Համլետը», ինչպես կարծում է։ Ես շատ եմ սիրում այդ պիեսը։ Հիշեցեք Լիրին, նա կոկետություն է անում, որ իմանա իր աղջիկների վերաբերմունքը։ Հոր հարցին, թե երեքից որը որքան է սիրում իրեն, Գոներիլը պատասխանում է՝ «Ես ձեզ սիրում եմ աչքի լույսից շատ, ազատությունից, օդից առավել»։ Ռեգանի պատասխանը նույնքան շողոքորթ է։ Կորդելիան շշնջում է՝ «Ես ձեզ սիրում եմ համաձայն պարտքիս, և այդքան միայն»։

Ու այս Կորդելիան է, որ հորը փրկում է ու ինքը զոհվում, իսկ թե ինչպես վարվեցին Ռեգանն ու Գոներիլը՝ գիտեք։ Կորդելիայի շունչն է պակասում մեր գրականությանը։ Իսկական սերը զուսպ է լինում, սրտի խորքում թաքնված և չի սիրում հավաստիացումներ, իսկ տեղն եկած ժամանակը պատրաստ է ինքազոհության։ Կորդելիայի մթնոլորտ ստեղծեք, այս է պակասում մեր գրականությանը։

Ջմռռանաք իմ խորհուրդը։

«ՅՈԹԵՐՈՐԴ ՍԻՄՖՈՆԻԱ»

Նոր եմ դարձել տուն օպերայի և բալետի թատրոնից։ Ո՛չ ընթրել եմ ուզում, ո՛չ էլ շարունակել ընդհատված վեպի ընթերցանությունը։ Ուշքս ու միտքս լսածս երաժշտության հետ է։

Դմիտրի Շոստակովիչի «Յոթերորդ սիմֆոնիայի»։

Ալեքսանդր Շահվերդյանը համերգից առաջ ասաց կարճ խոսք, որից իմացանք, թե սիմֆոնիան, որ հիմա լսելու ենք, մտահղացվել ու գրվել է պաշարված Լենինգրադում՝ ռումբերի պայթյունների աղմուկի տակ։ Իսկ ինձ թվացել է, որ Շոստակովիչը ստեղծագործել է միայնության և խորին լռության մեջ։ Առավել ևս տարօրինակ էր լսել, որ սիմֆոնիան գրվել է ընդհատումներով։ Ինչ-որ ժամեր հեղինակը հերթապահել է

կոնսերվատորիայում, տուն դառնալուց հետո, թեև հոգնած, նստել է դաշնամուրի առաջ և շարունակել ընդհատված տեղից։

Հնչեց երաժշտությունը, և ես հասկացա, որ մարդու կյանքում կան պահեր, երբ անիմանալի են բոլոր տեսակի սովորույթներն ու պայմանականությունները։ Նախ՝ նա գրել է, որովհետև չէր կարող չգրել, կային իր ներաշխարհը համակած մտքեր ու զգացումներ, որ ինչ գնով էլ լինի, պետք է դուրս հորդեին, չմնային մի մարդու մեջ, լույս աշխարհ գային՝ ի լուր բոլորի։ Եվ դա պետք է ասվեր հիմա, հենց հիմա։ Հետևապես ոչ մի նշանակություն չուներ դրսի աղմուկը, մանավանդ ինքն ընդունակ էր այնպես ներամփոփվելու, որ եթե անհրաժեշտ է, չի լսի ո՛չ աղմուկ, ո՛չ պայթյուն։ Վերջապես, ինչ նշանակություն ունի՝ ընդհատումներ են եղել, թե ոչ։ Ասես մի շնչով գրված լինի, ու բնավ ընդհատում չի եղել։

Սիմֆոնիայի ամբողջականությունից ստեղծված տպավորություն է սա։ Թեև, կարծեմ, ֆիզիկապես անհնար է մի շնչում սիմֆոնիա գրել ընդհանրապես։

Լսում ես, ու մտքովդ չի էլ անցնում, թե այս սիմֆոնիան մի մարդու հուզմունքն ու խոհերն են։ Շոստակովիչը Շոստակովիչ է հենց նրանով, որ ստեղծագործելիս ավելի մեծ է եղել իր տարիքից ու իր տառապած սիրտը միայն իր սիրտը չէ, այլ հազարավորների։ Ժողովրդի, մարդկության տառապանքն ու ողբերգությունն է արտահայտված։ Լսում ես ու պատկերացնում, որ խորտակիչ ուժն է ծառացած։ Գալիս է քո վրա և ինչ էլ որ նրա ճանապարհին հանդիպի՝ ոտի տակ է անելու, կործանելու է, ջնջելու, թողնելու իր հետևից ամայություն... Եվ հանկարծ՝ հիշեցնում է այն մասին, որ կա բարոյական գեղեցկություն, որ սիրուց ու կարոտից է, արարելու ձգտումից և աշխարհը կլինի կանգուն, եթե մարդը մնա մարդ... Եվ նա չունի կասկած, որ այդպես է եղել միշտ, ընդդեմ ավերիչ ուժի, խորտակման վտանգի, եղել է ու կա աստվածային զորություն, որ պահում է մարդուն և ծիլը, որ կյանքի հույսն է, կաճի, կբարձրացնի գլուխը դեպի արև։ Այսպես է եղել միշտ, չարի ու բարու կռիվը դեռ այն օրից, երբ առաջին մարդը երկնքին է նայել ու հիացել...

Ես չգիտեմ, թե առավոտվա որ ժամն էր, երբ աչքերս փակվեցին։ Ու երբ գնացի հիմնարկ, հանդիպողի հետ, փողոցում լիներ, թե հրատարակչատանը, պահանջ ունեի խոսելու երեկվա համերգից, Շոստակովիչից...

ՆԱԽԱՊԱՇԱՐՄԱՆ ՈՒԺԸ

Պատմությունը, որ անելու եմ հիմա, շատերին եմ արել, նաև Ավետիք Իսահակյանին, որին նվիրված հուշերում մի քանի տողով հաղորդված է այդ մասին։ Թերևս կարելի էր բավականանալ այդքանով, բայց, ըստ իս, բնույթով հումորեսկ է դա և իմաստով շատ ավելի խոր երևույթ, և դա ստիպում է ինձ պատմել ավելի մանրամասն, այնպես, ինչպես եղել է, առանց սակայն, դեպքի հերոսի անունը տալու։ Դա կարող է նրան վշտացնել և հիասթափեցնել նրան հարգող մարդկանց, որոնց թիվն այնքան էլ քիչ չէ։

Տերյանի արխիվը նայելիս հանդիպեցի նրա մի բանաստեղծության, որը սկսվում էր «Մի խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» տողով և որը սևագրություն էր, պոեմը, պետք է ենթադրել, դեռ մշակելու էր։ Որոշեցի այդ բանաստեղծությունը կարդալ ընկերոջս, որն այն ժամանակ ամուրի էր և ապրում էր մոր հետ։

Երևկոյան դեմ այցի գնացի և, տեսնելով, որ զբաղված չէ, զրույցի բռնվեցի։ Ինչի՞ մասին կարող էին խոսել երկու ընկեր, որոնք դեռ պատանեկան տարիներից ճանաչում էին իրար, սիրել են արվեստ ու գրականություն։ Այս մասին խոսեցինք, այն մասին, անցավ երեք ժամից ավելի ու մոտեցավ տուն գնալուս ժամանակը։ Չար միտք ծագեց գլխիս մեջ. օյին խաղալ ընկերոջս գլխին, որ ազնիվ էր շատ, նաև միամիտ և դյուրահավատ։ Դրի գլխարկը գլխիս ու շրջվեցի իր կողմն ու ասացի.

— Լսիր, բանաստեղծություն եմ գրել, որ կարդամ՝ կլսե՞ս։

— Քո գրած բանաստեղծությունը ինչ պիտի լինի, որ լսեմ։

— Ընկե՞ր չես։

— Որ ընկեր եմ՝ ինչ։

— Պարտավոր ես լսել ընկերոջդ գրածը, եթե անգամ անհեթեթություն լինի։

— Այդ ո՞ր օրենքով։

— Ընկերական։

— Ո՞ւրջ։

— Միանգամայն։

— Կարդա, որ իմանամ, գուցեև թաքնված տաղանդ ես եղել, ու ես չեմ իմացել։

Կարդում էի Տերյանի բանաստեղծությունը և աչքիս ծայրով հետևում ընկերոջս դեմքի արտահայտությանը, որը քանի գնում դժկամ էր դառնում։

Վերջացրի։

— Ո՞յս է գրածդ։

— Այս. ի՞նչ է, չհավանեցի՞ր։

— Ինչպես ասում են՝ պոեզիան այստեղ մի գիշեր անգամ չի գեշերել։

— Ուրեմն՝ չհավանեցիր։

— Ամոթ է, ուրիշին չկարդաս, վրադ կծիծաղեն, գրածդ բանաստեղծություն չէ, իսկի ոտանավոր էլ չէ։

Լռեց։

— Այս մեկ։

— Երկրո՞րդը։

— Երկրորդն այն, որ քո գրածը ազգայնականություն է։

— Ազգայնականությո՞ւն։

— Այո, այո, ազգայնականություն։

Նայեց ինձ ու իր խոսքն առաջ տարավ։

— Առանց այն էլ դու վերջերս մեղադրվել ես ազգայնամոլության մեջ, ինչո՞ւ ես չարակամ մարդկանց քեզ մեղադրելու նոր ապացույցներ տալիս։

— Լավ,— ասացի ես,— խոստանում եմ ոչ ոքի այլևս ցույց չտալ։

— Լավ էլ կանես։

Տերյանի բանաստեղծության թերթիկը խնամքով չորսծալ արի ու դրի ծոցագրպանս։

Անմիջապես դուրս չեկա։ Մի կես ժամի չափ էլ խոսեցինք տարբեր հարցերից և նորից գլխարկս դրի ու, երբ հասա դռանը, վրա բերի.

— Լսիր, որպեսզի գիշերը հանգիստ քնեմ, ավելի լավ է քեզ ճշմարտությունն ասեմ, թե չէ խիղճս տանջելու է ինձ։

Ընկերս զարմացած և հարցական նայում էր ինձ։

— Այդ բանաստեղծությունը, որ կարդացի քեզ, ես չեմ գրել, այլ...

Ու կանգ առա։

— Ո՞յլ։

— Տերյանը։

— Վահան Տերյա՞նը։

— Այո, Վահան Տերյանը։ Էլ ինչ Տերյան է քեզ հայտնի։

— Անկե՞ղծ։

— Անկեղծ։

— Նորից կարդա։

— Ինքդ կարդա։

Տվեցի թերթիկն իրեն։ Կարդաց մտքում, կարդաց երկու անգամ։ Նայեց ինձ, նորից աչքերին ակնոց դնելով։

— Ի՞նչ բանաստեղծություն է։

Քիչ հետո՝

— Ի՞նչ հոյակապ պատկեր է։

— Ո՞րը։

Կարդաց՝

— Հայրենասիրական գործ է, բանաստեղծական ընտիր էջ։

Մի փոքր լռելուց հետո.

— Սա պետք է հրապարակել։ Անպայմա՛ն։

Ես զարմացած նայում էի իրեն։

— Մի տարակուսիր, ում տաս՝ որ չտպագրեն։

Եվ հետո.

— Տերյանը կարծեմ քո սիրելի բանաստեղծն է։

— Այո։

— Իմն էլ է։

Ընդհանրացրեց.

— Տերյանը մնում է Տերյան։

Գիշերվա բարեմաղթություններ անելով, գնացի տուն, ու երկար ժամանակ քուն չեկավ աչքերիս։ Ես մտածում էի այն մասին, թե ինչ մեծ ուժ է նախապաշարումը։ Ուրեմն՝ մի-

անգամայն հնարավոր է չեղածը տեսնել կամ եղածը չտեսնել: Եվ ի՛նչ թյուրիմացություններ են տեղի ունենում նախապաշարումի ուժով՝ դրական և բացասական:

Ու միտքս դարձավ Անդերսենի հայտնի հեքիաթին: Հիշեցի Չեխովի քեռի Վանյայի ասածները պրոֆ. Սերեբրյակովի մասին: Ու վերջիվերջո մտքի խորհրդածություններն այս հարցի շուրջ առնչվեցին մտքի անկախության հասկացության հետ, որ եթե գոյություն ունի, ապա հարաբերական չափերով միայն:

ՇԵՔՍՊԻՐԱՀԱՆԴԵՍ

1944-ը նշանակալի տարի եղավ Երևանի մշակութային կյանքում: Այդ թվականի ապրիլ ամսին Երևանում տեղի ունեցավ Շեքսպիրյան փառատոն ու կոնֆերանս: Դա իրադարձություն էր, որի վրա բևեռված էր ողջ հանրապետության մտավորական հասարակայնության ուշադրությունը:

Շատ հյուրեր ունեինք, մեկը մյուսից անվանի ու հռչակավոր՝ Ա. Ջիվելեգով, Մ. Մորոզով, Յու. Յուզովսկի, և ուրիշներ: Շտապեմ ասել, որ դա Շեքսպիրյան համամիութենական վեցերորդ կոնֆերանսն ու փառատոնն էր, որը, մոսկովյան թատերագետ Գևորգ Գոյանի առաջարկով, համառուսական թատերական ընկերությունը որոշեց անցկացնել Երևանում:

Հայաստանը հյուրերից շատերի համար հայտնություն էր: Նրանք միայն էջմիածինը տեսան ու մնացին զարմացած: Չտեսան ո՛չ Հաղպատն ու Սանահինը, ո՛չ Գոշավանքն ու Հաղարծինը, Հայաստանը գիտեին Բրյուսովի անթոլոգիայով և Մարտիրոս Սարյանի բնապատկերների վերատպություններով: Առաջին պատկերացումը միջնորդավորված էր, իսկ հիմա տեսնում էին իրական Հայաստանը, ծանոթանում հողին, ջրին, հիանում երկնքով, ծանոթանում մարդկանց՝ հողի մշակից մինչև ակադեմիկոս... Իրենց տեսածն ու զգացածը եղավ բանալի հասկանալու, թե ինչու հենց այս երկրում պետք է խոր արմատներ գցեր Շեքսպիրը, հասկանալու էին, որ այս գերված ու ազատված, խաչված ու փրկված հինավուրց

երկիրն էր ծնելու Ադամյան, Մասեհյան, Սիրանույշ, Փափազյան, Ներսիսյան...

Ամենքի շրթներին Շեքսպիրի անունն էր: Ասում էին «Շեքսպիր», և դա բավական էր, որ իրավունք ունենայիք ոտք դնել արգելված սահմանները նույնիսկ, ինչպես դա եղավ էջմիածին առաջին անգամ մեկնող հյուրերի խմբի հետ, որի կազմակերպիչները հոգ չէին տարել ապահովելու հյուրերին անցաթղթերով:

Էջմիածնատաճար էին ոտք դրել նրանք ժամասացության այն պահին, երբ երգչախումբը «Պատարագն» էր կատարում:

Պատերի որմնանկարներից նայող Քրիստոսն ու առաքյալները, վառվող մոմերը, պատարագող վարդապետի աղոթող ձայնը,— այս բոլորը միասին վերցրած խորհրդավոր տպավորություն էին, և զարմացած մեր ժողովրդի այն հատկության վրա, թե ինչպես է այս հողի վրա համատեղվում ռենեսանսյան կենսասիրությունը, գեղեցիկի ու վայելքի զգացումը՝ հոգեկան սլացքի հետ, որը մարդուն երկրից պոկում ու տանում է դեպի երկնային անսահմանությունները:

Ես էլ էի ընդգրկված կոնֆերանսի մասնակիցների կազմում: Դա մեծ պատիվ համարեցի ինձ համար: Կոնֆերանսի ղեկուցողները հեղինակություն և հռչակ ունեցող մարդիկ էին՝ Արշակ Ադամյան, Հայկ Գյուլիքևխյան, Սարգիս Մելիքսեթյան, Վահրամ Թերզիբաշյան: Բոլորն էլ ինձ ուսուցիչ կարող էին գալ: Կոնֆերանսում ղեկուցումներով հանդես էին գալու նաև Մոսկվայի հյուրերից՝ Ալեքսեյ Ջիվելեգով—վերածննդի նշանավոր մասնագետը, և Միխայիլ Մորոզով՝ մեր երկրի համար առաջին շեքսպիրագետն այն տարիներին:

Ինձ հանձնարարվեց «Շեքսպիրը հայ թատրոնում» նյութի շուրջ ղեկուցում կարդալ, առանց Պետրոս Ադամյանի, որի շեքսպիրյան կատարումների մասին հատուկ ղեկուցում էր լսվելու: Դա Վաղարշ Վաղարշյանի առաջարկն էր: Ինչպես նաև Վաղարշյանի առաջարկն էր՝ անպայման ինձ մասնակից դարձնել կոնֆերանսին:

Իմ ղեկուցման նյութն ընդարձակ էր, մանավանդ սկսելու էի 19-րդ դարի 60-ական թվականներից և հասնելու էի մինչև մեր օրերը:

Ամեն գործ ու աշխատանք մի կողմ դրի, ձեռնամուխ եղա

նյութերի հավաքման։ Երկու ամիս, նույնիսկ ավելի ժամանակ կար, հույս ունեի, որ կհասցնեմ։ Բավական նյութ հավաքել էի, ինչ-որ էջեր էլ գրել և հանկարծ հիվանդացա։ Վիճակս լուրջ էր։ Ինչ Շեքսպիր, ինչ զեկուցում։ Բժիշկների կտրուկ պահանջով քաղաքում չէի մնալու և հոգեկան ոչ մի լարում չէի ունենալու։ Շտապեցի հայտնել վիճակիս մասին, որպեսզի կոնֆերանսի կազմակերպիչները մտածեին, թե ումով են փոխարինելու ինձ։ Ժամանակը կարճ էր, այդ հրաշալի նյութը հաղթահարելու համար, որոշվեց նկատի ունենալ երկու հոգու։ Նախահեղափոխական ժամանակներից խոսելու էր Լևոն Քալանթարը, խորհրդային տարիների մասին զեկուցելու էր Սուրեն Հարությունյանը։

Ջիվելեգովի և Մորոզովի զեկուցումները լսվեցին Սունդուկյանի անվան թատրոնում, իսկ մնացած զեկուցումները՝ կուլտուրայի տանը։ Սակավամարդ լսարան ուներ կոնֆերանսը՝ 30—40 մարդ։ Գալիս էին միայն հետաքրքրվողները։ Մտքերի փոխանակություն չկար։

Կոնֆերանսի բոլոր զեկուցումներն էլ հաջողություն ունեցան։ Մոսկվայի պրոֆեսորները և մերոնցից Արշակ Ադամյանը խոսեցին, իսկ մյուսներն իրենց զեկուցումները կարդացին։ Ընդարձակ զեկուցումներ էին դրանք։ Արշակ Ադամյանի խոսքը մի ակադեմիական ժամից ավելի տևեց։ Ուղիղ երկու ժամ լսեցինք Սարգիս Մելիքսեթյանի զեկուցումը։

Կոնֆերանսում լսված բոլոր զեկուցումները շեքսպիրագիտական լուրջ ներդրումներ էին։ Բոլորն էլ խոսում էին չմշակված նյութերի շուրջ։ Ուրեմն ոչ միայն փաստական հարուստ նյութ էին գիտական շրջանառության մեջ ներդնում, այլ նաև առաջինն էին հայտնում փաստագրություններից բխող եզրակացություններ։

Փառահեղ անցավ փառատոնը։ Թատերական նշանակալի օրեր չէին, այլ ազգային-մշակութային։

Արձանագրեմ երկու տպավորություն միայն։

Փառատոնին մասնակցում էին միայն հայկական թատրոնները։ Սունդուկյանի անվան թատրոն՝ «Օթելլո», և «Համլետ», Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն՝ «Օթելլո», Պատանի հանդիսատեսի թատրոն՝ «Ամառային գի-

շերվա երազ», Կիրովականի թատրոն՝ «Ամեռային հեքիաթ», Լենինականի թատրոն՝ «12-րդ գիշեր»։

Ներկայացումներից ամենանշանակալին ճանաչվեց Վարդան Աճեմյանի բեմադրած «12-րդ գիշերը»։ Բոլորը հիացած էին բեմադրիչի և բեմանկարչի աշխատանքով, դերասաններով, հատկապես Լևոն Ջոհրաբյանի Թոբի Բելչով։

Նշանակալի էր առանձնապես փառատոնի եզրափակիչ օրը, որի ժամանակ լսեցինք Յու. Յուզովսկու զեկուցումը փառատոնում ցույց տրված բեմադրությունների մասին։ Նա խոսեց «12-րդ գիշերվա» և «Ամեռային հեքիաթի» մասին, որովհետև Լենինական և Կիրովական չգնաց, հյուրանոցում փակված իր զեկուցումն էր պատրաստում։ Յուզովսկու զեկուցումը հետագայում մշակվեց, լրացվեց, ընդարձակվեց և մի երկու տարի անց ամփոփվեց «Դարը և կերպարը» խորագրով սքանչելի գրքի մեջ։

Դահլիճը լեփ-լեցուն էր։ Ինչպես ժողովուրդը կասեր՝ ասեղ գցելու տեղ չկար։ Ներկայացումներին, նույնիսկ այն օրը, որ Հրաչյան Օթելլո էր խաղում, այդքան մարդ չկար։ Թատրոնի աստիճաններին մարդիկ էին նստած, պատերի տակ կանգնածները շատ շատ էին։

Ու այդ օրը, Յուզովսկու զեկուցման մեջ բարձր գնահատվեց Հրաչյա Ներսիսյանի Օթելլոն։ Այդ օրվանից փոխվեց արտիստի գնահատականը, որ առաջ մի կողմից՝ հիացում էր, մյուս կողմից՝ անհավասար խաղ, տեղ-տեղ հրաշալի, տեղ՝ թույլ։ Յուզովսկու հեղինակավոր խոսքը վերջ տվեց այդ վերապահությանը։ Յուզովսկին հայտարարեց, թե դերասանը Օթելլոյի դերում մերձենում է հանճարի սահմաններին։

Փառատոնի մասնակից չէին դարձրել Փափազյանին։ Լենինգրադում էր նա։ Շատ մտավորականներ դժգոհ էին և ոչ մի կերպ չէին հասկանում, թե ինչպես կարելի է համաշխարհային շեքսպիրյան թատրոնում իր պատվավոր տեղն ունեցող արտիստ ունենալ և կազմակերպել շեքսպիրյան ներկայացումների փառատոն՝ առանց նրա։ Ջար լեզուներն ասում էին, թե իբր փառատոնի կազմակերպիչներից մի երկուսը Փափազյանին հրավեր ուղարկել են պատշաճությունը պահպանելու համար լոկ, բայց ուշացած, անելով այնպիսի

հեռատես հաշիվ, որ Փափազյանը, եթե անգամ գար, հասնելու էր Երևան, լավագույն դեպքում, եղրափակիչ երեկոյին միայն:

Յուզովսկու զեկուցման օրը, մտքերի փոխանակությունն սկսելուց առաջ, հրապարակվեց Փափազյանի հեռագիրը: Ես չգիտեմ, այդ հեռագիրը պահպանվե՞լ է, թե փառատոնի ուրիշ նյութերի հետ միասին անհետացել, բայց հիշում եմ, որ դա բավական երկար հեռագիր էր, որով արտիստը փորձ էր արել գեղեցիկ ու սեղմ սահմանել այն պատմական մեծ խորհուրդը, որ Շեքսպիրն ունի մեր ժողովրդի հոգևոր կյանքում: Հեռագիրն ավարտվում էր սրտագին բարեմաղթությամբ փառատոնի մասնակիցներին:

Պետք էր տեսնել, թե ինչ կատարվեց Սունդուկյանի անվան թատրոնի դահլիճում հավաքված մարդկանց հետ՝ Փափազյանի հեռագրի ընթերցումը լսելիս: Ո՛չ Յուզովսկու մի ժամից ավելի տևող հրաշալի զեկուցման թողած մեծ տպավորությունը, ո՛չ էլ մտքերի փոխանակությունից ակնկալվող նախահաճույքը, չխանգարեցին, որ արվեստասեր բազմությունը մի պահ անջատվեր օրվա մթնոլորտից՝ մեծ արտիստի հեռագիրն ըստ արժանավույն գնահատելու համար: Մարդիկ ոտքի կանգնեցին, բուռն ու երկարատև ծափահարությունները միացան Փափազյանի հասցեին ուղղված ցնծագին կանչեր՝ հանճարի պաշտպանության խաղավառ ցույց:

Մարդիկ ասում էին, թե հեռագիրն այնպես ընդունվեց, ինչպես կընդունվեր ինքը՝ Փափազյանը, եթե հանկարծ հայտնվեր փառատոնի բեմում արքայազնի կամ մավրի տեսքով...

Միամիտ են մարդիկ՝ ազնիվ ու բարի, երբ հարցը վերաբերում է արվեստին, գեղեցիկին, տաղանդին: Երբ մի տարի հետո Փափազյանը ուզեց գալ սովորական հյուրախաղերի, չարակամությունը պատնեշ կանգեցրեց, և նա մայր թատրոնի դռներն իր առաջ փակ գտավ...

Վաղարշյանը դժգոհ մնաց Մորոզովից ու Ջիվելեգովից, որ նրանք բացակայել էին փառատոնի, հիմա չեմ հիշում, թե որ միջոցառումից, և հայկական թատերական ընկերության առաջարկով գնացել էին հասարակական դասախոսություններ կարդալու: Վաղարշյանի տրտունջի բուն պատճառն այլ էր: Նրա Համլետը Երևանում մեծ մասամբ քննա-

դատվել էր, հույս ուներ, որ Մոսկվայի հյուրերը կհասկանան ու կգնահատեն իր խաղն ու մեկնաբանությունը: Նրա հույսերը չարդարացան: Յուզովսկին քննադատական դիրք բռնեց, Ջիվելեգովն ու Մորոզովը մասնակցելով Յուզովսկու զեկուցման շուրջ բացված մտքերի փոխանակությանը, իրենց պաշտպանության տակ չառան Վաղարշյանի Համլետը, ոչ էլ միացան զեկուցողի քննադատությանը:

Հիմա չեմ հիշում, թե քանի օր տևեցին փառատոնն ու կոնֆերանսը, բայց վառ տպավորությունները մնացին: Օրեր անցան, շաբաթներ ու ամիսներ, բայց մարդիկ կարիք ունեին դեռ փառատոնից խոսելու: Կարծում եմ, սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ շոյված էր մեր ազգային արժանապատվությունը:

ԱՐՇԱԿ ԱԴԱՄՅԱՆ

Մի քանի զեկուցում և դասախոսություն, որ լսել եմ կյանքիս տարբեր տարիներին, թողել են անջնջելի տպավորություն: Սրանց շարքին է պատկանում նաև 1944-ին Շեքսպիրյան համամիութենական կոնֆերանսի օրերին Արշակ Ադամյանի զեկուցումը՝ «Շեքսպիրի պոետիկան երաժշտության մեջ»:

Լավ հիշում եմ, մոտեցավ ամբիոնին, կանգնեց ոչ թե ամբիոնի հետևը, այլ կողքին, աջ արմունկը հենեց ամբիոնին, լուռ նայեց ունկնդիրներին, ասես ուզում էր հասկանալ, թե ում համար է խոսելու և սկսեց: Չէր կարդում, ինչպես կոնֆերանսի մյուս մասնակիցները: Նույնիսկ կոնսպեկտ չուներ: Խոսում էր հանդարտ, առանց ձայնը բարձրացնելու և իջեցնելու: Ո՛չ ջուր խմեց, ո՛չ շարժվեց տեղից, ո՛չ էլ ձեռքերի օգնության դիմեց: Հակառակ իր այս ստատիկ վիճակին, կարդաց մի զեկուցում, որի խորքը չէր կարելի չափել: Ոչ էլ հնարավոր էր անհուզմունք հետևել նրա մտքի ընթացքին:

Միտքը հավակնոտ չէր: Ձայնը խրատական չէր, ոչ էլ ուսուցողական շեշտ ուներ խոսքը: կար խոր համոզվածություն և կուռ տրամաբանություն, կար անորսալի համայք, որ նրան դարձնում էր գեղեցիկ: Ի՞նչ էր դա: Երևի կանգնելու

ձևն էր, ձայնը, միտքը, համոզվածությունը։ Ամեն ինչն էր գեղեցիկ։ Ինչպես գունանկարչական կտավ, Ռաֆայելինը լիներ, թե Ռեմբրանդտինը, նայում ես ու դժվար է որոշել, թե ինչն է ամենից ավելի ազդողը՝ մի՞տքը, հո՞ւյզը, դրանց ներդաշնակությունը, գունայի՞ն լուծումը, կառուցելո՞ւ հմտությունը, թե ամբողջը միասին առած։

Ես ինքս էլ չեմ կարող ասել, թե ինչու տպավորությունս հաստատելու համար նկարչության օգնությանն ապավինեցի։ Ես կարող էի ասել, և դա կհամապատասխաներ իրականությանը, որ երբ նա Բերլիոզի անունն էր տալիս, ինչ-որ հեռուներից, ասես, մեր ականջին հասնում էր նրա երաժըշտությունը։

Շատ անծանոթ անուններ լսեցի այդ օրը, դրանք ոչ միայն երաժշտության դեմքեր էին, օրինակ՝ Մալեր, այլ նաև գեղագիտական մտքի ներկայացուցիչներ, օրինակ՝ Պաուլ Բեկկեր։ Ոմանց հերքում էր, ոմանց վրա հենվում, ոմանց ճշտում էր, ոմանց հաստատում, լրացնում։ Ջուներ խոնարհության զգացում հեղինակությունների առաջ, բայց չուներ նաև, ինչպես ասացի արդեն, ինքնահավան կեցվածք։ Դա չզգացվեց նույնիսկ այն դեպքում, երբ անուն չտալով, վիճում էր Ջայկովսկու այն բարեկամների հետ, որոնք ոչ մի կերպ չէին հասկանում, թե «Ռոմեո և Ջուլիետի» երաժշտությունից ինչո՞ւ է տասը տարի անց կոմպոզիտորը կրճատել թաղման քայլերգը։ Ադամյանը դատողություն էր անում և չափազանց հետաքրքրքիր, այն մասին, թե ո՞րն է գրական և երաժշտական արվեստների միջև եղած գեղարվեստական մտածողության տարբերությունը։ Ինչ որ ասում էր՝ բարձր մտածողության օրինակ էր։ Մի քանի խոսք էր ասում և անպայման ինքնատիպ, եթե ոչ մտքով, ապա գոնե զգացողությամբ և նրա ուշադիր ունկնդրողը պետք է հասկանար, որ նրա նյութը շղթայի մի օղակն է, սակայն ամբողջ շղթան նա դիտե ոչ պակաս օղակից։ Իսկ թե ինչպես էր ազատ լողում երաժըշտական երևույթներ մտաբերելիս, ասես, դա իրեն ըստ ամենայնի վաղուց և լավ ծանոթ աշխարհ է։ Բախ լիներ թե Մոցարտ, Բեթհովենն թե Ջայկովսկի, Բերլիոզ, թե Շոպեն, նրա զեկուցման դլխավոր գործող անձերն էին։ Համեմատում էր, խաչաձևում, բնորոշում, գնահատում, վիճում և հերքում։

Արշակ Ադամյանի զեկուցումը համարվեց շեքսպիրյան կոնֆերանսի հայտնություններից: Գիտական կոնֆերանսի այդ օրվա նիստից հետո շատերը մոտեցան նրան ու ձեռքը սեղմեցին, շատերը դրվատանքի խոսքեր ասացին, ու ես էլ մոտեցա, թեև նա չէր ճանաչում ինձ: Դա հիացմունք էր, որ ինձ մատնել էր շփոթմունքի: Նորից ու կրկին ես կանգնել էի մարդկային կարելիությունների աննախատեսելի դրսևորումների առաջ:

Այդ ժամանակ Արշակ Ադամյանն աշխատում էր մեր ակադեմիայում, երաժշտության պատմության և տեսության բաժնում, որպես ավագ գիտական աշխատակից: 1944-ից մինչև 1949-ը, չհաշված շեքսպիրյան կոնֆերանսում կարդացած զեկուցումը, գրել էր երկու աշխատություն՝ «Հնագույն Հայաստանի գեղագիտական ուսմունքները» և «Մարքս-Լենինյան գեղագիտության հարցերը»:

Եվ հանկարծ 1949-ին Արշակ Ադամյանին լուր է հասնում, որ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշումով ինքն ազատված է աշխատանքից: Դա վրդովում է նրան, պղտորում հոգին, գտնում, որ իր գլխին եկած անարդար խաղ է դա, բայց չի կորցնում արդար իրավունքների վերականգնման հույսը: Եվ 65-ամյա գիտնականը Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի անունով մի նամակ է գրել: Այդ նամակը բողոք է, արդարության դեմ ուղղված խոսք: Նա ասում է, որ ներկա վիճակը վիրավորական է իր համար, ինքը կարող է և պետք է գիտությամբ զբաղվի, դասախոսություններ կարդա: Երևանում գրած իր երկու աշխատությունները, ինչպես նաև Լենինգրադում պատրաստած «Դիդրոյի գեղագիտությունը», կարդացել են այնպիսի բարձր հեղինակություններ, ինչպիսիք են Սոլլերտինսկին, Վ. Ասմուսը, Մ. Սերեբրյակովը, Վ. Լազարևը, Բ. Ֆրինչերը և լավ են արտահայտվել, բարձր են գնահատել:

Ուրեմն՝ ի՞նչը կարող է պատճառ լինել իրեն թոշակառու դարձնելու:

Ադամյանին մեղադրում էին գեղագիտության մարքսիստական ուսմունքի հիմնադրույթների դեմ մեղանչելու համար: Բայց նա չէր ընդունում քննադատությունը, մեղադրանքները համարում հիմքից զուրկ, անապացույց, իսկ երբ

պատահում էր, որ համաձայնում էր, գտնում, որ իր հասցեին արված քննադատության ինչ-ինչ կետեր ճիշտ են, ապա հակառակորդները գտնում էին, որ դա քիչ է, պետք է ընդունի սխալները մինչև վերջ։

Ադամյանի քննադատները և բոլոր այն անձինք, որ Ադամյանին դեմ էին, քարացած մտածողություն ունեին։

Խնդիրն այն է, որ Ադամյանը գեղագիտության հարցեր արծարծելիս, իր լուծումներն առաջարկելիս իր ժամանակակից գեղագետներից մի քանի քայլ առաջ էր, որ նշանակում է, թե առնվազն մի քառորդ դարով կանխում էր ժամանակը։ Եվ ինչպես միշտ՝ այդպիսի մարդիկ դժբախտ են լինում, իրենց վրա են վերցնում հարվածները, մինչև որ տարիներ անց գալիս է մի այլ սերունդ ու ձեռք մեկնում նրանց։

Արշակ Ադամյանը այդ մարդկանցից էր։ Լավն այն էր, որ Ադամյանը հուսահատվողներից չէր, կոփված կամք ուներ և ընդհանրապես լավատես էր։ Համալսարանի և կոնսերվատորիայի դռները փակ էին նրա առաջ, գիտական մամուլում նրա հետազոտությունները չէին երևում, հրատարակչությունները չէին տպագրում նրա աշխատությունները։ Իսկ նա շարունակում էր աշխատել։ Ցերեկն աշխատում էր, գիշերն աշխատում էր։ Բարեկամների մի փոքրաթիվ շրջանակ այցելում էր նրան, աշխատում օգտակար ու աջակից լինել։ Իր նախկին ուսանողների մի փոքրիկ շրջանակ ամեն կերպ օգնության էր հասնում, օգնում ինչով որ կարող էր։ Չէին թողնում մենակ, և ինքն էլ իրեն լքված չէր համարում։

Ես կարգված էի արվեստների պատմության և տեսության սեկտորի ղեկավար։

Արշակ Ադամյանը զանգահարեց ինձ և ցանկություն հայտնեց գալ ինձ մոտ։ Ասաց, որ գործ ունի։ Ես խնդրեցի նեղություն չքաշի, որպես կրտսեր, ինքս կգնամ իր մոտ։ Զգացի, որ քթի տակ ծիծաղեց և տվեց իր հասցեն, և պայմանավորվեցինք։

Դա անշուք բնակարան էր, ամուրի մարդու տուն, որին ղգալապես պակասում էր կնոջ խնամքոտ ձեռքը։

— Գիտեք,— ասաց նա,— ես շոյված եմ, որ եկաք, շոյված եմ, որ տարիք հարգող երիտասարդներ հիմա էլ կան,

բայց ուզում եմ, որ իմանաք՝ պաշտոնյան տարիք չունի։ Խնդրատուն ես եմ, ուրեմն, ես էի գալու ձեր դուռը։

Ես ասացի, որ մեր հաստատության տարեց աշխատակիցների տանը, եթե գործ է պատահում, ես եմ գնում։

— Իմ գլխին եկածը ձեզ հայտնի՞ է։

— Ինչ որ չափով։

Նա շատ համառոտ վերականգնեց իր կյանքի վերջին հինգ տարվա ցավալի դեպքերի պատմությունը։

— Այս բոլո՞րը գիտեիք։

— Գիտեի։

— Իմանալո՞վ եկաք։

— Այո։

— Եթե խնդրեմ օգտակար լինել ինձ, կլինե՞ք։ Անշուշտ, արդարամտության սահմաններում։

— Կլինեմ։

— Մի խոստացեք ավելին՝ քան կարող եք։

Ես ժպտացի։

— Ձեր դեմքն ինձ ծանոթ է։

— Շեքսպիրյան կոնֆերանսի ձեր զեկուցման ունկնդիրներից եմ։

— Գո՞հ մնացիք։

— Շա՛տ։

— Այս թղթապանակում կգտնեք կարծիքներ իմ չհրապարակած աշխատությունների մասին։ Խնդրում եմ տարեք տուն և հանգիստ նայեք։ Մի խոսքով՝ ծանոթացեք, հետո կխոսենք։

Տանն աչքի անցկացրի Ադամյանի աշխատությունների մասին կարծիքները, որտեղ ասված էր, թե նրա այսինչ գործը առաջին փորձն է, կամ պարզապես երևույթ է («Հնագույն Հայաստանի գեղագիտական հայացքները»), «Մարքսլենինյան գեղագիտության խնդիրները» աշխատության մասին ասված էր՝ «Հեղինակը չի վախենում,— նա դրա իրավունքն ունի,— քննության ենթակա հարցերի վերաբերյալ իր սեփական լուծումներն առաջարկել»։ Մի ուրիշն էլ ասում էր, թե այս հետազոտությունը, հիմա չեմ հիշում, թե որ՝ «Մի քայլ առաջ է մղում մեր արվեստաբանական տեսական միտքը»։

Մի քանի օր հետո հանդիպեցի, հարցրեց, թե ծանո՞թ եմ,

արդյոք, «Միջնադարյան Հայաստանի գեղագիտական հայացքները» աշխատությանը։ Ասացի, որ կարդացել եմ։

— Ի՞նչ տպավորության եք։

— Բարձր։

— Ի՞նչ եք կարծում՝ թեկնածուական դիսերտացիայի արժե՞ք ունի։

— Իհարկե։

— Ես ուզում եմ պաշտպանության դնել։

— Լավ կլինի։

— Կօգնե՞ք ինձ։

— Անպայման։

— Հակառակորդ շատ ունեմ։

— Թող լինեն։

— Ուրեմն՝ օգնեցեք ինձ, օգնեցեք, եթե դրանով ձեզ հարվածի տակ չեք դնի։

Պայմանավորվեցինք։

Ես նախապատրաստական քայլերի դիմեցի՝ ո՞ւմ ուղարկել կարծիքի, ովքե՞ր կարող են լինել ընդդիմախոս։

Հեռախոսի զանգ։

— Այս ի՞նչ եմ լսում։

— Ի՞նչ։

— Մտադիր եք կազմակերպելու Արշակ Ադամյանի պաշտպանությունը։

— Իսկ ի՞նչ կա որ։

— Զեռնպահ մնացեք։

— Ինչո՞ւ։

— Ադամյանը մեր գաղափարական հակառակորդներից է։

— Ես կկազմակերպեմ պաշտպանությունը՝ դուք էլ եկեք ու ձեր խոսքն ասեք։

— Ես իմ խորհուրդը տվի։ Մնացածը ձեր գործն է։

— Ձեր խորհուրդը չեմ ընդունում։

— Կզղջա՛ք։

Երկու-երեք օր էլ չէր անցել, որ ինձ կանչեց ակադեմիայի ղեկավարներից մեկը։ Հեռվից սկսեց։ Հետո անցավ Արշակ Ադամյանին։

— Ինչո՞ւ ես անցավ գլուխդ ցավի տակ դնում։

— Արդար գործ է։

Հետո ավելացրի.

— Ասմուսը և ուրիշները նրան լավ մասնագետ են համարում։

— Ի՞նչ աննենք։ Իսկ այստեղ էլ նրա մասին այլ կարծիքի են։

Երկար ժամանակ լուռ էր։

— Մի արա։ Եթե քո մասին չես մտածում, մեր մասին մտածի։

— Բայց Ասմուսը մեծ հեղինակություն է։

— Ուրեմն՝ թող Ասմուսն էլ իրենց մոտ կազմակերպի նրա պաշտպանությունը։

— Ես նրան խոստացել եմ։

— Ոչինչ։

Դա քաղաքական ճնշում չէր, այլ բարոյական, այն էլ մի մարդուց, որ ժամանակին փրկել էր ինձ ծանր վիճակից։

Ես գնացի Արշակ Աբգարովիչի մոտ ու ամեն ինչ պատմեցի։

Դեմքին դառը ժպիտ կար։

— Այդպես էլ գիտեի։

Հետո դարձավ ինձ.

— Մի վշտացեք, բարեկամս։ Կարևորն այն է, որ դուք ոչ թե չուզեցիք, այլ չկարողացաք։ Հանգամանքները ձեր ցանկությունից ուժեղ գտնվեցին։

Երբ հրաժեշտ էի տալիս, ասաց.

— Նշանակություն մի տվեք և անցեք, եթե ձեզ հաճելի է զրույցն ինձ հետ։

Ես տուն էի գնում և հիշում իր խոսքերը. «Մի խոստացեք ավելին՝ քան կարող եք»։

Մի օր գնացի Արշակ Ադամյանին այցի, առանց նախապես պայմանավորվելու։ Ինձ տեսնելուն պես ժպտաց։ Երևի հույս չուներ, որ կերևամ։

— Կոնսերվատորիայի մի շրջանավարտ ուսանող հիմա գալու է,— ասաց նա,— ես նրան հետ կուղարկեմ, որ հանգիստ զրուցենք։

— Խնդրեցի այդպիսի բան չանել։

— Այդ դեպքում մնացեք, ես շատ շուտ կավարտեմ պարապմունքը։

Ուսանողը եկավ։

— Ի՞նչ էի հանձնարարել կարդալ,— դիմեց նա ուսանողին։

— Արիստոտելի «Պոետիկան»։

— Ուշադիր կարդացե՞լ եք։

— Այո։

— Համառոտ շարադրեք։

Ինչ որ պետք էր՝ ասաց։

— Երևում է, որ յուրացրել եք։ Հիմա, լսեք ինձ։ Ես կժխտեմ Արիստոտելի մտքերը՝ փորձ արեք պաշտպանել նրան։

Մեկ խնդիր, մի ուրիշ հարց, վերջապես՝ երրորդը։ Ուսանողը չկարողացավ առարկել, չկարողացավ պաշտպանել հույն փիլիսոփային։

— Ուրեմն, ձեր յուրացումը, սիրելիս, հիմնավոր չէ։ Հաջորդ հանդիպմանը նույն փորձը կանենք մի այլ գլխի վերաբերյալ։ Այսօր այսքանը։

Մեր զրույցը շարունակվեց մինչև ուշ գիշեր։ Մի երկու անգամ էլ եղա մոտը։

1956-ին, 72 տարեկան հասակում Արշակ Ադամյանը վախճանվեց։

— Արդարությունը թաղել չի կարելի։

— Արդարությունը մի օր հաղթում է։

Ադամյանի խոսքերից էին։

Այդպես էլ եղավ։

Նրա մահից հինգ տարի էլ չէր անցել, երբ Մոսկվայում լույս տեսավ «Հոդվածներ արվեստի մասին» շորս հարյուր էջանոց ժողովածուն՝ պրոֆ. Վ. Ասմուսի ընդհանուր խմբագրությամբ և ներածական հոդվածով։ Մի քանի տարի անց մեր հրատարակությամբ լույս տեսան նրա երկու գիրքը Երևանում։

Արշակ Ադամյանը ճանաչվեց մեր երկրի առաջնակարգ գեղագետներից։ Հաճելի է կարդալ, թեկուզև Արշակ Ադամյանի մահից հետո, որ՝ «Հեղինակը ոչ միայն շարադրել է գեղագիտության հարցերի մարքսիստական ըմբռնումը, այլև պայքարում է նրա համար։ Նրա տեսակետը կուսակցական է»։ Այնուհետև նշանավոր փիլիսոփան ասում է, որ Ադամյանի

մարքսիզմը ոչ թե խոսքեր են, մեջբերումներ, տերմիններ, այլ մտքեր և համոզմունքներ:

Այսպես, ուրեմն, եկան Արշակ Ադամյանի ժամանակները...

1945–Ի ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻՑ

«Պապ թագավորը» կարդալուց հետո Բուզանդի «Պատմություն հայոցը» վերակարդալու պահանջ զգացի, այս անգամ արդեն ոչ թե դրաբար, որի հաղթահարումը մեծ ջանքեր էր պահանջել ինձանից, այլ աշխարհաբար թարգմանությամբ, որ Ստեփ. Մալխասյանն էր արել: Դրա անհրաժեշտությունն ավելի խորացավ, երբ ինձ հանձնարարվեց ակադեմիայի նիստերի դահլիճում դասախոսություն կարդալ «Պապ թագավոր» պատմավեպի մասին:

Պատմական նյութի և պատմական վեպի ավելի ստույգ գեղարվեստական մտահղացման և պատմական աղբյուրների փոխհարաբերության հարցն արծարծելիս կամենում էի ցույց տալ, թե Բուզանդի «Պատմության» մեջ հիշատակված փաստերը գեղարվեստական ինչ մարմնավորում են ստացել վեպում:

Իմ նպատակն այնքան հեղինակային շեղումները չէին, որքան ապացուցումն այն մտքի, թե ինչպես է պատմական նյութի խոր ուսումնասիրությունը հեղինակին հանդեցրել Բուզանդի պատմածի և դեմքերի ու դեպքերի ճիշտ հակառակ եզրակացության թե՛ լուսաբանության, թե՛ արժեքավորման համատով: Ըստ Բուզանդի՝ Պապն անարժան թագավոր է, իբր նա փուչ կյանք է վարել, մինչդեռ Ջորյանն ապացուցում է հակառակը, որ նա պետական կարևորագույն բարենորոգումներ է կատարել, որպիսիք եվրոպական կայսրերի մտքով անցել են հայ թագավորից շատ ավելի ուշ, հակառակ իր շատ երիտասարդ տարիքին՝ Պապի սևեռուն նպատակն է եղել միասնական կենտրոնացած պետության ստեղծումը: Իմ գլխավոր խնդիրն էր ցույց տալ, որ Ջորյանի վեպը ոչ միայն գեղարվեստական նորություն է, քանի որ համարյա չի ար-

ծարծվել ու մշակվել հայոց գեղարվեստական գրականության մեջ, այլ նաև պատմագիտական նոր խոսք:

Իմ ցանկությունն էր ապացուցել, որ գեղարվեստական մտածողությունը երբեմն կանխում է գիտական միտքը: Այդ խնդիրն ինձ զբաղեցրել է դեռ 30-ական թվականներից, երբ Հովհ. Հովհաննիսյանով էի զբաղված և մտադիր էի մի փոքրիկ հետազոտություն նվիրել «Սյունյաց իշխանը» պոեմին:

Բուզանդի «Պատմության» իմ երկրորդ ընթերցումը, որ ավելի խորն էր ու նպատակային, իմ ուշադրությունը բևեռեց մի հարցի վրա, թե ինչ է աշխարհայացք հասկացությունը, որպես փիլիսոփայական սահմանում:

Բնավ կարիք չկա, որպեսզի միտքս չարշարեմ և ինքնուրույն սահմանումը տամ փիլիսոփայական այդ հասկացությանը, երբ կարող եմ բացել հանրագիտարանն ու կարդալ:

Ինձ հուզողն այլ հարց է՝ աշխարհայացքի հուզական ատաղձը, մի խոսքով այն, որ աշխարհայացքը գիտելիքների գումար չէ կամ ավելի ճիշտ՝ գիտելիքների գումարը դեռ աշխարհայացք չէ: Գիտելիքների գումարն աշխարհայացքի է վերածվում այն ժամանակ միայն, երբ հասնում է համոզվածության աստիճանի, երբ գաղափարը մարդու համար միս ու արյուն է դառնում: Երբ նա գիտակցությունից փոխանցվում է ենթագիտակցության, երբ ենթագիտակցությունը խուժում է գիտակցության ոլորտները: Ոչ թե մարդը պետք է սիրի հայրենիքը, որ ճիշտ գաղափար է, այլ մարդը չի պատկերացնում իրեն առանց հայրենիքի, որն արդեն գաղափարի հուզական բյուրեղացումն է: Ոչ թե մարդը պետք է բարի ու արդար լինի, որ ճիշտ բարոյախոսություն է, այլ մարդը բարի է ու արդար, որովհետև այդպիսին է նրա հոգեկան կազմը:

Ես չգիտեմ, թե գիտականորեն ինչ ստուգությամբ եմ ճիշտ ձևակերպում միտքս, բայց իմ եզրահանգումն այն է, թե ես այսպես եմ տեսնում աշխարհը ոչ թե այսպես եմ ուզում, այլ որովհետև աշխարհը իմ տեսածի պես է:

Խոսքը վերաբերում է ոչ թե իրականության առարկայական ըմբռնմանն այնպես, ինչպես որ նա կա, քանի որ իրականությունը գոյություն ունի մեր գիտակցությունից անկախ:

ճիշտ չտեսնելով, կարծում են, համոզված են, որ ճիշտ են տեսնում։ Այստեղ արդեն իրեն զգալ է տալիս մարդու հասարակական դիրքորոշումը։ Նույն իրական երևույթը ճորտը և ճորտատերը նույն կերպ չեն ըմբռնում և գնահատում, որովհետև նրանց շահերը հակոտնյա են։ Գաղափարն այն ժամանակ է խոր համոզվածություն դառնում, երբ նա մտածողությունից հոգեբանության է փախակերպվում։

Դուցեև ես շփոթում եմ աշխարհայացքը աշխարհազգացողության հետ, բայց անկեղծ լինեմ և ասեմ, որ նախ՝ սրանց տարբերության համոզիչ բացատրություն չեմ հանդիպել գրականության մեջ, բայց հանդիպել եմ այն մտքին, որ դրանց մեջ շատ ընդհանուր եզրեր կան և փիլիսոփայական գրականությունն ընդունում է, որ դրանք հաճախ գործածվում են որպես հոմանիշներ։ Թերևս ճիշտ կլինի ասել, որ աշխարհայացքը աշխարհայացք է դառնում, երբ դադարում է գիտելիքների պաշար լինելուց, երբ գիտելիքն ու հայացքը դառնում են համոզվածություն, որովհետև մտածողությունն անցել է սրտի միջով։

Բուզանդը եղել է Ներսես կաթողիկոսի քարտուղարը, նրա տարեգիրը։ Իր համոզմունքներով նա եղել է ներսեսական, եթե Պապը կամենում էր այս կամ այն փոփոխությունն անել իր կառավարած երկրում, ըստ թագավորի՝ դա բարենորոգում է, ըստ Ներսեսի, ուրեմն և ըստ Բուզանդի՝ պետության քայքայման պատճառն անփորձ երիտասարդությունն է և նրա անբարո ձգտումները։ Կյանքի փաստերը Բուզանդը ոչ թե այդպես է ընկալում, որովհետև իր հոգևոր տիրոջ՝ կաթողիկոսի պահանջն է այդպես, այլ որովհետև կաթողիկոսի և իր ըմբռնման մեջ տարբերություն չկա. հիմնականի մասին է խոսքը և ոչ թե մանրամասնության, որտեղ զանազանությունները հնարավոր են ըստ խառնվածքների տարբերության։ Բայց դրանք որոշիչ չեն, այլ միայն և միայն ենթակայական։

Պարզ է, որ կաթողիկոսի մահը Բուզանդը պետք է բացատրեր որպես թունավորում։ Երկրի թագակիր տերը ասպարեզից հանեց իր գլխավոր հակառակորդին, որպեսզի Ներսեսին փոխարինի այնպիսի հոգևորականով, որն իրեն հլու և հնազանդ կլինի և ոչ թե եկեղեցու շահերը կհակադրի պետության շահերին։ Ուրեմն բախվում են երկու համոզվածություն։

թյուն՝ կենտրոնաձիգ, որի համոզված կողմնակիցը թագավորն էր, կենտրոնախույս, որի պաշտպանները նախարարներն էին և նրանց հետ կաթողիկոսը, որ իր կալվածքներով և մարդկանցով մեծ նախարար էր նույնպես:

Առաջինը, որ կասկածի տակ է առել դարեր շարունակ, սերնդե-սերունդ փոխանցված Բունավորման վարկածը, պատմաբան Գարագաշյանն է եղել իր «Հայոց քննական պատմություն» աշխատությամբ:

Եթե մի պահ ընդունենք անգամ, որ Բուզանդը հասկացել է Ներսես կաթողիկոսի հանկարծամահությունը, որպես սրտի պառակտում և դիտավորյալ ներկայացրել է այնպես, թե իբր Պապն է նրան թունավորել, ապա դա ևս արված է որպես իրականությունն աղավաղելու համոզված անհրաժեշտություն՝ երկրի ու ժողովրդի շահերի տեսակետից, նույն երկրի ու ժողովրդի աչքում թագավորին վարկաբեկելու նպատակով: Խաբեությո՞ւն է: Անշուշտ: Բայց դրա անհրաժեշտության հիմքը անկեղծ համոզումն է, կամ ավելի շուտ՝ անհրաժեշտության համոզում, որ նույնն է՝ նաև վարձվածություն:

Ուրեմն՝ կյանքի իրողությունը Բուզանդն արձանագրել է այնպես, ինչպես կարծել է, որ իբր իսկապես պատահել է, այսինքն կաթողիկոսի մահը իսկապես թունավորման հետեվանք է, թե՞ իմացել է, որ այդպես չէ, բայց այդպես է արձանագրել՝ դրանից ոչինչ չի փոխվում: Այն պայքարը, որ եղել է Պապի և Ներսեսի միջև, թագավորի և նախարարների միջև, Բուզանդը իբրև մտքով և սրտով ներսեսական, իբրև նախարարական համոզվածություն ունեցող, այլ կերպ չէր էլ կարող ներկայացնել ապագային:

Երբ աշխարհայացքի վերաբերյալ իմ մտածումներին ծանոթացրի Հայկ Գյուլիքևախյանին, կամենալով իմանալ, թե փիլիսոփայական տեսակետով, անկախ իմ ձևակերպումների ատուգությունից, որքանով ճի՞շտ հունի մեջ եմ, նա հիշեց, որ Կարլ Մարքսի մի գրվածքում (անունը տվեց, բայց հիմա միտս չէ) ասված է, թե երբեմն գաղափարները տիրում են մեր մտքին, իրե՛նց են ենթարկում մեր համոզումները և բանականության ուժով մեր խիղճը գամում իրենց. սրանք կապանքներ են, որոնցից անհնար է դուրս պրծնել առանց սեփա-

կաէ սիրտը պատռելու, դևեր, որոնց մարդս կարող է հաղթել՝ դրանց ենթարկվելով միայն։

Երբ որևէ հասկացություն, որևէ գաղափարի շուրջ մեր միտքն ու հույզը հակասության մեջ չեն, այլ շաղախված են այնպես, որ անհնար է ծայրերը գտնել, գտնել դրանց վերլուծման սահմանները, ուրեմն գործ ունենք խոր և ամբողջական համոզվածության, հետևապես աշխարհայացքի հետ։

Հավիտենական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բարին ու չարը, սերն ու ատելությունը, բարոյականն ու անբարին, արդարն ու անարդարը, կարող են տարբեր բարոյականը, ձևով մեկնաբանվել տարբեր մարդկանցից, եթե մարդը մշակել է իր բարոյականությունը, հետևապես մարդն ունի իրավական, իրադարձության ու մարդկանց հանդեպ համոզվածություն։

Ի լրումն այս բոլորի, ասեմ նաև, որ «Պապ թագավորը» կարդալուց հետո, ես մի օր Զորյանին հարցրի, թե ծանո՞թ է արդյոք Գարագաշյանի «Քննականին»։

— Իհարկե,— պատասխանեց։

Ծիծաղելի էր իմ հարցը, որովհետև պետք է իմանայի, որ Գարագաշյանը նրան ծանոթ է լինելու, անկախ Պապի մասին վեպ գրելուց։ Ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես որ Գարագաշյան ես կարդացել էի ուսանողական տարիներին, ուրեմն, անկախ «Պապ թագավորից» և մինչև «Պապ թագավորը»։

Իմ տպավորությունն այն է, որ Գարագաշյանից է եկել Պապի շուրջ վեպ գրելու մտահղացումը։ Բուզանդի համոզիչ հերքումից երևի մտածել է՝ եթե թունավորելու վարկածը չի հաստատվում, որովհետև նենգամիտ հերյուրանք է, հապա ինչո՞ւ չենթադրել, որ Պապի ու նրա արքայական գործունեության տրված գնահատականները չարախոսություն են, զրպարտություն, չէ որ Պապի քաղաքականությունն ուղղված էր եկեղեցու և կաթողիկոսի հեղինակության դեմ։ Այս էր, որ ես ուզում էի հարցնել Զորյանին և հարմար չէի դատում, թեև հիմա եմ մտածում, որ վիպասանի հեղինակությունը վտանգող ոչինչ չէր պարունակում հարցումս, եթե անգամ հաստատվեր, թե իմ ենթադրությունը ենթադրություն չէ, այլ պարզ իրողություն։

Այսօր չէի հարցնում, թե վաղը կհարցնեմ, վաղն էլ հետաձգում էր մի ուրիշ օրվա և այդպես ժամանակն անցավ աննկատ և ավելի արագ, քան կարծում էի, և եկավ մի օր, երբ հարցնելն այլևս հնարավոր չէր։

ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ

1945-ին էր։ Կարծեմ աշնանը։

Ստեփան Զորյանը եկավ հրատարակչություն և սեղանիս դրեց բանաստեղծությունների ձեռագիր մի ժողովածու. վրան Զորյանի ձեռքով գրված էր՝ «Որոտանի եղերքին»։ Հեղինակիր անունը՝ Համո Սահյան, ինձ ոչինչ չէր ասում։

— Կարդա, կարծում եմ կհավանես։

Մի փոքր հետո.

— Տպագրելու դեպքում հանձն եմ առնում խմբագրել։

Հայտնի էր նրա խստապահանջությունը։ Եթե հավանել է, ուրեմն պետք է իսկապես լավը լինի։

Միշտ չէ, որ Զորյանի հետ համաձայնել եմ, երբ չի հավանել, բայց միշտ անսխալ եմ համարել, երբ հավանել է, մանավանդ՝ ոգևորվել։ Այս անգամ ոգևորված էր երևում։ Բացի դա, գիտեր, որ իր ասածն իմ աչքում օրենքի ուժ ունի, բայց նուրբ վարվեցողության տեր լինելով, խոսում և արտահայտվում էր այնպես, ասես վճռականը հրատարակչության կարծիքն է։

Նույն երեկո կարդացի առաջին իսկ բանաստեղծությունը՝ «Նաիրյան դալար բարդի», հրապուրեց։ Անկասկած էր, որ նորահայտ բանաստեղծն իր սեփական ձայնն ունի, իր աշխարհը, իր գույները։

Մյուս օրը, երեկոյան դեմ Զորյանի տանն էի։

— Չէի կասկածում, որ հավանելու ես։

Նոր բանաստեղծը Բաքվից էր։

Մի կարճ նամակ ուղարկեցի հեղինակին, հայտնելով իր ժողովածուն լույս ընծայելու վերաբերյալ հրատարակչության որոշումը։

Գիրքը լույս տեսավ 1946-ին։

Նաիրի Զարյանը նույնպես ոգևորվեց Համո Սահյանով և

Եթե չեմ սխալվում, նոր բանաստեղծին նվիրված առաջին հոդվածի հեղինակն ինքն էր։

Մյուս բանաստեղծը, որ ավելի վաղ ասպարեզ մտավ, Վահագն Դավթյանն էր։

1940-ի ուսումնական տարվա վերջն էր, ու Երևանը լի էր դպրոցն ավարտած տղաներով ու աղջիկներով։ «Խորհրդային Հայաստան» օրաթերթում տպվեց մի բանաստեղծություն՝ «Հրաժեշտի երգ» խորագրով։

Ներշնչանքով գրված գործ էր։ Կարդում էիր ու համակվում պատանի հեղինակի բանաստեղծական տրամադրությամբ։

Երբ Գևորգ Էմինին հայտնեցի տպավորությունս, ասաց, որ «Հրաժեշտի երգը» առաջին գործը չէ։ Ասաց նաև, որ «Պիոներ կանչում» շատ գործեր է տպագրել, լինելով հինգերորդ դասարանի աշակերտ։

Հետո լույս տեսան նրա գրքերը։

Թե՛ Սահյանի, թե՛ Դավթյանի հետ բարեկամական հարաբերությունների մեջ եղա, թեև նրանց հետ մտերմություն չունեցա, ինչպես Սիլվայի ու Մարոյի, Էմինի ու Սևակի կամ Հրաչյա Հովհաննիսյանի հետ։ Ես ուրախ էի, որ մեր երիտասարդական բանաստեղծությունը, որոնց մեջ էր նաև Հովհաննես Շիրազը, համալրվեց նոր խոստումնալի ուժերով։ Ու հիմա, երբ շատ տարիներ են անցել երկուսի էլ առաջին քայլերից, ինձ համար, ինչպես նաև շատերի, երկուսն էլ սիրելի անուններ են, սիրելի բանաստեղծներ, ու իմ հոգու հուզումնալի պահերի արձագանքն եմ գտնում նրանց գրվածքներում։

Քանի որ խոսք բացվեց նոր անունների մասին, ասեմ, հայ քննադատական մտքի ապագա պատմաբանն արձանագրելու է մի կարևոր իրողություն։

Քառասնական թվականների երկրորդ կեսին ասպարեզ մտավ գրականագիտական նոր սերունդ՝ Սուրեն Աղաբաբյան, Սերգեյ Սարինյան, Հրանտ Թամրազյան, Էդվարդ Ջրբաշյան, Պիոն Հակոբյան։ Սրանց հետ միասին նաև Լևոն Հախվերդյան, որը թատերագիտականն ավարտելով, նույն հաջողությամբ գործեց գրականագիտության և գրական քննադատության ասպարեզում։ Ես սրանց գործունեությունը բարձր եմ գնահատում։ Իրենց անհատական դիմագիծն ունեցող երի-

տասարդներ էին։ Իրենց հետ բերին նոր շունչ։ Այն ժամանակ իրենց առաջին քայլերն էին անում, իսկ այսօրվա օրը հայ գրականագիտությունը առաջ մղող դեմքերն են, իրենց մասնագիտության մեջ եղանակ ստեղծող հեղինակություններ։

Բոլորի հետ բարեկամ եղա, բոլորի հաջողություններով ուրախացա։ Շատերի գործերի առաջին գնահատողներից եմ եղել, դիսերտացիաների պաշտպանության ժամանակ՝ պաշտոնական ընդդիմախոս։ Երբ նրանք աշակերտ էին և ուսանող, չգիտեմ իմ գրքերից ինչ-որ բան քաղե՞լ են թե ոչ։ Բայց որ նրանք ինձ համար եղել են համարձակության, մտքի թռիչքի, նորովի մտածողության, մասնագիտական աղնվության օրինակներ, անկասկած է, ու ես շատ բան եմ սովորել նրանցից։

ԱՆԿՐԿՆԵԼԻ ԷՋԵՐԻՑ ՄԵԿԸ

Քիչ եմ շփվել Լևոն Զոհրաբյանի հետ, բայց շատ եմ տեսել նրան բեմում։ Տեսել եմ նրա ամենալավ կատարումները՝ Լոսկա, Աբխազում աղա, Թոբի Բելչ։

Եվ այսօր նա մեզ պատկերանում է հենց այդ դերերով։ Չլինեին այս անձնավորումները, կլիներ պարզապես լավ դերասան և այդքան միայն։ Հուզիչ և ազդեցիկ էր նրա մարմնավորած Միլլերը ևս։ Երեսունվեց և ավելի տարի է անցել, բայց «Սեր և խարդավանք» ներկայացման հանդիսատեսներն այսօր էլ հիշում են տառապած հոր ապրումները։ Եվ մյուս անձնավորումները ևս։ Օրինակ՝ Ռասպլյուևը։ Միլլերը և Ռասպլյուևը պարզ հաջողություններ չէին։ Իսկ Լուկայի և մանավանդ Աբխազում աղայի և Թոբի Բելչի դերերում նա մրցակից չուներ, համեմատելի չէր։

Կարծում եմ, սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ ով տեսել է նրա Աբխազում աղան, Թոբի Բելչը հազիվ թե հաշտվի այդ կերպարների ուրիշ, թեկուզև տաղանդավոր կատարումների հետ, քանի որ արվեստագետը և՛ մի դեպքում, և՛ մյուս, հանդիսատեսի երևակայությունը ժամանակին ենթարկել է իրեն այնպես, որ նա չի ենթադրել այլ պատկերացում։

Մի դեպքում Պոլիսն է, մյուս դեպքում՝ հեքիաթային մի անհայտ երկիր, մի կողմից արևելյան կոլորիտ, մյուս կողմից՝

արևմտյան: Տարբեր բնավորություններ, եթե չասենք՝ նույնիսկ հակադիր: Երկուսն էլ գույներով առատ էին: Տպավորությունն այնպես էր, որ այդ երկու, իրարից բոլորովին տարբեր աշխարհները դերասանին լավ ծանոթ են, ասես ինքն ապրել էր դրանց մեջ: Զարգացած և խելոք դերասան, սուր մտքի տեր արվեստագետ, ներքնազգացողություն ուժեղ, երևակայությունն՝ առատ, վերամարմնավորման արվեստի մեջ հմուտ, հարազատությամբ պատկերում էր Աբիսողոմ աղային և Թոբի Բելչին: Ո՛չ, չէր պատկերում, այլ մտնում էր Աբիսողոմ աղայի և Թոբի Բելչի մաշկի մեջ: Իր մարմնավորումով նա հակադրվեց Աբիսողոմ աղայի առաջվա դերակատարներին: Միամիտ գավառացուն եկավ փոխարինելու այն մեծահարուստը, որին Տրապիզոնը նեղ է գալիս, և նա եկել է նվաճելու Պոլիսը:

Առաջին ամբողջ արարի ընթացքում նա մի քանի խոսք էր ասում, ընդամենը մի քանի խոսք, բայց դեմքի արտահայտությունը, աչքերի նայվածքը, շարժուձևը, ընդհանուր սլահտությունը, վճռակամությունը պարզում էին, թե ով է Աբիսողոմ աղան, և հանդիսատեսը անհամբերությամբ սպասում էր նրա և շրջապատի հետագա հանդիպումներին:

Հիմա էլ աչքիս առաջ է նրա Թոբի Բելչը՝ տակառի վրա նստած, աջ ձեռքին գինու մի մեծ գավաթ: Հանդիսատեսը չէր կասկածում, որ Թոբի Բելչ-Զոհրաբյանը հարբած է: Զվարթ էր ու կենսասեր: Թեև հողեղեն էր, բայց թեթև էր, շարժուն (նա այդ ժամանակ հիսունն անց էր): Նրա պատկերած կերպարում կար վայելքի պոեզիա, մոլեգին մի կենսախնդություն, որով և այնքան սիրելի էր դառնում հանդիսատեսին: Հանդիսատեսը ցանկանում էր, որ նա միշտ բեմում լինի: Հրապուրում էր նրա զվարթ ոգին, նաև այն անխոնա ծաղրը, որով ոչնչացնում էր կեղծ բարեպաշտությունը:

Նայում էիր և հասկանում, որ սա է շեքսպիրյան իսկական ռեալիզմը:

«12-րդ գիշեր» ներկայացումը չուներ թույլ դերակատար: Եվ այնուամենայնիվ, լավագույնը Զոհրաբյանի անձանավորումն էր:

Ինչպիսի՞ ֆալստաֆ կլիներ Զոհրաբյանը: Իր մտքով էլ անցել է: «12-րդ գիշերվա» առաջին ներկայացումից հետո ապ-

րեց քառորդ դար և ոչ մի բեմադրիչ չմտածեց զբաղեցնել նրան այդ դերով։

Հայ բեմը մի ուրիշ Թոբի Բելչ չի ունեցել, բայց նրա գունավառ խաղը կարելի է համեմատել այդ դերի ռուսական և անգլիական անձնավորումների հետ, որոնց ինձ վիճակվել է տեսնել, և անվարան ասում եմ, որ եթե չէր դերազանցում նրանց, ապա չէր էլ զիջում։

Երբ Զոհրաբյանին տրվում էր լիարժեք դեր՝ նա ծավալվում էր և ստեղծում անկրկնելի կերպար։ Կրկնապատկում էր դերի արժեքը։ Պետք է հուզվեր, որ հուզեր։ Պետք է հավատար, որ հավատացներ։ Եվ հակառակը, երբ դերը դեր չէր՝ կաշկանդվում էր, և տպավորությունն այնպես էր, թե շատ սովորական դերասան է բեմ բնկել, որ չգիտե, թե ինչ է անելու։ Նա չուներ ոչնչից բան ստեղծելու ձիրքը, բայց հզոր էր, անզուգական, երբ նրան առատ նյութ էր տրվում, բնավորություն, որ կենսագրություն ունի։

Ջունեմ այնպիսի տպավորություն, թե Զոհրաբյանը նախապես մշակում էր ապագա դերի շարժուձևը։ Ժամանակին չեմ հարցրել իրենն, բայց չեմ կասկածում, որ նրա համար էականը պատկերվող մարդու հոգին հասկանալն էր, մանավանդ զգալը։ Նվաճվում էր կերպարի հոգեկանը՝ ինքնաբերաբար ծնվում էր խոսվածքը, նայվածքը, շարժման կերպը, ամբողջ դերապատկերը։

Զոհրաբյանի լավագույն խաղերն իրենց պատվավոր տեղն ունեն հայ դերասանական արվեստի այնպիսի կատարումների կողքին, ինչպես Հովհաննես Աբելյանի Անդրեաս Էլիզբարյանն է, Հրաչյա Ներսիսյանի Բաղդասար աղբարը, Վաղարշ Վաղարշյանի Եգոր Բուլըչովը, Հասմիկի Կաբանիխան, Օլգա Գուլազյանի Սալոմեն, Ավետ Ավետիսյանի Ջամբախովը, Գուրգեն Ջանիբեկյանի Գրիգոր աղան։

Կարիք չկա դերասաններին հակադրել իրար, մանավանդ, եթե նրանք խոշոր անհատականություններ են։ Մեծությունները անկրկնելի են։ Ամեն մեկն իր տեղն ունի։ Ճաշակի, համոզմունքի, նախասիրության հարց է, երբ մեկը արվեստի այս տեսակն է դերադասում, ուրիշը՝ այլ տեսակը, բայց երևի կա առարկայական չափանիշ, որը գնահատում է և՛ այս տեսակը, և՛ մյուսը, քանի որ երկու դեպքում էլ գործ ունի բարձր

արվեստի հետ: Ես դեռ չեմ հիշում որևէ թատերասերի, կամ թատերագետի, որ հիացմունք չունենար Զոհրաբյանի հանդեպ:

Ամեն անգամ Լենինական մեկնելիս ինձ միշտ զբաղեցրել է այն հարցը, թե ներկայացումը, որ նայելու եմ, Զոհրաբյանը մասնակցո՞ւմ է, թե ոչ: Կարծում եմ, սա միայն իմ զգացումը չի եղել:

1944-Ի ԳՐԱՌՈՒՄ, «12-ՐԴ ԳԻՇԵՐԸ» ՏԵՍՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

(ԼՐԱՑՎԱԾ ՎԵՐՋԵՐՍ)

Ես սիրում եմ Լենինականը:

Ջեմ կարծում, թե դրա միակ պատճառը լենինականցի լինելս է:

Սիրում եմ Գյումրին, որովհետև գիտեմ թե ինչ է գյումրեցին, մինչդեռ նույնը չեմ կարող ասել երևանցու մասին: Լենինականն իր դեմքն ունեցող քաղաք է: Շատ բան է փոխում կյանքը, բայց Լենինականը պահպանում է իր գույնը, տեսքը, պատկերն ու նկարագիրը:

Հայաստանի ոչ մի քաղաքում արվեստի հանդեպ այդքան սեր չեմ տեսնել, որքան այդ քաղաքում: Զարմանալի արվեստասեր ժողովուրդ է՝ երգ, պար, նկարչություն, թատրոն:

Սիրում եմ Լենինականը, որովհետև պահում է իր ճաշակի անկախությունը: Ջունի հեղինակությունների կույր հետևությունը: Այսինչ դերասանին Երևանն ընդունել է, հռչակել հանճար: Շատ լավ: Թող գա Լենինական, և մենք մեր հերթին դա կամ կհաստատենք, կամ կմերժենք:

Սիրում եմ այդ քաղաքն իր հումորի համար: Այնտեղ ծնվում են հումորով:

1953-ին մի խումբ թատերագետներ գնացել էինք Լենինական՝ ընդունելու «Կայծից» ներկայացումը: Տաք եղանակներ էին և մինչ ներկայացումը նստած էինք դրսի նստարաններին, ծառերի տակ: Աչքի էինք անցկացնում «Պրավդան», հետաքրքրվում կառավարության կազմի լուսանկարները: Մեր կողքին

տասներեք տարեկան տղա էր նստած, ձեռքին՝ «Պրավդան»։ Մոտեցավ ընկերը։

— Ի՞նչ կենես։

— Հե՛չ, «Պրավդա» կկարդամ։

— Ի՞նչ կա մեջը։

— Կրեմլի նոր կամանդն է։

Մի փոքր դադար։ Եվ հետո.

— Հըմը, մեջները գոլապահ չկա։

Ես սիրում եմ լենինականցուն իր քաղաքի հանդեպ ունեցած բացառիկ սիրո համար։

Վերջերս եղա Լենինականում և այցելեցի Մերկուրովի տուն-թանգարանը և Լենինական քաղաքի պատմության թանգարանը։ Մայրաքաղաքային մակարդակ, փառք ու պատիվ դրանց ստեղծողներին, գործն հովանավորողներին, թեև ինձ հայտնի է, որ այդ գործի գլուխ կանգնած է եղել Լ. Բարսեղյանը, մի անձնավորություն, որի եռանդը այնքան շատ է, որ կբավականացնի մի մեծ քաղաք գլխավորելու համար։ Բայց ես այդ թանգարանների պատմությունը չեմ անում, այլ պահանջ եմ զգում արտահայտելու մի զգացում, որից երկար ժամանակ չեմ կարողացել ազատվել։

Մերկուրովի թանգարանում բացատրություններ է տալիս մի աղջիկ Թամար անունով, մյուս թանգարանի բացատրող աղջկա անունն էր Գայանե։ Բոլոր թանգարաններում, այնպես էլ այստեղ, կազմվել է բացատրություն, և աղջիկներն անգիր են արել ու հիմա ասում են։ Այդպես է աշխարհի բոլոր թանգարաններում։ Բայց բերանացի արված բացատրությանը գումարվում էր Թամարի ու Գայանեի սրտի ձայնը, այն հուզականությունը, որից երևում էր, որ նրանք ոչ թե օտար նյութի մասին են պատմում, մի հույն Մերկուրովի՝ տաղանդավոր քանդակագործի, որ ճիշտ է, ծնվել է այս քաղաքում, բայց մեկնել և չի վերադարձել այլևս։ Նրանք պատմում են մի դար և ավելի առաջ գոյություն ունեցող Գյումրու մասին, նրա կենցաղի, արհեստների ու սովորույթների ու նաև այն մասին, թե երբ և ինչու քաղաքը կոչեցին Ալեքսանդրա թագուհու անվամբ։ Ինչպես են պատմում։ Ասես Մերկուրովը Թամարի հարազատն է, ու նրա ստեղծած քանդակները՝ իր օրինական հպարտության առարկան, նույնը և Գայանեն։

Ես կարող էի ասել, թե նրանց հայերենն ընտիր է, ռուսերենը կիրթ, անգլերենը՝ լավ, բայց չեմ ասի, որովհետև աշխարհիս երեսին կան թանգարանում աշխատող աղջիկներ, որ Թամարի ու Գայանեի իմացած երեք լեզվին ի վիճակի են գումարել մի երկուսն էլ:

Դա պարտականություն չէ, որ աղջիկներն անում են լավ: Նրանք պատմելիս իրենց ողջ ներքին աշխարհն են դնում իրենց պատմության մեջ, որովհետև գիտեն, որ իրենք հենց իրենց պատմածի ծնունդն են և իրենց մեջ ինչ որ կա բարի ու առաքինի՝ գյումրեցի ծնողներից է, դպրոցից, ուսուցիչներից, քաղաքից, Ալագյազից, Մանթաշից, Ախուրյան գետից...

Այս երկու աղջիկը երիտասարդ են այնքան, որ դեռ իրենց սիրտը ոչ ոքի չեն տվել: Բայց ինձ թվում է, թե այնքան մեծ են՝ հիասուն, հարյուր, հարյուր հիսուն տարեկան, որ ապրել են իրենց պատմած ժամանակներում:

Ինձ համար Գյումրին այն ժպիտն է ու այն սիրալիրությունը, որոնցով մարդիկ անծանոթին դիմավորում են խանութում, փողոցում, կամենալով օգտակար լինել, բնավ չհմանալով, թե ով ես, ինչ մարդ ես:

Ինձ համար Գյումրին այն վարսավիրն է, որ Խաչակյան ու Շիրազ անգիր գիտե:

Ինձ համար լենինականցին այն հեռախոսավարուհիներն են, որոնց խնդրում ես Երևանի Ձեզ միացնել, և նա Երևանի իր գործընկերուհու հետ խոսելիս, խնդրում է կարելույն չափ շտապ միացնել, որովհետև խնդրատուն ծեր է, և ինքը չի ուզում, որ հալևորը ոտի վրա կանգնած մնա ու սպասի: Ցավոք, ինձ հայտնի չեն այդ հեռախոսավարուհիների անունները, այլապես կհիշատակեի, որովհետև չորս անգամ եղա իրենց մոտ, տարբեր կանայք էին դրանք և չորս անգամ էլ ընդառաջեցին, նաև տեսա, թե այս կամ այն քաղաքի հետ միացնելու իրենց ջանքերն, եթե արդյունք չէր տալիս՝ ինչպես էին հաճախորդի հետ խոսում, որ չվհնի հանկարծ նրա սիրտը նեղվի:

Գյումրին ես սիրում եմ նաև այն պատճառով, որ այստեղ մինչև հիմա էլ անտարբեր չեն խոսում Արմեն Արմենյանի, Յոլակ Ամերիկյանի և Լևոն Զոհրաբյանի մասին: Գնահատում են այդ արվեստագետների ոչ միայն խոշոր տաղանդը, այլ

Նաև անդավաճան նվիրվածությունը հայրենի քաղաքին։ Սիրում է ու գնահատում իրեն «դավաճանած» Վարդուհի Վարդերևյանին և Մհեր Մկրտչյանին, քանի որ Երևան փոխադրվելով, հայրենի քաղաքի ճակատը պարզերես արին։

Գրում եմ ու մտածում, իսկ եթե հանկարծ, թեկուզ հրաշքով այնպես պատահեր, որ լենինականցի արվեստագետն ու գիտնականը, որտեղ էլ սովորեին, որտեղ էլ կատարելագործվեին, վերադառնային հայրենի Լենինական, գործեին այստեղ, պատկերացրեք ի՞նչ երևելի բան կլիներ։ Պատկերացրեք, որ Մերկուրովը վերադառնար ու ապրեր Ծննդավայրում, Արմեն Տիգրանյանը չկապեր իր կյանքը Թիֆլիսի հետ։ Նույնը Շարա Տալյանը, Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Արմենը,... Պատկերացրեք, որ Կահիրեից եկած Հակոբ Հակոբյանը Լենինականում մնար, չգաներ Երևան փոխադրվել ու նրա հետ Ռաֆայել Աթոյանը, ուրիշները նույնպես։ Լենինգրադում կրթություն ստանալուց հետո Լենինական վերադառնային և ոչ թե Մոսկվա մեկնեին Ասլամազյան քույրերը։ Այսօր մենք կունենայինք գունանկարչության լենինականյան դպրոց, միանգամայն տարբեր Երևանից, իր դեմքն ունեցող, իր խոսքն ու ճաշակը թելադրող։ Չէր լինի, արդյոք, Լենինականը Երևանի հանդեպ մի Դիժոն, որի գունանկարչական անկախությունը Փարիզի նկատմամբ հայտնի է։

Ես այնքան միամիտ չեմ, որ չհասկանամ, թե այդ բոլորը ցանկությամբ չի լինում, որ քաղաքներն ուժերի փոխանակություն են կատարում և դա կյանքի չծրագրված, չծրագրվող բնական ընթացք է, բայց ինձ մտահոգողն այն է, թե ինչն է պատճառը, որ հենց որ մեկն աչքը բացում է, ամեն ջանք գործ է դնում ու փոխադրվում Երևան՝ բոլոր ճանապարհներով։ Ես հասկանում եմ, որ Երևանը մայրաքաղաք է, իսկ բոլոր մայրաքաղաքներն էլ մեծ մասամբ հյութավորվում են ուրիշ քաղաքների հաշվին։ Հասկանում եմ, նույնիսկ բնական օրինաչափությունների շարքն եմ դասում դա, բայց այսպիսի՞ չափերով, որ Լենինականը Երևանին մարդ տա ու իրեն ոչինչ չթողնի։ Եվ դրա պատճառն արդյոք, այն քաղաքականությունը չէ, որ եթե կարճ ձևակերպենք, կլինի այսպես՝ ամեն ինչ մայրաքաղաքին և համարյա ոչինչ մյուս քաղաքներին։

Ինչու Վարդան Աճեմյանին Երևան տարան, թեև ինձ լավ
հայտնի են պատճառները, չէ՞ որ եթե մնար, ուրեմն այստեղ
կմնար և Արուս Ասրյանը ու եթե նրանց հետ մնային հայրե-
նի քաղաքից հեռացած դերասանները, ապա մինչև հիմա էլ
կունենայինք Երևանի հետ մրցակցող թատրոն, ինչպես դա
եղել է 30-ական թվականներին, մասամբ 40-ական թվա-
կաններին: Չէ որ սա մի թատրոն էր, որ ստեղծեց «Հատա-
կում», «Մեծապատիվ մուրացկաններ», «Կրեչինսկու հար-
սանիքը», «12-րդ գիշեր», «Արա Գեղեցիկ»: Բոլորն էլ գլուխ-
գործոցներ: Ո՞վ չգիտե, որ երևանցի թատերասերները հատ-
կապես ճանապարհվել են Լենինական՝ այդ ներկայացում-
ները նայելու:

Ինչո՞ւ հետո ամեն ինչ ուրիշ կերպ եղավ. նախ՝ ով որ
եկավ Աճեմյանին փոխարինելու՝ բնավ Աճեմյան չէր, բայց
նաև այն պատճառով, որ ի տարբերություն Աճեմյանի, որ
իրեն լենինականցի էր համարում և մտքով չէր անցնում այլ
քաղաք փոխադրվել: Նրան փոխարինողները եկան այստեղ
մի երկու-երեք, լավագույն դեպքում հինգ տարի մնալու նա-
խապես ընդունած որոշումով: Նրանք եկել էին և գիտեին, որ
մի օր գնալու են, ուստի և չստեղծեցին այն, ինչ ստեղծում
էր Աճեմյանը ոչ միայն այն պատճառով, որ իրենք Աճեմյանը
չէին, դա ինքնին, այլ նաև այն պատճառով, որ նրանց հոգու
անձնագրում լենինականյան կնիքը վկայում էր ժամանակա-
վոր բնակության: Ժամանակավոր հոգեբանությունն ստեղծում
է ժամանակավոր արժեք: Ես չեմ ժխտում մի քանի տարով
եկողների վաստակը: Ես պնդում եմ, որ եկողի աչքը չպիտի
Երևանին մնա, որպեսզի ինքն ըստ էության զգա, թե ինչ է
Լենինականը, ոչ միայն հասկանա, այլ զգա, թե ինչ է Ալեք-
սանդրապոլը, Գյումրին, վերջապես և այդ զգացողությունից
էլ ծնվի մի մեծ սեր...

Թող պատկերացնի ընթերցողը, որ գեղարվեստական կյանքի
ինչ կենտրոն կլիներ Լենինականը, եթե հիշածս և ուրիշ ուժեր
մնային հայրենի քաղաքում, մանավանդ որ նկատի չունեմ
միայն Լենինականում ծնվածներին, նաև նրանց, որոնք վա-
ղուց թե Բաթումից եկած, Ղարսում ծնված, բայց իբրև
Լենինականցի լինեն, թե Բաթումից եկած,
Լենինականում են բացել:
արվեստագետ իրենց աչքը Լենինականում են բացել:
Ես գիտեմ, որ իմ գրածն իրական հիմքերից զուրկ է, ան-

հընար մի բան, բայց ես գիտեմ, որ ամեն քաղաք ոչ միայն արտագաղթ ունի, այլ նաև ներգաղթ, ի դեպ ներգաղթ ասելով նկատի չունեմ գյուղից եկողներին։

Այս էլ ասեմ, որ երբ մոտեցել էի կյանքիս կես դարին, խենթ ծրագիր հղացավ միտքս, կրկնում եմ ոչ այնքան լենինականցի լինելուս պատճառով, որքան լուսավորական նպատակներով։

Գնալ կենտկոմի առաջին քարտուղարի մոտ և առնել նրա համաձայնությունը, ունենալ նաև Լենինականի քարտուղարի հոժար կամքը, որ 200 հոգով գնանք Լենինական հինգ տարով։ Բոլորիս գործ են տալիս, բոլորիս ապահովում են բնակարաններով, իսկ նրանց համար, ով որոշում է մշտապես մնալ՝ կառուցում են առանձնատուն, մի փոքրիկ պարտեզ էլ հետը։ Թող հիմնավորվեն, թող գյումրիանան։ Գնանք մշակութային շարժում առաջ բերելու, դասախոսներ լինենք մանկավարժականում։ Հրապարակային դասախոսությունները ուրբաթ օր լինի նույն դահլիճում և միշտ նույն ժամին։ Կազմակերպենք գրական-գեղարվեստական ասուլիսներ։ Կազմակերպենք սիմֆոնիկ նվագախումբ, կամերային երաժշտության անսամբլ, աշուղական տոնահանդես-մրցույթներով հանդերձ, բանաստեղծության երեկոներ, նկարչական ցուցահանդեսներ, հումորի տուն, վերականգնենք ժողովրդական ճարտարապետության քարեղեն շենքերը, քաղաքի ռեկլամների անճաշակ դրսևորումների առաջն առնենք։ Ունենանք շաբաթը մի անգամ լույս տեսնող «Գրականություն և արվեստ» երկշաբթերթ, կազմակերպենք «Հայաստան» հրատարակչության մասնաճյուղ, շատ չէ, տարին յոթ գիրք հրատարակենք, ունենանք «Գյումրի» կամ «Շիրակ» անունով, եթե ոչ ամսաթերթ, ապա տարին չորս անգամ լույս տեսնող ալմանախ։

Եվ այլն, և այլն։

Մտածում էի, որ գնում ենք հինգ տարով, բայց արի ու տես, որ մեկին և մյուսին կարող են քաղաքն ու իրենց գործն այդ քաղաքում այնպես հրապուրել, որ մնան ընդհանրապես։ Մտածում էի, որ գնում ենք հինգ տարով, բայց մեր մեջ ամուրի երիտասարդներ կլինեն, որոնք գուցեև սիրահարվեն, ամուսնանան, տուն-տեղ դնեն և չուզենան վերադառնալ Երևան։

Պատմեցի այս մասին ընկերոջս, ծիծաղեց վրաս, ինձ անվաննեց կյանքի ոեալ դգացողությունից դուրկ մարդ. հետո լրջացավ և ասաց, որ իմ ծրագիրն անիրագործելի է, թեկուզ այն պատճառով, որ ոչ մի դեկավարություն չի համաձայնի և չի արտոնի այդպիսի ռոմանտիկ ծրագրի իրագործում, թեկուզև որպես փորձ: Իսկ եթե անգամ թույլ տան, ապա դու ոչ թե երկու հարյուր, այլ տասը մարդու էլ չես կարողանա համոզել, որ թողնեն Երևանն ու լենինական գնան հինգ տարով: Քո մտածածը ցնորք է, սիրելիս:

Ես նման էի ցնորամիտ մարդու:

Հ. Գ. Այս հատվածը գրվել է 1984-ից ավելի ուշ և այն էլ տարբեր ժամանակներ: Գրքիս խմբագրական նշումներն աչքի անցկացնելիս՝ վերստին կարդացի ծննդավայրիս գլխին եկած ահավոր աղետից հետո: Ողբերգություն՝ չտեսնված, ևկած ահավոր աղետից հետո: Ողբերգություն՝ չտեսնված, լսված: Սիրտս փուլ է գալիս դրա մասին մտածելիս: Շատ փորձություններ ենք տարել, այս մեկն էլ կտանենք: Բոլորիս հույսը ժողովրդի տոկունության վրա է, մանավանդ որ մեր մեջքին են ոչ միայն մեր երկրի բոլոր ժողովուրդները, այլ՝ ամբողջ աշխարհը:

Վերածնության ճանապարհին օրհնված եղիր, իմ ծննդավայր:

ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Երբ ռադիո-բարձրախոսները ազդարարել են, որ պատերազմն ավարտված է, ես հիվանդանոցում խոր քուն էի մտել: Արթնացա ականջներիս հասած անսովոր աղմուկից: Ես չէի հասկանում, թե ինչ է կատարվում շուրջս: Փողոցներում աղմուկ էր, հիվանդանոցում՝ գոռում-գոչյուն, աղաղակ: Սենյակ մտավ մեր ամենաերիտասարդ բուժքույրը և, տեսնելով իմ շփոթ հայացքը, հասկացավ, որ անտեղյակ եմ, հայտնեց նորությունը: Ես վեր թռա տեղիցս, փաթաթվեցի աղջկան և համբուրեցի: Նա էլ, որ, երևի մի տասնհինգ տարով ինձանից փոքր էր, պառավ կանանց նման համբուրեց ճակատս: Այն ժամանակ չհասկացա, բայց հիմա, որ գրում եմ, հասկանում եմ, որ այդ պահին նա տարիք չուներ, և՛ քույր էր, և՛ դուստր, և՛ մայր էր, և՛ տատ:

Ու թեև ժպիտ կար դեմքին, ուրախություն, բայց աչքերի մեջ աննկարագրելի տխրություն էր նստած: Ես ո՛չ հասկացա, ո՛չ էլ հարցրի, թե ինչու է տխուր: Մյուս օրը միայն իմացա, որ բուժքրոջ փեսացուն, որը հավիտենական սիրո երդում էր տվել նրան և գնացել ռազմաճակատ, երկու թե երեք նամակից հետո ո՛չ մի լուր չէր տվել, թե ո՞ւր է, ո՛չ էլ ռազմի ընկերներն էին հայտնել, թե ինչ է պատահել նրան, ո՛չ էլ սև թուղթ էր եկել: Երեք տարուց ավելի է այս աղջիկն ապրում է անորոշ զգացումով:

Ես դուրս թռա սենյակից, փաթաթվեցի հիվանդներին, բժիշկներին, ով հանդիպում էր: Մի տասնհինգ րոպե հետո հիվանդանոցում ոչ մի հիվանդ չէր մնացել: Բոլորն իրենց փողոց էին գցել: Բոլորն անխտիր, ով տաքություն ուներ, ում պատվիրված էր ոչ մի դեպքում անկողնուց չելնել: Ոչ ոք չէր ուզում անմասն մնալ համաժողովրդական ցնծությունից: Ջորս կողմը երաժշտություն էր:

Մեր հիվանդանոցը Աբովյան փողոցում էր, ու հենց որ ես փողոցում հայտնվեցի, մարդկային մի ծով աղմուկ-աղաղակով շարժվում էր դեպի Լենինի հրապարակ: Կարծես մարդիկ խոսքը մեկ արած լինեին և գիտեին թե ուր և ինչի են գնում: Ճանաչում էին միմյանց, թե ոչ, ի՞նչ նշանակություն ուներ, ողջագուրվում էին: Այդ օրը ծանոթ ու բարեկամ չկար, եղածը, պատահածը վերաբերում էր ամենքին, և ոչ ոք չէր կարող մարդկանց համակած խանդավառության սահմանները որոշել:

Թե ինչ էր կատարվում հրապարակում, ասելն ու նկարագրելը իմ ուժերից վեր է: Մի տեղ երգում էին, մի տեղ շրջան կազմած պարում, մի տեղ մեկը պատվանդան էր գտել, շուրջը համախմբել էր մարդկանց բազմություն՝ ճառ էր ասում: Մարդիկ շրջան էին կազմել ու իրենց մեջ առել մի աղջկա և մի երիտասարդ տղայի, երևի երկուսն էլ ուսանող, բանաստեղծություններ էին կարդում: Մեկ մեկն էր ասում, հետո մյուսը՝ Գեղամ Սարյան, Նաիրի Զարյան, Հովհաննես Շիրազ, և վերջ չուներ: Ոչ ոք չէր զարմանում այն անկեղծ ապրումի, այն անկեղծ ոգևորության վրա, որով կարդում էին այնպես, ասես, իրենք լինեին այդ չափածոյի հեղինակը:

Մեկ էլ խանգարվեց այդ ինքնագործ համերգը, շրջան

խուժեց վաթսունն անց կին, մազերը ցիրուցան, վառվող աչքերի անհամատ կրակով.

— Նորություն, ուրախ նորություն,— գոռում էր նա, մեկ սրան դառնալով, մեկ մյուսին,— ինձ հիմա հայտնեցին, ասացին, որ ոչ ոքի չասեմ, բայց ես ինչպես կարող եմ լռել, ինչպես կարելի է մարդկանցից թաքցնել այդպիսի նորությունը, պատերազմը վերջացել է, ընկերներ: Մարդիկ, ուրախացեք, երգեք ու դափ զարկեք, ես պարեմ...

Թոռները, նրանց հետ մի երկու հարևանուհի կամ գուցե հարազատներ, ուզում էին պահել նրան, խաղաղեցնել, բայց չէր լինում, ուժերը կրկնապատկվել էին:

Ուրախությունից ցնորվել էր...

Ամուսինն ու չորս արու զավակները ռազմաճակատում էին: Ոչ մեկից լուր չուներ: Գիշերները չէր քնում, աչքը պահում էր դռանը, հիմա կբացվի և մեկը մյուսի հետևից ներս կգան հինգն էլ, հերոսացած, կրծքներին շքանշաններ... Մի գիշեր չէր դա, այլ չորս տարի, գումարեք ու բազմապատկեք չորս տարվա 365 օրերը: Ցերեկը լաց չէր լինում, հուսահատ խոսք չէր ասում, միշտ ժպիտը դեմքին էր, որ հանկարծ թոռները չիմանան, թե ի՞նչ տանջալի ալեկոծումների մեջ է իր հոգին ու չվհատվեն, իսկ գիշերը, երբ նրանք քնած էին, աչքը դռանն էր, իսկ արցունքներն առու դառած վազում էին:

Շատերն էին լալիս: Ուրախության արցունքներ էին: Շատերն էին լալիս, երանի տալով այն մայրերին, որոնք զավակներից լուր ունեին: Եվ այդ արցունքների մեջ, ինչպես ուրախության ու ոգևորության կանչերի մեջ վհ տրամադրություն կար:

Հերոսացած ժողովուրդն էր տոնում իր հաղթությունը, ըստ մի դրքի տվյալների՝ երկու միլիոնանոց հայ ժողովրդից չորս հարյուր հազար մարդ ռազմի դաշտ է գնացել: Զոհվածների թիվը չգիտեմ, բայց գիտեմ, որ այս պատերազմը որպես համաշխարհային պատմական իրադարձություն, ամենքիս սրտի միջով է անցել, դարձել բոլորիս համար անձնական զգացում: Պատերազմը պատերազմ չհայտարարող երկրի ժողովուրդների համար բարոյական քննություն է: Հաղթում է ոչ միայն նա, ով շատ զենք ու ավելի կատարյալ զենք ունի, հաղթում

է ոչ միայն նա, ով քաջեր շատ ունի, հաղթում է նա, ով բարոյապես ամուր է։

Երեկոյան դեմ էր, որ վերադարձա հիվանդանոց, իսկ մինչ այդ տուն գնացի, մերոնց և հարևանների ուրախության սեղանին բաժակ բարձրացրի։ Սաստիկ հոգնած էի, անկողնուն ընկնելն ու շորերով քնելս մեկ եղավ։ Երազումս տեսա Ավետիք Իսահակյանին և Դերենիկ Դեմիրճյանին. վարպետի աչքերն էին ժպտում, Դեմիրճյանի շրթունքները...

ՀԵՐՈՍԱՅԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

1945 թվականը եզրափակվելու վրա էր, որ քաղաքով մեկ լուր տարածվեց՝ Փափազյանը ժամանել է Երևան։ Պատերազմը սկսվելուց ի վեր չէինք տեսել արտիստին, գիտեինք, որ պաշարված Լենինգրադում է։ Վերջապես իմացանք, որ հայրենի Երևանում է։ Այս ուրախալի լուրը, սակայն, մթագնվեց այլ լուրով, որ շատ արագ տարածվեց և մայրաքաղաքի գեղարվեստասեր մտավորականությունը վրդովված խոսում էր այդ մասին։

Փափազյանը, Լենինգրադից մեկնելիս, Երևան գալու ճանապարհին կանգ է առել Բաքվում, ներկայացումներ տվել, խաղացել Օթելլո ու Համլետ, ունեցել շոնդալի հաջողություն։ Բաքվից դերասանը հեռագիր է ուղարկել Արմեն Գուլակյանին, որ այդ ժամանակ Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավարն էր, և խնդրել մի քանի ներկայացման համաձայնություն։

Գուլակյանը, նկատի ունենալով թատրոնում եղած խմորումները, հավաքել է դերասանական ավագանուն և հաղորդել Փափազյանի Երևան գալու ցանկության մասին ու հարցրել՝ ի՞նչ կարծիքի են, ի՞նչ պատասխանեն՝ այո՞, թե ոչ։

Մեր ավագ դերասաններից մեկը, որ այդ ժամանակ ազդեցիկ դեմք էր թատրոնում, այն միտքն է հայտնել, թե պետք է վերջ տալ Փափազյանի հյուրախաղերին ընդհանրապես։ Պատճառաբանելով, թե նրա գալով խախտվում են մեր թատրոնի անսամբլային ավանդույթները և ընդհանրապես հյու-

բախտն անհատապաշտական թատրոնից մնացած ժառանգություն է, որը, բացի վնասից, ոչինչ չի կարող տալ մեզ:

Գուլակյանն ուզում է իմանալ մյուսների կարծիքը: Գրեթե բոլորը նույն կարծիքի են եղել՝ չպետք է ընդառաջել Փափազյանին:

Մեկն էլ թե՝

— Եղբայր, հայ դերասան է, թող Երևան գա ու մեզ հետ միասին լուծ քաշի, թե չէ, չգիտեմ էլ ինչպես ասեմ, գալիս է, հետո անհետանում, մի տարի անցնում է, մեկ էլ նորից է երևում:

Ձայն է խնդրում Հրաչյա Ներսիսյանը:

— Ինչ որ ասում եք, ճիշտ եք ասում, բայց մի մոռացեք, որ դիմողը Փափազյանն է: Կարծում եմ, որ նրա խնդրանքը դարտավոր ենք կատարել:

Հրաչյային է միանում նաև Ռուզան Վարդանյանը:

Քննարկվող հարցը քվերակության է դրվում: Մեծ մասը ձայն է տալիս մերժելու առաջարկին:

Կարելի է պատկերացնել Փափազյանի հոգեկան վիճակը, երբ ստացել է մերժման հեռագիրը:

Տարիներ անց հարց եմ տվել, թե ինչ ապրում ունեցավ:

— Կարդացե՞լ ես «Կորիոլանը»: Այո՛: Հիշիր ուրեմն այն տեսարանը, երբ զրկում են նրան հայրենի քաղաքում ապրելու իրավունքից: Նույն դառնացած հոգին ես էի: Ինչո՞ւ Երևանը այդպես շուտ մոռացավ, որ ես բարձր պահեցի իր պատիվը 1928-ին Մոսկվայում: Ինչո՞ւ մոռացավ այն հաղթական դափնին, որով պսակեցի Երևանի ճակատը 1932-ին, փարիզյան հյուրախաղերի ժամանակ: Ո՞ր մեկն ասեմ:

Արտիստը թեև Երևան էր ասում, բայց հասկանում էր Սունդուկյանի անվան թատրոնը, երևի լավ իմանալով նաև, թե դերասանների ինչ խումբ է գործել իր դեմ...

Մի խոսքով՝ հայ թատրոնի ամենամեծ դերասանը, հնգամյա բացակայությունից հետո փակ գտնելով մայր թատրոնի դռներն իր առաջ, հեռագիր է ուղարկել Հայֆիլհարմոնիա՝ երգահան Միքայել Մազմանյանին, թե կամենում է Երևան գալ երկու կոնցերտով և նա էլ պատասխանել է՝ «Համեցեք, մեր գլխի վրա տեղ ունեք»:

Փափազյանը հայտնվեց Երևանում, տվեց երկու կոնցերտ

և շատ մարդ, որ ներկա չէր եղել կուլտուրայի տան Փափազյանի ելույթին, լսել էր, թե արվեստի ինչ հրաշք է կատարվել «Մակբեթի» մենախոսությունը կարդալիս: Վրդովմունքի ալիք բարձրացավ մտավորականության մեջ և այդ դժգոհության վերջնական ձևակերպումը կատարեց Մարտիրոս Սարյանը, որ մի հավաքույթի ժամանակ հանդիպելով Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին, պատմել է Փափազյանի գլխին եկած պատմությունը, հայտնել շատերի դժգոհությունը, բացատրել մերժման բուն պատճառները և խնդրել անձամբ միջամտել այդ հարցի կարգավորմանը: Փափազյանին հնարավորություն տվին, դա արդեն 1946-ի հունվարին էր, շորս ներկայացում տալու, խաղալու Համլետ և Օթելլո: Թե ինչ մեծ հաջողություն ունեցավ Փափազյանը՝ այդ արդեն հայտնի է և դրա մասին շատ է գրվել մամուլում:

Ի լրումն այս բոլորի՝ այդ օրերին քաղաքում պատում էին լուրեր այն մասին, թե Փափազյանն ինչպես է պահել իրեն Լենինգրադում: Ասում էին, թե նրան առաջարկել են հեռանալ պաշարված քաղաքից, բայց նա իր քաղաքացիական պարտքն է համարել մնալ և մի խումբ ռուս դերասանների գլուխն անցած հայրենասիրական գործ է տեսել, հաճախ եղել է զորամասերում ու իր ելույթներով տոկուն պահել մարտնչող զորքի ոգին:

Ի՞նչն էր ճիշտ, ինչը՝ ոչ, ոչ ոք չգիտեր, բայց Փափազյանն այդ օրերին ոչ միայն մեծ արտիստ էր, անպակաս փայլով, այլև հերոսացած անձ, լեգենդար Լենինգրադի լեգենդար մարդկանցից, որ արժանի էր խոր հարգանքի: Այս բոլորը պատմվել է հիացմունքով: Ժողովուրդը սիրում է հերոսներ ունենալ: Մի երկու գույն էլ հավելել իրականությանը, գուցեև, ով իմանա, ի հեճուկս Փափազյանի առաջ արգելքներ հարուցող դերասանների:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Թատերական գործիչների պատվիրակություն մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Համառուսական թատերական ընկերության համագումարին:

1946-ին էր։

Պատվիրակության կազմի մեջ էին Գուրգեն Ջանիբեկյանը, Տիգրան Շամիրխանյանը, Սարգիս Մելիքսեթյանը, Սերգեյ Բարսեղյանը, Ներսես Կագրամանովը ու ես։ Երևանից մեզ հետ էր Մոսկվա վերադարձող թատերագետ Իհոան Ալտմանը։

Համագումարի բացման օրը դերասանի տան ճեմասրահում շատ մարդ էր հավաքվել։ Եկել էին երկրի տարբեր ծայրերից։ Բազմազգ հավաքույթ էր դա, բայց կենտրոնում ռուսական բեմի վարպետներն էին։ Հայտնվեց Յաբլոչկինան, անմիջապես շրջապատվեց ու կորավ ծանոթ և անծանոթ մարդկանց մեջ։ Յաբլոչկինան ընկերության անփոփոխ նախագահն էր, սիրված արվեստագետ և մարդ։ Մեկ էլ դռների մեջ երևաց և միանգամից բոլորի ուշադրությունը գրավեց հայտնի դերասան Յուրի Յուրևը, որը հայտնի էր շատ դերերով, հատկապես՝ Արբենինի դերակատարումով։

Երբ Յուրևը երևաց, հայկական պատվիրակությունը պատի տակ էր կանգնած։ Չեմ հիշում, թե ով ծանոթացրեց։ Հաղթանդամ էր, տեսուկ, ժպտերես։ Դա մեծ պատիվ համարեցինք և հիմա չեմ հիշում, թե մեզանից ով մատնացույց անելով Գուրգեն Ջանիբեկյանին, ասաց, որ հայ բեմի Օթելլոն է։

— Հետաքրքիր է։ Դե, ցույց տվեք, ուրախ կլինենք տեսնել։

Ջանիբեկյանն իր Օթելլոն ներկայացնելու առիթը չունեցավ, բայց Հայկական թատերական ընկերության անունից ողջույնի ջերմ խոսք ասաց։

Մեր պատվիրակությունը հարուստ էր այցելություններով. եղանք Հակոբ Խաչատրյանի տանը, որտեղ էին Մարիետա Շահինյանը և Յու. Յուզովսկին։ Երեքով այցելեցինք Ալեքսեյ Ջիվելեգովին։ Հրավիրեցին Իհոան Ալտմանը, Գևորգ Գոյանը, Արշալույս Արշարունին։ Ջերմ հանդիպումներ էին բոլորը։

Բացի թանգարաններում ու պատկերասրահներում լինելուց, եղանք երկու ներկայացման՝ Մոսկվայի գեղարվեստական թատրոնում՝ «Երեք քույր», որի թողած տպավորությունը մինչև հիմա էլ անջնջելի է, մեկ էլ նայեցինք Մ. Երմոլովայի անվան նոր բացված թատրոնում՝ Մալյուգինի «Հին բարեկամները»։ Այս ներկայացումը շնչում էր երիտասարդական թարմությամբ։

ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ

Միությունների տան սյունազարդ դահլիճում դռան մոտով անցնելիս ազդագիր էր փակցված՝ պոեզիայի երեկո. մեր հյուրն են Լենինգրադի բանաստեղծները:

Ընկերներս հրաժարվեցին միանալ ինձ: Ես այդ երեկո բախտավոր ժամեր ունեցա: Տեսա Աննա Ախմատովային, սիրելի բանաստեղծուհուն, կարդում էր իր չափածոն: Խոստովանություն լինի, երեկոյի առանցքը Աննա Անդրեևնան էր, բեմում կանգնած էր, թեև հուզված, բայց հպարտ, անկախ: Կանգնած էր սևազգեստ, դունատ: Քիչ կարդաց, մի քանի բանաստեղծություն: Կարդում էր մեղմ, հոգուց բխող, համակող և հափշտակող ձայնով: Դահլիճի տերն ու տիրականն էր մեղմաձայն տիկինը՝ փխրուն սրտով, հոգեկան թափանցումով, որտեղ ներդաշնակ համագործակցում էին պարզությունն ու խորությունը, երկինքն ու երկիրը:

Չեմ կարող նկարագրել, թե ինչպես էր հուզված ողջ դահլիճը, հուզված ու ոգևորված: Մոռացել էին բոլորին: Ծափեր, ։անչեր: Ասես նրա հոբելյանը լիներ:

Ինչպե՞ս բացատրել:

Անշուշտ իր բարձր արժանիքների գնահատությամբ: Բայց երևի միայն դա չէր պատճառը: Կարոտո՞վ: Երևի: Ախմատովան ապրում էր Լենինգրադում, Մոսկվայում լինում էր մեկ-մեկ միայն: Թերևս նրա մեջ տեսնում էին նաև Գումիլյովին, որ իր ամուսինն էր և անարդարորեն գնդակահարված:

Մի ուրիշ բան էլ կար:

Ժողովրդի ներզգացողությունը խորն է և ստույգ: Ահա այդ ներզգացողությունն էլ երեկոյի մասնակիցներին կարծես, ասելիս լիներ, թե մի քանի ամիս հետո ամպեր են կուտակվելու և ինչ ամպրոպ է պայթելու բանաստեղծուհու գլխին: Ասես մի ներքին ձայն հուշում էր նրանց, որ Աննա Ախմատովան, որ կենդանի դասական է վաղուց, դուրս է շպրտվելու գրողների միության շարքերից...

Զգում էին, ասես, մարդիկ, թե ինչ սև օրեր են գալու ու իրենց հիացմունքն էին հայտնում՝ անզուսպ ու խելահեղ...

ՍՈՒՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԸ ՀԱՐՎԱԾԻ ՆԵՐՔՈ

Ես հիշատակարան պահելու սովորություն չունեմ։ 1928-ին, երբ պլրոցական աշակերտներս մեկնեցինք Մոսկվա ու Լենինգրադ, որոշեցի հիշատակարան պահել։ Մի ամիս չանցած, թողի։ Հասկացա, որ հիշատակարան պահողը պետք է համառություն ունենա, հետևողականություն, որ չունեմ։ Բայց գրառումներ երբեմն-երբեմն արել եմ, մանավանդ էքքերմանի «Գյոթեի զրույցներին» ծանոթանալուց հետո, այսինքն՝ 1933-ից սկսած։

Մի թղթապանակ ունեմ, որտեղ կան գրառումներ, որոնցից տեղն ընկած ժամանակ օգտվել եմ։ Հիմա էլ կա այդ թղթապանակը, բայց առանց այն գրառումների որոնք այս կամ այն կերպ օգտագործվել են։ Սովորությանս համաձայն՝ մեքենագրվելուց հետո գրածս ձեռագիրը ոչնչացրել եմ։ Իմ հրապարակած ոչ մի գրվածքի ձեռագիրը չկա թղթերիս մեջ։ Ես ո՛չ Տերյան եմ, ո՛չ էլ Չարենց, որ իմ ձեռագիրը որևէ մեկին հետաքրքրի։

Հիշատակածս թղթապանակից բավական թվով էջեր տեղ են գտել «Ինքնապատումի» մեջ, շատերն էլ, խմբագրիս պահանջով դուրս են մնացել և կրկին վերադարձել թղթապանակ։

Ահա մի քանի թերթիկ այդ թղթապանակից։ Թերթիկի վրա կա երկու թվագրություն՝ 1944 և 1946։

1944-ի աշունն էր։ Հոկտեմբեր ամիսը։ Հեռախոսի զանգ։ Վերցնում եմ լսափողը։ Ականջիս հասնում է Սուրեն Քոչարյանի հաճելի բարիտոնը։ Ուրեմն նորից կհանդիպենք, նորից զրույցներ կունենանք և կուրախանանք իրարով։ Նա գիտե, որ ես իր արվեստի երկրպագուներից եմ և ինքն էլ, եթե դատելու լինեմ իր խոստովանություններից, այն մարդկանցից է, որին ուրախացնում են իմ հաջողությունները։

Եկել է Երևան ու հետը բերել «Վերք Հայաստանիի» կոմպոզիցիան, մի ամսից համերգ է տալու, բայց մինչև այդ ցանկություն ունի կարդալու ընկերական նեղ շրջանակում՝ Աբովյանի մասնագետների առաջ, և տալիս է անուններ՝ Երվանդ Շահազիզ, Հրայր Մուրադյան։ Խնդրում է կազմակերպել այդ գործը, նշանակել օրն ու տեղը և տեղյակ պահել

իրեն: Ես տալիս եմ այլ անուններ, բայց նա մնում է այն կարծիքի, որ երեքս բավական ենք:

Հրայր Մուրադյանին հեշտ էր համոզել, բուռն ու խանդավառվող մարդ, չէր մերժի: Դժվարը Երվանդ Շահազիզն էր: Կարելի եղավ նրան էլ համոզել: Եվ հոկտեմբերի 14-ին՝ Հայպետհրատում՝ գեղարվեստական գրականության բաժնի առանձնասենյակում, փակվեցինք, և Սուրեն Քոչարյանը կարդաց իր կոմպոզիցիան: Դա ամոնք չէր, այլ պարզ ընթերցանություն:

Երբ վերջացրեց, Հրայրն ու ես լուռ մնացինք, որ մեր ավագ ընկերը՝ Շահազիզն, ասի իր խոսքը:

Նա ասաց, որ իր համար Աբովյանի ամեն մի տողը, բառն անգամ սրբություն է և իրեն դժվար է հաշտվել կրճատումների, տեղափոխումների հետ: Ժպտուն աչքերը դարձրեց Սուրեն Քոչարյանի կողմը և ավելացրեց, թե ինքը միաժամանակ հասկանում է արտիստի նպատակը, ինչպես նաև այն, որ վեպն ամբողջությամբ կարդացվել չի կարող: Հրայրը համաձայն չէր, բայց նա չուզեց հակադրվել և, փափկանկատ լինելով Շահազիզի նկատմամբ, որ բոլորիս ուսուցիչ էր գալիս, մի քանի գործնական խորհուրդ տվեց: Նույն դիրքը բռնեցի նաև ես, ասելով, թե ամոնքի վարպետին հետաքրքրողը մասնագետների կարծիքն է՝ ինքը հո չի մեղանչել Աբովյանի ոգու դեմ: Հրայրն ու ես հավատացրինք, որ «Վերքի» ոգին պահպանված է: Շահազիզն էլ համաձայնեց մեզ հետ: Մենք արտիստին հաջողության բարեմաղթություններ արինք և նա ասաց, որ ունենալով հարգելի մասնագետների օրհնությունը, իր համար շատ հաճելի կլիներ մեր ներկայությունը առաջին իսկ համերգին:

Առաջին համերգը նշանակված էր նոյեմբերի 25-ին: Դահլիճը լեփ-լեցուն էր. մտավորականության հայտնի դեմքեր կային: Շատ երիտասարդություն էր եկել: Կային նաև պաշտոնական անձինք:

Համերգը սկսվեց:

Քոչարյանը բեմ եկավ ու, ինչպես միշտ, ծափահարություններ եղան: Ինչպես սովորությունն է, նստեց բազկաթոռին, հանեց ակնոցն ու դրեց ծոցագրպանը: Այս անգամ չզգացի

այն ինքնավստահությունը, որով նա միշտ արտաբերել է առաջին խոսքը։

Հուզված էր։

Ինչպե՞ս է անցնելու համերգը։ Կկարողանա՞ հասցնել իր միտքն ունկնդրին։ Անցավ մի քանի րոպե։ Դահլիճը, չեմ սխալվի, եթե ասեմ, բոլորն անխտիր, ամոնքող վարպետի բռան մեջ էին։ Ու Սուրեն Քոչարյանը մեկ հանդարտ պատմող էր, մեկ կատակող, մեկ քնարական զեղումներին գերի, մեկ հուզախռով ոգի, մեկ էլ խանդավառ հայրենասեր, որ կոչ է անում երկիրն ու պատմությունը իմանալ, սիրել։ Ունկընդիրը, շունչը պահած, հետևելով արտիստին՝ ամբողջապես ենթարկվել է այն մթնոլորտին, որ գծել է Քոչարյանը։ Նվ հանկարծ տեղի ունեցավ ճակատագրականը։

Հասավ այն կետը, ևս կասեի համերգի կիզակետը, երբ Սուրեն Քոչարյանը, ինչպես գրված է Աբովյանի վեպում, ինքը Աբովյան դառած, ոգեշունչ խոսեց մայրենի լեզուն սիրելու մասին։ Նրա ձայնը քաղցր էր հնչում, շեշտը՝ համոզիչ, ու հանկարծ ոտքի կանգնեց և գոչեց՝ «Ղայիմ պահեք հայոց լեզուն»... Դա կոչ էր, իսկական պատգամ... Դահլիճը, ասես ինչ-որ մեկի հրամանով, ոտքի կանգնեց ու ծափահարեց։ Դահլիճը փոթորկված էր։ Խանդավառ ոգևորություն էր համակել ամենքին։ Մեկ էլ իմ աչքով ընկավ ինձանից երկու շարք առաջ կանգնած բարձր պաշտոնյան, որ նույնպես ոտքի էր կանգնել, բայց ծափ չէր տալիս։ Նկատեցի, բայց կարևորություն չտվեցի դրան, ո՛չ էլ եզրակացություն կատարեցի։

Հետո դահլիճը հանդարտվեց։ Համերգը շարունակվեց։ Որքան տևեց, միտս չէ։ Բայց երբ ավարտվեց, դահլիճում հնչեցին խանդավառ կանչեր, բուռն ծափեր։

Քոչարյանի շատ համերգների եմ եղել և գրեթե միշտ ականատես նրա մեծ հաջողության, բայց այսպիսի անսովոր հաջողություն չեմ հիշում։ Քոչարյանը երջանիկ էր զգում իրեն։ Հասել էր նպատակին։

Մի երկու օրից լույս տեսավ Խորեն Սարգսյանի գովաբանական հոդվածը նվիրված «Վերքի» համերգին։ Այս էլ ասեմ, որ Սուրեն Քոչարյանի ամոնքի առաջին քաջալերողներից էր Խորեն Սարգսյանը։

Մի անախորժ լուր հասավ։

Հանրապետության վերադասը դժգոհ է Սուրեն Քոչարյանից: Մեղմ է ասված: Վրդովված է արվեստագետի դեմ, նրա այս կոմպոզիցիան արգելել է բեմ հանել, հայտարարելով ապգայնամոլության արտահայտություն:

Օրեր անց Հայաստանի գրողների միության քննադատական միավորման նիստ է հրավիրվել: Ես քաղաքում չէի: Քննարկվել է «Վերքի» Սուրեն Քոչարյանի կոմպոզիցիան: Ներածական խոսքով հանդես է եկել Կենտկոմի քարտուղար Զավեն Գրիգորյանը, գաղափարապես արատավոր որակելով կոմպոզիցիան: Խոսել են շատերը, նաև Սահակ Կարապետյանը և պաշտպանել հայտնված պաշտոնական տեսակետը: Խոսել են շատերը և բոլորն էլ, մեկն ավել, մյուսը պակաս, քննադատել են արվեստագետին: Սուրեն Քոչարյանը պաշտպանվելու փորձ է արել, բայց ապարդյուն: Հարձակվել են Խորեն Սարգսյանի վրա, և նա ստիպված նահանջել է...

Երկու տարի անցավ և Հայաստանի գրողների միության երկրորդ համագումարում լսեցինք Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պրոպագանդայի քարտուղար Զավեն Գրիգորյանի ճառը, որին ծանոթանալով, կարելի էր հասկանալ նրա գաղափարական դիրքորոշումը «Վերքի» կոմպոզիցիայի նկատմամբ:

Բավական ընդարձակ ճառում նա անհրաժեշտ համարեց կանգ առնել մեր մտավորականության, հատկապես գրողների միջավայրում տիրող անառողջ տրամադրությունների վրա, համարելով դրանք ազգայնամոլական միտումներ: Այդ հարցերից մեկը հայոց լեզվի հարցն է: Նա ասաց, որ մոտիկ անցյալում որոշ գրողներ սկսեցին անհանգստանալ մեր լեզվի համար, գրեցին ոտանավորներ, որտեղ իրենց երեխաներին պատգամ էին տալիս ամուր պահել հայոց լեզուն:

Այս ասելիս նա, ըստ երևույթին, հիշեց «Վերքի» կոմպոզիցիան, Սուրեն Քոչարյանի ասմունքի երեկոն: Նա ո՛չ երեկոյի անունը տվեց, ո՛չ էլ Սուրեն Քոչարյանի, բայց ասաց, որ եղան մարդիկ, որոնք վկայակոչեցին Խաչատուր Աբովյանին, որն ասել է. «Ղայիմ պահիր քո լեզուն»: Բայց այդ մարդիկ մոռացել են, որ Խաչատուր Աբովյանը այդպես էր հարցը դնում 19-րդ դարի սկզբներին, երբ միանգամայն տեղին ու անհրաժեշտ էր լեզուն «ղայիմ» պահելու Աբովյանի կոչը, իսկ

հիմա անհրաժեշտություն կա՞ հանդես գալ այդ կոչով։ Ո՞վ է սպառնում մայրենի լեզվին։ Մեր լեզվի հարցով «մտահոգված» գրողները թող գիտենան, որ ոչ ոք մեր պայմաններում չի սպառնում հայ լեզվին, և մեր լեզուն, մեր կուլտուրան, մեր ժողովուրդը երբեք չեն եղել այնպիսի ապահով վիճակում, ինչպես այժմ։

Կենտկոմի քարտուղարն այսպես ավարտեց լեզվին նվիրված խոսքը։

— Այս մի քանի փաստերն իրոք ասում են, որ մեր պայմաններում, մենք՝ բոլորս, այդ թվում և մեր գրողները, պետք է բուրժուանացիոնալիստական տենդենցի դեմ վառոդը միշտ չոր պահենք։

Պաշտոնական շրջանները թույլ չտվին Քոչարյանին շարունակել «Վերքի» համերգները։ Ջօգնեց Սուրեն Քոչարյանի՝ Գրիգոր Հարությունյանին գրված նամակը ևս։

Եվ «Վերքը» մնաց աստունքի վարպետի թղթերի մեջ։ Եվ մեկ էլ աշխարհ եկավ Ստալինի մահից հետո։

Սուրեն Քոչարյանի կոմպոզիցիան հրատարակվեց փոքրիկ գրքույկով՝ 1957-ին, որի խմբագիրը ես էի, առաջաբանի հեղինակը՝ Լևոն Հախվերդյանը։

ԳՐԱԳԱՐԱՆԱՎԱՐՈՒՀԻ ԱՆՅԱՆ

Դեմիրճյանը սովորություն ուներ, ցերեկվա ժամը 1-ին, ո՛չ ավելի շուտ, ո՛չ ուշ, սենյակիս դուռը բացել, հարցնել՝ «Ի՞նչ կա, չկա», և տեղավորվել բազմոցին։ Ես իմ գործն էի անում, եթե շտապ էր անելիքս, ինքը կամ լուռ նստում էր, կամ սեղանիս վրա նոր գրքերի «ազդանմուշ» օրինակը վերցնում, թերթում։ Հետո, երբ մենակ էինք մնում, կամ ես էի ասում, թե ինչ դժվարությունների առաջ եմ կանգնած և խորհուրդ էի հարցնում կամ ինքը, առանց իմ հարցումի, ասում էր, թե քո այս պատասխանը այցելուին ճիշտ չէր, ավելի լավ կլիներ ուրիշ կերպ խոսեիր, հա՛մ քո միտքը հայտնած կլիներիր, հա՛մ էլ խոսքդ խիստ չէր լինի։

Եվ այսպես, ամեն աստծո օր, անպայման բացում էր բաժնի դուռը, ու ես էլ, իմանալով, որ վերջացրել է գրական զբաղմունքը, ուրեմն, արդեն ժամը մեկն է, եկել է հայրական

օրհնությունը տարածելու կրտսեր ընկերոջ գործունեության վրա։

«Վարդանանքի» առաջին դիրքը լույս էր տեսել արդեն, հեղինակը վայելում էր վեպի բերած հաջողությունը, որպիսին նա չէր ունեցել իր գրական կյանքի քառասունից ավելի երկար ու ձիգ տարիների ընթացքում։

Ու մի օր, առավոտյան կողմ, նոր էի անցել գործիս, որ լսվեց հեռախոսի ձայնը։ Լսափողը ականջիս տարա, լսեցի կանացի երիտասարդ և բավական հաճելի ձայն։

— Ընկեր Զարյան, դո՞ւք եք։

— Ես եմ։

— Բարև ձեզ։

— Բարև։

— Ես գործ ունեմ ձեզ հետ։

— Ի՞նչ գործ։

— Կիմանաք՝ հանդիպելիս։ Կարո՞ղ եմ գալ։

— Ե՞րբ։

— Այսօր ժամը մեկին։ Կարելի՞ է։

Հիշեցի, որ դա Դեմիրճյանի գալու ժամն է։

— Իսկ հնարավո՞ր չէ ավելի շուտ կամ ավելի ուշ։

— Ոչ, այդ ժամին է մեր ընդմիջումը։

Արդեն մտածել էի, թե ինչ եմ անելու Դեմիրճյանի հետ և միաժամանակ չէի հասկանում, թե ո՞վ է այդ կինը և ի՞նչ գործ ունի ինձ հետ։

Դեմիրճյանը եկավ ու բազմեց իր մշտական տեղում։

— Ընկեր Դերենիկ, ինձ հայտնի դարձավ, որ դուք երկրպագու ունեք։

— Ե՞ս։

— Դուք։

— Երկրպագո՞ւ։

— Այն էլ կին երկրպագու։

— Շատ հետաքրքիր է։

— Կարդացել է ձեր «Վարդանանքը» և հիացել։ Տենչում է ծանոթանալ ձեզ հետ։

— Իսկապե՞ս։

— Չէի՞ք կամենա ծանոթանալ հետը։

— Ինչո՞ւ չէ։

— Որ այդպես է՝ գնանք։

— Ո՞ւր։

— Դրադարան։

Հասանք դրադարան, որի վարիչը Անյա անունով մի դրժբախտ աղջիկ էր, քառասունին մոտ, դեռ ընտանիք չկազմած և հույս էլ չուներ, որ մի օր հաջողվելու է։ Լավ աղջիկ էր Անյան, բոլորս էլ սիրում էինք նրան, բարի, պատրաստակամ։

— Ընկեր Դեմիրճյան, ձեր երկրպագուն մեր դրադարանավարուհին է։

Անյան շիկնեց։

— Ծանոթացնք, խնդրեմ։

Դեմիրճյանը ձեռքը մեկնեց։

— Անյա,— հազիվ շշնջաց դրադարանավարուհին։

Թողի Դեմիրճյանին դրադարանում և շտապեցի իմ սենյակ։ Մի փոքր հետո եկավ ինձ զանգահարող կինը։ Ասաց, թե ինչ խնդրով է մոտս եկել։ Դա էլ առանձին պատմություն է։

Հաջորդ և մյուս բոլոր օրերը Դեմիրճյանը ուղիղ ժամը 1-ին գալիս էր, բացում դուռս և ասում.

— Ռուբեն, ես եկա։

Եվ այլևս չէր մտնում։

— Տեղս գիտես, չէ՞։

Գնում էր դրադարան՝ Անյայի մոտ։

Հրատարակչություն ասվածը մի կամ երկու մարդ չէր, մարդաշատ հիմնարկ է, և Դեմիրճյանի ամենօրյա այցելությունները դրադարան, չվրիպեցին մարդկանց աչքից և բերնից բերան անցավ, թե Դեմիրճյանը սիրահարված է Անյային։ Անյայի ինքնասիրությունը շոյված էր, իսկ Դեմիրճյանը նշանակություն չէր տալիս այդ խոսակցություններին և ամեն օրվա պես գնում էր դրադարան և նստում այնտեղ ժամերով։

Դեմիրճյանի և դրադարանավարուհու մտերմությունը ինչ չափերի էր, ոչ ոք չգիտեր, բայց երկու փոփոխություն նկատելի էր։ Նախ՝ Անյան ավելի շատ կապվեց գրականության հետ, սկսեց երևալ գրողների տանը կազմակերպվող երեկոներին, և ապա՝ Անյայի վրա նկատեցինք նոր զգեստներ, մինչդեռ առաջ նրան միշտ տեսնում էինք նույն շորի մեջ։

1946-ին էր, մայիսի 25-ին, գրողների տանը կազմակերպվել էր Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» պատմական ողբերգության քննարկումը: Զեկուցողը Արամ Ինճիկյանն էր: Ես տիկնոջս հետ մի փոքր ուշ գնացի և ստիպված եղանք տեղ գրավել վերջին շարքում: Մեզանից մի փոքր այն կողմ նստած էր Անյան:

Զեկուցումը վերջացել էր, սկսվել էր մտքերի փոխանակությունը, դահլիճ մտավ ընկերս ու ասաց, որ դուրսը ջրհեղեղ է, պետք է շտապ դուրս գալ, այլապես հետո հնարավոր չի լինի տուն հասնել: Ես երկտող ուղարկեցի օրվա նախագահին, հայտնելով, թե ինչ է պատահել և միաժամանակ ասելով, թե անհրաժեշտ է երեկոն ընդհատել: Զգուշացրի հարեվաններիս, Անյային, որի հետ և դուրս եկանք:

Ջուրը գետի պես հոսում էր փողոցներում: Անյան հանեց հագի կոշիկները, որոնք նոր էին, Դեմիրճյանի նվերն էր իր ծննդյան օրվա առիթով: Կինս զգուշացրեց Անյային, որ սխալ բան է անում: Չլսեց: Մի ձեռքով զգեստի քղանցքներն էր բարձրացրել մինչև ծնկները, իսկ մյուսով՝ գլխից վեր էլ բարձրը, կոշիկներն էր բռնել:

Առավոտյան իմացանք, թե ինչ է պատահել:

Անյան գալիս է տուն, մտնում անկողին: Մի կես ժամ չանցած ջերմաստիճանը բարձրանում է: Անյայի մեծ քույրը շտապ օգնություն է կանչում: Քույրը չի զգուշացնում բժշկին, որ հիվանդը մի ժամանակ տառապել է թոքախտից, սա էլ բուժքրոջը պատվիրում է բանկաներ դնել: Դու մի ասի, չէր կարելի:

Դեմիրճյանն իմանում է, հայտնի բժիշկներ է բերում, որոնք, սակայն անկարող են լինում փրկել աղջկան, թոքախտը սուր ընթացք էր ստացել: Մի քանի օրում Անյան մարեց:

Թաղման բոլոր ծախսերն իր վրա վերցրեց Դեմիրճյանը: Անյայի դագաղի հետևից երեք տասնյակի չափ մարդ էր գնում, բոլորն էլ հրատարակչության աշխատողներ: Մեզ հետ, բայց առանձին ու դանդաղաքայլ, գնում էր թախծադեմ Դեմիրճյանը: Ինքը ոչ ոքի հետ չէր խոսում՝ ի՞նչ էր ասելու: Ոչ ոք նրա հետ չէր խոսում՝ ի՞նչ էին ասելու:

Հետո իմացանք, որ Դեմիրճյանը մեծ գումար է հանձնել Անյայի քրոջը և խնդրել, որ տապանաքար քաշի։

Դեմիրճյանն այլևս չէր խոսում գրադարանավարուհու մասին, միայն մի օր այսքանն ասաց.

— Դու չգիտես, թե ինչ լավ սիրտ ուներ Անյան...

Եվ դրանից հետո էլ ցերեկվա ժամը մեկին գալիս էր, բացում դուռը, բարևում և առաջվա նման, ինչպես մինչև Անյայի հետ ծանոթանալը, նստում էր բազմոցին և հարցնում.

— Ի՞նչ կա-չկա։

ՉՈՀՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՅՐԻՆ

Հիմա պատմեմ ինձ ժամադրություն նշանակած այն տիկնոջ մասին, որը Դեմիրճյանի և Անյայի ծանոթության պատճառը եղավ։

Նշանակված ժամին ներկայացավ մի երիտասարդ տիկին և ասաց.

— Ես էի ձեզ զանգահարողը։

Իմ դիմաց նստած էր ոչ ավելի քան մի քսանհինգ տարեկան կին։

— Իմ անունը Սիրուշ է։

— Լսում եմ ձեզ։

— Իմ ամուսինը...

Աչքերը խոնավացան։

Ես թեև չէի ճանաչում կնոջը, բայց գուշակելով, որ խոսքը դժբախտության է վերաբերում, ձեռքս դրի իր ձեռքին և խնդրեցի խաղաղվել, որ կարողանա ասել գալու նպատակը։ Արցունքները կախված էին նրա թարթիչներից։ Ես վեր կացա, մի բաժակ ջուր լցրի ու դրի առաջը։

— Իմ ամուսինը պատերազմում զոհվել է։

Ես խոր ցավակցությամբ նայեցի նրան և լուռ սպասում էի, թե ի՞նչ է հետևելու այդ դժբախտ հայտարարությանը։

— Գուցե ճանաչում էիք նրան։ Դերենիկ Զարխչյան։

Ինձ ծանոթ չէր այդ անունը։

— Բանաստեղծ էր։

— Դժբախտաբար չգիտեմ, տիկին։ Ոչինչ չեմ կարդացել։

— Թերթերում է տպագրվել։

— Աչքովս չի ընկել։

Ես տիկնոջ աչքերի մեջ հուսահատ տրամադրություն նշմարեցի, բայց դա մի պահ էր միայն։ Տիկինը հավաքեց իր հոգեկան ուժերը՝ տեղի չտալու համար.

— Ես բերել եմ Դերենիկի բանաստեղծությունները։

Եվ ինձ մեկնեց տետր։

Արդեն սովոր ինձ այցելող թիվ ու համար չունեցող անհայտ բանաստեղծների, որոնք արժանի չէին հրատարակվելու, մտածեցի, որ Դերենիկ Ջարխչյանն էլ մեկն է դրանցից, և հիմա զոհված ամուսնու փոխարեն եկել է կինը։ Կամենալով նախապատրաստել կնոջը մերժման, ասացի.

— Դժվար է, տիկին, շա՛տ դժվար։

Հետո միայն մտածեցի, թե կնոջը, այն էլ այրիացած, կարելի՞ է նման բան ասել։ Պարզ չէ՞, որ Դերենիկը կարդացել է, և կինը հիացել, իսկ հիմա, երբ չկա, ամուսնու ամեն մի տողը սրբազան է նրա համար։

— Կարդացեք, կհավանեք, անպայման կհավանեք։

Ես խոստացա կարդալ և խնդրեցի նրան երեք օրից զանգահարել ինձ։

Երբ դռների մեջ էր, շրջվեց ու նայեց։ Ես դժվար թե բառեր գտնեմ նրա հայացքը բացատրելու համար։ Այսքանը կարող եմ ասել՝ իմ որոշումը տիկնոջ համար ճակատագրական էր լինելու։

Նույն օրն իսկ թերթեցի տետրը, չէի կարող ասել, որ անշընորհ է, բայց շնորհն էլ ինձ այնպիսին չթվաց, որ արժեներ ընտրություն կատարել և հրատարակել փոքրիկ գրքույկ։

Այն ժամանակ շատ էի երիտասարդ, հետևապես շատ էլ խստապահանջ էի։

Երկրորդ օրը զանգահարեց, թեև նրան խնդրել էի զանգել երեք օր հետո։ Հասկացա, անհամբեր է, շտապում է իմանալ պատասխանս։ Անկեղծ ասած, հակառակ իմ այն տարիների բավական կտրուկ պահվածքի՝ տիկնոջ ձայնի սպասողական երանգի մեջ այնքան բովանդակություն կար, որ չհամարձակվեցի իմ բացասական վճիռը հայտնել նրան, ասացի, թե իբր դեռ չեմ կարդացել, շատ զբաղված եմ եղել, կարդալու եմ միայն վաղը։ Ու տիկնոջը սփոփելու

համար ասացի նաև, որ բանաստեղծություն կարդալու համար այնքան ազատ ժամանակ չէ հարկավոր, որքան՝ համապատասխան տրամադրություն: Ես ճիշտ էի ասում նրան, դա հնարված բան չէր, բայց այդ պահին պաշտպանվելու լոկ ձև էր դա:

— Եթե այդպես է, դուք կարող եք վաղը չէ մյուս օրն էլ չունենալ բանաստեղծություն կարդալու տրամադրություն:

— Ջեմ կարծում:

— Ես խնդրում եմ ձեզ:

Ասում էր «խնդրում եմ ձեզ», բայց ձայնի մեջ աղաչանք կար:

Ես հասկացա, որ վիճակը ծանրացավ, հիմա ավելի դժվար էր լինելու մերժել:

Երկու օրն անցավ և հեռախոսափողի մեջ լսվեց նույն ձայնը.

— Կարդացի՞ք:

— Այո:

— Ի՞նչ տպավորության եք:

— Ոգևորված չեմ:

Երկար դադար: Ո՛չ նա է խոսում, ո՛չ ես: Նա սպասում է, որ մեղմացնող, հուսադրող խոսք ասեմ: Ես ձայն չեմ հանում:

— Ուրեմն՝ ինչ:

— Եզրակացությունը թողնում եմ ձեզ:

— Եթե դեմ չեք՝ գամ:

— Ի՞նչ իմաստ ունի:

— Ես ուզում եմ ձեզ մի բան ցույց տալ:

— Իսկ այդ բանը ինչ կապ ունի գործի հետ և ինչո՞ւ եք կարծում, որ պիտի փոխի իմ որոշումը:

— Խնդրում եմ մի առարկեք գալուս,— արցունաքախառն էր ձայնը,— ուզում եմ ձեզ մի բան ասել, բայց ոչ հեռախոսով:

Մի որոշ դադարից հետո.

— Գա՞մ:

— Եկեք:

— Ե՞րբ:

— Երբ ուզում եք:

— Այսօր, մի կես ժամից, տուն անցնեմ ու գամ։

Ամուսինն ասել է, թե հավատացած է, որ Բշնամուն հաղթելու ենք, հավատացած է, որ ինքը վերադառնալու է ողջ, առողջ, բայց եթե հանկարծ ինչ-որ բան պատահի իրեն, խնդրում է տանել իր բանաստեղծությունների տետրը հրատարակչություն՝ Ռուբեն Զարյանին, համոզված, որ նա կպահի հայրենիքի համար զոհված բանաստեղծի հիշատակը։

Ես հարցրի, թե ինչո՞ւ սկզբից չասաց այդ մասին։ Ասաց՝ մտածել է, թե դա կարող է ընկալվել որպես բարոյական ճնշում։

Լսելով նրան՝ մտքովս անցավ, ուրեմն՝ այս երիտասարդ կինը բավական նրբանկատ է։

— Բացի այդ,— շարունակեց նա իր խոսքը,— ես համոզված էի, որ բանաստեղծությունները ձեզ վրա մեծ տպավորություն կթողնեն։

Նա գրասեղանին դրեց մի նամակ, գրված ռազմաճակատից։ Նամակում, որ գրված էր թախծոտ տրամադրությամբ, ասված էր, թե իրեն համակել է ծանր նախազգացում, որ չի վերադառնալու և նամակում տեղադրված է կնոջը նվիրված երեք քառատողից բաղկացած բանաստեղծություն, որտեղ խնդրում է այրի չմնալ, ամուսնանալ անպայման, որ ինքը հողի տակ պառկի խաղաղ սրտով։

Թե մարտում ընկնեմ, տխո՛ւր մի մնա,
Անսեր մի մնա, սիրի՛ր դու մեկին,
Թող ջահել սիրտդ սիրով արբենա,
Ափսոս է վարդը թոշնի գարունքին։

Ես հող կդառնամ դաշտում սիգավետ,
Կդառնամ ծաղիկ, անուշ կբուրեմ,
Դու եկ ինձ այցի նոր սիրածիդ հետ,
Քաղի՛ր ինձ, որ քո ձեռքը համբուրեմ։

Համբույրով վերջին կարոտս առնեմ,
Իսկ դու իմ անուշ բույրով արբենաս,
Ու քո ձեռքի մեջ թող ես թառամեմ,
Ա՜խ, կուզեմ դու միշտ անթառամ մնաս։

Կարդում էի նամակն ու մտածում՝ ինչ գնով էլ լինի մի բան պետք է անել։ Թեկուզ այն բանի համար, որ հույսը դրել է ինձ վրա, երկրորդ պատճառն այն էր, այդ ինչ հոգու տեր է

եղել, որ մահվան նախազգացումը սրտում, մտածել է երիտասարդ կնոջ երջանկության մասին, վերջապես՝ ես հասկանում էի կնոջը, ուզում է ամուսնու հիշատակը պահել, պահպանել, չկա դերեզման, գոնե բանաստեղծությունները լույս տեսնեն։

Գլուխս բարձրացրի և հանդիպեցի կնոջ աչքերին, որ նայում էին ինձ կենաց-մահու հայացքով։ Ես չդիմացա այդ հայացքին ու աչքերս փախցրի։ Բայց հետո, ինչպես դա հաճախ է լինում մարդու հետ, պահանջ զգացի նայելու, վերըստին նայելու և հասկացա, որ հայացքը վճռական է, բայց նաև հուսահատական։ Այդ հայացքն ինձ մի վայրկյանում մղեց վճիռ կայացնելու, որի դեպքում խստաշունչ գեղագետը հանուն մարդկայնության տեղի էր տալիս ալեկոծվող սրտի պահանջի առաջ։

Ես իմաստուն չեմ հիմա, երբեք էլ չեմ եղել, բայց իմաստությունը մեկ-մեկ այցելում է մարդուն, թելադրում հասկանալու, որ չի կարելի մերժել մի կնոջ, որի համար ամուսնու հիշատակի պահպանումը վեր է ամեն ինչից։

— Տիկին, ինձ ժամանակ տվեք, և ես կգտնեմ ձեր ամուսնու գործերը լույս աշխարհ բերելու ձևը։

— Հավատա՞մ։

— Հավատացեք։

— Ճի՞շտ։

— Ճիշտ։

Քառասուն տարի է անցել այդ օրից, ես հիմա էլ հուզվում եմ պատմելիս, թե ինչ արեց այդ երիտասարդ կինը։

Նա ծունկի եկավ իմ առաջ. առավ իմ աջը և համբուրեց, ու ես զգացի ձեռքիս թափվող արցունքների այրող ջերմությունը։

Ի՜նչ բարձր մարդ է եղել այս դժբախտ կնոջ ամուսինը և ինքն էլ, այդ երիտասարդ կինը, որ քսանհինգ տարեկանից ավելի չէր լինի, որքան բարձր է իրեն բաժին հասած դըժբախտության մեջ։

Ես այդ դիշեր մտահղացա այն ժողովածուն, որ հետո կոչվեց «Պսակ» և որն ամփոփում է պատերազմում զոհված բանաստեղծների հիշատակը։

Կանչեցի հին դասընկերոջս՝ Արմենակ Թամազյանին,

տվեցի նրան Դերենիկի բանաստեղծությունները և խնդրեցի կազմել մի ժողովածու։ Մի քանի ուրիշ զոհված բանաստեղծների անուններ ևս տվի՝ Թաթուլ Հուրյան, Մեսրոպ Մերուժան։ Թևան Խաչյան։ Խնդրեցի Նաիրի Զարյանին հանձն առնել խմբագրությունը։ Նա ոչ միայն հանձն առավ, այլ նաև ոգևորվեց և ասաց, թե ժողովածուի անունը կլինի «Պսակ»։

Սիրելի՛ ընթերցող, եթե ուզում ես, կարող ես ձեռքդ առնել այդ ժողովածուն, որի լույս աշխարհ գալու պատճառը Դերենիկ Զարխչյանն ու նրա կինը եղան։ Այդ ժողովածուի մեջ կգտնես Զարխչյանի բանաստեղծություններից 22-ը։ Դրանց մեջ է և այն, որ գրել է կնոջը՝ մահվան նախազգացումը սրտում։

Տարիներ անցան։ Համարյա քառորդ դար։ Ու մի օր հիշեցի զոհված ռազմիկի այրուն։ Ուզեցի տեսնել, պարզվեց, որ տեղափոխվել է Լենինական։ Եկավ ինձ տեսության։

Մաշված կին էր իմ առաջ։ Հայացքը, սակայն, խաղաղված էր։ Ու ես նրան չհարցրի, թե ամուսնու ցանկությունը կատարե՞ց, նորից ամուսնացա՞վ, թե այդպես էլ ապրեց զոհված ամուսնու մորմոքը սրտում։ Վախեցա հարցնեմ։ Վախեցա, որ կասի՝ այո, ամուսնացա։ Իսկ թե հետո ինչ կասի՞ երջանի՞կ էր, թե ոչ, արդեն արժեք չուներ։

ԻՄ ՀՈԴՎԱԾԸ «ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ» ՄԱՍԻՆ

Ես հոդված գրեցի «Պապ թագավորի» մասին։ Տպվեց «Սովետական Հայաստան» թերթում։ Դա առաջին հոդվածը չէր Զորյանի վեպի մասին, մի երկու, թե երեք հոդված արդեն լույս էին տեսել։ Հոդվածի տպագրության հաջորդ օրը հանդիպեցի Հովիկ Մելիքյանին, որը սեղմեց ձեռքս, ասաց, թե շնորհավորում է, լավ հոդված եմ գրել։ Ես արդեն փորձից գիտեի, որ եթե Մելիքյանը գրածս հավանում է, նշանակում է հոդվածը բանի նման չէ։ Եվ իսկապես տպավորությունն այնպես էր, որ ոչ մի հոդված էլ չեմ հրապարակել։ Ո՛չ գրականության ինստիտուտում, ո՛չ գրողների տանը, ո՛չ լավ, ո՛չ վատ խոսք չասացին հոդվածիս մասին։

Հոդվածի լույս տեսնելուց մի քանի օր անց որոշվեց, որ գնում ենք Դսեղ՝ Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի

բացվանը: Մեկնելու էինք գնացքով: Երեկոյան դեմ շտապեցի կայարան: Կառամատույցում հանդիպեց Խորեն Սարգսյանը ու հայտնեց, որ իմ տոմսն իր մոտ է, իմ տեղն էլ այն կուպեում է, որտեղ ինքն ու Զորյանն են: Մեր տեղերի համարն իմանալով, շտապեցի դեպի այդ վագոնը: Կուպեում ոչ ոք չկար: Զբաղեցրի վերին տեղերից մեկը, ներքևի երկու տեղը թողնելով ավագ ընկերներիս: Մի փոքր անց Խորեն Սարգսյանը եկավ, քիչ հետո էլ՝ Զորյանը:

Ընդհանուր զրույց, տարբեր հարցեր, նկատեցի, որ Զորյանն իմ կողմը չի նայում, խոսք չի փոխանակում, պահվածքն էլ այնպես է, ասես, ես չկամ: Ինչո՞ւ, ոչ մի կերպ չեմ հասկանում: Իբրև գրողի՝ Զորյանին սիրում էի և գնահատում, իբրև անձ՝ իմ սրտովն էր, այլապես չէի ձգտի նրա մտերմությունն ունենալ: Ես նրա դժգոհությունը հարուցելու որևէ առիթ չէի տվել: Սառը վերաբերմունք հոդվածին վերագրել չէի կարող, որովհետև վեպը բարձր էի գնահատել: Ճիշտ է, ինձ հայտնի չէր նրա կարծիքը հոդվածի մասին, բայց դա ինչ նշանակություն ուներ, նա կարող էր հոդվածս չհավանել, բայց դժգոհ լինելու պատճառ չուներ:

Խորեն Սարգսյանն ափսոսաց, որ հետներս գինի չենք վերցրել և ասաց, թե ինքը առաջիկա կայարանում կգնի: Իսկապես, հենց որ գնացքը կանգ առավ, նա շտապեց դուրս: Մնացինք երկուսով: Զորյանը լուսամուտից նայում էր և ուշադիր հետևում դրսի անցուդարձին, տպավորությունն այնպես էր, որ նրան հանձնարարված է հաշվել, թե մի կողմից մյուսը քանի մարդ է գնում: Ոչ մի խոսք: Ես մտածեցի, չէ, ուրեմն, չեմ սխալվել, ինչ-որ բանից նեղացած է: Ինչի՞ց: Ես նույնիսկ փորձ չարի հիշողությունս քրքրելու, որովհետև խորապես համոզված էի, որ առիթ չեմ տվել: Այն է ուզում էի Զորյանին հարցնել, թե ինչ է պատահել, Խորեն Սարգսյանը վերադարձավ առանց գինու, ասելով, թե չկար, ոչինչ, հաջորդ կայարանում կգնի: Գնացքը շարժվեց:

Հաջորդ կայարանում Խորեն Սարգսյանը նորից իջավ, ու ես առանց ժամանակ կորցնելու ասացի Զորյանին, թե ինչ-որ ուրիշ տեսակ է երևում, նեղացած հո չէ ինչ-որ բանից:

— Այդ ի՞նչ հոդված էիր գրել:

— Չի՛ ստացվե՞լ, հա:

— Դա իմ գործը չէ։

— Իսկ ինչի՞ց եք դժգոհ։

— Ի՞նչ է, ուզում էիր ցույց տալ, որ հայոց պատմություն գիտես։ Ի՞նչ է, կարծում ես Թերզիբաշյանը քեղանից պակաս գիտե մեր պատմությունը։

Ես չհասկացա, թե ինչ է ուզում ասել Զորյանը, պիտի հարցնեի, երբ Խորեն Սարգսյանը երկու շիշ գինի ձեռքին կուպե մտավ։

Ես չէի ուզում այդ զրույցը շարունակել նրա ներկայությամբ։ Ըստ երևույթին Զորյանն էլ չէր ուզում, որովհետև նրա գալուց հետո այլևս ոչ մի խոսք չասաց։

Խորեն Սարգսյանը լցրեց բաժակները։

— Ստեփան, առաջինը խմենք քո կենացը, մեր մեջի մեծը դու ես, քեզ լավ հայտնի է երկուսիս վերաբերմունքը, այնպես որ երկուսս, քո անկեղծ և հավատարիմ բարեկամները խնդրում ենք աստծուն քեզ երկար կյանք տա, հետն էլ առողջություն, որ կուռդ պինդ լինի, գրիչդ բեղմնավոր...

— Շնորհակալ եմ։

Հազիվ լսելի եղավ Զորյանի ձայնը։

— Էս էլ խմենք քո կենացը, Ռուբեն, մեր մեջի փոքրը դու ես, մատա՛ղ։ Մեր մեծը Ստեփանն է, փոքրը՝ դու։ Ես ինչ, ձեր արանքն ընկած մարդ եմ։ Էլ չհիվանդանաս, Ռուբեն, առողջ լինես, իմացիր, գործ շատ կա անելու։

Խորեն Սարգսյանի կենացը խմեցինք, մի կարճ խոսք ասաց Զորյանը, ավելի կարճ խոսք էլ՝ ես, և Խորեն Սարգսյանի առաջարկով պատկեցինք քուն առնելու, որովհետև առավոտ վաղ հասնելու էինք Ռոլագերան։

Իմ ավագ ընկերները քնեցի՞ն, թե չէ, չգիտեմ, բայց ինձ երկար ժամանակ տանջում էր Զորյանի վիրավորվելու պատճառը։ Շարժառիթն արդեն պարզ էր, վիրավորված էր հոդվածից, հիմա մնում էր կռահել, թե ի՞նչ կար հոդվածում, որ կարող էր նրան վշտացնել։ Զորյանը տվեց Թերզիբաշյանի անունը, ես հիշեցի նրա հոդվածը, որը սկզբից մինչև վերջ գովաբանական էր։ Իմը՝ նույնպես, բայց ես արել էի մի քանի քննադատական դիտողություն։ Երևի դրանք էին պատճառը։

Հոդվածի տպագրությունից հետո ես չէի տեսել Դերենիկ Դեմիրճյանին: Քանի օր է, չէր եկել: Մի շաբաթից ավելի: Չլինի հիվանդ է: Որոշեցի գնալ տեսության: Ճանապարհին հիշեցի մի հանդիպումս Դեմիրճյանի հետ մինչև Դսեղ մեկնելը՝ չոր, կարուկ, սառը: Դե, լավ է, մտածեցի, հիմա ամեն ինչ կպարզվի: Ինչ-որ գիրք էր կարդում:

— Հիվա՞նդ չեք:

— Ո՛չ:

— Ինչպե՞ս թե:

— Շատ պարզ. հիվանդ չեմ:

— Ուրեմն՝ լավացել եք:

— Հիվանդ չեմ եղել, որ լավանամ: Ողջ առողջ եմ:

Դեմիրճյանն անսիրալիր էր խոսում, կարծես դժգոհ է, որ եկել եմ տեսության:

— Քանի օր է չէիք գալիս հրատարակչություն: Ես էլ անհանգստացա, մտածեցի, որ երևի հիվանդացել եք: Ասի, գնամ տեսնեմ:

— Ոչ, գալիս էի:

Ուրեմն՝ գալիս էր, բայց սենյակիս դուռը չէր բացում, ուրեմն ինչ-որ բանից նեղացել է: Զորյանը քիչ էր, հիմա էլ Դեմիրճյանը: Զորյանինը կարծես թե պարզվեց, իսկ սրան ի՞նչ է պատահել: Տեղիցս վեր կացա, որ գնամ, Դեմիրճյանն անկեղծ ու անմիջական մարդ, չհամբերեց:

— Այդ ի՞նչ հոդված էիր գրել:

— Ի՞նչ հոդված:

— «Պապ թագավորի» մասին:

Ուրեմն՝ Դեմիրճյանն էլ է դժգոհ:

— Երկինք ես հանել «Պապ թագավորը»:

Ես ձայն չեմ հանում, ուզում եմ խոսքի շարունակությունը լսել:

— Գալիս ես, ասում, թե «Վարդանանքը» էսպես, «Վարդանանքը» էնպես և գնում փառաբանական հոդված ես գրում «Պապ թագավորի» մասին:

Ծանր խոսքեր ասաց իմ գրական ըմբռնողության մասին, կասկածի տակ առավ ճաշակս, և այլն, և այլն:

Մ՛յ քնդ բան:

Ուրեմն Զորյանը կարծում է, որ վատաբանել եմ, Դեմիրճյանն էլ մտածում է, թե փառաբանել եմ։

Ես գիտեի, որ Դեմիրճյանը բարձր կարծիքի չէ «Պապ թագավորի» մասին։ Գիտեի, որ նրան հասնում է հասարակական կարծիքը, և ինքը տեղյակ էր, որ ընթերցողները համեմատում են երկու վեպը և ամեն մեկն ունի կողմնակիցներ, բայց ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ հետո չեմ հիշում դեպք, որ Դեմիրճյանը հրապարակավ որևէ վարկաբեկիչ խոսք ասեր Զորյանի վեպի մասին։ Նույնը և Զորյանը։ Նա ևս իր հերթին չէր հավանում «Վարդանանքը» և մտերիկ մարդկանց հետ խոսելիս արտահայտվում էր, ինչպես որ մտածում է և անկեղծ զարմացած էր, իմանալով, թե ինչ խանդավառությամբ է ընդունվում Դեմիրճյանի վեպը, բայց հրապարակավ երբեք իրեն թույլ չէր տալիս որևէ վատաբանող խոսք ասել «Վարդանանքի» մասին։ Գրչակցության հարկն ու պատիվը իմացող մարդ էր։

Կարծում եմ, որ պատահած թյուրիմացությունը հետևանք էր իմ մի սխալի։ Ես Զորյանի հետ հանդիպելիս պաշտպանել եմ Դեմիրճյանի վեպը նրա քննադատությունից, ասել, որ բարձր կարծիքի եմ։ Մինչդեռ Դեմիրճյանի հետ ունեցածս զրույցների ժամանակ ոչ մի խոսք չի եղել «Պապ թագավորի» մասին, ո՛չ լավ, ո՛չ վատ, մանավանդ ոչ մի քննադատական խոսք չեմ լսել Դեմիրճյանից «Պապի» մասին, որ հարկ համարեի պաշտպան կանգնել։ «Վարդանանքի» մասին, որքան ասես խոսել եմ։ Ըստ երևույթին իմ հիացումը «Վարդանանքով» և լռությունը «Պապի» վերաբերյալ, Դեմիրճյանի մեջ առաջացրել է այն տպավորությունը, թե ես Զորյանի վեպը չեմ հավանում։

Ըստ երևույթին, վեպերի շուրջ եղած խոսակցություններից Զորյանին հավանաբար հայտնի էր, որ ոգևորության նժարը թեքվում է դեպի «Վարդանանքը», հետևապես նա բծախնդիր էր դարձել իր վեպի մասին լույս տեսնող հոդվածների նկատմամբ, և իմ հոդվածը, որ քննադատական տարր ուներ, վերապահության հանգամանք էր մտցնում գովաբանության ընդհանուր մթնոլորտի մեջ։ Եզրակացրի նաև, որ մի տաղանդը կարող է չընդունել մի այլ տաղանդի, եթե նրանց գեղարվեստական մտածողություններն իրարամերժ են։

Ուստի ոչ մի զարմանալի բան չկա, որ էպիկական հանդիսատ ոճի կողմնակից Զորյանը չհավաներ խռովահույզ շնչով գրված «Վարդանանքը» և ընդհակառակը՝ զորյանական հանդարտությունը բարկացներ հակառակ բնավորության տեր Դեմիրճյանին:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԵՎ ՆԿԱՐԻՉԸ

Մարկ Գրիգորյանը ժամանակին լավ սովորություն ուներ: Մի շենքի նախագիծ որ անում էր, անպայման հրավիրում էր իր մոտ մեր արվեստի հեղինակավոր դեմքերին, ցույց տալիս, բացատրում մտահղացումը և խնդրում, որ կարծիք հայտնեն, դիտողություններ անեն, խորհուրդներ տան և այլն: Այդպիսի առիթներով նրա մոտ հաճախ էին լինում Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Արա Սարգսյանը:

Նրան հանձնարարվեց նախագծել Մատենադարանի շենքը:

Շենքը, ինչպես հայտնի է, բարձունքի վրա էր լինելու, բազմաթիվ աստիճաններ պիտի տաներին մարդկանց դեպի հին ձեռագրերի ինստիտուտ: Նա հասկանում էր, որ շենքը պետք է վեհ կերպարանք ունենա:

Երկար մտածեց ճարտարապետը, թե ինչպես արտահայտի այդ վեհությունը: Լուծեց դասական ճարտարապետության ոգով: Սյունաշարերով մի շենք էր դա, իսկապես վեհ ու հանդիսավոր, և նրան անմիջապես շրջապատողները ոչ մի կասկած չունեին, որ իրենց ղեկավարը պատվով է կատարելու իր գործը:

Կանչեց մեր արվեստի հեղինակավոր մարդկանց, կանչեց, բացատրություն տվեց ու սպասեց նրանց դատաստանին: Նրանք էլ երկար նայում էին, իրար հետ տպավորություն փոխանակում: Հրավիրվածների դեմքերին նայելով երևում էր, որ արված գործը նրանց դուր է եկել: Հասկանալի չէր միայն Սարյանը: Դեմքի արտահայտությունն էլ ոչինչ չէր ասում, ո՛չ հավանություն, ո՛չ դժգոհություն:

Հյուրերը խոսեցին: Խոսեցին բոլորը, բացի Սարյանից, որը խորհրդավոր կերպով լուռ մնաց: Մարկ Վլադիմիրովիչը

անհանգիստ նայում էր նկարչին, որը, սակայն, անպատասխան էր թողնում, ավելի շուտ չնկատելու էր տալիս նրա հայացքը։ Այդպես էլ Սարյանը ձայն չհանեց։ Իսկ մյուսները գովեցին Մարկ Վլադիմիրովիչին, շնորհավորեցին նրա այս նոր, և, ինչպես իրենք էին ասում՝ նշանակալի հաջողությունը։ Հրաժեշտ տալիս, երբ բոլորը պատրաստվում էին դնալ, Մարտիրոս Սերգեևիչը մոտեցավ ու ասաց.

— Մարկոս (նա այդպես էր կոչում Մարկ Վլադիմիրովիչին), ես իմ կարծիքը կհայտնեմ մի շաբաթ հետո։

Մի շաբաթ էր անցել, թե տասը օր, Սարյանը Գրիգորյանի սեղանին է դրել մի գունավոր բացիկ։ Բացիկի վրա պատկերված էր Անիի Մայր տաճարը, որ կառուցվել էր տասնեբոդ դարի վերջերին։

— Ա՛յ, Մարկոս, այսպիսին պետք է լինի մատենադարանը։ Ա՛յս ոգով, սիրելիս։

Գնաց, թողնելով բացիկը ճարտարապետի սեղանին։

Ճարտարապետի համար Սարյանը մեծագույն հեղինակություն էր, որի դիտողությունների նկատմամբ նա երբեք անտարբեր չի մնացել։ Ճարտարապետն ընկավ մտատանջության մեջ։ Հեշտ չէ հրաժարվել արդեն պատրաստ, հավանություն գտած նախագծից, բայց նա հասկանում էր, որ ինչքան էլ դժվար, պետք է արվածի վրա խաչ քաշել ու նորը սկսել։

Ուրեմն ինքը սխալ ուղու վրա է եղել։ Ճիշտ ուղին ցույց է տրված, բայց արվածը չի կրկնելու, պետք է պահի Անիի Մայր տաճարի ոգին ու ստեղծի նոր կառույց։ Եվ նա գտավ նոր լուծում։ Այս պատմությունը լսելուց հետո մատենադարանին նայելիս, նրա ճարտարապետական կերպարի մեջ նշմարելի է, թե հայկական միջնադարյան հուշարձաններից որն է իր հեռավոր նախնին։

ԵՐԲ ՉԵՍ ԼՍՈՒՄ ՃԻՇՏ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ջորյանի վեպի մասին իմ դասախոսությունը կոչվում էր ոչ թե «Պապ Թագավոր» պատմական վեպը, այլ «Խորհրդահայ պատմավեպը», որ նշանակում էր, թե դրան հաջորդելու է

նաև Դեմիրճյանի «Վարդանանքին» նվիրված դասախոսությունը, որը հիմա չեմ հիշում, թե ինչ պատճառով, ո՛չ պատրաստվեց, ո՛չ է լ կարդացվեց։ Այս երկուսի կողքին նախատեսված էր նաև երրորդ դասախոսություն, ոչ թե գրականագիտական, այլ թատերագիտական, նվիրված Վահրամ Փափազյանի Օթելլոյին։

Այս դասախոսությանը ես պատրաստվեցի ոչ պակաս խանդավառությամբ։ Փափազյանի երկրպագուն էի։ Նրա Օթելլոն տեսել էի շատ անգամներ դեռ քսանական թվականներից սկսած։ Տպավորություններ, մտքեր ունեի։ Վերջապես թատրոնն ինձ համար նոր աստարեզ էր, ու ես, բնականաբար, ցանկանում էի հնարավորին չափ կարևոր գործ արած լինել։ Բացի այս բոլորը՝ ունեի ոչ միայն ոգևորություն, այլ նաև կիրք, բանավիճային մղում հակադրվելու Փափազյանի ու նրա Օթելլոյի արժեքը կասկածի տակ առնողներին։

Երևի այս բոլորն էին պատճառը, որ ես սկսեցի գրել, թուղթ թղի հետևից էի լցրել, աներևակայելի արագությամբ։ Չեմ հիշում, որ ասեմ, թե որքան ժամանակ աշխատեցի, բայց ստացվեց երկար շարադրանք և, ինչ թաքցնեմ մեղքս, այդ ամբողջը կարդացի որպես դասախոսություն։

Դասախոսության առաջին մասը վերաբերելու էր նյութի պատմությանը, մյուսը՝ դերակատարման վերլուծությանը։ Դասախոսությունը, երևի մի երեք օր առաջ գրածս կարդացի տիկնոջս, լսեց և ասաց, որ շատ երկար է, անհարմար է մարդկանց ժամերով զբաղեցնել։ Նկատեց նաև՝

— Առաջին մասը հետաքրքիր չէ, խորհուրդ եմ տալիս գոնե դասախոսության դեպքում կրճատել։

Նրա վերջին տպավորությունից այնպես վիրավորվեցի, որ իմ հերթին վիրավորեցի իրեն՝

— Ոչինչ չես հասկանում։

Եվ լավ հիշում եմ, որ մեր գժտությունը վերջացավ նրանով, որ ասաց.

— Ես քո լավն եմ ուզում, դրա համար եմ ասում, թե չէ, է՛ն դու, է՛ն էլ քո գրածը։

Դասախոսությունը լսելու շատ մարդ էր եկել։ Հիմնականում մտավորականություն էր՝ գիտաշխատողներ, գրողներ, ճարտարապետներ, նկարիչներ, դերասաններ։

Դասախոսությունը երկար տևեց, հինգ ժամ՝ մի ընդմիջումով։

Երբ դասախոսությունն ավարտվեց՝ ինձ մոտեցավ Օլգա Գուլազյանը և իր զոհունակությունը հայտնեց դասախոսության երկրորդ մասի վերաբերյալ, ոչինչ չասելով առաջինի մասին։ Լսում էի, բայց աչքիս պոչով տեսա կողքիս կանգնած տիկնոջս։ Մոտեցավ Գուրգեն Սևակը, որի խստապահանջությունն ինձ հայտնի էր։ Սա էլ ասաց, որ ինքը զոհ է դասախոսությունից, բայց հատկապես երկրորդ մասի համար։ Նույնպիսի կարծիքներ հայտնեցին Հայկուհի Դարագաշը և Արամ Բաբայանը։ Իսկ Խաչատուր Եսայանը, որ Փափազյանի թունդ երկրպագուն էր, ասաց՝

— Քո տունը շինվի, մարդ էլ գիրք կգրի և կարդա որպես դասախոսություն։ Կամ կարդայիր միայն երկրորդ մասը, կամ էլ երկու դասախոսություն կարդայիր, բայց չգիտեմ՝ առաջին մասի ունկնդիրը կգա՞ր երկրորդն էլ լսելու։

Ճանապարհ ընկանք տուն։ Տիկինս ոչինչ չասաց իր լսած կարծիքների մասին՝ «Տեսա՞ր, որ ես ճիշտ դուրս եկա»։ Ես ձայն չէի հանում, բայց երբ թեյ էինք խմում՝ անհարմար էի զգում կնոջս աչքերին նայել։ Երբ թեյասեղանից ելա՝ շնորհակալություն հայտնելով, տիկինս, կարծում եմ հասկացավ, որ ասածս չէր վերաբերում թեյին, այլ իր ճիշտ խորհրդին, որը չլսելով, պատժվեցի չարաչար։

ԿԱՏՎԻ ԽԱՂԸ՝ ՄԿԱՆ ՄԱՀԸ

Հայկական թատերական ընկերության նախագահ Գուրգեն Ջանիբեկյանը հրավիրեց հավաքույթի։ Դա ոչ թե ժողով, այլ թեյասեղան էր, որի շուրջը բոլորել էին հազիվ 15 մարդ։ Բեմադրիչներից՝ Արմեն Գուլակյան, Վարդան Աճեմյան, Տիգրան Շամիրխանյան, Վավիկ Վարդանյան։ Դերասաններից՝ Օլգա Գուլազյան, Ռուզան Վարդանյան, Վաղարշ Վաղարշյան, Հրաչյա Ներսիսյան, Ավետ Ավետիսյան, Դավիթ Մալյան, Գուրգեն Գաբրիելյան, Հովհաննես Ավագյան, թատերագետներից՝ Տիգրան Հախումյան, Սարգիս Մելիքսեթյան։ Հրավիրված էր նաև Մամիկոն Գևորգյանը։

Ջանիբեկյանն ասաց, թե որոշ ուշացումով ուզում ենք այսպիսի նեղ շրջանակով նշել մեր մայր թատրոնի հիմնադրման 25-ամյակը: Ափսոսանք հայտնեց, որ չի եկել Լևոն Քալանթարը: Հայտնել է, թե իրեն լավ չի զգում, այլապես կպատմեր շատ հետաքրքիր մանրամասնություններ անցածգնացած օրերից: Ուրախ ենք, որ այստեղ է Մամիկոն Գևորգյանը, որի ջանքերը շատ մեծ են եղել այն դժվար օրերին: Խնդրում եմ ողջունել նրա ներկայությունը:

Ներկաները ծափահարեցին: Մամիկոն Գևորգյանի համար այս վերաբերմունքն անակնկալ էր, հուզվեց: Վեր կացավ, գլուխ տվեց:

Այնուհետև Ջանիբեկյանն առաջարկեց հոտնկայս հարգել մեղանից առհավետ հեռացածների հիշատակը: Ոտքի կանգնեցինք, մի պահ լուռ մնացինք, որից հետո ճաշակեցինք սեղանը, որի վրա ճաշակելու քիչ բան կար: Երկու տարի չկար, ինչ պատերազմն ավարտվել էր, և երկիրը տակավին ուշքի չէր եկել տնտեսապես:

Աննկատելի կերպով զվարթ տրամադրություն տիրեց ներկաներին: Պատմում էին ով ինչ հիշում էր: Վաղարշը պատմեց, թե ինչպես է ինքը թատրոն ընդունվել և ասաց, որ եթե Մամիկոն Գևորգյանը չլիներ, գուցեև ինքը հիմա ով իմանա, որ թատրոնում լիներ: Մի պահ լրջացավ, մոտեցավ Մամիկոն Գևորգյանին և խոնարհ գլխով կանգնեց նրա առջև: Հիշեցին «Ավազակների» բեմադրությունից մանրամասնություններ, թե ինչպես Կարլոսի դերակատար Իսահակ Ալիխանյանը գժտվել էր ու մեկնել Թիֆլիս, թե ինչպես հարմար այլ թեկնածու չունենալով, Քալանթարը Արտեմ Բերոյանին է խնդրել փոխարինել, ինչպես ներկայացման օրը Բերոյանը հիվանդացել է, համարյա քառասուն աստիճան տաքություն է ունեցել և, որպեսզի ներկայացումը չհանվի, ստիպված ինքը՝ Քալանթարն է խաղացել Կարլոսի դերը:

Չեմ հիշում, թե ով, եթե չեմ սխալվում, Վաղարշյանն էր, խնդրեց Հովհաննես Ավագյանին պատմել Մյասնիկյանի պատմությունը: Հովհաննեսը սկզբում դիմադրեց, բայց հետո տեսնելով, որ դեպքին տեղյակները պնդում են, զիջեց:

— Ինչ ասեմ, գիտեք,— սկսեց նա,— որ պատանի հասակից թատրոնի սեր ունեի: Երկու մարդ մղեցին ինձ դեպի

այս ասպարեզը, հավատացնելով, թե թատրոնի համար տըվյալներ ունեմ՝ լավ ձայն, զգացմունքային աշխարհ։ Մեկը Հոմանոս Մելիքյանն էր, մյուսը՝ Միքայել Մանվելյանը։ Երկուսն էլ միջնորդ եղան թատրոնի ղեկավարության առաջ։ Մինչև կյանքիս վերջը շնորհակալ եմ լինելու նրանցից։ Ընդունվեցի թատրոն։ Բայց դերասանի հաստիք չկար, առաջարկեցին, որ աշխատեմ կապելդիներ, տոմսեր ստուգող, բայց մեկ-մեկ էլ դերեր խաղամ։ Դե, դուք ինձնից լավ գիտեք, թե ինչ ուժ է թատրոնի սերը, որ մտավ մարդու մեջ, էլ դուրս եկողը չի։ Եվ ավելի հավատում եմ, որ սիրահարվածն աղջկանից կհրաժարվի, բայց ոչ թատրոնից։

Փոքրիկ, աննշան դերեր էի խաղում. Դրիմ՝ «Ավազակների» մեջ, վաճառական՝ «Ռևիզորում», ապա՝ «Օթելլոյում»։ Իսկ երբ ապատ էի լինում, կապելդիների պարտականությունս էի կատարում։ Կանգնում էի դահլիճի դռանը և ստուգում տոմսերը։ Ափսոս, լեռնը չկա, հոգի ունեմ աստծուն տալու։ Նրանից էլ շնորհակալ եմ։ Էս Քալանթարն ինձ նայում էր, թե արդյոք մի բան կ՚ա մեջս։ Ես զգում էի, որ նա սպասողական վիճակի մեջ է, ձայն չէր հանում, բայց լուռ հետևում էր ինձ, որ մի եղրակացության գա։ Երկար տևեց իմ այս «քննությունը», համարյա երկու տարի, Պարսկաստանի շըրջապտույտից հետո այլևս կապելդիներ չէի, դերասան էի միայն։

Ինձ Մամիկոն Արտեմիչը, թատրոնի խստասիրտ դիրեկտոր, կանչել էր ու ասել, որ երրորդ զանգից հետո, նույնիսկ եթե վարագույրը բացված չէ, թատերասրահի դռները փակեմ ու ոչ ոքի ներս չթողնեմ։

— Լսո՞ւմ ես, ոչ ոքի։ Բացառություն չես անում, ով էլ լինի։ Աստված էլ որ երկնքից իջնի, մեկ է, դարձյալ չես թողնի։ Լավ իմացիր, ներկայացումը չի կարելի խանգարել։ Մեր պարտքն է հանդիսականին նաև կարգապահություն սովորեցնել։

Սպառնացել էր, որ եթե մոռանամ և մեկնումեկին ջեմ, դուրը բանամ, հաջորդ օրը հրաժեշտ կտամ թատրոնին։ Ես էլ հո խելքս հացի հետ չէի կերել, հազիվ էի թատրոն ընկել, ով էլ գար, չէի թողնելու և վերջ։

Ահա թե ինչ եղավ մի օր։ Ներկայացումը սկսվելուց երևի

հինգ րոպե անց մի մարդ եկավ, որ ներս մտնի, թույլ չտվին։ Ասաց, թե երկու օրից մեկնում է Թիֆլիս և ուզում է նոր ներկայացումը անպայման նայել։ Ես ասացի, որ չեմ կարող կարգը խախտել, որ ինձ կարգադրված է երրորդ զանգից հետո մարդ չթողնել։ Նա թե՝ շա՜տ եմ խնդրում։ Ես էլ ասի՝ չէ ու չէ։ Նա թե՝ գուցե բացառության կարգով թույլ տրվի իրեն դահլիճ մտնել։ Ես էլ թե՝ ո՛չ մի բացառություն։ Նույնիսկ, եթե եկողն աստված լինի։ Ներողություն խնդրեց ու գնաց։ Նրա գնալուց հետո թատրոնի աշխատողներից մի երկուսը մոտեցան ու հարցրին, թե ինչի մասին էինք խոսում։ Ասացի։ Նրանք հարցրին՝ «Գիտե՞ր, թե ով է»։ Ասի՝ չէ և վերջապես, ինչ նշանակություն ունի, թե ով է, կարգը բոլորի համար է։ Սրանք էլ թե՝ Մյասնիկյանն էր։ Դողն ընկավ ջանս։ Մի կես ժամ չէր անցել, դիրեկտորը կանչեց, թե՝

— Դու էդ քանի գլուխ ունես, որ կառավարության նախադահին թույլ չես տվել դահլիճ մտնել։

Ես էլ արդարացա՝ իր կարգադրությունն եմ կատարել։

— Բա դուք չասիք, որ աստված էլ գա՝ չթողնեմ, ինչ է, Մյասնիկյանը աստծուց բարձր հո չէ։

Մամիկոն Արտեմովիչը բարկացավ՝

— Այդ ինչ շառեր ես մոգոնում, ի՜նչ աստված, ի՜նչ բան։ Այս աթեիստ դարում ես ինչի պիտի աստծու անունը տայի, իսկ եթե ճիշտն ուզում ես իմանալ՝ Մյասնիկյանը մեզ համար աստծուց էլ բարձր է։

Հետո մեղմացավ։

— Հովհաննես, պատրաստ եղիր ամեն բանի։ Կարող է այնպես լինել, որ վաղը ես քո ազատման հրամանը տամ, իրենք էլ՝ իմը։

Հովհաննեսը խոր շունչ քաշեց, նայեց իր պատմության ունկընդիրներին։ Մամիկոն Գևորգյանը դարձավ Ավագյանին.

— Հովհաննես, ես շարունակեմ։ Մյուս օրը, ցերեկվա ժամը 12-ը կլիներ, զանգ տվին, թե Պողոս Մակինցյանը ասել է, որ շտապ գնամ լուսժողկոմատ և ներկայանամ իրեն։ Դե, այն ժամանակ, դուք գիտեք, որ թատրոնները լուսժողկոմատին էին ենթարկվում։ Մտա ժողկոմի առանձնասենյակը, հարցրի.

— Կանչե՞լ եք։

Ոչ մի պատասխան։ Սուսուփուս ներս մտա։ Նստած էր Զարենցը։ Պողոսն էլ սենյակի մի ծայրից մյուսն է գնում-գալիս։ Զարենցը ձեռքով նստելու նշան արեց։ Նայում եմ Մակինցյանին՝ մռայլ է։ Զարենցն էլ ո՛չ ձայն է հանում, ո՛չ էլ իմ կողմն է նայում, որ գոնե նրա դեմքի արտահայտությունից բան հասկանամ։ Ճնշող լռություն է։ Վերջապես ժողկոմը մոտեցավ գրասեղանին, նստեց, բացեց դղրոցը, որ գոնի ինչ-որ թուղթ։ Մեկ էլ բթի տակ.

— Ի՞նչ եղավ Ալեքսանդր Ֆյոդորովիչի հրամանը։

Ուրեմն Մակինցյանը որոնում է ինձ աշխատանքից ազատելու կարգադրությունը։ Ուրեմն կուժն ու կուլան իմ գլխին ջարդվեց։ Վա՛յ Ավագյան, վա՛յ Ավագյան։ Դե արի Մամիկոն, թատրոնը թող, պիես գրելն էլ, զբաղվիր քո իրավաբանությամբ։ Վերջապես գտավ թուղթը, դրեց իմ առաջը, ես էլ, առանց կարդալու, թղթապանակս բացի ու դրի մեջը։ Մակինցյանը թե.

— Կարդացեք, տեսեք, թե ինչ է գրված։

Մի՞թե պարզ չի, թե ինչ պիտի գրված լինի։ Հիմի կկարդամ, թե հետո, մեկ չի՞։ Կարդացի և ի՞նչ. «Ժողկոմխորհի նախագահ. ընկ. Ալեքսանդր Մյասնիկյանի առաջարկով կարգապահությունը թատրոնում բարձր հիմքերի վրա դնելու համար շնորհակալություն հայտնել թատրոնի դիրեկտոր ընկ. Մամիկոն Գևոգյանին և մի ամսվա աշխատավարձով պարգևատրել թատրոնի կապելդիներ ընկ. Հովհաննես Ավագյանին»։ Աչքերիս չհավատացի։ Մեկ էլ Մակինցյանն ու Զարենցը բարձրաձայն ծիծաղեցին.

— Համա թե օյին խաղացինք։

Դե արի ու մի ասա՝ կատվի խաղը՝ մկան մահը։

ԿԱՐՈՏ

Որքան էլ կապված էի Երևանի հետ և չեմ պատկերացրել իմ կյանքը առանց դրա, միշտ զգացել եմ Թիֆլիսի կարոտը։ Ու հիմա էլ, որ գրում եմ այս տողերը, հուզված եմ հաճելի զգացումից։

Որքան զբաղված եմ եղել՝ ամեն կանչ տարել է ինձ այդ

հարազատ քաղաքը՝ դասախոսություններ կարդալու, ներկայացում նայելու, հոբելյանական երեկոների մասնակիցը լինելու։ Եվ ամեն անգամ գնացել եմ «Կազարմի թաղը», պըտրտել մեր տան շուրջը, մտել բակը և, չնայելով բնակիչների պարմացած հայացքներին, կանգնել եմ երկար ու մտովին ոգեկոչել մանկությանս անհոգ օրերը։ Գնացել եմ Բեհբության փողոցը, որտեղ մեր մանկավարժական ուսումնարանն էր, անցել եմ այն փողոցով, որտեղ Հայարտունն էր, ու հիշել եմ պատանեկության երանելի օրերը, գնացել եմ Ռուսթավելու անվան թատրոն, պատանեկան ռոմանտիկ տարիները վերհիշել։ Եվ ամեն անգամ Երևան վերադառնալուց առաջ՝ բարձրացել եմ Մամադավիթ սարը ու, երկնքին մոտ զգալով ինձ, նայել եմ հայացքիս առաջ փռված քաղաքին, որ փայփայել է իմ ու ինձ նման շատ երիտասարդների երազանքները։

Ես լավ ընկերներ ունեմ Թիֆլիսում՝ Սուրեն Ավչան, Մկրտիչ Ասլանյան, Բենիկ Սեյրանյան, Մարտին Քարամյան։ Նոր ընկեր էլ ունեմ՝ Արտաշես Մխիթարյան, բոլորովին երիտասարդ, որի գրականագիտական առաջին իսկ քայլերը ներշնչեցին լավ ապագայի հույսեր։

Միշտ իջևանել եմ Մարտին Քարամյանի տանը, իմ լավ ընկերոջ, որի անձնավորությունն ու անկեղծությունը կաշառող ուժ ունեն։ Նա շնորհակալ գործ արեց, հրատարակելով երկու գրքույկ՝ «Վրաց բանաստեղծները Հայաստանին», «Հայ բանաստեղծները Վրաստանին»։ Համոզված, որ բանաստեղծը ժողովրդի սրտի ձայնն է, նա իր գրքույկներով երկու ժողովրդին նորից մղեց ավելի խոր փոխճանաչման, փոխըմբռնման, փոխհարստացման։

Հ. Գ. Իմ այդ ընկերներից երկուսն են մնացել, մյուսները, ավա՜ղ, չկան։ Նրանց չլինելով, ինձ, նաև ուրիշներին, շատ բան պակասեց։

ՆԿԱՐԻՉԸ

Ռաֆայել Շիշմայանին ու իր կնոջը՝ Ալիսին, հաճախ եմ հանդիպել Իսահակյանների տանը։

Լռակյաց, ինքնամփոփ մարդ էր նկարիչը։ Ամուսնու ճիշտ

հակապատկերն էր տիկինը: Այն տպավորության էի, որ կյանքի դժվարությունների դեմ կռիվ ելնողը նա է ունենալով լոկ մի ցանկություն՝ ամուսնուն ազատ պահել ընտանեկան բոլոր հոգսերից, որ նա հոգեկան ադորը ունենա և գլխովին նվիրվի նկարչության:

Իմ հանդիպումները Շիշմանյանի հետ հաճախակի դարձան: Հավատարիմ իր բնավորությանը՝ պատասխանում էր իմ տված հարցերին, մնացած ժամանակ լուռ էր:

Բովանդակալի կյանք էր ապրել. մանկությունն անցել էր Լիճքում, Ակնա շրջան, պատանեկությունը՝ Պոլսում, որտեղ սովորել ու ավարտել էր Կեդրոնական վարաժարանը: Մ. Մեծարենցը դասընկերն է եղել, որի հետ մտերմություն է ունեցել: Իսկ հետագա կյանքը, շորս տասնամյակ, ապրել է Փարիզում ու սովորել Ժյուլիանի նկարչական ակադեմիայի դասընթացներում: Մասնակցել է «Անկախներ» սալոնի ցուցահանդեսներին, գրավել ուշադրություն: Ճանաչել և բարեկամություն է արել ֆրանսիական նկարչության աստղերի հետ՝ Մատիս, Շագալ: Հիացմունքով էր խոսում Ռենուարի մասին: Շփվել է շատ հայ նշանավոր մարդկանց հետ՝ Արշակ Չոպանյան, Էդգար Շահին, Հակոբ Գյուրջյան և ուրիշներ: Մտերիմ է եղել հատկապես Շարլ Ադամյանի հետ:

Հունիսի 15-ը նրա ծննդյան օրն է: Այդ օրը մի անգամ էլ ես եմ եղել իրենց տանը: Բացի Իսահակյանից, որ եկել էր տիկին Սոֆիկի հետ, այնտեղ էր նաև Մարտիրոս Սարյանը:

Տիկին Ալիսն ասաց, թե նկարչի տանը բացվելու է Ռաֆայելի անհատական ցուցահանդեսը, արդյոք չէ՞իք հաճի ներկա գտնվել: Իհարկե, գնացի և համոզվեցի, որ Շիշմանյանը շատ լավ նկարիչ է: Ես աչքի առաջ ունեմ ոչ այնքան այստեղ՝ հայրենիքուս վրձնած կտավները, որքան Փարիզից բերված բնանկարները:

Դատելով ըստ այդ գործերի՝ Շիշմանյանը մեղմ խառնվածք ունի, զգայուն սիրտ, անմիջական և անկեղծ բնավորություն: Մաքրություն կա նկարներում, վճիտ հայացք: Բարի է, լավատես:

Լսել էի, որ Փարիզի «Անի» նկարչական խմբակցության հիմնադիր ղեկավարներից է: Ուրախ, որ այստեղ դրանից տեղյակ մարդիկ կան, պատմեց մանրամասնությունները,

ցույց տվեց 1930-ի խմբանկար՝ արված «Անիի» վերջին ցուցահանդեսի կապակցությամբ՝ Էդգար Շահինն, Հակոբ Գյուրջյան, Գրիգոր Շլդյան, Սարգիստ Խաչատրյան, Արմինիա Բաբայան, Արմեն Շաբանյան, Հովհաննես Ալխազյան և ուրիշներ։ «Անիի» փակվելուց հետո Շիշմանյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Հայ ազատ արվեստագետների միությունն», որի երկարամյա նախագահը եղել է ինքը։

Նկարչից հաճախ եմ լսել, թե ինչ բարձր կարծիքի է Էդգար Շահինի մասին։ Պատմել է մանրամասնություններ նրա կյանքից։ Քանի անգամ է ասել, որ Շահինը արվեստի բացառիկ երևույթ է, որ մեր ազգի պատիվը բարձր է պահել մշտապես։

Իմանալով, որ նկարիչ լինելուց բացի, արվեստաբանական հոդվածների հեղինակ է (գրել է Կորոյի, Բուրդելի մասին), մի օր հարցրի՝ չէ՞ր կամենա, արդյոք, Շահինի մասին գիրք գրել, պատկերացում տալով նրա կյանքի և գործի մասին։ Ասաց, թե «Դուք կարդացիք իմ միտքը։ Եթե չանեիք այդ առաջարկը, ինքս էի անելու»։

Պայմանավորվեցինք։

Արվեստի ինստիտուտում որոշ ընկերների չոգևորեց այդ նախաձեռնությունս, նույնիսկ կշտամբողներ եղան։ Այդ խոսակցությունները հասել էին Շիշմանյանի ականջին։ Տիկին Ալիսը վրդովված էր, ինքը վշտացած էր, բայց նրբանկատ լինելով, մի օր ասաց, թե չի կամենում ինձ ծանր վիճակի մեջ դնել։ Ես հանգստացրի նրան և խնդրեցի գործն ավարտին հասցնել։

Գիրքը լույս տեսավ 1956-ին։

Մի գիրք էլ գրեց՝ «Բնանկարը և հայ նկարիչները», որը լույս տեսավ 1958-ին։ Քանի-քանի անգամ տրտնջացել է, որ իր հրատարակիչները պահանջում են գրածը փոխել, մոտեցումը դարձնել մարքսիստական, այլապես գործն ընթացք չի ստանա։ Միջամտելու անհրաժեշտություն զգացվեց։ Հարկ եղավ մարդկանց հիշեցնել, որ 40 տարի Փարիզում ապրած, կյանքում Մարքս երբեք չկարդացած նկարչից ինչու՞ պահանջել անկարելին։

Սարյաններց տանն ենք։ Թեյասեղանի շուրջ զրույց է։ Որքան միտս է մնացել, Ալիսը պատմում էր այն մասին, որ

Ռաֆայելի հետ գնացել են Մոսկվա և հանդիպել ռուս նկարիչների հետ: Ալեքսանդր Գերասիմովը, տեսնելով, որ հայ նկարիչը ռուսերեն չգիտե, խոսել է հետը ֆրանսերեն ու հանկարծ բացականչել.

— Ի՞նչ ընդունակ մարդիկ են հայերը, տեսեք, թե ընկ. Շիշմանյանն ինչ ընտիր ֆրանսերենով է խոսում:

Ըստ երևույթին Սարյանի սրտովը չէր Գերասիմովի անվան հիշատակությունը, ընդհատելով արվեստակից ընկերոջ խոսքը, հարցրեց.

— Պիկասոյի հետ ծանո՞թ էիր:

— Այո:

— Ի՞նչ կարծիքի ես նրա արվեստի մասին:

— Ես երկու Պիկասո գիտեմ, հին և նոր: Հնով հիացած եմ, նորը չեմ հասկանում:

Մի պահ լռեց, շուրջը նայեց ու առաջ տարավ ասելիքը իրեն հատուկ հանդարտությամբ.

— Պիկասոյի ցուցահանդեսն էր կազմակերպված Փարիզում: Երկու հսկա դահլիճ էին հատկացրել: Գնացինք, հիշո՞ւմ ես, Ալիս: Մնացինք զարմացած, հանդիպելով ոստիկաններին: Շատ երիտասարդներ կային, որ վրդովված էին՝ «Ինքն է խենթը, թե՞ մեզ է խենթերի տեղ դրել»: Ոստիկանները կարգված էին վերահսկելու, որ նկարներին վնաս հասցընող չլինի:

Իսահակյանի տանն ենք:

Բանաստեղծն ու նկարիչը հիշեցին իրենց միացյալ այցը Լուվր: Շիշմանյանը բացատրություններ է տվել, պարզաբանել որոշ հարցեր, նկարչական մոտեցումներ: Հիշեցին, թե ինչպես երկար կանգ են առել, «Ջիոկոնդայի» առաջ, կամենալով մեկնել գեղարվեստական հրաշքի գաղտնիքը:

Տասներկու տարի ապրեց ու գործեց Շիշմանյանը մայր հայրենիքում, 74 տարեկան հասակում վախճանվեց: Նրա մահվան լուրն առնելով, Գառնիկ Ստեփանյանն ու ես շտապեցինք Շիշմանյանների տուն: Այնտեղ էր Սարյանն իր տիկնոջ հետ: Հուղարկավորները շատ չէին ու չէի ասի, թե գերեզմանատանն ասված դամբանական խոսքերն իր արժանիքների համեմատ էին:

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ՄԱՀԸ

Թղթապանակումս գտա մի էջ, ուր գրված է՝ «Լուր եկավ Բեյրութից, որ 1947-ի օգոստոսի 15-ին, 74 տարեկան հասակում վախճանվել է Նիկոլ Աղբալյանը»։

Ես Նիկոլ Աղբալյանին չեմ տեսել։ Գիտեմ նրա մասին ուսուցիչներիս պատմածներից։

1926-ին էր։ Մանկավարժական ուսումնարանի սաներ էինք, «Հայարտան» ասուլիսներին հետևող պատանիներ, որոնց համար գրականությունից ու արվեստից ավելի բարձր հրապույր չկար։ «Հայարտան» գրական հավաքույթներին հաճախ էինք լսում Նիկոլ Աղբալյանի անունը, բայց չգիտեինք ո՞վ է։ Եվ մի օր հայտ լեզվի մեր ուսուցչին, որ Մարգար Ամետխյանն էր, պատմվածքների ու վիպակների հեղինակ, հարցրինք։ Հիացմունքով խոսեց Աղբալյանի մասին, բնորոշեց որպես խորաթափանց գրական քննադատի։ Ասաց, թե նրա անունը կապված է մեր շատ անվանի բանաստեղծների առաջին քայլերի հետ։ Միտս է ուսուցչիս մի ուրիշ ասածը ևս. «Սայաթ-Նովայի մասին զեկուցում կարդալիս՝ մեջբերումները երգելով էր ասում՝ սրտալի ձայն ուներ»։ Եվ հետո ավելացրեց՝ «վառ անհատականություն էր, տպավորիչ, ազդեցիկ, անմոռանալի։ Չէի ասի, թե արտաքին փայլ ուներ. կարճահասակ էր, մի փոքր էլ՝ ծաղկատար։ Ամբիոնից խոսք ասելիս ձեռքին թղթի կտոր ուներ, որի վրա ելույթի կետերն էին։ Նայում էր ու խոսում։ Հազիվ երկու խոսք ասած՝ դահլիճը քարացած լսում էր, ենթարկվելով նրա հմայքին, որ ունեին խոսքը, ձայնը, շեշտը, դեմքի արտահայտությունը, մտքի ընթացքը»։

Շատ տարիներ անց, 50-ական թվականների սկզբներին, ամերմիկ զրույցի ժամանակ Հարցրի Նվարդ Թումանյանին՝ հիշո՞ւմ է, արդյոք, Նիկոլ Աղբալյանին։ Պատասխանն անսպասելի չէր. «Նրան մի անգամ տեսնողը՝ չէր մոռանա երբեք։ Երբ մեր տուն էր գալիս, բոլորս համակվում էինք ուրախ տրամադրությամբ։ Հայրիկի ու մայրիկի ցանկալի հյուրն էր։ Մեր տանը հաճախ էր լինում ու չեմ հիշում, որ գոնե մի օր նրա ներկայությունը ձանձրալի լիներ, միօրինակ։ Հրաշալի պատմող էր։ Մենք շրջապատում էինք ու հափշտակված լսում նրա համով-հոտով պատմությունները։ Նրա խոսքը չէր խամ-

ղում հայրիկի միջամտությունից, մի բան, որ նկատում էինք ուրիշ դեպքերում՝ զգալով հայրիկի ու նրա զրուցակիցների տարբերությունը: Ինչպես մեզ հետ, ճիշտ նույնն էր իր հրապարակային ելույթների ժամանակ՝ պարզ, բնական, մարդկային:

Քահանական թվականները, մանավանդ իմ ակնարկած տարինները, դեմոկրատական տարիներ էին իսկապես: Միմյանց դեմ գործող գրական կազմակերպություններ կային, նկարչական տարբեր խմբակցություններ, թատրոններ՝ տարբեր խաղացանկով, ոճն ու ուղղությունը նույնպես տարբեր: Թատրոնը Լևոն Շանթի «Հին աստվածներ» էր ներկայացնում, ինչպես նաև «Կայսրը»: Բեմում կարելի էր տեսնել նաև Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը»:

Երեսնական թվականների սկզբներից կտրուկ փոխվեց իրավիճակը: Աղբալյանի անունը այլևս չարվեց, ինչպես նաև Շանթի և մանավանդ՝ Ահարոնյանի: Տերյանի ու Զարենցի մասին գրվում էին գրքեր, ուսումնասիրություններ, նաև Ավետիք Իսահակյանի, և ոչ ոք չէր հիշում նրանց առաջին գնահատողին: Ըստ պաշտոնական դրվածքի՝ Աղբալյանի անունը չէր կարելի տալ: Բանը հասավ այնտեղ, որ «Զարենց-նամեն» վերահրատարակելիս բանաստեղծը պոեմից հանեց Աղբալյանի անունը, գրելով՝ «Մի լուրջ քննադատ մի օր»: Ու եթե ես ու իմ սերնդի մարդիկ, այնուամենայնիվ, ինչ-որ պատկերացում ունեինք Աղբալյանի մասին, ապա պատճառն այն էր, որ միջնակարգ կրթությունը ստացել էինք քահանական թվականներին, նաև այն, որ բանասիրական կրթության ընթացքում թերթել ենք տասական թվականների հայոց պարբերական մամուլը: Առանձնապես ուշադիր էինք Ն. Աղբալյան և Ն. Ա. ստորագրությամբ լույս տեսած հոդվածների նկատմամբ: Եվ, ինչ թաքցնեմ, այդ հոդվածների հրապույրն այնքան ազդեցիկ էր, որ փոխառում էինք գրելու որոշ հատկանիշներ, հոդվածն ինչպես սկսել, ինչպես կառուցել, միտքն արտահայտել պարզ, առանց մասնագիտական խճողումների, մտքին հուզականություն հաղորդել: Հայտնաբերել հեղինակի անհատականությունը, խառնվածքը:

Այն տարիներին կազմել եմ Աղբալյանի հոդվածների մատենագիտական ցանկը՝ («Մուրճ» և «Հորիզոն»): Ըստ այդ

ցանկի՝ Արտախանյանի հանդեսում Աղբալյանի հրապարակած հոդվածները երկու տասնյակից ավելի է, մինչդեռ քննադատի երկերի առաջին երկու հատորը կազմողները քաղել են ընդամենը մի հոդված: Ըստ նույն ցանկի՝ «Հորիզոնում» տպվածների թիվը անցնում է հիսունից:

Հրապույրի ազդեցությունն այն չափերի էր, որ նրա՝ Ն. Ա.-ի օրինակով, որոշ հոդվածների, հատկապես գրախոսությունների տակ ստորագրել եմ Ռ. Զ. ու երևի դա շարունակվեր մինչև հիմա, եթե մեր մամուլից չվերանար սկզբնատառերով ստորագրելու փորձն ընդհանրապես:

Տարիներ անցան, տասնամյակներ հաջորդեցին իրար, մի խոսքով, սերունդները գալիս էին ու գնում, առանց իմանալու, որ ապրել ու գործել է մի նշանավոր գրականագետ, որի հեղինակությունը ժամանակին ընդունել են մեր գրականության բոլոր հանրաճանաչ դեմքերը:

Ծնվել է 1873-ին Թիֆլիսում: Հայրը՝ հացթուխ, մայրը՝ նահապետական բարքերով ապրող կին: Սովորել է Ներսիսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում: Չի ավարտել: Մեկնել է Պետերբուրգ և լսել Նիկ. Մառի դասախոսությունները: Հաճախել է Մոսկվայի համալսարանի դասընթացները: Այնուհետև ծայր են առել նրա արտասահմանյան շրջագայությունները՝ Ֆրանսիա, Շվեյցարիա, Բալկաններ, Եգիպտոս: Փարիզում և Լոզանում լսել է համալսարանական դասախոսություններ: 1905-ին վերադարձել է Կովկաս, իսկ 1909-ին նորից է մեկնել արտասահման, այս անգամ՝ Պարսկաստան, որտեղ մնացել է երեք տարի: Վերադառնալուց հետո ծավալել է գրական հասարակական բուռն գործունեություն: Վերադառնալով Կովկաս, Աղբալյանը կապվել է գրական շրջանների հետ, եղել Հովհ. Թումանյանի «Վերնատան» անդամը, իսկ 1912-ից՝ ընդգրկվել Հայ գրողների ընկերության մեջ: Իննսունական թվականների վերջերից աշխատակցել է հայոց պարբերական մամուլին («Մուրճ», «Հորիզոն», «Նոր հոսանք»):

Շատ է գրել Լևոն Շանթի, Սայաթ-Նովայի մասին: Գրել է գրախոսականներ Ավետիք Իսահակյանի «Երգեր ու վերքեր», Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուների մասին: Գրել է Ստ. Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածքների ժողովածուի առաջաբանը:

Տասական թվականները, հատկապես առաջին մի քանի տարին, Նիկ. Աղբալյանի գրական գործունեության ծաղկուն տարիներն են եղել։

1917-ին լինելով Բաքվում, «Արև» պարբերականի խմբագրատանը, պատահմամբ Աղբալյանի ձեռքն են անցել Եղիշե Չարենցի, իր համար այն ժամանակ անհայտ հեղինակի, «Երեք երգ տխրադալուկ աղջկան» և «Դանթեական առասպել» գրքերը։ Թերթելով այդ գրքերը, համոզվել է, որ գործ ունի ակնհայտ տաղանդի հետ։ «Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում և վարժ տաղաչափություն։ Մի տաղանդավոր սկսնակ... Վ. Տերյանի հետքերով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնից»։ Մտքին դրել է գրախոսել երկու գիրքն էլ։ Բայց ժամանակները խառն էին, և չի եղել հոգեկան խաղաղ պահ, որ գրեր ու ողջույներ նոր բանաստեղծի գալուստը գրականություն՝ «Ո՞վ ժամանակ ուներ գրականության մասին խոսելու կամ լսելու»։ Հետո, իր նախարարության տարիներին վերհիշել է անծանոթ հեղինակին։

Դրա համար կային հիմնավոր պատճառներ։

Դեռ 1913-ին «Հորիզոնի» էջերում Աղբալյանը հրապարակել է նախորդ տարվա գրականության նվիրված տեսություն և արձանագրել, որ «վհատ տրամադրությունների կողքին արդեն նկատվում են ավելի առողջ տրամադրության առաջին ցոլքերը, որոնք ցույց են տալիս, թե գրականության մեջ պատրաստվում է մի նոր հոսանք»։ Հետո ավելացրել է. «Այս նոր տրամադրությունը չունի մի այնպիսի ներկայացուցիչ, որ իր տաղանդով բարձրանար հոգով իրան նմանների մեջ, ինչպես Վ. Տերյանն իր շրջանում»։

Հիմա հայտնվել էր այդ ուժեղ տաղանդը՝ Չարենցը։ Ուրեմն Աղբալյանի համար Չարենցը տարիներով սպասված բանաստեղծ էր։

Եվ նա, Երևանում, պառլամենտի դահլիճում, կարդացել է դասախոսություն «Մի նոր բանաստեղծ» վերնագրով ու հռչակել, որ բանաստեղծական նոր աստղ է հայտնվել հայոց գրականության երկնակամարում։ Լրագրերի համառոտ հաշվետվությունից իմանալով, որ Աղբալյանն իր մասին դասախոսություն է կարդացել, Չարենցը ներկայացել է կրթության և մշակույթի նախարարին՝ Նիկոլ Աղբալյանին։ Նա բանաս-

տեղծին առաջարկել է թողնել գյուղական ուսուցչությունը և ստանձնել իր անձնական քարտուղարի պաշտոնը՝ ոչ այնքան գործ ունենալու, որքան նյութական որոշ ապահովություն և գրելու ազատ ժամանակ ունենալու համար:

Աղբալյան-քննադատի մի այլ արժանիքը:

Բելինսկուն բնութագրողները, նրա գրական թափանցումը բնորոշելիս շեշտել են, որ օժտված էր հազվագյուտ ձիրքով, կարողանում էր գրականության մեջ առաջին քայլերն անողի մեջ տեսնել նրանց ապագա հանճարը՝ Պուշկին, Լերմոնտով, Գոգոլ և ուրիշներ: Մեր գրաքննադատության մեջ այդ թափացումն ուներ Աղբալյանը: Նա առաջինը գնահատեց Իսահակյանին, Տերյանին, Զորյանին, Չարենցին և ուրիշներին, որոնց տաղանդի գալիք ծլարձակումը եղավ նրանց առաջին գրքերի առաջին գրախոսի տված գնահատանքի արդարացումը: Հարցը միայն առաջին քայլերի արժեքի ճիշտ սահմանումը չէր: Հարցը նաև այն էր, թե նրանց ապագայից ինչ կարելի է սպասել, եթե ճանապարհը խաթարող մութ ուժերը չլինեն, իսկ եթե լինեն, ապա կամքն ու տաղանդի զորությունը բավարար կարողություն կունենան հակադրվելու և նոր բարձրությունների հասնելու: Աղբալյանը այդ քննախույզ աչքը ուներ, որ կարողացել է ոչ միայն նոր տաղանդի ապագա շրջագիծը քաշել, որից այն կողմ նրան սպասում է ձախողում, այլ նաև այն թռիչքը, որ բարձր է բոլոր տեսակի սահմանափակումներից, և ոչ ոք չի կարող ասել, թե հոգուց ճախրած այդ նետը սլացքի մեջ մինչև ուր է հասնելու:

1921-ին, ինչպես շատ ուրիշ դաշնակցականներ, Աղբալյանը ևս, անցել է արտասահման: Նախ՝ Պարսկաստան, հետո՝ Եգիպտոս: Այստեղ մնացել է մինչև 1928-ը: Շանթի հետ մեկնել է Լիբանան և Բեյրութում 1930-ին հիմնել Ճեմարան, դառնալով հայ գրականության դասատու:

Ունենալով ազատ ժամեր և օրեր, Աղբալյանն աշխատակցել է ոչ միայն Բեյրութի հայկական պարբերականներին, այլ նաև Երուսաղեմի, Կահիրեի, Վիեննայի, Բոստոնի, Փարիզի պարբերական հանդեսներին՝ «Սիոն», «Հանդես ամսօրյա», «Հուսաբեր», «Հայրենիք», «Վեմ»: Բազմաճյուղ հետազոտումներ էին՝ «Դիտողություններ հայոց լեզվի մասին», «Հնչաբանական դիտողություններ», «Բանասիրական մանրուքներ»:

1937-ին գրել է «Բանասերի հուշագիրը» (հայոց լեզվի բառագանձի հետազոտում)։ 1944-ին՝ «Պատմություն հայ գրականության (Ներածություն)»։ 1944—1945-ին՝ Սայաթ-Նովայի տաղերի մեկնություն։ Հայտնի է, որ Աղբալյանի գրչին է պատկանում նաև «Սայաթ-Նովայի բառարանը» խոշագրով աշխատությունը, որ մինչև հիմա էլ անտիպ է։

Ճեմարանում, աշակերտության շրջանակում, Բեյրութի հասարակության բոլոր դանդվածների համար Աղբալյանը եղել է ճանաչված մարդ, որի հանդեպ սերն ու ակնածանքը խաչաձևվել են, բերելով նրան փայլուն հռետորի, ներհուն դիտնականի համբավ։ Հմուտ դասախոս լինելով, Աղբալյանը, բացի դրելուց, շատ դասախոսություններ է կարդացել ոչ միայն Բեյրութում, այլ նաև Թեհրանում, Ալեքսանդրիայում, Փարիզում, Հալեպում և այլուր։ Նրա նյութն էր հայ գրականությունը հնագույն դարերից մինչև մեր ժամանակները։ Այդ դասախոսությունները լույս են տեսել մամուլում, հետագայում կազմելով «Դասախոսություններ» խորագիրը կրող հատուկ շարք։

Աղբալյանի ինքնակենսագրության մեջ, ի միջի այլոց, կան այսպիսի տողեր.

«Կոչումս ի՞նչ է, ես էլ չգիտեմ, ոմանք ասում են՝ քննադատ եմ։ Ուրիշների կարծիքով մատենագիր եմ։ Ուրիշ բաներ էլ են ասում։ Իմ գիտցածովս ես էլ շատերի պես ամեն բան եմ և ոչինչ եմ»։

Այդ ինքնաբնութագրման մեջ հեգնական շեշտ կա և թախծոտ տրամադրություն և, ինչ խոսք, խոստովանություն, որ կարող է անել լոկ մեծ անհատականությունը։ Կատակ է, թե լուրջ, բայց այդպես է ինքն իրեն տեսել՝ ամեն բան և ոչինչ։

Իբր հայոց գրականության պատմաբան Աղբալյանի ծառայություններն անուրանալի են։ Գիտության այդ ճյուղում նա ասել է իրեն վերապահված խոսքը։ Բայց այդ մարդում անչափելի մեծություն կա։ Օրինակ՝ Մ. Աբեղյան, որը մասին ինքը՝ Աղբալյանը, 1944-ին ասել է. «Ան կազմակերպած է մեր ազգային գիտակցությունը», «գրական, բանահյուսական և տաղաչափական ստեղծագործության մեջ»։ Ուրեմն, ոչ ոք «այսուհետև կարող է այս մարզերին մոտենալ առանց անցնելու անոր դպրոցեն»։ Որպես գրականության պատ-

մաբան, նա լավագույն դեպքում կարող է այդ մեծություններին կողքին լինել: Բայց կա մի ասպարեզ, որտեղ իր հավասարը չուներ ոչ տասնիններորդ դարի վերջում, ոչ էլ դարասկզբին և մանավանդ տասական թվականներին: Դա գրական քննադատությունն է: Այնտեղ նա մրցակից չունի: Նա առաջինն է: Եվ հակառակ այն բանի, որ տասական թվականներին կային այնպիսի լուրջ ուժեր, ինչպես Սիմոն Հակոբյանը, Արաեն Տերտերյանը, Հարություն Սուրխաթյանը, Արտաշես Կարինյանը, Մամբրե Մատենճյանը, Պողոս Մակինցյանը, Յոլակ Խանզադյաըը և ուրիշներ: Նա դրել է գրական քննադատության ընտիր էջերը մեր գրականության մեջ: Նրան կոչել են «Հայկական Բելինսկի»: Նիկոլ Աղբալյանը գրական քննադատ է ի վերուստ: Դասական դեմք է: Եվ այսօր էլ, իբրև գրական քննադատ, իր նկարագրի շատ առումներով կարող է ուսանելի լինել:

Մինչև արտասահման փոխադրվելը նա գրական քննադատ էր առավելապես, մասամբ միայն բանասեր և գրականության պատմաբան: Արտասահմանում գլխավորապես բանասեր է ու պատմաբան, և դեպքից դեպք միայն գրաքննադատ: Երևի դա նրանից է, որ, ապրելով արտասահմանում, նա իր ոտքերի տակ չի զգացել այլևս հայրենի գրականության հողը: «Իր ոտքի տակ նա հայրենի հող չունի և իր շուրջը՝ հայրենի միջավայր»: Երևի դրանով պետք է բացատրվի, որ արտասահմանում լինելով, իր գրական զբաղումների ժամանակ նա այնքան նոր նյութի չի անդրադարձել, որքան իր հին նախասիրություններին: Իսկ դա արդեն պատմություն էր:

Երբ Աղբալյանի մահվան լուրն ստացա, զգացի, որ սիրտս փուլ եկավ: Ու ես պահանջ զգացի խոսել նրանից: Բայց ո՞ւմ հետ: Իմ մեջ չգտա ուժ, որ գնամ աղջկան տեսնեմ կամ հանդիպեմ տիկին Հրաուիին և ցավակցություն հայտնեմ: Այդ մարդկային պարզ քայլն անելու խիզախությունը չունեցա: Կային երեք մարդ, սակայն, որոնց հետ կարող էի անկեղծանալ, մանավանդ որ նրանք ինձանից շատ ավելի պետք է վշտացած լիններին. Ավետիք Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան: Ոչ լոկ այն պատճառով, որ անձամբ ճանաչել են, առաջին երկուսը նաև մտերմություն ունեցել:

Գլխավորն այն է, որ երեքի գրական կյանքում էլ նա կար, մանավանդ,՝ Իսահակյանի և Զորյանի:

Գնացի Իսահակյանի տուն:

Վարպետի տանը հյուրեր կային, բայց ինքը փակված էր առանձնասենյակում: Տիկին Սոֆիկին ասացի, թե նորություն ունեմ հաղորդելու, հայտնեմ ու գնամ: Երկու րոպե էլ չէր անցել, ուղեկցեց նրա մոտ: Ես հայտնեցի լսածս, ասաց, որ գիտե, ասաց՝ ոնց որ հարազատ եղբորը կորցրած լիներ: Նայեց ինձ: Երբեք չեմ տեսել Իսահակյանին այդպիսի թախծալի աչքերով:

Ես երկար չմնացի, մտածեցի՝ մենակ թող մնա իր վշտի հետ: Դուրս գալուց առաջ համբուրեցի աջը:

Օրեր անց տեսա Դեմիրճյանին և Զորյանին: Դեմիրճյանը՝ «Ճշմարիտ քննադատ էր: Աշխարհ էր եկել այդ գործն անելու համար: Անսասան հեղինակություն էր ամենքի համար՝ Թումանյանից սկսած»:

Զորյանը՝ «Ոչ մի քննադատ այն հեռավոր օրերից մինչև այսօրվա օրը ինձ վրա չի թողել այնպիսի վառ տպավորություն, ինչպես նա: Իզուր էլ գլուխը տվեց կուսակցական գործերին»:

Մի քանի օր հետո նորից այցելեցի Վարպետին: Աչքիս խաղաղված երևաց: Ու նա խոսեց Աղբալյանի մասին՝ «Հիմա մենք չունենք նրա նման կամ գոնե նրան հիշեցնող քննադատ»:

Կարճ լռությունից հետո ասաց, որ Աղբալյանը 1946-ին դասախոսություն է կարդացել իր մասին՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ու «Ինձ հասած լուրերի համաձայն, երևակայիր, լավ է խոսել Հայրենիքի մասին, ասել է, որ հայրենի երկիրը նորաշինվում է, որ բանաստեղծը շրջապատված է ժողովրդի և պետության հոգածությամբ և մեծ մխիթարություն է, որ հայրենիքում կա բանաստեղծի երգերով աճած սերունդ, որ այսօր էլ անկեղծ գնահատում է և սիրում նրան: Ու եթե բանաստեղծի համար առաջացած տարիքը վիշտ է, ապա սփոփանք են Հայրենիքի ներկան ու ապագան: Պատկերացնո՞ւմ ես»:

Տարիներ անցան: Մի օր հանդիպեցի Արտիկ Կանայանին: Խոսք բացվեց Նիկոլ Աղբալյանից: Պարզվեց, որ Աղբալյանի

ավագ որդու՝ Մուշեղի և դստեր Շաղիկի դասընկերն է եղել դեռ 1922-ից։ Որոշեցինք այցելել Շաղիկին։ Վաղուց չէի տեսել, իսկ ծանոթ էի 1938-ից։

Զրույցի նյութը հայրիկն էր։ Ահա Շաղիկի պատմածից ինչ-որ քաղվածքներ.

— Ութ տարեկան էի, որ հորս տեսա վերջին անգամ։ Այնպես որ տպավորություններս մանկական են։ Ինչ-որ բան էլ հիշում եմ մորս պատմածներից։ Մայրս զուսպ կին էր։ Շատ բան չէր ասում, մանավանդ հորս գնալուց հետո ահ ու սարսափի տակ ենք ապրել։

Երեխաներիս հավատացրել էին, որ մեզ հիվանդանոցից են բերել։ Երեք տարեկան էի, Մուշեղը նեղացրեց ինձ, ու ես որոշեցի այլևս տանը չմնալ՝ բերել եք հիվանդանոցից, ես էլ գնում եմ հետ՝ հիվանդանոց, էլ չեմ ուզում ձեզ հետ ապրել։ Դուրս եկա տանից, այն ժամանակ Թիֆլիսում էինք ապրում, և ճանապարհվեցի դեպի հիվանդանոց։ Կկորչեի երևի, եթե հանկարծ հայրս չհանդիպեր։ Տուն գալիս հայրս տեսնում է ինձ ու մտածում «Ոնց որ մեր Աչիկը լինի»։ Ինձ փոքր ժամանակ Աչիկ էին ասում։ Բերեց տուն ու պատմեց մորս, թե ինչպես է ինձ հանդիպել։ Նա էլ թե՝

— Նիկոլ, չի կարելի այդքան կտրված լինել տանից, ի՞նչ է նշանակում՝ ոնց որ մեր Աչիկը լինի։

Մայրս իրավացի էր։ Հայրիկս քիչ էր շփվում մեզ հետ։ Տանն էլ քիչ էր լինում։ Եղած ժամանակ էլ սիրում էր առանձնանալ, զբաղվել գործերով։ Եթե ամառանոցում էինք, ինչպես ասացի, նստում էր ծառի տակ, գրում և կարդում։

Պատերազմական ժամանակներ էին, ու հայրս մեկ Թիֆլիսում էր, մեկ՝ ռազմաճակատում, մեկ՝ գործող բանակի հետ, մեկ՝ կամավորների։ Այդ օրերին մեր տուն շատ մարդ էր գնում-գալիս՝ կամավորներից սկսած մինչև բարձրաստիճան զինվորականներ։

Տպավորվել է մի հիշողություն ևս. ամռան շոգ օրերին երկու ամսի չափ լինում էինք Դիլիջանում։ Օրերից մի օր հայրս մեզ տարավ Սևան։ Միտս է մնացել Ցամաքաբերդը, ինչպես և այն, որ մի նավ մեզ հասցրեց կղզի։ Տպավորվեցի տաճարներից, վարդապետներից։ Ընդհանրապես կղզին տպա-

վորիչ էր, խորհրդավոր։ Հայրս զրույցի էր բռնվել վարդապետների հետ, բայց ինչի՞ մասին էին խոսում՝ չեմ հիշում, դրանք իմ խելքի բանը չէին։

Բացի Դիլիջանից, հանգստացել ենք նաև Կիկետի վրացական ամառանոցում։ Ամառանոցը անտառի մեջ էր։ Բանաստեղծական միջավայր... մի անգամ էլ Կիկետի գնացինք բժիշկ Պահլավունու քույրերի հետ, որոնք ինձանից մեծ էին, լեզուներ գիտեին՝ ֆրանսերեն, անգլերեն։ Սովորում էին Բելգիայում, պատերազմի պատճառով վերադարձել էին Կովկաս։ Շատ սիրում էին երգել։ Հայրիկը մեծ մասամբ կարպետն առած հովասուն տեղ էր գտնում ծառի տակ։ Կամ կարդում էր, կամ գրում։ Ինքն իր մտքերի հետ էր։ Բայց հենց որ երգ էր լսում, գալիս միանում էր երիտասարդներին։

Պատմում էին, որ հորական տատս ուսում չստացած կին էր, բայց զարմանալի երաժշտական էր։ Լավ երգում էր Սայաթ-Նովայի երգերը, ժողովրդական ուրիշ երգեր, նվագում էր տարբեր գործիքներ։ Հայրս, ինչպես երևում է, նրան է զգել։ Փոքր ձայն ուներ, բայց մոր նման երաժշտական էր։ Պահլավունու աղջիկները անգլերեն զավեշտական երգ էին երգում։ Հայրս սովորություն ուներ այդ երգերը թարգմանել հայերեն։ Հորս թարգմանությունը մինչև հիմա էլ միտս է մնացել։

Ծտերը մտան այգի,
Ծտերը մտան այգի,
Կերան խաղողը բոլոր,
Թողին չհները չորս դին։

Թե երգս ձեզ ձանձրացրեց,
Ձանձրա-ձանձրա-ձանձրացրեց,
Ձեզ ձանձրացնելու համար
Կկրկնեմ այս երգը հիմար։

Միտս է մնացել «Վեչերնի զվոն» երգի նրա թարգմանությունը.

Մայրամուտի ղողանջ-զանգի
Որքա՜ն խոհեր բերում ես դու,
Հայրենիքում ապրած կյանքի,
Ուր սեր տեսա, հայրենի տուն։

Ինքը երգում էր, մենք էլ միանում էինք իրեն։

Մանկական հիշողություն։ Իմ ծննդյան օրն է։ Մեր տուն են եկել ազգականներ։ Բոլորն էլ նվերներ են բերել։ Մեկ էլ՝ դռան զանգ։ Մտածեցի՝ հայրս է։ Վազեցի դուռը բաց արի ու հարցրի.

— Հայրիկ, ի՞նչ նվեր ես բերել ինձ։

— Ի՞նչ նվեր...

Մայրիկը թե՝

— Նիկոլ, աղջկադ ծննդյան օրն է։

— Ի՞նչ ես ասում,— շփոթված ասաց հայրս ու դարձավ ինձ,— ես էլ քեզ համար մի երգ կերգեմ։

Ու երգեց Ռոմանոս Մելիքյանի «Փոքրիկ տղան մի վարդ տեսավ»։

— Էս էլ իմ նվերը քեզ։

Հետո հիշում եմ, երեկոյան դեմ, երբ երիտասարդները շատացան, նա երգեց «Բերյոզկան» իր թարգմանությամբ։ Ինչպես գիտեք, վալս է։

Տեսա մի թիթեռնիկ թևիկը կոտրած,
Սրտիկը կյանքի տենչով մարում էր կամաց։

Ինքը երգում էր, մենք պարում էինք։

Հետո հիշում եմ , որ հայրիկը բավական լավ նկարում էր։ Մենք էլ սկսեցինք նկարել։ Մի օր տուն եկավ ու հետը բերեց սև գրատախտակ։ Գրատախտակի վրա կավիճով գիծ քաշեց, բաժանեց երկու մասի։ Մեկի վերևը գրեց «Կ» այսինքն՝ Կուկու։ Այդպես էր կոչվում մեծ եղբայրս՝ Մուշեղը։ Մյուսի վերևն էլ գրեց «Ա»՝ Աշիկ։

— Կնկարեք սրա վրա։

Մեր տան մշտական այցելուներն էին Հովհաննես Թումանյանը, Լևոն Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը, որ եղբորս կնքահայրն էր, բժշկապետ Նավասարդյանը, Ավետիս Ահարոնյանը, իմ կնքահայր Փիլիպոս Վարդազարյանը և շատ ուրիշներ։

Միտս է մնացել, որ ասում էր՝ «Դոն Կիխոտը» յուրաքանչյուր ինտելիգենտ մարդու սեղանի գիրքը պետք է լինի։

Մեր տանը կար այդ գիրքը, հիմա էլ կա, եղբորս՝ Ռուբենի մոտ է «Դոն Կիխոտը» երկու հատորով, նկարազարդ։ Մի

գրքի անունն էլ էր տալիս։ Ռուսական հեղինակի գիրք էր։ Չեմ հիշում ո՛չ հեղինակին, ո՛չ վերնագիրը։ Մուշեղն այստեղ լիներ, կասեր։ Շատ սիրում էր Չեխովին։ Աստվածացնում էր։ Հա՛, հիշում եմ, ասում էր, որ բոլորը տանը պետք է ունենան «Աստվածաշունչ» և հաճախ կարդան։ Հայրիկս ո՛չ մոլեռանդ հավատացյալ էր, ոչ էլ աթեիստ։

Մորս պետք, սիրուն կին է, համաձա՞յն եք։ Երիտասարդ ժամանակը շատ ավելի սիրուն էր։ Հայրը՝ Մուշեղ Մամիկոնյանը, ուսումնական մարդ էր, ոտանավորներ է գրել, որոնք տպագրվել են «Մայրենի լեզու», «Լուսաբեր» դասագրքերում։ Հայացքներով նարոդնիկ էր, ոստիկանությունը միշտ աչքը պահել է վրան։ Մայրս հիշում էր, որ գիշերով ինչ-որ մարդիկ էին գալիս իրենց տուն, զենք էին պահում, մի ուրիշ գիշեր էլ՝ զենքը տեղափոխում էին սահմանից այն կողմ։ Պապս հիվանդացել է, զգացել է, որ վերջին օրերն են, աչքի է անցկացրել թղթերը և ինչ-որ վտանգավոր է համարել, պատռել ու վառարանն է գցել։ Մորական պապս չոթ երեխա է ունեցել։ Չոթի անվան մեջ էլ անպայման պետք է հուր բառը լիներ. Հրաչյա, Հրանուշ, Հրաժին, Հրահատ, Հրարփի, Հրազդան, Հրատուն։ Ահա դրանցից հինգերորդը՝ Հրարփին, մայրս է։

Հայրս տեսել է մորս, հավանել։ Ինքը մեկնելու էր Թեհրան՝ կարգված էր հայկական դպրոցի տեսուչ։ Առաջարկել է մորս, որ նոր ավարտել էր Թիֆլիսի երրորդ իգական գիմնազիան, միանալ իրեն, բայց նա մերժել է, ասելով, թե խոսք է տվել գնալու Ռեշտ՝ ուսուցչություն անելու։ Ըստ երևույթին, դա եղել է 1909-ին։ Սկսել է նամակագրություն։ 1910-ին ամուսնացել են։ Հայրիկը մորիցս տասնչորս տարով մեծ էր։ Ամուսնանալիս ասել է. «Հրարփի, լավ մտածիր, ես եմ ու իմ այս չեմոդանը, ուրիշ ոչինչ չունեմ։ Համաձա՞յն ես»։

Մայրս պահել էր հորս բոլոր նամակները։ Պահ էր տվել Ալեքսանդր Բարխուդարյան անունով մի լրագրողի։ Տարիներ անց Բարխուդարյանները տեղափոխվել են Մոսկվա, թողնելով նամակներն իրենց ապրած տանը, ո՛չ մորս, ո՛չ էլ մեզանից որևէ մեկին չհայտնելով այդ մասին։ Հիմա ոչ ոք չգիտե, թե ինչ եղան այդ նամակները։

Վերջին անգամ հորս տեսել եմ 1921-ին։

Ինչպես ձեզ հայտնի է, քաղաքական իրադրությունը Հա-

յաստանում շատ ծանր էր, թուրքաց բանակը հասել էր Ալեքսպոլ, որ դաշնակցական կառավարությունը երկիրը կամովին հանձնեց բոլշևիկներին, պայմանագիր կնքվեց հին ու նոր կառավարությունների միջև: Լեգրանի մեկնելուց հետո Հայաստանում ռեպրեսիաներ սկսվեցին: Շանթը մեր տանն էր ապրում: Դիշերվա ուշ ժամին եկան հայրիկին ու Շանթին տարան: Ննդյան տոնը բանտում են նշել: Քահանան եղել է Հակոբ Խաչվանքյանը, տիրացուն՝ հայրս:

Ռեպրեսիաների պատճառով տեղի է ունեցել փետրվարյան խռովությունը, և դաշնակցականները կառավարության ղեկն իրենց ձեռքն են առել: Քաղաքում ասում էին. «Վլաստը փոխվեց»: Հայրս տուն վերադարձավ: Շանթն էլ եկավ մեր տուն: Ճաշասենյակում էինք քնում: Մինչև ուշ գիշեր խոսում էին: Ապրիլի սկզբներին էր:

Մի գիշեր եկավ Դրոն ու ասաց.

— Մենք թողնում ենք քաղաքը:

Հայրս ու Շանթը միացան նրանց:

Մենք փոքր էինք: Մայրս էլ հղի էր: Էն գնալն էր, որ հայրս գնաց: Պարսկաստան, Եգիպտոս, Բեյրութ:

Հայրիկս Թավրիզում էր: Լուսավորության ժողկոմը՝ Աշոտ Հովհաննիսյանը, նամակ է տվել մորս ու գնացքով ուղարկել Պարսկաստան՝ համոզելու հորս, որ վերադառնա: Մայրս վերադարձել է մենակ:

Ալեքսանդր Թամանյանը վերադարձավ Պարսկաստանից և Դալմայում նրան հատկացրին Աֆրիկովի տունը: Մենք էլ մտածում էինք, որ եթե հայրիկը գար, արժանանալու էր նույն պատվին: Բայց երեսնական թվականների մռայլ դեպքերը ջուր լցրին մեր գլխին: Հորս հրավիրող Աշոտ Հովհաննիսյանը 1937-ի առաջին զոհերից եղավ: Պարզ էր, թե հորս ճակատագիրն ինչ էր լինելու...

***

Ես չէի կարող այս էջերը չհատկացնել Նիկոլ Աղբալյանին: Ու եթե ես իմ գործունեության ընթացքում, գրական լինի թե թատերական, ինձ նկատել եմ ավելի քննադատ, քան պատմաբան, դա էլ Աղբալյանի հրապուրանքի ապացույց-

ներից է։ Ուզեցի լինել քննադատ, բայց, կարծես ավելի պատմաբան եղա։ Չգիտեմ, դա իմ որոշելու բանը չէ։ Ուզենալը դեռևս կարևնալ չէ։ Ամեն մարդ իր համար ուղենշող աստղ ունի։ Ինձ համար այդ աստղը եղել է Սղբալյանը։

Իմ երկարամյա կյանքում կշտամբանք ու քննադատություն շատ եմ լսել։ Լսել եմ նաև դրվատանքի խոսքեր։ Բայց երևի երբեք այնպես փառավորված չեմ զգացել ինձ, քան այն օրը, երբ «Խորհրդային գրականություն» ամսագրում կարդացի Գևորգ Էմինի երեկոյի՝ թատերական ինստիտուտում Պարույր Սևակի ասած խոսքում իմ անվան հիշատակությունը. «Իհարկե, մանավանդ որ մենք այս ինստիտուտում ենք գտնվում, չի կարելի, ամոթ է հարդանքի ու շնորհակալության խոսք չասել ձեզ բոլորիդ սիրելի Ռուբեն Զարյանի մասին։

Այդ մարդն ունի մի զարմանալի տաղանդ, որ շատ քչերին է տրված՝ շնորհք կամ տաղանդ ջոկելու տաղանդ։ Այդպիսի մի մարդ էլ է եղել՝ Նիկոլ Սղբալյան։ Վահան Տերյանին առաջինն ինքը գտավ։ Չարենցին ինքը գտավ, Ստեփան Զորյանին ինքը գտավ։

...Ռուբեն Զարյանը նույն շնորհքն ունի՝ շնորհքով մարդկանց գտնելու շնորհը. Գևորգ Էմինին էլ, Վիգեն Խեչումյանին էլ, ձեր խոնարհ ծառային էլ, էլ չեմ իմանում ում (որին հիմա քիչթեն շատ մարդու տեղեն դնում), էդ բոլորին էլ Ռուբեն Զարյանն է գտել և այն էլ մեր առաջին քայլերից, երբ դեռ բեղ-մորուք չունեինք և չէինք էլ թրաշվում...»։

Սա ասվել է 1968-ին։

Ոչ միայն շոյված զգացի ինձ, այլ հպարտ խորապես, որ նախ իմ գործունեության մեջ նկատվել է Սղբալյանի գրական բազմածալ նկարագրի մի հատկանիշը հիշեցնող կողմ և երկրորդ, որ աստղը Պարույր Սևակն էր։

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

1941-ին ես բնակարան ստացա Գարեգին Լևոնյանի ապրած փողոցում։ Փողոցն անուն չուներ և ինչ-որ ժամանակ Տերյան փողոցի մաս էր համարվում այն պատճառով, որ բակի մուտքը Տերյանից էր, հետագայում մի քանի տարի Մոս-

Կովյանի մաս էր կազմում: Իսկ հիմա այդ կարճ փողոցը, որ բաղկացած է ընդամենը տասներկու շենքից, վերջապես իր սեփական անվանումն ունեցավ, կոչվելով Բայրոնի անունով: Շատերն էին կարծում, որ Լևոնյանի մահից հետո փողոցը կկոչվի նրա անունով: Այդպես էր կարծում նաև Ավետիք Իսահակյանը, Լևոնյանի մոտիկ ու լավ ընկերներից մեկը: Նույնիսկ մի անգամ Լևոնյանի ներկայությամբ նա կատակի տվեց, ճիշտ է, մի փոքր կոպիտ ստացվեց, բայց Լևոնյանն իր հերթին կատակին կատակով պատասխանեց՝ «Դու էլ, Ավետիք, ինձ մի լավ բան չես ցանկանա, պառկեմ՝ գլուխս փողոցի սկզբին կլինի, ոտքերս փողոցի մյուս ծայրին, ինչ է, ինձ արժան չես համարում ավելի մեծ փողոցի»:

Ինձ համար սիրելի դեմք էր Լևոնյանը. նախ՝ այն պատճառով, որ հիշում էի իրեն մի մատ երեխա եղած ժամանակներից: Հետո, երբ մանկավարժական ուսումնարանի սան էի, նրա անունը հաճախ էի լսում և չկար մարդ, որ նրա անունը չտար հարգանքով ու սիրով: Իսկ ծանոթությունը տեղի ունեցավ հարևաններ դառնալուց շատ առաջ, երբ ուսանող էի, երբ մանավանդ թանգարանի աշխատակից էի:

Ինձ սիրելի էր նաև այն պատճառով, որ ծնունդով համաքաղաքացիներ էինք, ալեքսանդրապոլցի, թեև ծագումով նա Ախալքալաքից էր, ես՝ Ղարսից:

Սիրելի էր և այն պատճառով, որ «Գեղարվեստը» նրա անվան հետ էր կապված: Մեր տանը կային «Գեղարվեստի» համարները, ու ես հաճախ թերթում էի, սկզբում պատկերների համար, հետագայում նյութերի նկատմամբ ունեցած հետաքրքրությունից: Ինձ համար անկասկած էր, որ «Գեղարվեստը» մեծ դեր է խաղացել իմ կյանքում: Համոզված եմ, որ նույն խոստովանությունը կանեն իմ սերնդից շատերը, հատկապես նրանք, որ իրենց ապագան կապում էին գրականության և արվեստի հետ:

Երբեմն գրույցների ժամանակ պատմում էր, թե ինչ անհրնար դժվարություններ է հաղթահարել «Գեղարվեստը» հրատարակելու համար: Սկզբում կարծել է, թե կկարողանա ամսահանդես լույս ընծայել: Բայց հետո համոզվել է, որ եթե անգամ տարին մի գիրք գլուխ բերի, մեծ բան է լինելու:

— Ես նյութապես նեղվել եմ, բերանիցս կտրել, միայն թե

«Գեղարվեստը» լույս տեսնի: Ինձ համար հեշտ էր, որովհետև ընտանիք չունեի: Գործ գլուխ բերելու համար դեպքեր են եղել, որ խոցվել է արժանապատվությունս, բայց ձայն չեմ հանել, մուրացողի վիրավորական վիճակը կուլ եմ տվել միայն թե նպատակիս հասնեմ: Ինձ պահողը հոգուս բարոյական ամրությունն է եղել, այն միտքը, որ արածս ազգաշեն գործ է:

Իմ սերնդի մարդկանց զարմացնում էր Գարեգին Լևոնյանի հետաքրքրությունների մեծ ընդգրկումը: Չկար արվեստի մի բնագավառ, որ չզբաղեցներ նրան: Բնական ու հասկանալի էր, որ զբաղվում էր աշուղական արվեստի ուսումնասիրությամբ, հայրը՝ Ջիվանին, նշանավոր աշուղ էր և դեռ պատանեկան տարիներից ինքը գտնվել է աշուղների մեջ: Հետաքրքրվում էր նաև թատրոնով, պարարվեստով, երաժշտության պատմությամբ, ճարտարապետությամբ վերջապես: Չկար արվեստի մի բնագավառ, որ քաջատեղյակ չլիներ: Մեզ համար նա կենդանի հանրագիտարան էր, որից կարելի էր իմանալ շատ բան: Եվ զարմանալի չէ, որ հետագայում, երեսնական թվականներին որոշվեց հայկական հանրագիտարան ստեղծել, Լևոնյանը այդ գործի գլխավոր նախանձախնդիրն է: Ճիշտ է, այդ գործը գլուխ չեկավ, մնաց կես ճանապարհին, տպագրվեց առաջին հատորի 15 մամուլը միայն, ընդամենը 480 էջ: Լևոնյանը գլխովին նվիրվել էր գործին, փայփայում էր հայկական հանրագիտարանի ստեղծման ու տարածման գաղափարը:

Նրա կյանքի մի պարագան ևս երիտասարդներիս ուշադրության առարկան էր: Բանաստեղծը կարող է քսանամյա լինել և հրատարակել իր առաջին ժողովածուն: Կոմպոզիտորը՝ նույնպես, նույնիսկ ավելի վաղ: Բանասիրությունը չի ունեցել քսանամյա հեղինակներ, մինչդեռ Լևոնյանն իր առաջին աշխատությունը՝ «Հայ աշուղներ» տպագրել է քսանամյա հասակում: Իսկ երեք տարի հետո արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակի՝ «Հայ պարբերական մամուլը» աշխատության համար:

Սիրում էր երիտասարդությանը և անկարելի էր հիշել գեթ մի դեպք, որ նա մերժած լինի իր աջակցությանը կարոտ երիտասարդին: Թեև ասեմ նաև, որ նա սաստիկ չէր սիրում

անհամեստ, հավակնոտ ու պոռոտախոս երիտասարդների, որոնք հռչակի հետևից ընկած՝ հարգանք ու պատկառանք չունեն մեծերի նկատմամբ։

Լավ հիշում եմ, նկատի ունենալով մեր ընկերներից մեկին, որի հետ վեճ էր ունեցել Սայաթ-Նովայի կապակցությամբ, Լևոնյանն ասում էր, թե նոր սերնդի վերաբերմունքը հին սերնդի նկատմամբ փորձաքար է, բարոյական քննություն, որ բոլորը չեն բռնում, դժբախտաբար։

Լավ հիշում եմ, հավաքեց մի խումբ երիտասարդների, բոլորն էլ բանասեր, բայց մեծ մասամբ ասպարեզ չեկած և հանձնարարություններ արեց, թե մեզանից ով ինչ նյութեր է հավաքելու և կարճ հոդվածներ է գրելու ապագա հանրագիտարանի համար։ Զգուշացրեց նաև, որ հանրագիտարանի համար գրելը դյուրին գործ չէ, ոչ միայն փաստերը պետք է խստորեն ստուգվեն, ճշտվեն, այլև պետք է տիրապետել հակիրճ շարադրանքին։

— Հակիրճ ու խտացած։ Սա է դժվարը։

Միտս է մնացել, որ բերել էր հանրագիտարանային մի մհավոր՝ «Գևորգ Ախվերդյան», որը կազմել էր ինքը սկզբում երկար, հետո միջին չափով, ապա նոր միայն այնքան, որքան պետք է տեղ հատկացվի հանրագիտարանում։ Մեր աչքերի առաջ նա երկար շարադրանքից հանեց այն բոլորը, ինչ որ երկրորդական լինելով, կարող էր և չհիշատակվել։ Ստացվեց միջին տարբերակ։ Սրա վրա աշխատելիս նա երկու բնութագրական հատված, որոնցից ամեն մեկը զբաղեցնում էր կես էջ կամ մի փոքր ավելի, ոչ թե կրճատեց, այլ սեղմեց, նորից շարադրելով, բայց այնպես, որ տողերը պակասեցին, բայց միտքը մնաց նույնը։ Եվ նոր շարադրանքը կես էջի չափ բռնեց։

Երիտասարդներից սիրում էր և գնահատում առանձնապես Արամ Ինճիկյանին, նրա սրտովն էին Ինճիկյանի մեղմությունը, համեստությունը, լավատեղյակությունը, շարադրելու ձիրքը, ազնվությունը։ Ինճիկյանն էլ իր հերթին երախտագետ գտնվեց, պահպանելով Լևոնյանի հիշատակի հանդեպ չմարված պարտքի զգացում։

Երբ բոլորեց Լևոնյանի մահվան տասնամյակը, արվեստի

ինստիտուտը ձեռնամուխ եղավ կազմակերպելու նրա հիշատակին նվիրված երեկո։ Ինճիկյանին խնդրեցի հանձն առնել դեկուցումը։ Համոզելու կարիք չեղավ։ Նույնքան հեշտ համաձայնեցին հուշեր պատմել Միքայել Մազմանյանը և Վահրամ Թերզիբաշյանը, թեև այս երկուսը հուշերի փոխարեն բացահայտեցին առաջինը՝ Լևոնյանի բազմակողմանի պատրաստությունն ու բազմաժանր գործունեությունը, երկրորդը՝ արժևքավորեց «Գեղարվեստի» պատվավոր տեղը հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Երեկոյի նախագահն էլ համաձայնեց լինել Մարտիրոս Սարյանը։ Նրանք միմյանց ճանաչում էին վաղուց։ Սարյանը դեռ 1912-ին նկարել էր Գարեգին Լևոնյանի դիմանկարը։ Լևոնյանն էլ Սարյանի առաջին քայլերը գնահատող արվեստաբաններից էր։

1942-ին էր, կարծեմ, նկարիչների միությունը հայրենական պատերազմին նվիրված գունանկարչական, գծանկարչական և քանդակագործական աշխատանքների ցուցահանդես էր բացել։

Ցուցադրված էր նաև Նիկողայոս Նիկողոսյանի «Չեմ ասի» քանդակը։

Կոլյան այն ժամանակ երիտասարդ էր, ընդամենը 22 տարեկան։ Բոլորովին նոր անուն էր։

Լևոնյանը կանգնած էր այդ քանդակի առաջ։ Դեմքից երեփում էր, որ հիացած է։ Մոտեցա և խոնարհ բարև տվի։

— Հավանո՞ւմ եք։

— Այո։

— Ես էլ։

Մի փոքր հետո.

— Հիանալի գործ է։ Պետք է մեր ղեկավար ընկերների ուշադրությունը հրավիրել այս երիտասարդի վրա։ Լավ ապագա ունի։ Պատերազմից հետո պետք է ուղարկել Մոսկվա. թող սովորի, թող կատարելագործվի։ Շատ առաջ կգնա։

Մոտեցան ուրիշները։ Բարևեցին Լևոնյանին, տարան մի կողմ։ Ես մնացի «Չեմ ասի» քանդակի մոտ, շարունակում էի նայել և մտածել՝ եթե աշխարհի լավագույն քանդակները տեսած Լևոնյանը հավանում է, այդ արդեն շատ բան է նշանակում։ Ու մտքիս դրի՝ գտնել Կոլյային, ուրախացնել նրան՝ հայտնելով Լևոնյանի կարծիքը։

Մի օր Լևոնյանը երիտասարդներին պատմում էր իր կյանքի անցուդարձերից, ասաց, որ երբեմն ծածկանուններով է հանդես եկել.

— Երևակայեք,— ասում էր նա,— ստորագրել եմ նույնիսկ Մեֆիստոֆել:

Իսկապես, ոտքից գլուխ բարուքյան մարմնացում, անչար Գարեգին Լևոնյանը և հանկարծ՝ Մեֆիստոֆել:

Հոբելյաններին՝ Լևոնյանին հաճախ էր հանձնարարվում ողջույնի խոսք ասել և նա էլ՝ հարգելի ու լավ անձնավորություն, միշտ սկսում էր նույն նախադասությամբ՝

— Ինձ մեծ պատիվ է վիճակվել...

Մի անգամ էլ նրան խնդրել են, որ մեկի մահվան առիթով դամբանական ասի և նա իներցիայով սկսել է՝

— Ինձ մեծ պատիվ է վիճակվել...

Պետհրատում եղածս ժամանակ աշխատել եմ Գարեգին Լևոնյանին օգտակար լինել ըստ ամենայնի, ընթացք տալով նրա տպագրության համար պատրաստ աշխատություններին: Երբեմն ինքս էի հետաքրքրվում, թե ինչ ունի հրապարակելու համար կամ ինչու նոր ձեռագիր չի բերում և այլն:

Լևոնյանն ապրեց յոթանասունհինգ տարի, բայց թվում էր, թե նա շատ մեծ է՝ ութսուն, իննսուն, հարյուր տարեկան է և դրա պատճառն այն էր, որ հուշեր էր պատմում երբեմն այնպիսի մարդկանց մասին, որ հեռավոր անցյալում են ապրել:

Շիրազը մի անգամ հարցրեց.

— Կգրնա պատահի, որ հուշեր պատմի Աբովյանի մասին:

Պայծառ անձնավորություն էր, միշտ լավատես, միշտ ժպիտը դեմքին: Մի անգամ միայն մռայլվեց, վիրավորեց, միաժամանակ խույս տվեց ընկերներից: 1943-ին էր, երբ լրագիրը բացեց և կարդաց ժողկոմխորհի որոշումը, թե ովքեր են ընդգրկված հայկական ակադեմիայի առաջին կազմում և, չգտնելով իր անունը, դառնացավ: Նա այն համոզման էր, որ իր ծառայություններն այնքան շատ են հայագիտության մեջ, որ իրեն թույլ են տալիս լինել առաջին ակադեմիկոսների շարքում: Կային և ուրիշ դժգոհներ, որոնք, սակայն, հետո ժամանակ ունեցան ընտրվելու, իսկ Լևոնյանը՝ ոչ:

Հաճախ է պատահել, որ մշակութային որևէ հավաքույթից

միասին ենք տուն դարձել կամ մեր փողոցում հանդիպել օրվա ինչ-որ պահի ու բռնվել զրույցի: Հարևան լինելով, ավելի հաճախ էի լինում իր տանը, երբեմն էլ ինքն էր մեր տուն գալիս, մանավանդ, երբ հիվանդանում էի: Այդ հանդիպումներն անմոռանալի են: Ես ունկնդրողի վիճակում էի և խոսում էի այն ժամանակ միայն, երբ ինքը հարց էր տալիս:

Մեզ մի սրտառուչ պատմություն էր հայտնի Լևոնյանի կյանքից, որի մասին չենք համարձակվել հարցնել իրեն:

Ասում էին, որ Լևոնյանը շատ տարիներ ընտանիք չի կազմել, որովհետև իր խառնվածքով միասեր էր: Իր կյանքում մի անգամ է սիրահարվել: Տասական թվականներին Թիֆլիսի Հովնանյան և Գայանյան դպրոցների մի քանի աշակերտուհիներ օգնելիս են եղել Լևոնյանին «Գեղարվեստի» հերթական համարները պատրաստելիս: Սիրահարվում է աղջիկներից մեկին՝ Ռիմա Աբելյանին: Առաջարկում է ամուսնանալ Մերժվում է: Շատ տարիներ են անցնում, մի քանի տասնամյակ, և նա կրկին հանդիպում է նույն Աբելյանին: Նորից է առաջարկում և այս անգամ համաձայնություն է ստանում, բայց արդեն ուշ է լինում զավակներ ունենալու:

Գարեգին Լևոնյանի կերպարը եզակի է: Հիմա, օրինակ, մենք չունենք մեր մշակութային կյանքում այդպիսի դեմք, որ գոնե մասամբ հիշեցնի Լևոնյանին և ոչ ոք չի զարմանում, որ այսօր նրա անձն ու գործը և հատկապես իր հրատարակած «Գեղարվեստը» երիտասարդ բանասերների ուշադրությանն են արժանանում:

Գարեգին Լևոնյանը մեծ կուտակումների տեր էր, որի անձի ու գործի հանդեպ անտարբեր չմնաց ոչ մի հայ բանաստեղծ ու գրականագետ, ոչ մի հայ նկարիչ, կերպարվեստագետ, ոչ մի ճարտարապետ կամ դերասան, ոչ մի երաժիշտ ու երաժըշտագետ:

1947-Ի ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻՑ

Ես հասկանում եմ, որ մարդը կարող է փորձանքի հանդիպել, անհաջողություն ունենալ, բախտը չբերել, մոտիկ մարդիկ կորցնել: Ամեն մեկի պատահում է և բնական է, որ

մարդն էլ գանգատվի, իր ցավը ուզենա հայտնել: Բայց մարդիկ կան, որ գանգատվում են միշտ: Վատ չէ վիճակը, բայց գանգատվում է, լավ է վիճակը՝ դարձյալ գանգատվում է: Ջեմ սիրում նվվացող մարդկանց: Ես սիրում եմ տխրությունը: Մանկության օրերից մի թախիծ ինձնից անբաժան է: Բակունցի տխրությունը օրինակ՝ սիրում եմ, ասես լուսավոր է, այն թախիծներից է, որ կյանքի հեռանկարը չի փակում:

Հաջողության հասնելու համար մարդը պետք է հոգու ներդաշնակություն ունենա, եթե չունի, ապա պետք է դրա ձգտումն ունենա և հավատա, որ մի օր կհասնի դրան:

Ինչ լավ բան կարող է ստեղծել գրողը կամ նկարիչը, ընդհանրապես արվեստագետը, եթե չի նկատում գարունը կամ ավելի ճիշտ՝ չի զգում գարնան հրապույրը: Ինչ լավ բան կարող է ստեղծել նա, որի սիրտը գեթ մի անգամ չի թպրտացել սիրո զգացումից, ինչի՞ն կարող է հասնել նա, որը չունի նորածիլ կանաչի ճաշակը և չի հասկանում, թե ինչու են մարդիկ հիանում մայրամուտի գույներով: Եթե արվեստագետը իր երիտասարդության տարիներին «Պատերազմ և խաղաղությունը» կարդալիս Նատաշայի հետ չի լացել Բալկոնսկու մահվան համար, ինչ կարելի է սպասել նրանից: Ջկա այս բոլորը, ուրեմն մարդը չունի կյանքի, որպես բնությունից նրան բաժին հասած մեծագույն պարգևի ըմբռնումը:

Ինչ դեպքերի, բնութագրումների ծանոթանում է ընթերցողը, ոչ մեկն այն ժամանակ չի ունեցել իր գրառումը: Թեկուզ շատ հակիրճ, թեկուզ ոչ որպես շարադրանք, այլ իբրև հիշեցում: Բայց հաճախ է պատմվել ընկերական միջավայրում և դրա պատճառով ամրացել է հեղինակի հիշողության մեջ և հիմա հեշտ է թղթին հանձնվում: Հեշտ է թղթին հանձնվում և այն պատճառով, որ հաճախ պատմվելով, «ազատագրվել» է ավելորդ մանրամասնություններից, որոշակիացել են գլխավորն ու երկրորդականը, վերջապես ինքնաբերաբար պարզվել է ոչ միայն հաջորդականությունը, թե.ինչը ինչից հետո է գալու, այլ նաև պատումի կառուցվածքը: Ամեն մի պատում, որքան էլ պարզասիրտ լինի, նույնիսկ միամիտ, շենքի նման է, ունի եթե ոչ հարկեր, ապա իր դուռն ու լու-

սամուտը, կաուրը վերջապես, համամասնությունների ճշտությունը:

Ճիշտ է, հիշատակարան չեմ պահել, գրառումներ չեմ արել, բացի Զարենցից և մի քանի գրողների մաքերը թղթին հանձնելուց: Բայց եղել են դեպքեր, երբ ինչ-որ բանից սրտնեղվել եմ, հուզվել ինչ-որ վեճից և անհրաժեշտություն եմ զգացել, հետո նույն օրը, մեծ մասամբ գիշերը քնելուց առաջ, հոգեպես հանդարտվելու նպատակով, հուզմունքն ու կիրքը, բորբոքվածությունն ու նյարդայնությունն ինձանից վանելու համար, գրի առնել վեճում հայտնածս տեսակետը:

Այդ տիպի գրառումների թղթապանակ ունեմ, որտեղ տարբեր տարիների արձանագրումներ կան:

Բացի այդ թղթապանակը, գտա մի գրանցում, որին կամենում եմ ընթերցողին ծանոթացնել: Հիմա չեմ հիշում, թե ում հետ եմ վիճել, ինչ է եղել առիթը, բայց լավ հիշում եմ, որ դա այն տարին էր, 1947 թվական, որ ես կարծում էի, թե հիվանդությունը հաղթում է ինձ, ու ես չեմ ապրելու, որ դա իմ ապրած վերջին տարին է:

Բերում եմ 1947-ի հոկտեմբերի 2-ի գրանցումն այնպես, ինչպես գրվել է այն ժամանակ, ոչինչ չփոխելով:

Երկու տարուց կբոլորի իմ քառասունամյակը: Տասնամյակի սկզբին կարծեմ ոչինչ, ջանասեր եղա՝ դիսերտացիայի պաշտպանություն, ելույթներ ու զեկուցումներ, հոդվածներ: Այս ամենի հետ միասին՝ ամսագրի խմբագրություն, չհաշված իմ աշխատանքը հրատարակչության մեջ: Լավ թե վատ, ճիշտ թե սխալ, այլ հարց է, խոսքն արժեքին չի վերաբերում, դա իմ դատելու բանը չէ, այլ գործ անելուն, պարապ չմնալուն: Բայց հետո եկան համարյա անգործ տարիներ: Մի երկու դասախոսություն, դրանց հիման վրա գրված մի երկու հոդված, թող լինի երեք կամ չորս, քիչ է, նույնիսկ շատ քիչ: Ուրիշ հարց է, եթե լինեի յոթանասուն կամ յոթանասունն անց մարդ: Ինչ է սա, հոգեկան ծուլությո՞ւն, կամ գուցե մի ուրիշ բան: Ինչ էլ որ լինի, ինչ անուն էլ որ տրվի, լավագույն պարագային դա արդեն բացատրություն է և ոչ արդարացում:

Փաստը մնում է փաստ, որ ես ժամանակի հասկացողություն չունեմ, անխնա եմ վարվում ժամանակիս հետ: Թե

գուցե մտածում եմ, որ ժամանակս անսահմանափակ է, ու ապրելու եմ հարյուր, երկու հարյուր տարի, ապրելու եմ հուր հավիտյան:

Թերևս պատճառը հիվանդությունն էր 1941-ին, այնուհետև 1944-ին և 1947-ին, ըստ որում լուրջ հիվանդություն, վտանգավոր հիվանդություն շրջապատիս ու նախ և առաջ ինձ համար: Բայց ես ինձ գիտեմ, ունեմ բավական ինքնաճանաչողություն և գիտեմ, որ եթե տրամադրված եմ աշխատելու, ունեմ հետաքրքիր նյութ, ինձ հուզող հարց, հիվանդությունն արգելք չի լինի գրելուն: Նույնիսկ այն դեպքում, եթե բժիշկն արգելել է և ասել, որ չաշխատելուց է կախված նաև առողջությունս: Ախ՛, բժիշկնե՛ր, բժիշկնե՛ր, ինչո՞ւ չունեք անհատական մոտեցում, որպեսզի հասկանաք, թե ում ինչ պիտի արգելել և հակառակ բժշկական ձեռնարկի հուշած խորհրդի՝ ում ինչ թույլ տալ: Մի դեպքում աշխատանքը վնասում է, մի այլ դեպքում՝ փրկում: Հիշում եմ, երբ 1941-ին ինձ տարան հիվանդանոց՝ ես չդադարեցի որպես խմբագիր աշխատելուց և ամսագրերի նյութերը պահում էի ներքնակիս տակ և բժիշկներից թաքուն, հենց որ մնում էի մենակ, խմբագրում էի, թեև մահճակալին գամված, բայց աշխատում էի, կապված էի պարտավորությունների ու ժամկետների հետ, գործի մեջ էի, ուրեմն կյանքից դուրս չէի, կյանքի օգտակար մի ասպարեզում էի, ինձ հոգեպես պահողը կենսական գործոնն էր: Ինձ համարում էի հարկավոր մի մարդ, որը իրավունք չունի հանձնվելու հիվանդության քմահաճույքներին: Ես չգիտեմ և կարծում եմ, որ բժիշկներն էլ չեն կարող բացատրել, թե իմ կատարած աշխատանքն ինչ դեր խաղաց առողջանալուս գործում: Մարդու բնախոսությունը բնախոսություն, բայց հոգեկան գործոնը սեփական անձի անհրաժեշտության զգացումը մարդուն ուժ ու թև տվող հանգամանք է:

Ես դատապարտված եմ և մեռնում եմ՝ մի գիտակցություն է, կրավորական, հայեցողական, ուրեմն մերժելի: Ես դատապարտված եմ մահվան, բայց չեմ կամենում մեռնել, չեմ մեռնելու, սա արդեն հոգեկան բոլորովին այլ վիճակ է, երբ չես հանձնվում հիվանդությանը՝ ինչ լինելու է թող լինի,

այլ ինքդ ես կառավարում քեզ, հիվանդությունը քեզ ենթարկում: Մահից ավելի սարսափելի բան չկա, բայց դրա կողքին կա ապրելու մեծ ցանկություն, ապրելու կամք, որ երբեմն էլ այնքան պիտակցված չէ արտահայտվում, որքան բնազդաբար, որքան իբր պաշտպանական բնազդ, որի վերլուծությունը չգիտեմ, գիտությունը կատարե՞լ է, թե ոչ:

Գուցե պատճառն այն քննադատական ու մեղադրական մթնոլորտն է, որ կար իմ շուրջը, որը դրական լինելով, դուրս էր գալիս այդ ոլորտից և ընդունում քաղաքական գունավորում, քաղաքական պիտակավորումն էլ հետը:

Շատ հնարավոր է:

Միաժամանակ, եթե վերադառնամ իմ պատանեկան տարիների մի համեմատությանը, թե ինչո՞վ ես Համլետ չեմ, ապա այդ դեպքում չէի լինի Գյոթեի Համլետը, կլինեի ավելի շուտ Բելինսկու պատկերացրածը: Բայց եթե այդպես է, ինչո՞ւ եմ թողնում, որ սուրս ժանգոտի պատյանում:

Չէ՛, դա էլ այն բացատրությունը չէ, որ գա և բացի իմ ամլության պատճառները:

Երևի, այնուամենայնիվ, գաղտնիքը ժամանակի մեջ էր, ոչ միայն ոգու տեսակետից, թե ինչ տարիներ են մանավանդ հետպատերազմյան տարիները, այլ նաև ժամանակի իր աստղաբաշխական ըմբռնումով, այն պարզ հասկացողությամբ, որ օրն ունի քսաներորս ժամ, որից պետք է այսքանը հատկացնել քնելուն, այսքանը հանգստին ու ժամանցին, իսկ մնացածը, այսինքն՝ մեծ մասը աշխատելուն:

Ես պատանի չեմ արդեն և տեսնում եմ, որ ժամանակ ասվածը մեկ դանդաղ է ընթանում, որ նույնիսկ չգիտես, թե ինչով և ինչպես օգտագործես ժամանակդ, մեկ էլ տեսար՝ ժամանակը սլացավ աներևակայելի արագությամբ, որ չես էլ հասկանում, թե երբ օրը բացվեց ու երբ օրը մթնեց:

Ես մեկ-մեկ մտածում եմ, որ պետք է կարողանալ ժամանակը կազմակերպել և հիշում եմ Ստեփան Մալխասյանի պատմածը, որ առավոտվա այսինչ ժամից գրասեղանի մոտ է եղել, մինչև որ կինը հրավիրել է թեյ խմելու, հետո նորից աշխատել է, մինչև կինը նախաճաշի է կանչել: Դրանից հետո էլ աշխատել է մինչև ճաշ, որից հետո մեկ ժամվա քուն, իսկ երեկոյան դեմ, որպես կանոն իր աշխատասենյակ չի

մտել, չի աշխատել, տանեցիների հետ զրուցել է, հյուր գնացել, հյուր է ընդունել, մինչև որ հասել է քնելու ժամը։ Այսպես ամեն օր։ Եվ այսպես տարիներ, տասնամյակներ։ Բայց այսպես երևի կարելի է բառարան կազմել, բայց ոչ թե վեպ գրել կամ էլ ուրիշի գրած վեպի վերլուծությունն անել։ Ինձ այնպես է թվում, թե մարդ պետք է աշխատի դիշեր ու ցերեկ և քնի այն ժամանակ, երբ քունը գալիս է ու դա ուզում ես, թե չես ուզում, աչքերդ փակում ես և դու մի քանի ժամ հանգստանում ես, այսինքն վերականգնում ուժերդ։

Ուզում ես դասավորիր ժամանակդ, ինչպես դա անում էր Մալխասյանը կամ Զորյանը, որը աշխատում է մինչև ցերեկվա ժամը մեկը, ուզում ես՝ մի դասավորիր, աշխատիր ամբողջ օրը, ինչպես դա անում էր Դեմիրճյանը «Վարդանանքը» գրելիս, բայց օգտագործիր ժամանակը, թույլ մի տուր, որ նա քո տերը լինի և խաղա քո գլխին իր ուզած խաղերը, ենթարկիր նրան քեզ, դարձրու քո կամքի հլու հպատակը և այն ժամանակ քեզ մեկ կարող է թվալ, թե 24 ժամը շատ քիչ է մի օրվա համար, բայց մեկ էլ կարող է թվալ, որ քսանչորս ժամը մեծ տարողունակություն է, անսահմանություն, որի մեջ առնում և ամփոփվում է մի ամբողջ աշխարհ։

Ժամանակը չի սիրում անփույթ վերաբերմունք։ Դա դրամ չէ, որ ինչքան շատ ծախես, կրկնակին հետո գա, ժամանակը գնահատում է իրեն հարգող մարդկանց, իր արժեքն իմացողներին և այդ դեպքում նրանց ծառայում է հավատարմորեն։

Ժամանակն օգտագործել և գործ անել, անպայման մի բան անել, նշանակում է սեփական անձի դրսևորման բախտին արժանանալ։ Այո՛, բախտին։ Եթե միջակ մարդ ես, ուրեմն գրածդ կունենա ճանաչողական արժեք, այն տվյալների առումով, որ ընթերցողը կգտնի նրա մեջ։ Ուրեմն մի արժեք այնուամենայնիվ, ստեղծված է։ Իսկ եթե տաղանդավոր է կամ նույնիսկ հանճարեղ և, պատկերացրեք, որ նստած ժամերով նարդի է խաղում և թույլ տալիս, որ ժամանակն աննկատ անցնի իր քթի տակով։ Ուրեմն՝ գուցեև կորցրինք «Կարամազով եղբայրների» նման արժեք, ավելի համեստ լինենք, «Մադամ Բովարիի» հաջողության չափի վեպ։ Իսկ այդպիսի

վեպերը կոչված են մղելու մարդկանց մտածելու, մղելու դեպի բարձր կյանք, առաքինի կյանքի կոչն անելով: Իսկ եթե մարդը տաղանդավոր է, բայց ժամանակի զգացողություն չունի, ալարկոտ է, ծույլի մեկը: Անհնար բան: Տաղանդավորը հենց նա է, որ ծնունդով գիտե, թե ինչ է ժամանակը, ոչ միայն գիտե, այլև սիրում է ժամանակը, ենթարկում է ժամանակն իրեն: Իսկ եթե այդպես չէ, ուրեմն նրա տաղանդն իսկական չէ, իսկ եթե իսկական է, լիարժեք չէ, ինչ որ էական պակասություններ ունի, որովհետև գրականության և արվեստի մեծերի օրինակը ցույց է տալիս, որ պատմությանը հայտնի չեն ծույլ հանճարներ: Կհասկանա ինձ ու կհավատա ասածիս՝ ով ծանոթ է Տոլստոյի կամ Միքելանջելոյի կյանքի պատմություններին:

Ժամանակի զգացողությունը գալիս է տարիքի հետ: Այս երևի զգացել են կյանքի մեծ փորձ ունեցող մարդիկ: Ուրեմն՝ միշտ էլ, կյանքի որ տարիքում էլ լինի մարդը, կարող է բեկում կատարել, էապես փոխվել, ծույլը դառնա աշխատասեր: Թող մարդիկ մտածեն, թե երբեք ուշ չէ ծուլությունը պատուհանից նետել փողոց, իսկ պահարանից հանել ջանասիրությունը՝ գրքեր ու թղթեր դնել առաջը, գրիչն առնել ձեռքը և աշխատել այնպիսի հափշտակությամբ, որ չնկատես, թե երբ մթնեց դուրսը, ինչպես անցավ գիշերը և մեկ էլ տեսնես, որ օրը լուսանում է: Լինո՞ւմ է այսպես: Կարծում եմ, որ ոչ, իսկ եթե լինում է հազարից մեկ, որպես բացառություն, որպես հոգեկան աշխարհի ուշացած արթնացում:

Իմ կարճ կյանքում նշմարված այլ երևույթ. երբ զբաղված եմ եղել, ժամանակի պակաս եմ զգացել, իսկ անգործության մատնված պահերիս կարծել եմ, որ ժամանակ կա, ժամանակն իմ տրամադրության տակ է և դեռ մի ամբողջ կյանք իմ առջև է: Թեև ճիշտ է և այն ու հարցն էլ բարդ է այն առումով, որ միշտ չէ որ անգործությունը անգործություն է, այլ լցվելու ընթացք:

Աշխատող մարդը գիտե ժամանակի գինը: Չաշխատող մարդու համար ժամանակ կա, թե չկա, միևնույն է:

Ուրեմն՝ աշխատելը, զբաղվածությունը իրենց հետ բերում են ժամանակի բարձրագույն ըմբռնում, ըմբռնումը նաև այն

իրողության, որ թեև օրը քսանչորս ժամից է բաղկացած, բայց դա թվաբանական հասկացություն չէ, այլ հանրահաշվական, ուստի այստեղ ևս, ինչպես հոգեկան կյանքի բոլոր բարձրագույն աստիճաններում, կա ոգու միջամտություն, ավելի լավ է կոչենք կամք, որը կազմակերպում է մարդու ընդունակությունները և ուղղություն տալիս նրան։

ԱՔՍՈՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ

1947 թվականն էր։

Քաղաքում լուր էր տարածվել, որ աքսորից վերադարձել են Ալազանն ու Մահարին, Նորենցն ու Մկրտիչ Արմենը, Մազմանյանն ու Գևորգ Քոչարը, Արտո Եղիազարյանը։

Բոլորը նրանց մասին են խոսում։ Բոլորը շտապում են նրանց տեսնել։ Կան մարդիկ, որ հարկ են համարում ղգուշացնել՝ մի քիչ էլ սպասեք, մի շտապեք, ո՞վ իմանա, թե հետո ինչ է լինելու։ Բայց արի տես, որ քչերն են ղգուշանում, մեծ մասն ուզում է հանդիպել, տեսնել։

Մեկն էլ ես։

Նախ՝ շտապեցի Ալազանին տեսնելու։ Հենց նրան առաջինն այցելեցի։ Ինչո՞ւ, չգիտեմ։ Թերևս պատճառն այն էր, որ իմ երիտասարդ տարիներին ղգացել եմ նրա հովանավորող շունչը։ Ճանապարհին մտածում եմ՝ կհիշի՞։ Ներս եմ մտնում ու լսում անունս՝ Ռուբեն։ Ողջագուրվում ենք։ Ես ավելի եմ շփոթված, քան՝ ինքը։ Հարցերի տարափ։ Հազիվ եմ հասցնում պատասխանել։ Հաջորդ օրը գնացի տեսնելու Մահարուն, որի արձակն ինձ շատ սիրելի է եղել միշտ։ Շատ երկար զրկված մնացինք։ Աչքերին արցունք կա, բայց շրթներից կախ է կատակախառն խոսքը։ Մտաբերեց իմ գրած «Աբովյանի կյանքը»։

— Կարդացել եմ։ Առաջաբանն իմ մասին է։ Այդպե՞ս է։

Մտքովս իսկ չի անցել գրելիս։ Բայց այդ պահին՝ ժխտելը մեղքի պես բան կլիներ։ Ու ես հաստատեցի, որով երևի ավելի սիրելի եղա իրեն։

Ամենքի հետ եղա, երբեմն մենակ, երբեմն ընկերական խմբով։ Ուրախ էի, անշուշտ, բայց նաև ճնշված. մանավանդ

որ ուղեղիս խորքերում պտտվում էր անպատասխան հարց՝ «Ինչու, ինչո՞ւ եղավ այս բոլորը»: Մտածում էի վերադարձածների մասին, իսկ աչքերիս առաջ էին բանտարկված, բայց նույնիսկ աքսորի չարժանացած Բակունցը, Թոթովենցը, որոնք մեր արձակին պարգևել են աղնվագույն էջեր...

Իրենք համարյա ոչինչ չեն պատմում իրենց քաշած կյանքից: Ժպիտ կա դեմքերին, ուրախ են ու փոխանակ իրենց տառապանքներից խոսելու, մեզ են հարցուփորձ անում, հարցնում, թե սա ինչպես է, մյուսը, երրորդը: Այս մեկն ինչի՞ց վախճանվեց, ի՞նչ նոր գրքեր են լույս տեսել, գրական նոր անուններ կա՞ն...

Ոչ մի գանգատ, ասես մի ուրախ տեղ էին և հիմա տուն են դարձել: Զարմանալի բան: Ասես վիրավորված էլ չեն, որ 15, նույնիսկ ավելի տարվա կյանք խլվեց իրենցից, բայց, արի տես, որ հրճվալի երախտագիտությամբ են համակված, որ իրենց թույլ է տրվել վերադառնալ, որ իրենք անպարտ են ճանաչված: Ի՞նչ է այս, ուզում է մարդ հասկանալ՝ հոգու խեղճությո՞ւն, թե հակառակը՝ անսպառելի լավատեսության ապացույց...

Մի տպավորություն ևս: Իրենք են, իհարկե, նույն Ալազանն է, նույն Մահարին, նույն Նորենցը: Բայց նաև առաջվանը չեն, մի շատ էական բան կարծես թե այնպես չէ. դիմագծերը նույնն են, բայց աչքերը, հայացքը, նայվածքը՝ ուրիշ են:

Ժպտում են: Այդ ժպիտը քեզ ծանոթ է: Այո, այո այդպես՝ մի փոքր հեգնական ժպտում էր Մահարին, ճիշտ այդպես արտաբաց Ալազանն էր ժպտում: Կամ Արմենը, ժպտում էր այնպես, ինչպես շատ տարիներ առաջ, նայում ես ու չես հասկանում՝ ժպտո՞ւմ է, թե չէ: Այո, ամեն ինչ նույնն է և, այնուամենայնիվ, ինչ-որ բան, ըստ որում՝ էական, շատ էական, բնավ էլ նույնը չէ: Արտաքնապես նույնն են, ներքնապես՝ ոչ: Դիմագիծն ու շարժումը նույնն են, բայց ոգին նույնը չէ: Ավելի շուտ՝ չկա նախկին ոգին:

Ու մարդ մտածում է՝ կանցնեն օրեր ու ամիսներ, այս մարդիկ ուշքի կգան, կկազդուրվեն, կմիանան իրենց հին ու նոր գրչակից ընկերներին, շարք կմտնեն, բայց այլևս չեն լինի առաջվանը: Անկարելի է: Սրանք նման են կոտրված այն

ապակյա ամանին, որ կրկին վերակազմված է հավաքված փշուրներից։ Սրանք ներքուստ կոտրված մարդիկ են։ Լավ է, որ դիմացան ու ապրեցին, մաքառեցին ու ողջ մնացին, բայց հոգեպես ջարդված, ճղմված...

ՎԱՐԶԱՊԵՏԻ ԴՈՒՍՏԸ

Հայպետհրատում աշխատելիս, երբ նոր շենք տեղափոխվեցինք, նախաճաշում էի մանկապատանեկան գրականության բաժնի վարիչ Անահիտ Սահինյանի և ֆինպլան բաժնի պետ Մարգո Քաջազնունու հետ։ Երբեմն մեզ միանում էր թարգմանական բաժնի վարիչ Արփիկ Վարդապետյանը։ Սրտագին ընկերակցություն էր դա՝ մտերմիկ զրույցներ, կատակներ, նոր կարդացած վեպերից տպավորություններ, թատերական կյանքի անցուդարձի վերաբերյալ նոր տեղեկություններ և ինչ-որ չափով նաև բամբասանք, որ վերաբերում էր հրատարակչության վարք ու բարքին։

Մարգո Քաջազնունին դուստրն էր Հայկական անկախ հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունու։ Հիմնավոր կրթություն ստացած, զարգացած ու ճաշակով անձնավորություն, խուսափում էր քաղաքական արծարծումներից, գրական-գեղարվեստական-բարոյախոսական նախասիրությունների տեր, հակված էր հոգեբանական վերլուծումների, ճշմարտախոս և ուղղամիտ, դատողություններն ինքնուրույն են, անկեղծ և լավ տրամաբանված։

Մինչև Մարգոյին հանդիպելը լսել էի Հովհաննես Քաջազնունու մասին։ Լսել էի ուսուցիչներից։ Ուսուցիչներս, հետո նաև իմ ավագ ընկերները՝ Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Կարո Մելիք Օհանջանյան, ասում էին, հազվագյուտ կիրթ մարդ էր, բազմակողմանի զարգացած, մեծ հաճույք էր նրա ամեն մի զրույցը։ Ասում էին, որ անբասիր մարդ էր, աղնիվ ու բարյացակամ, գաղափարական անձնավորություն, որի խոսքի և գործի մեջ խզում չկար։ Հիշում եմ, որ նույնիսկ հին բոլշևիկները, օրինակ Սերգո Խանոյան, նրան համարում էին վառ նկարագրի տեր գործիչ։

Այնպես որ, Մարգոյի հետ ծանոթանալով ու ընկերություն անելով, ինձ համար ուրույն հետաքրքրություն էր ներկա-

յացնում այն բոլորը, ինչ պատմում էր նա իրենց տան մասին։

Հայրը ոչ միայն ճարտարապետ է եղել, այլ նաև ինժեներ, ուրեմն՝ ոչ միայն նախագծող, այլ նաև կառուցող։ Մայրը՝ Սաթենիկը, օրիորդական ազգանունը Միրիմանովա, Թիֆլիսի իգական գիմնազիան ավարտելուց հետո չորս տարի ուսուցչուհու պաշտոնով աշխատել է Ախալքալաքում, իսկ հետո նվիրվել է սեփական զավակների դաստիարակության և կրթության գործին։ Հայրն ու մայրը գերազանսել են երեխաների հետ պարապել տանը։ Մինչև 1925 թվականն ապրել են Բաքվում և Թիֆլիսում, իսկ հայրը՝ Երևանում (1918—1921), չհաշված արտասահմանում անցկացրած տարիները։ Այնպես որ 1911-ից մինչև 1925-ը Մարգոն հոր հետ համարյա չի շփվել։

— Մեր տանը հաճախ էինք տեսնում Հովհաննես Թումանյանին։ Հրաշալի պատմող էր։ Նրա հետ լինում էին Ավետիս Ահարոնյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Նիկոլ Աղբալյանը, որին նույնպես շատ էինք սիրում։ Դեղեցիկ մարդ էր, ուրիշները՝ նույնպես։ Հավաքվում էին հայրիկի առանձնասենյակում։ Ջրուցում էին, վիճում։ Ես էլ մատուցողի դերում էի։ Թեյ էի բերում կամ սուրճ, թխվածք։

Մի օր Դեմիրճյանը եկավ իր ջութակով։ Ջրույցի կեսին կլիներ, ուզեց նվագել, գնաց նախասենյակ, պատյանից հանեց ջութակը, վերադարձավ ընկերների մոտ։ Մոայլադեմ էր։ Մտուգեց լարվածության չափը, հետո սկսեց նվագել ինչ-որ մեղեդի, երևի հազիվ երկու րոպեի չափ, ընդհատեց և լուռ դուրս եկավ սենյակից, տեղադրեց ջութակը պատյանի մեջ, նորից միացավ ընկերներին, որոնք ինչ-որ նոր զրույց էին սկսել։ Ոչ ոք ոչինչ չասաց Դեմիրճյանի նվագի մասին։ Տպավորությունն այնպես էր, ասես չէր էլ նվագել։

Մի անգամ էլ հիշում եմ, որ Թումանյանի և Աղբալյանի հետ մեր տուն եկավ Տերյանը։ Մեծ մասամբ լուռ էր։ Կրծում էր եղունգները։ Սուր թափանցող հայացք ուներ։

Մի օր Մարգոն պատմեց մորական պապի մասին։

— Ես մի զարմանալի պապ եմ ունեցել։ 19-րդ դարի ընկըզներին ինչ-որ քանակությամբ, մի քանի հազար հայ պարսկաստանից փոխադրվել են Ռուսաստան։ Արաքսի մի ափից

անցել են մյուս ափ և հաստատվել Ռուսաստանում: Մի օր էլ ղրջացել են գալու համար և ողջ գյուղը որոշել է վերադառնալ Պարսկաստան: Օրեր կան տարվա մեջ, երբ Արաքսը ցամաքում է, և նրանք մի գիշեր, բեռնավորված սայլերով անցել են սահմանը: Ահա այդ ժամանակ նկատել են, որ տասներկուամյա Դավիթը չկա: Կարծել են, որ անզգույշ լինելով, խեղդվել է գետում: Հետո պարզվել է, որ Դավիթը, չնայած իր հասակին, դեմ է եղել վերադառնալուն, այժմյան լեզվով ասած՝ ռուսական օրիենտացիայի կողմնակից է եղել, թաքնվել է, ու օրեր անց ոտքով հասել Թիֆլիս: Իր ազգանունը Մեհրաբյան էր, ինչպես և ինչու է Միրիմանյան դարձել, չգիտեմ: Մի քիչ կրթություն է ստացել: Հայերենից լավ էր, իսկ ռուսերեն չգիտեր և մինչև կյանքի վերջ չսովորեց: Սուր մտքի տեր, նախաձեռնություն ունեցող մարդ էր: Դարձել է կապալառու, աստիճանաբար հարստացել է, ունևոր մարդ է դարձել: Ռուբեն, երևի դու լսած լինես Versailles և Beau Monde հյուրանոցների մասին: Շենքը պապիս սեփականությունն էր:

Պապս հայտնի է եղել որպես Դավիթ Յակովլևիչ Միրիմանով:

Երիտասարդ օրերին գործով գնացել է Սուրամ: Զարմացել են, որ ամուսնացած չէ, և ծանոթացրել են նալբանդի ընտանիքի հետ, որտեղ մեկը մյուսից սիրուն աղջիկներ կային: Այդ տան աղջիկներից տեսել է Նատալիային ու հավանել: Նշանվել են: Ասել է, որ գործով պետք է մեկնի չգիտեմ, թե ուր, հետո կգա և հարսանիք կանեն: Վրա է հասել պայմանավորված ժամանակը, չի եկել: Քաղաքում ասեկոսներ են առաջացել, ընտանիքն իրեն վարկաբեկված է համարել: Մեկ էլ ստացվել է մի մեծ արկղ՝ պապս ուղարկել է իր նշանածի օժիտը: Մի խոսքով ամուսնացել են: Տասս վրացախոս աղջիկ էր, և պապս տարել է նրան Ախալքալաք, որ այնտեղ ապրելով հայերեն սովորի, յուրացնի հայկական նիստուկացը: Հետո տեղափոխվել են Թիֆլիս: Ծնվել են երկու տղա, երրորդը՝ մայրս՝ Սաթենիկը: Սկզբում սովորել է հայկական դպրոցում, եթե չեմ սխալվում ավարտել է Գայանյան դըպրոցի չորս դասարան: Մայրս որոշել է շարունակել կրթությունը գիմնազիայում: Հայրը դեմ էր՝ կարդալ գիտե, գի-

տե, գրել գիտե, գիտե, հաշվել գիտե, գիտե: Էլ ի՞նչ է պետք: Բայց մայրս համառել է ու հաղթել:

Թղթախաղում պապս մի անգամ տարվել է իր ողջ ունեցվածքը: Սնանկացել է: Թողել են իրենց շքեղ բնակարանը և փոխադրվել Հավլաբար: Ընկերները որոշել են օգնության հասնել՝ պարտք ենք տվել, առանց տոկոս վերցնելու: Ոտքի է կանգնել, նորից մեծ ունեցվածքի տեր է դարձել ու թեև որոշել էր այլևս թուղթ չխաղալ, մի անգամ էլ է փորձել բախտը ու այս անգամ էլ է տանուլ տվել: Այնքան է ազդվել, որ կաթվածահար է եղել ու վախճանվել:

Պատմեց այս բոլորը Մարգոն ու ժպիտով նայեց մեզ՝ հետաքրքի՞ր է, ասես հարցնում էր նրա հայացքը: Բոլորս գտանք, որ շատ հետաքրքիր է և խորհուրդ էինք տալիս, որ անպայման գրի Դավիթ պապի պատմությունը. կամ գոնե պատմի մեր գրողներից մեկնումեկին, գրեն, որ չկորչի:

Միշտ խոր հարգանքով եմ վերաբերել այն մարդկանց, որոնց ծանոթ է իրենց տոհմածառը, գիտեն իրենց հեռավոր նախնիներին: Այս մտքերի մեջ էի, լսելով Մարգոյի արած պատմությունը իր պապի մասին: Ասես զգալով, թե ինչի շուրջն է իմ միտքը և կամենալով հաստատել համոզմունքս, վրա բերեց Մարգոն:

— Իմ նախնիք Էրզրումից Ախալքալաք գաղթածներ են: Հորս հայրը՝ Մաթևոսը, որ Իգիթխանյան էր, որոշել է քահանա ձեռնադրվել: Կաթողիկոսը, կամենալով պահպանել մեր աղնվական տոհմանունները, Մաթևոսին առաջարկել է ընտրել տոհմիկ անուն: Սա էլ որոշել է թարգմանել իր Իգիթխանյան ազգանունը և դառնալ Քաջազնունի: Կաթողիկոսը համաձայնել է:

Ես խնդրեցի Մարգոյին հիշել հորը, մի քանի բան պատմել նրա մասին: Ահա, թե ինչ մնաց այդ օրը և հետագայում պատմածներից իմ հիշողության մեջ:

— Հենց սկզբից ասեմ, որ հայրս եղել է մարդու հասկացողության իմ իդեալը: Այդպես է եղել մանկության ժամանակ: Այդպես է եղել նաև հետո ու հիմա, երբ հասուն մարդ եմ: Եվ ամեն անգամ, երբ դժվար կացության առաջ եմ կանգնում, մտածում եմ, թե հայրս ինչպես կվարվեր, եթե իմ փոխարեն լիներ, կամ ինչ խորհուրդ կտար:

Սերը կուրացնող զգացում է, ու ես կարող եմ միակողմանի լինել կամ չափազանցնել նրա արժեքը, տուրք տալ որդիական զգացումին: Ես այն տպավորության էի և հիմա էլ այդպես եմ կարծում, որ նա ազնիվ ու բարի էր, սկզբունքային և շատ մարդկային:

Ես փոքր էի, երևի 9 տարեկան, որ 1910-ին թե 1911-ին ընկերսվեց դաշնակցության դեմ գործի դատաքննությունը: Արձակվելուց հետո հայրս մեկնել է Ֆրանսիա, այնտեղից Վան և ապրել այնտեղ մորեղբորս անձնագրով՝ Խորեն Դավթի Միրիմանյան:

Ասում են շենքեր է կառուցել Վանում, դասախոսություններ է կարդացել: Օրինակ, պատմաբան Հարություն Թուրշյանն ասում էր, որ Վանում լսել է հորս դասախոսությունը Շեքսպիրի մասին: Վանում եղել է երկու տարի՝ 1913—1914: Պատերազմի ժամանակ կամավորական շարժման կապակցությամբ 1914 թ. ամնիստիա է հայտարարվել Ռուսաստանում: Հայրիկը վերադարձել է, բայց չի մնացել Թիֆլիսում և մեկնել է Բաքու: Այստեղ նա կառուցումներ է արել: Ահա այստեղ գրել ու հրատարակել է իր եվրոպական տպավորությունները՝ Ֆրանսիա, Հոլանդիա, Իտալիա:

Մարգոն նվիրեց նոր գրքույկը՝ «Сто дней в Европе».

Մարգոն ասաց, որ հայրն առաջին անգամ եղել է 71 օր, երկրորդ անգամ՝ 39 օր: Երկու ուղևորության գումարն անում է 110 օր: Ճամփորդական այս նոթերը լույս են տեսել «Баку» լրագրում՝ 1910-ի աշնանը:

Ես ուղեգրություններ շատ եմ կարդացել, ինքս էլ եմ փորձ արել գրելու: Բայց ոչ մի ուղեգրություն ինձ վրա այնպիսի վառ տպավորություն չի գործել, ինչպես Մարգոյի հոր գրածը: Այդ ուղեգրություններում համեմատված են Ռաֆայելը և Միքելանջելոն և հակառակ այն բանի, որ տասական թվականներին Ռաֆայելն անհասանելի գագաթ էր համարվում, Քաջազնունին նախապատվությունը տվել է Միքելանջելոյին, մի տեսակետ, որ շատ տարիներ հետո ուրիշները ևս պաշտպանեցին արվեստաբանության մեջ:

— Հայրս հաճելի զրուցակից էր: Կարող եմ ասել, որ լավ պատմող էր: Ժամերով կարելի էր լսել նրան: Խոսքը զուսպ էր ո՛չ մի կողմնակի շեղում, ո՛չ մի ավելորդ բառ: Հիանալի

կառուցում էր խոսքը՝ սկիզբ, զարգացում, վերջ, արխիտեկտոնիկ զգացողությունը խորն էր: Միաժամանակ ասեմ, որ հուզական խառնվածք ուներ, երեխաներիս նա ավելի է գուրգուրել ու փաղաքշել, քան՝ մայրս: Մեզ դաստիարակել է աղնիվ ու ճշմարտապահ լինելու ոգով:

— Հայրս,— ասաց Մարգոն,— ամբողջական անձնավորություն էր: Երաժշտության մեջ նրա համար բարձրակետը Բեթհովենն էր, գրականության մեջ՝ Շեքսպիրը, կերպարվեստում՝ Միքելանջելոն:

Իմանալով իմ շեքսպիրագիտական հետաքրքրությունները, Մարգոն ասաց, որ իր ողջ կյանքում հայրն ունեցել է Շեքսպիրի պաշտամունք: Միաժամանակ հայտնեց, որ իր երիտասարդ տարիներին, 1896 թվականին «Новое обозрение» լրագրում հոդվածաշար է տպագրել:

Գտնելով, որ Շեքսպիրին հետաքրքրողը ոչ թե մարդկային կյանքի արտաքին ընթացքն է, այլ մարդու բնավորությունն ու հոգին, նա քննել է Յագոյի, Ֆալստաֆի, Մակբեթի կերպարները: Հայ շեքսպիրագիտական մտքի լավագույն էջերի թվին է պատկանում Հովհ. Քաջազնունու գրածը:

Հայրս անտարբեր չէր գրքերի նկատմամբ: Նյութապես ապահոված էր թե չէ, եթե լավ գիրք է, պետք է առներ:

Մի օր էլ ասել է, թե իրեն շատ խանգարել է բազմապրոֆիլ լինելը: Թատրոնով տարվել է, գրականությամբ նույնպես, եղել է ճարտարապետ, միաժամանակ շինարար, եղել է հասարակական գործիչ:

Օրերից մի օր Մարգոն հիշեց հոր կառուցած մայր տաճարը Բաքվում:

Նրա պատմածից միտս է մնացել հետևյալը:

Հայրս, ինչպես գիտեք, սովորել է Պետերբուրգում և ավարտել է 1823-ին ճարտարապետ-ինժեների որակավորումով: Ըստ ուսումնական ծրագրի, ուսանողները պետք է եկեղեցի նախագծեին ռուսական կամ բյուզանդական ոճերով: Թույլատրված էր դիմել նաև հայկական ոճին: Հայրս մտածելով, որ իր զգացողությունն ավելի մոտ է հայկականին, ամռանը նյութեր հավաքելու նպատակով Անի է մեկնում:

Մեծահարուստ Բուդաղյանի թողած փողերով Բաքվում կառուցվելու էր տաճար՝ ս. Թադեոսի և ս. Բարդուղիմեոսի

եկեղեցի։ Հատարարվել է մրցույթ։ Եվ հայրս, հիշելով իր ուսանողական աշխատանքը, որոշել է մասնակցել մրցույթին։

Հատկապես Անիում անցկացրած օրերից, դեռ ուսանողական տարիներին, հուզել է նրան մի հարց՝ ինչպես կարելի է միջնադարյան ոճն օգտագործել արդիական կառույց ստեղծելիս։

Հինգ նախագիծ է ներկայացվել։ Չեմ հիշում, թե երեքի հեղինակներն ովքեր են եղել, գիտեմ, որ մեկը Պետերբուրգից էր, ազգությամբ լեհ։ Մրցույթին մասնակցել է Գ. Տեր-Միքելովը ևս, որ շատ շենքեր է կառուցել Բաքվում։ Թիֆլիսի երկաթգծի կայարանի հեղինակն է նաև։ Բոլոր նախագծերն ուղարկվել են Պետերբուրգ, որպեսզի ժյուրին եզրակացություն տա։ Երկուսը մերժվել են։ Լեհ Ճարտարապետի, Տեր-Միքելովի և Հովհ. Քաջազնունու նախագծերը ճանաչվել են բավարար։

Բաքվում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ժամանակ լեհ Ճարտարապետի գործը մերժվել է։

Փակ քվերակության ժամանակ ձայները բաժանվել են, երկու նախագծերն էլ հինգական ձայն են ստացել։ Պետք է ընտրվեր երկուսից մեկը՝ կամ Տեր-Մելիքովը, կամ Քաջազնունին։ Որոշվել է որ վերջնական ընտրությունը թողնեն Բ. Դոլուխանյանին, Ս. Այվազյանին և Մելիքյանին, որոնք հանդուցյալ Բուդաղյանի ժառանգության կտակատարներն էին։ Այդ երեքը միաձայն կանգ են առել Քաջազնունու նախագծի վրա, և տաճարի կառուցումը հանձնարարվել է նախագծի հեղինակին։

Այս ամբողջ պատմությունը տեղի է ունեցել 1907-ի հունիս ամսին և նույն թվականի օգոստոսի 2-ին հայրս գործի է անցել։

Ըստ Քաջազնունու նախագծի, հազար հինգհարյուր մարդ է տեղավորելու եկեղեցին, որի համար հարկավոր էր 300 000 ռուբլի։ Պարզվել է, որ կարող է տրամադրվել 200 000 ռուբլի միայն։ Հայրս ստիպված է եղել նախագծի չափերը փոխել, առանց սակայն փոխելու ոգին ու սկզբունքները։ Հայրս կառույցի վրա աշխատել է մինչև 1911 թվականը, հետո սկըսվել է դաշնակցության դատավարությունը Պետերբուրգում

և այնուհետև մեկնել է արտասահման: Կառուցումն ավարտել է ճարտարապետ Նիկոլայ Բայկը:

Ես չեմ տեսել Բաքվի մայր տաճարը, կառույցը գիտեմ լուսանկարներից: Նրբայրներս տեսել են, գիտեմ նաև, որ հորս համար այդ կառույցը նվիրական էր, հարազատ էր իր ներքին աշխարհին, իր հոգեկան կերպարի արտահայտությանը: Մորս ուղարկած մի նամակում գրել է, որ տաճարն ապրելու է դարեր:

Հետաքրքրվեցինք՝ եկեղեցին կա՞:

— Այն տարիներին, որ բոլոր հանրապետություններում քանդվել են շատ եկեղեցիներ, քանդվել է նաև Բաքվի հայկական տաճարը: Կազմվել է հանձնաժողով քանդելու համար: Մի տարի մտածել են, թե ինչ անեն և չեն կարողացել ավերումը գլուխ բերել: Հանձնաժողովը դատի է տրվել: Երկրորդ հանձնաժողովը արժանացել է նույն ճակատագրին: Երրորդը՝ դինամիտի օգնությամբ է պայթեցվել: Մայր տաճարը քաղաքի կենտրոնում էր, տեղը կառուցվել է կոնսերվատորիայի շենքը: Կառուցվեց շքեղ շենք: Ասում են, որքան ճիշտ է, չգիտեմ, Բաղիրովը ինքնաթիռով վերադառնալիս է եղել Մոսկվայից և բարձրից տեսել է, որ կոնսերվատորիան խաչի է նման: Կանչել է ինժեներ, կարծեմ, Սարուխանյանին և հարցրել, թե ինչո՞ւ է այդպես: Սա էլ ասել է, թե քանդված եկեղեցուց ինչքան էլ չլինի, մի խաչ կմնար: Այդ համարձակ պատասխանի համար ինժեները դնդակահարվել է:

— Երբ հայրս հայկական անկախ հանրապետության վարչապետն էր, մենք ընտանիքով Թիֆլիսում էինք ապրում: Քիչ բան գիտեմ: Գիտեմ, որ մյուս դեկավարների հետ բանտարկվել է և ազատվելուց հետո ճանապարհվել արտասահման, փախստականների մեծ մասը մեկնել է Պարսկաստան, հետո Եգիպտոս, ապա՝ Բելգրուխ: Հայրս հաստատվել է Ռումինիայում:

Ես նրան նամակներ էի գրում, բայց պատասխան չէի ստանում: Նամակներս գրում էի ռուսերեն, որ ստուգողների համար մատչելի լինի և մի անգամ էլ նամակիս կցեցի երկտող՝ ստուգողին, խնդրանք, որ ուշադիր լինի գրածիս նկատմամբ, որ առանձնապես ոչինչ չկա, ընտանեկան բնույթի նամակներ են: Ուզում եմ, որ անպայման գոնե այս նամակս

տեղ հասնի ու պատասխան ստանամ ու, երևակայեցեք, պատասխանը եկավ։

Քաջազնունին, 1924-ին մի գրքույկ է հրատարակել՝ «Թուրքիա՞, թե Ռուսիա», որը պատասխան է, ըստ երևույթին, հետևյալ մտքի. «Եթե հայ ժողովրդի շահը պահանջեց մի օր սեղմել թուրքի ձեռքը, պիտի մոռանաս, թե այդ ձեռքը թաթախված է քո հոր արյունի մեջ»։ Սրանով պաշտպանված է ըստ Ա. Ծառուկյանի «Թուրքիո հետ մերձեցումի տեսակետը, ընդդեմ Ռուսիո»։ Քաջազնունին պաշտպանել է ոչ միայն ռուսական հովանավորությունը, այլ նաև նրա արդի քաղաքական վարչակարգը։

«Ռուսաստանը բոլշևիկյան է այսօր և միակ հնարին Հայաստանը ներկայիս՝ խորհրդային Հայաստանն է։

Սա է մեր ներկան և սա է ապագայի հույսը։ Սրա շուրջն է, որ պետք է խմբվեն հայ ազգի բոլոր կենդանի ուժերը։ Սա պետք է լինի մեր սիրո ու գուրգուրանքի առարկան ու մանավանդ աշխատանքի վայրը։ Ամեն մի Հայ հայրենասերի առաջին և ամենամեծ պարտականությունն է ամրացնել ամեն կերպ Հայաստանը, ոչ թե... բարեկամանալ նրա դեմ դավադրողների հետ։

Խորտակել խորհրդային իշխանությունը— դա ասել է՝ դեթ այսօրվա պայմանների մեջ՝ խորտակել նաև Հայաստանը։ Ամեն մի փորձ այդ ուղղությամբ դավաճանություն է Հայաստանի հանդեպ»։

Այս տողերը գրվել են Բուխարեստում, ուր նա ապաստանել էր փախած լինելով բոլշևիկյան Հայաստանից։ Նա այն մտավորականներից էր, որ ի վիճակի էր հայի ճակատագիրը զանազանել ժողովրդի ու հայրենիքի ճակատագրից։

Երևի չմոռանանք և այն, որ մի տարի առաջ նա դուրս էր եկել դաշնակցական կուսակցությունից՝ ներկայացնելով զեկուցագիր, որը լույս տեսավ առանձին գրքով թե արտասահմանում, այն էլ մի քանի անգամ, թե Խորհրդային Միության մեջ՝ «Հ. Հ. դաշնակցությունն անելիք չունի այլևս» խորագրով։

Հրատարակչությունից հեռանալուց հետո ես մեկ-մեկ հանդիպում էի իմ գործընկերներին։ Մեկ-մեկ տեսնում էի նաև Մարգոյին։ Ու նա մի օր պատմեց հետևյալը։

— Գիտե՞ս չէ, որ Հրաչյա Քոչարը եղել է Բեյրութում: Մի օր փողոցում հանդիպեցինք, ասաց՝ «Մարդո, Բեյրութում տեսա հորդ գիրքը, կոչվում է «Հետմահու»: Այսքանը միայն: Մի օր մեր տուն եկավ մի անծանոթ մարդ ու սեղանիս դրեց հորս այդ գիրքն ու ասաց, որ տասը օրից ուրիշը կգա գրքի հետևից: Մի օր մեկը նույնպես անծանոթ, եկավ, թե գրքի հետևից եմ եկել ու տարավ:

— Պարզվեց, որ Բուխարեստում հայրս ծանոթ էր մի հայուհու: Ուսուցչուհի էր: Որոշելով վերադառնալ հայրենիք, նա ծանոթուհու մոտ է թողել ձեռագրերի մի կապոց:

— Պահեք, խնդրում եմ:

— Դուցե պետք է հրատարակել:

Հայրս ժպտալով ասել է.

— Հետմահու:

Տարիներ են անցել: Հայրս արդեն չկար: Հորս ծանոթուհին մեկնել է Բեյրութ և ներկայացել Սիմոն Վրացյանին ու իր մոտ պահպանված ձեռագրերի պատմությունն արել:

— Թողեք ձեռագրերն ինձ մոտ,— ասել է Վրացյանը:

Եվ Բեյրութում լույս է տեսել «Հետմահու» վերնագրով:

Մարդոն շարունակեց.

— Գիրքը լույս է տեսել 1965 թվին: Գրքի հրատարակության ծախքն իրենց վրա են վերցրել մի խումբ գրասերներ, որոնց սրտին թանկագին է Հայաստանի հանրապետության անդրանիկ վարչապետի հիշատակը:

Պատմվածքների, հուշերի, հոդվածների ժողովածու է: Գիրքը հրատարակության պատրաստող Սիմոն Վրացյանը, բացի առաջաբանից և վերջաբանից, գրքում տեղադրել է Քաջազնունու նամակները, ուղարկված 1923 թվի մայիսից մինչև 1924-ի հունվարը, ամսեամիս «Հայրենիք» ամսագրում՝ «Սպեղ ու հայրենիք» խորագրով: Դաշնակցությունից հեռանալուց հետո Քաջազնունին խզել է իր աշխատակցությունը և հոդվածաշարը մնացել է անավարտ: Անտիպ երկու գլուխը, գտնելով թերթերի մեջ, տեղադրել է գրքում:

Հետաքրքիր է, որ Վրացյանը և Քաջազնունին տարակարծիք են եղել որոշ հարցերում, բավական արմատական և միշտ վիճել են իրար հետ, բայց դա չի խանգարել, որ կուսակցական ընկերոջ հիշատակը պահելիս, Վրացյանը հրապարակի

իր դեմ գրած նամակները, առանց մեջբերելու իր պատասխանները։

Բարոյական նկարագրի հատկանիշ։

Ես այդ գիրքն այդպես էլ չտեսա, հետաքրքրվեցի, պարզվեց, որ հանրային գրադարանում չկա։

— Հայրս 1924-ի վերջերին ճանապարհվել է Խորհրդային Միություն։ Ստացանք հեռագիր Բաթումից՝ այսինչ օրը, այսինչ ժամին կլինեմ Թիֆլիսում, դիմավորեք։ Ես հիվանդ էի թոքախտով և պառկած էի, եղբայրս՝ Կարենը, նույնպես թոքախտավոր, Դիլիջանում էր։ Մորս էլ վիրահատել էին, պառկած էր։ Գնացին Ռուբեն եղբայրս ու Անահիտ քույրս։

Եկավ Թիֆլիս, տեսավ մեզ ու մի քանի օրից ճանապարհվեց Երևան։ Իմացանք, որ ներկայացել է կառավարությանը և առաջարկել իր բոլոր ուժերը նվիրաբերել վերաշինվող հայրենիքին։

Կառավարության համաձայնությունն առնելով, ընտանիքը փոխադրեց Երևան, ես ընդունվեցի համալսարան, սովորել եմ իրավաբանական-տնտեսագիտական ճյուղում, եղել եմ Գրիգոր Զուբարի ուսանողուհին։ Փայլուն դասախոս։ Երբեք չեմ մոռանա նրա հատկապես մի դասախոսությունը՝ «Դատավորը և նրա անձը»։ Նա բացատրում էր, որ օրենքը օրենք, իսկ դատավորները, որ պետք է առաջնորդվեն օրենքով, մտածողությամբ, բնավորությամբ, խառնվածքով լինում են տարբեր։ Բացատրում էր, թե ինչ հատկանիշներ պետք է ունենա դատավորը, որպեսզի ի վիճակի լինի հասնել բացարձակ արդարության։

Տեղափոխվելով Երևան, Քաջազնունին աշխատել է իր մասնագիտությամբ. ոչ որպես նախագծող ճարտարապետ, այլ իբրև ճարտարապետական նախագծերի մասին եզրակացություն տվող։ Իմ ճարտարապետ ընկերներն ասել են ինձ, որ իրենց զարմացրել է Քաջազնունու մասնագիտական թափանցումը, ճաշակը, քննադատական նուրբ դիտողությունները և խորհուրդները։

— Կյանքի վերջին տարին հայրս պատվեր ստացավ՝ դրել Հուշեր Հովհաննես Թումանյանի մասին։ Դրել էր մի պայման՝ կամ տպագրում են այնպես, ինչպես դրել է, կամ չեն տպագրում։ Փոփոխել, ջնջել, տեղափոխել, խմբագրել՝ թույլ չի

տալիս։ Ես դեմ էի, որ գրի, ավելի լավ ճանաչելով մեր կյանքը, սովորությունները և պահանջները։ Բայց նա ինձ չլսեց, ես նրա համար հեղինակություն չէի, գրեց։

Նվարդ Թումանյանը մի օր եկավ և հայտնեց ինձ, որ հայրիկի գրածը չի տպագրվի, բայց կպահպանվի արխիվում։

Ես այդպես էլ գիտեի։

Վրա հասավ 1937 թվականն, ու հորս տարան, ինչպես շատերին։ Ովքեր նրա հետ նույն բանտախցում են եղել, հետո ասում էին, թե բանտարկյալներին հավաքել է գլխին ու պատմել իտալական վերածննդության, նկարիչների, քանդակագործների և ճարտարապետների մասին։ Ըստ որոշման՝ տասը տարվա աքսոր, առանց նամակագրական իրավունքի։ Այդպես էլ մենք չիմացանք, թե ինչի՞ մեջ էր մեղադրվում, և հայրս ինչպես կնքեց իր մահկանացուն։ Հայրս մի տարի էլ չի դիմացել։

Ըստ հորս պահանջի, մեր տան լուսամուտները վարագույր չունեին։ Ասում էր՝ պետք է արև ու լույս շատ մտնեն սենյակ։ Զգիտեր, որ կյանքի վերջն ավելի շուտ է գալու, ու իր անձը թաղվելու է մթան ու խավարի մեջ։ Նա այդ ժամանակ եղել է ընդամենը 69 տարեկան։

ՀԵՌԱՆՈՒՄ ԵՄ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Սխալ ձևակերպում։ Ոչ թե հեռանում եմ, այլ հեռացնում են։

Անեմ այս պատմությունը։

Անահիտ Սահինյանը, որի վիպասանությանը լավ եմ վերաբերել հենց սկզբից, նոր վեպ գրեց՝ «Խաչուղիներ» խորագրով։ Այդ վեպն իր արժանավորություններով նախորդ գրքից բարձր էր։ Երիտասարդ գրողի աճն ակնհայտ էր։ Սյուժեն բազմաժալ։ Սյուժետային գծի զարգացումը հետաքրքիր։ Բազմաթիվ կերպարներ՝ առաջնակարգ, երկրորդական։ Բոլորն իրենց բնավորությունն ունեն։ Նկարագրելու, պատմելու բացահայտ ձիրք։ Մարդկային հոգեբանության մեջ թափանցելու ձգտումն անկասկած է, անկասկած էր, որ հոգեկան զաղտնարաններից հայտնաբերում է երևույթներ։ Սուր դիտողականություն։ Կյանքի հարաճուն ընթացքը ներկայաց-

նում է առանց դունազարդումների։ Գրիչը հակված է կյանքի մութ կետերը լույս աշխարհ բերելու։ Մի խոսքով՝ «Խաչուղիներ» վեպը նոր ապացույց էր իր վիպասանական օժտվածության։

Ես հանձն առա խմբագրել։

Ընթերցողը վեպը լավ ընդունեց։ Մի լավ վեպ էր դրված նրա սեղանին։ Սակայն գրական քննադատությունը վրդովվեց։ «Խաչուղիները» ասես ճահիճ նետված քար էր։

Վրդովմունքի գլխավոր պատճառը հետևյալն էր։ Երիտասարդ հեղինակի վեպի հերոսներից մեկը, որ մինիստրի պաշտոն ուներ, սիրահարվել է և իր զգացումին հավատարիմ մնալով, հեռացել է տանից ու նոր ընտանիք կազմել։

Մի՞թե մեր մինիստրի հետ կարող է այդպիսի բան պատահել։ Մինիստրն ընդունակ չէ այդպիսի անբարո քայլերի։ Ինչպե՞ս է հեղինակը համարձակվել աղավաղված ներկայացնելու մեր կյանքը։ Անահիտ Սահինյանը ծուռ հայելու մեջ է ներկայացրել մեր իրականությունը։

Գրեց մեկը, գրեց մյուսը։ Գրական հավաքույթներում քննադատական ելույթների նյութ դարձավ։ Գրելաձևը տարբեր էր, արտահայտությունները նույնպես, բայց ամենքը նույնն էին ասում, բոլորն էլ խստագույնս քննադատում էին, բացասում վեպը, ո՛չ մի արժանիք չտեսնելով, ո՛չ մի լավ խոսք չունենալով երիտասարդ վիպասանի համար։

Հոլովվեց իմ անունը ևս։ Հեղինակը երիտասարդ է, շատ բան չի հասկանում, վերջապես սխալվել ու դրել է, իսկ ի՞նչ էր մտածում խմբագիրը։ Փոխանակ երիտասարդ վիպասանուհու ձեռքը բռնի, հասկացնի, թե ինչ մոլոր ճանապարհի վրա է, ճանապարհ է բացել վեպի առաջ։

Դրությունը բարդացավ։ Օր օրի ճնշումն ուժեղանում էր։ Անահիտ Սահինյանը գլուխն առավ գնաց Մոսկվա՝ Ալ. Ֆադեևի օգնությանն ապավինելու հույսով։ Իմ դրությունը նույնպես ծանր էր։ Գրական շրջանների ղեկավար մարդիկ, կուսակցական վերադաս մարմիններն անհանգիստ էին, նույնիսկ տագնապած՝ որքա՞ն կարելի է հանդուրժել այս մարդու սխալները։ Կարելի՞ է վստահել նրան հրատարակչական գործը, երբ սխալ սխալի հետևից է թույլ տալիս։ Չէ՛, պետք է ազատել աշխատանքից և գործը հանձնել մի մարդու, որի

կուսակցական կողմնորոշման նկատմամբ անվերապահ հավատ լինի։

Որոշվեց այսպես։ Գեղարվեստական գրականության բաժինը այսուհետև բաժանվելու է երկու ենթաբաժնի ու այդ ենթաբաժինները ղեկավարելու են տարբեր մարդիկ։ Ես գլխավորելու էի դասական հեղինակների, ինքնուրույն ու թարգմանական հրատարակությունը, իսկ Արտաշես Ոսկերչյանը՝ ժամանակակից գրականության, դարձյալ ինքնուրույն և թարգմանական։

Առաջին հայացքից կարծես արդար լուծում էր գտել հարցը։ Բայց արթուն մարդիկ կային և նրանք ղեկավար ընկերներին ներշնչեցին այն միտքը, որ ինձ չի կարելի վստահել նույնիսկ դասական հեղինակների հրատարակությունը, քանի որ մեղքեր ունեմ գրականության պատմության մարզում նույնպես և բերել էին մեկից ավելի օրինակներ, որոնց վերաբերյալ պաշտոնական վերին մարմինները ժամանակին մեղադրրանք էին բանաձևել իմ դեմ։

Ես, անկեղծ ասած, ցավում էի, որ ինձ վստահել էին դասականը և ոչ արդիականը։ Վերջինը համարում էի իմ տարերքը։ Ինձ թվում էր, միանգամայն անկեղծ, որ իմ ուժերն ավելի ճիշտ կլինի օգտագործել արդիական գրականության հրատարակչական գործերի համար։ Ես այն ժամանակ չգիտեի, որ ինձանից ուզում են ազատվել առհասարակ։ Դրան տեղյակ դարձա տարիներ հետո, երբ արդեն հրատարակչական աշխատող չէի։

Ուրեմն՝ ի՞նչ։ Ուրեմն այն, որ ինձ որպես սխալական մարդու պետք է հրատարակչությունից ազատել ընդհանրապես։ Իսկ ինչպե՞ս հիմնավորել ազատումը, որ հիմնավոր լինի, տրամաբանված։ Միշտ կարելի է համապատասխան ձևակերպում գտնել։

Եվ հանկարծ անակնկալ։ Հիվանդացա և անկողին ընկա։ Լուրջ հիվանդացա։ Կյանքս վտանգի տակ էր։ Բժիշկներն անհանգստացան։ Փրկությունը Դիլիջան փոխադրվելն էր։

Մեր երկրում օրենք կա՝ արձակուրդում գտնվող և հիվանդությամբ տառապողին աշխատանքից չեն ազատում։ Ահա այս ձևով իմ ազատման հարցը միառժամանակ հետաձգվեց։ Ես մարտ ամսին հիվանդացա։ Կարծում էին, որ մի երկու,

ամենաշատը երեք ամսից առողջացած կլինեմ, և նրանք կրկին կզբաղվեն իմ հարցով։

Իմ վիճակը ծանր էր։ Այդ կապակցությամբ լուրջ ապրումներ ունեի ոչ միայն Երևանում, այլ նաև Դիլիջան մեկնելուց առաջ։ Ապրել-չապրելու հարցերն էին ուղեղս տանջում։ Այլևս միտքս չէր դառնում աշխատելուս հարցին։ Ես այդ ծանր վիճակում մտածում էի՝ միայն թե լավանամ, մնացածը ինչ կլինի, թող լինի։ Պարզապես չէի պատկերացնում, որ այսուհետև չեմ աշխատելու հրատարակչության աստիճանավորին, որին նվիրել էի կյանքիս տասը տարին։

Սեպտեմբերի առաջին օրերին մի անհետաձգելի գործով Երևան եկա։ Ահա այդ ժամանակ էլ Նիկոլ Աղբալյանի մահվան լուրն էր եկել Բեյրութից։ Մինչև հոկտեմբեր մնացի Դիլիջանում։ Վերադարձա Երևան և անցա գործի։ Մի ամիս էլ չէր անցել, որ իմ առաջ դրվեց հրատարակչության տնօրենի հրամանը ինձ աշխատանքից ազատելու վերաբերյալ։ Պատճառաբանված էր այսպես. նպատակահարմար գտնելով Զարյանի ուժերը կենտրոնացնել գիտական աշխատանքների վրա, ազատել հրատարակչության զբաղեցրած պաշտոնից։

Ի՞նչ կարող էի ասել։

Թերևս լոկ այն, թե ինչու են իմ փոխարեն իրենք որոշում, թե ուժերս որտե՞ղ է հարմար կենտրոնացնել։ Եթե ինձ հարցրնեին, կասեի՝ գերադասում եմ աշխատել հրատարակչատանը։ Բայց ընկերներս հասկացնում էին, որ վերոհիշյալ ձևակերպումը համաձայնեցված է վերադաս մարմինների հետ։ Դեռ գոհ պետք է լինեմ, որ հրամանում մեղադրանքներ չկան, ամեն ինչ արված է նրբանկատ, նույնիսկ հարգանքով։

Ու ես վիրավոր սրտով, բայց արտաքուստ հանգիստ, հավաքեցի գրասեղանիս գզրոցներից ամեն ինչ, որ անձնական էր, մտա բոլոր բաժինները, նստեցի, անշտապ իմ շնորհակալությունը հայտնեցի երկարամյա համատեղ գործունեության համար և գլխիկոր գնացի տուն, իմանալով, որ վաղն այլևս չեմ գալու հրատարակչություն, չեմ մտնելու իմ առանձնասենյակը, գործով չեմ հեռախոսելու սրան ու նրան։ Գալու են Իսահակյանը, Դեմիրճյանը, Զորյանը, Նաիրին, իսկ ես այնտեղ չեմ լինելու։

Ի՞նչ է սպասում ինձ։ Ո՛չ ես դիտեի, ո՛չ էլ ուրիշները կարող էին ասել։

Հիմա, երբ անցել է շուրջ կես դար, ես մտածում եմ, որ ազատումը ճիշտ քայլ էր, մանավանդ եթե զբաղվելու էի ոչ թե ժամանակակից գրականությամբ, այլ դասական հեղինակներով, որը, ինչ խոսք, պատվավոր գործ էր, բայց ինձ չէր հուզում։ Ամեն մի անհաջողություն միշտ ունենում է սփոփիչ կողմ։ Այս դեպքում հանգստացնող կողմն այն էր, որ շարունակելով աշխատել Հայպետհրատում, իմ սրտով չէր լինելու կատարածս գործը։ Այնպես որ, հեռանում էի ինձ սիրելի հաստատությունից փոքր-ինչ թեթև սրտով։

ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

(Ի լրումն «Հուշապատումի»)

Խորեն Սարգսյանի միտքը գործում էր առողջ, լավատես, պայծառ, ասես աշխարհն իրենը լիներ։ Տատանումներ չունեներ։ Եթե նպատակը պարզ էր՝ ուղիղ գնում էր դեպի նպատակակետ։ Չէր ստացվում՝ չէր հուսահատվում, մոտեցման ուրիշ ճանապարհ էր գտնում։ Մի ժամանակ մաթեմատիկայից ուժեղ է եղել, թերևս դա է պատճառը, որ նրա միտքը վարժվել էր մի խնդրի համար տարբեր լուծումներ որոնելու, մինչև որ կգտներ ճիշտ մոտեցումը։

Լավ հիշում եմ պատերազմի առաջին օրերը և անցած տարիները։ Կային մարդիկ, որ հույսները կորցրել էին, մանավանդ, երբ լուր հասավ, թե գերմանացիները հասել են Կովկաս։ Խորեն Սերգեևիչը չկորցրեց հոգու անդորրը։ Ճգնաժամային պահերին էլ մնաց լավատես և ոչ մի կասկած չունեներ, թե հաղթանակը մերն է լինելու։ Վստահաբար կարող եմ ասել, որ այդ օրերին շատերի ոգին նա կանգուն պահեց։

Մի անգամ եմ տեսել նրան ընկճված։ 1947-ին էր դա։ Նա, որ միշտ քարոզում էր ժամանակի առաջապահը լինել, ապրել արդիականության հարցերով, պայծառ հավատով վերաբերել հայրենի երկրին ու նրա ապագային, հանկարծ մեղադրվեց, կշտամբվեց «իզմերի» մեջ և հուսահատվեց։ Հուսահատությունը հասավ ծայրահեղ չափերի։ Մամուլում

պաշտոնական անձանց հոդվածները լույս տեսան՝ «չի ըմբռնում», «աղավաղում է», «խորթ դիրքերի վրա է կանգնած» և հետո էլ մեկը, որին այն ժամանակ բարձր դիրք էր վստահված, կանչել է Խրուշչովին ու ասել.

— Մտածենք ձեր մասնագիտությունը փոխելու մասին։

Եվ սա ասվել էր որպես բարի խորհուրդ, որպես սրտացին ներողամտություն և հետաքրքիրն այն է, որ ասվել էր մի մարդու, որ հիասնվեց տարեկան էր, կարգին հոդվածների և առաջաբանների, գրքերի հեղինակ։

Նա հուսահատ ասում էր.

— Պատկերացնո՞ւմ ես, մատա՛ղ, գրել չեմ կարողանում, նույնիսկ երկու նախադասություն։

Այ՛ քեզ բան։

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1948 թվականն է, մայիսի 23-ը։

Երևանի թատերական ինստիտուտը, որտեղ աշխատում եմ որպես դասախոս և ամբիոնի վարիչ, ցույց է տալու ավարտական ներկայացումներ։ Ավարտում են Վարդան Աճեմյանի և Վաղարշ Վաղարշյանի դասընթացները։ Ցույց են տալու իրենց չորս տարվա աշխատանքի արդյունքը։ Յուրատեսակ ստեղծագործական հաշվետվություն։

Ես ներկա եմ բոլոր ներկայացումներին։ Ներկա են մեր գեղարվեստական, հատկապես թատերական հասարակայնության բոլոր ներկայացուցիչները։ Դահլիճը փոքր է, և շատերը, որ եկել էին ներկայացումներ դիտելու, ստիպված հետ դարձան։

Ներկայացվում է «Էլի մեկ զոհ»։

Ես ուզում եմ հիշատակել այդ ներկայացման բոլոր դերակատարներին անխտիր, անկախ այն բանից, թե նրանցից ով շարունակեց թատրոնում աշխատել, ով՝ ոչ։

Սարգիս՝ Հ. Գալոյան, Սալոմե՝ Է. Գյուլիսերյան, Միքայել՝ Գ. Ջեպչյան, Բրիլիանտով՝ Գ. Արզումանյան, Վանո՝ Ա. Թորգոմյան, Նատո՝ Մ. Թամրազյան, նաև՝ Ա. Ղազարյան, Աննայի՝ Մ. Սիմոնյան, Բարբարե՝ Ն. Աղաբաբյան։

Բացի «Էլի մեկ զոհից», Աճեմյանի կուրսը ցույց տվեց

երկու ներկայացում ևս՝ «Մեր երիտասարդությունը», «Քնքույշ սրտից պատուհաս»։ Վաղարշյանի կուրբ՝ «Վասսա Ժելեզնովա», «Խոր արմատներ», «Ռևիզոր»։

«Էլի մեկ գոհը» ընտիր ու կոկիկ ներկայացում է։ Ասես պրոֆեսիոնալ դերասաններ լինեն։ Ինչ որ անում են՝ համաձայն իրենց արվեստի օրենքների։ Ինչ որ անում են, անում են հույզի անկեղծ թրթիռով։ Դերասանները խաղում են համոզված։ Ամեն մեկն ունի կյանքի իր ճշմարտությունը, որին հավատում է։ Սալոմեն համոզված է, որ ինչ որ ձեռնարկում է ինքը, Անանիի օգտին է։ Միամիտ աղջիկը հիմա չի հասկանում, կհասկանա հետո, վաղը, երբ կլինի մեծահարուստ Բրիլիանտովի հարսը, շնորհակալ կլինի մորից...

Զարմանալի բան, երիտասարդ ու անփորձ են, բայց հավատում ես, որովհետև անկեղծ են խաղում, հավատալով, ապրելով։

Երկու դերակատար առանձնապես ուշադրության արժանացան, մեկը Անանիի դերակատար Մեսրոպյա Սիմոնյանը, մյուսը՝ վանոյի կերպարը մարմնավորող Անատոլի Թորգոմյանը։ Ես չգիտեմ, թե ինչ տարիքի են, երևի քսան, ամենաշատը քսանմեկ տարեկան, բայց կա կերպարի պլաստիկ ըմբռնում, մի դեպքում հմայք ու քնարականություն, հոգեկան անարատություն, մյուս դեպքում՝ դատարկամիտ երիտասարդ, որի կյանքի պատկերացումները պարահանդեսներից այն կողմ չեն անցնում։ Ամեն մեկի խոսքը, նույնիսկ արտաբերած բառը բնորոշում է նրանց ներքին էությունը։ Իսկ հմայքը, հրապույրը...

«Էլի մեկ գոհի» թողած տպավորությունն այնքան վառ էր, որ որոշվեց ավարտական ներկայացումը ցույց տալ Սունդուկյանի անվան թատրոնի բեմից, որ շատ մարդ տեսնի։ Ո՞ւմ միտքն էր, չգիտեմ, բայց ճիշտ միտք էր և ոչ լոկ այն պատճառով, որ լավ ներկայացում է։

Այս ներկայացումը պատմական է։

Ավարտական շորս թե հինգ բեմադրությունների խորհրդանիշն է սա։ Եվ արժեքի գլխավոր իմաստն այնքան այն չէ, թե սա ավելի պրոֆեսիոնալ էր, մյուսները պակաս, այլ այն, որ սա թատերական արվեստի հայկական առաջին

բարձրագույն ուսումնական հաստատության առաջին ներկայացումն է: Մի բան, որ թատերական դեմքերով ու դեպքերով մեր հարուստ կյանքը չի ունեցել անցյալում, իսկ հիմա ունի: Ու եթե կրկին հիշեմ, որ այս նոր հաստատությունն ստեղծվել է հայրենական պատերազմի տարիներին, ապա առավել բովանդակալի կդառնա այս ներկայացման պատմականությունը: 16—17 տարեկան պատանիներ, տղաներ ու աղջիկներ իրենց ուշքն ու միտքը, իրենց սրտի կրակը տվել են թատրոնին, որտեղ մեծ ու փոքր հաջողություններ են սպասելու իրենց: Ուրեմն՝ այս հաստատության ստեղծմանը դեռ 1944-ին ձեռնամուխ եղած պետական այրերը հեռատես ու լավատես են եղել...

Կանցնեն տարիներ, այս նույն բեմից, այս նույն սակավամարդ դահլիճի առաջ ցույց կտրվեն ներկայացումներ, ուրիշ տղաներ ու աղջիկներ բեմ կբարձրանան: Մի ներկայացում ավելի կհավանենք, մի ուրիշ ներկայացում ավելի նվազ տպավորություն կթողնի: Աղջիկներ աչքի կընկնեն, տղաներ կփայլատակեն, դրանց մեջ դեմքեր կլինեն, որ հետո կփոխադրվեն Մոսկվա, և ձեռք կբերեն միութենական լայն ճանաչում... Եվ այնուամենայնիվ, նույն Աճեմյանի, նույն Վաղարշյանի, Արմեն Դուլակյանի դուցեև ավելի վառ ներկայացումներ տեսնենք, բայց դրանք չեն լինի առաջին, դրանք կլինեն... հերթական:

Ես չգիտեմ, թե հետագայում կամ անգամ հիմա ինչպես է դնահատվելու Վալիկ Վարդանյան դերասանն ու բեմադրիչը իր բազմամյա բեղմնավոր գործունեությամբ հանդերձ, բայց նրա անունը հայ թատրոնի պատմության մեջ նախ և առաջ հիշվելու է թատերական արվեստի առաջին բարձրագույն հաստատություն հիմնելու կապակցությամբ: Հիշենք, որ ունեցել ենք ստուդիա Թիֆլիսում, հիշենք, որ երկար տարիներ Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը կից գործել է ստուդիա: Երևանն էլ իր հերթին ունեցել է դրամատիկական դասընթացներ, տակավին այն տարիներին, երբ Չարենցը սիրահարված էր այդ դասընթացների սան Արփենիկին: Վերջապես ստեղծվեց նաև թատերական ուսումնարան: Սրանք բոլորը սակայն, նախապատմություն են: Պատմությունն սկսվում է 1944-ից և ռեկտորի այն աղնիվ ջանքերից, որ նորաստեղծ

ինստիտուտն ունի դասախոսական բարձր կազմ, ընդգրկելով Լևոն Քալանթարին, Վաղարշ Վաղարշյանին, Վարդան Աճեմյանին, Արմեն Գուլակյանին, Սրբուհի Լիսիցյանին, Գարեգին Լեվոնյանին, Ալեքսեյ Ջիվելեգովին, Գրիգոր Ղափանցյանին, Հայկ Գյուլիքևեխյանին, Մկրտիչ Մկրյանին, Գևորգ Գոյանին, Տիգրան Հախումյանին, Վահրամ Թերզիբաշյանին, Սարգիս Մելիքսեթյանին և շատ ուրիշների...

ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ

Ուզում եմ պատմել մի բան, որ թերևս ինչ-որ չափով կօգնի ավելի ճիշտ և բազմաշերտ ըմբռնելու իմ միտքն այն մասին, թե ինչ մեծ ուժ է մարդու կյանքում կենտրոնացման ընդունակությունը։

Մարտիրոս Սարյանին նվիրված հաղորդում էր հեռուստատեսությամբ։ Դա այն հաղորդումն էր, որի ժամանակ իր ընտիր հայերենով և ինքնատիպ մտքով փայլեց չեխ հայագիտուհի Լյուդմիլիա Մոտալովան։ Ուրիշ խոսողներ էլ եղան։ Խոսեց նաև քանդակագործ Ղուկաս Ջուբարյանը։ Հուշ էր պատմում, տպավորություններ։ Նրա պատմածից մի կետ մնաց հիշողության մեջ։

Ասաց, թե ինքն ու Սարիկը (նկարչի ավագ որդին) դասընկերներ էին։ Հաճախ է եղել Սարյանների տանը՝ դաս պատրաստելու, դասագիրք վերցնելու, վերջապես՝ խաղալու համար։

Ղուկասին հետաքրքրել է, թե իր ընկերոջ հռչակավոր հայրը ինչպիսին է անձնական կյանքում և հարցրել է.

— Հայրիկդ գինի խմո՞ւմ է։

— Ո՛չ։

— Հայրիկդ կերուխում սիրո՞ւմ է։

— Ո՛չ, ո՛չ։

— Հայրիկդ սիրո՞ւմ է հյուր գնալ։

— Ո՛չ, երբեմն գնում է ստիպված, գերադասում է տանը մնալ։

— Հայրիկդ երբևէ ուրիշ կին սիրե՞լ է։

— Ո՛չ, ինչ ես ասում։

— Բա ինչ է սիրում։

— Միայն իր գործը՝ նկարչությունն։

Ղուկասի և Սարիկի այս զրույցը, հակառակ իր միամըտության, միանգամայն բնական ու հասկանալի նրանց մանկական հասակի համար, մի թանկագին իմաստ է արտահայտում։ Ըստ մտքի՝ սա նշանակում է, որ Սարյանը իբրև արվեստագետ իր հոգեկան կյանքի բոլոր կողմերը ենթարկել է նկարչությանը, որից դուրս նրա համար աշխարհ գոյություն չի ունեցել։ Ուրեմն՝ նա հասել է ներքին աշխարհի կենտրոնացման, իսկ ինչպես հայտնի է, գրականության և արվեստի մեծերը միշտ այն համոզման են եղել, որ հանճարը ոչ այլ ինչ է, եթե ոչ կենտրոնացում։

Իմ կյանքը, ինչպես նաև ինձ նման շատ շատերի, կենտրոնացումից զրկված է եղել։ Այդպես է դաստիարակվել և՛ իմ մեղքով, քանի որ մեջս ուժ չեմ գտել մի բանի պոչից բռնելու, և՛ ինձանից անկախ պատճառներով չլատվել, մասնատվել եմ։ Դա է պատճառը, որ ես հաճախ եմ խոսում կենտրոնանալու անհրաժեշտության մասին, ինչի գիտակցությունն իմ մեջ կար, բայց չկար դա իրականություն դարձնող կազմակերպող կամքը։

Ա՛խ, ԱՅԴ ՏԱՆՋԱԼԻ ՕՐԵՐԸ

Ուզում եմ անել մի պատմություն, որ տեղի է ունեցել 1949-ի գարնանը։ Ծանր դեպք էր դա, բայց շատ բնորոշ այն ժամանակների համար, որքան վիրավորական ու նվաստացուցիչ, նույնքան էլ վտանգավոր ու սպառնալի։ Ասեմ նաև, որ դրան՝ 1948-ին և ավելի առաջ՝ 1946-ին նախորդել են այլ համանման դեպքեր։ Հիշելիս, թեև անցել են շատ տարիներ, մարդ հիմա էլ փշաքաղվում է։

1946-ի իրադարձությունը գրական էր, որի կենտրոնում Աննա Ախմատովան և Միխայիլ Զոշչենկոն էին։ Տասական թվականներից մնացած միակ բանաստեղծը Ախմատովան էր, որի երկրպագուները հավատարիմ էին նրան։ Արդեն դասականի համբավ ուներ։ Նույնը և Զոշչենկոն, որի հումորիկ պատմությունները սիրելի էին հազարավոր ընթերցողների համար։ Եվ հանկարծ... Պարզ երկնքում ճայթեց ամպրոպ... էլ

անամեջ, էլ քաղքենի, էլ սալոնային, էլ զրպարտիչ, մի խոսքով բառարանում ինչ վիրավորական խոսք կար, հիշեցին ու շպրտեցին բանաստեղծուհու և երգիծաբանի երեսը ցեխոտեցին: Ամենադրամատիկն այն էր, որ նախկին երկրպագուները՝ ահից դրդված ամբիոն բարձրացան, գրիչ առան ձեռքը՝ վիրավորական ձևակերպում տալով մտքերին, քննադատում էին իրենց գրչակից ընկերներին ու մեղա գալիս, որ մի ժամանակ գովել էին:

Երկու տարի էլ չէր անցել այս պատմությունից, խստագույնս քննադատվեցին կոմպոզիտորները: Եվ ի՞նչ եք կարծում, ովքե՞ր: Այն մարդիկ, որոնց անունը տարածված էր աշխարհով մեկ՝ Դմիտրի Շոստակովիչը, Արամ Խաչատրյանը, Սերգեյ Պրոկոֆևը: Ուրիշներ նույնպես: Մեղադրվել են ռուսական իրապաշտ երաժշտությունից շեղվելու, ժողովրդայնության դեմ գնալու, արևմտյան անկումային երաժշտության ազդեցության տակ գտնվելու, ամերիկյան երաժշտությանը տուրք տալու համար: Ոչնչացնում, հողին էին հավասարեցնում: Ամենածանրն այն էր, որ նախկին երկրպագուն հարկադրված էր քար նետողի դերում լինել:

Հետո մեր պատմությունը եկավ:

Այն ժամանակ ի վիճակի չէինք այս պատմություններն իրար հետ կապելու: Մեր ընկալումը խիստ հուզական էր, մանավանդ ինքներս ծավալվող դրամայի գործող անձերից էինք, գլխավոր թե երկրորդական: Հիմա, երբ անցել է շատ ժամանակ, չորս տասնամյակից մի փոքր պակաս, հասկանում ենք, որ մտավորական ինչ-որ շերտերի ջարդ էր դա, կենսական ատելություն այն մարդկանց նկատմամբ, որ վառ անհատականություններ էին: Ունեին աշխարհով մեկ տարածված ու տարածվող հռչակ, որի առաջն առնել ի վիճակի չէր բռնակալների բռնակալը:

Ստալինի մահից հետո շատ բան փոխվեց: Բայց ինչ-որ բաներ հնից՝ ստալինապաշտ ժամանակներից մնացին: Պաստեռնակի պատմությունը, ողբերգական բանաստեղծի համար, վարկաբեկիչ մեր երկրի ղեկավարների ու գրական հասարակայնության համար: Եվ ամենասարսափելին այն էր, որ Պաստեռնակին դատապարտելու, նրան գրողների միությունից վտարելու կոչով, անկեղծ, թե ոչ անկեղծ, հանդես

կան գրչակից ընկերները, որոնք հետո աստվածացնելու էին նրան և պահանջ էին դնելու, որ նրա զբաղեցրած ամառանոցը վերածվի տուն-թանգարանի: Կամ ով չի հիշում ակադեմիկոս Ալեքսանդր Սախարովի պատմությունը: Համաշխարհային համբավի շատ գիտնականներ ստիպված էին իրենց անունը դնել գործընկերոջ, մեղմ ասած՝ վատաբանող-դատապարտող նամակի տակ:

Այս բոլորը հիշեցի այստեղ, որպեսզի ընթերցողի համար հասկանալի լինի արվող պատմության կապերն ու աղերսները:

1949-ին երկրով մեկ պայքար ծավալվեց գրականության և արվեստաբանության մեջ «հայտնված» կոսմոպոլիտական տրամադրությունների դեմ: Թատերագետների վրա հրետանային կրակ բացվեց: Ո՞րն էր մեղադրանքը. հայրենական արվեստի նվաճումները թերագնահատում են և ընդհակառակը՝ արևմուտքի թատրոնը գովերգում, փառաբանում: Մի խոսքով ինչ ասես, որ չէր ասվում թատերագետների դեմ: Լինեին դրանք քննադատներ, ինչպես Յու. Յուզովսկին, Գ. Բոյաջիևը, Ալ. Բորշչագովսկին և շատ ուրիշներ, լինեին թատրոնի պատմաբաններ, ինչպես Ա. Ջիվելեգովը, Ա. Ալպերսը և ուրիշներ: Թատերական աշխարհում բոլորն էլ ճանաչված հեղինակություններ էին: Երբ Յուզովսկին գնում էր որևէ թատրոն ներկայացում նայելու, քննադատի գալու լուրն անմիջապես հասնում էր կուլիսները, այդտեղ տագնապ և անհանգստություն էր առաջանում: Բեմադրիչներն աշխատում էին ազդել դերասանների վրա, որ չխնայեն իրենց ուժերը, լավ խաղան: Բեմադրիչները, դերասանները, նաև թատերագիրները պատիվ էին համարում, երբ Յուզովսկին իր հոդվածում հիշատակում էր իրենց անունը:

Եվ հիմա այդ նույն Յուզովսկին գրչակից ընկերների հետ միասին մեղադրական աթոռին էր նստած: Դատարանական լեզվով ասած դատավորներ և ատենակալներ կային, դատախազներ նույնպես, բայց չկային և չէին կարող լինել դատապաշտպաններ: Դատախազները, որ բեմադրիչներն էին ու թատերագիրները, թիվ ու համար չունեին: Ի միջի այլոց ասեմ, որ որպես մեղադրողներ խոսում էին մեծ մասամբ այն արվեստագետներն ու գրողները, որոնք ժամանակին քննադատ-

վել էին կամ անտեսվել։ Մի խոսքով՝ հաշվեհարդարի օրեր էին, դատավարություն էր առանց դատապաշտպանի, մանավանդ որ մեղադրյալի խոսքը նույնպես պետք է լիներ դատապարտման ոգով՝ ինքն իր դեմ։

Երկու դրվագ Մոսկվայում գրողների տան հակակոսմոպոլիտիզմին նվիրված հավաքից։

Մի քանի մեղադրական ելույթներից հետո հրավիրվել է խոսելու Յուզովսկին։ Մոտենալով ամբիոնին, իր սկզբունքները հիմնավորելու նպատակով անդրադարձ է ունեցել Լենինի անունը տալ, Լենինից մեջբերում անել։ Վրդովված ժողովականները զայրագին ռեպլիկներով արտահայտել են իրենց դժգոհությունը։ Ժողովականները դիմել են հավաքույթի նախագահին և պահանջել, որ դրկի ձայնից Յուզովսկուն, որակելով նրա արածը սրբապղծություն։ Նույնիսկ եղել են մարդիկ, որոնք աղմուկ-աղաղակով պահանջել են ոչ միայն ձայնազրկել, այլ նաև վտարել ժողովից, թույլ չտալ մնալ ժողովին։

Մեղադրյալներից էր նաև Բոյաջիևը, որը, սակայն, խիստ քննադատվելով հանդերձ, բախտը բերել է և Յուզովսկու նման չի արժանացել լուտանքների։

Բոյաջիևը խոսել է կոսմոպոլիտական վտանգներից։ Նախագահության սեղանի շուրջ նստածներից մեկն ընդհատել է նրան և ասել.

— Դուք ավելի լավ է պատմեք, թե ներկայացումից հետո ընթրելու պատրվակի տակ երբ հավաքվում էիք «Արագվի» ռեստորանում, ինչի՞ մասին էիք խոսում։

Դահլիճի վրա իջել է ճնշող լռություն։

Ուրեմն՝ այս մարդիկ, բավական չէ, որ խոնարհվում են արևմուտքի մշակույթի առաջ, արհամարհաբար վերաբերում հայրենական արվեստին, ընդհատակյա նիստեր են գումարում և իբր ընթրում են, բայց փաստորեն մտքեր փոխանակում, թե սրանից հետո ինչպես երկինք հանեն արևմտյան, այսինքն՝ բուրժուական արվեստը և վերջապես՝ ինչ միջոցներ ձեռք առնեն, որ արգելակեն մեր արվեստի առաջընթացը։

Ծա՛նր, շա՛տ ծանր մեղադրանք։

Բոլորը սպասել են, թե ինչ կասի Բոյաջիևը, որը թեև

ամենաերիտասարդն էր մեղադրվողներից, բայց գլխավորում էր թատերական ընկերության քննադատական միավորումը: Բոյաջիևը զգացել է սպասողական լարված մթնոլորտը, բայց չի կորցրել իրեն, գոնե առերևույթ պահպանելով հանգստությունը և շրջվելով դեպի նախագահությունն, որտեղ, ի դեպ, նստած էր իրենց թատերագետ ընկերը, որն ազատ էր իր ընկերներին վերագրվող մեղադրանքներից, ասել է.

— Եթե ես ասեմ, թե ինչի մասին էինք խոսում, դուք, միևնույն է, չեք հավատա ինձ, ուստի՝ ավելի լավ կլինի, եթե այդ հարցի պատասխանը տա ձեր կողքին բազմած այսինչը, որ մեր գիշերային բոլոր ընթրիքների մասնակիցն է եղել:

Դահլիճում քրքիջ է բարձրացել:

Մի քանի տարի առաջ, մինչև 50-ական թվականների կեսերը, գուցե մի փոքր ավելի, մամուլում չերևացին ո՛չ Յուզովսկու, ո՛չ Բոյաջիևի, ո՛չ էլ մյուս մեղադրյալների անունները: Բորշչագովսկին վճիռ է կայացրել՝ թատրոնով այլևս չզբաղվել, քանի որ մինչև այդ մի քանի հասկացող մարդիկ ասել էին, թե նա գրողի ակնհայտ շնորհք ունի: Մեկնել է Կիև ու սկսել վեպեր գրել: Յուզովսկին խնդրեց թույլ տալ Լեհաստան մեկնել որպես լրագրող և մամուլում՝ «Լիտերատուրնայա գազետայում» երևաց նրա «Լեհական նամականի» շարքը, որտեղ բացահայտ էր գեղարվեստական թափանցման ձիրքը:

Թատերագետներից համեմատաբար մեղմ գտնվեցին Բոյաջիևի նկատմամբ, թույլ տվին, որ թատերական արվեստի ինստիտուտում շարունակի կարդալ արևմտաեվրոպական թատրոնի դասընթացը: Շատ տարիներ հետո Յուզովսկին մեկմեկ մասնագիտական մամուլի էջերում երևաց որպես թատերական քննադատ, այն էլ գլխավորապես շեքսպիրյան ներկայացումների շուրջ գրած հոդվածներով, իսկ Բոյաջիևը թատերական քննադատության ամենագործուն դեմքերից մեկը եղավ մինչև իր կյանքի վերջին տարիները: Նրա մահը հաջորդեց Յուզովսկու և Ալպերսի վախճանին:

Յուզովսկուն մի նամակ ուղարկեցի, գրելով, թե ինչպիսի սիրով են հիշում իրեն Երևանում, Հայաստանում ընդհանրապես, ինչ շնորհակալ զգացում ունեն իր հանդեպ հայ թատ-

րոնի մարդիկ և արվեստի ինստիտուտի անունից առաջարկ արի՝ հանձն առնել իր «Դարն ու կերպարը» գիրքը նոր հրատարակության պատրաստել, հավելելով նոր փաստերով, որոնք ևս հանձն եմ առնում պատրաստել և ուղարկել իրեն:

Երկար ժամանակ պատասխան չունեի: Վերջապես մի երկտող ստացա իրենից, իմացա, որ հիվանդ է, գրել էր, որ ինքը սիրով է հիշում Հայաստանը և Հայաստանի մարդկանց:

Նրա հիվանդությունը ծանր էր և անբուժելի: Շատ չանցավ և նա վախճանվեց: Մահից առաջ Մոսկվայում նշվել է նրա ծննդյան 60-ամյակը: Այդ երեկո Յուզովակուն մեծարել են այնպես, ինչպես չեն մեծարել ոչ մի այլ թատերագետի մեր երկրում: Տրվել է արժանին: Հիրավի, եզակի մեծություն էր, որն իր հավասարը չուներ ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ հիմա: Եվ այնուամենայնիվ, եթե ինչպես բոլոր հոբելյաններին է լինում, գույների որոշ խտացում է եղել, ապա երևի այդ դեպքում դա այնքան չափազանցություն չի եղել, որքան բարոյական ինքնադատափետում: Ճիշտ է, մեծարողների մեջ չկային 1949-ի մեղադրողներից, բայց ժամանակակիցն էին այդ ահավոր դեպքերի և լուռ էին մնացել, քաջություն չէին ունեցել, թեկուզ դատապարտվելու գնով, պաշտպան կանգնելու մեկին, որի ամեն մի խոսքն իրենց համար ճաշակի օրենսդրության ուժ ուներ: Ճիշտ է, չէին մեղադրել, բայց չէին էլ պաշտպանել:

Եթե իրենց փոխարեն ևս լինեի, նույնպես կվարվեի իմ ունեցած և չունեցած մեղքը նրա հանդեպ քավելու համար: Բայց այդ օրերին ևս նույնպես մեղադրյալ էի, մեկն այն կոսմոպոլիտներից, որ գործել է խորհրդահայ թատերական արվեստի դեմ՝ Գևորգ Գոյանի, Սարգիս Մելիքսեթյանի, Վահրամ Թերզիբաշյանի, Սուրեն Հարությունյանի և ուրիշների հետ միասին: Ավելի ճիշտ՝ մենք ոչ այնքան կոսմոպոլիտներ էինք, որքան ձայնափողը Մոսկվայի կոսմոպոլիտ թատերագետների:

Մելիքսեթյան, Թերզիբաշյան ու ես, ճիշտ է, հիացած էինք Յուզովակիով, բայց ոչ մեկը մեզանից ո՛չ հոդված էր գրել նրա մասին, ո՛չ ելույթ ունեցել, բայց մեզ դրին այն պայմանների մեջ, որ մենք ընդունենք, թե իբր նրա հետե-

վողն ենք եղել ու հիմա ենք գիտակցում մեր սխալը և հրաժարվում նրանից, նրա գործը հայտարարելով անամեջ...

Ես էլ արդեն անուն էի հանել, որպես գաղափարական հարցերում մշտապես սայթաքող դեմք, որին հեշտությամբ կպչում էր և՛ ազգայնամոլի, և՛ կոսմոպոլիտի, և՛ էսթետացող ֆորմալիստի պիտակները։ Ու ես, չեմ թաքցնում, որ աչքս վախեցած էր։

Կոսմոպոլիտական կամպանիան իր գագաթնակետին հասավ 1949-ի մարտի 5-ին և 6-ին, այն երկու ժողովում, որ գումարվեցին գրողների տանը։

Այդ ժողովին նախորդել էին մամուլի քննադատական հոդվածները, որ ուղղված էին գլխավորապես Սուրեն Հարությունյանի դեմ։ Քննադատության կրակի տակ առնված թատերագետներից նա միակն էր, որ արդի թատերագրության հարցերով զբաղվել էր ոչ թե դեպքից դեպք, այլ պարբերաբար, գործուն կերպով, իսկ Սարգիս Մելիքսեթյանն ու ես, հակառակը, քննադատվում էինք ժամանակակից պիեսներով չզբաղվելու համար։ Որ ես չէի զբաղվում, ճիշտ է, բայց Մելիքսեթյանը, հիշում եմ, թեև քիչ, բայց գրել ու տպագրել էր ընդարձակ հոդված՝ «Խորհրդահայ թատրոնը պատերազմի ժամանակ» խորագրով։ Այդուհանդերձ, նույնիսկ Մելիքսեթյանը չէր կարող բողոքել, հիշեցնել, որ երեք տարի առաջ գրել է... Ասում էին չես զբաղվել ու՝ վերջ, ուրեմն չես զբաղվել։ Եվ ավելի լավ էր չհիշել, որովհետև գրածիդ մեջ կհայտնաբերեին մարդու մտքով չանցնելիք մեղքեր։ Դե արի ու պատասխան տուր։

Մի երկու մեջբերում.

«Քննադատների մի մասն էլ (Ռ. Զարյան, Ս. Մելիքսեթյան) համառորեն լռություն է պահպանում, երբ խոսքը վերաբերում է խորհրդային դրամատուրգիային»։

Սա ասված է «Գրական թերթի» խմբագրական հոդվածում, ուրեմն՝ պաշտոնական կարծիք է։

Սրան նախորդել էր (կամ հաջորդել, լավ չեմ հիշում) կուսակցական կենտկոմի բաժնի վարիչ Հովհաննես Մամիկոնյանի զեկուցումը, որին անդրադառնալով «Գրական թերթը» ի միջի այլոց արձանագրել է հետևյալը. «Ընկեր Մամիկոնյանը նշում է նաև մամուլում հրապարակվող թատերա-

կան դրախոսությունների պրոֆեսիոնալ ցածր մակարդակը: Այդ կապակցությամբ դեկուցողը քննադատում է այն պրոֆեսիոնալ քննադատներին, մասնավորապես ընկ. Ս. Մելիք-սեթյանին, որոնք համառորեն լռում են և չեն գրում խորհրդային պիեսների բեմադրության մասին: Նույնը պետք է ասել նաև ընկ. Ռ. Զարյանի մասին, որ մեծ ոգևորությամբ գրում է «Համլետի», «Օթելլոյի» բեմադրությունների մասին, զբաղվում է նախաուևոլյուցիոն հայ թատրոնի պատմությամբ, բայց բոլորովին չի հետաքրքրվում խորհրդային պիեսների բեմադրություններով»:

Քննադատական այս տարափի տակ բարձրացել ենք ամբիոն, և ինչ միայն չի ասել մեղանից յուրաքանչյուրն իր մասին, կուրծք ենք ծեծել, խոստումներ տվել, բայց չէ, բավարար չէր: Նախ՝ մամուլի հաղորդումներում մեզ վերագրվում էին մտքեր, որ չէինք ասել և ապա՝ անպայման պետք է դժգոհություն հայտնեին մեր ելույթներից. «չբացահայտեցին իրենց թույլ տված սխալների էությունը»:

Վերջապես ներքոհիշյալը.

«Պետք է սակայն նշել, որ ընկ. Ռ. Զարյանը այսպիսի ելույթներ ունեցել է նաև նախկինում, սակայն նրա վերաբերմունքը ոչնչով չի փոխվել: Նա շարունակում է լռել և չնկատել խորհրդահայ դրամատուրգիայի նոր երևույթները»:

Համոզված եմ, ոչ հիմա և ոչ էլ ապագայում այսօրվա թատերագետները չեն հայտնվի նույնանման վիճակում: «Չի նկատում, թող չնկատի, իր գործն է, վերջապես, ավելի վատ հենց իր համար»,— կասեն, կանցնեն առանց քաղաքական հետևություններ անելու: Բայց այն օրերին լռելը համարվել է հակահայրենասիրական վարքագիծ՝ ուրեմն մեզ հետ չէ: Իսկ եթե մեզ հետ չէ, նշանակում է մեր դեմ է:

Գրեցի ու հիշեցի, որ ի թիվս այլ մեղքերի, քննադատվեց իմ «Թաշկինակ» հոդվածը, որ տպագրվել էր «Գրական թերթում» 1946-ին: «Գրական թերթի» խմբագիրն Արշալույս Բաբայանն էր, իմ լավ բարեկամն այն տարիներին, մանավանդ հետագայում, մինչև այսօր: Հոդվածը, որ գրված էր Վահրամ Փափազյանի Օթելլոյի առիթով, մինչ այդ դրվատվել էր: Մտքովս անգամ չէր անցնում ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ հետո, կամ հիմա մեղադրել դրվատողներին, թե ինչու չե-

կան և պաշտպան չկանգնեցին ինձ։ Մի այդպիսի փորձը, նույնիսկ երկչոտ, կարող էր թանկ նստել նրանց։

Անկեղծ պիտի լինեմ, և ասեմ, որ եթե ես մեղադրվողների մեջ չլինեի, սիրտ չէի անի պաշտպանել մյուս մեղադրյալներին, լավ իմանալով, որ նրանց մեղքը մեղք չէ, ինչպես և, նրանք էլ իրենց վրա չէին վերցնի իմ պաշտպանությունը, եթե մեղավոր հայտարարված չլինեին։

Մի խոսքով քաջության տարիներ չէին, մանավանդ որ «Թաշկինակի» համար մեղադրվողը պաշտոնական անձ էր, պարզապես հարմար չեմ դատում այստեղ նրա անունը տալ, բայց ուզում եմ եթե ոչ բարոյապես, ապա իրավաբանորեն արդարանալու մի փորձ կատարել, թեկուզ տարիներ անց։

Ինձ մեղադրողը մոտավորապես այս կերպ ձևակերպեց իր միտքը.

— Պատերազմի ահեղ տարիներին, այն ժամանակ, երբ մայրերն Ուկրաինայում թաշկինակ չունեին իրենց արցունքները սրբելու, Ռուբեն Զարյանը «Գրական թերթի» երկու թերթոն է զբաղեցրել Փափազյանի Օթելլոյի թաշկինակի տեսարանի մասին խանդավառված հոդված գրելու համար։

Տպավորություն թողեց՝ շատերը գլուխները տարուբերեցին թե՝ նայեք, տեսեք, ինչո՞վ է զբաղված քննադատը հայրենասիրությունից խոսելու փոխարեն։

Բայց ելույթ ունեցողը, ընտիր հռետոր, զարգացած մարդ, լավ տրամաբանության տեր, իր ճառի զինանոցում տակավին ուներ այլ տպավորիչ խոսք ևս։

— Մեղ Զարյանից բաժանում է ընդամենը մի թաշկինակ և նա, ժամանակ ունի կողմնորոշվելու, թե ինքը թաշկինակի որ կողմում է, ա՞յս, թե այն...

Պայթեց հրացանից արձակված կրակոցի պես, դե արի ու մի վախեցիր, երբ քաղաքական կողմնորոշման հարց է դրվում քո առաջ՝ մե՞րը։ Ինձ համար վաղվա օրն այնքան էլ պարզ չէր։ Սպառնալի խոսքն իր սպառնալի ձայնի հետ, ինձ դրին այն մարդու վիճակում, որ նույնիսկ չգիտեր, թե կհասցնի՞ արդյոք կնոջն ու երեխաներին հրաժեշտ տալ։

Ես այդ հոդվածը գրել եմ 1946-ին, ուրեմն, պատերազմն ավարտվելուց հետո։ Ուրեմն, ինչո՞ւ վկայակոչել պատերազմական ահեղ տարիները, ուկրաինական այրվող գյուղերը,

դավակ կորցրած մայրերին, երբ այնուամենայնիվ, ժամանակի առումով թեկուզև կարճ, բայց արդեն պատմական տարբեր սահմաններ էին քաշված։

Երկրորդ՝

Ես կարծել եմ և հիմա էլ կարծում եմ, որ հազար անգամ ճիշտ էր, երբ 20-ական թվականների սկզբներին, երբ Հայաստանում սով էր, մարդիկ հաց չունեին ուտելու, նոր կարգերը հաստատելուց մի քանի ամիս անց որոշումներ էին կայացնում հրատարակչություն կազմակերպելու, երաժշտանոց, պետական թատրոն հիմնելու, պատկերասրահ բացելու, մեր միջնադարյան հուշարձանները պահպանող վարչություն հիմնադրելու վերաբերյալ։ Եվ ճիշտ էր և դարձյալ հազար անգամ իրավացի, որ պատերազմի տարին պաշարման ենթարկված, սովամահության մատնված Լենինգրադում նշում էին Պուշկինի ծննդյան օրը կամ բեմադրում «Կամելիազարդ տիկինը», այսինքն՝ թշվառությունից տառապող լենինգրադցիների հետ մարդկային զգացումներից էին խոսում։ Ուրեմն՝ ինչ զարմանալի բան կա, եթե մի քննադատ, լավ թե վատ, դա մի կողմ թողնենք, ոչ թե պատերազմից հետո, այլ թեկուզ հենց պատերազմի ժամանակ Օթելլոյի թաշկինակի տեսարանի մասին հոդված գրեր, խոսելու համար մարդկային զգացումներից և մարդասիրությունից...

Ընթերցողի դատին եմ հանձնում որոշել ճիշտն ու սխալը, բայց ամեն մարդ Ռոբեսպիեռ չէ, որը, իմանալով, թե չիմանալով, ես դա ստույգ չգիտեմ, որ վաղն իրեն գիլիոտին է սպասում, կոնվենտի ամբիոնին մոտենա իր արդարացիությունը պաշտպանելու։

Ինչպես 30-ական, նույնպես և 40-ական թվականներին ընդունված կարգ էր, որ մեղադրվողը չպետք է պաշտպաներ, չպետք է բացատրություններ տար, այլ անմռունչ ընդուներ իրեն վերագրված մեղքը և գլխավորը՝ ուղղվելու, ճիշտ ճանապարհի վրա կանգնելու առատ խոստումներ տար։

Ես մի անգամ չէ, որ մեղադրվել եմ և մի անգամ չէ, որ մոտեցել եմ ամբիոնին հերթական մեղայական ասելու։

Գալով ինձ, իմ մեղայականներին, ընթերցողը թող չպահանջի ինձնից հերոսություն, որ չունեցավ նույնիսկ Զարենցը 30-ական թվականների կեսերին։ Եթե նա կարող էր գրավոր

դիմում ներկայացնել, թե «ընդունում է իր կողմից թույլ տված քաղաքական սխալները և խոստանում է իր գործնական աշխատանքներում ուղղել այդ սխալները»... Ինչո՞ւ նույնը չէին կարող ամբիոնից հայտարարել շատ ավելի փոքր ծառայություններ ունեցող մարդիկ: Եթե ավագները չկարողացան, ուրեմն ինչո՞ւ կրասերներից պահանջել անկարելին:

Պատկերացրեք իմ և ընկերներիս վիճակը:

Թերթեցեք «Գրական թերթի» 1940-ի մարտ ամսի առաջին համարները. հենց թեկուզ № 9-ը: Տպագրված է խմբագրական հոդված՝ «Չախջախել էսթետացող ֆորմալիզմը»: Ուրիշների թվում քննադատված եմ նաև ես: Նույն համարում տպագրված է ընդարձակ հաղորդում մարտի 5-ի և 6-ի ժողովների մասին՝ «Խորհրդահայ դրամատուրգիայի և թատերական արվեստի հետագա աճման համար»: Զեկուցող Վ. Համազասպյան: Նա իր խոսքում քննադատել է մոսկովյան կոսմոպոլիտներին և նրանց հայկական ձայնափողներին: Ուրիշների հետ միասին խոսել է Սարգիս Մելիքսեթյանի և Ռուբեն Զարյանի «թույլ տված լուրջ սխալների մասին»: Ըստ էության արտահայտվողներից ինձ քննադատել են Ռոբերտ Խաչատրյանը, Հրաչյա Քոչարը, Հովհաննես Մամիկոնյանը: Այդ նույն համարում տպագրված է Վ. Համազասպյանի հոդվածը՝ «Խորհրդային դրամատուրգիայի և թատերական քննադատության խնդիրները» խորագրով հոդվածը, որը երևի կարդացված զեկուցման համառոտագրությունն է: Քննադատվածների մեջ եմ նաև ես: Ես հաշվել եմ՝ նույն համարում վեց անգամ խոսված է իմ մասին և ինչեր միայն չի ասված:

Բացի վերոհիշյալ քննադատներից, քննադատության տակ էին նաև Հայկ Գյուլիքևխյանը, Արշակ Ադամյանը, Գևորգ Գոյանը:

Երբեմն-երբեմն գրականության հարցերն էլ քննադատության նյութ են դարձել և այդ կապակցությամբ ծանր խոսքեր են ասվել Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության, Ստեփան Զորյանի «Խնձորի այգին» վիպակի մասին և վերջինիս առիթով անխնա քննադատվել է Խորեն Սարգսյանը: Դրանից առաջ, նախքան հակակոսմոպոլիտական կամպանիան, խստորեն քննադատվել էր Տիգրան Հախումյանը՝ Գևորգ

էմինին, Սիլվա Կապուտիկյանին և Մարո Մարգարյանին նվիրված իր երկու գեկուցման համար: Մինչդեռ Տիգրան Հախումյանը գովելի քայլ էր արել, իր պաշտպանության տակ առնելով երիտասարդ բանաստեղծներին անհարկի քննադատությունից, լուրջ հույսեր կապելով նրանց ապագայի հետ:

Վահրամ Թերզիբաշյանին չեմ հիշում ամբիոնից խոսելիս. երևի հիվանդ էր և այդ պատճառով ներկա չեղավ գրողների տան երկու օրվա աղմկալի ժողովներին: Որոշ ժամանակ անց «Գրական թերթում» լույս տեսավ նրա կարճ նամակը, որով անհրաժեշտ էր համարել արդարացի հայտարարել իր հասցեին եղած քննադատությունը և հավաստիացումներ տալ, որ առաջիկայում ճիշտ եզրակացություններ կկատարի և կուղղվի:

Հակահայրենասեր թատերագետների գործունեությունը դատապարտող ժողովներ են կայացել արվեստի գործերի վարչությունում: Այստեղի կուսակցական ժողովում ես և ուրիշները հիշվել ենք որպես թատերական քննադատների հակահայրենասիրական խմբի դիվերսիոն, թշնամական գործունեության ձայնափողեր և նրանց գովերգուներ:

Այդ կարգի ժողովներ տեղի են ունեցել նաև Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում, ինչպես և Գ. Սունդուկյանի անվան թատրոնում: Լենինականի դրամատիկական թատրոնում, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում: Հարցերի դրվածքը և քննադատության ոգին ամեն տեղ նույնն են եղել: Բոլոր այդ ժողովների «հերոսները» մոսկովյան քննադատներն էին ու նրանց երևանյան ձայնափողերը: Եզրակացությունն էլ ունեցել է նույն խստությունը. «Ժողովը կոչ արեց ուժեղացնել պայքարը բուրժուական էսթետիզմի ու ֆորմալիզմի դեմ»: Եվ, վերջապես՝ «Մեր երկրում կոսմոպոլիտիզմ քարոզող մարդիկ օտարերկրյա էքսպանսիայի իդեական դիվերսանտներ են»:

Պատկերացնո՞ւմ եք:

Ես այնպիսի հուսահատ տրամադրության մեջ էի, որ եթե այդ ահավոր օրերին ինձ հետ չլիներին, ինձ ուժ ու կորով չներշնչեին Սարգիս Բայանդուրը և Ժիրայր Հակոբյանը, իմ լավ, իմ բարի ընկերները, հայտնի չէ, մենակ մնալով, ի՞նչ փորձանք կբերեի գլխիս:

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

Կոսմոպոլիտիզմի դեմ մղված պայքարի օրերին քննադատվածները մի քանի ամիս, երբեմն ավելի երկար զրկված էին հրապարակային ամբիոնից, պարբերական մամուլում հոդված հրատարակելու հնարավորությունից։ Առաջին փորձը, այն էլ բավական վաղ, արի ես։

Հոդվածս կարճ էր, մեքենագրական երկու էջ։ Բնույթն էլ տեղատվական էր՝ «Նոր Համալրում»։ Սա փորձ էր պարզելու՝ կհանդիպե՞մ արդյոք դիմադրության։

Նպաստավոր դիրք բռնեց «Գրական Թերթի» խմբագիր, գրականագետ Վազգեն Մնացականյանը, որը սուր մտքի տեր մարդ է, խառնվածքով անկախ, համարձակ։ Ինձ համակրանքով վերաբերվողներից էր։ Նա չէր կարող իր թերթի էջերում տեղ չտալ իրեն սիրելի մարդկանց դեմ գրված քննադատականներին, որոնք մեծ մասամբ պաշտոնական նյութեր էին։ Ու հիմա ներկայացել էր առիթը սատար կանգնելու կոսմոպոլիտիզմի զոհերից մեկին։ Ազնիվ հանդգնություն։

Ինչի՞ մասին էի գրել։

1949-ի գարնան վերջին ավարտեցին Երևանի թատերագիտական ֆակուլտետի առաջին ուսանողները։

Դեռ 20-ական թվականներից համալսարանն ավարտել են լեզվաբաններ, գրականագետներ, 30-ական թվականների վերջերից կոնսերվատորիան են ավարտել երաժշտագետներ։ Պոլիտեխնիկական ինստիտուտն ուներ, մինչև հիմա էլ այդպես է, ճարտարապետների և շինարարների ֆակուլտետ, բայց ոչ տեսության և պատմության ճյուղ։ Ճարտարապետության ապագա պատմաբաններն անցնում են ճարտարապետության դասընթաց։

Ուրեմն՝ ունեինք լեզվաբաններ, գրականագետներ, երաժշտագետներ, ճարտարապետության պատմաբաններ։ Հիմա էլ ունեցանք թատերագետներ։ Հայկական մասնագիտական կրթություն ստացած առաջին թատերագետներն էին՝ Լևոն Հախվերդյան, Գրիգոր Ջարեյան, Համլետ Գալստյան, Սոնա Այունց, Հայկազ Երանոսյան, Լուիզիա Սամվելյան, Վարսիկ Գրիգորյան, Բաբկեն Հարությունյան, Էմմա Մանուկյան, Վարդուհի Խաչիկյան, Շահեն Քեշիշյան, Վշտունի Հակոբջան-

յան, Արծվի Հունանյան, Մարիկա Բերոյան, Սուրեն Առաքելյան, Վրույր Մանվելյան, Մարգո Ատոմյան, Ֆելյա Բաղրասյան, Է. Անտոնյան, Ալեքսանդր Մնացականյան և Վազգեն Ավագյան:

Գրեցի հայկական կրթության ատացած, որովհետև Մոսկվայի թատերական արվեստի ինստիտուտն ավարտած թատերագետներ ունեինք:

Թեև բնույթով հոդվածս հաղորդում էր, բայց նպատակս էր ողջունել նոր ուժերի՝ առաջիններին մուտքը գործունեության ասպարեզ:

Սրանց դասախոսել են պրոֆեսորներ և դոցենտներ՝ Գրիգոր Գափանցյան (դրաբար), Հայկ Գյուլիքեխյան (թատերական քննադատության սեմինար), Գարեգին Լևոնյան (հայ թատրոն՝ հին և միջին դարեր), Վահրամ Թերզիբաշյան (հայ թատրոն՝ 19-րդ դար), Սարգիս Մելիքսեթյան (խորհրդահայ թատրոն), Գևորգ Գոյան (ռուսաց թատրոն), Գևորգ Մաջարյան (արևմտաեվրոպական թատրոն) և ուրիշներ: Մոսկվայից մեկ-մեկ հրավիրվել են Ալեքսեյ Ջիվելեգով (վերածննդության դարաշրջանի թատրոն), Արշալույս Արշարունի (խորհրդային միության ժողովուրդների թատրոն):

Չեմ կարող ասել, որ բոլորը նվիրվեցին թատերագիտությանն: Մի քանիսը թատրոնի ասպարեզում վարչական գործի տեր եղան, ոմանք աշխատանքի անցան ռադիոյում և հեռուստատեսությունում, եղան դասախոսական աշխատանք նախընտրողներ, թարգմանությամբ կամ խմբագրա-հրատարակչական գործունեության տեր մարդիկ:

Իսկ նրանք, որ թատերագիտությամբ զբաղվեցին, գործեցին արդյունավետ: Ով որքան կարող էր: Շատ հոդվածներ գրեցին, գրքերի հեղինակներ դարձան, դիսերտացիաներ պաշտպանեցին, դարձան գիտության թեկնածուներ, դոկտորներ, զեկավար դիրք ունեցան: Եվ ամենակարևորը՝ մխրճվելով թատերական կյանքի բարդ ու հակասություններով լի ընթացքի մեջ, ապրեցին լիարժեք կյանք՝ հանուն թատրոնի: Ժամանակի ընթացքում դարձան հեղինակություններ, որոնց խոսքի կարիքն էին զգում բեմադրիչներն ու դերասանները:

Ես նրանց դաս չեմ տվել, բայց իրենց ավարտական տարին՝ 1948—1949, թատրոնի պատմության և տեսության ամ-

բիոնի նորընծա վարիչն էի, հետևապես անմիջական մասնակից նրանց ավարտական դիպլոմների պատրաստմանը՝ ի՞նչ նյութ ընտրեն, ո՞վ լինի ղեկավար, ո՞ւմ տրվի գրախոսելու և այլն։

Լինելով տարեց, ջանացել եմ օգտակար լինել, մեկին շատ, մյուսին քիչ։ Հետևել եմ շատերին առաջին քայլերից սկսած, աշխատել միշտ մեջքներին կանգնած մնալ։ Անկեղծ լինեմ և ասեմ, որ ես էլ իմ հերթին սովորել եմ նրանցից ու շատ հարցերում մինչև հիմա էլ ինձ պարտական եմ զգում։

1949 ԹՎԱԿԱՆ, ՍԵՎ ՏԱՐԻ

1949-ի հունիսի 14-ը։

Հայրենի ժողովրդի մռայլ օրերից է։ Մեր պատմության ողբերգական էջերից մեկը։

Այդ օրը, գիշերվա ուշ ժամին Երևանի, հանրապետության քաղաքների և գյուղերի շատ տներն են խուժել պաշտոնական առաքելություն ունեցող մարդիկ՝ մի կուսակցական ու երկու զինվոր, և խաղաղ քուն մտած բնակիչներին ոտքի հանել ու հայտնել, թե նրանց աքսորելու կարգադրություն ունեն։ Ժամանակ են տվել, որ պատրաստվեն, որովհետև ճանապարհվելու են հենց այդ գիշերը։ Կուսակցականների մեջ եղել են խղճով մարդիկ, բայց եղել են նաև անհոգի արարածներ, որ, ասես, ուրախ էին նման պարտականություն կատարելու։ Կարգադրված է, վերջ։ Ո՛չ մի շեղում, ո՛չ մի մարդկայնություն։ Տանում էին, նշանակություն չտալով տարիքին՝ մեծ է թե մի մատ երեխա, տկար թե առողջ... Ազատվելու օրերը հաշվող հղի կին է թե մերձիմահ հիվանդ։ Ում հոգսն է, թե երեխան որտեղ աշխարհ կգա, կամ հիվանդը մեռնելու է, ուրեմն կմեռնի, ինչ նշանակություն ունի տա՞նը թե ճանապարհին։

Հաջորդ առավոտ բոթը տարածվեց քաղաքով մեկ։ Տագնապալի զգացումը համակեց բոլորին։ Մարդիկ մռայլ էին, նման վերահաս վտանգից սարսափահար թռչունների։

Լուր տարածվեց, թե Վրաստանից, Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից ու Աբխազիայից նույնպես շատ մարդ է աք-

սորվել։ Ուրեմն՝ նորից չարդ։ Ու ենթադրություն արին մարդիկ, որ սա Բերիայի ու Բաղիրովի ձեռքի գործն է՝ Ստալինի հավանությունը։

Շատ տարիներ հետո ասվում էր, ոչ պաշտոնապես, իհարկե, որ 1949-ին միայն Հայաստանից աքսորվածների թիվը հարյուր հազարից ավելի է եղել։ Նույնքան, գուցեև ավելի են եղել Վրաստայից, Աբրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և Աբխազիայից աքսորվածները։ Ծրագրված է եղել կատարել երեք փուլով։ Հասցրել են անել միայն առաջինը։

Իմ ավագ ընկերը՝ Գևորգ Էլբակյանն, իր կնոջ հետ ապրում էր Թիֆլիսում, մեծ որդին՝ Գարիկը, Լենինականում ուսման մեջ էր, իսկ մյուսները՝ Նորան և Էդգարը, Երևանում էին։ Առաջինը համալսարանի բանասիրականի ուսանողուհի էր, երկրորդը թատերական ինստիտուտի դերասանականի ուսանող։ Էդգարը հանրակացարանի բնակիչ էր, Նորան ապրում էր մեր տանը։ Եթե երեխաները ծնողների հետ ապրելիս լինեին, աքսորվելու էին նրանք ևս։ Խեղճ երեխաները մնացել էին շվար ու մոլոր։ Աքսորում ինչպե՞ս էին ապրելու ծնողները։ Սա էր նրանց տանջող հարցը։ Հայրը հիվանդ մարդ էր, մայրը մասնագիտություն չուներ, գոնե իրենցից մեկնումեկը հետները լիներ։

Ալթայի երկրամասի գյուղերից մեկում էին բնակություն հաստատել։ Հայրը հայտնել է, որ ինքը կարող է հաշվապահական գործ անել։ Չեն վստահել և անգամ աքսորյալ վիճակում համարել են կասկածելի ու վտանգավոր։ Մայրը ոչխար է արածեցրել, ուրեմն, Թիֆլիսի Գայանյան դպրոցն ավարտած Արուս Տերյանը խաշնարած է դարձել, որ պահի իրեն ու ամուսնուն։

Վեց տարի ապրել են հեռավոր գյուղում, վարելով չարքաշ կյանք։ Ո՛չ գիրք, ո՛չ թերթ։ Ստալինի մահից մի տարի հետո վերադարձել են։ Մնացող չի եղել։ Մնացել են նրանք, որ չեն դիմացել և իրենց մահկանացուն կնքել են օտարության մեջ։

Էլբակյանները վերադարձան Երևան։ Իրենց զավակներն ամուսնացել էին, տուն-տեղ ունեին և զավակներ։ Իսկ այն հարցը, թե ո՞վ պետք է պատասխանը տա կատարված ոճրագործության համար, մնաց օդից կախված։

ԻՆՁ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ ԿԵՆՏԿՈՄ

Կոսմոպոլիտիզմի դեմ մղվող պայքարի հետևանքներից մեկը եղավ այն, որ հրավիրվեց թատերական ընկերության ընդհանուր հավաք, որտեղ հարց դրվեց Գուրգեն Ջանիբեկյանին վարչության նախագահի պաշտոնից ազատելու մասին։

Չմոռանամ ասել, որ Ջանիբեկյանին չփրկեց ո՛չ այդ ընկերության հիմնադիր-նախագահ լինելը, ո՛չ էլ այն մեղայականը, որ կար նրա հաշվետու զեկուցման մեջ՝ Յուզովսկու նման թատերագետի և ուրիշների (այդտեղ հիշված էինք նաև մենք՝ Երևանի ուժերս) առաջ թատերական ընկերության դռները լայն բացելու համար։ Ընտրվեց նոր նախագահություն, որն իր հերթին նախագահ ընտրեց Տիգրան Շամիրխանյանին։

Երևանի Թատերական ինստիտուտից ազատվեցին հայ թատրոնի պատմության դասախոսներ Վահրամ Թերզիբաշյանը (նախահեղափոխական հայ թատրոնը) և Սարգիս Մելիքսեթյանը (խորհրդահայ թատրոն)։

Բնականաբար պետք է հարց առաջանար, թե ումով կարելի է փոխարինել։ Թերզիբաշյանը և Մելիքսեթյանն իրենց գործում հմուտ էին և ճանաչված հեղինակություններ։ Ամբիոնի վարիչը ես էի, ես էլ պետք է մտահոգվեի այդ հարցով, անկախ նրանից, որ դեռ ուշքի չէի եկել պատահած դեպքերից։ Բայց ժամանակ չկար սպասելու, ուր որ է կգար սեպտեմբերի մեկը, և հայ թատրոնի պատմության դասախոսը լսարան էր մտնելու։

Ես առաջարկեցի Գառնիկ Ստեփանյանի թեկնածությունը։ Վավիկ Վարդանյանը ոգևորությամբ ընդունեց առաջարկս։ Զանգահարեց Կենտկոմ Հովհաննես Մամիկոնյանին, նա էլ հավանություն տվեց։ Համաձայնեց նաև Գառնիկ Ստեփանյանը, որը, սակայն որպես դասախոս աշխատեց մի օր, այո, ընդամենը մի օր, մտավ լսարան և նրան թվաց, ուսանողներն իրեն անհրաժեշտ ուշադրությամբ չեն լսում, ինքը զգայուն մարդ, իրեն խոցված զգաց, զանգի հետ լսարանից դուրս եկավ, հայտարարեց, թե ինքը մտադիր չէ դասախոսություն կարդալ ապիկար ուսանողներին, իսկ եթե ինքը

սխալվում է, ուսանողներն ապիկար չեն, ուրեմն մանկավարժությունն իր ասպարեզը չէ։

Այն հեռանալն էր, որ հեռացավ։

Հեռախոսային զանգ։ Զանգահարողը Հովհաննես Մամիկոնյանի քարտուղարուհին է, որը հայտնում է, թե այսօր ժամը չորսին պետք է ներկայանամ կենտկոմ։

Ինչի՞ համար։ Մի՞թե չվերջացավ այդ պատմությունը։

Դուռը բացում եմ։ Հովհաննես Մամիկոնյանն առաջարկում է նստել և բազմանշանակալի հայացքով նայում է ինձ, կարծես ուզում է հասկանալ, թե ես այդ պահին ինչ եմ մտածում։

Մեծ դադարից հետո՝

— Ընկեր Զարյան, ծանր է վիճակը։

Չեմ հասկանում, թե ինչ վիճակի մասին է խոսքը։ Թեև դիմացս նստածը իմ դրչակից ընկերն է, բայց պաշտոնյա է, ու ես այնպիսի լարվածություն եմ ապրում, որ միտքս չի հոժարում կենտրոնանալ։

— Ըստ երևույթին այդ ծանրությունը դուք պետք է ձեզ վրա վերցնեք։

— Ի՞նչ ծանրություն։

— Մի շտապեք, հիմա կիմանաք։

Նորից դադար։

— Ինստիտուտի ղեկավարությունն էլ է այդպես կարծում, կենտկոմի մեր բաժնի ընկերները ևս։

Ժպտում է Մամիկոնյանը։ Նրբանկատությունը պահանջում է, որ ես էլ ժպտամ, բայց ժպիտս չի գալիս, որովհետև առայժմ չգիտեմ, թե ինչի մասին է խոսքը։ Բայց Մամիկոնյանը չգիտե, որ ես չգիտեմ, զարմանում է, թե այդ ինչպես է, որ չեմ ժպտում։

Տիրող լռությունը ծանրանում է։

— Հա՛, իսկապես,— ասում է Մամիկոնյանը,— չասացի, թե ինչի մասին է խոսքը։ Դուք պետք է հանձն առնեք հայ թատրոնի պատմության դասընթացը։

Ես բան եմ ուզում ասել, բայց նա չի թողնում, որ բերանս բանամ։

— Մենք այնքան ուժեր չունենք, որ մեկը նախահեղափո-

խական շրջանի մասին դասախոսի, մյուսը՝ հետհեղափոխական։

Ես դարձյալ փորձ եմ անում խոսք ասելու, բայց նա չընկատելուն է տալիս և շարունակում.

— Այնպես որ՝ դուք պետք է ամբողջը կարդաք, սկզբից վերջ։ Պա՞րզ է։

Ես հասկացա, որ չեմ կարող մոքեր փոխանակել այն մասին, թե պատրա՞ստ եմ, թե ոչ։ Անմիջապես կասեն՝ սովորեք և սովորեցրեք։

Եվ այնուամենայնիվ, մի բան չեմ կարող չասել և ասում եմ.

— Ես շատ զարմացած եմ. երեք ամիս առաջ մեղադրվել եմ հայ թատրոնի պատմությունը սխալ լուսաբանելու համար։

Մամիկոնյանը նորից ժպտում է, որ երևի նշանակում է, թե ինքը կռահում էր, որ այդպիսի հարց կտրվի իրեն։

— Այս հանձնարարությունը դուք պետք է ընդունեք որպես կուսակցության վստահություն ձեր նկատմամբ։

Ես հասկացա, որ վերջակետը դրվեց։ Ուրեմն՝ պետք էր գնալ։ Դուրս եկա և քայլերս ուղղեցի հանրային գրադարան, նայելու քարտարանը, որ իմանամ, թե ինչ գրքերից կարող եմ օգտվել դասընթացին պատրաստվելու համար։

1949-ին աշնանից՝ ոչ սեպտեմբերի, այլ հոկտեմբերի կեսերից առ այսօր, ես լսարան եմ մտնում ու ապագա դերասաններին պատմում հայոց թատրոնի պատմության երևելի մարդկանց մասին։

ՍԱՐՅԱՆՆ ԷԼ ՉԽՆԱՅՎԵՑ

Հայաստանի նկարիչների միության այն համագումարը, որ տեղի ունեցավ 1987-ին, մոքերի փոխանակության առաջին արտահայտվողը Հովհաննես Զարդարյանը եղավ։ Նրա ելույթը լույս սփռեց ինձ հետաքրքրող մի պատմության վրա։

Նկարիչը խոսեց այն մասին, որ երկար տարիներ հայկական նկարչությունը համարվել է Հայաստանի նկարիչների արվեստը, իսկ ինչ ստեղծվել է արտասահմանում, չի ճա-

նաչվել, չի համարվել մերը, պոչ ու ականջ են կպցրել, խորթ ու օտար հայտարարել։

Օրինակ Արշիլ Գորկին՝ Ոստանիկ Ադոյանը, որ համաշխարհային անուն է։ Մեր մարդիկ չգիտեն նրան։ Ես քանի տարի է ուզում եմ նրա ալբոմը հրատարակել, մի լավ առաջաբանով, որ լայն հասարակայնությունն իմանա, թե ինչ մեծ նկարիչ ենք ունեցել, գործը գլուխ չի գալիս։

Ինչո՞ւ պետք է այդպես լինի։

Խոսում եմ հիմա և հիշում լենինգրադյան ուսանողական տարիներս 1936-ին։ Ուսանողներս գիտեինք, որ Պ. Ֆիլոնով անունով հրաշալի նկարիչ կա, որ սովամահ է լինում։ Ուսանողներս փորձ արինք օգնության հասնել՝ վտանգի տակ դնելով մեզ։ Ֆիլոնովի հետ կապ ու ծանոթություն պահպանողը հեռացվում էր ինստիտուտից։ Մենք գիտեինք Դոստոևսկուն և շատ ուրիշ ռուս գրողների, բայց գաղափար չունեինք Պլատոնովի մասին։ Իսկ հիմա լրագրերը Ֆիլոնովին ու Պլատոնովին դասական են հայտարարում։

Ինչի՞ նման է։

Ամեն անգամ, երբ գաղափարական վիճակի շուրջ որոշում էր լույս տեսնում, հարցն ինչին էլ վերաբերելիս լիներ, մեղադրվում էին ինչ-որ մարդիկ, քննադատության ենթարկում։ Այդ նույն հարցերը քննության էին առնվում հանրապետությունում ու այստեղ ևս քարկոծվում էին մարդիկ, դատապարտվում։ Այժմյան երիտասարդները չգիտեն այդ բոլորը, պատկերացում չունեն, թե անցյալում, հատկապես 40-ական թվականների երկրորդ կեսին ինչ ծանր օրեր են ապրել ստեղծագործական ուժերը։ Այդպես էր նաև կոսմոպոլիտների դեմ մղված պայքարի օրերին։ Մարտիրոս Սարյանը, որ սովոր չէր քննադատվելու, միշտ շոյվել էր, հանկարծ, կոսմոպոլիտիզմի օրերին, նկարիչների տանը քննադատվեց ուրիշ արվեստագետների հետ միասին՝ ֆորմալիզմ, դեկորատիվիզմ, օտարասիրություն և այլն ու այլ իզմեր։ Նրա հետ և ուրիշները։

Հետո տարիներ անցան, և բոլոր այդ մեղադրվածներն արժանացան բարձրագույն տիտղոսների, պետական մրցանակների։ Ուրեմն՝ Կենտկոմի որոշումը ճիշտ չէր։ Եթե

այդպես է, ինչո՞ւ մինչև օրս պաշտոնապես չի հերքվել այդ որոշումը։

Ուզում եմ ասած լինել, որ նկարիչները, արվեստի ու գրականության մարդիկ ընդհանրապես, տասնամյակներ շարունակ հոգեկան խաղաղ կյանքից զրկված են եղել։

Մեղադրանք, հա մեղադրանք։

Հովհաննես Զարդարյանի այս ելույթը նկարիչ-պատգամավորների սրտովն էր։ Եվ այդ պատճառով հաճախ ծափահարում էին։

Մի մտերմիկ զրույցի ժամանակ Բյուրականում, երբ հյուր էի Զարդարյանին, նկարիչը հիշեց, թե մեղադրանքներն ինչպես ծանր էին ազդել Սարյանի վրա և արեց այն պատմությունը, որ ակնարկված էր նաև Սարյանի հուշերում, վերագրելով եղածն իր երկրպագու երիտասարդ նկարիչների, առանց սակայն անուններ տալու։

— Մարուսիկը մի օր դարձավ ինձ ու ասաց, թե եկել էր Յոլակ Դավթյանը, պարտիզպան, ու ասել, թե Սարյանը խնդրել է Հովհաննեսին գնալ իր մոտ։

Գնացի։ Բարձրացա արվեստանոց։

— Եկա՞ր։ Լավ արիր։ Նստիր։

Տեսնեմ նկարակալի վրա առաջվա կտավի վրա նոր նկար է սկսել։

— Ի՞նչ եք նկարում։

— Ալեքսանդր Հարությունյանին։

— Ի՞նչ է, կտավ չունեք, որ հնի վրա նորն եք նկարում։

— Դե ինչ անեմ, ո՞ւմ են պետք, ասում են ֆորմալիստական են։ Ես էլ բռնեցի կտրտեցի։

Կտրած նկարի մի կտորը նկարակալի վրա է, որի վրա դեռ ածուխով քաշված է կոմպոզիտորի գլխի ուրվագիծը, իսկ մյուս երեք կտորն ընկած էին գետնին։ Բարձրացրի ու ինչ տեսնեմ՝ «Եգիպտական դիմանկարները», իր գլուխգործոցներից մեկը։

Ու ես այնպես հուզվեցի, որ մոռացա, որ առջևս Մարտիրոս Սարյանն է, իմ վարպետը, որի խոնարհ երկրպագուն եմ, որի հետ քաշվելով եմ խոսում, բռնկվեցի.

— Ի՞նչ իրավունք ունեիք այսպես վարվելու։

Սարյանն ուզում է բան ասել, չեմ թողնում.

— Ձեր նկարները միայն ձեզ չեն պատկանում; դրանք նաև հասարակությանն են:

— Մեղադրում են ֆորմալիզմի մեջ:

— Բայց հասարակությունը ձեր կողմն է:

Կամաց-կամաց խաղաղվեցի, ինքն էլ հասկացավ, որ ճիշտ չէ արածը, շփոթված ժպիտով դարձավ՝

— Ի՞նչ աննենք:

— Վերականգնենք:

— Ինչպե՞ս:

— Թողեք ինձ:

— Ճիշտ ես, ճիշտ, Հովհաննես ջան: Էլի դու, Հովհանն՛ես:

— Ես վաղը կգամ ու կանեմ ինչ որ պետք է:

Գնացի տուն: Մարուսիկը՝

— Կանչե՞լ էր:

— Հա՛:

— Մի՞թե:

— Իսկ ի՞նչ է որ:

— Հիշ, այսօր ապրիլի մեկն է: Ուզում էինք, որ տանը չմնաս, տուն-տեղ հավաքենք: Ո՛չ Սարյանն էր կանչել, ո՛չ էլ Յուրակ Դավթյանն էր եկել:

Ես էլ արի Սարյանի նկարի պատմությունը:

Երկրորդ օրը գնացի, հետս տարա ամվարաթուղթ, ինքը խնամքով սրբեց ածխանկարը և միասին վերականգնեցինք: Որքան էլ ամեն ինչ լավ եղավ, նկարն իր վրա կրում է անդամահատության հետքերը: Որ գնաս պատկերասրահ, հետքերը կտեսնես:

Սարյանը դարձավ ինձ:

— Հովհաննես ջան, քեզ ինչ նվեր տամ:

— Ոչ մի բան:

Ես բավարարված էի այն բանով, որ կարողացել էի փրկել մեր արվեստի նշանակալի կտավներից մեկը: Նվերը կարող էր փոքրացնել արածս:

Մեկ էլ աչքն ընկավ բանաննների նատյուրմորտներին:

— Սա քոնն է:

— Ոչ մի դեպքում:

Նա իրենը պնդեց, ես իմը:

— Մարտիրոս Սերգեևիչ, թող մնա այդ նկարը, թող անցնի ժամանակ, ու եթե դուք էլի ցանկություն կունենաք տալու, այն ժամանակ կվերցնեմ:

Գնացի տուն: Հայացքիս դիմաց բանաննների նատյուրմորտն էր: Մեր տան ատաղձանների վրա հանդիպեցի խաչիկ Եսայանին, արի բանաննների պատմությունը:

— Հիմարություն ես արել, որ չես վերցրել:

Անցավ երկար ժամանակ:

Մի օր եկավ Ռուբեն Դրամբյանը մեր տուն և միասին ճանապարհվեցինք Սարյաններից: Նա աշխատություն էր պատրաստում Սարյանի մասին և նկարչի հետ համաձայնեցնելու էր, թե գրքում ինչ նկարների վերարտադրություններ են լինելու: Այդ օրը Մարուսիկի ծննդյան օրն էր: Նա էլ միացավ մեզ, չուզեց տանը մնալ:

Սարյանը տեսավ Մարուսիկին, կանչեց մի կողմ և դրեց առաջը մի քսան-երեսուն փոքրաչափ նկար:

— Ընտրիր:

Հետո դարձավ ինձ ու Դրամբյանին՝

— Դուք գործ չունեք:

Մարուսիկն ընտրեց «Ուղտերը» էտյուդը:

— Սա հիշողություն է, թող մնա ինձ:

Մարուսիկն էլ՝

— Բաշխեցի:

Նայեց, նայեց, կանգ առաջ «Երկու խնձորենի» նկարի վրա: Փոքր նկար, 1912 թվականի:

— Արյան կանչը խոսեց քո մեջ, Մարիամ,— բացականչեց Սարյանը.

— Սա Սամբեկն է: Այդ այգին Ղուկաս պապդ գնեց մեռոնցից:

Բերինք նկարը տուն: Ես ամբողջ գիշերը մաքրեցի նկարը, շրջանակեցի ու կախեցի պատից: Հաջորդ օրը Ռուբեն Գրիգորևիչը եկավ հատկապես նկարը տեսնելու: Նայեց ու ասաց.

— Սքանչելի նկար է:

Եթե պատահականություն չլիներ, ես ու տիկինս չէինք լինի այն համերգին, որ Երևանի երաժշտական հասարակայնությանն ազդարարելու էր երաժշտական նոր աստղի՝ Գոհար Գասպարյանի ծնունդը Երևանում։

1940-ի գարնան էր՝ 23 մայիսի։

Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում, մենք, ըստ 30-ական թվականների սովորության ժամանակների Կուլտուրայի տուն էինք կոչում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան կվարտետի համերգն էր, որի երկրորդ բաժնում ելույթ ունեցավ Գոհար Գասպարյանը։

Երկու երգ երգեց՝ նախ «Սոխակը» Ալյաբևի, հետո՝ «Ալելույան» Մոցարտի։ Տպավորությունը մեծ էր։ Կոլորատուրային սոպրանո։ Գեղեցիկ ու լավ մշակված ձայն։ Լսում ես ու զարմացնում է այն հեշտությունը, որով ամենադժվարին անցումներն է կատարում։

Բուռն ծափահարություն։ Երգչուհին երջանիկ ժպիտը դեմքին նայում է իրենով ոգևորված հասարակությանը և խոնարհ գլուխ տալիս։

Այդ գիշեր ոչ ոք չգիտեր, թե կարճ ժամանակից ինչ սև օրեր են գալու մեր ժողովրդի գլխին։

Մի ամիս էր անցել, թերևս, մի փոքր ավելի, չնայած բոլորիս հուսահատ տրամադրությանը, հայտնվեցինք Գոհար Գասպարյանի նոր համերգին, այս անգամ Ֆիլհարմոնիայի ամառային դահլիճում՝ սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ դիրիժոր Սուրեն Ջարեքյանի գլխավորությամբ։ Այդպես է՝ կյանքն ու մահը իրար կողքի են, ինչպես բարին ու չարը և ըստ երևույթին մեծ իմաստ ունի մարդու այն քայլը, երբ դժբախտությանն առաջն առնում է՝ ապավինելով բարուն ու գեղեցիկին։ Չէ որ դեռ Դոստոևսկին է ասել՝ գեղեցկությունն աշխարհը կփրկի։ Եվ ես մտածում եմ՝ երբ մարդ նոր արժեք է գտնում ու խեղդելով վիշտն ու կսկիծը, հոգեկան ողջ եռանդով հանձնվում է նոր արժեքի հաստատմանը, հաստատում է նաև իրեն, ուրիշներին, մարդկանց ապրելու իրավունքը, լավ ապագայի տենչը և նրան ապավինելու կամքն ու անսասանությունը։

Առաջին համերգից հետո նոր երգչուհու և նրա հաջողության լուրը տարածվել էր քաղաքում և այս անգամ դահլիճը լեփ-լեցուն էր, չեմ հիշում, թե մեկ էլ.երբ է այդպես եղել: Շատ աթոռների երկուսով էին նստած: Շատ մարդ էր ոտքի վրա կանգնած մնացել:

Ես հիմա լավ չեմ հիշում, թե ինչ կատարվեց այդ երեկո, բայց տպավորվեցի Ռոզինայի դերերգից «Սևիլյան սափրիչ» օպերայից, Ալյաբևի «Սոխակից», Մոցարտի «Ալելույայից»:

Տպավորությունն այս անգամ շատ ավելի մեծ էր. նույնիսկ դժվար է նկարագրել, թե ինչպիսի խանդավառություն էր համակել մարդկանց:

Ձորս կողմից լսում էի՝

— Անցումների թեթևություն:

— Երանգների ճոխություն:

— Անբասիր տեխնիկա:

— Սոխակ, ոչ թե երգչուհի:

— Ձայնային լայն դիապազոն:

— Ինչ համայք:

Երաժշտագետների մի խումբ էր հավաքված անկյունում: Մոտեցա և լսողությունս սրեցի՝ «Փոքր օկտավայի սոլ հնչյունից վերցնում է մինչև երրորդ օկտավայի լյան: Պատկերացնո՞ւմ եք»:

Երբ համերգն ավարտվեց, մարդիկ ոտքի ելան՝ ծափահարելու: Երիտասարդները հիացած դեմքերով շրջապատեցին բեմառաջքը: Ծաղիկներ էին թռչում բեմ, օդային համբույրներ հղում: Խանդավառ կոչեր էին լսվում: Ու մարդիկ չէին ցրվի, եթե համերգասրահի լույսերը չհանգչեին: Եղան տուն գնացողներ, բայց մեծ մասը մնաց, մնաց մինչև երեւաց օրվա հերոսուհին: Ծափե՞ր, կանչե՞ր: Ձևակերպումներ չեմ գրտնում: Կարծում եմ ճիշտ կլինի, եթե ասեմ, որ դա համերգ լինելուց ավելի ազգային-գեղարվեստական հանդես էր:

Հաջորդ օրը՝ ուր գնայիր, կլսեիր Գոհարի անունը: Հիմնարկ լիներ թե փողոց, ընտանեկան հարկի տակ լիներ, թե հասարակական վայր՝ ամենքը խոսում էին Գոհար Գասպարյանից ու այդ կապակցությամբ լսում էլիզ Ֆելդման, Վիչչենցո Կորրո անունները, իտալացիներ, որոնք Կահիրեում

նշանակալի դեր էին խաղացել երիտասարդ երգչուհու կյանքում: Զայնի դրվածքի հմուտ մասնագետ լինելով, Ֆելդմանը սովորեցրել է երգել ճիշտ շնչառությամբ, ամրապնդել է տեխնիկան, մղել դեպի անջանք անցումներ ամենադժվարին պահերին, խորացրել ռիթմի զգացողությունը: Կորրոյի ձեռքի տակ պատրաստել է օպերային դերերգեր:

Եվ այլ ու այլ մանրամասնություններ:

Մի խոսքով Գոհար Գասպարյանը դարձել էր օրվա մարդը: Ով լսել էր՝ առավել էր համարում իրեն՝ Գոհարին, դեռ չունկնդրածից: Մարդկանց մտքերը նրանով էին զբաղված: Հետաքրքրվում էին ընտանեկան մանրամասնություններով՝ ի՞նչ մարդիկ են ծնողները, ո՞վ է ամուսինը, երեխա ունի՞ թե ոչ, մի խոսքով հազար ու մի հարց:

Ես չգիտեմ, թե Կահիրեի լրագրերում ինչ է գրվել Գոհարի մասին մինչև հայրենիք տեղափոխվելը, բայց այստեղ նրա բարձր շնորհքի առաջին գնահատողները եղան Սուսան Ափոյանը և Սամսոն Գասպարյանը:

Այստեղ ես կարող էի պատմությունս ավարտված համարել, մանավանդ իմ նպատակն ավելի չէր, քան արձանագրել նոր երգչուհու հաղթական մուտքը երաժշտական կատարողական ասպարեզ:

Բայց երկու խոսք ևս...

1950-ին Գոհարը մեկնել էր Սոչի: Այնտեղ է եղել նաև հայտնի երգչուհի վ. Բարսովան: Սոչիում է եղել նաև Գոհար Գասպարյանի խանդավառ երկրպագուներից Սեդա Խանոյանը, դասախոս՝ Երևանի համալսարանում: Իմանալով, թե ինչ դեր կարող է խաղալ ռուս երգչուհին Գոհարի կյանքում, գնում է և խնդրում ժամանակ գտնել լսելու հայ երիտասարդ երգչուհուն: Թեկուզ մի երգ: Բարսովան, որ մարդկանց հայտնի էր իր բարյացակամությամբ, մերժում է, բայց երկրպագուհին շատ համառ է գտնվել, ու նա ստիպված զիջել է: Մի երկու երգ լսելուց հետո Բարսովան հիացել է ու կազմակերպել Գոհար Գասպարյանի համերգը: Մի տարի անց, գարնանը, Մոսկվայի Մեծ թատրոնը նշելու էր իր գոյության 175-ամյակը: Երեկոյին մասնակցելու էին շատ երգիչներ տարբեր հանրապետություններից: Հայաստանի ներկայացուցիչը Գոհար Գասպարյանն էր: Երգել է Ալյաբևի «Սոխակը»: Մեծ

հաջողություն: Բարսովան Մոսկվայում կազմակերպել է Գոհարի համերգը արվեստի աշխատողների կենտրոնական տանը և ինքն էլ ներածական խոսքով ներկայացրել նոր երգչուհուն:

Փառքի հիմքը դրված էր: Հրավիրվում է հանրապետություններից: Առաջին հրավիրողը եղավ Վրաստանը: Այնուհետև՝ Ուկրաինան՝ Կիև, Օդեսա, Լվով: Հետո՝ Լենինգրադ, Ռիգա, Տալլին և այլ քաղաքներ: Գոհարը հրավերներ է ստանում արտասահմանից: Սկզբում Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, հետո՝ Ֆինլանդիա: Վերջապես՝ Ճապոնիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Անգլիա, Կանադա:

Ուր ասես, որ չի եղել:

Կամենալով ավարտել այս հուշը, ուզում եմ արձանագրել մի հազվագյուտ իրողություն, որի բախտին չեն արժանացել հայ արվեստի նույնիսկ այնպիսի մեծություններ, ինչպես Մարտիրոս Սարյանը, Վահրամ Փափազյանը և սրանց հետ նաև Հրաչյա Ներսիսյանը:

Ես մեծ նշանակություն չեմ տալիս տիտղոսներին, բայց եթե դրանց շնորհումը մի բան նշանակում է, ապա այն կարճ ժամանակը, որում արժանացավ Գոհար Գասպարյանը իրեն բաժին հասնող երեք բարձագույն տիտղոսներին, ոչ մի այլ արվեստագետի չի վիճակվել: Ուրիշները դրան հասել են իրենց ամբողջ կյանքի ընթացքում, Գոհար Գասպարյանը ընդամենը յոթ տարում: Մի տարվա երգչուհի էր և արդեն վաստակավոր էր, հինգ տարվա էր՝ ժողովրդական: Յոթ տարվա երգչուհուն շնորհվեց Խորհրդային Միության ժողովրդական արտիստուհու կոչումը:

Չտեսնված, չլսված բան:

1948-ին հայրենիք առաջին անգամ եղած հայրենադարձներ, հենց որ ոտք են դրել Հայաստանի սահմանը, չոքել են, համբուրել հայրենի հողը... Գոհար Գասպարյանը այդ արել է թե ոչ, չգիտեմ, բայց արժանավոր մարդիկ եկան Սփյուռքից ու նվիրվեցին հայրենիքին: Սրանց մեջ էր Գոհար Գասպարյանը, և Հայաստանի ճակատին նրա պսակած հաղթական դափնեճյուղը երևաց աշխարհի չորս կողմերից:

ԴԻԼԻՋԱՆ

Իմ կյանքի տասը տարին՝ 1941—1950 կապված է Դիլիջանի հետ։ Իմ հիվանդ տարիներն էին դրանք։ Ես մինչև 1941-ը երկու թե երեք անգամ եղել էի Դիլիջանում։ 1950-ից հետո հաճախ եմ եղել։ Եղել եմ որպես ամառանոցավոր կամ ինչպես բառարաններում է ասված՝ հովեկ։ 1941-ից մինչև 1950 թվականները եղել եմ յուրաքանչյուր տարի երկու ամսով, ամառները հատկապես։ Իսկ երկու անգամ՝ 1941-ին ու 1947-ին, երբ սրված էր իմ հիվանդությունը՝ կյանքս մազի վրա էր, ավելի երկար ժամանակով։ 1941-ին կես տարով, 1947-ին ութ ամսով։

Գեղեցիկ է Դիլիջանը։ Փոսի մեջ ընկած քաղաք, շուրջը անտառապատ սարեր։ Ու երբ երկար ես ապրում՝ գարուն, ամառ և աշուն, նկատում ես, թե ինչպես է նույն ծառի կանաչը գունափոխ լինում։ Եվ մի գույնը գերադասելի է մյուսից, էլ չեմ ասում այն մասին, թե ինչպես է մարդու աչքը շոյվում։

Սիրուն է Դիլիջանի համայնապատկերը։

Մտաբերում եմ մի քանի դիլիջանցիների, որ մնացել են հիշողությանս մեջ։ Հիշենք երեք մարդու, որոնցից հիմա, երբ գրում եմ, միայն մեկն է ողջ։

Միհրան Սարգսյան. վանեցի, 1915-ին գաղթել է Հայաստան և հաստատվել Դիլիջանում։ Ուսուցիչ էր։ Դպրոցներում այն ժամանակ կար առարկա «Ոսկյա ձեռքեր» անունով, որի ուսուցիչն էր։ Դասավանդել է փայտարվեստ։ Գիշերները չի քնել և ութ տետր գրել է վասպուրականի պատմություն, ավելի շուտ պատմել է Վանի ինքնապաշտպանությունը։ Տիպիկ վանեցի էր։ Վրայի շորը հին էր, բայց միշտ արդուկած, վերնաշապիկը՝ օսլայած։ Աչքերը կապույտ-կապույտ էին։ Վիզը միշտ թեք էր պահում։ Խեղճ էր թվում, աշխարհի ազնվագույն մարդկանցից էր։

Դիլիջանն ուներ մի դերասան՝ Սիմոն Յադորիչ, որին Միհրանը համարում էր քաղաքի ազնիվ մարդկանցից։ Բայց մի դեպքից հետո կարծիքը փոխեց և ամեն տեղ հայտարարում էր, թե Սիմոն Յադորիչն անազնիվ մարդ է։ Հիասթափվել է չնչին դեպքից։ Հացի հերթ է լինում։ Միհրանը գալիս և

հերթ է կանգնում։ Մի չորս-հինգ մարդ էլ են գալիս և շարվում իրենից հետո։ Գալիս է Սիմոն Յագորիչը և նույնպես հերթի կանգնում։ Քաղաքի դերասանի պատիվը պահելով, հերթում առաջին կանգնածներից մեկը հաց է գնում և տալիս Սիմոն Յագորիչին, սա էլ վերցնում է, չի ասում, թե իր հերթը չէ։ Այդ օրվանից Մհրանը հիասթափվել էր Սիմոնից և որտեղ պատահեր, ասում էր՝ անազնիվ մարդ է, «եթե արդար է,— ասում էր,— ինչու համաձայնեց հերթը խախտել»։

Սիմոն Յագորիչը թատրոնի նվիրյալ էր։ Դիլիջանցիք հիշում են, թե ինչպես 1920-ի ձմռան օրերին շալակում էր դերասանուհի Հասմիկին ու տանում սարերը և հեռավոր գյուղերում միասին ներկայացումներ տալիս։

Ժողովրդական թատրոնը քիչ ունեցավ իրեն նվիրված այդպիսի դերասաններ։

Նրա աչքում թատրոնից ավելի թանկ ոչինչ չկար աշխարհի երեսին։

Բարձրահասակ չէր, շեռված քիթ ուներ։ Դեմքը թուխ էր, կնճռապատ։ Աղքատ ծնվեց, աղքատ ապրեց, աղքատ էլ մահացավ։ Նրա բախտը բերել էր, որ կինը հասկանում էր իրեն, պահանջներ չէր ներկայացնում և ամուսնու հետ քաշում էր ղրկանքի լուծը։

Ժորիկ Շահնազարյան։ Փոքր հասակում վախեցրել են, և այդ օրվանից փոխվել է նրա կյանքը։

Վիրավորվում է, երբ ուզում են իրեն նյութապես օգնել։

Դիլիջանի գլխավոր փողոցի մի անկյունում միշտ կարելի է տեսնել նրան։ Ժպիտը դեմքից անպակաս է։

Դիլիջանում կարդացած իմ դասախոսությունների մշտական ունկնդիրն է եղել։ Կնստեր անկյունում, վիզը ծուռ ու կլսեր։

Ամեն ինչի վրա զարմանում է։ Ամենքով հիացող է, չի հավատում, թե աշխարհիս երեսին չար մարդիկ կան։ Միայն բարին ու լավը տեսնող է։

Շատ խելոք աչքեր ունի։

Թեև բոլորը նրան հոգեպես խախտված են համարում, բայց քիչ է պատահել, որ մի մարդ այդքան խելք ունենա, ինչպես նա։ Ինչ հարցնես՝ գիտի։ Անգիր գիտի Սայաթ-Նովան։

Եթե մի բան ուզում են Դիլիջանի պատմությունից ճշտել, հարցրու Ժորիկին:

Նա Դիլիջան քաղաքի անբաժանելի մասն է: Անես ծառ լինի, որ աչքդ սովոր է միշտ տեսնելու: Ու եթե մի օր գնանք և չտեսնենք Ժորիկ Շահնազարյանին Դիլիջանի գլխավոր փողոցում՝ իր մշտական տեղում, շատ պետք է զարմանանք:

Երբ Դիլիջան գնացի, երեքն էլ կային, երեքի հետ էլ սրտատագին բարեկամություն ունեի: 32 տարեկան էի, որ հիվանդացա և բնակություն հաստատեցի Դիլիջանի առողջարանում, երկրորդ անգամ՝ 38:

Ես տարիքով էի, իսկ հիվանդների մեծ մասը՝ երիտասարդ: Ես գիտությունների թեկնածու էի, որոնց թիվն այն ժամանակ շատ չէր և մարդկանց աչքին դա մեծ բան էր նշանակում: Մի խոսքով՝ շատ հիվանդների համար հեղինակություն էի: Շրջապատում էին ինձ, հարցուփորձ անում: Ես զրուցում էի, նրանք լսում էին: Այդ զրույցները տևում էին երկու, երբեմն երեք ժամ ու երբեմն ինչ-որ մարդիկ թողնում գնում էին, նորերն էին գալիս:

Ես ընկերներ ունեցա: Ընկերնե՞ր: Գուցե ավելի շուտ բախտակիցներ: Սրտոն ու Լիլիկը, Աշոտը: Նրանք հիմա չկան: Ջերմ սիրով եմ հիշում նրանց, ինչու պետք է ջահել-ջահել գնային այս աշխարհից ու իրենց հետ տանեին ժպիտ, խելք, սրախոսություն, ընկերական նվիրվածություն, աչքերի թախծոտ նայվածք: Հիդրավլիկ էր Սրտոն, խելոք, կարդացած, բանիմաց, արվեստի սիրահար: Խելոք աչքեր ուներ և առնական դեմք: Լիլիկն աննման անձնավորություն էր: Մարդկանց սիրահարված վեհ հոգին: Իր կյանքը նվիրեց ուրիշներին: Եթե սիրեց՝ դառնում էր անձնազոհ: Այս երկուսին չեմ մոռանա երբեք: Ասլված մյուս ընկերներիս պահեց, Կարմենը, Ջեմման, Վանիկը: Այսպես դրեցի, բայց մինչև տպագրության օրը կհասներ, վանիկն ու Ջեմման նույնպես հրաժեշտ տվին այս աշխարհին: Մնաց Կարմենն իր սիրելի ամուսնու, զաւակ ու թոռան հետ: Երկար կյանք նրանց:

Վանիկ Շարամբեյան: Սրան էլ բերին Դիլիջան, երբ նա նորաբաց գեղարվեստական ինստիտուտի գունանկարչական բաժնի լավ հույսեր ներշնչող ուսանողներից էր: Նոր էր ընդունվել: Վիճակը ծանր էր: Անհույս: Ինքն էլ հոգով գեղեցիկի

սիրահար, Արամ Խաչատրյանի երաժշտության երկրպագու։ Նայեց շրջակա սարերին, անտառներին, մտածեց, որ այս սիրուն, այս աննման աշխարհից հրաժարվելը հանցանք է։ Ու որոշեց՝ ինչ ճիրաններ ու մագիլներ էլ ունենա թոքախտ ասված հրեշը՝ անձնատուր չի լինելու։ Նմանվեց հեքիաթների կրտսեր եղբորը ու գտավ իր մեջ ոչ միայն ապրելու կամք, այլ նաև գայթակղություններից հեռու մնալու ուժ։ Բժիշկներն ասացին, որ չպետք է նկարի, մինչև առողջանա։ Պատկերացումից դուրս առաջարկ էր, բայց նա տարիներով վրձին չառավ ձեռքը։ Ասացին, որ չպետք է իմանա, թե ինչ է աղջիկը, ինչ է կինն ընդհանրապես, վերջապես սիրո զգացումը, և նա ձեռնպահ մնաց։ Հեշտ է որոշում ընդունել, դժվարը որոշումն իրականացնելն է։ Բժիշկներն ասել էին՝ սիրահարվածությունը հոգեկան սրված վիճակ է և մի քանի օրում կարող է ավերվել բժիշկների մի քանի տարվա թափած խնամքը։ Եվ նա, նկարիչ մարդ, գտավ իր մեջ ուժ խեղդելու իր հասակին վայել և անխուսափելի հոգու բռնկումները, անտարբեր մնաց կնոջ գեղեցկության և համայքի գայթակղիչ ուժի հանդեպ։ Վանիկն ինքն իրեն պահպանեց։ Նա երկար մնաց Դիլիջանում։ Դիլիջանցի դարձավ։ Հետո, երբ ապաքինվեց, ընտանիք կազմեց և շատ օգտակար գործունեություն ծավալեց, ասես իր կյանքը, իր առողջությունը վերադարձնող քաղաքին ունեցած իր պարտքերն էր մարում։ Գուցե վիճելի թվա ասածս, բայց Դիլիջանում ամեն մի ծնված դեռ դիլիջանցի չէ, կամ ավելի շուտ արժանի չէ Դիլիջանին։ Վանիկը կարող էր Դիլիջանով հպարտանալ, Դիլիջանն էլ՝ Վանիկով։ Պատկերասրահ ստեղծեց, գնաց Երևան և խնդրեց նկարիչներին մի-մի կտավ նվիրաբերել Դիլիջանին։ Եվ նվիրեցին՝ Սարյանից սկսած։ Հավաքեց իր շուրջը շնորհալի երեխաներին ու հետները երկար տարիներ նկարչություն պարապեց։ Այն գետափնյա տունը, որտեղ ապրում էր ինքը, վերանորոգել տվեց և կիրառական արվեստի թանգարան ստեղծեց։ Դրանից հետո համոզեց քաղաքի իշխանություններին ու մի հին թաղ՝ որ հնում կոչվել է Գրաֆսկի պերեուլոկ, հետո՝ Լերմոնտովսկայա փողոց, նորոգվի, վերադառնա իր նախկին տեսքին, ազգային ոճ ու կերպարանք ունենա, թանգարանային արժեք ձեռք բերի։ Ոչ թե մի տուն, այլ մի ամբողջ թաղ՝ թեկուզև շատ տներ չկան թաղում։ Պաշտոնապես կոչ-

վում է պատմամշակութային արգելոց՝ թանգարան «Դիլիջան»:

Վանիկը նկարել է Դիլիջանի անհետացող շենքերը, փողոցներն ու անկյունները, բոլոր այդ նկարները, որ Դիլիջանի պատմության մի էջն են, նվիրեց արգելոցին և նրա երեք սրահում կախել տվեց այդ պատկերներն ու իր նախկին աշակերտների՝ տեղական նկարիչների աշխատանքները:

Իր կյանքի շատ տարիները Վանիկը նվիրեց Դիլիջանին ու հետո վերադարձավ Երևան, բայց սրտի կեսը թողեց Դիլիջանում: Եթե այսօր այնտեղ չէ, ուրեմն վաղը Դիլիջանում է: Ո՞վ չի ճանաչում Վանիկին, մի Դիլիջան՝ մի Վանիկ, ո՞վ չի սիրում նրան: Ամենքը: Մի առիթով ասել եմ, հիմա էր կրկնում եմ՝ երանի ամեն քաղաք իր Վանիկն ունենա: Ու եթե վանիկներ շատ լինեն, երկիրն էլ կշենանա: Շարունակեց իր կարևոր գործունեությունը Երևանում: Շարունակեց գունանկարչությամբ զբաղվել: Հաջողություններ ունեցավ, մրցանակ շահեց: Շարունակվեց նաև գործիչը: Ու եթե հիմա ազգային երկաթագործությունն աշխուժացավ Երևանում՝ պարտական ենք դարձյալ Վանիկին: Ստեղծեց Հայաստանի ժողովրդական արվեստի օրինակելի թանգարան:

Երևանն ունի արվեստի օջախների մի քանի տնօրեն, որոնց նվիրվածությունն իրենց գործին օրինակ կարող է լինել: Իրենց գլխավորած հաստատությունն ասես իրենց տունը լինի: Եթե պետք է՝ գիշերներ կարող են լուսացնել: Այդ հաստատություններն այլևս կապված են նրանց անվան հետ:

***

Ես էլ իմ կյանքով պարտական եմ Դիլիջանին: Մարդիկ մի անգամ են ծնվում: Մարդիկ էլ կան, որ երկու անգամ են ծնվում: Ես վերջիններից եմ: Իմ երկրորդ ծնունդը կայացավ Դիլիջանում: Ու ինձ համար Դիլիջանը հովասուն քարաք չէ, ոչ էլ միայն գեղեցիկ քաղաք՝ սարեր ու ձորեր, գետ, որ քաղաքը բաժանում է երկու անտառազարդ բարձունքի: Ինձ համար հարազատ վայր է Դիլիջանը, ինչպես ամենքի համար իր ծննդավայրը:

Երբ ես առաջին անգամ Դիլիջան եկա՝ իմ հիշողության

մեջ մնացին մեխակներ, կարմիր, ճերմակ, վարդագույն, կարմիրն ու ճերմակն իրար խառնված, բուրումնավետ, որ աճեցնում էր մի գերմանացի։ Ափսոս, որ չեմ հիշում անունը։ Բուրաստան ասվածը հենց նրա ծաղկանոցն էր։ Գերմանացու աճեցրած այդ մեխակներն ինձ համար խորհրդանիշեր դարձան՝ սիրո, կարոտի, երազանքի, աղոթքի...

1950-ը ինձ համար եղավ իմ հիվանդության վերջին տարին։

Այսպես եղավ։

Մերոնք մեկնեցին ծովափ՝ Խոստա, ես՝ Դիլիջան։ Ու մի գիշեր երազ տեսա, որ իբր մերոնց փորձանք է պատահել։ Այնքան հավատացի տեսածիս, որ գնացի բժիշկների մոտ ու ասացի, թե մեկնում եմ Խոստա։ Ասացին, որ թույլ չեն տալիս։ Ասացի՝ դա իմ իրավունքն է։ Ասացին, այո, իմ իրավունքն է, բայց այդ դեպքում ջուրը կգցեմ բժիշկներիս տասնամյա ջանքը և իմ առողջության ընթացքի համար ոչ մի պատասխանատվություն չեն կրի։

Բժիշկների ասածը ոչ միայն խորհուրդ էր, այլ նաև պահանջ։ Կարուկ պահանջ։ Բայց ես մնացի անդրդվելի։

Ես մեկնեցի Խոստա, բժիշկներիս խոստանալով, որ առաջին՝ արևի տակ չեմ լինի, երկրորդ՝ ծով կմտնեմ միայն մայրամուտից առաջ։ Դրանից հետո ես ծովաբնակ դարձա։ Խոստա, Յալթա, Պիցունդա։

Ես շնորհակալ եմ ու պարտական Դիլիջանի իմ բժիշկներին՝ Մարգո Ղուլյանին, Վարդան Խաչատուրովիչին, Մարիա Վարդանովնային, որ լաբորանտ էր, բուժքույր Ազնիվ Ռաֆայելյանին։ Լավ մարդիկ էին։ Հմուտ մասնագետներ։ Նրանք նվիրված էին իրենց գործին, հիվանդին ու ամեն մի հիվանդ նրանց համար ասես իրենց որդին լիներ...

Ու հետո, շատ տարիներ անց, երբ ուրոլոգիական հիվանդության առաջ կանգնեցի, հանդիպեցի Իվան Աղաջանյանին, որը մարդկային առաքինությունների և բժշկական հմտության ներդաշնակության օրինակ է, և հասկացա, որ բժիշկը պետք է նախ մարդ լինի, հետո նոր բժիշկ։

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Մի ամառ, չեմ հիշում 1948-ի թե 1949-ին Միքայել Մազմանյանը Դիլիջան եկավ, ու ես առաջարկեցի նրան տեղավորվել իմ սենյակում: Եկել էր 24 օրով:

Լավ մարդ էր Միքայելը, պարզասիրտ, բարյացակամ, անքեն: Բազմակողմանի հետաքրքրություններ ուներ: Լավ գիտեր գրականություն, թատրոն: Մի ժամանակ թատերախոսականներ է գրել: Լսել եմ նրա մի երկու ելույթը թատերական քննարկումների ժամանակ և ինձ թվացել են միշտ խելոք, միշտ հետաքրքիր, ամեն անգամ էլ իր չհավանածի մասին խոսում էր այնպիսի նրբանկատությամբ, որ մարդիկ չէին նեղանում, թեև սկզբունքային էր և չզիջող:

Լավ զրուցակից էր, լավ պատմել գիտեր, գիտեր նաև ուրիշին լսել: Լավ խորհուրդներ էր տալիս: Ուներ նաև այլ հազվագյուտ ընդունակություն՝ ուրիշի հաջողությամբ ուրախանալ, նույնիսկ ոգևորվել, երբեմն նույնիսկ չափից ավելի: Դատողությամբ իրապաշտ էր, բայց խառնվածքով եթե ռոմանտիկ չէր, ապա նման բան ուներ իր էության մեջ:

Իր մտքերն էլ միայն գրքերից չէին քաղվածք, այլ ուրույն էին, սեփական, և զգում էիր դատողությունների հիմքը, այն արմատները, որոնցից խմորվել ու գումարվել էր նրա անհատականությունը:

Հենց որ մարդիկ, հատկապես երիտասարդությունն իմացավ , որ Դիլիջան է ժամանել հայտնի հոգեբան Միքայել Մազմանյանը, եկան նրա դուռը և քաղաքի իշխանությունների անունից խնդրեցին, որ երկու դասախոսություն կարդա: Խոստացավ երկու դասախոսություն էլ կարդալ: Մեկը՝ «Քուն և երազ», մյուսը՝ «Սեր և ընտանիք»: Իր ունկնդիրները լինելու էին ուսուցիչներ, տասներորդ դասարանի աշակերտները միայն, նաև քաղաքից ով որ կուզեր, հասկանալի է՝ տեղական մտավորականությունը:

Ես նրա մի երկու հրապարակային դասախոսության ներկա եմ եղել Երևանում և հիացել, թե ինչպես է կարողանում բարդ նյութը հանրամատչելի ձևով հասցնել ունկնդրին, նկատել եմ նաև, թե ինչպիսի համոզչությամբ է կարողանում

ցրիվ եկած նյութը դասախոսության վերջում հավաքել ամբողջացնել։

Ես առա իր համաձայնությունը ներկա լինելու դասախոսություններին, և միասին ճանապարհվեցինք քաղաք։

Շատ մարդ էր հավաքվել։

«Քուն և երազ»՝ խոսեց մի ակադեմիական ժամ։ Պատմեց, թե ինչ տեսություններ գոյություն ունեն քնի ու երազի մասին, հատկապես կանգ առավ Պավլովի ուսմունքի վրա, բայց այդ բոլորը պարզ, մատչելի ձևով, առանց մասնագիտական տերմիններ գործածելու։ Լսեցին ուշադիր, բայց իմ տպավորությամբ լսարանն այնքան էլ գոհ չէր։ Ո՛չ ճանապարհին, ո՛չ էլ տանը խոսք չեղավ կարդացված դասախոսության մասին։ Խոսեցինք ուրիշ հարցերից, բայց նկատեցի, որ խոսողը ես էի, ինքն ավելի լուռ էր, մտահոգ, ներամփոփ։

Հաջորդ օրը մյուս դասախոսությունն էր՝ «Սեր և ընտանիք»։ Դահլիճը նախորդ օրվա պես լեփ-լեցուն էր։ Այս լսարանն ավելի երիտասարդական էր։ Հասկանալի էր, որ այդպես էլ լինելու էր։ Խոսեց ընտանիքի հասարակական հիմունքների մասին։ Ճիշտ է, ուշադիր լսում էին, բայց լսարանի կառավարման սանձն իր ձեռքին չէր։ Դա ավելի հարգանքի տուրք էր անվանի պրոֆեսորին։ Իսկ երբ արեց Պետրարկայի սիրո պատմությունը, դահլիճի մթնոլորտը միանգամից փոխվեց, մարդիկ լարվեցին, ուշադրություն դարձան, բայց դա միակ կոնկրետ օրինակն էր, իսկ մնացածը՝ Պետրարկայից առաջ և Պետրարկայից հետո, մտքեր էին, դատողություններ, կոչ ու փափագ մաքուր սիրո և ամուր ընտանիքի վերաբերյալ։

Ցուն եկանք, մի բան կերանք, լույսը մարեցինք և մտանք անկողին։

Իմ քունը չէր տանում, չէր տանում և նրանը։

Մի փոքր հետո.

— Ռուբե՛ն։

— Ի՞նչ։

— Քնա՞ծ ես։

— Չէ։

Դադար։

— Լսարանը կարծես դժգոհ մնաց։

— Չէ, ինչու, ուշադիր լսում էին։

— Դա ոչինչ չի նշանակում։ Կիրթ մարդիկ էին՝ չէին խանգարում։ Գլխավորն այն է, որ ես չէի զգում նրանց, դասախոս և ունկնդիր նույն մթնոլորտում չէինք։

Ես փորձում եմ հանգստացնել, բայց նա զգում է, որ մի բան այնպես չէր։

— Գիտես, Ռուբեն, ես անբավարարվածություն եմ զգում, իսկ ինչու՝ չեմ հասկանում։

Ես փորձ արի բացատրություն գտնելու, ասելով, որ ունկնդիրը գալով լսելու երազին վերաբերող դասախոսությունը, կգերադասի իմանալ, թե վերջիվերջո ինչ է երազը, մի երկու կոնկրետ օրինակով սպասում էին լսել երազի բացատրություն և ոչ թե նրա բնախոսական հիմնավորումը։ Երիտասարդությունը եկել էր լսելու սիրո և ընտանիքի մասին նշանավոր հոգեբանի դասախոսությունը, հույս ուներ լսելու, թե ինչպես լուծի իր առջև կանգնած անլուծելի խնդիրները։ Տղան սիրահարված է, բայց մերժված, ամուսիններն հոգնել են միմյանցից և ամեն չնչին առիթով միմյանց վրա են հարձակվում և իրար անպատվում։ Այ ինչ էին ուզում լսել։

— Ինչ է, կարծում ես ես չգիտեմ, թե երազն ինչ է նշանակում։ Սխալվում ես։ Ուզում ես մի օրինակ բերեմ։

— Բեր։

— Երազումդ թռչո՞ւմ ես։

— Շա՜տ։

— Թռչելը... ցանկություն է։

— Ի՞նչ ես ասում։

— Ինչ է, բերեի՝ այս կարգի օրինակներ։

— Այդ կարգի չէ, բայց գուցե այլ տեսակի արժեր թեկուզ մի երկուսը։

— Չգիտեմ, չգիտեմ։ Ես այդպիսի նպատակ չէի դրել իմ առաջ։

Ես ուզեցի շեղել նրա միտքը։

— Լսիր, մի ժամ խոսեցիր, նույնիսկ ավել, բայց բնավ հոգնած չես երևում։

Գիտես ինչ, պետք է գործի դնել կոկորդը, ոչ թե կուրծքը։

Մազմանյանն սկսեց բացատրություններ տալ, հիմնավորել և այդ մասին խոսեց այնպես, ասես սպասում էր հարցիս։

Շատ տարիներ են անցել։ Չկա իմ լավ ընկերը։ Կյանքից շուտ հեռացավ։ Դառնացած գնաց այս աշխարհից։ Բայց նա հասավ իր գերագույն նպատակին՝ ունեցավ աշակերտներ և հետնորդներ։

ԾՈՎԱՓԻՆ

Ես ծովափին չէի ապրել։ Սարգիս Բայանդուրի հետ 1939-ի մի ամիս ապրել էինք Յալթայում, նախ՝ աշնանը, հետո ծովից յոթ կիլոմետր հեռավորության վրա՝ գրողների ստեղծագործական տանը։ Բացի հեռավորությունից, ջուրն արդեն սառն էր և լողացողներ չկային։ Մի սեղանի շուրջն էինք «Угрюм река» հայտնի վեպի հեղինակ Վյաչեսլավ Շիշկովի և իր հաճելի տիկնոջ հետ։ Այնտեղ ծանոթացանք վրաց գրականագետ Լևան Ասատիանու հետ։

Ես չեմ սիրում մենակություն և չեմ հասկացել այն մարդկանց, որ կարող են նստել մեն մենակ ու մի ժամ ծովերին նայել։ Հասկացա, սակայն, որ ծովափին կարելի է ժամերով մնալ, ոչ միայն խմբով, պատմություն անելով և պատմություն լսելով, այլ նաև մեն-մենակ։ Եվ իսկապես, գըտնում էի մի զով անկյուն, այնքան, որ արևի ճառագայթները չհասնեն ինձ։ Ժամերով նայում էի ծովին ու չէի հագենում։ Տուն դառնալիս ինձ թվում էր, որ մի բան թողի, մի բան մոռացա այնտեղ՝ ծովափին։

Ինձ զարմացնում էր ծովի անսահմանությունը, անընդգըրկելիությունը։ Շոշափելու չափ իրական է միայն այն ափը, որի վրա նստած ես, իսկ մնացածը հեքիաթ է թվում։

Մեր երկինքը, մեկ էլ ծովը մարդու մեջ ծնում են հավերժության զգացողություն։ Ասես՝ հողից կտրում են, հեռացնում քեզ կյանքի առօրեական ընկալումներից, դարձնում վերացական, ընդհանրական ու ստեղծում այն պատրանքը, թե միտքդ և հոգիդ անպարփակ են, ինչպես ծովն ու երկինքը։

Ես սիրում էի խաղալ ծովը, մայրամուտի ցոլքը վրան, այն օգնում էր ինձ ամփոփվել, մտորել և մտքով գնալ հասնել անմատչելի հեռուները: Սիրելի էր նաև փոթորկոտ ծովը: Ալիքները գալիս զարկվում էին ափին ու փշրվում: Կային հանդուգն տղաներ ու կանայք նույնպես, որ սուզվում էին դեպի ափ եկող ալիքի մեջ ու մի փոքր հետո հայտնվում ալիքի վրա:

Երբ փոթորիկը սաստկանում էր, թվում էր, թե ոչ թե ծովը, այլ աշխարհն է խառնվել իրար: Այդ պահերին հիանում էի ծովի տարերային ուժով: Միտս է գալիս Բեթհովենը, ու ինձ թվում է, որ նրա հանճարն իր ուժն առել էր ծովից: Անհաղթահարելիություն, ահա այն զգացումը, որ ունեի փոթորկոտ ծովից: Չկա ուժ, որ դրա առաջն առնի, խաղաղեցնող ուժն էլ իր մեջ է, պիտի փոթորկվի, պիտի կատաղի, մինչև որ ինքն իրեն հանգիստ առնի:

Ես առաջին անգամ իմ կյանքում ծով մտա: Հիշեցի Սևանա լիճը, որը քաշում էր ցած, դեպի հատակը, իսկ ծովը բարձրացնում է, պահում ջրի երեսին: Երբ սովորեցի մեջքիս վրա մնալ՝ երեխայի նման հրճվում էի: Ասես աշխարհն իմը լիներ, չկար վիշտ, չկար մտահոգություն, շուրջս խինդ էր ու ժպիտ, իսկ վերևը՝ կապույտ անհունություն: Իսկ այն պահերին, երբ թեթև ալիք էր լինում, ու ես ոչ միայն ջրի երեսին էի մնում, այլ նաև տարուբերվում՝ երկյուղախառն հաճույք էի զգում:

Ինձանից լողորդ չսաացվեց, ամենաշատը հիսուն քայլ էի հեռանում ափից և հատկապես այն պահերին, երբ մերոնք ափին էին և ամեն րոպե կարող էին օգնության հասնել: Հեշտ էի հեռանում ափից, ասես ջուրն օգնում էր ինձ: Վերադառնում էի դժվար: Կարծում էի, թե ուժերս սպառվել են: Գիշերն այդ մասին ասացի տանտիրոջս, որ ոչ միայն ինքն ու հայրը, այլ նաև ապուպապերն էին ծնվել ու ապրել ծովի ափին: Ժպտաց ու զգուշացրեց:

— Ծովի սովորությունն է: Ջուր մտնելիս քեզ հետ է, տանում է: Ափ վերադառնալիս՝ քո դեմ է: Ասես խանգարում է, չի ուզում քո վերադարձը:

շորամարմին է և իրար չենք բռնի։ Ուրիշ հարց է Ջանիբեկյանը։ Գուրգենն ու նա իրար կհամապատասխանեն։ Գուլակյանը ճիշտ է դերաբաշխել։

Ու մի փոքր հետո։

— Ես հասկանում եմ Հեղինեին, նրա խաղալու ցանկությունը բնական է, բայց պետք է սպասի, մինչև Գուրգենը որոշի բեմ ելնել։

— Իսկ խաղալո՞ւ է։

Վաղարշյանն ուսերը վեր քաշեց, այսինքն՝ աստված գիտե։ Հետո ավելացրեց՝

— Ուրեմն, մնում է, որ Հեղինեն Գուրգենի հետ խոսի և տրամադրի նրան։

Տարիներ անցան, այնպես էլ Գուրգենը չուզեց Արբենինի դերը կատարել, և Հեղինեի ցանկությունը մնաց անկատար։

ԸՆԿԵՐՆԵՐՍ

Սարդը ինչ տարիքի էլ լինի, հույսը չի կորցնում, ու միտքը միշտ ծրագրում է, թե ինչ է անելու վաղը։ Բայց դրա կողքին ապրում է և մի կասկած, մանավանդ, եթե 75-դ բոլորել ես՝ կհասցնե՞ս։

Երկու անդավաճան ընկեր եմ ունեցել, որոնց հետ մտերմություն եմ արել 1922-ից։ Սա մի ընկերություն է, որ կյանքի շատ փորձություններից ենթարկվեց ու քննություն բռնեց։

Մեկը Ժիրայր Հակոբյանն է, մյուսը՝ Սարգիս Բայանդուրը։

Ժիրայր պոլսեցի էր։ Ընդամենը մի տարեկան է եղել, որ ծնողները փոխադրվել են Օդեսա, հետո՝ Թիֆլիս։ Հայրը կոշկակար էր, մայրը սիրունատես կին, ամուսնուց գեղեցիկ էր ու խելոք, կարդացած, ուներ Դոստոևսկու պաշտամունք, բազմակողմանի հետաքրքրասիրություններ։ Ինչ էլ աներ՝ լավ կլիներ։

Դերասան էր ուզում դառնալ, երկու տարի հաճախեց ստուդիա, մի քանի տարի աշխատեց թատրոնում։ Կարծես լավ ապագա ուներ, բայց թատրոնը թողեց, նվիրվեց կո-

մերիտական գործին։ Զբաղվեց լրագրողությամբ, հասավ բարձր պաշտոնների՝ հանրապետական թերթի խմբագրի տեղակալ։ Ուներ հայկական կրթություն, տիրապետում էր ռուսերենին կատարելապես։ Թատերագիտական կրթություն ստացավ։ Շատ թատերախոսականներ գրեց։ Վարչական ակնհայտ ձիրք ուներ։ Երկար տարիներ գլխավորեց Երևանի ռուսական թատրոնը, մի քանի տարի էլ՝ Սունդուկյանի անվան թատրոնը։ Եղավ նաև «Հայֆիլմի» տնօրեն։

Պիեսներ գրելու շնորհք ուներ, հաջողություն ունեցավ, նրա մի պիեսը արժանացավ մրցանակի։ Թատերագրությամբ զբաղվեց մերթընդմերթ, ընդհատումներով։ Ոչ մի ասպարեզում համառ ու հետևողական չեղավ, չնվիրվեց ամբողջապես, ուժերը չկենտրոնացրեց որևէ ասպարեզում։

Կարգապահ ու ճշտակատար մարդ էր։ Նույնը պահանջում էր ուրիշներից։ Բարեխիղճ էր և աշխատասեր։ Եթե հանձն առներ գրել հոդված, գիշերը չէր քնի, բայց ժամկետին կհասցներ։ Շատ զարմանում էր, թե մարդիկ ինչպես կարող են խոսքի տերը չլինել։

Լավ դրուցակից էր, միտքը գործում էր աշխույժ։ Ուժեղ տրամաբանություն ուներ։ Դատողությունը ռեալիստական էր, ռոմանտիկ պատկերացումներից հեռու էր։ Կնամեծար անձնավորություն էր։

Լավ ընկեր էր, ազնիվ, նվիրված։ Ընկերոջ հաջողություններով անկեղծ ուրախացող էր։ Եթե կարող էր ընկերոջն օգտակար լինել, ամեն ինչ կաներ, որ ձեռք պարզի, հասնի։

Հիմա նա չկա, ու ես նրա բացակայությունը զգում եմ խորապես։

Իմ մյուս ընկերը Սարգիս Բայանդուրն է։ Միասին պիոներ ենք եղել, սովորել ենք նույն ուսումնարանում։ Պատանեկան տարիներին բանաստեղծություններ էր գրում և այդ պատճառով Բայանդուրյանը փոխակերպվեց Բայանդուրի։ Կյանքի վերջին տարիներին գրում էր պիեսներ, որոնցից մեկը՝ «Աղմկալի փողոց», բեմադրվեց Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում։ Տարբեր պաշտոններ է վարել, հասնելով մինչև վարչության պետի պաշտոնի։

Բայանդուրը երկար տարիներ գլխավորեց «Խորհրդային արվեստ» ամսագրի խմբագրությունը։ Ճաշակ և կուլտուրա,

հետն էլ քաղաքացիական համարձակություն։ Ամսագրի էջերում պաշտպանել է արվեստի առաջադեմ միտումներ։

Լեզվաիմացությունը, իհարկե, աշխատանք է պահանջում, բայց դա բնության շնորհ է նաև։ Հայկական կրթություն ստացած Բայանդուրը անթերի տիրապետում է ռուսերենին։ Կար ժամանակ, որ վրացերեն խոսում էր այնպես, որ նրան չէիր տարբերի վրացուց։ Մենք միասին գնացել ենք Իտալիա։ Իտալերեն չգիտեր, բայց այնտեղ ապրած երկու շաբաթում սովորեց այնքան, որ վերջին օրերին կենցաղային հարցերի շուրջ կարողանում էր բացատրվել։ Նրա այս ձիրքը ժառանգաբար անցավ աղջկան՝ Անահիտին, որ անզուգական թարգմանչուհի է։

Բայանդուրը ծնվել է աշխատավորական պարզ ընտանիքում։ Ծնողները կրթություն ստացած մարդիկ չէին, բայց ինքը ազնվականի պահվածք ունեցող մարդ է։ Եթե ինձ հարցնեն, թե իմ ընկերներից ում կհանձնարարեմ լորդերի հետ սեղան նստել, ես Բայանդուրի անունը կտամ։

Անկեղծ է, պարզ, մարդկային, զուսպ, հավասարակշռված, հումորով։ Մի խոսքով ազնվագույն անձնավորություն։ Անքեն մարդ։ Սիրտը լի է քրիստոնեական ներողամտությամբ դեպի աշխարհը, դեպի մարդիկ, դեպի ընկերները։

Եթե նորից աշխարհ գայինք, չէի ուզենա կրկնել իմ կյանքը, զբաղմունքս։ Չէի կրկնի շատ սխալներ։ Բայց եթե կա մի բան, որ կուզենայի կրկնվեր, ապա դա իմ ընկերներն են ընդհանրապես, Ժիրայրն ու Սարգիսը հատկապես։

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Գրքիս վերջին էջերն են։ Ես էլ չգիտեմ, թե ինչու պահանջ եմ զգում գրելու երիտասարդության մասին։ Թերևս այն պատճառով, որ այսօր ցերեկով այգի գնացի անհայտ զինվորի գերեզմանին և միտքս վերականգնեց պատերազմի տարիները, պատերազմի հաղթական ավարտը, ժողովրդի ցնծությունը, անհայտ զինվորի գերեզմանի բացման արարողությունը։

Մի ժամանակ ես երիտասարդ էի։ Երիտասարդ են եղել նաև իմ ուսուցիչները։

Ինչ-որ բան միշտ կրկնվում է բոլորի կյանքում: Անկախ ժամանակներից, երիտասարդը երիտասարդ է: Բայց կան և տարբերիչ գծեր: Հայրը դժգոհ է որդուց, նրա ընկերներից, նրան որ լսես, կասի՝ «Այժմյան երիտասարդությունը ի՞նչ երիտասարդություն է, ա՛յ, մե՛նք էինք երիտասարդ»: Անկե՞ղծ է: Իհարկե: Արժանի է քննության թերևս այլ բան. նույն այդ հայրը մի ժամանակ որդի է եղել և ունեցել է հայր, որը նույնպես ժամանակին փնթփնթացել է զավակի ու նրա ընկերների վրա՝ «Այժմյան երիտասարդությունն ինչ երիտասարդություն է: Ա՛յ, մե՛նք էինք երիտասարդ»: Սա մի գանգատ է, որ լսելի է եղել բոլոր ժամանակներում: Դա նրանից է, որ միմյանց հաջորդող սերունդները, եթե մի տեղ միմյանց նման են, ապա մի տեղ էլ տարբեր են: Հայրը գանգատավոր է հենց այդ տարբերությունից: Եվ այդ գանգատի մեջ անպայման պահպանողական ինչ-որ բան կա: Մինչդեռ այդ տարբերությամբ է նոր սերունդը կյանքն առաջ մղում:

Երիտասարդությունը հախուռն է, թափով, ինքնավստահ և հաճախ համոզված այնտեղ, որտեղ մեծը տարակուսում է: Եվ դրա մեջ է երիտասարդության հրապույրը: Նրան հաճախ անկարելին կարելի է թվում: Երբեմն նա կարծում է, թե կարող է երկնքից աստղեր վար բերել: Եվ պետք է կարծի: Դա, իհարկե, պատրանք է: Բայց այդ պատրանքի մեջ երիտասարդական կորով կա, երևակայության ճախրանք: Բնավ զարմանալի չէ տարեցի կասկածը, բայց զարմանալի է, որ մոռացել է իր իսկ երիտասարդությունը, այն վստահ համոզվածությունը, որով կարծել է, թե կարող է նույնիսկ բնության դեմ գնալ:

Մեծերն ուզում են, որ երիտասարդությունն իրենց նման լինի: Անհիմն պահանջ: Անբնական ցանկություն: Եվ որ գլխավորն է՝ անկարելի: Եթե ընդունում ենք, որ երիտասարդությունը գալիս է շարունակելու մեզ, շարունակելու և ոչ թե կրկնելու, ապա նա չի կարող իր հետ չբերել թարմ շունչ: Մի խոսքով՝ լինելով գարուն, ինչպե՞ս կարող է նա գարնանային չլինել: Մի սերունդը մյուսի ուսերի վրա է բարձրանում: Այս հաջորդականության մեջ և՛ հակասություն կա, և՛ համահասկացողություն, և՛ օրինաչափություն կա, և՛ մեծ խորհուրդ, բայց ոչ կրկնություն:

Ճիշտ է՝ երիտասարդությունը երբեմն ժխտելիի հետ ժխ-

տում է նաև անժխտելին։ Երիտասարդությունը հաճախ չի հասկանում, որ ամեն սերնդի կյանքում կան մշտական և ժամանակավոր սահմանակետեր։ Պետք է հասկանալ, որ մշտականը մշտական է, ուրեմն մնալու է, իսկ ժամանակավորն իրրև իր կյանքն արդեն ապրած, դիջելու է։ Բայց երիտասարդությունը հենց նրանով է երիտասարդություն, որ ինչ-որ բաներ չհասկանա, ու մեր պարտքն է՝ ուղղել նրա հոգեկան բռնկումների ընթացքը, հեռու պահել ծայրահեղություններից։

Ես անհրաժեշտ համարեցի խոսել այդ մասին, որովհետև Երևանում ևս, ինչպես մեր երկրի բոլոր մայրաքաղաքներում, տեղի է ունեցել անհայտ զինվորի թաղման արարողություն։

Անհայտ զինվորի հիշատակին ճարտարապետական հուշարձան է կառուցված և գերեզմանի վրա վառվում է փառքի անշեջ կրակը։

Փառքի՞։

Իսկ նրա ինչի՞ն է պետք այդ փառքը, երբ ինքը չկա։ Այդ փառքը մեզ է հարկավոր, մեզ՝ ապրողներիս։

Ո՞վ է եղել այդ անանուն ռազմիկը՝ ոչ ոք չգիտե։ Հայտնի է միայն, որ ընկել է Մալդոբեկ քաղաքի պատերի տակ։ Մեզ հայտնի չէ նրա ով լինելը, բայց ինքը՝ ռազմիկը գիտեր, թե ո՛ւմ դեմ է կռվել և ինչի՛ համար։

Թշնամուց պաշտպանելով ինդուշական հողը, նա պաշտպանել է նաև Հայաստանը։ Նրա մահը սուրբ պատգամ է ապրողներին։

Նա մեռավ, որ մենք ապրենք։ Նրա մոր աչքը ճամփին մնաց, որ մենք շարունակենք կյանքը։ Եթե հարսնացու ուներ, ապա աղջիկը մնաց առանց փեսացուի, որ մեր երիտասարդությունը կրթություն ստանա և առաջադիմի։ Եթե երազում էր բժիշկ, ճարտարապետ դառնալ կամ բանաստեղծ, ապա ընկավ, որ հիվանդները բժիշկներ ունենան, որ քաղաքներ կառուցի ճարտարապետը, որ բանաստեղծը սիրո ու խաղաղության երգեր հյուսի։ Նա աչքը փակեց, որ ով կոչված է կառուցելու՝ չքանդի, ով ուսում է առել բժշկելու՝ մարդկանց չսպանի, ով գիտելիք է կուտակել տիեզերքը նվաճելու՝ քաղաքները ավերակ չդարձնի։ Մի խոսքով՝ զոհվեց, որ կյանքը լինի։ Նա ընկավ, որ գարունը երիտասարդ լինի ամեն տեղ, սիրի, ձգտի, խենթություններ անի...

Երիտասարդը հարստացող է, բայց նաև հարստացնող։

Մենք սովոր ենք պատմական անցյալ համարել մեզանից դարերով բաժանվածը միայն, համեմատաբար հեռավոր ժամանակները։ Բայց հիմա ժամանակի հանկացողությունն այնպես է խտացել, որ մեր երեկվա տեսածն ու ղժացածը այսօր պատմություն է դառնում։

Եթե յուրաքանչյուր երիտասարդ, որ աչքը բացել է խաղաղ օրերին և ապրում է այս դեղեցիկ հողագնդի վրա, բայց այս անհանգիստ դարում հասկանա, որ ինքը պատասխանատու է ոչ միայն իր արածի համար, այլ ընկերոջ, զավակի, հոր, մի խոսքով՝ երկրի, ամբողջ հայրենիքի, ապա շատ վսեմ զգացումների վրա կկառուցվի մեր կյանքը։ Եթե մեզնից յուրաքանչյուրն իր պարտականությունը կատարի ոչ թե որպես պարտականություն, այլ կամենալով, այսինքն՝ սրտով, ինչոր պահեր էլ՝ այրվելով, ապա կյանքն ավելի բարձր ըմբռնումներով կիմաստավորվի։

ՄՏՈՐՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՈՒՑ ԱՌԱՋ

Ամեն մարդ, որ աշխարհ է գալիս, դեռ այբուբենը չսովորած, մի պարտմուրհակի տակ է դնում իր ստորագրությունը։ Ու ամբողջ կյանքում մարում է այդ պարտքը։ Պարտք՝ բնության առաջ, պարտք՝ ծնողների առաջ, պարտք՝ ուսուցիչների առաջ, պարտք՝ զավակների առաջ, պարտք՝ ընկերների առաջ, պարտք՝ հասարակության առաջ, պարտք՝ հայրենիքի առաջ։ Վերջապես պարտք՝ պատմության առաջ, պարտք՝ մարդկության առաջ։

Պարտքի այս գիտակցությունը մարդու ամենաբարձր գիտակցությունն է։ Մարել պարտքը՝ նշանակում է գործել, աշխատել, միջամտել կյանքին, խառնվել նրա ընթացքին, ազդել այդ ընթացքի վրա, ապա կյանքում ինչ-որ բան լավացնել, մարդուն ազնվացնել, մարդուն բարձրացնել իր իսկ աչքում, այնպես անել, որ նա հասկանա, որ եթե բնությունը մի հրաշք է ստեղծել, ապա դա մարդն է, իսկ քանի որ բնության մեջ հրաշք երևույթներ շատ են, ապա հրաշքների հրաշ-

քը մարդն է: Եթե մարդու երևակայությունը կարող էր այնքան հանդգնորեն հարուստ լինել, որ հորիներ դրախտի և դժոխքի առասպելը, եթե մարդը կարող է ստիպել մեքենային մտածել, ուրեմն ինչ չի կարող անել մարդը:

Եթե հարցնեն, թե կյանքում մեծագույն բավականությունը որն է, կասեմ՝ աշխատանքը: Աշխատելիս մարդն աստղածուց մի բան է առնում վրան: Չէ որ նա ստեղծում ու աշխարհ է բերում բան, որ մինչ այդ չկար, ու հիմա կա: Կարող է աշխարհ բերվածն աննշան բան լինել, բայց կարող է և հանճարի պոռթկում լինել: Պայտը պատրաստող դարբնի կողքին ապրել է Լեոնարդոն: Որտե՞ղ պայտը, որտե՞ղ «Մոնա Լիզան»: Արժեքները տարբեր են, բայց երկուսն էլ ստեղծում են: Հետո, երբ գործը վերջացնում է, հասկանում է, որ իր պատրաստածը պայտ է և ոչ ավելի, բազմահազար պայտերից մեկը, իսկ Մոննա Լիզան ընդամենը մի անգամ կարող է ժպտալ և թողնել մարդկությանը այդ ժպիտը, որպես հավիտենական պարգև: Ուզում եմ ասել, որ դարբնի մուրճի տակից դուրս եկածը համեմատելի չէ արվեստի գլուխգործոցների հետ, բայց նա էլ իր արածն անում է և այն բարի ցանկությամբ, որ իր պատրաստած պայտը դիմացկուն լինի, նժույգի ոտքին հարմար ու տանի նրան, թռցնի...

Գրիչ բռնողները իրարից տարբեր են լինում, բայց այդ գրողները աշխատելու պահին, եթե չհավատան իրենց՝ գրել չեն կարողանա: Եթե չհավատան, որ իրենց գրչի տակից դուրս եկածը պետք է մարդկանց՝ չեն կարողանա գրել: Ավելին, եթե նրանք համոզված լինեն, թե ընթերցողը ապաստում է իրենց գրածին, այն էլ անհամբեր, գրելու վստահություն և ուժ չեն ունենա: Հետո, գրելուց հետո և մանավանդ գիրքը լույս տեսնելուց հետո են միայն հասկանում, որ իրենց գրածն այն չէ, ինչ զգում և կարծում էին էջ էջի հետևից լցնելու ժամերին, բայց աշխատանքի այդ պահը աստվածային է հանճարի և միջակ գրողի համար գրեթե հավասարապես: Ու դրա համար է թվում ինձ, թե աշխատանքը հոգեկան անհավասարելի բովանդակություն է ամենքի համար:

ՆՈՐ ՏԱՐԻ

1949-ի դեկտեմբերի 31-ն է: Տանեցիք պատրաստություն են տեսնում, բացի ինձանից՝ ով ինչ կարող է, անում է: Մի փոքր հետո սեղան կնստենք և հենց որ ժամը 12-ը լինի, բաժակներ կբարձրացնենք Նոր տարին դիմավորելու:

Ժամը տասներկուսն է:

Բարձրացնում ենք գինու բաժակները, գրկախառնվում, համբուրում իրար, շնորհավորում: Բարեմաղթությունները հաջորդում են միմյանց, ջերմ ու սրտալի ցանկություններ:

Ե՛րգ, պա՛ր, սրախոսություննե՛ր:

Սեղանի մոտ ենք երկու-երեք ժամ: Ես համբուրում եմ բոլորին, բարի գիշեր ասում ու գնում քնելու: Պետք է հանգստանալ, ուժ հավաքել, վաղն առույգ լինելու համար: Հարեվաններ կգան, ազգականներ, ընկերներ, գործընկերներ, ուսանողներ՝ պարով ու նվագով, վերջապես՝ պատահական մարդիկ: Նոր տարին այն օրն է, որ ով ում տուն ուզի, կարող է մտնել: Սրա մասին է ասված՝ հյուրն աստծունն է: Ընդունիր սրտաբաց, թող բաժակ բարձրացնի, նրա լավը ցանկացիր ու եթե կամենա գնալ, ճանապարհիր նույն սրտով և շնորհակալություն հայտնիր, որ պատիվ արեց ու տունդ եկավ: Ոչինչ, որ դու նրա անունը չգիտես, ոչ էլ նրա ով լինելը, հյուր է, ուրեմն վերջ:

Հիշում եմ Թիֆլիսում, պատանեկությանս տարիներին, հունվարի մեկն էր, ներս մտավ մի գոգնոցավոր մարդ և սեղանին նետեց երկու ցոցխալ, որ կենդանի լինելով, թպրտում էին: Փող առաջարկեցինք, վիրավորվեց: Խնդրեց գինով բաժակ, օրհնեց օջախը և գնաց...

Ասում են, թե Թիֆլիսում, Փարիզում իբր մայիսի մեկին, եթե շուշան ծաղկով ես փողոց դուրս եկել, կարող ես մոտենալ ուզածդ աղջկան, պարզել շուշանը և համբուրվել: Ոչ մի կին երես չի դարձնի, հակառակը՝ նույնիսկ ժպտադեմ կհամբուրվի, իբր վաղուց ինքը սպասում և տենչում էր արժանանալ դրան: Այդ օրը ծանոթ ու անծանոթ չկա, այդ օրը հարուստ ու աղքատ չկա, այդ օրը աստելություն չկա, այդ օրը փոխադարձ սիրո, փոխադարձ համակրանքի և փոխադարձ հոգեկան համերաշխության օր է: Նույնիսկ այն դեպքում, եթե վար-

չապետի աղջկան հանդիպել է շուշանը ձեռքին շրջմոլիկ։ Ուրեմն որքան մեծ է նախապաշարմունքի ուժը, որ մարդիկ կարծում և հավատում են, թե ծաղիկն ու համբույրը բախտ են բերելու իրենց։

Անկողին եմ մտել, որ քնեմ, աչքերս չեն փակվում։

Մտածում եմ։

Եվ ինչ զարմանալի բան, եթե հին ու նոր տարիների ճամփամիջին մարդն ուզում է մի քար մտքի տալ։

Լսվում են անդուսպ հրճվանքի ձայներ, դինին ազդել է, մարդիկ իրենց լավ են զգում, ասես, մի մեծ տոն լինի, որի զալուն իրենք անհամբեր էին, ու հիմա, որ եկել է, անձնատուր են եղել ամբողջ հոգով։

Բնական հարց է ծագում՝ ինչի՞ վրա են մարդիկ այդպես ուրախանում։ Չէ որ Նոր տարի, նշանակում է մի տարով էլ մեծանալ, մի տարի էլ իրենց կյանքից կորցնել։

Ես կարծում եմ, որ գործում է հավատի ուժը։

Դեկտեմբերի 31-ով եզրափակվում է անցյալ տարին։ Նա գիտե, թե ինչ էր այդ տարին իր համար, լա՞վ էր, վա՞տ էր։ Ես գոնե դառնացած սրտով հիշում եմ այդ տարին։ Կոմսոպոլիտիզմի տարին էր դա։ Ի՜նչ հուղումներ, ի՜նչ ապրումներ, ինչպիսի՜ նվաստացում։ Խենթանալու բան։ Ճիշտ է, կազմակերպչական առումով ամենամեղմը ինձ հետ վարվեցին, բայց տակնուվրա եղած սրտով ապրող մարդու օրն ինչ պետք է լիներ։ Ի՞նչ պետք է լիներ մի մարդու կյանք, որ ուժ չունեցավ բարձրանալու ամբիոն և ասելու, որ այդ բոլորը սուտ է, այդ բոլորը քաղաքական վերապրումներ են, ոմանք էլ օգտվում են առիթից և մաքրում հաշիվ, որ խմբադիր եղած ժամանակս չէի տպագրում իրենց, որպես հրատարակիչ երես չէի տալիս և չէի գիրք գրքի հետևից լույս ընծայում և որպես գրաքննադատ՝ մեծ չափանիշներով էի նայում գրականության ընթացքին։

Ինչո՞ւ չվերկացա և չասի, որ չեմ ընդունում, ձեր ասածից ոչինչ ճիշտ չէ։ Բայց չասի։ Հանդգնություն չունեցա ասելու։

«Ամոթ է, Համլետ, ամոթ»։

Ինձ հետ միասին մեղադրվող ընկերներս էլ չունեցան։

Բոլորս էլ գիտենք, որ հակադրվելը դեպի խորտակում էր տանում, իսկ մեղադրանքն ընդունելը՝ փրկության եզր էր թողնում: Ասեի այդ բոլորը, որ այն տարին մտքովս չէր էլ անցնում և միաժամանակ հայտարարեի՝ պաշտոններից հանում եք, հանեք, այլևս ասպարեզ չեք տալու, մի տվեք, չեմ ունենալու մամուլում հանդես գալու իրավունք, թող չունենամ, ամբիոնից խոսք չեմ ասելու, թող չասեմ: Արե՛ք, արե՛ք: Միայն թե մի ճնշեք այդքան: Այդ չափերով մի խաղացեք մարդու հոգու հետ:

Ծուռը նատենք, ճիշտը խոսենք, ինչո՞ւ եք խառնել թատերագետների խմբին: Վերջապես, ես ո՞ր օրվա թատերագետն եմ: Տասը տարվա ընթացքում երկու ելույթ եմ ունեցել՝ Վաղարշյանի Համլետը, Փափազյանի Օթելլոն: Ինչու բանը հասնի այնտեղ, որ ասվի, թե իբր ես մեծ սխալներ եմ թույլ տվել թատրոնի պատմությունը լուսաբանելիս, երբ փորձ իսկ չէի արել լուսաբանելու այդ պատմությունը: Ամենաշատը, որ կարելի էր ասել և դա կլիներ ճիշտ ու արդարացի, թե այ, ընկեր Զարյան, ինչու միայն Շեքսպիր, ինչու միայն Համլետ և Օթելլո, չէ որ ունենք ժամանակակից հեղինակներ, որոնց հերոսները մեր այսօրվա մարդիկ են, ձեր ժամանակակիցներն են, ունեն նույն մտքերն ու հույզերը, ինչ որ մեր երկրի բոլոր մարդիկ, զբաղվեք նրանցով էլ: Դա կլինի ճիշտ: Բայց այդ դեպքում էլ կարիք չէր լինի դատաքննական ընթացք տալ հարցին, ինչո՞ւ վախեցնել, ինչո՞ւ սպառնալ, ինչո՞ւ մատ թափ տալ: Ինչո՞ւ: Ճիշտն այն կլիներ, որ մի կլոր սեղանի շուրջ նստեինք և նույն մարդիկ, բայց առանց դատախազի և մեղադրյալի դերերում լինելու, հանգիստ ու անվրդով, բայց անհրաժեշտության դեպքում՝ խիստ ու սկզբունքային, մտքեր փոխանակեինք, պարզեինք՝ ուժերի փոխհարաբերությունը, թե մեզանից ով ինչով է զբաղված, թե ինչն է, որ սխալ է, անցանկալի և ոչ թե գաղափարական մեղադրանք հարուցեինք: Չէ որ մեր բոլորի նպատակը նույնն է:

Հիմա այս բոլորն անցյալ է և գրելը հեշտ է: Ես հասկանում եմ դա: Ավելին, չեմ էլ գրում, որ գրածս կարդալով հիշեն ու կարմրեն մեղադրողները: Համոզված եմ, որ մեղադրողներից բացի և գուցե ավելի պետք է կարմրենք մեղադրվողներս: Շատ էլ մուրճը նրանց ձեռքին էր, ինչպես իմ

մյուս ընկերները ու ես, թեկուզև երեսունական թվականների մեր մեծ նախնիք, առանց նրանց հետ համեմատվելու անհամեստ փորձի, չհասկացանք, որ չի կարող այսպես շարունակվել, որ կգա նաև այն օրը, որ դրա մասին կարելի կլինի պատմել՝ դուցե անհարմարության զգացումով, բայց նաև այն ազնիվ զարմանքով, թե այդ ինչպես է, որ լվացքաջրի հետ դուրս է նետվել նաև երեխան։

Ես իմ քառասունն եմ լրացրել 1949-ին։ Փոքր չեմ, մեծ էլ չեմ, բայց տղամարդու հասակ է, որը պարտավոր է հաշիվ տալ իրեն, թե ինչպես անցավ իր կյանքը այս տարում, ինչն էր ճիշտ, ինչն էր սխալ, երբ ու որտեղ էր ինքը մեղքի տակ մնացել, երբ էր արդար ու առաքինի։ Անցավ տարին, տասներկու ամիս, 365 օր, մի լավ բան, մի բարի գործ արեց ինքը, մի կտոր հաց, մի բաժակ ջուր առաջարկե՞ց հացից և ջրից զրկվածին։

Այս մտքերի մեջ էի 1949-ի և 1950-ի լույս գիշերին։

Հոգիս ալեկոծված ու փոթորկված և մոտիկ անցյալի հիշողություններից, բայց ուզում եմ խաղաղվել, որպեսզի կարողանամ պատասխանել այն հարցին, թե այնուամենայնիվ, մարդիկ ինչո՞ւ են ուրախանում Նոր տարուն։

Երևի գլխավոր պատճառն այն է, որ Նոր տարին հույսի տարի է։ Մարդիկ մտածում են՝ ինչ-որ անցյալ տարի վատ եղավ, դժբախտություն, մեծ ու փոքր անհաջողություններ մնացին անցյալ տարում։ Չգիտես թե ինչո՞ւ, երևի լավատես բնույթից, մարդը կարծում է, ոչ մի վատ բան չի լինելու Նոր տարում, լինելու է լավը, միայն բարին, գեղեցիկը։ Ինչին որ ձգտեցին անցյալ տարի ու չհասան, այս տարի կհասնեն։ Ճիշտ է, այս Նոր տարին էլ կանցնի, և երբ նորից կուզենանք հանրագումարի բերել, կտեսնենք, որ նախատեսվածից ու ծրագրվածից քիչ բան է արվել, ուրիշ գործեր են արվել, լավ թե վատ, հաջող թե անհաջող, որ հարստացրել են մեր կյանքը, կյանքի ըմբռնողությունը։ Կյանքի դասերից ավելի իմաստուն ենք դարձել, ավելի խոր, ավելի լայնահայաց։ Քի՞չ է։

Բոլոր դեպքերում մարդը հավատում է գալիք Նոր տարուն, հետը հույս կապում։ Նոր տարուն մարդը դիմավորում է իր

լավագույն գիտաբ հագած, ժպտում ծանոթներին, տանեցիներին, բոլորին ջանում է բարի լինել։

Ինչ լավ կլինի, երբ մարդիկ միշտ լինեն դեկտեմբերի երեսունմեկի օրվա նման։

Իսկապես նոր տարին հույսերի տարի է։ Ուրե՞մն հուսանք և սպասենք։ Ի՞նչ է բերելու 1950 թվականը։

1984

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ 3-ՐԴ

Երկու խոսք 3
Աղասի Խանջյանի մահը 5
Ի՞նչ եղավ 1936-ի հոկտեմբերի 14-ի գիշերը 9
Նորից ուսուցիչ եմ 12
Տնօրինը 13
Ուսուցիչները 16
Աուտոդաֆե 19
Ուսուցչուհիներ 20
Սորբոնի ուսանողը կամ քիմիայի ուսուցիչը 22
Ի՞նչ աղնիվ մարդ 27
Պուշկինի երեկոն 29
Այրվելուց փրկված Տերյանի թերթիկը 31
Աբովյանի թոռները 35
Բանասաեղծի դուստրը 40
Վահե Միքայելյան և Հայկանուշ Տեր-Գրիգորյան . . . 42
Մի բուռն ժողովի մասին, որ տևեց երեք օր և ունեցավ հինգ նիստ . 50
Իմ բանասիրական առաջին աշխատանքը 74
Վերա Զվյագինցևա 76

Դարձյալ Սևանա կղզում 84
Մի ալևոծող ժողով 88
Վտարվում եմ ասպիրանտուրայից 92
Հովհաննես Պողոսյան 97
Հայկ Գյուլիքևխյան 98
Սիմոն Հակոբյան 100
Աբշակ Բուրջյալյան 101
Կարապետ Մելիք-Օհանջանյան 105
Մի հոնորարի պատմություն 106
Լուրեր Թիֆլիսից 107
Հակոբ և Էսթեր Զորյաններ 108
Եվս մի անմեղ պոհ 113
Հայրը և դուստրը 116
Սերիկ Դավթյան 119
Ջերապի դուստրը 123
Նոր պաշտոնում 126
Ինչ կար դրասենյակիս դրրոցում 129
Պատկանյանի ինքնագրերը 130
Ես՝ հրատարակիչ 131
Ամոնքի վարպետը 138
Մի դեպք Նեմիրովիչ Դանչենկոյի կյանքից 141
Հոբելյան 142
Պոլիտեխնիկական ինստիտուտում 144
Հայոց թատերական ընկերություն 149
Նոր ծանոթություն 152
Երվանդ Շահազիզ 155
Աբովյանի պատմությունը 158
Անմոռանալի օր 160
Ինչ է կյանքը 162
Տիկին Աղավնին 164
Խոստովանություն 169
Հովսեփ Կուսիկյան 173

Ես կուսակցության մեջ եմ ընդունվում 179
Հակոբ Հարությունյան 182
Տերյանի անտիպը 186
Գրետա Շահխաթունու պատմածը 188
Կարեն Կամսարական 194
Համազասպ Համբարձումյան 196
Աշփալը փոխարինում է ինձ 201
Մեկ անհայտով հավասարում 204
Իշխանուհին 208
Պաշտպանում եմ դիսերտացիա 219
Ավետիք Իսահակյանի երեկոն 223
Գլխիս եկած փորձանքը 225
Գրիգոր Զուբար 229
«Խաղաղ Դոն» 236
Ամսագրի խմբագիր եմ նշանակվում 239

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Երկու խոսք 244
Պատերազմը 245
Իմ լիտեր Բ-ն կամ դարձյալ Նվարդ Թումանյանի մասին . . 250
Ինչպես ես թատերագիր դարձա 251
Ինչպե՞ս է մարդը բախտի կողքով անցնում 269
Իմ «դյուտը» 272
Մի օր խմբագրատանը 274
Լյուսի Թարգյուլի վեպը 278
Դևրատանուհու մահը 280
Արագու տված դասը 285
Ծրբելու Երևան գալը 286
Պահակը 287
Կոնստանդինն Գամսախուրդիայի այցը Հայաստան . . . 289
Ինչո՞ւ աղատեցին ինձ խմբագրի պաշտոնից 292

Իմ մայրը 304
Տաթևիկ 306
Ռադիկ պատվիրակները 309
«Մղձավանջային օրեր» 311
Բժշկուհին 316
Վերհուշ 318
Երևան և ավելի տարիներ հետո 335
Հնագրություն 337
Մարիետա Շահինյանի հետ 344
«Յոթերորդ սիմֆոնիա» 351
Նախապաշարման ուժը 353
Շնքապիրահանդես 356
Արշակ Ադամյան 361
1945-ի դրառումներից 369
Նոր անուններ 374
Անկրկնելի էջերից մեկը 376
1944-ի դրառում «12-րդ դիշերը» տեսնելուց հետո . . . 379
Պատերազմն ավարտվեց 385
Հերոսացած Փափազյանը Երևանում 388
Մոսկվայում 390
Աննա Ախմատովա 392
Մարիեն Քոչարյանը հարվածի ներքո 393
Գրադարանավարուհի Անյան 397
Ջոհված բանաստեղծի այրին 401
Իմ հոգվածը «Պապ Թագավորի» մասին 406
Ճարտարապետը և նկարիչը 411
Երբ չես լսում ճիշտ խորհուրդը 412
Կատվի խաղը՝ մկան մահը 414
Կարոտ 418
Նկարիչը 419
Նիկոլ Աղբալյանի մահը 423
Գարնին Լևոնյան 436

1947-ի գրառումներից 442
Աքսորից վերադարձան 449
Վարշապետի դուստրը 451
Հեռանում եմ հրատարակչությունից 462
Խորեն Սարգսյան 466
Դատական ներկայացում 467
Կենտրոնացում 470
Ախ այդ տանջալի օրերը 471
Առաջիններըը 483
1949 թվական, սև տարի 485
Ինձ կանչում եմ Կենտկոմ 487
Սարյանն էլ չխնայվեց 489
Հայաստանի սոխակը 494
Դիլիջան 498
Միքայել Մազմանյան 504
Ծովափին 507
Վաղարշյանի պատասխանը 509
Ընկերներս 510
Երիտասարդություն 512
Մտորում նոր տարուց առաջ 515
Նոր տարի 511

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Ռուբեն Վարոսի Զարյան

ՄԱՅՐԱՄՈՒՏԻՑ ԱՌԱՋ

Ինքնապատում

Литературно-художественное издание

Рубен Варосович Зарян

ПЕРЕД ЗАКАТОМ

Воспоминания

Ереван, издательство «Наири»

На армянском языке

Համ. վարիչ՝ Հ. Թ. Կաբնիկյան
Խմբագիր՝ Ռ. Բ. Բաբաջանյան
Նկարիչ՝ Ս. Հ. Սևոյան
Գեղ. խմբագիր՝ Զ. Ն. Գասպարյան
Տեխն. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերատուգող սրբագրիչ՝ Է. Պ. Պողոսյան

ИБ № 6617

Հանձնված է շարվածքի 25.4.1989։ Ստորագրված է տպագրության 4.9.1990։ Ձևաչափ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2.։ Տառատեսակ՝ գրքի սովորական։ Տպագրությունը՝ բարձր, 27,72 պայմ. տպ. մամ., 24,3 հրատ. մամ.։ Տպաքանակը՝ 10 000։ Պատվեր՝ 668։ Գինը՝ 2 ռ. 40 կոպ.։

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Наири», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայաստանի Հանրապետության հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. Респ. Ереван-10, ук. Алавердяна, 65.

A II
81871